ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF GAVAR STATE UNIVERSITY

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ ГАВАРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА



Ժողովածուն նվիրված է Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանին (Մաս II):

The collection is dedicated to 200th anniversary of the birth of Ghevond Alishan (Part II).

Сборник посвящен 200-летию со дня рождения Гевонда Алишана (Часть II).

Գլխավոր խմբագիր՝ **Հ. Հ. Հակոբյան**	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խմբագրական խորհուրդ՝ **Ռ. Խ. Հակոբյան**	ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Ա. Հ. Խաչատրյան	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ռ. Գրիգորյան	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Հ. Առաքելյան	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Լ. Ա. Շեկյան	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Լ. Կատվալյան	բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մ. Պ. Ավագյան	գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
Ա. Ա. Հակոբյան	տնտեսագիտության դոկտոր
Ն. Ա. Կուտուզյան	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Թ. Ա. Ասոյան	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ս. Գ. Ամիրխանյան	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ. Գ. Ղաջոյան	փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Գ. Ա. Միրիբյան	բանասիրական գիտությունների թեկնածու
Լ. Ն. Քուրքչյան	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Editor-in-chief **H. H. Hakobyan**	Doctor of Law, Professor
Editorial Council **R. Kh. Hakobyan**	Rector of GSU, Doctor of Law, Associate Professor
A. H. Khachatryan	Doctor of Law, Professor
V. R. Grigoryan	Doctor of Philology, Professor
A. H. Arakelyan	Doctor of Philology, Professor
L. A. Shekyan	Doctor of Physical and Mathematical Sciences, Professor
V. L. Katvalyan	Doctor of Philology, Associate Professor
M. P. Avagyan	Doctor of Agriculture
A. A. Hakobyan	Doctor of Economics
N. A. Kutuzyan	PhD in Physical and Mathematical Sciences, Associate Professor
T. A. Asoyan	PhD in Philology, Associate Professor
S. G. Amirkhanyan	PhD in Economics, Associate Professor
H. G. Ghajoyan	PhD in Philosophy
G. A. Miribyan	PhD in Philology
L. N. Kurkchyan	PhD in Pedagogical Sciences, Associate Professor

Главный редактор **Г. Г. Акобян**	доктор юридических наук, профессор
Редакционная коллегия **Р. Х. Акобян**	ректор ГГУ, доктор юридических наук, доцент
А. А. Хачатрян	доктор юридических наук, профессор
Г. Г. Акобян	доктор юридических наук, профессор
В. Р. Григорян	доктор филологических наук, профессор
А. Г. Аракелян	доктор филологических наук, профессор
Л. А. Шекян	доктор физико-математических наук, профессор
В. Л. Катвалян	доктор филологических наук, доцент
М. П. Авагян	доктор сельскохозяйственных наук
А. А. Акобян	доктор экономических наук
Н. А. Кутузян	кандидат физико - математических наук, доцент
Т. А. Асоян	кандидат филологических наук, доцент
С. Г. Амирханян	кандидат экономических наук, доцент
Г. Г. Каджоян	кандидат философских наук
Г. А. Мирибян	кандидат филологических наук
Л. Н. Куркчян	кандидат педагогических наук, доцент

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ
Ներածական խոսք 18
ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՏԵՐ ԼԵՎՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՔԻՅԱՆ
Ղևոնդ Ալիշանը որպես բանաստեղծ, բանասեր և գաղափարախոս 21
ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ
Ղևոնդ Ալիշանի երկերի լեզվական առանձնահատկությունները 30
ԽԼՂԱԹՅԱՆ ԽՈՍՐՈՎ
Հայագիտության անփոխարինելի նահապետը 37

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ, ԲԱԼԱԳՈՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ
Մեքենայական ուսուցման կիրառումը առաջարկությունների համակարգերում 52
ԲԱԼՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
Մեքենաների ուսուցման մեթոդների կիրառումը արժեթղթերի արժեքի կանխատեսման մեջ 62
ՄԻՐԻԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ, ԱՊԿԱՐՅԱՆ ԼՈՒԻԶԱ
Ինֆորմացիայի անվտանգ ապահովումը FIREWALL-ի օգնությամբ 69
ԱՅՎԱԶՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
Քրոմ (VI)–ի վերականգնումը ջրային լուծույթներում ներքին էլեկտրոլիզի պայմաններում 75
ՍԻՄՈՆՅԱՆ ՌՈՒԶԱՆ, ՍԻՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
ՆԱԴՐԻ պարունակող սպիտակուցային բաղադրամաս՝ կարմիր կիսաքաղցր գինուց. իմունային բջիջների ՆԱԴՐԻ օքսիդազի իզոձևերով սուպերօքսիդ ռադիկալների գոյացման խթանում 80
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ
Պոչամբարների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և հողատարածքների դասակարգումն ըստ աղտոտվածության 91
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլի արդյունավետ սինթեզի եղանակի մշակում 97

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԼՅՈՒԴՄԻԼԱ, ՍԱՀԱԿՅԱՆ ԳՈՀԱՐ
Էթիլենը որպես բուսական հորմոն 106

2. ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՈՒՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ
Խրիմյան Հայրիկի հովվապետությունը և ռուսական ինքնակալությունը 1893-1896թթ. 112
ՔԵՇԻՇՅԱՆ ՄԵՐԻ
Արվեստագետ Սերիկ Դավթյանի աքսորյան շրջանին առնչվող մի առարկայի շուրջ 121

3. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԳՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ, ՄՆԵՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից վարկերի տրամադրման պայմանների բարելավման հնարավորությունները 139
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱԼԵՐԻ, ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
Կազմակերպության մրցակցային ռազմավարությունը որպես ձեռնարկատիրական ռիսկի գործոն 149
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ, ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԻՆԱ
Բարձրագույն կրթության հանդեպ պահանջարկի ուսումնասիրումը և բարելավման ուղիները 166
ԹՈՐՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ
Զբոսաշրջության զարգացման արդի միտումները ՀՀ-ում Սևանի թերակղզու օրինակով 176
ՔԱԼՈՅԱՆ ՄԱՆՎԵԼ
Բանկային գործունեության արդյունքները համավարակի ժամանակաշրջանում 185
ՀՈՎԵՅԱՆ ԱՍՏՂԻԿ
Մրցունակ ապրանքանիշի ստեղծման գաղտնիքները 190

4. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
Մուշեղ Իշխանի դրամատուրգիան 196
ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ
Փարպիի խոսվածքը 204
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎԱՐՍԻԿ
Բառակազմության հարցերի քննությունը Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ 210
ՂԱՐԻԲՅԱՆ ԱԼԻՆԱ
«Սասնա ծռեր» էպոսի՝ Գեղարքունիքի մարզում գրի առնված պատումների առանձնահատկությունների շուրջ 221
ԲԱԳՈՅԱՆ ԱԼԼԱ
Վիշապի կերպարի և մոտիվի դրսևորումները Հովհաննես Թումանյանի երկերում 231
ՀԱՅՐԻՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Հեքիաթային և առասպելական տարրերը Ավետիք Իսահակյանի «Ուստա Կարո» վեպում 242
ՄԻՐԻԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ, ԲԱԴԱԼՅԱՆ ԱԼՎԱՐԴ
Գեղարքունիքի մարզի դպրոցներում ռուս գրականության դասերին «քեյս» մեթոդի կիրառման որոշ առանձնահատկությունների մասին 251
ՄՈՒԽՍԻԽԱԶՈՅԱՆ ԱՐՈՒՍՅԱԿ, ՄՈՒԽՍՅԱՆ ՀՐԱԶՈՒՀԻ
«Մտածողության վեց գլխարկներ» մեթոդի օգտագործումը տեքստի հետ աշխատելիս 259
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ, ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Կլաստերների և KWL աղյուսակների կիրառումը հայկական դպրոցներում անգլերենի՝ որպես օտար լեզվի դասերին ուսումնառողների քննադատական մտածողության հմտությունների զարգացումն ապահովելու նպատակով.
ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 4 դպրոցում իրականացված ուսուցման արդյունքները 269
ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՀՀ բուհերում «Ժամանակակից ռուսաց լեզվի բառակազմություն» դասընթացի շրջանակներում լեզվաբանական հեքիաթների կիրառման շուրջ 282

ՄՈՒԴՈՅԱՆ ԱՆԱՀԻՏ, ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
Դեբատների մեթոդի կիրառումը ՀՀ դպրոցներում ռուսաց լեզվի և գրականության դասերին. մեթոդական ցուցումներ և փորձարարական ուսուցման նկարագրություն 289
ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ, ՄԱԼԱՔՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
Լսարանի գնահատման տեխնիկաները հայկական միջավայրում անգլերենի դասին. «Հորինված երկխոսություն» տեխնիկայի կիրառումը 304
ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԻՆԵ, ՊԱՊՅԱՆ ՍԻՄԱ
Ղևոնդ Ալիշանի մանկավարժական հայացքները 315
ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ, ԱՍՈՅԱՆ ԻՐԻՆԱ
Գրական ստեղծագործությունների ուսուցման մի քանի առանձնահատկությունների մասին (ըստ Գրիգոր Զոհրապի «Երջանիկ մահը» նովելի) 324
ԽԱՉԻԿՅԱՆ ՀԱՅԿ
Տղամարդկանց և կանանց շախմատի առանձնահատկությունները: Կարո՞ղ են արդյոք կանայք պայքարել տղամարդկանց դեմ բարձր մակարդակում 333
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՆԱՔԱՐԱ, ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՄԵՐԻ
«Հայոց եկեղեցու պատմության» դասավանդման հիմնախնդիրը դպրոցում 342
ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՆՈՒՉԱՐ, ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
Ուսուցման շերտավորման առանձնահատկությունները: Յուրահատուկ կարողություններով օժտված երեխաների հետ անհատական աշխատանքի ձևերն ու մեթոդները 352

5. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Հայաստանի Հանրապետության Սահմանադրության տերմինաբանական հարցերի մասին 359
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
Ճոկան խաղի մասին 373
ԱՄԻՐՅԱՆ ԱՆԻ
Հարևանային իրավունքը որպես քաղաքացիաիրավական ինստիտուտ 385
ԲԱԽՏԻԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Ամուսնությունների գրանցման կարգն ու պայմանները 398
ԲԱԽՏԻԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Անվան, հայրանվան և ազգանվան փոփոխման կարգը 412

CONTENTS

HAKOBYAN HRANUSH
Introductory 18
HIS EMINENCE ARCHBISHOP LEVON ZEKIYAN
Ghevond Alishan as a Poet, Philologist and Ideologist 21
ASOYAN TATL
Language Peculiarities of Works by Ghevond Alishan 30
KHLGHATYAN KHOSROV
The Irreplaceable Patriarch of Armenology 37

1. NATURAL SCIENCES

AVETISYAN VARAZDAT, BALAGOZYAN ARMINE
Application of Machine Learning in Recommendation Systems 52
BALYAN ARMENAK
Stock Price Prediction Using Machine Learning Techniques 62
MIRIBYAN ARTUR, APKARYAN LUIZA
Safe Information Security with Firewall 69
AYVAZYAN GRIGORI
Reduction of Chromium (Vi) in Aqueous Solutions under Internal Electrolysis 75
SIMONYAN RUZAN, SIMONYAN GEGHAM
NADPH containing Protein Component from Demi-Doux Wine: Stimulation of Production of Superoxide Radicals by the Isoforms of NADPH Oxidase of Immune Cells 80
TADEVOSYAN ARTASHES, BAGHDASARYAN TATEVIK
Environmental Effects of Tailings and Land Classification by Contamination 91
AVETISYAN KARINE
Development of an Effective Synthesis Method's 5-Ethyl-4,5-Dimethyl-2-Imino-2,5-Dihydrofuran-3-Carbonitrile 97
ARAKELYAN LYUDMILA, SAHAKYAN GOHAR
Ethylene as a Plant Hormone 106

2. HISTORY

TUNYAN VALERI
The Service of Catholicos of All Armenians Khrimyan Hayrik and the Autocracy of Russia in 1893-1896 112
KESHISHYAN MARY
About an Object Related to the Period of Exile of Art Critic Serik Davtyan 121

3. ECONOMICS

HERGNYAN MARIAM, MNEYAN SYUZANNA
Opportunities for Improving Credit Conditions by "SEF International UCO" LLC 139
ARAKELYAN VALERI, VARDANYAN SARGIS
Competition Strategy of the Organization as an Entrepreneurship Risk Factor 149
KHACHATRYAN HAKOB, VARDANYAN NINA
Studying the Demand for Higher Education and Ways to Improve It 166
TOROSYAN DAVIT
Current Trends in Tourism Development in Armenia by the Example of Peninsula of Sevan 176
KALOYAN MANVEL
The Results of Banking Activities during the Pandemic Period 185
HOVEYAN ASTGHIK
The Secret of Creating Competitive Brand 190

4. PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY

GRIGORYAN VACHAGAN
Mushegh Ishxan'S Dramaturgy 196
KATVALYAN VIKTOR
The Speech of Parpi 204
NERSISYAN VARSIK
Study of Word Formation Issues in "Critical Grammar of the Vernacular or Modern Armenian Language" by Arsen Aydinian 210
GHARIBYAN ALINA

On the Features of the Stories in “Sasna Tsrer” epic Written in Gegharkunik Region 221
BAGOYAN ALLA
Manifestations of Dragon's Image and Motif in Hovh. Tumanyan's Works 231
HAYRIYAN LUSINE
Fairy Tale and Mythical Elements in Avetik Isahakyan's Novel “Usta Karo”..... 242
MIRIBYAN GAYANE, BADALYAN ALVARD
About Some Features of Using the Case Method in the Lessons of Russian Literature in Gegharkunik Province Schools 251
MUKHSIKHACHOYAN ARUSYAK, MUKHSYAN HRACHUHI
Using "Six Thinking Hats" Method while Working with Texts 259
SARGSYAN ASYA, SARGSYAN RUZANNA
Applying Clusters and KWL Charts to Improve Critical Thinking Skills of Learners in EFL Class in Armenian Schools: Results of the Teaching Delivered in Gavar School #4 (Gegharkunik Region of the Republic of Armenia) 269
SARGSYAN RUZANNA
On the Use of Linguistic Fairy Tales in the “Word Formation of Contemporary Russian” Course in the HEIs of the Republic of Armenia 282
MUDOYAN ANAHIT, SARGSYAN GAYANE
Applying Classroom Debates in Russian Language and Literature Classes in Armenian Schools: Methodological Recommendations and Overview of the Experimental Teaching 289
SARGSYAN RUZANNA, MALAKYAN SYUZANNA
Classroom Assessment Techniques (CATs) in EFL Class in the Armenian Setting: Applying the “Invented Dialogue” Technique 304
DAVTYAN ARMINE, PAPYAN SIMA
Ghevond Alishan’s Pedagogical Views 315
ASOYAN TATUL, ASOYAN IRINA
On Some Features of Teaching Literary Works (According to Gr. Zohrap's “Happy Death” Novel) 324
KHACHIKYAN HAYK
Men's and Women's Chess Features: Can Women Fight against Men at High Level 333
HAYRAPETYAN KANAKARA, SAGHATELYAN MERI
Issues of Teaching Armenian Church History at School 342

SIMONYAN MANUCHAR, MELKONYAN ARMENUHI
The Features of Teaching Stratification. The Ways and Methods of Individual Approach for Working with Children with Special Capacities 352

5. LAW

HAKOBYAN RUZANNA
On Terminological Issues of the Constitution of the Armenian Republic 359
KHACHATRYAN SAMVEL
About Game of "Chokan" 373
AMIRYAN ANI
Neighbour Law as a Civil- Law Institution 385
BAKHTIKYAN LUSINE
Marriage Registration Procedure and Conditions 398
BAKHTIKYAN LUSINE
Name/Surname Change Procedure 412

С О Д Е Р Ж А Н И Е

АКОБЯН ГРАНУШ
Вступительная речь 18
ЕГО ВЫСОКОПРЕОСВЯЩЕНСТВО АРХИЕПИСКОП ЛЕВОН ЗЕКИЯН
Гевонд Алишан как поэт, филолог и идеолог 21
АСОЯН ТАТУЛ
Языковые особенности произведений Гевонда Алишана 30
ХЛГАТЯН ХОСРОВ
Незаменимый родоначальник арменоведения 37

1. ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

АВЕТИСЯН ВАРАЗДАТ, БАЛАГОЗЯН АРМИНЕ
Применение машинного обучения в рекомендательных системах 52
БАЛЯН АРМЕНАК
Применение методов машинного обучения для прогнозирования цен акций 62
МИРИБЯН АРТУР, АПКАРЯН ЛУИЗА
Безопасное обеспечение информации с помощью Firewall 69
АЙВАЗЯН ГРИГОРИЙ
Восстановление хрома (VI) в водных растворах в условиях внутреннего электролиза 75
СИМОНЯН РУЗАН, СИМОНЯН ГЕГАМ
NADPH содержащий белковый компонент из красного полусладкого вина: стимулирование продуцирования супероксидных радикалов изоформами NADPH оксидазы иммунных клеток 80
ТАДЕВОСЯН АРТАШЕС, БАГДАСАРЯН ТАТЕВИК
Влияние хвостохранилищ на окружающую среду и классификация земель по загрязнению 91
АВЕТИСЯН КАРИНЕ
Разработка эффективного метода синтеза 5-этил-4,5-диметил-2-имино-2,5-дигидрофуран-3-карбонитрила 97

АРАКЕЛЯН ЛЮДМИЛА, СААКЯН ГОАР
Этилен как растительный гормон 106

2. ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

ТУНЯН ВАЛЕРИЙ
Правление Католикоса Всех Армян Хримяна Айрика и самодержавие России в 1893-1896 гг. 112
КЕШИШЯН МЕРИ
Об объекте, связанном с периодом изгнания искусствоведа Серика Давтяна 121

3. ЭКОНОМИКА

ЕРГНЯН МАРИАМ, МНЕЯН СЮЗАННА
Возможности улучшения условий кредитования, предоставляемых ООО “СЕФ Интернейшнл УКО” 139
АРАКЕЛЯН ВАЛЕРИЙ, ВАРДАНЯН САРГИС
Конкурентная стратегия организации, как фактор предпринимательского риска 149
ХАЧАТРЯН АКОБ, ВАРДАНЯН НИНА
Изучение спроса на высшее образование и пути его улучшения 166
ТОРОСЯН ДАВИД
Актуальные тенденции развития туризма в Армении на примере Севанского полуострова 176
КАЛОЯН МАНВЕЛ
Результаты банковской деятельности во время пандемии 185
ОВЕЯН АСТГИК
Секреты создания конкурентоспособного бренда 190

4. ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ГРИГОРЯН ВАЧАГАН
Драматургия Мушега Ишхана 196
КАТВАЛЯН ВИКТОР
Говор села Парпи 204

НЕРСИСЯН ВАРСИК
Анализ проблем словообразования в трактате Арсена Айтыняна “Аналитическая грамматика ашхарабара или современного армянского языка” 210
ГАРИБЯН АЛИНА
Вокруг особенностей сказов эпоса “Сасна Црер”, записанных в Гегаркуникской области 221
БАГОЯН АЛЛА
Проявления образа и мотива дракона в произведениях Ов. Туманяна 231
АЙРИЯН ЛУСИНЕ
Сказочные и мифические элементы в романе Ав. Исаакяна “Уста (мастер) Каро” 242
МИРИБЯН ГАЯНЕ, БАДАЛЯН АЛВАРД
О некоторых особенностях использования кейс-метода на уроках русской литературы в школах Гегаркуникского марза 251
МУХСИХАЧОЯН АРУСЯК, МУХСЯН ГРАЧУИ
Использование метода “Шесть шляп мышления” при работе с текстом 259
САРГСЯН АСЯ, САРКИСЯН РУЗАННА
Использование кластеров и таблиц ЗХУ на уроке английского языка в армянских школах с целью развития навыков критического мышления учащихся: результаты обучения, проведенного в школе N 4 г. Гавара Гегаркуникской области РА 269
САРКИСЯН РУЗАННА
Об использовании лингвистических сказок в курсе “Словообразование современного русского языка” в вузах РА 282
МУДОЯН АНАИТ, САРКИСЯН ГАЯНЕ
Использование метода дебатов на уроках русского языка и литературы в школах РА: методические рекомендации и описание опытного обучения 289
САРКИСЯН РУЗАННА, МАЛАКЯН СЮЗАННА
Техники внутриклассного оценивания на уроке английского языка в армянской аудитории. Использование техники “Придуманный диалог” 304
ДАВТЯН АРМИНЕ, ПАПЯН СИМА
Педагогические взгляды Гевонда Алишана 315

АСОЯН ТАТУЛ, АСОЯН ИРИНА
О некоторых особенностях обучения литературе (на примере новеллы Гр. Зограба “Счастливая смерть”) 324
ХАЧИКЯН АЙК
Особенности мужских и женских шахмат: могут ли женщины сражаться против мужчин на высоком уровне 333
АЙРАПЕТЯН КАНАКАРА, МЕРИ САГАТЕЛЯН
Проблема преподавания “Истории армянской церкви” в школе 342
СИМОНЯН МАНУЧАР, МЕЛКОНЯН АРМЕНУИ
Технические характеристики учебной стратегии. Виды и методы индивидуальной работы с одаренными детьми 352

5. ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

АКОБЯН РУЗАННА
О терминологических вопросах Конституции Республики Армения 359
ХАЧАТРЯН САМВЕЛ
Об игре “Чокан” 373
АМИРЯН АНИ
Соседское право как гражданско-правовой институт 385
БАХТИКЯН ЛУСИНЕ
Условия и порядок регистрации браков 398
БАХТИКЯН ЛУСИНЕ
Порядок изменения фамилии, имени и отчества 412

ԳՊՀ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Գավառի պետական համալսարանի սիրելի՛ պրոֆեսորներ, դասախոսներ, մագիստրոսներ, համաժողովի հարգարժա՛ն մասնակիցներ, համալսարանի կազմակերպած՝ Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված գիտաժողովին մեր խնդրանքով սիրով համաձայնեց մասնակցել Վենետիկի Մխիթարյան Միաբանության քահանայապետական պատվիրակ, Թուրքիայի Հայ կաթողիկե եղեկեցու թեմի առաջնորդ գերապայծառ Տեր Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանը, որի հետ բախտ, պատիվ և հնարավորություն եմ ունեցել երկար տարիներ գործակցելու և այսօր կփորձեմ ձեզ ներկայացնել որոշ տեղեկություններ Սրբազանի անցած ուղու մասին:

Բառերս, իհարկե, անզոր են արտահայտելու երախտագիտության խորին զգացումս՝ ուղղված արքեպիսկոպոս Լևոն Զեքիյանին:

Սրբազա՛ն հայր, շնորհակալություն Ձեզ, որ համաձայնեցիք մեր գիտաժողովում ներկայացնել Մխիթարյան հայր, տաղանդաշատ գիտնական ու հոգևորական, բանաստեղծ ու լեզվաբան, մանկավարժ ու աշխարհագրագետ Ղևոնդ Ալիշանի վաստակը:

Սրբազանը նախ և առաջ հայագետ է, փիլիսոփա, աստվածաբան, 1973 թվականից՝ Ստամբուլի համալսարանի դոկտոր, 1976 թվականից մինչեւ 2011 թվականը Վենետիկի պետական համալսարանի Հայոց լեզվի եւ գրականության դասախոս, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, 1992 թվականից՝ Վենետիկի ակադեմիայի անդամ, ապա 2005 թվականից՝ ակադեմիայի իսկական անդամ:

Սրբազան հայրը ծնվել է Կոստանդնուպոլսում, սովորել տեղի վարժարաններում, ապա Վենետիկի Մխիթարյան միաբանության Դպրեվանքում: Ուսումնատենչ երիտասարդը 1962 թվականին ավարտել է Հռոմի Պապական Գրիգորյան համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, ապա նույն համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը: 1966-68 թվականներին մասնագիտացել է արևելյան աստվածաբանության բնագավառում: Նա իր հարուստ գիտելիքները սիրով մատուցել, նվիրել է մեր աշակերտներին: 1968-74 թվականներին ուսուցչություն է արել Կ. Պոլսի Մխիթարյան և Կեդրոնական վարժարաններում, իսկ 1974 թվականից տեղափոխվել է Իտալիա և սկսել դասավանդել Վենետիկի Մուրատ-Ռափայելեան վարժարանում, ապա հինգ տարի ղեկավարել է այդ շատ պատվավոր կառույցը: 1981 թվականից Հայր Լևոնը Վենետիկի համալսարանում զբաղեցրել է Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնը: Հայր Զեքիյանը հինգ տարի անընդմեջ (1980-1985թթ.)

խմբագրել է Մխիթարյան միաբանության գանձերից մեկը՝ «Բազմավեպը», որը խմբագրել է նաև Ղևոնդ Ալիշանը:

Ի դեպ, ՀՀ սփյուռքի նախարարությունը Մխիթարյան միաբանության հետ Երևանում կազմակերպեց «Բազմավեպի» 175-ամյակին նվիրված գիտաժողով, որին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի դասախոսներ պարոնայք Վիկտոր Կատվալյանը և Թաթուլ Ասոյանը:

Մինչև 2011 թվականը Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանում Սրբազանը վարել է իր իսկ կողմից 1976 թվականին հիմնած հայագիտական դասընթացը, որի հիման վրա 1981 թվականին հիմնադրվել է ամբիոն, միաժամանակ այդ տարիներին (1988-2018թթ.) Հռոմի Արևելյան հայրապետական համալսարանում Հայ եկեղեցու պատմության եւ աստվածաբանության դասախոս է եղել:

Լևոն Սրբազանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են փիլիսոփայությանը, հայոց պատմությանը, բանասիրությանը, մշակույթին, ազգային և կրոնական ինքնության հարցերին, հայ տեսահայեցողական և աստվածաբանական մտքին: Նրա ուսումնասիրության առարկան են եղել նաև Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Պետրոս Դուրյանի, Դանիել Վարուժանի և այլոց ստեղծագործությունները, անդրադարձել է հայ-վրացական մշակութային կապերին, որը շատ հետաքրքիր է, և իհարկե, գրաբարի հոլովման համակարգին:

Սրբազանը հեղինակ է 200-ից ավել գիտական ուսումնասիրությունների, հոդվածների, տասնյակ թեմատիկ գրքերի: Արքեպիսկոպոս Լևոն Զեքիյանը, լինելով տիտանական հիշողության տեր անձնավորություն, բացի ժամանակակից հայերենից և գրաբարից, տիրապետում է ևս վեց լեզուների՝ թուքերեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն: Կարդում է նաեւ ռուսերեն:

Այժմ սիրով և մեծ հաճույքով խոսքը փոխանցում եմ Տեր Լևոն Արքեպիսկոպոս Զեքիյանին:

Սրբազա՛ն հայր, պատիվ ունենք լսելու Ձեր խորիմաստ խոսքը, ըմբոշխնելու Ձեր գիտական միտքն ու Ղևոնդ Ալիշանին նվիրված Ձեր մոտեցումները:

Շնորհակալություն:

INTRODUCTORY SPEECH OF THE CHAIRMAN OF GSU CONFERENCE ORGANIZING COMMITTEE HRANUSH HAKOBYAN

Dear Professors, Lecturers, Masters of Gavar State University! Distinguished participants of the conference!

At our request, the Pontifical Delegate of the Mekhitarist Congregation of Venice, the Primate of the Diocese of the Armenian Catholic Church in Turkey, His Eminence Archbishop Levon Zekiyan, kindly agreed to participate in the online conference dedicated to the 200th anniversary of birth of Ghevond Alishan, organized by Gavar State University.

His Holiness is an Armenologist, philosopher, theologian, Doctor of Istanbul University since 1973, Lecturer of Armenian Language and Literature at Venice State University from 1976 to 2011, Foreign Member of the RA National Academy of Sciences, Member of the Venice Academy since 1992, then full member of the Academy since 2005.

I would like to thank His Holiness and ask him to present Mekhitarist Father, a talented scientist and theologian, poet and linguist, pedagogue and geographer Ghevond Alishan.

ВСТУПИТЕЛЬНАЯ РЕЧЬ ПРЕДСЕДАТЕЛЯ ОРГАНИЗАЦИОННОГО КОМИТЕТА КОНФЕРЕНЦИИ ГГУ ГРАНУША АКОБЯНА

Уважаемые профессора, преподаватели, магистры Гаварского государственного университета! Уважаемые участники конференции!

По нашей просьбе Папский делегат Конгрегации Мхитаристов Венеции, Предстоятель епархии Армянской Католической Церкви в Турции, Его Высокопреосвященство Архиепископ Левон Зекиян любезно согласился принять участие в организованной университетом конференции, посвященной 200-летию Гевонда Алишана.

Его Святейшество Архиепископ Левон Зекиян - арменовед, философ, теолог, доктор университета Стамбул с 1973 года, преподаватель армянского языка и литературы в Венецианском государственном университете с 1976 по 2011 год, иностранный член Национальной академии наук РА, член Венецианской академии с 1992 года, затем 2005 года - действительный член академии.

Хочу поблагодарить Его Святейшество и прошу представить талантливого ученого и теолога, поэта и лингвиста, педагога и географа Гевонда Алишана.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԲԱՆԱՍԵՐ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՏԵՐ ԼԵՎՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՔԻՅԱՆ
Վենետիկի Մխիթարյան Միաբանության Քահանայապետական Պատվիրակ,
Թուրքիայի Հայ Կաթողիկե Եկեղեցու թեմի առաջնորդ

Հոդվածում ներկայացվում է Ղևոնդ Ալիշանը՝ որպես բանաստեղծ, բանասեր և գաղափարախոս: Ալիշանը վիթխարի բանաստեղծ է, ռոմանտիկ բանաստեղծության հիմնադիրը հայ գրականության մեջ: Կարելի է ասել, որ Ալիշանը եվրոպական ընդհանուր ռոմանտիզմի ամենամեծ ներկայացուցիչներից է, ով կանգնած է եվրոպական գրականության բարձր հարթակի վրա՝ Լամարթինի եւ Լեոպարդիի կողքին: Ալիշանի գլուխգործոցները նրա գրաբար բանաստեղծություններն են, որոնք գրեթե արժևորված չեն:

Ալիշանի «Աղոթք աբեղայի» վերնագրով հրատարակած աղոթքները մեր եւ առհասարակ քրիստոնեական հոգեւոր գրականության գլուխգործոցներ են:

Ալիշանը խորագետ բանասեր է, հայագիտության մեջ անգնահատելի ավանդ ունեցող գիտնական, հզոր գաղափարախոս:

Բանալի բառեր՝ *Ալիշան, բանասեր, բանաստեղծ, գաղափարախոս, գիտնական, բնագետ, բանահավաք, պատմաբան, հայագետ, աշխարհագրագետ:*

Ես չափազանց զգացուած եմ: Այս Ձեր բոլոր գեղեցիկ խօսքերը, աւելի քան բարեկամական, բարեացակամութեան այս խօսքերը, անշուշտ, կվերագրեմ Ձեր ազնուութեան, Ձեր անկեղծութեան, և բնականաբար ամէնքս էլ վերջապէս կջանանք մեր լուման դնել հայոց մշակոյթի գանձարանի մեջ և այստեղ նորէն Մեծն Ալիշան մեզի ուսուցիչ կիանդիսանայ: Երբ կտօնէին իր քահանայական ձեռնադրութեան եւ գրական գործունէութեան 50-ամեակը Սբ. Ղազարու մայրավանքի մէջ, ինքն առաջին շնորհակալությունը կյայտնէ վանքի ամէնէն համեստ աշխատաւոր եղբայրներուն՝ ըսելով, թէ. «Եթէ ես կարողացայ այսքան հատորներ գրել, արտադրել, մեծ մասամբ կպարտիմ այդ եղբայրներու աշխատանքին, որոնք, ստանձնելով վանքի տնային ծառայութիւնները, թոյլ տուին ինծի գրել, արտադրել այս հատորները»: Այս խօսքերի մէջ Ալիշանը մեզի կներկայանայ նաեւ իբրեւ համեստութեան, խոնարհութեան մեծ օրինակ, որ կկարծեմ, թե իսկական գիտնականի առաջին պայմանն է, որովհետեւ, առհասարակ, իսկական գիտունը համեստ կըլլայ, խոնարհ կըլլայ: Գիտէ, որ իր գիտցածը ընդհանուր գիտելիքի պզտիկ մէկ մասնիկն է, մէկ փոքր շիւղն է, իսկ անգէտը, բնականաբար, ամբարտավան կդառնայ, հպարտ կդառնայ, որովհետեւ չունի գիտութեան ըմբռնումն իսկ: Այս տեսակէտով Ալիշանը մեզի մեծ օրինակ

կիանդիսանայ: Կրկին շնորհակալ եմ Ձեր այդ գեղեցիկ խօսքերուն համար, որ կվերագրեմ նաեւ ամբողջ միաբանութեանը: Այստեղ կուզեմ յիշել լուսահոգի, մեծ լեզուաբան պրոֆեսոր Ջահուկեանի մէկ խօսքը, որը արտասանած է 1976 թուին, երբ Երևանի պետական համալսարանը, Գիտութիւնների ազգային ակադեմիան և Մատենադարանը միացեալ կերպով Մխիթար Սեբաստացու 300-ամեակին ի պատիւ մեծ ակադեմիական նիստ սարքեցին. «Ինչքան հեռանում ենք,- կըսէ,- Մխիթարի օրերից, նրա կերպարը այնքան մեծանում է մեր աչքերի առաջ»: Բոլոր համեմատութիւնները կատարելով՝ ես ալ որքան կջանամ մի քիչ խորանալ Մխիթարի և անոր մեծ հետեւորդներու վաստակին մէջ իսկապէս գլխապտոյտ տուող, գրեթէ մարդս խելացնոր դարձնող մեծութեան մը հետ դէմ դիմաց կգտնուիմ եւ այսօր, մանաւանդ երբ կխօսիմ օտար հանրութիւններու առջեւ, սա փաստը կբերեմ. երբ Նապոլեոն կգրաւէ ամբողջ Հիւսիսային Իտալիան, մէկ վանք, մէկ հատ վանք տեղը չի մնար: Բոլոր վանքերը փակուած են, գրաւուած են և ասոնց կարգին ամենամեծ արեւմտեան կարգերը՝ Բենեդիկտեանները, Յիսուսեանները, Դոմինիկեանները եւ այլք, մէկ հատ չեն մնացած, մէկ վանք միայն մնացած է՝ բոլոր Հիւսիսային Իտալիոյ տարածքին՝ Տորինոյեն մինչեւ Վենետիկ. այդ Սբ. Ղազարի մայրավանքն է: Եւ ինչո՞ւ: Սբ. Ղազարու հայրերը բացայայտօրէն ըսած են. «Այո՛, մենք կրօնաւորներ ենք, միանձներ ենք, բայց միաժամանակ մենք գիտութեան մարդիկ ենք եւ արդէն ցուցադրած են կայսեր առջեւ իրենց բոլոր գիտական, գրական, մշակութային վաստակը: Մարդը, անշուշտ, խելացի մարդ, համոզուած է և հրամայած է, որ Սբ. Ղազարը մնայ այն նոյն կարգավիճակին մէջ, որուն մէջ կգտնուի: Եւ այսպէս փրկուած է Սբ. Ղազար կղզին. որովհետեւ, եթէ Սբ, Ղազար կղզին այն ժամանակ փակուէր, հաւանաբար վերջնական փակուած կմնար: Այնպէս որ ինքս ալ ինչ որոնեմ մեր մշակոյթի գանձարանում, կպարտիմ մեծագոյն մասամբ Սբ. Ղազարի մենաստանին, Մխիթարեան դաստիարակութեան, որն էլ ինծի հաճելի, մէկ շատ սիրած բնորոշում ունի՝ Մխիթարեան կերպարը, Մխիթարեան գործունէութիւնը հայ դասականութեան մարմնացումն է: Դասական մշակոյթը միշտ կմնայ: Յաճախ կյիշեմ Ապոլիների այն հոյակապ խօսքը, որ կըսէ. «Երեկոյեան սա պահուս աշխարհի ամենահին գրութիւնը այս առաւօտեան լրագիրն է, ամէնանոր, ամենաթարմ գրութիւնը Հոմերոսն է, կըսէ, Հոմերոսը դասական է և կմնայ յավերժ, մինչ առաւօտեան լրագիրը արդէն երեկոյեան հնացած է»: Այնպէս որ գալով հիմա մեր Ալիշանին՝ ես կուզեմ ըսել, որ մերը լոկ բուհական, միայն դրուատանքի տուրք մը չըլլայ, այն նաեւ միանգամայն առիթ հանդիսանայ նոր հանգրուանի մը Ալիշանեան հետազօտութիւններու մարզին մէջ, քանի որ այս ձեռնարկին կը մասնակցի գիտնականներու հայրենի մեծածաւալ բազմութիւն մը, աւելի քան 100 հոգիներ գործի լծուած են այստեղ, իսկապէս գիտաջոկատ մը, գիտական փոքր բանակ մը, ըսենք:

Ես երեք մասնաւոր կէտերու վրայ շեշտ պիտի դնեմ: Արտայայտելիք որոշ տեսակէտներս կրնան նաեւ վիճայարոյց ըլլալ: Բայց կը կարծեմ, որ պէտք չէ մենք

վախ ունենանք վիճարկումէն: Այս վիճարկում բառը կկարծեմ, որ ժամանակին լսարանի մէջ մտաւ հայաստանեան ներդրումով, որքան գիտեմ առաջին անգամ Հայաստանի մէջ գործածուած է և այսօր բաւական ընդհանրացած է: Դժբախտաբար վիճել բառը մեր հայերէնին մէջ երբեմն ժխտական, բացասական իմաստ ունի, կարծես վէճը կռիւ ըլլայ, որը կապ չունի նրա հետ, բայց այդպէս կընկալենք: Իսկ վիճարկում բառը այս թիւրիմացութիւնը կփարատէ: Խօսքերուս մէջ կարելի է վիճարկելի կէտեր ըլլան, ուրեմն վիճարկում կառաջարկեմ նաեւ մեր գիտնականներուն:

Իսկոյն բացայայտեմ այն երեք կէտերը, որոնց շուրջ պէտք է խօսիմ. Ալիշան՝ բանաստեղծ, Ալիշան՝ բանասէր, Ալիշան՝ գաղափարախօս:

Սկսինք Ալիշան բանաստեղծէն:

Ալիշան մեծ, վիթխարի բանաստեղ մըն է, դուք յիշեցիք, որ Ալիշանը ռոմանտիկ բանաստեղծութեան պարագլուխ է: Կարելի է ըսել, որ Ալիշան եւրոպական ընդհանուր ռոմանտիզմի հունին մէջ ամէնէն մեծ դէմքերէն մէկն է: Անվարան կզետեղէի զինքը Լամարթինի եւ Լեոպարդիի կողքին, եւրոպական գրականութեան հարթակին վրայ: Առհասարակ Ալիշանի բանաստեղծութեան լավագոյն որակին շատ քիչեր ծանօթ են, որովհետեւ մեր ծանօթութիւնը Ալիշանի իբրեւ բանաստեղծ՝ «Նահապետի երգեր»ն են, «Հայոց աշխարհիկ», «Պլպուլըն Աւարայրի», «Շուշանն Շաւարշանայ» և այլն: Սրանց մէջ, անշուշտ, բանաստեղծի աւիւնը կայ, կը յայտնուի, բայց համամարդկային առումով, համեւրոպական ծաւալով Ալիշանը այնտեղ չէ, Ալիշանի լաւագոյն բանաստեղծութիւնները իր գլուխգործոց գրաբար բանաստեղծութիւններն են, որոնք ոչ միայն քիչ ծանօթ են, այլ դժբախտաբար մեր հայ բանասիրութեան հեղինակաւոր առաջնորդներէն մէկը գրեթէ չէ արժեւորած այդ բանաստեղծութիւնները: Ակնարկս Յակոբ Օշականի մասին է. մեծ գրականագէտ, մեծ քննադատ էր՝ համապարփակ հայեացքով արեւտահայ գրականութեան, բայց ունի գաղափարախօսական որոշ կանխարգելումներ: Օշական ըստ արժանւոյն չէ արժեւորած նաեւ Չարենցը: Չարենցի բանաստեղծութիւնները վստահաբար ավելի ծանօթ են մեծ հանրութեան, քան Ալիշանի լաւագոյն քերթուածները: Ինչո՞ւ նաեւ Չարենցը Ալիշանի ճակատագրին կը բախի Օշականի մօտ: Բնականաբար Չարենցի պարագան աւելի յստակ է: Չարենցի կոմունիստական միտումները յայտնի են: Հետեւաբար զարմանալի չէ, որ Օշականի գաղափարախօսական դիրքը, մանաւանդ այդ ժամանակի տիրող ընդհանուր մթնոլորտին մէջ, չարտօնէր իրեն, որ կարենար Չարենցի արժէքը լրիւ գնահատել: Նոյնն է Ալիշանի եւ առհասարակ Մխիթարեանների պարագային, զորս ինքը կնախընտրէ նկատել ավելի բանահաւաքներ, այս բանահաւաք բառին տալով, ըսենք, սահմանափակիչ, գրեթէ ժխտական նշանակութիւն մը՝ քան բանասէրը:

Գրական գետնի վրայ Ալիշանի դէմ իր գլխաւոր առարկութիւնն այն է, որ գրաբար կգրէ: Այս պարագային մոռնալով, որ գրաբարը տակաւին 19-րդ դարում՝ առաջին

կէսին անկասկած, բայց երկրորդ կէսին եւս դեռ կշարունակէ հայութեան զարգացած խաւին մօտ իր գրաւիչ ներկայութիւնը: Ճգնաժամի մէջ է, բայց տակաւին կայ: Ալիշանի բոլոր կոթողային գործերը՝ «Սիսուանը», «Սիսականը», «Այրարատը», գրաբարով են գրուած, եւ ի՞նչ գրաբար, ուրոյն Ալիշանեան գրաբար մը ունինք: Նաեւ այս տեսակէտէն Ալիշանի «Աղօթք աբեղայի» վերնագրով հրատարակած աղօթքները մեր եւ առ հասարակ քրիստոնէական հոգեւոր գրականութեան բացարձակ գլուխգործոցներ են: Նարեկը, Նարեկացին անհամեմատելի մեծութիւն է, կարելի չէ համեմատել, բայց կարելի է անոր մօտենալ: Նարեկեան շունչ մը կայ այդ «Աղօթք աբեղայի» գրքոյկին մէջ, որ գլուխգործոց մըն է: Այդտեղ է նաեւ Ալիշանի ուրոյն գրաբարը, որը ինքը կստեղծէ, ինչպէս Նարեկացին կը ստեղծէ ի՛ր գրաբարը: Աւելի ճիշտ՝ ամէն մեծ բանաստեղծ կը ստեղծէ իր լեզուն: Անայլայլելի, անշփոթելի է: Նարեկեան որևէ տող որ տեսնենք, լսենք, պիտի ըսենք՝ նարեկեան գրաբար է: Որովհետեւ, ըսի, ամէն մեծ բանաստեղծ իր լեզուն կստեղծէ լեզուին ընդհանուր ծիրին մէջ: Օշականի առաջին առարկութիւնը, թէ գրաբար գրելով, մեռած լեզուով գրած է, թէ այդ լեզուն գրքունակ տողեր, գրքունակ խօսքեր կարտադրէ, որոնք չեն արտահայտեր իսկական ապրուած զգացում և այլն: Այստեղ ուրիշ հարց մըն ալ կայ, բնականաբար, որու մենք տեղեակ ենք, չեմ գիտեր՝ թէ որքան տեղեակ էր Օշական: Գիտենք, որ Եւրոպայի գրականութիւններուն մէջ լատիներէն գրող բանաստեղծներ եղած են, բաւական թիւով: Բայց կայ բացառիկ օրինակ մը՝ 19-րդ դարու վերջաւորութեան Իտալիոյ մեծագոյն քերթողներէն մէկը՝ Ջովաննի Պասկոլին, գրած է կանոնաւորապէս թէ՛ իտալերէն, թէ՛ լատիներէն, եւ լատիներէն քերթուածքները բոլորին կողմէ կհամարուին իր լաւագոյն քերթուածներու կարգին: Իր կենդանութեան օրոք շահած է մրցանակներ Եւրոպայի մէջ, Ամստերդամ եւ այլ կողմեր: Հետեւաբար այն առարկութիւնը՝ թէ Ալիշան մեռեալ լեզուով կգրէր, չի տոկար համեմատական գրականութեան ոլորտին մէջ, նոյնիսկ եթէ նկատի չառնենք այն հանգամանքը, որ գրաբարը 19-րդ դարում մեր մօտ ապրող լեզու էր: Արդարեւ գրաբար քերթուածներ ունին նաեւ՝ մեծագոյններէն Մկրտիչ Պէշիկթաշլեանը եւ Խաչատուր Աբովեանը, եւ այլ մեծեր: Արտօնեցէք, որ յիշեմ այստեղ հայրենի հեռուստատեսութեամբ պրոֆեսոր Հենրիկ Յովհաննիսեանի հոյակապ ընթերցումը Աբովեանի գրաբար քերթուածքներուն. ինծի համար այդ երեկոն եղաւ գրական մեծագոյն հաճոյքի ըմբոշխնում. մէկ ժամ սեւեռած մնացի պաստառին դիմաց, անզուգական հոգեկան վայելքով, զոր մինչեւ այսօր չեմ կրնար մոռնալ: Եւ երանի, թե մեր նոր սերունդը կարենար այդ քերթուածքները իրենց բնագրին մէջ կարդալ՝ Աբովեանը, Պեշիքթաշլեանը, Ալիշանը եւ որ ի կարգին: Հետեւաբար կկարծեմ, որ այս տեսակէտէն շատ կարեւոր աշխատանք մը կայ կատարելիք, յատկապէս մեր գրականագէտներուն կողմէ, վերարժեքաւորելու մեր արդի շրջանի գարաբար աւանդը: Որովհետեւ եթէ Ալիշանը մենք կրնանք զետեղել Լամարթինի մը կամ Լեոպարդիի մը կողքին, այդ առաւելաբար իր գրաբար քերթուածներուն կը պարտինք: «Հայոց աշխարհիկ»ն ու նման քերթուած-

ները՝ կասկած չկայ որ անոնք ալ գեղեցիկ են, բայց այդ մեծ սլացքը, թռիչքը չունին: Ալիշանի բուն գլուխգործոցներն են՝ «Վերադարձ առ ընգուզենին», «Յիշատակ մահու եւ մեռելոց», «Դատաստան Վասակայ մատնչին», «Անդորրանք Անւոյ» եւ մանաւանդ «Հուսք բան առ ոգին նուագահան»:

Երկրորդ կէտ. Ալիշան՝ բանասէր:

Ալիշան բանասէրի մասին էլ առարկողներ կան: Օր մը շատ հեղինակաւոր անձ մը, հայագէտ, որի շատ կյարգեմ, սապէս ըսաւ ինծի. «Ալիշան աւելի շատ բանաստեղծ է, քան բանասէր, քան գիտնական»: Ինչո՞ւ: Առարկութիւնը լուրջ առարկութիւն է, որոհետեւ Ալիշան իր աղբիւրները չի նշեր, եւ այսօրուայ գիտական ընկալումներուն դէմ է ասիկա: Այսօր, կկարծեմ որ մեզմէ որևէ մէկը, եթէ բերէր այդպիսի թեկնածուական ատենախօսութիւն, պիտի չընդունէինք, յետ պէտք է վերադարձնէինք: Բայց Ալիշան այս հարցին լրիւ գիտակցութիւնը ունի: Վանական աւանդութիւն մը կայ, որ իրեն հարցրել են, թէ ինչո՛ւ աղբիւրները չի նշեր, որովհետեւ արդէն ծանօթագրութիւններ դնելու պահանջը կար 19-րդ դարի գիտութեան մէջ, բնականաբար ոչ այսօրուան, գրեթէ մտասեւեռուն դարձած ձեւով, բայց կար: Ալիշան ի՞նչ կպատասխանէ: Մենք ամէնքս գիտենք, որ գիտութեամբ կզբաղինք, որ երբ ուսումնասիրութիւն մը կգրենք ծանօթագրութիւնները դնել եւ մշակել, ըստ բոլոր ներկայ պայմաններուն, խմբագրական կանոններուն, երբեմն նոյնիսկ աւելի ժամանակ կպահանջէ, քան ինքը յօդուածին շարադրութիւնը: Եւ Ալիշան ըսած է, ըստ վանական աւանդութեան, որ՝ ծանօթագրութիւն դնելու պարագային՝ պէտք է աւելի շատ ծանօթագրութիւն գրէր՝ քան գործ:

Այս կէտին, ձեր արտօնութեամբ, անձնական վկայութիւն մը կուզեմ տալ: Ալիշանի այդ ովկիանոսային, այդ համապարփակ գործերէն ես ուսումնասիրած եմ՝ միջին դարու ընթացքին Իտալիոյ մէջ հայ գաղութներուն վերաբերեալ բաժինը, ուշ հռոմէական շրջանէն կամ վաղ միջին դարէն սկսեալ՝ այսինքն 6-րդ դարէն մինչեւ 18-րդ դար ներառեալ: Շատերը կկարծեն, որ Ալիշան հայ գաղութներու մասին խօսած է «Սիսիանի» մէջ առաւելաբար, «Սիսիանի» մէջ ալ խօսած է անշուշտ: Բայց այն հիմնական աշխատանքը, ուր նա մաղէ կանցնէ հայ գաղութները, դա «Սիսականն է»՝ «Համատարած վաճառականութիւն հայոց» գլուխին մէջ: Թոյլ տուէ՛ք՝ աւելացնեմ այստեղ որ, ըստ իս, Հայոց այս «համատարած վաճառականութիւնը», որ տեւած է մօտաւորապէս երկու դար, հայկական մեծագոյն կայսրութիւնը եղած է պատմութեան ընթացքին, ո՛չ անշուշտ քաղաքական, այլ տնտեսական առումով: Իսկ Իտալիան, ինչպէս Աշոտ Աբրահամեանը կըսէր, միջին դարու ընթացքին եղած է այն ոսկեայ շղթան, որ կապած է Հայոց աշխարհը, հայութիւնը Արեւմուտքին: Հետեւաբար շատ կորիզային դիրք մը ունին Իտալիոյ գաղութները բոլոր միջին դարու ընթացքին, եւ իզուր չէ, որ Յակոբ Մեղապարտ Վենետիկ կերթայ, Մխիթար Աբբահայր Վենետիկ կերթայ, չեն երթար Բեռլին, Փարիզ, նոյնիսկ Ամստերդամ: Վանանդեցիները Ամստերդամ գացին այդ շրջանին, որովհետեւ հայերուս մէջ կար բացառիկ

հոտառութիւն մը, թէ որն էր այդ տուեալ պահուն Եւրոպայի ամէնէն յառաջացած կեդրոնը: Ուրեմն այդ ուսումնասիրութեանս ընթացքին, որուն իբր մեկնարկ ծառայած է Ալիշանի հսկայածաւալ աշխատանքը, մեծ բախտն ունեցած եմ աշխատելու ուղղակի Ալիշանի դիւանին մէջ: Կրցած եմ ստուգել մէկ առ մէկ Ալիշանի դիւանին բոլոր տուեալները, Ալիշանի բոլոր հաստատութիւնները, ինչ որ յիշած եւ ըսած է հայոց Իտալիոյ մէջ ներկայութեան մասին, եւ ասոնց համապատասխան բոլոր աղբիւրները: Արդարեւ Ալիշան, իր դիւանին մէջ, իր արխիւներուն մէջ, ամէն բան նշած է ամենայն բծախնդրութեամբ եւ մանրամասնութեամբ, մինչեւ էջերն ու տողերը: Ամէն վկայութիւն՝ որ արած է իտալացի կամ ֆրանսացի, գերմանացի կամ անգլիացի հեղինակներէ, ուղեգիրներէ, պատմաբաններէ: Հաւատացէ՛ք՝ մէկ առ մէկ ստուգած եմ, ասիկա 5-6 ամսուան աշխատանք եղաւ՝ 1976-1977 թուականների միջեւ: 45 տարի է գրեթէ անցած: Այդ ամեհի ովկիանոսին մէջ մէկ սխալ մը անգամ չեմ գտած: Միակ գտած վրիպակս՝ զոր կրնամ նշել՝ հետեւեալն է. էջաթիւ մը փոխանակ 22-ի նշուած էր իբրեւ 23: Ա՛յսքան: Եւ ինծի դժուար չէղաւ էջը դարձնելով գտնել սկզբնաղբիւրը: Ուրեմն Ալիշանի բոլոր հաստատութիւնները, բոլոր հաւաստումները ծայր աստիճան հաւաստի են: Օրինակ մը եւս տամ. Ալիշան կ՚իշէ, որ Պալերմոյի պաշտպան սուրբը եղած է որոշ ժամանակ մը՝ մօտաւորապես 60-70 տարի, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ: Կարճ շրջան մը, եւ այդ՝ թէականօրէն յիշուած, ըստ ժողովրդական աւանդութեան: Ես ասիկա յիշած եմ իմ աշխատանքիս մէջ իբրեւ Ալիշանէ առնուած վկայութիւն, բայց՝ ինչպէս ըսի՝ Ալիշան ինքն ալ այս վկայութիւնը չէ յիշած իբրեւ ստոյգ տուեալ, այլ իբրեւ հաւանական թուող ժողովրդական վկայութիւն մը: Ինքը ծայրաստիճան գիտակից է գիտական ստուգութեան հնարաւոր բոլոր աստիճաններուն՝ ստուգութիւն, հաւանականութիւն, առաւել կամ նուազ հաւանականութիւն կամ թերեւհաւանականութիւն: Ապա ստուգեցաւ «ծերոց աւանդութեան» հաւաստիութիւնը: Նման աշխատանք կարելի է կատարել Ալիշանի բոլոր գործերուն նկատմամբ՝ գլուխ առ գլուխ, ո՛չ այնքան ստուգելու համար Ալիշանի վկայութիւններուն հաւաստիութիւնը, որքան երեւան հանելու համար աղբիւրագրական վիթխարի ժառնգութիւն մը, որ այսօր, նորագոյն պրպտումներու լոյսին ներքեւ, կրնայ նոր լոյս սփռել մեր պատմութեան բազում անցքերուն վրայ: Բոլոր այն գործերը, որոնք այլեւս դուրս կը մնան յաճախ մեր ժամանակակից ուշադրութեան հորիզոնէն, կկազմեն կրնանք ըսել Ալիշանի ենթատեքստը, որոնք ո՛չ միայն Ալիշանի, այլ եւ յետագայ աշխատանքներու հիման վրայ, կրնան հետազօտական նոր հորիզոններ ուրուագրել: Ուստի Ալիշանի կերպարը նոր լոյս եւ արժեւորում կը ստանայ ո՛չ սոսկ իբրեւ վաւեր բանասէր, այլ որպէս մեծ բանասէր, ինչպէս որ է ստուգիւ:

Եւ վերջին կէտը: Ալիշան իբրեւ գաղափարախօս, որ գուցէ ամէնէն փափուկ եւ վիճարկելի կէտն է: Գիտենք Աւետիք Իսահակեանի կարեւոր մէկ պատումը իր յուշերուն: Երբ Աւետիք Իսահակեան կու գայ Սբ. Ղազար, ինչպէս սովորութիւն էր եղած արդէն, 1894-1895 թուականներին պէտք է եղած ըլլայ, շատ երիտասարդ է ինքը, իսկ

Ալիշան արդէն Նահապետի համբաւ կը վայելէ: Այցելուները կ՚ընդառաջէին, ոտքերը կիամբուրէին: Անշուշտ, թոյլ չէր տար, ոտքի վեր կիանէր: Աւետիք Իսահակեան կ՚ընդառաջէ, կուզէ ոտքերը համբուրել եւ կ՚ըսէ. «Երջանիկ ես, Նահապե՛տ, մեր երիտասարդութիւնը կ՚ջանան քու պատգամները իրականացնել»: Հայ յեղափոխական շարժումները նոր ծնունդ կառնէին, կային արդէն ենթախորքային կերպով, բայց կազմակերպուած ձեւով 1885-1890-ական թուականներուն երեւան կու գան: Ի՞նչ կըլլայ Ալիշանի պատասխանը, շատ նշանակալից է, երկու-երեք տող է: Կ՚ըսէ, որ դուք զիս սխալ հասկցաք, ես յեղափոխութիւն չքարոզեցի, եւ կ՚յիշէ Պոլսոյ պատրիարքը, անունը չի տար: Ինչո՞ւ, չեմ կրնալ ըսել, բայց կարող եմ կռահել, թերեւս, անունը չի տար, շատ իմաստուն մարդ է կ՚ըսէ, Օրմանեան պատրիարքն է: Կ՚ըսէ. «Անոր խորհուրդներուն հետեւեցէ՛ք»: Բայց մենք գիտենք, որ մի քանի տարի վերջ, այդ նոյն Օրմանեան պատրիարքը մենք գահընկեց ըրինք եւ շատ անարգական ձեւով: Ալիշան Պոլսոյ պատրիարքին օրինակ կու տայ, իբր հետեւելիք իմաստուն մարդու: Նման ակնարկ մը կայ նաեւ Գելցերի մէկ գրութեան մէջ, որ ծանօթ հայագէտ է: Երբ կայցելէ Սբ. Ղազար, Ալիշանի հետ իր զրոյցին երբ կակնարկէ, կտեսնենք, որ նոյն գաղափարը կայ. այսինքն՝ ակնարկ հայերու մէջ տարածուած համոզումին՝ թէ Եւրոպան, իբրև քրիստոնեայ իրականութիւն, մեզի կօգնէ և այլն: Ալիշան կը ջանայ իր ունկինդիրներուն այս գաղափարը հերքել: Որ է յոյս, վստահութիւն մի՛ ունենաք արեւմտեան քաղաքականութեան վրայ: Այստեղ կը յայտնուի Ալիշանի դիրքը իբրեւ գաղափարախօս. շատ կարեւոր յենք մը՝ զոր նկատի պէտք է առնել նաեւ՝ այդ թուականներու համագրին մէջ: Օրինակ մը տամ: Կարդանք Դանիէլ Վարուժանի գրածները Հայր Ստեփան Սարեանի մասին, որ կներկայացնէր Մխիթարեան դասական աւանդութիւնը, նաեւ քաղաքական գետնի վրայ: Մխիթարեանները եղած են արդարեւ մէծ դիւանագէտներ: Այս հաւաստումիս մեծագոյն փաստն է՝ թէ ինչպէս կը յաղթահարեն Նապոլեոնական արհաւիրքը, զոր յիշեցի արդէն: Անձնապէս կը խորհիմ թէ այս աւանդութիւնը կու գայ, յետ Մխիթարի հանճարեղ յղացքին, նաեւ իր շատ արժեքաւոր, շատ արժանի յաջորդին՝ Ստեփանոս Ագոնց աբբահօր ներդրումէն, որ Տրանսիլուանիոյ իշխանական տունէն կսերէր: Ըստ աւանդութեան այդ հայերը մասամբ կամ մեծ մասամբ Անիէն կսերէին: Հետեւաբար Անիի իշխաններուն իշխանական աւանդութեան նշոյլ մը կար Տրանսիլուանիոյ այդ ազատներուն միջեւ, որովհետեւ Ստեփանոս Ագոնցի տապանաքարին վրայ գրուած էր. «Ստեփանոս Ագոնց Ազատ ՃուրՃովայ»: Այդ աւանդութիւնը կար, որու հետեւորդ էր նաեւ Ալիշան: Բայց, այդ թուականներուն որոշ Մխիթարեան հայրեր արդէն տարբեր ուղղութիւն մը որդեգրած էին: Օրինակ՝ Հայր Սիմէոն Երեմեան, որի հանդեպ շատ մեծ համակրանք ունի եւ կարտայայտէ Դանիէլ Վարուժան: Մինչդեռ Հայր Ստեփան Սարեան այնքան հաճելի չէ իրեն: Հայր Ստեփան Սարեան նահատակուած է Տրապիզոնի մէջ Հ. Կարապետ Տեր-Սահակեանի հետ:

Այստեղ պիտի ուզէի խօսքս փակել՝ մեծ առեղծուածի մը ակնարկելով: Ալիշան երեսուներկու տարեկանին կթողու բանաստեղծութիւնը, մուսային հրաժեշտ կուտայ այն գլուխգործոց քերթուածով, զոր արդէն յիշեցի՝ Հուսկ բան: Ալիշան իր էութեամբ բանաստեղծ է եւ երեսուներկու տարեկանէն յետոյ, որ 1852 թուականն է, Պետրոս Դուրեանի ծննդեան տարին, մէկ անգամ միայն թոյլ կուտայ, որ սիրտը բացուի, պառթկայ, երբ որ Անիի աւերակներու մասին «Անդորրանք Անւոյ» քերթուածը պիտի յղանայ: Այդ չքնաղ բանաստեղծութիւնը գրած է ուշ տարիքին եւ միակ բացառութիւնն է: Հիմա, վանական աւանդութեան մէջ հարց մը կայ, թէ ինչո՞ւ այս մարդը, որ բանաստեղծութեան հրաբուխ է, երեսուներկու տարեկանին կթողու բանաստեղծութիւնը: Վանական ավանդութիւն է, իբրև թէ աբբայահայրը ըսած ըլլայ իրեն, թէ ի՛նչ այսպէս պարապ բաներ կգրես, դատարկաբանութիւններ, լաւ է աւելի լուրջ գործերով զբաղիս: Անկեղծօրեն չեմ կարծեր, որ Մխիթարեան աբբամահայր մը այսպիսի բան ըսած ըլլայ, որովհետեւ Մխիթարեան հայրերը իրենց վիթխարի գործունեութեան կարգին նաեւ քերթուած կգրէին, բայց ամէնքն ալ բանաստեղծ չէին: Ես կկարծեմ, որ այդ թիւրիմացութիւն է: Կկարծեմ որ – անշուշտ առ այժմ վարկածի սահմաններուն մէջ - երիտասարդ Ալիշանը երեսուներկու տարեկանին արդէն զգաց բռնկող հրդեհը, պոռթկացող հրաբուխը, այն թիւրիմացութիւնը՝ որու մասին բացայատօրէն կխօսէր երիտասարդ Իսահակեանի հետ: Կուզէր հրաժարիլ քերթուածներու այդ ռոմանթիկ աշխարհէն եւ երթալ դէպի այն իսկական գաղափարախօսական ծիրը, եւ վերակերտել Հայոց աշխարհը, սկսելով իր պատմութեան հարազատ մեկնարկէն, իր իսկական մեծութեամբ: Այս միտքը ամէն բանէ առաջ կենթադրէր իմացական, մշակութային, հոգեկան եւ մանաւանդ պատմական խորք մը, իրականութիւն մը՝ քաղաքական կառոյց հանդիսանալէ առաջ: Ինչ որ կ՛ըսեմ, վարկածի սահմաններուն մէջ, անշուշտ մեկնաբանութիւն մըն է եւ ուսումնասիրութեան կարօտ հարց մը :

Եւ հիմա թոյլ տուէք որ խօսքերս փակեմ «Հուսք բան»ի Մուսային ուղղուած մեծ մաղթանքով, որ կը բխի երիտասարդ, տուայտող Ալիշանի սրտէն՝ իբրեւ յոյսի ճիչ երկրաւոր եւ յաւերժ հանդերձեալին համար, զայն յարասելով միանգամայն Հ. Մեսրոպ Ճանաշեանի գեղեցիկ աշխարհաբար թարգմանութեամբ.

«Ասա՛, «Սի՛րտ, մի՛ զարհուրիր. որ զքեւ թուիդ շուրջ գալի՝
Միայն ցընորք եւ երազք, ունայնութիւնք աշխարհի,
Այլ քո Հաւատք, քո յոյս, քո սէր՝ կան մընան հաստատուն,
Վայրի՛կ մի եւս, եւ տեսցես զընստոյգ, զԱստուած իսկ համբուն»:
«Ընէ, սիրտ մի ՛ զարհուրիր, ինչ որ գալիք կը թըւի՝
Միայն ցնորք է եւ երազ, ունայնութիւն աշխարհի.
Մինչ քու հաւատքն, յոյսն ու սէր, կան ու կը մնան հաստատուն,
Դեռ պահ մըն ալ, եւ պիտի տեսնես ստոյգն, Էնն իսկաբուն»:

GHEVOND ALISHAN AS A POET, PHILOLOGIST AND IDEOLOGIST

HIS EMINENCE ARCHBISHOP LEVON ZEKIYAN
The Pontifical Delegate of the Mekhitarist Congregation of Venice,
the Primate of the Diocese of the Armenian Catholic Church in Turkey

I appreciate the organization of the conference dedicated to the 200th anniversary of birth of Ghevond Alishan, the Father of the Mekhitarist Congregation, by Gavar State University.

I will present Ghevond Alishan as a poet, philologue and ideologue. Alishan is a great poet, the founder of romantic poetry in Armenian literature. We can say that Alishan is one of the greatest representatives of the general European romanticism, who stands on the high platform of European literature, next to Lamartine and Leopardi. Alishan's masterpieces are his ancient Armenian poems.

The prayers published by Alishan, entitled "Prayer of the Monastic", are masterpieces of our and Christian literature in general.

Alishan is a profound philologue, a scientist with an invaluable contribution to Armenology, a powerful ideologue.

Keywords: *Alishan, philologue, poet, ideologue, scientist, naturalist, folklore collector, historian, Armenologist, geographer.*

ГЕВОНД АЛИШАН КАК ПОЭТ, ФИЛОЛОГ И ИДЕОЛОГ

ЕГО ВЫСОКОПРЕОСВЯЩЕНСТВО АРХИЕПИСКОП ЛЕВОН ЗЕКИЯН
Папский Делегат Конгрегации Мхитаристов Венеции,
Предстоятель Епархии Армянской Католической Церкви в Турции

Я приветствую всех участников научной конференции Гаварского государственного университета, посвященной 200-летию со дня рождения Гевонда Алишана, отца Конгрегации Мхитаристов.

Я представлю Гевонда Алишана как великого поэта, филолога и идеолога. Алишан – несравненный поэт, основоположник романтической поэзии в армянской литературе. Можно сказать, что Алишан - один из величайших представителей общеевропейского романтизма, стоящий на высокой платформе европейской литературы, рядом с Ламартином и Леопарди. Шедевры Алишана - его стихи на старинном армянском языке-грабаре.

Опубликованные Алишаном молитвы под названием "Молитва отца" являются шедеврами нашей и христианской литературы в целом.

Алишан - ученый, идеолог, филолог, внесший неоценимый вклад в арменоведение.

Ключевые слова: *Алишан, филолог, поэт, идеолог, ученый, фольклор, историк, арменовед, географ.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 13.09.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2020թ.:

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան
e.mail: asoyan.60@mail.ru

Ղ. Ալիշանը Մխիթարյան միաբանության հայրերի գործիչներից մեկն է: Նրա հետաքրքրությունների շրջանակը բավականին լայն է եղել. գրականություն, բանահյուսություն, պատմություն, կրոն, բուսաբանություն և այլն: Ինքն էլ գրել է բանաստեղծություններ, պատմագեղարվեստական երկեր: Հոդվածում ներկայացվել է Ղ. Ալիշանի երկերի լեզվական առանձնահատկությունները 19-րդ դարում արևմտահայերենի զարգացման համատեքստում: Նշված ժամանակաշրջանի լեզվական իրավիճակը մտավորականությանը դնում էր երկընտրանքի առաջ: Մի կողմից իր դիրքերը չէր զիջում գրաբարը, որով ստեղծվում էր հսկայածավալ գրականություն, մյուս կողմից էլ արևմտահայ աշխարհաբարն էր իր իրավունքները հաստատում գրականության մեջ: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ մտավորականությունը պիտի ընտրություն կատարեր լեզվի կիրառության հարցում: Ալիշանը գրում է և՛ գրաբարով, և՛ աշխարհաբարով: Հոդվածում ներկայացվում են Ալիշանի՝ արևմտահայերենով գրված երկերի լեզվական առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ *արևմտահայերեն, Ղևոնդ Ալիշան, Մխիթարյաններ, գրաբար, բարբառ, օտարաբանություններ, բանահյուսություն, պատմություն, բառապաշար, քերականություն:*

18-19-րդ դարերը հայ հասարակական կյանքում մշակութային նշանակալի տեղաշարժերի ժամանակաշրջան էր: Նախորդ դարերում պատմական, հասարակական-քաղաքական, սոցիալական անկայուն իրավիճակը, պայմանավորված Թուրքիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի հերթական բաժանմամբ, հայ ժողովրդի մասնատմամբ ու գաղթերով, օտար տերությունների բռնաճնշումներով, խոչընդոտում էր մշակութային հարաբերությունների լիարժեք դրսևորմանն ու զարգացմանը: Ժամանակի ընթացքում ձևավորվում են հայկական գաղթօջախներ, որոնցում կյանքը կամաց-կամաց ընկնում է հունի մեջ: Այնուամենայնիվ, պետականազուրկ հայ ժողովրդի համար կենսական միակ հենարանը, գոյության խորհուրդն ու իմաստը մնում էր մշակույթը: Պատմությունը ցույց է տալիս, որ նման ճակատագրական պահերին մշակութային վերելքը դարձել է ինքնապաշտպանության հզոր գործոն: Իսկ

ինչ նախադրյալներ էին ստեղծվել հայ մշակույթի աննախադեպ զարգացման համար. 1. կայուն գաղթօջախների ձևավորում, 2. հասարակական կյանքի, հարաբերությունների կանոնավորում և կայունացում, 3. հայոց համախմբումը հատկապես Վենետիկում և Կոստանդնուպոլսում, եվրոպական և ռուսական համալսարանական միջավայրերում, 4. հայ տպագրության սկզբնավորումը, նախակրթարանների, վարժարանների, դպրոցների բացումը, 5. հայ պատմիչների երկերի տպագրության փաստը, 6. մշակութային կազմակերպությունների, մասնավորապես Մխիթարյան միաբանության ստեղծումը և այլն: Բայց փաստենք նաև, որ էական տարբերություններ կային արևմտահայոց և արևելահայոց կենսակերպերի, գոյատևման հնարավորությունների առումով, որն ավելի ակնառու դարձավ 19-րդ դարում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես 19-րդ դարը արևմտահայության շրջանում ազգային ինքնագիտակցության, պետականության վերականգնման նպատակով ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման ժամանակաշրջան էր, որը 19-րդ դարի երկրորդ կեսին արդեն արտահայտվում էր զինված ապստամբությունների միջոցով: Հասկանալի է, որ այդպիսի պատմական իրավիճակում ուշադրության կենտրոնում են հայտնվում այնպիսի ազգային արժեքներ և գաղափարներ, որոնք ժողովրդի մեջ ուժեղացնում են հայրենասիրական, ազատասիրական զգացումները: Արևմտահայ մտավորականությունը ամեն ինչ անում էր՝ պահպանելու ազգային դիմագիծը, ազգային միասնությունը: Եվ դա ոչ միայն հենց Թուրքիայում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Հատկանշական է մի շատ կարևոր հանգամանք. լեզվի խնդիրը դառնում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության կենտրոնական բաղադրիչներից մեկը: Իսկ որ լեզվի խնդիր կար, դա ականառու էր. պետք էր մաքրել գրաբարը լատինաբանություններից, այլ եկամուտ լեզվատարրերից և կանոնարկել նոր ձևավորվող արևմտահայերենի քերականական համակարգը, բառապաշարն հարստացնել գրաբարի միջոցով՝ լեզվից դուրս մղելով թուրք-պարսկականը: Կար նաև դրանց կիրառության խնդիրը:

Ահա, կարծես պատմական անհրաժեշտության ծնունդ էր Մխիթարյան միաբանության ստեղծումը, որը իր ուսերին վերցրեց հայ մշակույթի ուսումնասիրության և առաջմղման հիմնական ծանրությունը:

19-րդ դարի 2-րդ կեսին բեղմնավոր գործունեություն էր ծավալել Ղևոնդ Ալիշանը: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկել է հայագիտության բոլոր ոլորտները, իր բանաստեղծություններով նա հայ գեղարվեստական մտածողությունը բարձրացրեց եվրոպական մակարդակի՝ հայ գրականության մեջ սկզբնավորելով ռոմանտիկական ուղղությունը: Այնուամենայնիվ, մեր խնդիրը նրա հայագիտական և

գեղարվեստական ժառանգության ուսումնասիրությունը չէ, այլ այդ երկերի լեզուն, որի ուսումնասիրությամբ կարելի է կարծիք կազմել ոչ միայն հեղինակի լեզվական նախասիրությունների, լեզվի կիրառման յուրահատկությունների, նրա նկատմամբ դրսևորած վերաբերմունքի, այլև պատկերացում կազմել արևմտահայերենի զարգացման, կանոնավորման ընթացքի, գրաբար-աշխարհաբար փոխհարաբերությունների մասին: Բանն այն է, որ նշված ժամանակաշրջանում լեզվական իրավիճակն այնպիսին էր, որ մտավորականներին պարտադրում էր որոշակի մոտեցում դրսևորել լեզվի ընտրության հարցում: Միաժամանակ հրապարակի վրա էին և՛ գրաբարը, և՛ արևմտահայ աշխարհաբարը՝ իրենց առավելություններով և թերություններով, ուստի մտավորականը երկընտրանքի մեջ էր՝ որը ընտրի՝ իր գրությունները հասարակությանը ներկայացնելու համար: Մտավորականներից շատերը բարձրաձայնում են երկու լեզվաորակների, նրանց կիրառման նպատակահարմարության նկատմամբ իրենց վերաբերմունքը, շատերն էլ պարզապես կիրառում են՝ առանց տրվելու բանավեճի գայթակղությանը: Ղ. Ալիշանը գրաբար թե աշխարհաբար բանավեճի մեջ չի ներքաշվել և ստեղծագործել է թե՛ գրաբարով, թե՛ աշխարհաբարով: Գիտական ուսումնասիրությունները բացառապես գրաբարով են, իսկ հրապարակախոսական, ժողովրդական տարերքի երկերը՝ առօրյա, ազգային խնդիրներ շոշափող, հիմնականում գրված են աշխարհաբարով: Ըստ երևույթին, Ալիշանն էլ կարծում էր, որ դեռևս հնարավոր չէր «ապավինել» արևմտահայ աշխարհաբարի հնարավորություններին և լուրջ գիտական ուսումնասիրություններ հրապարակել, մինչդեռ այդ առումով գրաբարի հնարավորություններն առավել քան ակնհայտ էին: Այնուամենայնիվ, այլ մտավորականների նման Ալիշանն էլ հասկանում էր, որ ժողովրդի հետ հաղորդակցվելու միակ միջոցը աշխարհաբարն էր, որին էլ դիմում էր ըստ անհրաժեշտության: Ղ. Ալիշանի գրական-գիտական գործունեությունը Մխիթարյանների և ընդհանրապես իր ժամանակի մտավորականության գործունեության համատեքստում բերում էր մի շարք նորություններ, որոնցից մեկն էլ լեզուն էր, աշխարհաբարի կիրառությունը, որով նա տարբերվեց մյուս գրագետներից մասնավորապես գեղարվեստական-բանաստեղծական արծարծումներով: Դա էր պատճառը, որ նրան հետագայում բնութագրեցին որպես արևմտահայ բանաստեղծության լեզվի զարգացման նոր փուլի սկզբնավորող[1]:

Հարկ է նշել, որ աշխարհաբար կոչվածը բավական բազմաձև էր:Այսպես, կարելի է առանձնացնել հետևյալ տիպերը. ա) աշխարհաբար, որի վրա զգալի էր գրաբարի ազդեցությունը, բ) աշխարհաբար, որի բառապաշարը գերհագեցած էր օտարաբանություններով, գ) աշխարհաբար, որտեղ շատ են հանդիպում բարբառային լեզվա-

[1] .Տե՛ս Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978:

տարրերը: Ալիշանի աշխարհաբարը, մասնավորապես «Երգք Նահապետի» շարքի բանաստեղծությունները և բանահյուսական նյութերի ուսումնասիրությունները աչքի են ընկնում «ռամկական» բառուբանով, որով և առանձնանում է մյուսներից և Հր. Աճառյանի կողմից բնորոշվում որպես ինքնատիպ «ալիշանյան աշխարհաբար»:

Ղ. Ալիշանի երկերի լեզուն ուսումնասիրելիս խիստ ընդգծվում է մի կարևոր հանգամանք. կատարվում էր լեզվական որակների կիրառության ոլորտների, եթե կարելի է ասել, բաշխում՝ գիտական արտադրանքը ներկայացվում էր գրաբարով, որը հասու կարող էր լինել մտավորականության մի որոշակի շրջանակի և, ըստ երևույթին, կարիք էլ չէր զգացվում դա դարձնել հասարակական բոլոր խավերի սեփականությունը, իսկ աշխարհաբարն օգտագործվում էր բոլոր այն դեպքերում, երբ հատկապես անհրաժեշտ էր առնչվել հասարակական բոլոր շերտերի հետ: Վերջին հանգամանքը շատ էր կարևորվում այն առումով, որ, ինչպես արդեն նշել ենք, հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքը, որն ակնառու էր արդեն 17-րդ դարից սկսած, անհնար էր առանց ազգային մշակութային արժեքների վերհանման, գնահատման և նույն հայ ժողովրդի սեփականությունը դարձնելու: Ահա, խորապես գիտակցելով է, որ Ալիշանը իր հայրենասիրական բանաստեղծությունները և պատմագեղարվեստական երկերը ներկայացնում էր հիմնականում ժողովրդին հասկանալի արևմտահայերենով («Երգք Նահապետի», «Յուշիկք հայրենեաց»):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ Ալիշանի գործածած աշխարհաբարը տարբեր երկերում տարբեր որակներ ունի: 19-րդ դարի 40-50-ական թվականներին գրական արևմտահայերենը բավականին մաքրվել էր և կատարելագործվել. բառապաշարը գրեթե մաքրվել էր թուրք-պարսկական բառամթերքից, քերականական համակարգը կանոնարկման և միօրինականացման ուղի էր բռնել: Եվ Ալիշանը, պետք է ասել, լավագույնս տիրապետում էր այդ լեզվաոռակին: Դա երևում է «Բազմավէպ»-ում տպագրած ուսումնասիրություններից, հոդվածներից, պատմագեղարվեստական նյութերից, սակայն բանաստեղծական երկերում այդպիսի մաքրություն չկա: Այստեղ կանոնավոր աշխարհաբարին զուգահեռ և՛ գրաբարյան, և՛ բարբառային կամ, այսպես կոչված, «ռամկական» լեզվամիջոցներ են օգտագործված: Ընդհանրապես կարելի է նկատել Ալիշանի աշխարհաբար գեղարվեստական երկերի հետևյալ առանձնահատկությունները. ա) շատ է օգտագործում ժողովրդախոսակցական, բարբառային, նույնիսկ արևելահայերենին բնորոշ լեզվամիջոցներ: Այս տեսակետից հետաքրիր է Ալիշանի մի դիտարկումը: Խոսելով ժողովրդական երգերի մասին՝ նա «Ազգային երգերու և ուրիշ աւանդներու վրայ» հոդվածում գրում է. «Եւ կարծեմ, աւելի վսեմ հայկական լեզուով ալ գրուած ըլլար նէ, նոյն աղուորու-

թիւնը չէր ունենար»[1]: բ) Սկզբունքային, մերժողական վերաբերմունք է ցուցաբերում օտարաբանությունների, մասնավորապես թրքաբանությունների նկատմամբ, ուստի նրա լեզուն զերծ է օտարաբան ձևերից:

Ժամանակի մտավորականությունը իր ոչ դրական, եթե չասենք բացասական, վերաբերմունքն է արտահայտել աշխարհաբարի նկատմամբ հասկանալի պատճառներով, և դա, ի տարբերություն արևելահայերի, արևմտահայոց մեջ ձգվում է տևական ժամանակ, մինչև 19-րդ դարի 90-ական թվականները: Ալիշանն էլ բացառություն չէր: Նա էլ աշխարհաբարը համարում էր «խղճուկ լեզու»[2], որը չուներ գրաբարի մշակված ճոխությունը, սակայն ի տարբերություն այն մտավորականների, որոնք համառորեն չէին ուզում նկատել գրաբարի ժամանակավրեպությունը և շարունակում էին ստեղծագործել գրաբարով (օրինակ՝ Ա. Բագրատունին): Ալիշանը հասկացավ մեր լեզվի զարգացման ընթացքի տրամաբանությունը և ինչքան էլ վերապահումով էր վերաբերվում աշխարհաբարին՝ բարձր գնահատելով գրաբարի արժանիքները, այնուամենայնիվ դիմեց նրան՝ հասկանալով, որ այդպես կարող է ժողովրդին հասկանալի լինել, և վերջին հաշվով նրա նպատակն էլ հենց այդ ժողովրդին հասկանալի լեզվով հայրենասիրության ոգի ներարկելն էր՝ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման հիմնական միջոցն ու բաղադրիչը: Ահա թե ինչ է ասում նա. «Եթէ կարենայի և ուզենայի Նարեկացւոց թռուցիկ և հրաթափ լեզուով մը վիպասանել, գուցէ քիչ մը աւելի սիրտս կու զովանար, կու հանգչէր, բայց անշուշտ առայժմ քիչերու հասկնալի պիտի ըլլայի և շատերու անօգուտ»: Փաստորեն, այստեղ կարելի է տեսնել աբովյանական «հարիր հազարին» հասկանալի լինելու տեսակետի արձագանքը: Այս տեսակետից Ալիշանը շարունակում էր Մ. Սեբաստացու՝ լեզվի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը՝ օգտագործել գրաբարը, բայց և չխոչնդոտել աշխարհաբարի զարգացմանը և ոչ միայն չխոչընդոտել, այլև նպաստել նրա կանոնարկմանը, բառապաշարի ազնվացմանը, որովհետև հենց այդ լեզվաորակին էր պատմականորեն վիճակված դառնալու հասարակական բոլոր շերտերի հետ գրավոր հաղորդակցում իրականացնելու միակ միջոցը: Լեզվի հարցում Ալիշանի դրսևորած շրջահայացության մասին է վկայում հետևյալ փաստը. երբ Ա. Այտընյանը հրատարակության էր պատրաստում իր «Քննական քերականութիւնը», հենց Մխիթարյանների միջավայրում ձևավորվում է երկու տարբեր մոտեցում այդ աշխատության նկատմամբ. «Բագրատունին Ոլիմպոսի բարձունքներէն կը դիտէր և անհամբեր կը սպասէր Քննական քերականութեան հրատարակուելուն, որպէսզի իւր ծանօթ թափովն յարձակի այս կատարուած ահաւոր սրբապղծութեան վրայ ընդդէմ

[1] Ալիշան Ղ., Երկեր, Եր., 1981, էջ 104:
[2] Ավետիսյան Յու., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., 2002, էջ 66:

իւր պաշտելի գրաբարին: …Վանքին մէջ այն ատեն միմիայն Վ. Հ. Ղևոնդ Ալիշան նպաստաւոր հետաքրքրութեամբ կը սպասէր Այտընեանի գործոյն հրատարակուելուն»[1]:

Ամփոփենք. Ղ. Ալիշանը՝ իբրև մտավորական, պատկանում է այն Մխիթարյաններիի թվին, որոնք հավասարակշռված մոտեցում են ցուցաբերում ստեղծված լեզվական իրավիճակի նկատմամբ: Գրաբարյանների նման նա բարձր է գնահատում գրաբարի «վսեմական լեզու» լինելու փաստը, միաժամանակ ընդունում է նրա՝ ժողովրդի համար արդեն վաղուց անհասկանալի և անընդունելի լինելու հանգամանքը, մյուս կողմից էլ ընդունում է աշխարհաբարի անհրաժեշտությունը որպես հասարակական հաղորդակցման միակ միջոցի և՛ գրավոր, և՛ բանավոր հաղորդակցման ոլորտներում: Այսուհանդերձ Ղ. Ալիշանը օգտվում է և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի հնարավորություններից: Ըստ երևույթին, նման մոտեցումը պայմանավորված էր ոչ միայն անհատական, այլ նաև տվյալ ժամանակաշրջանում ձևավորված հասարակական ընկալումներով:

Վերջում ներկայացնենք Ղ. Ալիշանի պատգամը՝ ուղղված հայ ժողովրդին 200-ամյա հեռվից, որը նաև խիստ այժմեական է.

- Պաշտելու աստիճան սիրել և պահպանել հայոց լեզուն և հայրենի հողը, հայն ու իր մշակույթը, որոնք ծաղկումի և ճառագայթումի առաջնորդեցին հայկյան հանճարը՝ դարավոր ստրկության և խավարի ու անկումի ժամանակներուն դեմ ինքնապահպանման և վերականգնումի հզորագույն զենքերը դառնալով հայության իրարահաջորդ սերունդներուն:

[1] Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Եր., 1971, էջ 160:

LANGUAGE PECULIARITIES OF WORKS BY GHEVOND ALISHAN

ASOYAN TATUL
PhD in Philology, Associate Professor,
Dean of the Faculty of Philology, GSU

Gh. Alishan is one of the famous figures of the Mekhitarist Congregation. The range of his interests was quite wide: literature, folklore, history, religion, botany, etc. He also wrote poems and historical and artistic works. Linguistic peculiarities of works by Gh. Alishan in the context of the development of Western Armenian in the 19th century is presented in the article. The linguistic situation of the mentioned period put the intellectuals in a dilemma. On the one hand, grabar /Old Armenian/, whereon a huge amount of literature was created, did not concede its position, and on the other hand, ashkharhabar /the new Armenian language/ established its rights in literature.There was a situation when the intellectuals had to make a choice in the use of language. Alishan used both Old Armenian and New Armenian. The article presents the linguistic features of Alishan's works written in Western Armenian.

Keywords: *Western Armenian, Ghevond Alishan, Mkhitaryans, grabar /Old Armenian language/, dialect, loan words, folklore, history, vocabulary, grammar.*

ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ ПРОИЗВЕДЕНИЙ ГЕВОНДА АЛИШАНА

АСОЯН ТАТУЛ
Кандидат филологических наук, доцент,
Декан филологического факультета ГГУ

Г. Алишан - один из известных деятелей конгрегации мхитаристов. Круг его интересов был довольно широк - грабар, литература, фольклор, история, религия, ботаника и др. Сам он писал стихи и историко-художественные произведения. В статье представлены лингвистические особенности произведений Г. Алишана в контексте развития западноармянского языка в XIX веке. Языковая ситуация указанного периода ставила интеллигенцию перед дилеммой. С одной стороны, не уступал свои позиции грабар, на котором было создано огромное количество литературы, а с другой стороны, ашхарабар (новоармянский язык) отстаивал свои права в литературе. Сложилась ситуация, когда интеллигенции пришлось сделать выбор в вопросе использования языка. Алишан писал как на грабаре, так и на ашхарабаре. В статье представлены лингвистические особенности произведений Алишана, написанных на западноармянском языке.

Ключевые слова: *западноармянский, Гевонд Алишан, Мхитаряны, грабар, диалект, варваризмы, фольклор, история, лексика, грамматика.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 08.10.2020թ.:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՆԱՀԱՊԵՏԸ

ԽԼՂԱԹՅԱՆ ԽՈՍՐՈՎ
«Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր
e-mail: khosrov1@yandex.com

Ականավոր հայագետ, գրող ու բանաստեղծ Ալիշանի թողած գրական ու գիտական ժառանգության խորքերը շատ քննադատներ են թափանցել, սակայն երևի թե ոչ մեկին առայժմ չի հաջողվել ամբողջության մեջ բացահայտել հայոց հանճարեղագույն մտավորականի ստեղծագործության տիեզերական սահմանները, որոնք ձգվում են աշխարհագրությունից մինչև պատմություն, գրականագիտությունից մինչև լեզվաբանություն, գրաբար հայերենից մինչև աշխարհաբար հայերեն, բանաստեղծությունից մինչև բանահյուսություն, արվեստագիտություն, մատենագիտություն: Այդ ամենի հանրագումարը կարելի է խտացնել մեկ բառի մեջ, որի անունը Հայրենագիտություն է, որտեղ դժվար թե Ալիշանն ունենա իր բարձունքին հավասար մրցակից: Նրան երբևէ բախտ չվիճակվեց գոնե մեկ անգամ ու մեկ ակնթարթ ոտք դնել Հայաստանի հողի վրա, շնչել նրա կենարար օդը, խմել նրա անուշահամ ջուրը, հոտոտել այն ծաղիկների բույրը, որոնք անուն առ անուն նկարագրված են նրա աշխատություններում: Փոխարենը Ալիշանն այդ ամենը զգացել է հոգով ու կլանել ամբողջովին՝ իր ստվարածավալ աշխատություններով գծելով հոգևոր Հայաստանի սահմանները, որոնք մի օր հրաշքով պիտի դառնային իրական ու պետական սահմաններ: Ալիշանն իր ստեղծագործությամբ ոչ միայն առաջ մղեց հայ միտքը, այլ նաև ազգային ազատագրական շարժումը՝ անցյալի փառքի նկարագրության օրինակով թևավորելով ու ոգևորելով ժամանակի հայ երիտասարդությանը: Շուրջ երկու դար նրա ստեղծագործությունների փայլը ոչ միայն չի խամրում, այլ նաև ավելի վառ է շողշողում՝ ի մի հավաքելով աշխարհասփյուռ հայության բեկորները հոգևոր ու աշխարհիկ Հայաստանի շուրջ, ազգային իղձերի իրականացման գաղափարի շուրջ: Այս աշխատանքը մի համեստ փորձ է՝ արժևորելու և գնահատելու այն խիզախումը, որն Ալիշանի անունն ապրեցրել ու ապրեցնելու է դարերի հավերժության մեջ, այն խիզախումը, որն Ալիշանն իրականացրեց հայրենանվիրության, գերջանքերի ու զրկանքների գնով:

Բանալի բառեր՝ *հայրենագիտություն, հայագիտություն, գրականություն, բանաստեղծություն, պատմություն, բնագիտություն, աշխարհագրություն, բուսաբանություն, արվեստագիտություն, մատենագիտություն:*

Ղևոնդ Ալիշանը հայագիտության և հայ գրականության այն ականավոր դեմքն է, որը երբեք չի իջնելու իր տիեզերական բարձունքներից, որքան էլ որ հայ սերունդները հեռանան նրա ապրած ժամանակներից: Նա, ոչ մի անգամ չգտնվելով իր մայր

հայրենիքում, չշնչելով հայրենի օդն ու մի կաթիլ անգամ չխմելով հայրենի ջրից, չտեսնելով Հայաստանի ծաղկածիծաղ բնությունը, անուրանալի հանճարով կարողացել է իր ժողովրդի դատին հանձնել հայոց պատմության, հնագիտության, աշխարհագրության վերաբերյալ բազմաթիվ ստվարածավալ ու արժեքավոր աշխատություններ՝ «Տեղագիր հայոց մեծաց», «Շնորհալի եւ պարագա յուր», «Շիրակ», «Սիսվան», «Սիսական», «Այրարատ», «Հին Հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց», «Հայապատում» և բազմաթիվ ու բազմապիսի այլ հետազոտություններ, որոնք փաստական հսկայական նյութ են պարունակում մեր ժողովրդի պատմական անցյալի համարյա բոլոր շրջանների և գրեթե բոլոր բնագավառների վերաբերյալ: Ականավոր հայագետի թողած գրական հսկայական ժառանգությունն այսօր էլ, ավելի քան մեկուկես դարի վաղեմությամբ, չի կորցրել իր արժեքն ու փայլը, հանրագիտարանային հզոր նշանակությունը:

Օտարների դաժան ու ազգասպան լուծը, որ փոքր ընդմիջումներով շարունակվել է հազարամյակների տևողությամբ, մեզ պատմության տխուր ճակատագրի բերումով դարձրել է պանդուխտ ու գերի, ցաքուցրիվ, անհայրենիք ազգ, ու շատ դեպքերում Հայաստանը հայ մարդկանց սրտերում ապրել է ավելի շատ որպես երազանք, քան թե իրականություն: Իսկ երազանքը ցանկացած իրականությունից շատ ավելի զորեղ ու իրեն քաշող սրբություն է: Այդ անագորույն լուծն ու բռնաճնշումն էր այն միակ գործոնը, որի պատճառով պետականությունից տևական ժամանակով զրկված հայությունը հարկադրված եղավ իր կրթությունը, լեզուն, գրականությունը, գիտությունը, մշակույթն ու արվեստը ավելի շատ զարգացնելու օտար երկնքի տակ, քան թե բուն հայրենիքում: Հայ մշակույթի խոշորագույն կենտրոնները նախորդ դարերի ընթացքում ծաղկում էին Պոլսում, Մոսկվայում, Մադրասում, Թիֆլիսում, Վենետիկում, զանազան այլ երկրներում, քան թե Հայաստանի տարածքում, որը բաժան-բաժան էր արված հարևան նվաճող երկրների միջև: Բոլոր նվաճողներն անողորմաբար մի բանի էին ձգտում՝ հայ ժողովրդի բռնի ձուլմանը, ազգային ինքնության ու մշակույթի ոչնչացմանը, և այդ պայմաններում շատ ավելի հերոսական կամք էր հարկավոր՝ օտարների պարտադրանքի, երբեմն էլ մշակութային հզոր միջավայրի ներքո զարգացնելու ու պահպանելու հայագիտությունը՝ հայապահպանությունը դարձնելով գերագույն նպատակ:

Մխիթարյան միաբանության նշանավոր հայրերը, հնդկահայ, ռուսահայ, պոլսահայ ու թիֆլիսահայ բոլոր մտավորականները իրենց ստեղծագործություններում կերտում էին հոգևոր Հայաստանը, փորձում ի մի հավաքել իրենց ցաքուցրիվ հայրենիքը, որպեսզի օրերից մի օր գար այդ երջանիկ ակնթարթը՝ Հայոց պետականության ծնունդը: Ալիշանը ստեղծագործական բոլոր ուղղություններում դրեց հայկականության ոգին, որպեսզի երազանքի Հայաստանը գալիքների մեջ դառնա իրական, ապրող ու շնչող Հայաստան: Դրա համար նա անցած դարերի ճակատից սրբում էր

մոռացության փոշին, պեղում հայոց անցյալի հոգևոր գանձերն ու երբեմնի փառքը և այն պատգամում գալիք սերունդներին:

Ալիշանը, ապրելով և ստեղծագործելով վանքի պատերի ներքո, Մխիթարյանների դավանած կլասիցիզմի ու գրաբար լեզվի ազդեցության տակ, հատկապես «Նահապետի երգեր» բանաստեղծությունների շարքով հաստատեց իր ուրույն տեղը հայ նոր գրականության պատմության մեջ: Նա պոեզիան դարձրեց հայ կյանքի կենդանի արձագանքը: «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ», «Հրազդան» և Նահապետի մյուս երգերի հայրենասիրական-մարտական ոգին համահունչ էր 19-րդ դարի 40-50-ական թվականներին հայ իրականության մեջ թափ առած ազգային ազատագրական ձգտումներին: Ալիշանը հարթեց հայ պոեզիայի հետագա զարգացման ուղին. նրա հայրենասիրական քնարից ստեղծագործական ներշնչումներ ստացան ականավոր գրողներ Ռափայել Պատկանյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Րաֆֆին, Դանիել Վարուժանը, գրական այլ մեծություններ: Վարուժանի ներշնչանքը Ալիշանից ցայտուն ձևով ընդգծված է «Ցեղին սիրտը» ժողովածուում ընդգրկված «Ալիշանի շիրիմին առջեւ» բանաստեղծության մեջ: Հայ ցեղի երազներով ու ցավերով ապրող Վարուժանն այս ստեղծագործությամբ պարզապես քանդակում է Ալիշանի փառքի և անմահության հուշարձանը՝ նրան դասելով հայ մտավորականության, ոգու և մտքի պարծանքների շարքերում:

«Քեզի եկա՝ իբր ուխտավոր մը հոգնած,
Որ կը գտնե հուսկ փոխարեն իղձերուն
Շիրիմ մը՝ հոն ծնրադրելու սիրտը բաց,
Եվ խոկալու, համբուրելու լույս աճյուն...

Վենետիկն իր պալատներով մարմարե
Կը ձգե վրադ ստվերն իր լայն, միամած,
Բուրգի մը պես՝ որուն ներքեւ կը նիրհե
Արծիվն ամփոփ՝ արեւն հոգվույն մեջ բանտած...

Ժողովեցի՛ր, վազք մը առնելով դեպ խլված Փառք,
Բիբդ՝ արցունքոտ, սիրտդ օվկիան՝ վիրամած,
Եվ սրբեցիր՝ զանոնք ըրած դաստառակ՝
Աչք ու աչքերը Սերունդին կեղեքված:

Քողեն մութի, մոռացումի, լռության
Հանեցիր մեր դափնիներու թերթերն հին,
Եվ դնելով զանոնք երգի մը վրան՝
Առե՛ք, ըսիր, վիրածոր շողն Անցյալին:

Ծըռած սըրտին հայ՝ սերտեցիր ու դարձար
Յուրաքանչյուր խորքն անկյունի եւ ծալքի.
Իջար անոր ամեն անդունդն հըրավառ
Եվ քըրքրեցիր ճընշված խորշն արցունքի:

Ո՛հ, Աստված իմ, ի՞նչ ըղեղ էր ատիկա,
Որ տիեզերքին քամեց երակը համայն.
Հենած մարդուն, ճառագայթին, խաչին վրա,
Գըրկեց Այրին, զոր կը կոչեն Հայաստան:

Արծի՛վ, որ մռայլ ամպերն հրեղեն բիբերով
Խորտակեցիր, մութին սառերն հալեցան.
Արծի՛վ, որ մեր հոգին կարշնեղ ճպուռով
Բարձրացուցիր, չափեցիր մեր ապագան:

Ջինջ հայլի մ’ ես՝ որտեղ ամեն մարդ կըրնա
Գըտնել, դիտել պատկերն իր ճիշտ, հարազատ,
Նըվագներուդ մեջ երբեմն ես քրիստոնյա,
Ջինվոր երբեմն, երբեմըն մոգ, միշտ Սոկրատ:

Եվ քու կյանքիդ ու երգերուդ մեջ ամեն
Դու բանաստեղծ Նահապետն ես հոգեհմա.
Բորբ արշալույս մ’ ես, որ կելլա օվկիանեն,
Ամպեն, մութեն՝ կը սըփռի Մարդուն վրա:

Այն արշալույսն, որ իր մտածման հետ անանց
Սեւ սքեմով մ’ ամբողջապես պատված է.
Եվ բոցե գլուխը սեւ գըտակ մ’ է դրած.
Գիշերվա մեջ երկնինքն եւ էլ չքնաղ չէ՞...

Դու կը նընջե՛ս, վինըդ՝ բարձ, փառքըդ վերմակ,
Ըստվեր կընեն վրադ դափնիները շուրջի.
Եվ խաղաղ քունըդ կը հըսկե Հիշատակ.
Դու կը նընջե՛ս, իբրեւ ծընննդյանդ օրն առջի:

Ամեն նոր դար նոր պիտ բերե քու անուն,
Եվ դու դարձյալ պիտի ծընիս սըրտի մեջ,

Ո՛հ, ո՛չ. Երբեք չըվախճանիս պիտի դուն,
Զի կապեցիր կյանք արեւուն հետ անշեջ »:[1]

Ահա այսպես է իր մեծ ուսուցչին գնահատել ու հավերժացրել հայ գրականության ցեղակրոն հսկան՝ Դանիել Վարուժանը:

Ղևոնդ (Քերովբե) Ալիշանը ծնվել է 1820 թվականի հուլիսի 18-ին Կոստանդնուպոլսում՝ դրամագետ-հնահավաք Պետրոս Մարգարի Ալիշանյանի ընտանիքում: Տասներկու տարեկան հասակում նրան տալիս են Վենետիկի ս. Ղազար վանքի դպրոցը («Ընծայարան»), ուր չորս տարի ուսանելուց հետո փոխադրվում է «Բարձրագույն կրթարանը»: Այստեղ էլ նա սկսում է գրական իր առաջին փորձերը: 1841 թվականին Ալիշանը նշանակվում է ուսուցիչ Վենետիկի Ռափայելյան վարժարանում: Դասավանդմանը զուգնթաց՝ նա աշխատակցում է «Բազմավեպ» հանդեսին, որը լույս էր տեսնում 1843 թվականից: 1848 թվականին նա նշանակվում է հիշյալ վարժարանի տեսուչ: Ալիշանը Վենետիկում է լինում, երբ բռնկում է իտալական ապստամբությունը ավստրիական լծի դեմ. նա լսում է վարժարանի առջևով անցնող հազարավոր իտալացի հայրենասերների ազատության ոգեշունչ երգերը, ականատես է լինում Վենետիկի փողոցներում մղվող մարտերին: Եվ այդ ամենը երիտասարդ բանաստեղծի վրա թողնում է ուժեղ տպավորություն: Իտալական ժողովրդի ազատագրական պայքարի այդ օրերին Ալիշանը գրում է «Մասիսու սարերն», «Բա՜մ, փորոտան... և մի քանի այլ մարտաշունչ-հայրենասիրական բանաստեղծություններ:

1850–1853 թվականներին նա զանազան առիթներով լինում է Հռոմում, Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Վիեննայում, ուր ուսումնասիրում է հայկական գրչագիր մատյանները, նյութական ու հոգևոր կուլտուրայի հուշարձանները, նյութեր է հավաքում հայագիտական իր ուսումնասիրությունների համար: Այս ճանապարհորդության ընթացքում նա բնագրից թարգմանում է Բայրոնի «Չայլդ Հարոլդ» պոեմի չորրորդ երգը և գրում է մի շարք բանաստեղծություններ:

1858–1861 թվականներին վարում է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի պաշտոնը: 1859 թվականի ամռանը հայ ժողովրդի մեծ զավակ Միքայել Նալբանդյանը այցելում է Մուրադյան վարժարան, ուր ծանոթանում և զրուցում է Ալիշանի հետ: Իր հիշատակարանում Ալիշանի մասին նա խոսում է դրվատանքով. «Այս արժանապատիվ անձը ծանոթ է հայոց ազգին մանավանդ Նահապետ անունով: Նորա

[1] Դանիել Վարուժան, երկերի լիակատար ժողովածու՝ երեք հատորով, հատոր առաջին, Երևան, 1986, էջ 127-129:

«Ավագ և Փոքր Մասիս», «Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Ավարայրի» տաղերգությունքը ջերմացուցել են շատ սրտեր Նահապետի անունի վերա»:[1]

1861 թվականի նոյեմբերին, թողնելով Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի պաշտոնը, Ալիշանը վերադառնում է Սուրբ Ղազար: 1866 թվականին նա կրկին նշանակվում է Վենետիկի Ռափայելյան վարժարանի տեսուչ: Այդ պաշտոնը նա շարունակում է վարել մինչև 1872 թվականը, որից հետո ընդմիշտ թողնում է մանկավարժական գործունեությունը և ամբողջությամբ, մինչև իր մահը՝ 1901 թվականի նոյեմբերի 22-ը, նվիրվում է հայագիտությանը:

Ալիշան բանաստեղծն ստեղծագործել է մեկ տասնամյակից մի փոքր ավելի, այն է՝ 1840–1852 թվականներին, 20–35 տարեկան հասակում: Իր պոեզիան գրեթե ամբողջությամբ հետագայում նա ամփոփել է «Նուագք» (Նվագներ) ժողովածուի մեջ և հինգ հատորով հրատարակել 1857–1858 թվականներին: Բեղմնավոր է եղել Ալիշանը նաև որպես բանաստեղծ. հիշյալ 10–12 տարվա ընթացքում նա արտադրել է ավելի քան երեք տասնյակ հազար տող: Պետք է նկատել, սակայն, որ Ալիշանի այդ ստվարածավալ բանաստեղծական ժառանգության մեծագույն մասը («Նուագք»–ի առաջին, երկրորդ, չորրորդ և հինգերորդ հատորները) խրթին գրաբարով գրված կրոնա-միստիկական չափածո խորհրդածություններ են, որոնք ընթերցող լայն հասարակության համար մնացել են անհասանելի և որևէ դեր չեն կատարել հայ գրականության պատմության մեջ: «Նուագք»-ի երրորդ՝ «Հայրունի» բնորոշ խորագիրը կրող հատորում են ամփոփված Ալիշանի պատմա-հայրենասիրական բանաստեղծություններն ու պոեմները, որոնց մեծ մասը դարձյալ գրված է գրաբարով: Այս հատորում են «Երգք Նահապետի» շարքը կազմող աշխարհաբար այն գործերը, որոնք հռչակել են Ալիշան–բանաստեղծի անունը և նրա համար պատվավոր տեղ նվաճել հայ նոր գրականության պատմության էջերում:

Քանակով շատ չեն այդ գործերը, սակայն մեծ է նրանց ազգապահպան ու գաղափարադաստիարակչական նշանակությունը:

Հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի կողքին գրեթե նույն ժամանակներում Ալիշանը դարձավ այն ստեղծագործողը, որը փորձում էր գրականությունը ժողովրդին հասանելի դարձնել նրա առօրյա խոսակցական լեզվով: Ուշագրավ է, որ Ալիշանը, նախքան «Նահապետի երգեր»-ը հրատարակելը, հանդես է եկել որպես ժողովրդական բանահյուսության, մասնավորապես պոեզիայի առաջին գնահատողներից մեկը մեր իրականության մեջ. այսպես՝ 1845 թվականին «Բազմավեպ»-ում տպագրված, «Ռամկական երգեր» խորագիրը կրող հոդվածում նա գրում է. «Ռամկական երգը ազգային ոգվույն մեկ ձայնն է, որ շատ հեղ ուրիշ կողմանե մեռած

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 430:

կամ մարած ատեն ալ, դեռ այսպիսի երգոց մեջ կենդանի կմնա, անոր համար՝ ազգային երգ ալ կըսվի... Այսպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացնեն ազգի հանճարը, քան թե ծանր գրվածքները, և կգտնվեն անոնց մեջ անանկ սքանչելի զործվածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան կկարծվին, բայց ճշմարտությամբ գերագույն գրվածոց կարգը անցնելու են»: Այնուհետև մեջբերելով «Ողբ կաքավու» («Նստյալ կայր ու լայր կաքվուկն...») երգը՝ ավելացնում է. «Կհամարձակիմ ըսելու, թե այս երգս անոնցմե մեկն է, որոց վրա չկրնար մեկը բան մը ավելցնել կամ պակսեցնել, և կրնա գեղեցիկ օրինակ մը ըլլալ նաև օտար ազգաց, միայն թե հայերենին քաղցրությունը կարելի ըլլա պահվիլ, որ անկարելի է. և կարծեմ՝ ավելի վսեմ հայկական լեզվով ալ գրված ըլլար նե՝ նույն աղվորությունը չէր ունենար»: Ապա «ուսումնասեր և ազգասեր ընթերցողներին» կոչ է անում գրի առնել, հավաքել Հայաստանի այլևայլ գավառների մեջ երգվող ժողովրդական այդ երգերը, «վասնզի անոնցմե կրնան շատ մարգարիտներ ելլել, և թերևս ատենով հայոց գրականության տաճարին մեջը պատվավոր տեղ մը ունենալ»: [1]

Վենետիկի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի մատենադարանների հայկական գրչագիր մատյաններում տարբեր ժամանակներում գրի առնված ժողովրդական երգերն ի մի հավաքելով՝ Ալիշանը 1852 թվականին հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակում է մի ժողովածու՝ «Հայոց երգք ռամկականք» խորագրով: Ժողովածուն պարունակում էր 19 զանազան երգեր, այդ թվում նաև հետագայում համազգային հռչակ ստացած «Կռունկ, ուստի կուգաս» երգը:

«Նահապետի երգեր»-ի հիմնական բովանդակությունը ազգային ինքնաճանաչման և ազատագրության գաղափարն է, սերն ու կարոտը դեպի հեռավոր հայրենիքը: Մի առանձին հմայք ունեն հայրենի երկրի բնությանը նվիրված Ալիշանի թախծոտ ու սրտամորմոք երգերը՝ «Հայոց աշխարհիկ», «Հրազդան» և «Հայ հայրենիք»: Այս երգերում առանձնապես ուժեղ է արտահայտված պանդխտության ցավատանջ զգացումը, որ խորապես ապրել է ինքը՝ Հովհաննես Թումանյանի բառերով ասած՝ մեր միշտ պանդուխտ ալևոր Նահապետը:

«Հրազդան» բանաստեղծությունը ընկերներին կորցրած պանդխուտի սրտահույզ զրույցն է հայրենի գետակի հետ, որ անդադրում կեղեքում է հայ մարդու հոգին.

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ,
Ահա թողել զհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդըխտիկ.

[1] «Բազմավեպ», 1845, ապրիլ 1, N7, էջ 109-111:

Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ափունք, է՞ր լայք լըռիկ...
Դուք կարկըջիկդ է՞ր եք մոռցել,
Ծիծղան երեսդ է՞ր սուգ ունի...[1]

Մեր դասական գրականության մեջ պանդխտությանը նվիրված լավագույն բանաստեղծություններից մեկն է «Հրազդան»–ը, իր անմիջականությամբ նույնքան հուզիչ, որքան և մեր ժողովրդական պանդխտության երգերը: Բանաստեղծությունը բողոք է մեր ժողովրդի անողոք ճակատագրի, նրա բազում թշնամիների դեմ, որոնք անդադար գալիս ու ամայացնում են մեր հայրենիքը, գերության քշում հարյուր հազարավոր խաղաղ մարդկանց՝ նրանց դարձնելով հայրենազուրկ ու պանդուխտ, նրանց աչքը կարոտով թողնելով հայրենի տան ու հարազատների ճամփեքին:

Իմ ընկերներն ու՞ր են, Հրազդան,
Միթե՞ պարսիկին եղան գերուկ,
Միթե ամենն ի հո՞ղ մտան,
Ա՛հ, անցուգնաց եղել է ամեն…
Անցի՛ր, գընա, ջըրիկ հայրենի,
Արտսունք հերիք են Բաբկենի:[2]

Այս բանաստեղծության ակունքներից է բխում Ռափայել Պատկանյանի հանրահռչակ «Արաքսի արտասուքը», որ պիտի լույս աշխարհ գար «Հրազդան»-ի երկնումից տասնամյակներ անց ու միանգամից տեղ գտներ հայ ժողովրդի սրտում:

Ի տարբերություն «Հրազդան»-ի ստեղծած թախծոտ ու հուզիչ տրամադրության՝ «Հայ հայրենիք» բանաստեղծությունն աչքի է ընկնում իր ընդգծված լավատեսությամբ, ապագայի հանդեպ խորին հավատով ու սպասվող հույսով: Դա խանդավառ գովք է հայրենի երկրի բնությանը: Գեղեցիկ է հայկական լեռնաշխարհի նկարագրությունը, որ տրված է պայծառ գույներով ու մեղեդայնությամբ.

Հայո՛ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՛վ դու իմ վաղուց մոռցված հայրենիք,
Ո՛վ դու իմ սըրտիս անմոռաց տեղիք…
Այն բարձըր ժայռից, որ երկնուց են մոտ,
Կենաց օրհնության ծագե առավոտ…

[1] «Արևմտահայ բանաստեղծներ», «Լույս» հրատարակչություն, Երևան, 1982, էջ 13:
[2] Նույն տեղում:

Լերինք եւ հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարին նոր հարսի նըման,
Կապուտակ սարերդ գունըզգուն պսակ,
Կապեն ի գըլուխ զինչ նոր թագվորակ.
Ի ծայրն սարից, որ երկնուց են մոտ՝
Փըռվի մինչ ի խորն հորոտն ու մորոտ…
Հանց քեզ տերն է տվել գարուն գեղեցիկ,
Որ դրախտի նմանիս, Հայո՛ց աշխարհիկ…

Սքանչելի է ծաղիկների բազմերանգ գորգը՝ փռված լեռնալանջերով ու դաշտերով մեկ, սքանչելի են սարերից ի վար վազող ու գոչգոչող վտակները, անմահական է հայրենի ջրի համը, ապրեցնող ու կենարար՝ հայրենի օդը, հովն ու զովը: Իսկ հողի քաղցրությունը հայ մարդու երակներում եռացող արյան մեջ է:

Մանկտիք, զիս հայոց հողն ու ջուրն սնուցել,
Ես այն հող ու ջուր սրտով եմ սիրել…
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վտակք.
Ջուրն ու պտուղն համ տան անմահության,
Խոտն ոսկեզօծե գառներու բերան.
Ոսկեթել ամպոց այգուն զովագին
Թորթոր իջանե ցողիկ մանրագին,
Կարմիր ճաճանչով արեւին շաղված
Գա ի խավրծիլ, մանանա կենաց;
Ո՛հ, լերունք ծաղկած, ո՛հ ջուր ծիծաղկոտ,
Զանուշիկ հովերդ ի զիս ածեք մոտ.
Հողմունք անուշիկք, եկեք մոտ ի զիս,
Շունչ ու երգս առեք, տարեք ի Մասիս…
Ծառն արմատով ծառ, տունն հիմամբն է տուն…

Ալիշանը հպարտանում է իր հայրենիքով՝ այն համարելով Աստվածաշնչյան դրախտը: Այստեղ՝ Արարատի սուրբ կատարին է հանգրվանել համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյը, այստեղ է կազմավորվել ու զարգացել հայ ժողովուրդը, դարեդար մաքառել իր ազատության համար: Զորավոր ու սուրբ են եղել նրա արքաները՝ երկիր պաշտպանող ու շենացնող: Ապա մեր հողի վրա է իջել Աստվածային հայտնությունը՝ սուրբ նիզակով ու խաչով: Եվ այդ հայրենիքն առաջինն է

հասու եղել Աստվածային ճշմարտության լույսին՝ պահպանելով քրիստոնեության նշխարներն ու արժեքները: Օտար նվաճողները շատ են ջանացել ջնջել մեր հավատի հետքերը, սակայն հայը տոկացել է աշխարհավեր բոլոր հողմերի դեմ: Եվ հավատում է Ալիշանը, որ հողմերից հետո մեր աշխարհի վրա կծագի արևը, օդը կլցվի գարնանային բույրերով, խինդ ու ծիծաղով:

Ամպն եւ փոթորիկ շուտով վերանա,
Նոր արեւ, գարուն, ծառն ու այգին գա:
Արմատք հին՝ նոր ճյուղ, հին ճյուղք նոր ծաղիկ
Ընծայեն բնության, Հայոց աշխարհիկ...[1]

Հուզականությամբ լի է նաև «Պլպուլն Ավարայրի» բանաստեղծությունը, որտեղ Ալիշանը մենախոսում է հինգերորդ դարի նշանավոր պատմագիր Եղիշե Ոսկեբերանի հետ, կիսում նրա մորմոքը և հպարտությունը, խոհերն ու պատգամները: Ալիշանի համար ևս թանկ անուններ են Ավարայրի արծիվ Վարդան Մամիկոնյանն ու նրա քաջ նահատակ զինվորները, ովքեր մարտիրոսվեցին հայրենի հողի ու հավատի պաշտպանության համար: Քաղցրազրուցիկ Եղիշեի ձայնը նա ուզում է բարձրագոչ տարածել աշխարհով մեկ, որպեսզի պանդուխտ հայորդիների համար այդ սրբազան ու ազգահավաք ձայնը լսելի լինի:

Թե կիսահոգի պըլպուլիս նըման
Ձենիկս հասնի ձեզ, որդիք Թորգոմյան,
Որդի՛ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լըցուցին զդաշտեր, գըրքեր ու զերկինք..
Թե ի ծով սրտիդ կաթիլ մ՛ արունիկ
Կաթե Հայ աղբուրըն կամ Պահլավիկ,
Թե զփառքն հայրենյաց ձեզ ալ գրեք փառս,
Հետ Նահապետիս ելեք ի Արտազ:[2]

«Հայ հայրենիք» բանաստեղծությունը սիրո անկրկնելի ձոն է Հայաստանին՝ այն երկրին, որը բանաստեղծը կրում էր իր սրտում՝ նրա տրոփյունը զգալով ամեն ակնթարթ: Անշուշտ, բանաստեղծության հիմքում ականավոր հայագետի՝ տարիների տքնաջան աշխատանքն է, պրպտումների, ուսումնասիրությունների արդյունքը: Հայրենի աշխարհը կենդանանում է իր հմայիչ առավոտներով, կուսական օդով,

[1] «Արևմտահայ բանաստեղծներ», «Լույս» հրատարակչություն, Երևան,1982, էջ 3-11:
[2] Նույնը, էջ 12:

ձյունածածկ կամ ծաղկառատ լեռներով, ականակիտ աղբյուրներով, երգեցիկ հավքերով: Ալիշանին ծանոթ էին իր երկրի ամեն մի գյուղ, գավառ, լեռ, թուփ, քար, ձոր, ծաղիկ, բոլոր հերոսները, թագավորներն ու զորավարները, սրբերն ու եկեղեցու նվիրական հայրերը: Եվ այդ ողջ իմացությունը թափանցել է այս բանաստեղծության մեջ:

Վարդ կու թափեր աշխարհ Հայոց.
Ցողըն տեղայր զով ու սիրուն,
Ձինչ մարգարիտն ի սատափուն,
Կարմիր-կանաչ, ծին ծիրանի
Գոտի ածվեր Հայաստանի:
Լերանց սարերն բարձրածայր
Ոսկի պսակ եղան հավսար.
Հայոց գետերն հազարավոր
Իջանեին ճաճանչավոր...[1]

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ Ալիշանի դիրքորոշումը պարզաբանելու տեսակետից խիստ ուշագրավ է «Մասիսու սարերն» բանաստեղծությունը՝ գրված 1849 թվականի մարտին, այն օրերին, երբ իտալացի հայրենասերները Վենետիկի փողոցներում հերոսական մարտեր էին մղում ավստրիական բռնատիրության դեմ:

Բանաստեղծությունը կառուցված է Փոքր և Ավագ Մասիսների միջև տեղի ունեցող երկխոսության վրա: Փոքր Մասիսը տարակուսանք է հայտնում հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնությունը վերականգնելու նկատմամբ:

Նա ժամանակակից հայերի սրտերը մեռած, սառած է համարում: Նա կարծում է, թե հայոց արևն անցել է և «մեզ արևմուտքի լուսիկն է մնացել»: Ավագ Մասիսը փարատում է Փոքրի տարակուսանքը. այնպիսի սառը կրծքեր կան, որ ունեն «սիրտ հրավառ». քարից կայծ է դուրս գալիս, իսկ կայծից՝ կայծակ. արևը մտած է, սակայն նա նոր լույսով կծագի առավոտյան, ամպն էլ կփարատվի, մրրիկն էլ կդադարի:

Հայաստանի ճրագն էլ, որ մարած է թվում, կրկին կվառվի, որովհետև «իսկի անփոփոխ չէ բախտն աշխարհիս»: Փոքր Մասիսի այն հարցին, թե ե՞րբ պիտի վառվեն սրտերը, ե՞րբ պիտի տեսնենք այդ երջանիկ օրերը, Ավագը պատասխանում է.

[1] «Արևմտահայ բանաստեղծներ», «Լույս» հրատարակչություն, Երևան,1982, էջ 14:

Երբ հետ դարերու առաջին անգամ
Ես, Ավագ Մասիս, ներսուց որոտամ,
Կանչեմ ու շընչեմ, արձակեմ ծուխ, բոց,
Սասանեցնեմ զԱրարատն նայոց,
Այս ընկի նըշան նայոց աշխարհին,
Թե գա ժամանակ, որ գան փառքն այլ հին...

Փոքր Մասիսն իր հերթին մյուս սարերին ազդարարում է, թե՝

Երբ շարժի Ավագ, շընչե ծուխ ու բոց,
Նըշան է բարվո Աշխարհին հայոց:

Ուշագրավ են բանաստեղծության եզրափակիչ տողերը, որոնցով Նահապետը շարժման է կոչում Ավագ Մասիսին և հայ երիտասարդությանը.

Շարժի՛ր, հա՛ շարժիր, Ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս,
Շընչե՛, հա՛ շընչե, ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյաց հուսո նըշան ընկի...
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս...
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դուք այլ շարժեցե՛ք, մանկըտիք Հայկա...

Մասիսի հրաբխային ժայթքման բանաստեղծական պատկերի մեջ Ալիշանը, անշուշտ, դրել է ապստամբության, ազատագրական պայքարի գաղափարը: Այստեղ արտահայտված է բանաստեղծի հավատը ժողովրդի ուժերի նկատմամբ, որ թեև թմրած է, բայց մի օր դուրս է հորդելու, ինչպես Մասիսի խորքում թաքնված հրաբխային կրակը: Ալիշանի հայրենասիրական պոեզիան գրեթե ամբողջությամբ հյուսված է պատմական հենքի վրա: Նրա համար պատմությունը ինքնանպատակ չէր: Բանաստեղծորեն վերակենդանացնելով հայ ժողովրդի անցյալի հերոսական դրվագները՝ նա ձգտում էր քաջ նախնիների արիության գործերով ոգեշնչել ժամանակակիցներին, նրանց մղել սխրագործության՝ հանուն հայրենիքի ազատության: Այս տեսակետից ուշագրավ են «Ճակատամարտ Ձիրաւայ և քաջակորովն Մուշեղ», «Երգ ու գնացք զօրացն հայոց ընդ Վահանայ Մամիկոնեոյ ի Շաւարշական դաշին վրէժք» («Բա՜մ, փորոտան...»), «Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանայ» և, մանավանդ, «Պլպուլն Ավարայրի» պոեմը, որի հմայքը մեծ է եղել ժամանակակիցների համար, և որը ներշնչել է Ռ. Պատկանյանին՝ գրելու իր «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»:

Խոսելով ազգային-պատմական հուշարձանների մասին՝ Ալիշանը նկատում է, «Ո՛հ, երբ այսպիսի հիշատակաց վրա շարժի գրիչն չի կրնար գոնե կարծեր չցատքեցնել. պատմիչն հանկարծ վիպասան կըլլա, բանադատն՝ բանաստեղծ...»:

Եվ իրոք, հայագիտական իր աշխատություններում պատմիչ ու «բանադատ» Ալիշանը երբեմն դառնում է վիպասան ու բանաստեղծ:

Ալիշանի անունն այլևս պատկանում է հայ ժողովրդին ու հայոց դարերին: Այս մասին առավել պատկերավոր հավաստում է Դանիել Վարուժանը:

Օր մը, գուցե, նույնիսկ քունեդ ալ զարթնուս՝
Երբ հայ ճամփորդ մ՛ եկած դրախտի Երկրեդ՝ ա՛լ
Ժըպիդ բերե քեզ՝ արցունքի տեղ անհույս.
Օր մը գուցե, զարթնուս նույնիսկ քունեդ ալ:
Եվ իցի՛վ թե. դեռ պետք ունի Հայը քեզ.
Հայը հյուղին, բանտին, վըշտին, խավարին.
Հայն որ, անգետ, կը սայթաքի աղեկեզ.
Եվ Հայն, որ, նենգ, կը սայթաքե մոլեգին[1]:

[1] Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու՝ երեք հատորով, հ. առաջին, Երևան, 1986, էջ 129:

THE IRREPLACEABLE PATRIARCH OF ARMENOLOGY

KHLGHATYAN KHOSROV
Editor-in-Chief of "Geghama Ashkhar" newspaper

Many critics tried to penetrate into the depths of the literary and scientific heritage left by the outstanding Armenologist, writer and poet Alishan, however, probably no one has yet succeeded in revealing in integrity the universal boundaries of the work of the brilliant Armenian intellectual, boundaries that stretch from geography to history, from literary studies to linguistics, from garbar /old Armenian/ to new Armenian, from poetry to folklore, art history, bibliography. All this can be summed up by one word, which is called Homeland studies, where Alishan is unlikely to have a worthy rival equal to him. He was never lucky enough to step on Armenian land at least once and for a moment, to breathe its life-giving air, to drink its delicious water, to smell the scent of flowers, which are described name by name in his works. In return, Alishan felt it all with his soul, completely absorbed it, outlining the boundaries of spiritual Armenia with his large-scale works, which one day were supposed to become real and state borders. With his work, Alishan promoted not only the Armenian thought, but also the national liberation movement, inspiring the Armenian youth of that time with an example of describing the glory of the past. For almost two centuries, the splendor of his works has not only faded, but also shines brighter, gathering the fragments of all Armenians of the world around spiritual and secular Armenia, around the idea of realizing national aspirations. This work is a modest attempt to value and appreciate the courage that the name of Alishan revived and continues to revive in the eternity of centuries, the courage that Alishan showed at the cost of patriotism, hardships and deprivation.

Keywords: *patriotism, Armenology, literature, poetry, history, natural science, geography, botany, art, bibliography.*

НЕЗАМЕНИМЫЙ РОДОНАЧАЛЬНИК АРМЕНОВЕДЕНИЯ

ХЛГАТЯН ХОСРОВ
Главный редактор газеты "Гегама Ашхар"

В глубину литературного и научного наследия, оставленного выдающимся арменоведом, писателем и поэтом Алишаном, многие пытались проникнуть, однако, наверное, никому ещё не удалось раскрыть в целостности вселенские границы творчества гениального армянского интеллигента, границы, которые простираются от географии до истории, от литературоведения до языкознания, от древнеармянского до новоармянского, от стихотворения до фольклора, искусствоведения, библиографии. Все это можно

суммировать одним словом, название которого - Родиноведение, здесь у Алишана вряд ли найдется достойный соперник. Ему так и не удалось хотя бы раз, на мгновение, ступить на землю Армении, подышать его животворящим воздухом, выпить его вкусную воду, понюхать аромат тех цветов, которые поименно описаны в его работах. Взамен, Алишан все это почувствовал душой, полностью впитал в себя и своими масштабными трудами начертал границы духовной Армении, которые в один прекрасный день должны были стать реальными и государственными границами. Своим творчеством Алишан продвигал не только армянскую мысль, но и национально-освободительное движение, окрыляя и вдохновляя армянскую молодежь того времени примером описания славы прошлого. На протяжении почти двух столетий великолепие его произведений не только не тускнеет, но и сияет ярче, собирая воедино обломки армян всего мира вокруг духовной и светской Армении, вокруг идеи воплощения национальных чаяний. Эта работа - скромная попытка воздать должное и оценить то мужество, которое вдохнуло жизнь в имя Алишан и продолжает оживотворять его в вечности веков, ту отвагу, которую Алишан проявил ценой патриотизма, сверхусилий и лишений.

Ключевые слова: *родиноведение, арменоведение, литература, поэзия, история, естествознание, география, ботаника, искусство, библиография.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 16.09.2020թ.:

1.	ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ NATURAL SCIENCES ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ
Տեխնիկական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ
e-mail: avetvarazdat@gmail.com
ԲԱԼԱԳՈԶՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
e-mail: arminebalagozyan@mail.ru

Վերջին մի քանի տարիների ընթացքում համացանցում լայն կիրառություն են գտել առաջարկությունների համակարգերը, որոնք կանխատեսում են, թե կոնկրետ ինչն է հետաքրքիր տվյալ օգտվողների համար: Նմանատիպ առաջարկությունների ալգորիթմները կիրառման ընթացքում անընդհատ ուսուցանվում և վերափոխվում են՝ ժամանակի հետ ավելի լավ հարմարվելով օգտվողների ցանկություններին: Առաջարկությունների ալգորիթմների կիրառության արդյունքում այս կամ այն չափով առաջարկվող ապրանքները կամ ծառայություններն ավելի ու ավելի են գոհացնում օգտվողներին:

Հոդվածը առաջարկությունների համակարգերում մեքենայական ուսուցման կիրառության մասին է: Ներկայացված են առաջարկությունների համակարգերի ընդհանուր բնութագիրը, դրանց տեսակներն ու հայտնի ալգորիթմները:

Բանալի բառեր՝ *առաջարկությունների համակարգեր, ալգորիթմ, օգտվողակենտրոն զտում, զտում ըստ ապրանքի, օգտվող, սառը մեկնարկ:*

Ամեն օր միլիոնավոր մարդիկ որոնում են կատարում համացանցում. փնտրում են կինոնկար, հագուստ, մեքենա, հանգստի փաթեթ և այլն: Բոլոր օգտվողները միավորված են մեկ նպատակի շուրջ՝ գտնել այն, ինչն իրենց հարկավոր է: Եթե անցյալ

տասնամյակներում նոր ապրանքների ի հայտ գալու մասին տեղեկանում էին փոստի միջոցով, ապա այդ գործընթացը արագացավ տասնյակ (կամ նույնիսկ հարյուրավոր) անգամ՝ հեռուստատեսության, ապա համացանցի շնորհիվ:

Որոնման գործընթացը անհամեմատ արդյունավետ է դարձել առաջարկությունների համակարգերի կիրառման շնորհիվ: Առաջարկությունների համակարգերի հիմնական խնդիրն այն օբյեկտների կանխատեսումն է, որոնք հետաքրքրող կլինեն օգտագործողի համար՝ հաշվի առնելով նրա նախասիրությունները: Դրանք մոդելների մեծ դաս են, որոնց նպատակն է բարձրացնել բիզնեսի արդյունավետությունը օգտագործողին ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում տրվող համապատասխան առաջարկությունների միջոցով:

Առաջարկությունների համակարգի մաթեմատիկական նկարագրությունը

Ներկայացնենք առաջարկությունների համակարգի մաթեմատակական նկարագրությունը:

Տրված է՝

$U = \{u_1, u_2 \ldots u_n\}$ - օգտվողների բազմություն,


$P = \{p_1, p_2 \ldots p_m\}$ - ապրանքների բազմություն,

$R = (r_{i,j})$ - $n \times m$ չափի գնահատականների մատրիցա, որտեղ $r_{i,j}$ դաշտում կլինեն թվեր, եթե u_i օգտվողը գնահատել է p_j արտադրանքը, հակառակ դեպքում դաշտը դատարկ կմնա:

N-ը պահանջվող առաջարկների քանակն է, որոնք ուզում ենք ստանալ համակարգից:

Պահանջվում է տվյալ u_i օգտվողի համար գտնել՝ N- չափանի վեկտոր՝ $(p_{i1}, p_{i2} \ldots p_{iN})$, որտեղ p_{ik}-ն $(k \in N)$ ապրանքներն են, որոնք դեռ չեն գնահատվել օգտվողի կողմից, ինչպես նաև առավել սերտորեն համապատասխանում են օգտվողի նախասիրություններին, այսինքն՝ կանխատեսման $\hat{r}_{i,ik}$ արժեքներն ամենամեծն են:

Պարզ օրինակով հասկանանք, թե ինչպես են առաջարկությունների համակարգերը աշխատում էլեկտրոնային առևտրի կայքի համատեքստում:



Նկար 1. Առաջարկությունների համակարգի պարզ օրինակ

Երկու օգտվողներ էլեկտրոնային առևտրի խանութից գնում են նույն A և B ապրանքները: Երբ դա տեղի է ունենում, հաշվարկվում է այս երկու օգտվողների նմանության ինդեքսը: Կախված արդյունքից՝ համակարգը կարող է C ապրանքն առաջարկել մյուս օգտվողին, քանի որ համակարգը հայտնաբերում է, որ այդ երկու օգտվողները նման են իրենց գնած ապրանքների առումով:

Բիզնեսի մոդելից կախված՝ առաջարկությունները կարող են լինել դրա հիմնական բաղկացուցիչը, ինչպես օրինակ, «TripAdvisor»- ը, կամ կարող է լինել պարզապես հարմար լրացուցիչ ծառայություն (օրինակ՝ հագուստի առցանց խանութում), որը նախատեսված է հաճախորդների փորձը՝ User Experince (UX-ը) բարելավելու և կայքում որոնումներն ավելի հարմարավետ դարձնելու համար:

Տվյալների բազայի առկայությունը առաջարկությունների համակարգի կառուցման առաջին և ամենակարևոր քայլն է: Տվյալները կարելի է հավաքել երկու եղանակով՝ բացահայտ (explicitly) և ոչ բացահայտ (implicitly): Բացահայտ տվյալները տեղեկություններ են, որոնք տրամադրվում են ակնհայտորեն, այսինքն՝ օգտագործողներն են մուտքագրում, այդպիսիք են կինոնկարի որոնման դաշտերը: Ոչ բացահայտ տվյալները տեղեկություններ են, որոնք անմիջապես չեն տրամադրվում, այլ հավաքվում են առկա տվյալների հոսքերից, ինչպիսիք են որոնման պատմությունը, մատնազարկերը, պատվերի պատմությունը և այլն:

Առաջարկությունների համակարգեր մշակելիս դիտարկվող կիրառական խնդիրներից կարելի է առանձնացնել կշռունակությունը (մասշտաբայնությունը) և «սառը սկիզբը» («холодный старт»): Կշռունակության խնդրի առկայությունը պահանջում է առաջարկությունների համակարգի ալգորիթմներից ինչպես օգտվողների, այնպես էլ առաջարկությունների ընտրանքների քանակն անսահմանափակորեն ավելացնելու հնարավորություն: Այս պարագայում ավելացումը չպետք է պահանջի ծրագրի ալգորիթմի փոփոխություն ու արդեն մշակված տվյալների վերամշակում և թույլ տա հաշվումների բարձր զուգահեռություն: «Սառը սկզբի» հետ կապված խնդիրն ալգորիթմի առկայությունն է, որն առաջարկություններ է գեներացնում այն օգտվողների համար, ովքեր առաջին անգամ են մուտք գործել համակարգ, և նրանց մասին տեղեկատվությունը բացակայում է կամ չափազանց աղքատ է:

Գոյություն ունեն «Սառը մեկնարկ»-ի 2 խնդիրներ՝ օգտվողների համար սառը մեկնարկ (ի՞նչ առաջարկել նոր օգտվողներին) և կայքերի սառը մեկնարկ (ո՞ւմ առաջարկել նոր կայքերը):

Օգտվողների համար սառը սկիզբը հիմնվում է ժողովրդագրական այն տվյալների վրա, որոնք նրանք նշում են գրանցվելիս:

Նոր վեբ-էջերի սառը մեկնարկի խնդիրը լուծելու համար օգտագործվում են տեքստի իմաստաբանական վերլուծության հիմնական մեթոդները և համապատասխան հետադարձ կապը:

Առաջարկությունների համակարգերի առավել տարածված տեսակներն են.

1. Հանրաճանաչության վրա հիմնված (Popularity based recommendation engine),
2. Բովանդակության վրա հիմնված (Content based recommendation engine),
3. Համագործակցային զտման վրա հիմնված (Collaborative filtering based recommendation engine):

Հանրաճանաչության վրա հիմնված առաջարկությունների համակարգ

Թերևս, սա առաջարկությունների ամենապարզ տեսակն է, որի հետ բախվում ենք: Թրենդային ցուցակը, որը տեսնում եք YouTube-ում կամ Netflix-ում, հիմնված է այս ալգորիթմի վրա: Այն պահպանում է դիտումների հաշվարկը յուրաքանչյուր կինոնկարի, տեսանյութի համար, այնուհետև թվարկում է կինոնկարներն ըստ դիտումների քանակի նվազման կարգի (ամենաշատ դիտումների քանակ ունեցողներից մինչև ամենաքիչը ունեցողները):

Բովանդակության վրա հիմնված առաջարկությունների համակարգ

Առաջարկությունների համակարգերի այս տեսակը ստանում է օգտագործողի կողմից հավանած օբյեկտը և վերլուծում օբյեկտի ատրիբուտների արժեքները: Մասնավորապես ֆիլմեր առաջարկող համակարգում վերլուծվում է հավանած ֆիլմի բովանդակությունը (սցենար, ժանր, դերասան, ռեժիսոր և այլն)՝ գտնելու նմանատիպ բովանդակություն ունեցող այլ ֆիլմեր: Այնուհետև այն դասում է նմանատիպ կինոնկարներն ըստ իրենց նմանության գործակիցների և օգտվողին առաջարկում առավել համապատասխան ֆիլմեր: Բովանդակության վրա հիմնված համակարգերը գործում են այն սկզբունքով, որ եթե ձեզ դուր է գալիս որոշակի իր, ապա ձեզ ամենայն հավանականությամբ դուր կգա մի բան, որը նման է դրան:

Դիտարկենք Netflix-ի օրինակը: Netflix-ում վեկտորի ձևով պահպանում են յուրաքանչյուր օգտագործողի հետ կապված բոլոր տեղեկությունները: Այս վեկտորը պարունակում է օգտագործողի վարքագիծը, այսինքն՝ օգտագործողի կողմից հավանած կամ չհավանած ֆիլմերը և դրանց տրված վարկանիշները: Բերված վեկտորը հայտնի է որպես պրոֆիլի վեկտոր: Ֆիլմերի հետ կապված բոլոր տեղեկությունները պահվում են մեկ այլ վեկտորի մեջ, որը կոչվում է իրերի վեկտոր: Իրերի վեկտորը պարունակում է յուրաքանչյուր ֆիլմի մանրամասները՝ ժանր, դերասանական կազմ, ռեժիսոր և այլն:

Բովանդակության վրա հիմնված ֆիլտրման ալգորիթմը գտնում է պրոֆիլային վեկտորի և իրերի վեկտորի կազմած անկյան կոսինուսը, այսինքն՝ կոսինուսային

նմանությունը: Ենթադրենք, A-ն պրոֆիլի վեկտորն է, իսկ B-ն իրերի վեկտորն է, ապա դրանց միջև նմանությունը կարելի է գտնել հետևյալ կերպ.

$$sim(A,B) = \cos(\theta) = \frac{A \cdot B}{\|A\| \|B\|}$$

Ելնելով կոսինուսի արժեքից, որը տատանվում է -1-ից 1-ի սահմաններում՝ կինոնկարները դասակարգվում են նվազման կարգով, և առաջարկությունների համար օգտագործվում է հետևյալ երկու մոտեցումներից մեկը.

- Top-n մոտեցում, որտեղ առաջարկվում են լավագույն n ֆիլմերը:
- Վարկանիշային գնահատման մոտեցում, որտեղ սահմանվում է շեմն ու առաջարկվում են այդ շեմից բարձր գտնվող բոլոր կինոնկարները:

Նմանությունը հաշվարկելու համար կիրառվում են նաև այլ մեթոդներ, մասնավորապես՝ Էվկլիդյան հեռավորություն, Պիրսոնի կոռելյացիա:

Նմանատիպ իրերը սերտորեն մոտ կլինեն միմյանց, եթե սահմանվեն n-սահմանով տարածության մեջ: Այսպիսով՝ մենք կարող ենք հաշվարկել իրերի միջև եղած հեռավորությունը և ելնելով այդ հեռավորությունից՝ օգտագործողներին առաջարկել իրեր: Էվկլիդայի հեռավորության բանաձևը հետևյալն է.

$$Euclidean\ Distance = \sqrt{(x_1 - y_1)^2 + \cdots + (x_N - y_N)^2}$$

Պիրսոնի կոռելյացիան ցույց է տալիս, թե որքան են երկու կետերը կապված: Ինչքան մեծ է կոռելյացիան, նմանությունը այնքան շատ կլինի: Պիրսոնի կոռելյացիան կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$sim(u,v) = \frac{\sum(r_{ui} - \bar{r}_u)(r_{vi} - \bar{r}_v)}{\sqrt{(r_{ui} - \bar{r}_u)^2}\sqrt{(r_{vi} - \bar{r}_v)^2}}$$

Այս ալգորիթմի հիմնական թերությունն այն է, որ այն սահմանափակվում է նույն տիպի իրեր առաջարկելով և երբեք չի առաջարկի այն ապրանքները, որոնք օգտագործողը նախկինում չի գնել կամ հավանել: Այսպիսով՝ եթե նախկինում օգտագործողը դիտել կամ հավանել է միայն սարսափ ֆիլմեր, համակարգը կառաջարկի միայն սարսափ ֆիլմեր:

Այս տեսակի համակարգի բարելավման համար անհրաժեշտ է ալգորիթմ, որը կարող է առաջարկել իրեր, որոնք հիմնված են ոչ միայն բովանդակության, այլև օգտագործողների վարքի վրա:

Համագործակցային զտման վրա հիմնված առաջարկությունների համակարգ

Համակարգը սկզբում փորձում է գտնել նմանատիպ օգտվողների՝ իրենց գործունեության և նախասիրությունների հիման վրա (օրինակ՝ երկու օգտվողներ դիտում են նույն ժանրի կինոնկարներ կամ կինոնկարներ, որոնք նկարահանված են նույն ռեժիսորի կողմից): Եթե օգտվող A-ն տեսել է այնպիսի ֆիլմ, որը օգտվող B-ն դեռ չի տեսել, ապա այդ ֆիլմը խորհուրդ է տրվում B-ին, և հակառակը: Այլ կերպ ասած՝ առաջարկությունները զտվում են՝ հիմնվելով նույն օգտագործողի նախասիրությու-

ների միջև համագործակցության վրա: Այս ալգորիթմին բնորոշ օրինակ է Amazon էլեկտրոնային առևտրի հարթակը, որտեղ կարող եք տեսնել «Հաճախորդները, ովքեր դիտել են, այս ապրանքը նույնպես դիտել են» և «Այս ապրանքը գնած հաճախորդները նույնպես գնել են» ցուցակը:

Համագործակցային զտման (CF) հիմքում ընկած է հետևյալ գաղափարը. նման հաճախորդները կատարում են նմանատիպ գնումներ, և նմանատիպ ապրանքները գնվում են միասին: Այս առումով համատեղ զտման երկու մոտեցում կա.

- օգտվողակենտրոն զտում (User-centric),
- զտում ըստ արտադրանքի (Item-centric):

Օգտվողակենտրոն զտման դեպքում ապրանքի անհայտ վարկանիշը գնահատվում է նույն արտադրանքին նման հատկանիշներով օգտվողների տված վարկանիշների հիման վրա: Այս մոտեցումն իրականացվում է երկու քայլով.

1. գտնել տվյալ օգտվողի նման գնումներ կատարած օգտվողներին,
2. առաջարկել նման օգտվողների կողմից առավելագույն վարկանիշ ունեցող ապրանքներ:

Այս մոդելում արտադրանքն առաջարկվում է օգտվողին՝ հիմնվելով այն փաստի վրա, որ արտադրանքը դուր է եկել նրա նման այլ օգտվողներին: Օրինակ, եթե Դերիքն ու Դենիսը հավանել են նույն ֆիլմը, և երևան է գալիս նոր ֆիլմ, որը Դերիքին դուր է գալիս, ապա այդ ֆիլմը առաջարկվում է Դենիսին, քանի որ Դերիքին և Դենիսին կարծես դուր են գալիս նույն ֆիլմերը:

«Զտում ըստ արտադրանքի» մոտեցման դեպքում անհայտ ապրանքի վարկանիշը ստացվում է օգտվողների կողմից արդեն գնված նմանատիպ այլ ապրանքների վարկանիշների հիման վրա: Այս մոտեցումը նույնպես իրականացվում է երկու քայլով.

1. ապրանքների մատրիցայի ստեղծում՝ ապրանքների միջև նմանության աստիճանը որոշելու համար,
2. օգտագործելով նմանության աստիճանը՝ տվյալ օգտվողի կողմից արդեն պատվիրված ապրանքներին նման ապրանքների առաջարկում:

Այս համակարգերը նմանատիպ իրերը նույնականացնում են օգտվողների կողմից տրված նախորդ վարկանիշների հիման վրա: Օրինակ, եթե A, B և C օգտվողները 5 աստղ վարկանիշ են տվել X և Y գրքերին, իսկ D օգտվողը գնում է Y գիրք, ապա նրան առաջարկվում է գնել նաև X գիրքը, քանի որ համակարգը X և Y գրքերը նույնացնում է A, B և C օգտվողների նմանատիպ գնահատականների հիման վրա:

Համագործակցային զտման վրա հիմնված առաջարկությունների համակարգերի երկու տիպ կա՝ հիշողության վրա հիմնված (Memory-based) և մոդելի վրա հիմնված (Model-based) մեթոդներ: Հիշողության վրա հիմնված առաջարկությունները կազմվում են կուտակված ողջ տվյալներով տարատեսակ հաշվարկների հիման վրա: Այս

Таким образом, на основании симметричности элюционной диаграммы НБК-Fe(III) через G-100, отсутствие полосы окрашивания для кислых и основных водорастворимых белков на ПААГ, постоянность величины оптического спектрального индекса (A_{280}/A_{430}–7,4) из КПВ, косвенно можно говорить о чистоте комплекса НБК-Fe(III).

После очистки приведенным путем оптические спектры поглощения комплекса НБК-Fe(III) из КПВ приведен на рис. 1.




Рис.1. Оптический спектр поглощения слабо опалесцирующего водного раствора комплекса НБК-Fe(III) или НБК (1) из КПВ при pH9,5.

Как показано на рис.1, характерные максимальные оптические поглощения НБК или НБК-Fe(III)из КПВ наблюдаются при 430 и 520 нм. В УФ области имеется характерное максимальное поглощение для белков при 280 нм. Скорее всего НБК является гликопротеином. Растворы комплексов НБК-Fe(III) в 0,1 М калий фосфатном буфере, pH7,4 (КФБ) имеют несколько повышенную опалесценцию (повышается фоновое оптическое поглощвние всего на 10-12%). При этом форма и интенсивность оптического поглощения приведенного комплекса практически не изменяется в присутствии 0,9% NaCl.

NADPH в составе НБК или комплекса НБК-Fe(III) определенного спектро флуориметрическим методом, имеет характерный эмиссионный пик при 420 нм, с длиной возбуждения 375 нм. Интенсивность флуоресценции НБК-Fe(III) или только НБК (по 4 мг/мл) в относительных единицах (F) составляет 52,6±5,5 ($p<0,05$, n-6).Напомним, что аналогичный показатель для NADPH содержащего супероксид продуцирующего липопротеина сыворотки плацентарной крови женщин (супрол) составляет всего 60,4±5,8 ($p<0,05$, n=6)[1].

Отические спектры поглощения изоформ Nox1+Nox2 из ЭМ и ЛМ в окисленном и восстановленном состоянии с характерным для Nox поглощением при 558 нм приведены на рис. 3.




Рис.4.Оптические спектры поглощения – суммарной фракции Nox1+Nox2 из ЭМ или ЛМ (___) донорской крови при pH 7,4. После восстановления дитионитом натрия на оптическом спектре этих Nox появляется характерное для Nox острое поглощение при 558 нм (----), $p<0,05$, $n=6$.

Механизм продуцирования O_2^-комплексомНБК-Fe(III)из КПВ обусловлен тем, что используя Fe(III) как переносчик электронов от NADPH в своем составе к молекулярному кислороду, восстанавливет его до O_2^- (O_2^- окисляют адреналин в адренохром или восстанавливают НТС до формазана). Эти процессы ингибируются в присутствии 2.10^{-8}МCu,Zn-СОД .

С другой стороны, НБК из КПВ используя Fe(III) гемовой группы, в частности, изоформ эритроцитарных и лейроцитарных Nox (как электронный мостик) в гомогенной и гетерогенной фазе, также переводит электрон от NADPH к O_2, восстанавливая его до O_2^-.

Проценты увеличения продуцирования НБК в присутствии изоформ Nox эритроцитарных и лейкоцитарных мембран в гомогенной и гетерогенной фазе приведены на таблице.

Таблица

Относительное увеличение (%)плотности максимального оптического поглощения адренохрома (при 500 нм) и формазана (в присутствии инициатора-феназинметосульфатапри 560нм),образовавшегося при окисления адреналина и восстановления НТС супероксидными радикалами, продуцируемыми НБК из КПВ в

присутствии суммарной фракции изоформ Nox1+Nox2 из ЭМ и ЛМ в гомогенной фазе (в растворе) и гетерогенной фазе (в присутствии ЭМ и ЛМ), по сравнению с 100%-ными контрольными показателями (показатели в отсутствии НБК).

Компоненты продуцирования O_2^- в присутствии 0,2 мг/мл НБК из КПВ	Проценты увеличения плотности максимального оптического поглощения адренохрома при 500 нм	Проценты увеличения плотности максимального оптического поглощения формазана при 560нм
Nox1+Nox2 (0,2 мг/мл) из ЭМ	↑61,3	↑67,2
Nox1+Nox2 (0,2 мг/мл) из ЛМ	↑67,9	↑71,4
ЭМ(0,5 мг/мл)	↑69,3	↑73,8
ЛМ(0,5 мг/мл)	↑79,6	↑80,4

В приведенных условиях O_2^--продуцирующая активность лейкоцитарных Nox больше, чем эритроцитатарных. Хотя как лейкоциты, так и эритроциты являются модуляторами иммунний системы [15]. При этом удельное содержание эритроцитов больше таковое у лейкоцитов в 1000 раз.

Таким образом, появляются перспективы для использования комплекса НБК-Fe(III) из КПВ, как энергичного, сравнительно стабильного, беспрерывно действующего и природного агента продуцирования O_2^-, как бактерицидного и антивирусного фактора[16].С другой стороны, НБК из КПВ может быть использован как природный агент стимуляции пониженной O_2^--продуцирующей активности изоформ Nox лейкоцитарных и эритроцитарных мембран при понижении иммунной активности (иммунодефиците) млекопитающих [17] в эксперименте, в перспективе, и в клинике.

Как уже отметили, НБК из КПВ в лиофилизованном состоянии, особенно в атмосфере азота, практически не теряет своюO_2^--продуцирующую активность при хранении -10-15° С в течение года. Потеря активности также не наблюдается после растворения этого НБК в 0,01 М КФБ (рН7,4) с физраствором. Это дает возможность для введения НБК в кровь животных. Необходимо вспомнить, что аналогичный агент (супрол) из сыворотки плацентарной крови женщин не вызывает побочные нежелательные эффекты, после введения супрола белым крысам. Более того, введенный супрол оказывает антиопухолевый эффект [18,19].

Можно заключить, что впервые из КПВ Армении выделен и очищен O_2^--продуцирующий(прооксидантный) комплекс НБК-Fe(III) и антиоксидантный белковый компонент (НБК), который стимулрует изоформ Nox мембран иммунных клеток – лейкоцитов и эритроцитов. Появляется перспектива использования НБК из КПВ при

инфекционных заболеваниях, в частности при Covid-19, при которой наблюдается снижение иммунной активности, в частности, клеток легочной ткани.

Список использованной литературы

1. Симонян М. А., Карапетян А. В., Бабаян М. А., Симонян Р. М., NADPH-содержащая супероксид-продуцирующая липопротеиновая фракция из сыворотки крови, выделение, очистка, краткие характеристики и механизм действия. Биохимия, 1996, 61(5) **,** 932-938.

2.**Симонян Р. М., Агаджанова Е. М., Бабаян М. А., Симонян Г. М., Алексанян С. С., Агаджанов М. И., Симонян М. А,** Снижение содержания NADPH оксидазы в эктосомах эритроцитов и ее активирование NADPH содержащим липопротеином сыворотки крови у пациентов при инсулинзависимом диабете. Биол.ж. Армении, 2019, 4 (71) **,** 6-14.

3. **A. S. Isoyan, K. V. Simonyan, R. M. Simonyan, M. A. Babayan, G. M. Simonyan, V. A. Chavushyan, M. A. Simonyan.**Superoxide-producing lipoprotein fraction from Stevia leaves: definition of specific activity. BMC Complementary and Alternative Medicine2019, **19**:88-94.

4. **Симонян Р. М., Симонян Г. М. ,** Выделение, очистка и свойства супероксид-продуцирующего ассоциата NADPH содержащего липопротеина с NADPH оксидазой из листьев растений *Rumex* и *Chenopodium Album*.ГГУ, 2019, Сборник Научн .статей, 7**,** 84-92 .

5. Katsuhiro Shiratake, Enrico Martinoia. Transporters in fruit vacuoles. Plant Biotechnology 2007, 24(1): 127-133.

6. Kedage V. V., Tilak J. C., Dixit G. B., Devasagayam T. P., Mhatre M. A study of antioxidant properties of some varieties of grapes (Vitisvinifera L.) .Crit Rev Food SciNutr. 2007,47(2):175-185.

7. Susan S. Percival, Susan S. Percival. Grape Consumption Supports Immunity in Animals and Humans. *The Journal of Nutrition*, 2009, 139 (9): 1801S–1805S,

8. Manuel Olalla. Maria Cruz González, Carmen Cabrera Maria, Carmen López. Optimized Determination of Iron in Grape Juice, Wines, and Other Alcoholic Beverages by Atomic Absorption Spectrometry. Article **(PDF Available) in** Journal of AOAC International 83(1):189-195.

9. Maria Rosaria Provenzano, Hamid El Bilali, Vito Simeone, Nuray Baser. Copper contents in grapes and wines from a Mediterranean organic vineyard. Food Chemistry 2010, 122(4):1338-1343.

10. BjörnNeu, Samuel O. Sowemimo-Coker, Herbert J. Meiselman. Cell-Cell Affinity of Senescent Human Erythrocytes. Biophys J. **2003, 85(1): 75–84.**

11. Suchihashi M. Ethanol/chloroform fractionation. Biochem. Z., 140 (1923), pp. 63-112.

12. Misra H. P., Fridovich I. The role of superoxide anion in the autoxidation of epinephrine and a simple assay for superoxide dismutase.JBiol Chem. 1972, 247(10):3170-75.

13. Durak I., Yurtarslanl Z., Canbolat O., Akyol. O. A. Methodological approach to superoxide dismutase (SOD) activity assay based on inhibition of nitroblue tetrazolium (NBT) reduction. ClinChimActa. 1993, 214(1):103-104.

14. Симонян Р. М., Симонян Г. М., Симонян М. А. Способ выделения изоформ NADPH оксидазы (Nox) из биосистем. Лицензия изобретения агенства индувидуальной собственности РА N2818 A, Ереван, 2014.

15. **H. Luke Anderson, Igor E. Brodsky and Nilam S. Mangalmurti.** The Evolving Erythrocyte: Red Blood Cells as Modulators of Innate Immunity. J Immunol., 2018, 201 (5) 1343-1351.

16. **Ernst Peterhans.** Reactive oxygen species and nitric oxide in viral diseases // *Biological Trace Element Research*, 1997, 56:107–116.

17. **Chen T. P., Roberts R. L., Wu K. G., Ank B. J., Stiehm E. R.** Decreased superoxide anion and hydrogen peroxide production by neutrophils and monocytes in human immunodeficiency virus-infected children and adults. Pediatr Res. 1993 34(4):544-50.

18.**Синонян М. А., Карапетян А. В., Галстян Д. А., Симонян Р. М., Бабаян М. А.,** Супероксид-продуцирующий липопротеин как фактор подавления роста опухолей, повышения числа лейкоцитов, ускорения деления клеток в культуре. // Биохимия, 1996, 61(9) , 1578-1583.

19.Алексанян М. К., Симонян Г. М., Симонян Р. М., Аракелян Л. Н., Алексанян С. С., Симонян М. А. , Противоопухолевый и антистрессорный эффект супрола, введенного белым крысам при саркоме-45, Мед. Наука. Армении, 2012, LII(3) , 23-35.

ՆԱԴՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ՝ ԿԱՐՄԻՐ ԿԻՍԱՔԱՂՑՐ ԳԻՆՈՒՑ. ԻՄՈՒՆԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՆԱԴՐԻ ՕՔՍԻԴԱԶԻ ԻԶՈՁԵՎԵՐՈՎ ՍՈՒՊԵՐՕՔՍԻԴ ՌԱԴԻԿԱԼՆԵՐԻ ԳՈՅԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

ՍԻՄՈՆՅԱՆ ՌՈՒԶԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող
ՍԻՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
Կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Առաջին անգամ Եղեգնաձորի (Հայաստան) կիսաքաղցր գինուց անջատել և մաքրել ենք սուպերօքսիդ գոյացնող կոմպլեքս՝ կազմված ՆԱԴՐԻ պարունակող սպիտակուցային բաղադրամասից (ՆՍԲ) ու Fe(III)-ից [ՆՍԲ-Fe(III)]: ՆՍԲ-Fe(III) կոմպլեքսից առանձնացրել ենք ՆՍԲ-ն, այն ունի միայն վերականգնիչ (հակաօքսիդանտային) ազդեցություն: ՆՍԲ-ի ու ՆՍԲ-Fe(III)-ի տեսակարար քանակությունը կազմում է 4,5մգ/մլ ($p<0,05$, $n=6$) գինու մեջ: ՆՍԲ–Fe(III) կոմպլեքսի կամ ՆՍԲ-ի ֆլուորեսցենցիայի ինտենսիվությունը հարաբերական միավորներով (F) կազմում է 52,6±5,5 ($p<0,05$, $n=6$). ՆՍԲ-Fe(III) կոմպլեքսում Fe(III)-ը հանդես է գալիս որպես էլեկտրոնի փոխանցման կամրջակ ՆԱԴՐԻ-ից դեպի թթվածնի մոլեկուլ՝ վերականգնելով այն մինչև սուպերօքսիդ ռադիկալ (O_2^-): ՆՍԲ-ն էրիթրոցիտների ու լեյկոցիտների Nox-երի հեմային խմբի Fe(III)–ը նույն մեխանիզմով, հոմոգեն ու հետերոգեն ֆազերում օգտագործում է O_2^--երի գոյացման համար:

Այսպիսով՝ ստացված տվյալները հիմք են հանդիսանում կարմիր կիսաքաղցր գինուց ստացված ՆՍԲ-Fe(III) կոմպլեքսը, որպես բնական հակամանրէային միջոց, իսկ ՆՍԲ-ն՝ որպես իմունամոդուլյատոր կամ իմունային բջիջների (էրիթրոցիտների ու լեյկոցիտների) Nox-ի իզոձևերի խթանման միջոց կիրառելու համար:

Բանալի բառեր: *ՆԱԴՐԻ պարունակող սպիտակուցային բաղադրամաս, գինի, NADPH օքսիդազ, ակտիվացում:*

NADPHCONTAINING PROTEIN COMPONENT FROM DEMI-DOUX WINE: STIMULATION OF PRODUCTION OF SUPEROXIDE RADICALS BY THE ISOFORMS OF NADPH OXIDASE OF IMMUNE CELLS

SIMONYAN RUZAN
PhD in Biology,
GSU Assistant Professor,
Senior Scientist of H.Buniatyan
Institute of Biochemistry NAS RA
SIMONYAN GEGHAM
Senior Scientist of
H.Buniatyan Institute of Biochemistry NAS RA

From demi-doux wine of the Eghegnadzor (Armenia) is isolated and purificated the superoxide-producing complex of NADPH containing protein component (NPC) with Fe (III), NPC-Fe (III) for the first time. From NPC-Fe (III) was separated NPC, which only possesses the reductive (antioxidative) effect.The specific content of NPCor NPC-Fe (III) is 4,5 мg/мл ($p<0,05$, $n=6$)of the wine. The fluorescence intensity of the NPC-Fe (III) complex or NPC in relalive units (F) is 52,6±5,5 ($p<0,05$, $n=6$). The Fe(III) in the complex of NPC-Fe(III) is a electronic bridge from NADPH to molecular oxygen reducing its up to superoxide radical (O_2^-).By this mechanism the NPC is stimulate the process of the production of O_2^-, using the Fe(III) of heme group of the isoforms of Noxof erythrocytes and leucocytes in homogeneous and heterogeneous phase.

Thus, on the basis of above receivableindicies, the complex of NPC-Fe(III) from demi-doux wine can be use as a natural antimicrobial agent, and NPC, as a immunomodulator or stimulator of the isoforms of Nox of the immune cells (erythrocytes and leucocytes).

Keywords: *NADPHcontaining protein component, wine, NADPH oxidase, activation.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 08.10.2020թ.:

ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
Տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
ԳՊՀ դասախոս
e-mail: tadartashes@gmail.com
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ
Ասպիրանտ
e-mail: tatever.baghdasaryan@gmail.com

Հայաստանի տնտեսության առաջատար ճյուղերից է հանքարդյունաբերությունը: Հանքարդյունաբերության տեխնոլոգիական գործընթացները կապված են բնական պաշարների սպառման և շրջակա միջավայրում տարբեր թափոններ կուտակման հետ: Անտրոպոգեն գործոնների ազդեցությամբ ի հայտ է գալիս կենսոլորտի, շրջակա միջավայրի և մարդու կյանքի բնականոն գործընթացների խախտման իրական կամ պոտենցիալ վտանգ: Բնապահպանական ռիսկերի կանխարգելման հիմնական ձևը ուսումնասիրվող շրջանի էկոլոգիական և աշխարհագրական քարտեզագրման համակարգն է:

Ներկայումս թափոնների հեռացման հիմնական մեթոդը դրանց պահեստավորումն է պոչամբարներում, ինչը բացասաբար է անդրադառնում շրջակա միջավայրի վրա:

Հայաստանում գտնվում են բազմաթիվ փոքր և մեծ, գործող կամ կոնսերվացված պոչամբարներ, որոնք լուրջ մտահոգություններ են առաջացնում շրջակա միջավայրի համար՝ հողի, բիոտայի, ջրի և օդի, ինչպես նաև այդ տարածքներում բնակվող բնակչության առողջության համար:

Ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում գործող պոչամբարների համակողմանի ուսումնասիրությունը, պոչամբարների ազդման գոտիների քարտեզագրումը և տարածքների դասակարգումն ըստ աղտոտման աստիճանի:

Դիտարկվել է «Ագարակ»-ի պոչամբարը, որը գտնվելով համապատասխան բնակլիմայական և երկրաբանական պայմաններում՝ խիստ վտանգավոր է դարձել տվյալ տարածքի համար:

Կատարվել է հողային ծածկույթի, ջրի, գյուղատնտեսական կուլտուրաների նմուշների հետազոտում, որոշվել են վտանգավոր նյութերի կոնցենտրացիաները և համեմատելով համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների հետ՝ արձանագրվել է տարածքի աղտոտվածության աստիճանը:

Բանալի բառեր՝ *հանքարդյունաբերություն, պոչամբար, աղտոտիչներ, նմուշների հետազոտում, աղտոտված տարածքներ, շրջակա միջավայր:*

Բնապահպանական աղետների տեսանկյունից ամբողջ աշխարհում իրենց վտանգավորության աստիճանով ուշադրության կենտրոնում են պոչամբարները: Հայաստանը, լինելով փոքր տարածքով երկիր, հագեցած է պոլիմետաղական պոչամբարներով: ՀՀ-ում գտնվող 20 գործող և կոնսերվացված պոչամբարների հիմնական կուտակումները Սյունիքի և Լոռու մարզերում են:

Շրջակա միջավայրի համար մեծ վտանգ են ներկայացնում ինչպես գործող, այնպես էլ կոնսերվացված պոչամբարները: Արտադրողական ծավալների մասշտաբների մեծացման հետ կապված՝ պոչամբարներն իրենց ռեգլամենտով նախատեսված աշխատանքային տարիներից շուտ են լցվում: Ժամանակից շուտ լցվելու պատճառներից են անձրևաջրերի հեռացման համակարգում եղած թերացումները և դրա սխալ նախագծումը: Նման դեպքերում անհրաժեշտ է կատարել պոչամբարների շուտափույթ կոնսերվացում, քանի որ առաջանում է նաև մեծ լարում պոչամբարի հատակային մասի վրա, որն էլ կարող է բնապահպանական մեծ աղետի պատճառ դառնալ [1]: Պոչամբարների ժամանակից շուտ կոնսերվացիան առաջ է բերում նոր պոչամբարների կառուցում և տարածքների ընդլայնում: Պոչամբարների համար օգտագործված տարածքները անպիտան են հետագա օգտագործման և գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման համար [2]:

Գործող և կոնսերվացված պոչամբարների հարակից տարածքների բազմապրոֆիլ ուսումնասիրությունը հույժ կարևոր է հողի, ջրի և գյուղատնտեսական կուլտուրաների անվտանգ օգտագործման սահմանը պարզելու համար:

Աշխատանքը նվիրված է Սյունիքի մարզում գտնվող Ագարակի պոչամբարի և նրա հարակից տարածքների ուսումնասիրմանը:

Հանքարդյունաբերության համալիրների տարածքների աղտոտման էկոլոգիական քարտեզ կազմելու համար պահանջվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1. հողի աղտոտման վերաբերյալ տվյալներ,
2. գետի և ոռոգման ջրերի վերաբերյալ տվյալներ,
3. դիտարկվող հողերում աճեցված գյուղատնտեսական արտադրանքի աղտոտման վերաբերյալ տվյալներ:

Ուսումնասիրության արդյունքները՝

Հողի նմուշները վերցվել են գարնանային շրջանում, 0 ... 10 և 20 ... 30 սմ շերտերի 3 մակերևույթներից, պոչամբարի տարբեր ափերից 10 ... 500 մ հեռավորության վրա: Այնուհետև կատարվել է խառը նմուշառում, որն ուղարկվել է հետազոտության: Ծանր մետաղների որոշման համար հողի նմուշառումը, պահեստավորումը և տեղափոխումը կատարվել է ըստ համապատասխան ԳՕՍՏ 17.4.4.02-84-ի: Հողի մեջ քիմիական տարրերի պարունակությունը որոշվել է ատոմ աբսորբցիոն

սպեկտրոսկոպիայի մեթոդով՝ համաձայն ընդհանուր ընդունված մեթոդների: Օգտագործվել են «55AA» բազային ատոմ աբսորբցիոն սպեկտրոմետր և «240ZAA» գրաֆիտային ատոմ աբսորբցիոն սպեկտրոմետր, «Agilent Technologies» ընկերության գործիքները:

Հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հողի, ջրի և բուսականության մեջ ծանր մետաղների պարունակությունը պոչամբարից 10-200 մ հեռավորության վրա գտնվող տարածքում, ինչպես նաև պուլպայում (Ագարակ)

Աղյուսակ 1

Հ/հ	Նմուշներ	Ծանր մետաղների պարունակությունը մգկգ, մգ/լ									
		Mo	Sr	Pb	Zn	Cu	Ni	Fe	Mn	Cr	V
1	Հող 10-30 մ հեռ. պոչամբարից	4705	157	147	899	83701.5	47	336017	727	57.0	16.3
2	Հող այգուց 200 մ հարավ պոչամբարից	29.2	352	69.3	522.5	1690.8	74	33512.5	996.3	151.3	147.0
3	Լիմոն 200 մ հարավ պոչամբարից	10.1	79.4	-	4.0	57.2	-	95.0	-	29.7	6.1
4	Ոռոգման ջուր 100 մ հեռ. պոչամբարից	0.2	1.14	0.007	0.07	1.056	-	12.783	-	0.059	0.038
5	Գետի ջուր 50 մ հեռ. պոչամբարից	0.198	0.76	-	0.04	0.071	-	0.127	-	0.055	0.018
6	Գետի տիղմ մինչև պոչամբարը	124.6	197	18	76.1	1366.5	52	19200.4	474	61.2	101.1
	Գետի տիղմ պոչամբարից հետո	30.0	169	9.6	46.6	316.8	41	11907.7	311.3	41.4	83.1
7	Խմելու ջուր	0.011	0.43	-	0.03	0.025	-	0.069	-	0.018	0.005
8	Պուլպա	3417	130	411.4	1434	141686	-	353180	855.3	98.2	62.6
9	Լոլիկ պոչ. հարակից գյուղ՝ Կարճևան	13.6	15.4	-	86.2	59.0	-	453.5	-	13..9	-
10	Լոլիկ պոչ. հարակից այգուց	51.9	15.5	-	76.9	73.3	-	289.3	-	-	-
11	Սմբուկ պոչ. հարակից գյուղ՝ Կարճևան	12.0	17.5	-	85.6	87.2	-	158.9	-	-	-
12	Սերկևիլ պոչ. հարակից գյուղ՝ Կարճևան	8.7	20	-	23.7	21.3	-	39.8	-	-	-

Եզրակացություն՝

1. Լեռնահարստացման համալիրի, մասնավորապես պոչամբարի տնտեսական գործունեությունն ազդում է մոտակա հողի ծածկույթի վրա, աղտոտում մակերեսային ջրային օբյեկտները:

2. Ուսումնասիրվող տարածքում հայտնաբերվել է, որ մշակովի բույսերում որոշ ծանր մետաղների թույլատրելի առավելագույն կոնցենտրացիան գերազանցված է:

3. Անհրաժեշտ է մշակել մեթոդներ և մոտեցումներ՝ ծանր մետաղների տարածումը դեպի հող և բուսականություն նվազեցնելու համար:

Օգտագործված գրականություն

1. **Мовсесян Р. С., Мкртчян Г. А., Мовсисян А. И.,** Перспективы промышленного освоения техногенных минеральных ресурсов Республики Армения, Известия НАН РА, Науки о Земле-2014-67, № 1, 30-39.

2. Национальная программа действий по борьбе с опустыниванием в Армении, Министерство охраны природы, Ереван, 2012, с. 33-41.

ENVIRONMENTAL EFFECTS OF TAILINGS AND LAND CLASSIFICATION BY CONTAMINATION

TADEVOSYAN ARTASHES
Candidate of Tech. Sciences, Professor
BAGHDASARYAN TATEVIK
PHD student

Abstract: The mining sector is one of the leading sectors of the Armenian economy. The technological processes of the mining industry are associated with the consumption of natural resources and the accumulation of various wastes in the environment. Under the influence of anthropogenic factors, there is a real or potential possibility of disrupting the natural environment, the environment and the normal processes of human life. The main way to prevent environmental risks is the system of ecological-geographical mapping of the study area.

Currently, the main method of waste disposal is their storage at landfills, which has a negative impact on the environment.

There are many small, large, active or mothballed tailing dumps in Armenia, which are of serious concern for the environment - soil, biota, water and air, as well as for the health of the population living in these areas.

The aim of the work is a comprehensive study of the existing tailing dumps in the Republic of Armenia, mapping the impact zones of the tailing dumps, and classification of territories by the degree of pollution.

We observed the Agarak tailing dump, which, under appropriate climatic and geological conditions, became extremely dangerous for the area.

Samples of soil cover, water, agricultural crops were investigated, the concentrations of harmful substances were determined by comparing the level of pollution of the territory by comparing them with the corresponding permissible maximum concentrations.

Key words: *mining, tailing dumps, pollutants, sample survey, contaminated areas, environment.*

ВЛИЯНИЕ ХВОСТОХРАНИЛИЩ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ И КЛАССИФИКАЦИЯ ЗЕМЕЛЬ ПО ЗАГРЯЗНЕНИЮ

ТАДЕВОСЯН АРТАШЕС
канд. тех. наук, профессор,
Преподаватель ГГУ
БАГДАСАРЯН ТАТЕВИК
Аспирант

Горнодобывающий сектор - один из ведущих отраслей экономики Армении. Технологические процессы горнодобывающей промышленности связаны с потреблением

природных ресурсов и накоплением различных отходов в окружающей среде. Под воздействием антропогенных факторов существует реальная или потенциальная возможность нарушения природной среды, окружающей среды и нормальных процессов жизнедеятельности человека. Основным способом предотвращения экологических рисков является система эколого-географического картографирования исследуемой территории.

В настоящее время основным методом утилизации отходов является их хранение на полигонах, что оказывает негативное воздействие на окружающую среду.

В Армении есть много маленьких, больших, действующих или законсервированных хвостохранилищ, которые вызывают серьезную обеспокоенность для окружающей среды - почвы, биоты, воды и воздуха, а также для здоровья населения, проживающего в этих районах.

Целью работы является комплексное изучение существующих хвостохранилищ в Республике Армения, картографирование зон воздействия хвостохранилищ, классификация территорий по степени загрязнения.

Наблюдался хвостохранилище “Агарак”, которое при соответствующих климатических и геологических условиях стало чрезвычайно опасным для данной местности.

Были исследованы пробы почвенного покрова, воды, сельскохозяйственных культур, определены концентрации вредных веществ, сравнив уровень загрязнения территории, путем сравнения их с соответствующими допустимыми предельными концентрациями.

Ключевые слова: *добыча полезных ископаемых, хвостохранилища, загрязнители, выборочное обследование, загрязненные территории, окружающая среда.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.09.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 09.10.2020թ.:

5-ԷԹԻԼ-4,5-ԴԻՄԵԹԻԼ-2-ԻՄԻՆՈ-2,5-ԴԻՀԻԴՐՈՖՈՒՐԱՆ-3-ԿԱՐԲՈՆԻՏՐԻԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՍԻՆԹԵԶԻ ԵՂԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
Քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
e-mail: avetisyan_ks@yahoo.com

Ուսումնասիրվել է 3-հիդրօքսի-3-մեթիլպենտան-2-ոնի փոխազդեցությունը մալոնոնիտրիլի հետ, և պարզվել է, որ ռեակցիայի արդյունքում առաջանում են միաժամանակ երկու վերջանյութեր՝ 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլը և վերջինիս ու մալոնոնիտրիլի հետագա փոխազդեցության արդյունք հանդիսացող 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-դիցիանոմեթիլեն-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլը:

Ուսումնասիրվել և մշակվել են ռեակցիայի իրականացման օպտիմալ պայմանները: Պարզվել է, որ լավագույն ելքերը ստացվում են ռեակցիան ռեագենտների (1:1) հարաբերությամբ, սենյակային ջերմաստիճանում, բենզոլի միջավայրում առանց կատալիզատորի իրականացնելու պայմաններում:

Բանալի բառեր՝ *γ-լակտոններ, 2,5-դիհիդրոֆուրանոններ, մալոնոնիտրիլ, կարբինոլ, 2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլ, 2-դիցիանոմեթիլեն-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլ, 2-օքսո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլ:*

Հայտնի է, որ բժշկության մեջ օգտագործվող դեղերի մեծ մասի կառուցվածքում առկա են հետերոցիկլիկ համակարգեր: Հետերոցիկլիկ միացությունների շարքում կարևոր տեղ են գրավում թթվածին պարունակող հինգանդամանի հետերոցիկլերը, մասնավորապես չհագեցած γ-լակտոնային օղակ պարունակող միացությունները և դրանց ածանցյալները: Գրականությունից հայտնի է, որ վերջիններս օժտված են կենսաբանական և դեղաբանական ակտիվության լայն սպեկտրով՝ հակաբակտերիալ, հակասնկային, հակաբորբոքային, հակախոցային, հանգստացնող, ցավազրկող և այլն [1-8]:

Հայտնի է նաև, որ չհագեցած γ-լակտոնները՝ 2,5-դիհիդրոֆուրանոնները և դրանց ածանցյալները, դեղագործության մեջ լայնորեն կիրառվում են բազմաթիվ դեղանյութերի՝ ատրոպինի շարքի սպազմոլիտիկների, մի շարք հակաբիոտիկների, պիլոկարպինի, պերիստոնի և ացետոմիցինի արտադրության համար, սննդարտադրության մեջ՝ որպես սննդային հավելումներ, կայունացուցիչներ և էմուլգատորներ, գյու-


ղատնտեսության մեջ՝ հերբիցիդներ, ինսեկտիցիդներ, բույսի աճի խթանիչներ և այլն [1-4]:

Բազմաթիվ գրական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ γ-լակտոնների կենսաբանական ակտիվությունը կախված է նաև լակտոնային օղակի տեղակալիչների բնույթից և դիրքից:

Մյուս կողմից, 2,5-դիհիդրոֆուրանոններն ունեն սինթետիկ լայն հնարավորություններ՝ պայմանավորված դրանց կառուցվածքում պարունակվող լակտոնային օղակով, դրանում առկա չհագեցած կապով, տեղակալիչների բնույթով ու դիրքով:

Ամփոփելով ասվածը՝ պարզ է դառնում, որ 2,5-դիհիդրոֆուրանոնների և նրանց ածանցյալների քիմիայի ուսումնասիրությունն ունի տեսական ու գործնական մեծ նշանակություն, և դրանց նոր, պոտենցիալ, կենսաբանորեն ակտիվ ածանցյալների սինթեզը շատ կարևոր և արդիական խնդիր է:

Ներկայացվող հոդվածում նկարագրված են 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլի արդյունավետ սինթեզի եղանակի վերաբերյալ ուսումնասիրությունները և մշակված օպտիմալ պայմանները: 2-Իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլ ստանալու նպատակով իրականացվել է 3-հիդրօքսի-3-մեթիլպենտան-2-ոնի փոխազդեցության ռեակցիան մալոնոնիտրիլի հետ տարբեր պայմաններում: Սակայն պարզվեց, որ բոլոր դեպքերում էլ ռեակցիայի արդյունքում առաջանում են միաժամանակ երկու վերջանյութեր՝ 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլը (4) և վերջինիս ու մալոնոնիտրիլի հետագա փոխազդեցության արդյունք հանդիսացող 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-դիցիանոմեթիլեն-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլը (5):



(1) (2) (3) (4)

Ուսումնասիրել ենք ռեակցիայի ընթացքը տարբեր պայմաններում և ռեագենտների տարբեր հարաբերությունների դեպքում՝ ռեակցիայի օպտիմալ պայմաններ մշակելու նպատակով: Ռեակցիան իրականացրել ենք ռեագենտների՝ 3-հիդրօքսի-3-մեթիլպենտան-2-ոնի (1) և մալոնոնիտրիլի (2) (1:1) և (2:1) հարաբերությամբ, առանց կատալիզատորի և նատրիումի էթիլատի կատալիզատորի առկայությամբ, տարբեր լուծիչների (էթանոլ, բենզոլ և հեպտան) միջավայրում, ինչպես սենյակային ջերմաստիճանում, այնպես էլ տաքացման պայմաններում:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բոլոր դեպքերում էլ ստացվում են երկու վերջանյութեր: Սակայն տարբեր պայմաններում տարբեր են դրանց ելքերը (աղյուսակ 1): Ռեակցիան ռեագենտների էկվիմոլյար քանակությամբ սենյակային ջերմաստիճանում էթանոլի, հեպտանի և բենզոլի միջավայրում իրականացնելիս պարզվել է, որ ամենացածր ելքերը ստացվում են ապոլյար լուծիչի՝ հեպտանի դեպքում (գումարային ելքը՝ 67.1%): Էթանոլի դեպքում վերջանյութերի գումարային ելքը կազմում է 77.4%: Նպատակ ունենալով մեծացնել էթանոլի միջավայրում իրականացվող ռեակցիայի վերջանյութերի ելքերը՝ ռեակցիան իրականացրել ենք նաև կատալիզատորի՝ նատրիումի էթիլատի ներկայությամբ, ինչպես 40 ժամ սենյակային ջերմաստիճանում, այնպես էլ 1 ժամ 70°C տաքացման պայմաններում: Պարզվել է, որ այս դեպքում տեղի է ունենում և՛ գումարային ելքի, և՛ նրանում (3) միացության ելքի նվազում: Հետաքրքիր է, որ վերջնանյութերի ինչպես գումարային, այնպես էլ միացության (3)-ի ամենաբարձր ելքերը ստացվում են բենզոլի դեպքում (գում. ելք 82.9%): Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, բոլոր դեպքերում էլ միացություն (4)-ը միացություն (3)-ի համեմատ ստացվում է մեծ գերակշռությամբ: Հաշվի առնելով այն փաստը, որ ամենամեծ ելքերը ստացվում են ռեակցիան ռեագենտների 1:1 հարաբերությամբ, առանց կատալիզատորի, բենզոլի միջավայրում սենյակային ջերմաստիճանում անցկացնելիս և նպատակ ունենալով մեծացնել միացություն (3)-ի ելքը՝ ռեակցիան իրականացվեց նաև նույն պայմաններում, բայց ռեագենտների՝ 3-հիդրօքսի-3-մեթիլպենտան-2-ոնի (1) և մալոնոնիտրիլի (2) (2:1) հարաբերությամբ: Սակայն, պարզվեց, որ այս դեպքում վերջանյութերի գումարային ելքը գրեթե մնում է անփոփոխ, իսկ միացություն (3)-ի ելքը ոչ թե աճում, այլ նվազում է 36.1%-ից 31.7%: Այսպիսով՝ ուսումնասիրվել և մշակվել են ռեակցիայի իրականացման օպտիմալ պայմանները: Ռեակցիան լավագույն ձևով է ընթանում ռեագենտների՝ 3-հիդրօքսի-3-մեթիլպենտան-2-ոնի և մալոնոնիտրիլի (1:1) հարաբերությամբ, առանց կատալիզատորի, բենզոլի միջավայրում, 48 ժամ սենյակային ջերմաստիճանում իրականացնելիս, և արդյունքում 36,1% ելքով առաջանում են 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլը (3) և 46,8% ելքով 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-դիցիանոմեթիլեն-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլ (4) (գումարային ելքը՝ 82,9%):

Սինթեզված միացությունների կառուցվածքը հաստատվել է ԻԿ և ՄՄՌ ^{1}Հ և ^{13}C սպեկտրալ տվյալներով, մաքրությունը նրբաշերտ քրոմատոգրաֆիայով, բաղադրությունը՝ էլեմենտային անալիզի մեթոդով:

5-Էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլի (4) և 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-դիցիանոմեթիլեն-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլի (5) ելքերը ռեակցիայի տարբեր պայմաններում

№	1	2	3	4	5	6
Ռեագենտներ՝ (1)-ի և (2)-ի հարաբերությունն	1:1	1:1	1:1	1:1	**1:1**	2:1
Լուծիչ	հեպտան	էթանոլ	էթանոլ	էթանոլ	**բենզոլ**	բենզոլ
Կատալիզատոր	-	-	C_2H_5ONa	C_2H_5ONa	**-**	-
Ջերմաստիճան	սենյակային	սենյակային	սենյակային	70^0C	**սենյակային**	սենյակային
Վերջանյութ (3)-ի ելք, %	18.3	30.4	24.5	10.0	**36.1**	31.7
Վերջանյութ (4)-ի ելք, %	48.8	47	51	63.8	**46.8**	51
Գումարային ելք, %	67.1	77.4	75.5	73.8	**82.9**	82.7

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

ԻԿ սպեկտրները հանված են UR-20 սպեկտրոֆոտոմետրի վրա վազելինային յուղում: ՄՄՌ ^1H և ^{13}C սպեկտրները հանված են Varian Mercury-300 սպեկտրոմետրով, 300 ՄՀց աշխատանքային հաճախականությամբ CCl_4 -ի մեջ, ներքին ստանդարտ՝ ՀՄԴՍ: Նրբաշերտ քրոմատոգրաֆիան իրականացված է Silufol-UV-254 մակնիշի թիթեղների վրա, շարժուն ֆազ՝ էթանոլ: հեքսան (2:1) և ացետոն : բենզոլ (1:4), հայտածումը՝ յոդի գոլորշիներով:

5-Էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլի (3) և

5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-դիցիանոմեթիլեն-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլի (4) ստացման եղանակները.

1) 0,05 Մոլ (5,8 գ) 3-հիդրօքսի–3-մեթիլ–2-պենտանոնի և 0,05մոլ (3,3 գ) մալոնոնիտրիլի խառնուրդը 25 մլ հեպտանում թողնում են սենյակային ջերմաստիճանում մոտ 45-50 ժ (ՆՇՔ վերահսկում): Լուծիչի հեռացումից հետո առաջացած յուղանման նյութը լուծում են բենզոլում, ֆիլտրում և վերաբյուրեղացնում են բենզոլ-ջուր=(1:2) խառնուրդից ու ստանում 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-դիցինոմեթիլեն-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլը (4):

Ելքը՝ 48,8%, $T_{հալման}$ = 152-153°C:

Գտնված է, %. C - 67,92; H - 5,53; N - 19,35: $C_{12}H_{11}N_3O$: Հաշված է, %. C - 67,59; H - 5,20; N - 19,71:

ԻԿ սպեկտր, սմ$^{-1}$: 2250 (CN), 2220 (CN), 2210 (CN), 1620 (C=C), 1593 (C=C), 1085 (C-O-C):

Սպեկտր ՄՄՌ^{1}H (DMSO), δ, մ. մ.: 0.83 u (3H, $CH_2\underline{CH_3}$), 1.63 u (3H, CH_3), 1.95 u (2H, $\underline{CH_2}CH_3$), 2.38 u (3H, CH_3):

Սպեկտր ՄՄՌ^{13}C (DMSO-d_6-CCl_4), δ, մ. մ.: 6.8, 13.8, 21.9, 26.5, 29.6, 55.9, 102.6, 104.5, 108.7, 110.2, 110.6, 175.9, 183.1:

Բենզոլային լուծույթին ավելացնում են 4 մաս հեքսան, ստացված նստվածքը ֆիլտրում են, վերաբյուրեղացնում հեպտանից և ստանում 5-էթիլ-4,5-դիմեթիլ-2-իմինո-2,5-դիհիդրոֆուրան-3-կարբոնիտրիլը (3): Ելքը՝ 18,3%, $T_{հալման}$ = 82-83 ^{0}C:

Գտնված է, %. C - 66,09; H-7,87; N-16,96: $C_9H_{12}N_2O$: Հաշված է, %. C - 65,83; H - 7,37; N - 17,06:

ԻԿ սպեկտր, սմ$^{-1}$: 3270 (NH), 2230 (CN), 1660 (C=N), 1610 (C=C), 1140 (C-O-C):

Սպեկտր ՄՄՌ^{1}H (DMSO), δ, մ. մ.: 0.85 u (3H, $CH_2\underline{CH_3}$), 1.62 u (3H, CH_3), 1.90 u (2H, $\underline{CH_2}CH_3$), 2.38 u (3H, CH_3), 7.38 u (1H, NH):

2) 0,05 Մոլ (5,8 գ) 3-հիդրօքսի–3-մեթիլ–2-պենտանոնի և 0,05մոլ (3,3 գ) մալոնոնիտրիլի խառնուրդը 25 մլ բացարձակ էթանոլում թողնում են սենյակային ջերմաստիճանում մոտ 45-50 ժ (ՆՇՔ վերահսկում): Լուծիչի հեռացումից հետո մշակում են առաջին մեթոդում նկարագրված եղանակով: Ստանում են միացություն (4)-ը՝ 47,0% ելքով և միացություն (3)-ը՝ 30,43% ելքով:

3) 0,005 Մոլ (0,115 գ) նատրիումին լուծված 25 մլ բացարձակ էթանոլում ավելացնում են 5,8 գ (0.05 մոլ) 3-հիդրօքսի-3-մէթիլ-2-պենտանոն և 0,05մոլ (3,3 գ) մալոնոնիտրիլ: Խառնուրդը թողնում են սենյակային ջերմաստիճանում 30 ժամ (ՆՇՔ վերահսկում): Լուծիչի հեռացումից հետո մշակում են առաջին մեթոդում նկարագրված եղանակով: Ստանում են միացություն (4)-ը՝ 51.5% ելքով, և միացություն (3)-ը՝ 24.5% ելքով:

4) 0,005 Մոլ (0,115 գ) նատրիումին լուծված 25 մլ բացարձակ էթանոլում ավելացնում են 5,8 գ (0.05 մոլ) 3-հիդրօքսի-3-մէթիլ-2-պենտանոն և 0,05 մոլ (3,3 գ)

մալոնոնիտրիլ: Խառնուրդը 1 ժամ տաքացնում են 70°C (ՆՇՔ վերահսկում): Լուծիչի հեռացումից հետո մշակում են առաջին մեթոդում նկարագրված եղանակով: Ստանում են միացություն (4)-ը՝ 63.85% ելքով, և միացություն (5)-ը՝ 10.0% ելքով:

5) 0,05 Մոլ (5,8 գ) 3-հիդրօքսի–3-մեթիլ–2-պենտանոնի և 0,05 մոլ (3,3 գ) մալոնոնիտրիլի խառնուրդը 25 մլ բացարձակ բենզոլում թողնում են սենյակային ջերմաստիճանում մոտ 48 ժ (ՆՇՔ վերահսկում): Այնուհետև լուծիչի՝ բենզոլի մասնակի (2/3 մասը) հետ թորելուց հետո մշակում են առաջին մեթոդում նկարագրված եղանակով: Ստանում են միացություն (4)-ը՝ 46,8% ելքով, և միացություն (3)-ը՝ 36,1% ելքով:

6) 0,05 Մոլ (5,8 գ) 3-հիդրօքսի–3-մեթիլ–2-պենտանոնի և 0,025մոլ (1,65 գ) մալոնոնիտրիլի խառնուրդը 25 մլ բացարձակ բենզոլում թողնում են սենյակային ջերմաստիճանում 48 ժ (ՆՇՔ վերահսկում): Այնուհետև լուծիչի՝ բենզոլի մասնակի (2/3 մասը) հետթորումից հետո մշակում են առաջին մեթոդում նկարագրված եղանակով: Ստանում են միացություն (4)-ը՝ 51,0% ելքով, և միացություն (3)-ը՝ 31,7% ելքով:

Օգտագործված գրականություն

1. Машковский М. Д., Лекарственные средства, М., Новая волна, 2014, 1216 с.

2. Березовский Б. М., Химия витаминов, Изд 2-е, М., Пищевая промышленность, 1973, 632с.

3. Аветисян А. А., Токмаджян Г. Г., Биологически активные производные 2-бутен- и 3-бутен-4-олидов // *Армянский химический* журнал, 1993, т. 46, 3-4, с. 219-236.

4. Adibatti N.A., Thirugnanasambantham P., Kulothundan C., Viswanathan S., Kameswaran L., Balakrishna K., Sukumar E. A pyridine alkaloid from *Ceropegia juncea* // *Photochemistry*, 1991, 30, p.2449-2450.

5. Sivakumar K., Eswaramurthy S., Sabramanian K., Natarajan S. Structure of cerpegin, a new alkaloid // Acta Crystallogr. 1990,C46, pp. 839-841.

6. Tsuchida T., Iinuma H., Nishida G., Kinoshita N., Sawa t., Hamada M., Takeuchi T. Tetrodecamycim and dihydrotetrodecameycin, new antimicrobial antibiotics against *Pasteurella piscicida* produced by *Streptomyces nashvillensis* MJ885-mF8 // *J. Antibiotics*, 1995, v.48, 1104-1114.

7. Zhang R., Chan D., Jessica Sh., Iskander G., StC Black D., Kumar N. Synthesis of new aryl substituted 5-alkylidenefuran-2(5H)ones. // ARKIVOC, 2009, pp.102-115.

8. Karak M., Barbosa L., Acosta J., Boukouvalas J. Total synthesis of rubrolides B, I and K // 16th Brazilian Meetings on Organic Synthesis, November 15-18, 2015, Brazil.

DEVELOPMENT OF AN EFFECTIVE SYNTHESIS METHOD'S 5-ETHYL-4,5-DIMETHYL-2-IMINO-2,5-DIHYDROFURAN-3-CARBONITRILE

AVETISYAN KARINE
Doctor of Chemistry, Associate Professor
GSU Lecturer

The interaction of 3-hydroxy-3-methylpentane-2-one with malononitrile was studied. It was found that in the result of reactions, two final products were formed simultaneously: 5-ethyl-4,5-dimethyl-2-imino-2,5-dihydrofuran-3-carbonitrile and its further resulting from interaction with malononitrile – 5-ethyl-4,5-dimethyl-2-dicyanomethylene-2,5-dihydrofuran-3-carbonitrile. The optimal conditions for the reaction was been developed. It was been established that the best results are obtained when the reaction was carried out at reactant ratio of (1:1) at room temperature without a catalyst in the benzene.

Keywords: *γ-lactones, 2,5-dihydrofuranones, malononitrile, carbinol, 2-imino-2,5-dihydrofuran-3-carbonitrile, 2-dicyanomethylene-2,5-dihydrofuran-3-carbonitrile, 2-oxo-2,5-dihydrofuran-3-carbonitrile.*

РАЗРАБОТКА ЭФФЕКТИВНОГО МЕТОДА СИНТЕЗА 5-ЭТИЛ-4,5-ДИМЕТИЛ-2-ИМИНО-2,5-ДИГИДРОФУРАН-3-КАРБОНИТРИЛА

АВЕТИСЯН КАРИНЕ
Кандидат химических наук, доцент,
Преподаватель ГГУ

Изучено взаимодействие 3-гидрокси-3-метилпентан-2-она с малононитрилом. Выяснено, что в результате реакции получаются два конечных продукта – 5-этил-4,5-диметил-2-имино-2,5-дигидрофуран-3-карбонитрил и продукт его дальнейшего взаимодействия с малононитрилом – 5-этил-4,5-диметил-2-дицианометилен-2,5-дигидрофуран-3-карбонитрил. Разработаны оптимальные условия проведения реакции. Установлено, что наилучшие результаты получаются при проведении реакции в соотношении реагентов (1:1) при комнатной температуре без катализатора в среде бензола.

Ключевые слова*: γ-лактоны, 2,5-дигидрофурaноны, малононитрил, карбинол, 2-имино-2,5-дигидрофуран-3-карбонитрил, 2-дицианометилен-2,5-дигидрофуран-3-карбонитрил, 2-оксо-2,5-дигидрофуран-3-карбонитрил.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27. 08. 2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 09.10.2020թ.:

ԷԹԻԼԵՆԸ ՈՐՊԵՍ ԲՈՒՍԱԿԱՆ ՀՈՐՄՈՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԼՅՈՒԴՄԻԼԱ
Կենսաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի
ինստիտուտի ավագ գիտաշխատող
e-mail: arakelyanlyudmila@mail.ru
ՍԱՀԱԿՅԱՆ ԳՈՀԱՐ
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժնի 4 -րդ կուրսի
ուսանողուհի
e-mail: gohar-sahakyan-1999@mail.ru

Բանջարաբոստանային կուլտուրաների աճի և զարգացման վրա ազդող բուսական հորմոններից լավ ուսումնասիրված են էթիլենը և իր ածանցյալները: Էթիլենը ֆիտոհորմոն է և բույսի աճի տարբեր փուլերի վրա տարբեր կերպ է ազդում: Հաճախ այն անվանում են «ծերացման հորմոն»: Էթիլենի դերը կարևոր է պտուղների աճի համար: Գյուղատնտեսության մեջ օգտագործվում է էթեֆոնի ձևով, որն ունի լայն կիրառություն փոմատի և այլ կուլտուրաների հասունացման համար, ինչպես նաև բոստանային կուլտուրաների մեխանիզացված հավաքումը հեշտացնելու համար: Այժմ գյուղատնտեսության տարբեր ոլորտներում կատարվում են տարատեսակ հետազոտություններ այդ հորմոնի լայնամասշտաբ օգտագործման համար: Էթիլենը և դրա ածանցյալները կարող են օգտագործվել բերքատվությունը բարձրացնելու նպատակով, հետևաբար այդ ֆիտոհորմոնի ազդեցության մեխանիզմի պարզաբանումը կարևորվում է բանջարաբոստանային կուլտուրաների բերքատվության բարձրացման գործընթացում:

Բանալի բառեր՝ *բույս, էթիլեն, էթեֆոն, «ծերացման հորմոն», ֆիտոհորմոն, աճ, սթրես:*

Էվոլյուցիայի ընթացքում բույսերը հարմարվում և գոյատևում են բնակլիմայական փոփոխվող պայմաններին, որը արտահայտվում է ֆիզիոլոգիական պատասխան ռեակցիայով: Օրինակ՝ տերևաթափը պետք է ավարտվի, քանի դեռ ձյունը լուրջ մեխանիկական վտանգ չի ստեղծել բույսի համար: Բույսը ստիպված է ծաղկման շրջանն այնպես հաշվարկել, որ պտուղները հասցնեն հասունանալ տվյալ տեսակի համար բարենպաստ ժամանակահատվածում:

Գործոններից յուրաքանչյուրն ընդունվում, վերածվում է ազդակի, սկսում է ակտիվանալ ու գործել հորմոնային համակարգը: Այս ամենը բերում է նյութափոխանա-

կության և բջջակմախքի փոփոխության: Բույսի համաչափ աճն ու համապատասխան փուլերով զարգացումը կարող է իրականանալ նյութերի միջոցով, որոնց գործունեության արդյունքում բույսերում տարաբնույթ ազդակների պատասխանն առավելագույնս նպաստում է ստեղծված պայմաններին հարմարվելուն: Այս ամենի արդյունքում ստեղծվում է մի այնպիսի բարդ և միևնույն ժամանակ համաձայնեցված համակարգ, որի գործունեության շնորհիվ բուսական բջիջը ոչ միայն պահպանում է իր ամբողջականությունը, այլև տեղեկատվության փոխանակման շնորհիվ գործում է մյուս բջիջների հետ համաձայնեցված: Բջիջների մի խումբը դառնում է ազդանշան փոխանցող, մյուսը՝ ընկալող: Եթե ազդանշանը քիմիական բնույթ ունի, մոլեկուլները կոչվում են առաջնային հաղորդիչներ, որոնց մեծ խմբից կարելի է առանձնացնել բուսական հորմոնները՝ ֆիտոհորմոնները: Վերջիններիս միջոցով իրականացվում է բջիջների, հյուսվածքների և օրգանների միջև փոխադարձ կապը:

Ֆիտոհորմոնները քիմիական նյութեր են, որոնք շատ քիչ քանակությամբ մշակվում են բույսի մի մասում, տեղափոխվում են մյուսի մեջ և այնտեղ կարգավորող ազդեցություն ունենում աճման և զարգացման վրա: Ըստ ազդեցության բնույթի՝ ֆիտոհորմոնները լինում են աճը խթանող (աուքսիններ, ցիտոկիններ, գիբերելիններ) և արգելակող՝ սթրեսային հորմոններ (աբսցիզային թթու, էթիլեն):

Լավ ուսումնասիրվել է էթիլենը (C_2H_4), որը հայտնաբերված է բոլոր հյուսվածքներում՝ չնչին քանակությամբ: [2, 479]

Էթիլենը 35^0 C-ում անգույն, թույլ հոտով գազ է, ջրում վատ է լուծում, քայքայվում է՝ առաջացնելով մեթան և ացետիլեն: Առաջին անգամ 1901թ. ռուս գիտնական Դ. Ն. Նելյուբովը պարզել է, որ էթիլենի ազդեցությամբ դադարում է բույսերի աճը երկարությամբ՝ միաժամանակ առաջացնելով վերջինիս հաստացում և շեղում: Այս հետազոտությունները գիտնականը կատարել է՝ օգտագործելով լուսավորության համար կիրառվող, էթիլեն պարունակող գազը: Հետագայում՝ 1920-ական թվականներին, տարբեր գիտնականներ պարզեցին էթիլենի հսկայական դերը բույսերի կյանքում տեղի ունեցող կարևորագույն գործընթացների կարգավորման մեջ: Այն փոքր կոնցենտրացիաներով (0,001-0,1 մկլ/լ) արգելակում է բույսի աճը և փոխում աճի բնույթը: Այն սինթեզում են նաև բակտերիաներ և սնկերի բջիջներ: Ընդ որում, առաջացման արագությունը տարբեր օրգաններում տարբեր է:

Բույսերում էթիլենի սինթեզման համար առանցքային նշանակություն ունի մեթիոնին ամինաթթուն: ԱԵՖ-ի (ադենոզինեռֆոսֆորական թթու) հետ վերջինիս փոխազդեցության հետևանքով առաջանում է S-ադենոզիլմեթիոնին, որը հետագայում վերափոխվում է 1-ամինոցիկլոպրոպան-1-կարբոնաթթվի (ԱՑԿ), որն էլ համարվում է բույսերում էթիլենի անմիջական նախորդը: Թթվածնի առկայությամբ ԱՑԿ-ն քայքայվում է՝ առաջացնելով էթիլեն, ամոնիակ, մրջնաթթու և ածխաթթու գազ:

Որպես մեխանիկական սթրեսի հորմոն, ինչպես նաև «ծերացման հորմոն»՝ էթիլենը ճնշում է ծիլերի աճը երկարությամբ, առաջանում են կարճ, ծռմռված, հաս-

տացած ծիլեր, որոնց ծայրերը չեն կորանում, այլ առաջացնում են օղակ: Մեխանիկական պատնեշի (օրինակ՝ քարերի) հասնելիս բույսն արտադրում է ավելի շատ էթիլեն, երկարությամբ աճը դադարում է, և սկսվում է հաստացումը: Ծիլը փորձում է հաղթահարել պատնեշը՝ մեծացնելով ճնշումը: Եթե դա հաջողվում է, էթիլենի կոնցենտրացիան ընկնում է, և երկարությամբ աճը վերականգնվում է, իսկ եթե պատնեշը չափազանց մեծ է, էթիլենի արտադրությունն ավելանում է: Այս դեպքում ծիլը թեքվում և շրջանցում է պատնեշը:

Էթիլենի դերը հատկապես կարևոր է հյութալի պտուղների հասունացման վերջին փուլում: Պտուղը դադարում է աճել, արտաբջջային տարածություն է անցնում պեկտինազ ֆերմենտը (պտուղները փափկում են), առաջանում են ֆիզիոլոգիապես ակտիվ օլիգոսախարիններ: Պտղակոթունի հիմքում ձևավորվում է վնասվածքային նախակեղևը, փոխվում է տերևների գույնը, կանաչից դառնում դեղին կամ կարմիր: Վնասված պտուղները ավելի շուտ են հասունանում և թափվում: Էթիլենի ազդեցությամբ պտուղների հասունացումը տերևաթափի նման վաղ ֆիզոլոգիական ռեակցիա է: Էթիլենի՝ պտուղներն արագ հասունացնելու ունակությունը վաղուց է հայտնաբերվել: Երկարատև տեղափոխման ժամանակ կարևոր է, որ պտուղները մնան կանաչ ու անվնաս: Ուստի դրանք տեղափոխում են օդափոխվող տարաներում՝ պաշտպանելով մեխանիկական վնասվածքներից, որոնք կարող են խթանել էթիլենի սինթեզը: Մեկ նեխած խնձորը էթիլենի աղբյուր է, և դրա ազդեցությամբ մյուս խնձորները ևս սկսում են նեխել: Ընդհանրապես բոլոր տեսակի պտուղները սկսում են արտադրել էթիլեն, և սկսվում է էթիլենի սինթեզի շղթայական ռեակցիա:

Գյուղատնտեսական նշանակության որոշ պտուղների պահպանման և տեղափոխման գործընթացը հեշտացնելու նպատակով ստեղծվել են էթիլենի կենսասինթեզի խանգարումներով մուտանտներ: Այդպիսի մուտացիաներով լոլիկի սորտեր կան, որոնք հնարավոր է երկար ժամանակ պահպանել և տեղափոխել հեռու վայրեր: Էթիլենը նպաստում է նաև բույսերում պաշտպանական բնույթի այլ նյութերի սինթեզմանը, որոնցից են պրոտեինազների արգելակիչները: Մեխանիկական սթրեսի ազդեցությամբ բույսերն ունակ են արտադրելու էթիլեն, որն էլ իր հերթին ակտիվացնում է պրոտեինազների արգելակիչների սինթեզը:

Բնության մեջ մեխանիկական վնասվածքներ առաջանում են տարբեր պատճառներով (քամի, կարկուտ և այլն): Մեխանիկական սթրեսի ենթարկված բույսը խթանում է էթիլենի սինթեզը: Ներկայումս կիրառվում են տարբեր քիմիական նյութեր, որոնք նպաստում են էթիլենի սինթեզին:

Գյուղատնտեսության այլ բնագավառներում կիրառվում է ոչ թե էթիլենը, այլ էթեֆոնը (2-քլոր-էթիլֆոսֆոնաթթու), որն էթիլեն-արտադրիչներից առավել տարածված է: Այն ճեղքվում է՝ առաջացնելով էթիլեն: Էթեֆոնը կիրառվում է կարճ ամառվա պայմաններում լոլիկի հասունացման համար, հեշտացնում է խնձորի, բալի, չիչխանի, խաղողի, բամբակի մեքենայացված հավաքը՝ արագացնելով տերևների թափվելը:

Օգտագործվում է գարու և աշորայի ցանքսերի պառկելու դեմ պայքարում՝ նպաստելով կարճ և հաստ ցողունների ձևավորմանը: Փոքր չափաբաժնով էթեֆոնով մշակումը վարունգի զարգացման 1-5 տերևի փուլում ճնշում է արական և խթանում իգական ծաղիկների ձևավորումը՝ ընդհանուր առմամբ բարձրացնելով բանջարեղենի և մրգերի բերքատվությունը: Էթեֆոնի բարձր չափաբաժինները կիրառվում են մասնավորապես պտղագոյացման կարգավորման համար: Հետևաբար էթիլենի և նրա ածանցյալների օգտագործման օրինակները հնարավորություն են տալիս պատկերացնելու վերջինիս նշանակությունը մարդու համար նրա գործունեության տարբեր բնագավառներում, հատկապես գյուղատնտեսության մեջ: Այժմ բազմաթիվ նոր հետազոտություններ են իրականացվում այս ֆիտոհորմոնի ազդեցության մեխանիզմների բացահայտման և կիրառման շրջանակներն ընդլայնելու ուղղությամբ:

Օգտագործված գրականություն

1. Դովլաթյան Վ. Վ., Զաքարյան Թ. Օ., Օրգանական քիմիայի դասընթաց, ՀՊԱՀ, Երևան, 2011, 496 էջ:
2. Խրժանովսկի Վ. Գ, Պոնոմարենկո Ս. Ֆ., Բուսաբանություն, Դասագիրք միջնակագ գյուղատնտեսական ուսումնական հաստատության ագրոնոմիկա մասնագիտության համար, Երևան, 1986, 496 էջ:
3. Պետրոսյան Մ., Սահակյան Ն., Թռչունյան Ա., Էթիլենը բույսերի և մարդու կյանքում, «Գիտության աշխարհում», Երևան, 2015, N 1-2, էջ 46-50:
4. Травень В. Ф., Органическая химия/ Учебник для вузов, ИКЦ «Академкнига», 2004.

ETHYLENE AS A PLANT HORMONE

ARAKELYAN LYUDMILA
Doctor of Biology, Associate Professor,
GSU Professor, Senior Scientist,
H. Buniatyan Institute of Biochemistry NAS RA
SAHAKYAN GOHAR
4th year student
Faculty of Natural Sciences,
Department of Pharmaceutical Chemistry, GSU

Of plant hormones that affect the growth and development of vegetables and melons, ethylene and its derivatives have been well studied. It is a phitohormone. At different stages of development, the plant has a different effect. Sometimes it called "aging hormone". The role of ethylene is important in fruit ripening. Ethylene is used in agriculture in the form at etefhon, which is widely used for ripening tomato and athercrops to facilitate the mechanized harvesting of gourds. Comprenensive studies are underway to expand the use of this hormone in various agricultural sectors. Hence, the use of ethylene and its derivatives can be used in order to increase yields. Identification of the mechanism of action of this phytohormone contributes to raising the percentage of yield of vegetable crops and gourds.

Keywords: *plant, ethylene, etephon, "aging hormone", phytohormone, growth, stress.*

ЭТИЛЕН КАК РАСТИТЕЛЬНЫЙ ГОРМОН

АРАКЕЛЯН ЛЮДМИЛА
Кандидат биологических наук, доцент,
Преподаватель ГГУ,
Научный сотрудник Института биохимии
им. Р. Буниятяна, НАН РА
СААКЯН ГОАР
Студентка 4-ого курса отделения "Фармацевтическая химия"
факультета естествознания ГГУ

Из растительных гормонов, которые влияют на рост и развитие овощных и бахчевых культур хорошо изучен этилен и его производные. Он является фитогормоном. В разных стадиях развития растения оказывает различное действие. Иногда его называют "гормоном старения". Роль этилена важна при созревании плодов. Этилен используется в сельскохозяйственных отраслях в виде этефона, который широко используется для

созревания плодов томата и др. культур, также для облегчения механизированной уборки бахчевых культур. В настоящее время проводятся разносторонние исследования для расширения использования этого гормона в различных отраслях сельского хозяйства. Следовательно, использование этилена и его производных может быть употреблено в целях поднятия урожайности. Выявление механизма воздействия данного фитогормона способствует поднятию процента урожайности овощных и бахчевых культур.

Ключевые слова: *растения, этилен, этефон, "гормон старения", фитогормон, рост, стресс.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 24.09.2020թ.:

ПРАВЛЕНИЕ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ХРИМЯНА АЙРИКА И САМОДЕРЖАВИЕ РОССИИ В 1893-1896 ГГ.

ТУНЯН ВАЛЕРИЙ
Доктор исторических наук, профессор,
Преподаватель ГГУ
e-mail: tunyanvalery@rambler.ru

В период правления Католикоса Всех Армян Хримяна Айрика между ним и российским самодержавием установились напряженные отношения, связанные с защитой интересов западных армян Эчмиадзином. С этой целью в 1891 году царизм разработал программу давления на Армянскую церковь, которую начал осуществлять в 1896 году, когда было предпринято закрытие церковных школ.

Ключевые слова: *католикос Хримян, самодержавие, Армянская церковь, Османская Турция, протогеноцид, преследования.*

В турецкой и западной историографии представлена точка зрения о революционной роли армянских католикосов, в частности Хримяна Айрика, которая поддерживалась самодержавием России.[1]

16 апреля 1891 г. скончался католикос всех армян Макар I Тер-Петросян.[2] Незадолго до этого, 2 февраля 1891г. состоялось межведомственное совещание "по Армянским делам", где было обращено внимание и на "религиозную политику в отношении Армянской Апостольской церкви. В этом аспекте постановление "принять меры к тому, чтобы не допускать явлений, могущих затруднять деятельность Правительства в стремлении к постепенному слиянию армянской народности с господствующим населением Империи".[3]

Для реализации поставленной цели намечено: 1."не допускать никаких льгот и уступок католикосату"; 2. строгое осуществление "закона" (Положения об управлении Армянской церкви); 3."постепенное подчинение" церковно-приходских армянских школ к требованиям учебного округа Кавказа; 4. установить контроль над деятельностью церковных органов для наведения "порядка" среди армянского

[1] Kamuran Gürün: Tarih Boyunca Ermeni Meselesi, Ankara. 1980;Ermeni Dosyasi, Ankara,1988 (Dödüncü Basi; Stanford J.Shaw . History of the Ottoman Empire and Modern Turkey, vol. 2, coauthored with Ezel Kural Shaw.1977,Stambul-Cambridge, London; David Fromkin. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East.New York,1989; Turks and Armenians.Washington. D. C. 1989;

[2] Российский Государственный исторический архив (РГИА), ф.797, оп.58, д. 136, л.20

[3] Там же, ф.1022, оп. 1, д. 60, л.12.

духовенства; 5. применить карательные меры к армянским священнослужителям, избегая их применения к "высшему духовенству"; 6. отказ от активного содействия св. Первопрестолу в отношениях с заграничными епархиями, что мотивировалось:[1] "Не от русского правительства, но от личного характера будущих католикосов и от политического такта выдающихся представителей заграничных армян будет зависеть восстановить значение Эчмиадзина";[2] 7. на будущих выборах осуществлять "наблюдение", "не выставляя правительственных кандидатов и не вмешиваясь в избирате- льную борьбу", но использовать, в случае необходимости, право вето при утверждении неугодного самодержавию иерарха на сан католикоса всех армян.

В результате рассчитывалось, что новоизбранный глава Армянской церкви будет придерживаться требований к внутреннему управления в Российской державе и не будет сочувствовать "политическому движению" армян в Османской империи. Журнал совещания был утвержден царем Александром III второго марта 1891 г.,а 16 марта "Правила о применении карательных мер в административном порядке к Армяно-Григорианским священнослужителям".[3]

4 мая состоялись начальные выборы. Всего имелось 86 голосов: 65 делегатов располагали 72 голосами, а 14 не прибывших депутатов представили письменный отзыв. Четырьмя кандидатами стали: Хримян - 77, Измирлян - 75, глава Едесской епархии епископ Хорен Мхитарян - 74, заместитель Иерусалимского патриарха архиепископ Еремия Тер-Саакян. Голосование выявило ряд особенностей. Внимание обращает высокая плотность голосов за первые три претендента. Проваленной оказалась кандидатура константинопольского патриарха Ашэгяна - 6 голосов, хотя все было закономерным, поскольку он превратился в креатуру султана. Пресмыкание завершилось телеграммой Ашэгяна главам епархий неустанно молиться во здравие султана.[4]

Пятого мая 1892 г. началось выдвижение претендентов на сан верховного католикоса. Значение личности Хримяна представила речь светского депутата индо-персидской (Испаганской) епархии и публициста-мшакиста Амбарцума Аракеляна. В ней подкупала искренность, признание Васпураканского уроженца выразителем интересов всех слоев нации, представление его мудрецом: "Хримян - отец народа, истинный ученик св. евангелия и св. апостолов, мудрый пастырь, отдавший свою личность на служение благоденствию и спасению своей паствы. Он неподкупен, он не будет из-за сребролюбия изменять и законы и правила нашей родной церкви. Для него нет привилегированного богача, господина, хозяина, гражданина, ученого,

[1] Там же, л. 12, 12 об

[2] Там же, л. 12 об.

[3] Тунян В. Г., Эмиадзинский престол XIX- нач. XX вв. Ереван, 2001,с.127.

[4] РГИА, ф.1022, оп. 1, д. 60, л.179.

неуча, а в его великой душе, перед мыслью и сердцем, существует только армянский народ".[1] В речи Аракеляна проскользнула мысль об особом умении "Айрика" воздать "Кесарю Ке- сарево и Божье Богови", хотя султан Абдул Гамид за патриотическую деятельность выслал Васпураканского иерарха в Иерусалим.[2]

В результате голосования названы были названы имена четырех кандидатов. Список возглавил Хримян, получивший единогласно все 72 голоса. Измирлян удостоился второй позиции: 50 за и 22 против. Третью и четвертую ступеньки заняли заместитель Иерусалимского патриарха Иеремия Тер-Саакян и предводитель Едесский Хорен Мхитарян, собравшие, соответственно, по 19 и 16 голосов, а против 53 и 56.[3]

Итоги выборов получили отклик в правящих кругах Российской державы. Правитель Кавказа С.А. Шереметев высказался за утверждение Хримяна как "единогласно" избранному. Министерство иностранных дел, учитывая отзыв константинопольского посольства, признало Ванского архиерея достойным занять Эчмиадзинский престол. Высокой оценки удостоены его нравственные качества, популярность среди армянского народа и поддержка Константинопольского патриархата. Глава внутренних дел П.Н. Дурново разделил мнение коллеги. 13 августа 1892 г. в Петергофе он представил всеподданнейший доклад "О выборах кандидатов на пост патриарха-католикоса всех армян". Предложено запросить согласие Османского правительства на увольнение "Айрика" из турецкого подданства.

Султан Абдул Гамид рассматривая Васпураканского архипастыря "личным врагом", отрицательно отнесся к происшедшему. Понадобилось вмешательство Петербургского двора. Поверенный в делах в Константинополе о положительном исходе переговоров сообщил министерству иностранных дел в депеше от 26 апреля 1893 г.: "Я не замедлил передать султану, что, принимая в серьезное внимание все его возражения, государь император полагает, однако, что неутверждение Хримяна представляет несравненно большую опасность, чем те затруднения, которые может повлечь за собой его водворение в Эчмиад- зине, где бдительный надзор властей помещает всякому его вмешательству в политические дела турецких армян, и что, стремления общих наших врагов воспользоваться задержкою в отъезде Хримяна для возбуждения политической смуты среди армян, желательно было, чтобы разрешение Хримяну дано было бы в возможно скором времени". [4]

Султан дал согласие, уважая волю царя, при условии отсутствия демонстраций при проезде Хримяна через территорию Турции. Опальному архипастырю вменялось

---

[1] Речь Амбарцума Аракеляна, Тифлисский листок, 1892, 9 мая.

[2] Там же.

[3] РГИА, ф. 821, оп. 140, д. 21, л.70 об.

[4] Там же, л .31.

проехать Константинополь без остановки, чтобы не предоставить аудиенции и почетной награды. Поверенный предложил вариант принятия Хримяна на борт русским стационарным судом в проливе Дарданелл для безостановочного провоза до Батуми.

Разрешение поднятых вопросов требовало высшей санкции. 3 июня 1893 г. царь Александр III утвердил Мкртича Хримяна в сане верховного католикоса.[1] 10 июня состоялся всеподданнейший доклад министра внутренних дел Дурново о награждении алмазным крестом на клобук с орденом св. А. Невского, представлением проекта высочайшей грамоты на сан главы церкви. Запрошенные почести получили утверждение монарха. 17 июня руководство Кавказа известило министерство внутренних дел о посылке в Иерусалим почетной делегации из членов Эчмиадзинского Синода епископов Аристакеса Седракяна и Саркиса Тер-Гаспаряна, иеремонахов Епрема и Месропа.[2]

20 сентября 1893 г. верховный католикос принял державную присягу. На следующий день состоялось священное миропомазание главы Армянской церкви, вступившего в свои права, с принятием присяги верности Армянской церкви.[3] Наряду с текущими вопросами управления церковными структурами католикос всех армян должен был уделить внимание национальному движению в пользу прав западноармянства, которая усилилась из-за кровавых репрессий султанского режима. В марте 1894 г.самодержавию стал известен кондак Хримяна, порицавший константинопольского патриарха Ашэгяна за соглядательство, отказ от защиты паствы и пресмыкание перед султаном. Протест Абдул Гамида завершился вынесением замечания католикосу всех армян со стороны министра внутренних дел. Между тем Ашэгяна сменил епископ Матеос Измирлян, который в январе 1895 г. предписал зачитать кондак “Айрапета от 8 марта”.[4]

В августе 1895 г. турецкое посольство в России распространило сообщение об усилении борьбы против армянских революционных комитетов, деятельность которых стимулировалась “пришлыми людьми”, принадлежащим к разным сословиям.[5] Активизирована деятельность царского сыска. 6 сентября в Тифлисе было арестовано более 110 революционных деятелей партий “Гчнчак” и “Дашнакцутюн”, входящих в межпартийную ассоциацию “Крив”. Начались массовые облавы. Осенью 1895 г. тайная полиция собрала определенную информацию о деятельности революционных комитетов в пользу автономии Турецкой Армении в

---

[1] Тунян В. Г., Эчмиадзинский престол..,с.136.

[2] РГИА, ф. 821, оп. 140, д. 21, л. 93 - 98, 100.

[3] Миропомазание его Святейшества Католикоса всех армян, Тифлисский листок. 1893, 8 октября.

[4] Тунян В. Г., Эчмиадзинский вопрос..., с. 95, 99 - 105.

[5] Официальные сообщения, Мшак, 1895, 3 сентября.(на арм. яз.).

разных местах Кавказа – Александрополе, Эчмиадзине, Сурмалу, Ахалкалаки, Баку, Новом Баязете, Нахичеване и Ставрополе.

Ереванскому губернатору А. А. Фрезе удалось раскрыть состав Александропольского революционного комитета. Во главе комитета стоял архимандрит Баграт Тавакалян, сменивший члена Синода Ашота Шахяна. О масштабе деятельности комитета свидетельствуют сведения о составе заседания комитета от 20 сентября:10 благочинных, 7 сельских священников, член Александропольского духовного правления Акоп Аматуни и четыре учителя. Постановлено денежный сбор в пользу западноармянства и революционную деятельность возложить на священника Акопа Аматуни, которому подчинялись учителя церковных школ, все священники и приходские старшины. Осуществлялась конспиративная деятельность, проявлявшаяся в смене мест проведения заседаний и в требовании от населения остерегаться расспросов администрации.

Начались высылки свяшеннослужителей в административном порядке. В начале 1896 г. главноначальствующий Кавказа запросил у католикоса перевода архимандрита Тавакаляна в "другое место" региона по причине "неблагонадежности". О важности распоряжения свидетельствовала просьба телеграфировать о принятом решении. 28 февраля Баграт Тавакалян был переведен в Елизаветполь, но викарным. В Эчмиадзине стали проводиться обыски.[1]

В поле зрения главы армянской церкви первенствующей стала проблема западноармянства. В 1892-1893 гг. первоприсутствующий Иеремий Галстян открыл амбары Эчмиадзинского монастыря для помощи западноармянским беженцам из Турции, предоставлял им пшеницу бесплатно, либо по низким ценам. 23 декабря 1893 г. М. Хримян направил племянника архимандрита Хорена к Ереванскому губернатору А. А. Фрезе для направления ходатайства главноначальствующему Закавказья об организации помощи бедствующим турецким армянам, оказавшимся в Эчмиадзине и прилегающих уездах.[2]

Губернатор согласился с пребыванием западноармянских беженцев лишь на зимнее время, чтобы не нарушать отношения с Османской Турцией: "По законам Империи никто из иностранцев не может проживать в России без разрешения своего правительства, выраженного в паспорте". Интересы державы рассматривались выше всего: "Принятие и размещение по нашим деревням нелегально прибывших турецкоподданных армян нарушает права и интересы соседней дружественной державы".[3]

---

[1] Национальный архив Армении (НАА), ф.56, оп. 2, д. 1420, л.5, 7

[2] Там же, оп. 17, д. 51, л. 1-6 об.

[3] Там же, л.4.

На следующий год амбары Эчмиадзина оказались окончательно опустошенными. 28 марта 1894 г. католикос Хримян подписал кондак об организации добровольных пожертвований армянским народом. Решение мотивировалось знанием менталитета армянского народа.[1] Спустя месяц монарх разрешил сбор пожертвований иностранных армян должен был осуществляться через Мини- стерство внутренних дел, а внутри державы лишь в армянских церквях и до нового урожая. [2]

Массовые погромы армян в Османской Турции, во время протогеноцида 1894 - 1896 г., которые обернулись гибелью 300 тыс. армян, побудили католикоса в апреля 1895 г. просить царскую аудиенцию. Она состоялась 31 мая в большом Петергофском дворце, нося церемониальный характер.[3] Отмечено, что усилия российской дипломатии направлены на поддержание майской программы реформ в Турецкой Армении, представленных султану Англией, Францией и Россией, предусматривающей объединение шести армянских вилайетов в одну губернию, проведение судебной, земельной и правовой реформ, ликвидацию иррегулярных отрядов гамидие.

В то же время неожиданностью для властей стало позиционирование католикоса Хримяна в роли политического и национального лидера. Выступая с проповедью 3 июня 1895 г. в армянской церкви Петербурга он заявил: “Армения еще жива и останется жива”.[4] Изложение текста проповеди в газете “Новости” вызвало общественный резонанс и критицизм правительственных борзописцев.[5]

Оптимизм католикоса относительно возможности реализации майской программы вскоре улетучился, поскольку позиция султанского режима относительно национальных чаяний оставалась неизменной. Хотя управляющий министерством внутренних дел 15 ноября 1895 г. в очередной раз заявил католикосу о приверженности проекту реформ трех стран. Предлагалось лишь чуточку подождать: “Необходимо время и настойчивое с нашей стороны наблюдение для осуществления этой реформы”.[6]

28 февраля 1896 г. канцелярия главноначальствующего Кавказа сообщила прокурору Синода для передачи католикосу адекватное сообщение: “Правительство наше непрестанно заботилось об обеспечении участи армян в Турции и дало уже в этом месяце представление Оттоманскому министерству иностранных дел”.[7]

---

[1] РГИА, ф. 821, оп. 140. д. 63, л. 57.

[2] НАА, ф.56, оп. 17, д. 51. л. 9 -15.

[3] Там же, оп. 14, д. 53, л.1, об, 3

[4] Тунян В. Г., Россия и Армения 1878-1897, Ереван, 1997,с.138 -141.

[5] Проповедь армянского католикоса, Мшак. 1895, 10 июня (на арм. яз.).

[6] НАА, ф. 56, оп.17, д. 51, л. 25.

[7] Там же, оп.2, д. 1424, л.1

Реалии значительно отличались от обещаний. В конце 1895 г. во всеподданнейшей записке глава Кавказа Шереметев для подавления национального сознания армянского народа предложил программу "строгого контроля" из трех компонентов: 1) изъять народное образование сельского населения из ведения армянского духовенства, а церковно-приходские школы передать в ведомство Кавказского учебного округа по примеру иноверческих исповеданий католиков и лютеран; 2) усилить контроль над благотворительными армянскими обществами, с их закрытием главноначальствующим в случае нарушения уставных требований; 3) в случае неэффективности предложенных мер приступить к отнятию недвижимых и ненаселенных имений за вознаграждение, оформленное в определенный капитал под правительственном контроле. Получаемые проценты предлагалось тратить на религиозные дела и пожелание жертвователей. Содержание записка получила понимание самодержца, который направил ее на утверждение в комитет министров России.[1]

Не дожидаясь официального постановления главноначальстствующий гражданской частью Кавказа 8 декабря 1895 г. отклонил прошение католикоса Хримяна о сохранение льгот для церковно-приходской системы образования. Позиция мотивировалась отсутствием перехода к цензовой системе препода- вательского состава армянских училищ, их содержанием в значительной части за счет армянских обществ и частных лиц, отсутствием контроля церкви и монастырей над учебным процессом. В силу чего закрытию подлежали 168 приходских школ, а оставшиеся 30 признавались духовными, содержимых самой армянской церковью.[2] 16 января 1896 г состоялось заседание комитета министров России, посвященное рассмотрению всеподданнейшей записки главноначальствующего Шереметьева с тремя пунктами действий против армянской церкви, которая была утверждена.[3]

Таким образом, программа 1891 г. самодержавия по противодействию национальным установкам во главе с Армянской Апостольской церковью стала реальностью в начале 1896 г. усилилось давление самодержавия на Армянскую церковь из-за солидарности с угнетаемой западноармянской паствой в Османской Турции. Самодержавие в 1896 гг. прибегло к закрытию приходских школ, захвату их материальной базы чтобы лишить Эчмиадзинский престол возможности осуществлять национальное воспитание и влиять на патриотические установки армянского общества.

---

[1] Государственный исторический архив Российской Федерации (ГИА РФ) ф 643,оп.1, д.139, л. 15, 16.

[2] НАА, ф.56, оп. 15, д. 344, л. 2 - 3об.

[3] ГИА РФ, ф. 643, оп.1, д. 139, л. 21.

Բնագրի նյութը հրապարակվում է առաջին անգամ

Список использованной литературы

1. Kamuran Gürün: Tarih Boyunca Ermeni Meselesi, Ankara. 1980
2. Kamuran Gürün: Ermeni Dosyasi, Ankara,1988
3. J.Shaw . History of the Ottoman Empire and Modern Turkey, vol. 2, coauthored with Ezel Kural Shaw.1977,Stambul-Cambridge, London.
4. David Fromkin. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East.New York,1989.
5. Turks and Armenians.Washington. D. C. 1989.
6. Российский Государственный исторический архив (РГИА), ф.797, оп.58, д. 136.
7. Тунян В.Г., Эмиадзинский престол XIX- нач. XX вв., Ереван, 2001.
8. РГИА, ф.1022, оп. 1, д. 60.
9. Речь Амбарцума Аракеляна,Тифлисский листок. 1892, 9 мая.
10. *РГИА, ф. 821, оп. 140, д. 21.*
11. Миропомазание его Святейшества Католикоса всех армян. - Тифлисский листок. 1893, 8 октября.
12. Официальные сообщения, Мшак. 1895, 3 сентября (на арм. яз.).
13 Национальный архив Армении (НАА), ф.56, оп. 2, д. 1420.
14.НАА, ф. 56, оп. 17, д. 51
15. РГИА, ф. 821, оп. 140. д. 63.
16. НАА, ф. 56, оп. 14, д. 53.
17. Тунян В. Г., Россия и Армения 1878-1897. Ереван, 1997.
18. Проповедь армянского католикоса. – Мшак. 1895, 10 июня (на арм. яз.).
19. НАА, ф. 56, оп. 2, д.1424.
20. Государственный исторический архив Российской Федерации (ГИА РФ), ф. 643,оп.1, д.139'
21. НАА, ф.56, оп. 15, д. 344.

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀՈՎՎԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ 1893-1896 թթ.

ԹՈՒՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ դասախոս

Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի օրոք նրա և ռուսական ինքնակալության միջև լարված հարաբերություններ էին հաստատվել՝ կապված Էջմիածնի կողմից արևմտահայերի շահերի պաշտպանության հետ: Այդ նպատակով 1891թ. ցարիզմը մշակեց հայկական եկեղեցու վրա ճնշում գործադրելու ծրագիր, որը նա սկսեց իրագործել 1896թ., երբ եկեղեցական դպրոցները փակվեցին:

Բանալի բառեր՝ *Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հարիկ, ինքնակալություն, Հայ առաքելական եկեղեցի, Օսմանյան Թուրքիա, Համիդյան ջարդեր, հետապնդում:*

THE SERVICE OF CATHOLICOS OF ALL ARMENIANS KHRIMYAN HAYRIK AND THE AUTOCRACY OF RUSSIA IN 1893-1896

TUNYAN VALERI
Doctor of Historical Sciences, Professor,
GSU Lecturer

During the service of Catholicos of All Armenians Khrimyan Hayrik, a tense relationship was established between the Russian Autonomy and St. Etchmiadzin connected with the protection of the interests of Western Armenians. For that purpose Tsarism developed a program of pressure on the Armenian Church in 1891, which was carried out in 1896, when the closure of church schools was undertaken.

Keywords: *Catholicos Khrimyan, autocracy, Armenian Church, Ottoman Turkey, proto-genocide, persecution.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 22.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.10.2020թ.:

ԱՐՎԵՍՏԱԳԵՏ ՍԵՐԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՔՍՈՐՅԱՆ ՇՐՋԱՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՇՈՒՐՋ

ՔԵՇԻՇՅԱՆ ՄԵՐԻ
Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտաշխատող, պատմաբան

…Արժանաւոր դուստրը մի ժողովրդի՝ օժտուած առանձնայատուկ շնորհներով: Հայկական կանացի ձեռարուեստի, առաւելապէս՝ ասեղնագործութեան անխոնջ ուսումնասիրողը, հոգեւին գուրգուրողը եւ այն՝ աշխարհէ-աշխարհ: Այդ ճիւղը իր բազում մանրամասներով արուեստի բարձունքներին հասցնողը: Իր մասնագիտութեան մէջ եզակի, եւ առայժմ՝ անփոխարինելի: Այդ կերպարն է Սերիկ Դաւթեանի: Նրան դժուար է ներկայացնել իր ամբողջութեան մեջ: Միշտ էլ նրա կեանքից մի փայլուն հատուած թաքնւում, դուրս է մնում մեր տեսադաշտից:

Արշավիր Սոլախեան[1]

…Մենք երկար աշխատեցինք միասին, ու ես, անկեղծ ասած, զարմացած էի նրա բնավորության մի գծի վրա: Ծայրահեղ կարգապահ: Մեծ պաշտոններ է ունեցել, որոնք թվում է հավակնոտ պիտի դարձնեին բնավորությունը, բայց հակառակ դրան՝ համեստության մարմնացում:

Ռուբեն Զարյան[2]

Սերիկ Դավթյանը հայ ականավոր արվեստաբան է, ազգագրագետ, գիտնական, արվեստի և արվեստագիտության ոլորտի փորձառու մասնագետ, մանկավարժ և հասարակական գործիչ: Ծնվել է 1893 թվականին Դիլիջան քաղաքում (ՀՀ Տավուշի մարզ): Տեղի ծխական դպրոց հաճախելուց հետո ուսումը շարունակել է Թիֆլիսի (Թբիլիսի) կանանց գիմնազիայում, որն ավարտել է 1913 թվականին գերազանց առաջադիմությամբ: 1914թ.-ին ծննդավայր վերադառնալուց հետո դասավանդել է տեղի դպրոցում:

1920թ. նա ավարտել է Սարատովի համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետը, 1920-1930-ական թվականներին դասավանդել դպրոցներում՝ միաժամանակ զբաղվելով հասարակական և պետական գործունեությամբ:

---

[1] **Սոլախեան Ա.**, Սերիկ Դավթեանի 80 տարին.- «Կանչ», շաբաթաթերթ, Պէյրութ, 7 յունիսի, թիւ 172 (4684), էջ 4:

[2] **Զարյան Ռ.Վ.**, Մայրամուտից առաջ (Ինքնապատում). Սերիկ Դավթյան, Ե., 1990, գիրք Բ, էջ 123:

1937թ.-ին՝ ստալինյան ռեժիմի օրոք, անհիմն մեղադրանքների և զրպարտության պատճառով Ս. Դավթյանը ձերբակալվել է և դատապարտվել 10 տարվա ազատազրկման՝ աքսորվելով հեռավոր Մագադան (Կոլիմա): Այնտեղ՝ բռնադատվածների ճամբարում, նա անցկացրել է իր կյանքի ամենածանր օրերը: Արդարացվելուց հետո, մինչև կյանքի վերջ նա զբաղվել է գիտական գործունեությամբ:

Ս. Դավթյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն է՝ ասեղնագործություն, ժանյակ, գորգարվեստ, և դա արտացոլված է ժողովրդական կիրառական արվեստի պատմության վերաբերյալ նրա ընդհանրացված մենագրություններում:

Նրա թեկնածուական ատենախոսությունը կրում է «Ակնարկներ հայկական ասեղնագործության արվեստի պատմությունից» (1963) խորագիրը, սակայն նրա գիտական հետաքրքրությունները շատ ավելի լայն էին և ընդգրկում էին ժողովրդական արվեստի տարբեր ոլորտները: Ս. Դավթյանի բազմաթիվ հոդվածներում և մենագրություններում ներառված են «Ասեղնագործության ձեռնարկ» (1956 և 1963), «Հայկական ժանյակ» (1966), «Հայկական ասեղնագործություն» (1972), «Հայկական կարպետ» (1975), «Մարաշի ասեղնագործություն» (1978) և «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» (1981), որոնցից վերջինը նրա՝ երկար տարիներ կատարած ուսումնասիրությունների արդյունքն է: Վերջին երկու գրքերը լույս են տեսել 1978թ.՝ հեղինակի մահից հետո:

Հոդվածը Ս. Դավթյանի՝ աքսորյան տարիներին ստեղծած մի առարկայի մասին է: Դա կտորից պատրաստված ասեղաման-բարձիկ է՝ ոճավորված տիկնիկի տեսքով, և նախատեսված է ասեղներ պահելու համար: Ս.Դավթյանը պահել և օգտագործել է իր համար հատուկ նշանակություն ունեցող այս իրը:

Հոդվածում նկարագրվում են առարկան, պատրաստման նյութը և ստեղծագործական աշխատանքների մանրամասները: Հատկանշական է, որ ասեղները չժանգոտելու համար նա բարձիկը լցրել է բռնադատված կին բանտարկյալների մազերով: Ս.Դավթյանի մահից հետո այս իրը մնացել է իր դստեր՝ Ներիկ Դավթյանի մոտ, որն ասեղաման-բարձիկն օգտագործել մինչև 1990-ականները:

Ասեղաման-բարձիկը համարվում է Սերիկ Դավթյանի աքսորյան ժամանակաշրջանից պահպանված եզակի առարկա: Ստեղծվելով Մագադանում՝ այն ճանապարհորդել է նրա հետ նույնիսկ աքսորից (Մագադան-Դիլիջան-Երևան) վերադառնալուց հետո: Կարծում ենք, որ այս բարձիկ-ասեղամանը հոգևոր առումով առանձնահատուկ արժեք է ունեցել անվանի արվեստաբան-ազգագրագետի համար: Այդ իսկ պատճառով այն խնամքով պահվել և օգտագործվել է ընտանիքում՝ իբրև Սերիկ Դավթյանի համար թանկ ու նվիրական իր:

Բանալի բառեր՝ *Սերիկ Դավթյան, Դիլիջան, Ստեփան Դավթյան, հայկական ասեղնագործություն, աքսոր, բռնադատված, տիկնիկ, ասեղաման, Ներիկ, կարպետ, ազգագրություն, կիրառական արվեստ, ժանյակ:*

Սերիկ Դավթյանը հայագիտության և կիրառական արվեստի մասնագիտական բնագավառի ավագ սերնդի կարկառուն դեմքերից է, գիտնական, արվեստագետ-ազգագրագետ, մանկավարժ, պետական և հասարակական գործիչ:

Նրա կյանքը երեք շրջափուլերի մի հանրագումար է՝ մանկավարժական և պետական-հասարակական (1913-1937թթ.), բռնադատվածության (1937-1947թթ.) և գիտական գործունեության (1950-1978թթ.):

Վաստակաշատ գիտնականը տարիներ շարունակ ջանասիրությամբ հավաքել և կորստից փրկել է հայ վարպետների ձեռագործ արժեքները (գորգեր, կարպետներ, ասեղնագործ աշխատանքներ, ժանյակներ, զանազան ձեռագործ ստեղծագործություններ) և մանրամասն ուսումնասիրել դրանք: Հավաքչական աշխատանքը չի սահմանափակվել միայն Հայաստանում: Նա կիրառական արվեստի ձեռագործ նմուշներ է հավաքել աշխարհի չորս ծագերում ապրող հայերից, դրանք օգտագործել իր գիտական աշխատանքներում, առանձնացրել ու բնորոշել նախշերի, դրանց տարատեսակների, գույների և ոճի բազմաթիվ ձևեր, որոնցով աշխատել է հայ կինը: Եզակի դեպքերում է ուսումնասիրողը նաև ստեղծագործող լինում: Այս պարագայում Ս. Դավթյանն առանձնանում է և՛ որպես ստեղծագործող վարպետ, և՛ որպես գիտնական արվեստագետ, հմուտ և բանիմաց ազգագրագետ[1]:

Ծնվել է 1893թ. սեպտեմբերի 16-ին Դիլիջան քաղաքում՝ տոհմիկ մանկավարժ Ստեփան Դավիթի Դավթյանի ընտանիքում: Նախնական ուսումնառությունը ստացել է Դիլիջանի ծխական դպրոցում: Նրա առաջին ուսուցիչներից մեկը եղել է հայրը, որը Դիլիջանում մեծ հարգանք վայելող մտավորականներից էր:

1906թ. Սերիկն ընդունվում է Թիֆլիսի 3-րդ օրիորդաց (իգական) գիմնազիան, որը ոսկե մեդալով ավարտում է 1912թ., իսկ 1913թ.՝ նույն գիմնազիայի մանկավարժական կուրսերը[2]: Այդ տարիներից մտերմանում է բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և նրա ընտանիքի հետ[3]:

Ս. Դավթյանի մանկավարժական գործունեությունն սկսվում է 1914թ.՝ ծննդավայր Դիլիջանից: Որոշ ժամանակ աշխատելուց հետո նա մեկնում է Բաքու, հետո Աստրախան, զբաղվում ուսուցչական գործունեությամբ: 1918թ. ընդունվում է Սարատովի համալսարանի պատմա-լեզվագրական ֆակուլտետ (սովորում է մինչև 1920թ.):

---

[1] **Ստեփանյան Ա.Ա.**, Սերիկ Դավթյան, Կենսամատենագիտություն (Վաստակաշատ գիտնականներ 2), Ե., 1999: **Քեշիշյան Մ.Ս.**, Հայ ժողովրդի շնորհալի դուստրը՝ Սերիկ Դավթյան.- «Ալիք», օրաթերթ, Թեհրան, 2016, 24 յուլիսի, թիւ 149 (22525), էջ 5-6: **Նույնի**՝ Տառապալից ճակատագրով հայուհին՝ Սերիկ Դավթյան.- «Գեղամա աշխարհ», երկշաբաթաթերթ, Գավառ, 2018, 9 մարտի N7 (401), էջ 1, 7; 20 մարտի N8 (402), էջ 7; 30 մարտի, N9 (403), էջ 7:

[2] **Թորոսյան Վ.**, Դժվարին, բայց պայծառ ճանապարհ.- «Սովետական դպրոց», շաբաթաթերթ, Ե., 1974, 30 ապրիլի, N18 (2282), էջ 3:

[3] **Դավթյան Ս.Ս.**, Թումանյանն իմ հուշերում (Թումանյանը ժամանակակիցների հուշերում), Ե., 1969, էջ 606-619: **Քեշիշյան Մ.Ս.**, Հովհաննես Թումանյանը Սերիկ Դավթյանի հուշերում.- «Գեղամա աշխարհ», 2019, 20 սեպտեմբերի, N23 (451), էջ 1, 5:

1920-ական թթ. Ս. Դավթյանը մանկավարժական աշխատանքը զուգակցում է հասարակական գործունեության հետ՝ աշխատելով ժողովրդական կրթության բնագավառում, ապա պետական կառավարման համակարգում: Կարճ ժամանակ կրկին աշխատում է Բաքվում, որտեղից 1920թ. վերադառնում է իր ծննդավայր Դիլիջան, ուր ղեկավարում է կրթական բնագավառը: Նշանավոր հոգեբան, մանկավարժ Գուրգեն Էդիլյանի խորհրդով Դիլիջանի գիմնազիայում ռուսաց լեզվի և գրականության դասեր է վերցնում, միաժամանակ ստեղծում գավառագիտական թանգարան[1]:



Սերիկ Դավթյան, 1958թ.:

Դիլիջանյան աշխատանքային տարիների ընթացքում Սերիկ Դավթյանն անձնապես ծանոթ է եղել հասարակական գործիչ, իշխանուհի Մարիամ Դոլուխանյան-Թումանյանին, որը Դիլիջանի դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ լինելով՝ աջակցում է Սերիկին[2]: Հատկապես Դիլիջանի դպրոցներին և կրթական գործին առնչվող ասպարեզում Ս. Դավթյանի ներդրումը մեծ է: Նրա շնորհիվ 1920-ական թթ. սկզբին Դիլիջանում, Նոր Դիլիջանում (Պապանինո), Պողոս-քիլիսայում (Շամախյան), Ջարխեջում (Կույբիշև, այժմ՝ Հաղարծին), Իջևանում, Սևքարում բացվում են առաջին մանկապարտեզները[3]:

1921թ. Սերիկը գործուղվում է Էջմիածին՝ աշխատելու որպես գավառային լուսբաժնի վարիչ: Նախապես Երևանում Ե. Չարենցից ընդունում է արվեստի բաժինը:

---

[1] **Ղազանջյան Վ.**, Ժողովրդի վաստակաշատ դուստրը (Սերիկ Դավթյանի ծննդյան 80-ամյակի առթիվ).- «Սովետական Հայաստան», օրաթերթ, Ե., 1974, 9 ապրիլի, N83 (16210), էջ 4:

[2] **Դավթյան Ս. Ս.**, Հուշեր անցյալից.- «Սովետական մանկավարժ», հանդես, Ե., 1957, N4, էջ 22:

[3] Առաջին իսկ օրից.- «Հայաստանի աշխատավորուհի», ամսագիր, Ե., 1970, նոյեմբեր, N11, էջ 18 (հարցազրույց): **Դավթյան Ս. Ս.**, Հուշեր անցյալից, էջ 24:

Մեկ տարի նա ուսանում է նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում (1922-23թթ.)՝ համատեղությամբ դասավանդելով դպրոցում (Երևանի Ն. Կրուպսկայայի անվան, ներկայումս՝ Նիկոլ Աղբալյանի):

1923թ., մի կարճ ժամանակ, ամուսնու՝ Ներսես Ստեփանյանի[1] հետ ապրում է Մոսկվայում[2]: 1924թ. վերադառնալով Հայաստան՝ կրկին հաստատվում է Դիլիջանում: Այստեղ պաշտոնավարում է ժողովրդական կրթության բնագավառում՝ ղեկավարելով մի շարք պատասխանատու պաշտոններ և միաժամանակ ուսուցչությամբ զբաղվելով դպրոցում:

1925թ., վերադառնալով Երևան և կրկին նույն բնագավառում շարունակելով աշխատանքը, նա միաժամանակ զբաղվում է մշակույթին առնչվող կազմակերպչական հարցերով, ղեկավարում է Խորհրդային Հայաստանի ժողովրդական կրթության բաժինը՝ լինելով լուսավորության ժողկոմի տեղակալը:

Ս. Դավթյանին շարունակ մտահոգել են նաև Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների կրթությանը վերաբերող հարցերը: Նրան է վստահվել ղեկավարել հայկական սեկցիան: Նշված բնագավառում հատուկ ուշադրություն է հատկացրել ազգային համայնքներին (ռուսներ, քրդեր, եզդիներ, հույներ, ասորիներ, մոլոկաններ, մորդվաններ, ադրբեջանցիներ)[3]:

Ս. Դավթյանի շնորհիվ և Լուսավորության Ժողկոմի թույլտվությամբ քրդերեն լեզվով, բայց հայերեն տառերով 1921թ. Էջմիածնի տպարանում հրատարակվում է քրդագետ, ազգագրագետ Լազոյի[4] կազմած քրդական առաջին այբբենարանը, որը կոչվել է «Շեմս» (Արև), մինչև կմշակվեր այբուբենը[5]:

1934-37թթ. Ս. Դավթյանը ղեկավարում է Երևանի քաղաքային խորհրդի ժողովրդական կրթության բաժինը: Այդ տարիներին խմբագրում է մի շարք մանկա-

---

[1] **Ստեփանյան Ներսիկ (Ներսես) Միքայելի** (ծն. 1898թ., Ելիզավետպոլ - մահ. 1937թ., Երևան), տնտեսագետ, պետական և կուսակցական գործիչ, ԵՊՀ Քաղտնտեսության ամբիոնի վարիչ, 1933 թվականից եղել է Հայաստանի Լուսժողկոմը: Անհիմն մեղադրվել և գնդակահարվել է 1937թ. հուլիսի 8-ին Երևանում: Արդարացվել է հետմահու, 1956թ. հունիսի 1-ին: **Агаян Ц. П.**, Нерсик Степанян, Ер., 1967.

[2] Սերիկ Դավթյանն իր կյանքի մոսկովյան ժամանակաշրջանում ամուսնու հետ բնակվել է Լազարյան ճեմարանի շենքում, որտեղ նրանց մշտական հյուրն է եղել Եղիշե Չարենցը:

[3] **Դավթյան Ս. Ս.**, Ա. Մյասնիկյանը և կուլտուրական շինարարության հարցերը.- «Սովետական մանկավարժ», Ե., 1957, N11, էջ 76: **Նույնի**՝ Ընկեր Մյասնիկյանի վերջին նամակներից.- «Սովետական Հայաստան», օրաթերթ, Ե., 1927, 22 մարտի, N64 (1717), էջ 1:

[4] **Աբե Լազո** (Ղազարյան Հակոբ, ծն. 1864թ., Հին Բայազետ - մահ., 1926թ., Թիֆլիս), մշակութային, կրթական գործիչ, անվանի քրդագետ, թատերագետ: **Վազիրե Աշո**, Մեծ երախտավորի արևը.- «Գրական թերթ», շաբաթաթերթ, Ե., 1981, 23 հոկտեմբերի, N43 (2137), էջ 4: **Դարվեշյան Մ.Խ.**, Հակոբ Ղազարյանը և քրդական ազգագրությունը.- Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Ե., 1984, N3, էջ 67-73:

[5] **Լազո,** Շամս (Քիթաբե ավալ), Էջմիածին, 1921: **Հաջիե Ջնդի**, Մեսրոպյան գրերը և քուրդ ժողովրդի կուլտուրան.- ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Տեղեկագիր), Ե., 1962, N5, էջ 67-74: **Чатоев М. Х.**, Из истории Армяно-курдской дружбы.- ՊԲՀ, 1979, N4, էջ 282-285: Քրդական նոր այբուբենի կիրարկման պլանը.- Հ.Խ.Ս.Հ. Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տեղեկագիր, Ե., 1929, N3, էջ 16-18:

պատանեկան թերթեր ու ամսագրեր («Ժողովրդական լուսավորություն», «Հոկտեմբերիկ», «Պատկոմ»), եղել է դրանց հիմնադիրներից: Նա խմբագիրն է եղել «Տեղեկագիր ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի» և «ՀՍԽՀ Ժողովրդական լուսավորություն» ամսագրերի: Ի դեպ, Ս. Դավթյանը համարվում է նաև Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի (ՏՅՈՒՋ) հիմնադիրներից մեկը[1]:

1936թ. վերջից մինչև 1937թ. օգոստոսը՝ ընդամենը 7-8 ամսում, Ս. Դավթյանի նախաձեռնությամբ և իր տրամադրության տակ գտնվող միջոցներով կառուցվել է դպրոցական յոթ շենք (Բութանիա թաղամասի երկու դպրոց, որոնցից մեկը նախատեսված է եղել հայրենադարձների երեխաների համար, Երկաթուղային կայարանի դիմացի դպրոցը, Մայակովսկու անվան դպրոցը, Նորքի թիվ 117 դպրոցը ևն), Երևանի Աբովյան փողոցի վրա գտնվող ՀՍՍՀ ԳԱ Ակադեմիայի հին շենքը[2]:

* * *

1937թ. մայիսի 21-ին բազմաթիվ հայ մտավորականների հետ, շատերի նման համարվելով այլախոհ և ժողովրդի թշնամի, անհիմն զրպարտությամբ ձերբակալվում է Ներսիկ Ստեփանյանը[3]: 1937թ. օգոստոսի 4-ին ձերբակալվում է Ս. Դավթյանը: Նա ստալինյան ցուցակով[4] Հայաստանում ձերբակալման հրաման ստացած առաջին կինն է:

Ս. Դավթյանը դատապարտվում է 10 տարվա ազատազրկման՝ հինգ տարով քաղաքական իրավունքների սահմանափակմամբ: Աքսորվում է Մագադան:

Տարիներ անց Ե. Չարենցի մասին գրած հուշերում Ս. Դավթյանը հիշել է այդ դժոխային օրերը. «Մենք համոզված էինք, որ մեր օրերում չի կարող ողբերգություն լինել… Բայց եղավ պատմության մեջ չտեսնված ողբերգություն. Կապարի պես ծանրություն իջավ մեր սրտերի, մեր էության վրա… ամեն մարդ դիմանալ չէր կարող: …Վտանգը պտտվում էր մեր գլխի վրա, մեր շրջապատը դատարկվում էր արագորեն, անհասկանալի կերպով, ինչպես երևի լինում է ժանտախտի ժամանակ: Ծանր պայմանները օղակում էին, ճնշում…»[5]:

---

[1] **Սոլախյան Ա.**, Հայկական ասեղնագործության երախտավորը.- «Գիտություն և տեխնիկա», ամսագիր, Ե., 1975, N4, էջ 58:

[2] **Սոլախեան Ա.**, Սերիկ Դավթեանի 80 տարին, էջ 4-5:

[3] Նրա մասին տե՛ս՝ **Գասպարյան Դ.Ա.**, Փակ դռների գաղտնիքը, Ե., 1994, էջ 69-79:

[4] Ստալինյան ցուցակը ԽՍՀՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի կողմից դատապարտման ենթակա այն անձանց անվանական ցուցակն էր, որոնք մինչև դատարան ուղարկվելը հաստատվում էին անձամբ Ի. Ստալինի և Քաղբյուրոյի մյուս անդամների (Վ. Մոլոտով, Լ. Կագանովիչ, Կ. Վորոշիլով, Ա. Ժդանով, Ա. Միկոյան) կողմից:

[5] **Դավթյան Ս.Ս.**, Հանդիպումներ Եղիշե Չարենցի հետ.- «Նոր-դար», հանդես, Ե., 1997, էջ 16: *Ծանոթագրություն*՝ Ս. Դավթյանի այս հուշագրության ձեռագիրը պահվում է Ե. Չարենցի տուն-թանգարանում (ՀՖ 7151): Գրել է 1972թ.: Նվիրատուն Ս. Դավթյանի դուստրն է՝ Ներիկ Ներսեսի Դավթյանը, որը 1997թ. այն հանձնել է տուն-թանգարանին: Բաղկացած է 43 ձեռագիր թերթից (տարբեր չափերի):

ՆԳԺԿ-ից Ս. Դավթյանին և անվանի գրող, մտավորական Զապել Եսայանին այլ կանանց հետ տեղափոխում են Երևանի քաղաքային բանտ: Հենց այստեղ, ուր բազում զրկանքներ է կրում, լսում է իր սիրելիների և մտերիմների, այդ թվում և ամուսնու մահվան բոթը:

Ն. Ստեփանյանը ժամանակի ամենալուսավոր անհատականություններից և մտավորականներից մեկն էր: Անհատականություն, որը միշտ այն կարծիքին էր, որ որոշիչ դեր ունի ժողովրդի հոգևոր կյանքի մակարդակը:

Բախտը Ս. Դավթյանին գցում է հեռավոր Մագադան, Կոլիմա: Աշխարհից կտրված, կյանքից պոկված, բանտային ու զրկանքների մագադանյան այդ դաժան տարիները ամեն դեպքում չեն կոտրում նրա համառ ու տոկուն կամքը: Դրանք ծանր փորձությունների ժամանակներ էին: Այստեղ է, որ օրերի պարապը լրացնելու և մտքով իր դաժան առօրյայից կտրվելու համար նա սկսում է զբաղվել ասեղնագործությամբ, աշխատում բռնադատվածների ճամբարի կարի արտելում:

Ս. Դավթյանը ձեռագործ աշխատանքների, հյուսվածքների նախշերի հորինվածքներում է կարծես գտնում իր հոգեկան անդորրը և հավասարակշռությունը: Ճակատագրի դավերն ու ցավերն ամրացնում են վճռական բնավորության տեր այս կնոջ հոգին, միտքն ու կամքը: Հետագայում իր համոզմունքներից մեկն այն է եղել, որ մարդու ճշմարիտ էությունը, տեսակը և բարոյականության չափը ստուգվում է բանտում և աքսորում[1]:

Ս. Դավթյանի աշխատանքային անձնական գործը պահվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվում: Այնտեղ են նրա ձեռքով գրված մի քանի ինքնակենսագրականներ, որոնք հետաքրքիր տեղեկություններ են ներառում: Դրանցից մեկում հեղինակն այսպես է գրել. «Իմ աշխատանքային գործունեության վերելքի ժամանակ ես զրպարտվել և 1937թ. օգոստոսի 4-ին ձերբակալվել եմ, աքսորվելով Կոլիմա, Մագադան: Ճամբարներում աշխատել եմ ամենատարբեր բնագավառներում և ձեռք բերել մի քանի մասնագիտություններ, որոնցից իմ կյանքում մեծ տեղ զբաղեցրեց ձեռագործը:

1946թ. լավ աշխատելու շնորհիվ ինձ թույլատրվեց վերադառնալ հայրենիք՝ Դիլիջան:

1947թ. աշխատել եմ Դիլիջանի Ղ. Աղայանի անվան քաղաքային գրադարանում: Սիրելով գիրքը, գրադարանը՝ կարողացա միանգամայն ավերված գրադարանը ոտքի կանգնեցնել, պատրաստել կադրեր՝ հետագա աշխատանքի համար: 1937 թվականից, դեռևս բանտում լինելով, այլ կանանց հետ զբաղվում էի կարուձևով, ձեռագործ աշխատանքով: Ճամբարում՝ մագադանյան տեղի կարուձևի արտադրամասում, մի քանի տարի շարունակ բրիգադիր եմ եղել, որտեղ հնարավորություն ունեի

[1] **Զարյան Ռ.Վ.**, Մայրամուտից առաջ, էջ 121:

մոտիկից ծանոթանալու Սովետական Միության շատ ժողովուրդների ձեռագործ աշխատանքներին:

…Հայաստան վերադառնալով՝ ես համոզվեցի, որ չեմ կարող զբաղվել կրթական և կուսակցական աշխատանքների գործերով, և իմ ողջ ազատ ժամանակը նվիրեցի հայկական ժողովրդական ձեռագործ արվեստի ուսումնասիրությանը: Այս գործում շատ օգնեցին այն հմտությունները, որոնք ինձ մոտ զարգացած էին դեռևս մանկությունից՝ գորգագործության և ձեռագործի բնագավառներում, ինչպես նաև տեսական այն պատրաստվածությունը, որը ձեռք էի բերել Սարատովում՝ ազգագրագետ, պրոֆեսոր Սոկոլովի մոտ, որն ամենի մասին հետաքրքրվում էր Թուրքիայից եկած և Սարատովում, Սամարայում և Մերձվոլգյան շրջաններում ապրող հայ գաղթականներից»[1]:

Ի դեպ, Դիլիջանի Ղ. Աղայանի անվան քաղաքային գրադարանում նա ասեղնագործության խմբակներ է բացում, նյութեր հավաքում ապագա աշխատությունների համար: Բռնադատված վիճակում նրա վրա դրված էին սահմանափակումներ ու արգելքներ, որոնք զգուշորեն շրջանցելով՝ Ս. Դավթյանը գիշերով, գաղտնի հասնում է Երևան և ծանոթ-բարեկամներից գրքեր հավաքում Դիլիջանի գրադարանի համար: 1960թ. լույս է տեսնում նրա՝ «Դիլիջանի քաղաքային գրադարանը» աշխատությունը:

1954թ. վերականգնվում են Ս. Դավթյանի իրավունքները, և 1955թ. նա վերջնականապես արդարացվում է ու տեղափոխվում Երևան: Չնայած տարիքին և առողջական խնդիրներին՝ նա կրկին մեծ եռանդով և նվիրումով ձեռնամուխ է լինում լուրջ գիտական աշխատանքի: Տարիները չպետք է կորչեին:

1958թ. արվեստաբան, թատերագետ Ռուբեն Զարյանի հրավերով Ս. Դավթյանն աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում, որտեղ 1959թ. մինչև 1978թ. նա ղեկավարում է դեկորատիվ-կիրառական արվեստի բաժինը, գիտական աշխատանքը զուգակցում գործնականին՝ կարծես շտապելով լրացնել այն բացը, որը խլել էին իրենից ազատազրկման 10 տարիները: Նրա նախաձեռնությամբ Հայաստանի շատ բնակավայրերում (Երևան, Էջմիածին, Դիլիջան, Վանաձոր, Գյումրի, Սևան) հիմնվում են ձեռագործի խմբակներ:

Ս. Դավթյանը ջանասիրաբար ուսումնասիրում է միջնադարյան հայ արվեստը, մանրանկարչությունը, ոսկերչությունը, փայտագործությունը, ճարտարապետությունը, խաչքարային զարդարվեստն ու քանդակը՝ վստահ լինելով, որ ասեղնագործությունն իր ներքին բովանդակությամբ և ոճով ընդհանրություն ունի արվեստի այս ճյուղերի հետ: Եվ հաջորդիվ լույս են տեսնում Ս. Դավթյան գիտնականի ալբոմներն ու մենագրությունները՝ «Ասեղնագործության ձեռնարկ» (Ե., 1956թ. և 1963թ. (երկրորդ հրատարակություն)), «Հայկական ժանյակ» (Ե., 1966թ.), «Հայկական ասեղնագործություն» (Ե., 1972թ., «Հայկական կարպետ» (Ե., 1975թ.), «Մարաշի ասեղ-

[1] Շարադրանքը Ս. Դավթյանը գրել է ռուսերեն: Թարգմանությունը մերն է:

նագործություն» (Ե., 1978թ.), «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» (Ե., 1981թ.) աշխատությունները (վերջին երկուսը լույս են տեսել արվեստագետի մահից հետո): 1963թ. Ս. Դավթյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն արվեստագիտության գծով՝ «Ակնարկներ հայկական ասեղնագործ արվեստի պատմությունից» թեմայով: Այդ ժամանակ նա եղել է 70 տարեկան[1]:

Ակներև է, որ հայագիտական նման արժեքավոր աշխատություններ ստեղծելու և ուսումնասիրելու համար պետք է ունենալ ոչ միայն եռանդ և հետևողականություն՝ տեղից-տեղ շրջելու և հավաքչական աշխատանք կատարելու, այլև ազգային կիրառական արվեստի ոճի և ավանդների հմուտ իմացություն, ավելին՝ եզակի նվիրում գործին: Այդ ամենին իրապես տիրապետել է Ս. Դավթյանը:

Տարիներ շարունակ նա թղթակցել է «Սովետական մանկավարժ», «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրերին, հանրապետական թերթերին, հատկապես իր ծննդավայրի «Դիլիջան» թերթին: Բազմաթիվ են եղել նրա հանդիպումները հանրապետության տարբեր քաղաքների ու գյուղերի մշակույթի տների և խմբակների անդամների, դպրոցականների հետ, որոնց ժամանակ իր ունկնդիրներին ծանոթացրել է հայ ձեռագործ արվեստի հմտություններին:

Գիտության ոլորտում ունեցած մեծ ծառայությունների համար Ս. Դավթյանին 1967թ. շնորհվել է Հայկական ՍՍՀ Մշակույթի վաստակավոր գործչի բարձր կոչում և Ինքնագործ արվեստի Համամիութենական փառատոնի դափնեկրի կոչում, պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով և շքանշաններով, արժանացել է ԽՍՀՄ «Աշխատանքային Կարմիր դրոշ»-ի շքանշանի և այլ պարգևների, Խաչատուր Աբովյանի անվան մեդալի:

Ս. Դավթյանը վախճանվել է 1978թ. փետրվարի 14-ին Երևանում, 85 տարեկան հասակում: Կտակի համաձայն՝ թաղվել է իր ծննդավայրում:

* * *

Աքսորից վերադառնալով՝ Ս. Դավթյանն իր հետ բերում է մի իր, որից չի բաժանվում ողջ կյանքի ընթացքում: Առաջին հայացքից դա աննշան և անհրապույր թվացող մի առարկա է. սովորական, տարբեր գույնի կտորներից և մորթուց պատրաստված, տիկնիկի տեսքով բարձիկ՝ նախատեսված ասեղների համար (ասեղաման): Ս.

[1] Ս. Դավթյանի թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը բացառիկ երևույթ է համարվել՝ զարմացնելով հայ գիտական հասարակությանը: Իսկապես, այդ տարիքում նա արդյունավետ և գիտական արժեքավոր պրպտումներով լի աշխատանք է կատարել հայ ձեռագործ արվեստի պատմության ուսումնասիրության բնագավառում: Նա մինչև օրս համարվում է անգերազանցելի: Ապշեցուցիչ է եղել այն եռանդն ու նվիրվածությունը, որն արվեստագետը ներդրել է բեղուն աշխատանքով: Այս մասին գրվել է Ս. Դավթյանին նվիրված բազում հոդվածներում և հարցազրույցներում: Ի դեպ, ՀՍՍՀ ԳԱ Գիտական խորհրդի նախագահությունը Ս. Դավթյանի թեկնածուական ատենախոսությունը միաձայն արժանի է համարել դոկտորական աստիճանի, որից նա համեստորեն հրաժարվել է:

Դավթյանն այն պատրաստել է 1938-45թթ.՝ Կոլիմայի բռնադատվածների ճամբարում գտնվելու ընթացքում:

Ասեղաման-տիկնիկն օգտագործվել է, ավելին, մինչև 1990-ական թթ. վերջը այն շարունակել է օգտագործել նաև դուստրը՝ Ներիկ Ներսեսի Դավթյանը: Այն պահվում է Ս. Դավթյանի ընտանեկան արխիվում՝ դստեր ժառանգների մոտ[1]: Նկատենք, որ չհաշված որոշ մաշվածության՝ առարկան բավականին լավ է պահպանվել:

Ստեղծվելով Մագադանում, աքսորյան տարիների ընթացքում՝ ասեղաման-տիկնիկը Սերիկի հետ շրջագայել ու երկար ճանապարհ է անցել՝ Մագադան-Մոսկվա-Դիլիջան-Երևան: Ի՞նչն է նրան կապել աննշան և անշուք թվացող այդ ասեղամանին՝ թերևս դրա գաղտնիքը կիմանա միայն Ս. Դավթյանը: Մեզ մնում է միայն ենթադրել: Կարծում ենք, որ այն թանկ է եղել Ս. Դավթյանի համար՝ ունենալով նաև մասունքի նշանակություն, և դա է պատճառը, որ նա չի բաժանվել դրանից, և հետագայում էլ պահպանվել է ժառանգների կողմից:

Երկար տարիներ առարկայի մասին խոսվել է ընտանիքում: Միայն մեկ չպարզաբանված հարց. ինչո՞ւ է աքսորի և բռնադատվածության տարիների դժբախտությունները մոռանալ ցանկացող Ս. Դավթյանը պահել այդ առարկան, ավելին, ամեն օր աչքի առաջ ունենալով՝ այն օգտագործել:

Ոճավորված տիկնիկ-բարձիկն իր արտաքինով բավականին հետաքրքիր է (նկ. 1): Բաղկացած է երկու մասից՝ մարմնի հատվածից (բարձիկի հատված, որում խրվել են ասեղները) և նրան տեսք և իմաստ տվող գլխի հատվածից: Առարկայի ընդհանուր երկարությունը 12 սմ, 5 մմ է:

Պատրաստված է չորս տեսակի կտորներից՝ թավիշից, գունային տարբեր համադրվածքով և միաձույլ, գործարանային արտադրության դաջածո մետաքսից (крепдешин-կրեբդեշին), կարմիր մետաքսից (սատին), որոնք նույն կառուցվածքով են, կարակուլե կամ բուխարու բնական մորթուց (գլխի մազերը), բամբակից և մի քանի տեսակ թելերից (ըստ գունային համադրության՝ կարմիր, սև, սպիտակ և շագանակագույն), ալյուրի թանձր մածուկից, կարմիր ու սև թանաքից:

Հետաքրքիրն այն է, որ աքսորավայրում կենցաղային սուղ պայմանների և կարիքի մեջ գտնվելիս Ս. Դավթյանը կարողացել է գտնել ոչ միայն նման նրբության կտորներ, այլև դրանց համապատասխան թելեր ու համադրել դրանք:

Ոճավորված տիկնիկը շատ հետաքրքիր է կառուցվածքով, տեսքով, և առաջին հայացքից հարց է առաջանում, թե ի՞նչ մտքով և նպատակով է Ս. Դավթյանը ստեղծել ու ընտրել տիկնիկի կերպարը: Նույն հաջողությամբ և ավելի դյուրին նա կարող էր որպես ասեղաման պատրաստել սովորական բարձիկ, օրինակ՝ կրիայի ու զատկի տեսքով, որոնք ավելի քիչ օժանդակ նյութեր, ստեղծագործական հմտություններ և

[1] Նյութը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Սերիկ Դավթյանի ծոռանը՝ Ներսես Ազնաուրյանին և նրա տիկնոջը՝ Գայանե Ավետիսյանին:

ժամանակ կպահանջեին իրենից: Հավանաբար այս տիկնիկը նրա համար երկակի իմաստ և խորհուրդ է ունեցել:



Նկ. 1 Ասեղաման բարձիկ-տիկնիկն առջևից



Նկ. 2 Ասեղաման բարձիկ-տիկնիկի հակառակ կողմը

Անդրադառնանք բարձիկ-տիկնիկի առանձին մասերի վերլուծությանը, նախ և առաջ՝ գլխիկի պատրաստմանը: Աշխատանքը կատարված է նրբորեն: Բարձիկ-տիկնիկի գլուխը հիշեցնում է քանդակ. պինդ է: Գլխի տրամագիծը 19,5 մմ է, դեմքի երկարությունը՝ 20,08 մմ:

Ս. Դավթյանն այն ստեղծելու համար որպես հիմք օգտագործել է բամբակ: Ենթադրում ենք, որ նախապես թրջելով՝ բամբակի վրա նա աշխատանք է տարել. սեղմելու միջոցով քամել է բամբակի մեջ ներծծված ջուրը, այնուհետև կրկին սեղմման ու ծեփման միջոցով դրան մարդկային գլխի, քթի, այտերի ձև է տվել: Պատրաստումը քանդակագործի աշխատանք է հիշեցնում: Ռելիեֆ դիմագծերը տեսանելի դարձնելուց հետո նա թողել է, որ բամբակը նույն կերտվածքով չորանա, ընթացքում այն պնդացել ու քարացել է: Բամբակը դիմակայել է ժամանակին, լավ է պահպանվել՝ դառնալով միաձույլ, ամրակայուն, խիտ համազանգված: Շոշափելով զգացվում է դրա պնդությունը: Միայն դարձել է դեղնագույն, ինչի պատճառով հիշեցնում է բուրդ կամ մշակված թաղիք:

Ներքին հիմքը պատրաստելուց հետո հեղինակն այն պատել է կտորով, որի վրա էլ կատարել է դեմքի ոճավորման աշխատանքները: Դեմքը պատրաստելու համար Ս. Դավթյանն ընտրել է մուգ շագանակագույն (սրճագույն) կտոր: Նախքան բամբակին հագցնելը նա աշխատանք է տարել կտորի վրա. տիկնիկի այտերին, դնչին և քթին թելքաշի միջոցով կտորը այնպես է բացել, որ երևում է տակի բամբակը: Սակայն այդ թելերը ամբողջությամբ հեռացված չեն, այլ մեկընդմեջ պահպանված են՝ անցնելով բամբակի վրա: Նույն թելքաշը, բայց ուղղահայաց ու խիտ ձևով, արված է ճակատին, որի շնորհիվ կարծես ստեղծվում է ֆոնային երանգ ու դիմագիծ:

Ստեղծագործական բավականին լուրջ աշխատանք է տարված դեմքի ստեղծման, դրան շեշտված բնավորություն տալու ուղղությամբ: Բամբակի վրա ձեռքով ծեփած վերադիր հատվածները ավելի ամուր պահելու համար հեղինակն այն ամրացել է թելով՝ անցումային մի քանի խաչաձև, ներքին և չերևացող ասեղնակար տանելով այդ հատվածներում: Թելի և կարի ամրացման նուրբ մասերն են տիկնիկի քթի և աչքերի անցումները: Դրանք արված են շագանակագույն թելով:

Այն, թե ինչու է դեմքը պատրաստելու համար Ս. Դավթյանը կտորի մուգ երանգ օգտագործել, չենք կարող ասել: Այն հիշեցնում է փոքրիկ, գեղեցիկ, սևամորթ աղջկա դեմք: Սպիտակ, բայց արդեն դեղնավուն երանգ ստացած թելով մի քանի վերադիր կար է արված քթի վրա, որով ավելի ամուր, շոշափելի ու տեսանելի է դառնում այն: Այն հարթակար է հիշեցնում: Այտերի ճեղքվածքները օվալաձև են (ձախակողմյան լայնությունը՝ 8 մմ, երկարությունը՝ 1 սմ, աջակողմյան լայնությունը՝ 4-9 մմ, երկարությունը՝ 8 մմ), օվալաձև է նաև ծնոտի ճեղքվածքը (լայնությունը՝ 6 մմ, երկարությունը՝ 4 մմ), իսկ քթինը՝ կլորավուն (լայնությունը՝ 5 մմ, երկարությունը՝ 4 մմ): Ճակատամասի ճեղքվածքի բացվածքը արցունքաձև-երկայնաձիգ է (բայց հակառակ՝ ներքևից վերև, երկարությունը՝ 9 մմ, լայնությունը՝ 3 մմ, 2 մմ և 1 մմ):

Ասեղաման-տիկնիկի մազերը պատրաստվել են կարակուլե կամ բուխարու բնական մորթուց, որը հեղինակը նրբորեն կտրել է ու վրայից ամրացրել սև և շագանակագույն թելերով՝ տիկնիկին տալով գանգրամազ տեսք: Մորթին բնական լինելու

պատճառով այն շատ լավ է պահպանվել, միայն ավելի է չորացել: Ականջներ չեն պատրաստվել:

Շատ հետաքրքիր լուծում է տրված աչքերին և բերանին, որոնք լրացնում են մյուս մանրամասները: Ակնագնդերը նկարված են[1]: Նկատենք, որ Ս. Դավթյանը կարող էր դրանք նրբորեն ասեղնագործել, անհրաժեշտ գույների թելերը եղել են (սև և սպիտակ), սակայն ընտրել է նկարելու տարբերակը: Երկար և ուշադիր զննելուց հետո ենթադրեցինք, որ դրանք նկարել է ալյուրից պատրաստած մածուկով, որն ամուր է, մնայուն և չորանալու դեպքում պահում է ճերմակ գունային երանգը: Դրանով արվել են ակնագնդերն ու բիբերը՝ մածուկին խառնելով սև թանաք կամ մոխիր, իսկ դրանց ներսում ճերմակով կետիկներ են արվել: Արցունքագեղձերի տեղում՝ անկյունային մասից, կարմիր թանաքով արված է մեկական կարմիր կետիկ: Աչքի երկարությունը 5 մմ է, լայնությունը՝ 3 մմ:

Աչքերը նկարելու նույն տարբերակով է արվել տիկնիկի բերանը: Այն օվալաձև է, երկարությունը՝ 7 մմ, լայնությունը՝ 3 մմ: Ճերմակ ներկի հիմքի վրա օվալաձև կարմիր թանաքով եզրագիծ է տարված: Ալյուրախառն սև թանաքով են արվել նաև կեռաձև հոնքերը (երկարությունը՝ 5 մմ, լայնությունը՝ 1 մմ), որոնք այնքան էլ լավ չեն երևում (որոշ թանաքներ ժամանակի ընթացքում գունազրկվելու հատկություն ունեն):

Գլուխը ներքևի ամրացման մասում հավաքված է փակ պարկի բերանի նման (միայն հակառակ դիրքով) և կարված սև թելով (նախապես համաչափ կտրելով ավելորդ մասերը): Թելը չկտրելով՝ այն ամրացվել է երկրորդ մասի՝ բարձիկի վրա (գլուխն ամուր պահելու համար թելն ամրացվել է և անցումով, կախիչի մոտով տարվել հետևի կողմը, որը պահում է բարձիկը): Նկատենք, որ Ս. Դավթյանն ամբողջ աշխատանքը կատարելիս օգտագործել է ոչ թե երկտակ, այլ միատակ թել-ցան:

Գլխիկը բարձիկին ամրացնելու հատվածը փակելու համար օգտագործվել է հնարամիտ մի տարբերակ. հեղինակը կարմիր սատինե կտորից պատրաստել է պիոներական վզկապ և կարմիր թելով ամրացրել անցումային այդ մասում: Միջնա-մասում եռանկյունաձև հորինվածքով կտրված կտորը կարմիր թելով հավաքված է դարսերով: Կարմիրի երանգը մի փոքր գունազրկված է:

Հաջորդ մասը ասեղաման-բարձիկի բուն հատվածն է, որը չնայած իր երկարատև գործածությանը՝ բավականաչափ լավ է պահպանվել: Այն երկերես է: Առաջամասը կարված է սև թավիշից, իսկ հետնամասը՝ գունավոր կրեբդիշինից:

---

[1] Ս. Դավթյանն ունեցել է բնատուր նկարչական ընդունակություններ: Թիֆլիսում ուսանելու տարիներին նա նկարչության դասընթացների է հաճախել: Ի դեպ, նրա հայրը՝ Ստեփան Դավթյանը (1868-1934թթ.), որից ժառանգել է այդ շնորհը, երկար տարիներ նկարչություն և գծագրություն է դասավանդել Դիլիջանի ծխական դպրոցում և քաղաքային գիմնազիայում, լավ նկարել է (ավարտել է Թիֆլիսի Միքայելյան արհեստագործական դպրոցը):

Բարձիկի հատվածի ընդհանուր երկարությունը 11 սմ է: Հորինվածքը հիշեցնում է շրջանագծից անջատված հավասարասրուն եռանկյուն: Հիմքի հատվածում ունի մի փոքր կորություն: Սուրանկյան ձախ և աջ կողմերի երկարությունը՝ 10 սմ, 5 մմ է, հիմքում՝ մոտավորապես 9 սմ, 5 մմ:

Հետնամասի կրեբդեշինը քառակուսի և քառանկյուն պատկերներով գծավոր դաջվածք է (նկ. 2), գունային երանգները՝ կաթնագույն, դեղին, կապտամոխրագույն, օխրայագույն կամ դարչնագույն, մուգ շագանակագույն: Հավանաբար կտրվել է ինչ-որ մաշված հագուստից: Ս. Դավթյանն օգտագործել է ձեռքի տակ եղած կտորների մնացորդները: Այն խնամքով և կոկիկ «գաղտնակարով»[1], իսկ մի փոքր մասում՝ գագաթին, «պատկար»[2] կոչվող կարաձևով ամրացրել է բարձիկի առաջամասի թավշե կտորին: Հետնամասը լավ է պահպանված: Կարաթելը սև գույնի է, որոշ մասերում՝ գունազրկված, կարի ուղղությունը՝ ձախից աջ:

Բնականաբար, մաշվածության հետքը միայն առաջամասի սև թավիշի վրա է, որին խրվել են ասեղները: Հենց այս մաշվածության շնորհիվ է երևում, թե ինչ է բարձիկի ներսում: Սա ամենաուշագրավն է. բարձիկը լցված է մարդկային մազերով, ընդ որում՝ բանտարկյալ-բռնադատված տարբեր կանանց մազերով: Մաշված կտորի ճեղքերից երևում են դուրս եկած մազերը, որոնք տարբեր գույնի և հաստության, տարբեր տարիքի կանանց են պատկանել: Երկարամյա ուսումնասիրություններից և կյանքի փորձից ելնելով՝ Ս. Դավթյանը գրում է, որ ասեղները պետք է «…խնամքով պահել ասեղամանի մեջ կամ բարձիկի վրա, որի մեջ լցվում է բամբակ, բուրդ, թեփ, ավազ, մազ, ըստ որում ամենահարմարը վերջինն է»[3]: Արվեստաբան-ազգագրագետի առաջարկած ասեղների պահպանության այս ձևը հայոց ձեռագործական արվեստի կենցաղում լայն կիրառություն է ստացել հատկապես իր ծննդավայր Դիլիջանում: Մարդկային մազերի մեջ պահելու դեպքում ասեղը չի ժանգոտվում, ինչը չի կարելի ասել բամբակից կամ բրդից պատրաստված ասեղամանների պարագայում: Չնայած բուրդը նույնպես օրգանական, կենդանական ծագում ունի, բայց հնանալով այն ցեցոտվում և փչանում է, իսկ մարդկային մազը ավելի երկար է պահպանվում:

Բարձիկը երկարատև գործածման առարկա է դարձել հենց մարդկային մազի շնորհիվ: Ի դեպ, դրա վրա մինչ օրս պահպանվել են ստեղծողի մատնահետքերը, քանի որ մազից պատրաստված լինելու պատճառով այն երբեք չի լվացվել: Լվանալու դեպքում այն կվնասվեր: Օգտագործվել է խնամքով: Փաստը, որ այն լցված է բռնադատված կանանց, այդ թվում նաև Սերիկի մազերով, իր դստերը՝ Ներիկ Դավթյանին հայտնել է հենց հեղինակը: Այդ մասին վկայում են նաև ժառանգները:

---

[1] Տնարարություն, դասագիրք, Ե., 1959, էջ 13:

[2] **Դավթյան Ս. Ս.**, Ասեղնագործության ձեռնարկ (երկրորդ լրացված հրատարակություն), Ե., 1963, էջ 9:

[3] Նշվ աշխ., էջ 5; **Նույնի**, Հայկական ասեղնագործության ձեռնարկ, Ե., 1957, էջ 7:

Ի՞նչն է ստիպել, սակայն, Ս. Դավթյանին չբաժանվել ասեղաման-բարձիկից՝ դժվարանում ենք ասել: Կարող ենք միայն ենթադրություններ անել: Ինչո՞ւ է այն պատրաստել դպրոցական սևամորթ աղջկա տեսքով կամ ի՞նչ է մտածել դրան նայելիս, օգտագործելիս՝ կրկին կարող ենք առաջնորդվել ենթադրություններով:

Ասեղաման-տիկնիկի հետնամասում՝ գլխի և բարձիկի միացման հատվածում, եռանկյունու գագաթին, բամբակե սպիտակ հաստ թելով (2 մմ) նա կախիչ է հյուսել: Վերջինս արված է օղակարի միջոցով (կտորի եզրին արված կոպի վրա ասեղի ծայրով, հանգուցակարով շրջակար):

Ստեղծագործող հեղինակը տիկնիկ-բարձիկին ոտքեր և ձեռքեր չի կարել, ինչը հեշտ կլիներ, սակայն նա զգացել է, որ դրանով բարձիկը կկորցնի ասեղաման իր տեսքը:

Դպրոցական աղջկա տեսքով ոճավորված ասեղաման բարձիկ-տիկնիկը եզակի թանգարանային մասունք է, քանի որ պատրաստված է Ս. Դավթյանի աքսորյան տարիներին, լցված է բռնադատված կանանց մազերով և դիմակայել է ժամանակին՝ իբրև բանտային ստեղծագործություն լինելու փաստացի վկայություն: Տարիներ շարունակ դրանից չբաժանվելը ինքնին վկայում է, որ այն հատուկ նշանակություն է ունեցել արվեստագետի համար:

Պատրաստված լինելով տիկնիկի տեսքով՝ ասեղաման-բարձիկն իր մեջ կարծես ամփոփում է մայրական այն սերն ու ջերմությունը, որից տարիներ շարունակ զրկված են եղել նրա երկու զավակները, և որին նայելիս ապագայի իր երազանքներն ու նպատակները, մտքերն է փոխանցել Ս. Դավթյանը: Կենցաղային գործածության այդ փոքրիկ առարկայի միջոցով նա արտահայտել է կյանքի հանդեպ իր սերը, ձգտումը և վերածնունդը, ինչու չէ նաև ստեղծագործական ոլորտում: Այդ մասին է վկայում նաև արգելափակման տարիների մասին Ս. Դավթյանի գրած հիշողություններից մի միտք. «Պատահում է, որ մեկ էլ այդ ընկճված հոգու խորքերից, մարդու էության թաքուն ծալքերից մի ինչ-որ տաղանդավոր, ստեղծագործական տաք շունչ է ծնվում, և մարդը շտկում է մեջքը, հավատում, որ կարելի է ապրել, համբերել, տոկալ, պայքարել, դիմանալ, ազատվել…»[1]:

[1] **Դավթյան Ս. Ս.**, Սարասատե.- «Երեկոյան Երևան», օրաթերթ, Ե., 1989, 20 մարտի, N68 (9489), էջ 4: **Քեշիշյան Մ. Ս.**, Սերիկ Դավթյան. Սարասատե.- «Գեղամա աշխարհ», 2019, 30 սեպտեմբերի, N24 (452), էջ 5:

ABOUT AN OBJECT RELATED TO THE PERIOD OF EXILE OF ART CRITIC SERIK DAVTYAN

KESHISHYAN MARY
Historian, Researcher at Matenadaran

Serik Davtyan, a prominent Armenian art critic, ethnographer, scientist, skilled specialist in decorative applied arts, pedagogue and public figure. She was born in Dilijan (RA, Tavoush region) in 1893. After attending a local school, she continued her education at the Tbilissi (Georgia) Girls' Gymnasium, graduating with honors in 1913. In 1914, returning to her hometown, taught at a local school. After graduating from the historical-philological department of the Saratov University in 1920, she taught at schools in 1920s and 1930s and was involved also in publik and state activities.

She was repressed by Salin regime in 1937 and was exiled for 10 years. S. Davtyan was exiled to distant Magadan (Kolyma), where she spends the most difficult days of her life in a repressed camp.

After being exonerated and until the end of her life, she was engaged in scientific work. A wide range of her scientific interests - embroidery, lace, carpet, which was reflected in her generalizing monograph on the history of folk applied art. Her candidate thesis was titlrd "Essays on the history of Armenian Embroidery" (1963), but her research interests were mush wider and covered different spheres of folk applied arts. S. Davtyan's many articles and monographs include "A Textbook of Embroidery" (1956 and 1963), "Armenian Lace" (1966), "Armenian Embroidery" (1972), "Armenian Carpet" (1975), "The Marash Embroidery" (1978) and "Essays on the History of Aremnian Medieval Applied arts" (1981), the latter being the summary of her research of many years. These are long-term studies conducted by a scientist-artist in the field of decorative-applied arts. The last two books were published after S. Davtyan's death in 1978.

The material of the article refers to the work of S. Davtyan, created over the years in exile. This is a pillow made of fabric to hold the needles: a stylized needle pillow in the shape of a doll. S. Davtyan kept and used this item, which had a special meaning for her. The article describes the details of the preparation of the subject, material and creative work. It is noteworthy that in order to prevent the needles from rusting, she filled the pillow with hairs of female prisoners. After S. Davtyan's death, she left this thing to her daughter Nerik Davtyan, who used the pillow until the 1990s.

The lining for the needle is interesting, as it is considered a unique surviving material from the period of Serik Davtyan's repression. Doing this in Magadan, she traveled with him even after returning from exile (Magadan-Dilijan-Yerevan) and did not part. We think that this pillow had a special spiritual value for a famous art critic and ethnographer. Therefore, this item was

carefully kept and used in the family, knowing its significance, how dear it was for Serik Davtyan.

Keywords: *Serik Davtyan, Dilijan, Stepan Davtyan, Armenian embroidery, exile, repressed, doll, embroidery, Nerik, carpet, ethnography, applied art, lace.*

ОБ ОБЪЕКТЕ, СВЯЗАННОМ С ПЕРИОДОМ ИЗГНАНИЯ ИСКУССТВОВЕДА СЕРИКА ДАВТЯНА

КЕШИШЯН МЕРИ
Историк,
Научный сотрудник Матенадарана

Серик Давтян, видный армянский искусствовед, этнограф, ученый, опытный специалист в области декоративно-прикладного искусства, педагог и общественный деятель. Родилась в г. Дилижане в 1893 году (РА, Тавушский регион). После посещения местной школы она продолжила свое образование в Тбилисской (Тбилиси) женской гимназии, окончив с отличием в 1913 году. В 1914 году, вернувшись в свой родной город, она начала преподавать в местной школе.

1920 г. окончив историко-филологический факультет Саратовского университета, она преподавала в школах в 1920–1930-х годов, а также занималась общественной и государственной деятельностью.

1937 году, во времена сталинского режима, С. Давтян была арестована по необоснованному обвинению и оклеветана. Она была приговорена к 10 годам лишения свободы и сослана в далекий Магадан (Колыма). Там, в репрессированном лагере, она проводит самые трудные дни своей жизни. После реабилитации и до конца жизни она занималась научной работой. Широк круг ее научных интересов - вышивка, кружево, карпет, что и получила отображение в ее обобщающей монографии по истории народного прикладного искусства.

Ее кандидатская диссертация была под названием “Очерки истории армянской вышивки” (1963), но ее научные интересы были гораздо шире и охватывали различные сферы народно-прикладного искусства. Многие статьи и монографии С. Давтяна включают “Учебник по вышивке” (1956 и 1963), “Армянское кружево” (1966), “Армянская вышивка” (1972), “Армянский ковер” (1975), “Вышивка Мараша” (1978) и “Очерки истории арменского средневекового прикладного искусства” (1981), последняя из которых является итогом ее многолетних исследований. Последние две книги были опубликованы после смерти С. Давтяна в 1978 году.

Материал статьи относится к работе С. Давтяна созданной в изгнании. Это подушка из ткани, предназначенная для удержания иголок: стилизованная игла-подушка в виде

куклы. С. Давтян сохранила и использовала эту вещь, которая для нее имела особое значение.

В статье описаны детали подготовки предмета, материал и творческая работа. Примечательно, что для того, чтобы иглы не ржавели, она заполнила подушку волосами женщин-заключенных. После смерти С. Давтяна, эту вещь она оставила своей дочери Нерику Давтяну, каторая использовала подушку до 1990-х годов.

Подкладка для иглы интересна, так как считается уникальным сохранившимся материалом периода репрессий Серика Давтяна. Создавая ее в Магадане, она путешествовала с ним даже после возвращения из ссылки (Магадан-Дилижан-Ереван) и не расставалась. Мы думаем, что это подушка имела особую духовную ценность для известного искусствоведа и этнографа. Поэтому этот предмет бережно хранился и использовался в семье, зная его значение, насколько он был дорог для Серика Давтяна.

Ключевые слова: *Серик Давтян, Дилижан, Степан Давтян, армянская вышивка, ссылка, репрессии, кукла, вышивка, нерик, ковер, этнография, прикладное искусство, кружево.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.09.2020թ.:

3.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА

«ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆ» ՈՒՎԿ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՐԳՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան
e-mail: m.hergnyan@gsu.am
ՄՆԵՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի
բակալավրիատի «Ֆինանսներ» բաժնի շրջանավարտ
e-mail: syuzannamneyan5@gmail.com

Հոդվածը նվիրված է «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի վարկատեսակների տրամադրման պայմանների բարելավման ուղիների բացահայտմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ տնտեսությունը չի կարող զարգանալ առանց կայուն, զարգացած ֆինանսական ինստիտուտների՝ մասնավորապես վարկային համակարգի, որի զարգացումն ու կատարելագործումը պահանջում է վերանայել վարկավորման առկա պայմանները: Անշուշտ, ֆինանսական շուկայում առաջնային նախապայման է վարկային կազմակերպությունների կողմից միջոցներ ներգրավելու և դրանց տեղաբաշխումը կարգավորելու խնդիրը, որը պայմանավորված է ակտիվների և պասիվների կառավարման հստակ կանխորոշված ռազմավարությամբ: «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն համարվում է ՀՀ ֆինանսական համակարգի դերակատարներից մեկը և իր ուրույն տեղն ունի այդ համակարգում: Հետանցումային տնտեսություն ունեցող երկրներում վարկային համակարգի ձևավորումն ու դրա լիարժեք իրագործումը կապված են մի շարք խնդիրների և սահմանափակումների հետ:

Աշխատանքում ներկայացված են «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի 2017-2019թթ. ֆինանսական ցուցանիշները, իրականացվել է ՍԵՖ-ի կողմից տրամադրվող վարկերի և փոխատվությունների վերլուծություն՝ ըստ տնտեսության տարբեր ճյուղերի և հաճախորդների, առաջարկվել են վարկերի տրամադրման պայմանների բարելավման ուղիներ:

Բանալի բառեր՝ *վարկային համակարգ, ունիվերսալ վարկային կազմակերպություն, ֆինանսական կայունություն, վարկառու, վարկատու, երաշխավորությամբ ապահովված վարկեր, վարկերի տրամադրման պայմաններ, վարկային ռիսկ:*

Շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ են զարգացած ֆինանսական ինստիտուտներ, այդ թվում է վարկային համակարգը, որի կատարելագործումը պահանջում է վերանայել վարկավորման պայմանները: Անշուշտ, ֆինանսական շուկայում առաջնային նախապայման է վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման և տեղաբաշխման հարցերի կարգավորումը՝ պայմանավորված ակտիվների և պասիվների կառավարման հստակ կանխորոշված ռազմավարությամբ: «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն, որպես ՀՀ ֆինանսական համակարգի դերակատարներից մեկը, իր ուրույն տեղն ունի այդ համակարգում: Հետանցումային տնտեսությամբ երկրներում, վարկային համակարգի ձևավորման հետ կապված, կան մի շարք խնդիրներ և սահմանափակումներ, որոնց գործարկմամբ են պայմանավորված անցման շրջանի առանձնահատկությունները: ՀՀ տնտեսությունը չի կարող գործնականում զարգանալ առանց կայուն վարկային համակարգի, հետևաբար պահանջվում է վերանայել վարկավորման գործող պայմանները:

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն (ՍԵՖ) հիմնադրվել է 1997թ. «Վորլդ Վիժն» միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության կողմից և միակ սեփականատերն է: ՍԵՖ-ը սոցիալապես պատասխանատու կազմակերպություն է, որի մշակած գործառնական թիրախները նպատակաուղղված են լուծելու սոցիալական խնդիրներ, ապահովելու ֆինանսական կայունություն և նվազեցնելու ռիսկերը: ՍԵՖ-ում վարկերը տրամադրվում են ընկերության կողմից մեկ փոխառուի և վարկառուի համար նախատեսված սահմանաչափի շրջանակներում, ընդ որում՝ մեկ փոխառու են համարվում միևնույն բնակության վայրում հաշվառված վարկառուները, նրանց հետ փոխկապակցված անձինք: «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈւՎԿ ՍՊԸ-ում միայն երաշխավորությամբ ապահովված վարկերի համար մեկ փոխառուի գծով կիրառվում են վարկավորման թույլատրելի առավելագույն հետևյալ սահմանաչափերը.

- Ընկերության մարզային (Երևանում չտեղակայված) ստորաբաժանումների համար՝ առավելագույնը հինգ վարկ, բայց ոչ ավել, քան գումարային 8 հազար ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ վարկի գումարի չափով,
- Ընկերության՝ Երևանում տեղակայված ստորաբաժանումների համար՝ ոչ ավել, քան 12 հազար ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ վարկի գումարի չափով,
- Այն հայտերը, որոնց դեպքում մեկ փոխառուի գծով վարկավորման ընդհանուր գումարը (ընթացիկ վարկային մնացորդը + հայտով պահանջվող գումարը)

գերազանցում է 4 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը, անկախ գումարի չափից, պետք է հաստատվեն վարկային կենտրոնական հանձնաժողովի կողմից:

❖ Ընկերության բոլոր ստորաբաժանումների համար միայն երաշխավորությամբ ապահովված վարկերի դեպքում, միևնույն վարկատեսակի շրջանակներում վարկառուին և կամ փոխկապակցված անձին հաջորդ վարկը հնարավոր է տրամադրել միայն նախորդ վարկի տրամադրումից 40 օրացուցային օր հետո[1]:

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն առաջարկում է հետևյալ վարկատեսակները՝

- **բիզնես վարկեր** կարող են ստանալ նրանք, ովքեր զբաղվում են փոքր և միջին ձեռնարկատիրությամբ և ունեն շրջանառու միջոցների ու կապիտալ ներդրումներ կատարելու կարիք,
- **գյուղատնտեսական վարկեր** տրամադրվում են նախատեսված փոքր և միջին գյուղացիական տնտեսությունների գործունեությունն ընդլայնելու նպատակով,
- **սպառողական վարկեր** տրամադրվում են այն ֆիզիկական անձանց, ովքեր սպառողական գնումների իրականացման ֆինանսավորման և ընտանեկան կարիքների համար ունեն ազատ միջոցների անհրաժեշտություն,
- **վերանորոգման վարկերը** բնակարանի վերանորոգման, վերակառուցման, կենցաղային պայմանների բարելավման նպատակով տրամադրվող վարկերն են:

Ընկերության կողմից տրամադրվող վարկային ծառայությունները հարստացվել են մի շարք նոր վարկային «պրոդուկտներով» և դրանց ենթատեսակներով, սահմանվել են որոշակի արտոնություններ, որոնք հնարավորություն են ընձեռնում հաճախորդներին՝ հաճախակի օգտվելու բանկի վարկային ծառայություններից՝ անուղղակիորեն խթանելով տնտեսության իրական հատվածի զարգացմանը:

ՍԵՖ-ի 2017-2019թթ. ֆինանսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1


«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի ֆինանսական ցուցանիշները 2017-2019 թթ.

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ	Տարիներ			Փոփոխություն (2017-2018)		Փոփոխություն (2019-2018)	
	2017	2018	2019	հազ.դրամ	%	հազ.դրամ	%
Ա	1	2	3	4	5	6	7
Ակտիվներ	13,583,718	13,463,911	15,371,778	119,807	(0.88)	1,907,867	14.2
Այդ թվում՝ տրված վարկեր	10,942,282	11,087,784	12,830,545	145,502	1.3	1,742,761	15.7
Պարտավորություններ	11,257,172	11,074,559	13,060,958	(182,613)	(1.6)	1,986,399	17.9

[1] «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ կանոնադրություն:

Սեփական կապիտալ	2,326,546	2,389,352	2,310,820	62,806	2.7	(78,532)	(3.3)
Այդ թվում՝ կանոնադրական կապիտալ	1,371,156	1,371,156	1,371,156	-	-	-	-
Տարվա շահույթ	324,908	276,772	150,434	(48,136)	(14.8)	(126,338)	(45.6)
Տոկոսային եկամուտներ	3,224,260	3,023,048	3,094,606	(201,212)	(6.2)	71,558	2.4
Տոկոսային ծախսեր	(1,179,661)	(1,154,269)	(1,300,284)	25,392	2.2	(146,015)	(12.6)

ՍԵՖ-ի կողմից տրամադրված վարկերի ու փոխատվությունների 2017-2019 թթ. վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է գծապատկեր 1-ում:




Գծապատկեր 1

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից 2017-2019թթ. տրամադրված վարկերը և փոխատվություններն ըստ տնտեսության տարբեր ճյուղերի (հազ. դրամ)[1]

Հետազոտությունները վկայում են, որ ըստ տրամադրված վարկերի մեծ ծավալի՝ աճ է գրանցվել հիմնականում տնտեսության այլ ճյուղերում: 2017թ. Համեմատությամբ 2018թ.-ին վարկերի քանակն աճել է 9.1%-ով, իսկ 2018թ. համեմատությամբ 2019թ.-ին՝ 25.4%-ով: Թեև գյուղատնտեսության ճյուղը մնացած ճյուղերի համեմատ ունի բավականին բարձր ցուցանիշներ, սակայն 2017-2019թթ. այդ ցուցանիշները նվազել են 4.1%-ով: Տնտեսության մնացած ճյուղերում նույնպես աճ է գրանցվել:

Ներկայացնենք ՍԵՖ-ի կողմից 2017-2019թթ. տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների թվի (գծապատկեր 2):

[1]«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017-2019 թթ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:




Գծապատկեր 2

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-իկողմից 2017-2019թթ. տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների թվի (հազ. դրամ)[1]

2017թ. իրավաբանական անձանց (փոքր ընկերություններ և անհատ ձեռներեց-ներ) տրված վարկերը և փոխատվությունները կազմել են 1,365,793 մլն դրամ: Այս ցուցանիշը 2018թ.-ին 2017թ.-ի համեմատությամբ աճել է 9.8%-ով, իսկ 2019թ.-ին նա-խորդ տարվա համեմատությամբ աճել է 18.3%-ով:

2017-2019թթ.-ին կազմակերպության կողմից ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի վերաբերյալ տվյալները ներկայացված են գծապատկեր 3-ում:



	Գյուղ. վարկեր	Այլ սպառողական վարկեր	Սպառող. ապրանքների ձեռք բերման ֆինանսավորում	Բիզնես սկելու համար	Վերանորոգման վարկեր
2015	5 356 490	2 156 477	1 516 277	537 542	228 629
2016	4 911 071	3 164 571	975 840	467 535	236 843
2017	5 135 775	3 773 530	1 150 719	871 819	279 535

Գծապատկեր 3

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից Ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (հազ. դրամ)[2]

[1]«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017-2019 թթ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

[2]«ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017-2019թթ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

Վերլուծությունները վկայում են, որ 2018թ.-ին 2017թ.-ի համեմատությամբ **գյուղատնտեսական վարկերը** նվազել են 8.3%-ով, սակայն 2017թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ աճել են 4.5%-ով: Նշենք, որ զգալի աճ է գրանցվել **այլ սպառողական վարկերի գծով**, ընդ որում՝ 2018թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ այն աճել է 46.7%-ով, իսկ 2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ՝ 19.2%-ով: Աճ է նկատվում նաև կազմակերպության կողմից տրամադրվող **բիզնես վարկերի** մասով. 2017-2019թթ.-ին բիզնես վարկերի թիվն աճել է 62.2%-ով:

2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ աճել է նաև **սպառողական ապրանքների ձեռքբերման** նպատակով տրամադրվող վարկերի թիվը: 2018թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ վարկերը նվազել են 35.6%-ով, սակայն 2019թ.-ին գրանցվել է 17.9%-ով աճ: 2017-2019 թթ.-ին գրանցվել է նաև **վերանորոգման վարկերի** թվի 22.2% աճ:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին բանկերի, վարկային կազմակերպությունների միջև մրցակցությունը ստիպել է վերանայել տրամադրվող ծառայությունների «տեսականին» և որակը, արժեթղթերի կառավարման գործընթացը, երաշխիքների տրամադրումը և այլն: Վերջին տասնամյակներում փոխվել են նաև ֆինանսական հաստատությունների կառուցվածքը և կառավարման սկզբունքները: Ներկայումս հաճախորդները հակված են տեխնոլոգիական փոփոխությունների ներառմամբ, լավագույն սպասարկմամբ, բարեհաճ վերաբերմունքով ուղեկցվող հարաբերությունների, իսկ տեխնոլոգիական առաջընթացը կարող է օգնել հարաբերությունների բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

ՍԵՖ-ի կողմից տրամադրվում են տարաբնույթ վարկատեսակներ, և վերջին շրջանում բարելավվել են դրանց տրամադրման պայմանները, սակայն անհրաժեշտություն է առաջանում միջոցներ ձեռնարկել նաև վարկերի մարման ժամկետների երկարաձգման ուղղությամբ: Հատկապես խոշոր վարկերի դեպքում, ունենալով մատչելի տոկոսադրույք, սակայն մարման կարճ ժամկետ, հաճախորդները նախընտրում են օգտվել այն բանկերի ծառայություններից, որոնք առաջարկում են բարձր տոկոսադրույք, բայց մարման երկար ժամկետայնություն:

Կարևորվում է նաև երիտասարդներին բնակարան տրամադրելու հիփոթեքային վարկատեսակի ավելացումը: Նշենք, որ ներկայումս գործում է «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագիր, որի նպատակն է՝ պետական աջակցություն ցուցաբերել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին:

Հաշվի առնելով առանց կանխավճարի հիփոթեքային վարկերի նկատմամբ բնակչության մեծ պահանջարկը՝ Կազմակերպությունը կարող է ավելացնել այս վարկատեսակը՝ հնարավորինս նվազեցնելով վճարվող կանխավճարի չափը: Կազմա-

կերպությունը կարող է հայտարարել նաև հատուկ ակցիա, որի շրջանակում կարելի է ձեռք բերել բնակարաններ: Բնակչության պահանջմունքների ուսումնասիրության նպատակով ՍԵՖ-ի կողմից պարբերաբար իրականացվում են շուկայի հետազոտություններ, որոնց արդյունքում բանկում մշակվում են համապատասխան գործիքներ: Նշենք, որ առանց կանխավճարի տրամադրումը հիփոթեքային վարկերն առավել մատչելի է դարձնում բնակչության այն զանգվածի համար, որն ունի կայուն եկամուտ, սակայն բավարար խնայողություններ չունի բնակարան ձեռք բերելիս կանխավճար կատարելու համար:

Փաստենք, որ կազմակերպության կողմից տրամադրվող սպառողական վարկերը տրվում են երաշխավորությամբ, ոսկու, անշարժ, շարժական գույքի գրավով: Սակայն հաշվի առնելով սպառողական վարկի նկատմամբ բնակչության ունեցած մեծ պահանջարկը՝ անհրաժեշտ է, որ այս վարկատեսակը տրամադրվի վճարվելիք տոկոսները և մայր գումարը վարկի մարման ժամկետի վերջում վճարելու պայմանով: Վերոնշյալ պայմաններից բացի, ցանկալի է, որ վարկի տրամադրման բավարար պայման լինի միայն անձնագրի և սոցիալական քարտի առկայությունը, մինչդեռ այն տրամադրվում է միայն «հավատարիմ» հաճախորդներին և կրում է ժամանակավոր բնույթ:

Հարկ է նշել, որ ի տարբերություն բանկերի՝ վարկային կազմակերպությունների համար ստեղծվում են անհավասար պայմաններ, և ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են նոր լուծումներ: Այս առումով անհրաժեշտ է վարկային կազմակերպությունների ու բանկերի համար ստեղծել հավասար պայմաններ:

Այսպիսով՝ «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈւՎԿ ՍՊԸ-ում, դիտարկելով կազմակերպության կողմից կատարվող ինվեստիցիաների հետ կապված ռիսկերը, կարևորվում է վարկային ռիսկի ճիշտ կառավարումը, քանի որ վարկավորումն ակտիվների պորտֆելի ձևավորման գործում ունի առաջատար դեր, և այն առկա է բանկի, վարկային կազմակերպության տնօրինած հաշվեկշռային բոլոր ակտիվներով և արտահաշվեկշռային միջոցներով կատարվող գործառնություններում: ՍԵՖ-ն իր վարկային ռազմավարությունը մշակելիս պետք է ուշադրություն դարձնի դրամական միջոցների ներգրավման խնդրին, քանի որ ներգրավված միջոցների արդյունավետ օգտագործումը կազմակերպությանը կապահովի մեծ չափով տոկոսային եկամուտով:

Օգտագործված գրականություն

I. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ կանոնադրություն:
2. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:
3. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2018 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:
4. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2019 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բադանյան Լ. Հ., «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Երևան, 2010:
2. Ասատրյան Բ., «Բանկային գործ», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004:

III. ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. http://sefmicro.org - «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ պաշտոնական կայքէջ:

OPPORTUNITIES FOR IMPROVING CREDIT CONDITIONS BY "SEF INTERNATIONAL UCO" LLC

HERGNYAN MARIAM
Candidate of Economics, Associate Professor,
Vice Dean of the Faculty of Economics, GSU
MNEYAN SYUZANNA
Graduate of Faculty of Economics,
Department of Finance, GSU

The article is dedicated to identifying ways to improve the terms of loans provided by "SEF International UCO" LLC.

In a market economy, the Armenian economy cannot develop without stable, well-developed financial institutions, particularly the credit system, the development and improvement of which require a review of existing lending conditions.

Definitely, the primary precondition in the financial market is the issue of attracting funds by credit organizations to regulate their placement, which is conditioned by a clearly predetermined strategy of asset-liability management.

"SEF International Universal Credit Organization" LLC is considered one of the players in the financial system of the Republic of Armenia, it has a special place in that system. The development of the credit system and its full implementation in countries with transition economies is associated with a number of problems and limitations. The Armenian economy cannot develop without a stable credit system, so it is necessary to review and improve the terms of loans.

The paper presents the financial indicators of "SEF International UCO" LLC for 2017-2019, analyzed the loans provided by SEF according to customers from different sectors of the economy, suggested ways to improve the terms of loans.

Keywords: *credit system, universal credit organization, financial stability, borrower, lender, guaranteed loans, loan terms, credit risk.*

ВОЗМОЖНОСТИ УЛУЧШЕНИЯ УСЛОВИЙ КРЕДИТОВАНИЯ, ПРЕДОСТАВЛЯЕМЫХ ООО "СЕФ ИНТЕРНЕЙШНЛ УКО"

ЕРГНЯН МАРИАМ
Кандидат экономических наук, доцент,
Замдекана экономического факультета ГГУ
МНЕЯН СЮЗАННА
Выпускница отделения "Финансы" экономического факультета ГГУ

Статья посвящена выявлению путей улучшения условий предоставления кредитов ООО “Сеф Интернейшнл УКО”.

В условиях рыночной экономики, экономика РА не может развиваться без стабильных, развитых финансовых институтов, в частности, кредитной системы, развитие и совершенствование которой требуют пересмотра существующих условий кредитования. Безусловно, первоочередным предусловием на финансовом рынке является проблема привлечения средств кредитными организациями и регулирование их распределения, что обусловлено четко определенной стратегией управления активами и пассивами. ООО “Сеф Интернейшнл универсальная кредитная организация” считается одним из ролевых в финансовой системе Республики Армении и занимает свое особое место в этой системе. Формирование и полноценная реализация кредитной системы в странах с переходной экономикой связаны с рядом проблем и ограничений. Экономика Армении не может развиваться без стабильной кредитной системы, поэтому необходимо пересмотреть и улучшить условия кредитования:

В работе представлены финансовые показатели ООО “Сеф Интернейшнл УКО” за 2017-2019 годы, проведен анализ кредитов и займов, по разным отраслям экономики и клиентам, предоставляемых “Сеф Интернейшнл”, предложены пути улучшения условий кредитования.

Ключевые слова: *кредитная система, универсальная кредитная организация, финансовая стабильность, кредитор, заемщик,, кредиты под поручительство, условия кредитования, кредитный риск.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2020թ.:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱԼԵՐԻ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
e-mail: valeriaraqelyan@ysu.am
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
Երևանի պետական համալսարանի հայցորդ
e-mail: vardanyan717@gmail.com

Հոդվածում փորձ է արվել՝ բացահայտելու կազմակերպության մրցակցային ռազմավարության մշակման մոտեցումների առանձնահատկությունները, այնուհետև դիտարկվել է մրցակցությունը որպես ձեռնարկատիրական ռիսկի առաջացման գործոն: Ուսումնասիրվել են սննդամթերք արտադրող կազմակերպությունների տնտեսական կարողությունների ցուցանիշները՝ նկատի ունենալով, որ այդ ցուցանիշներն են բնութագրում կազմակերպությունների դիրքը և դերը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Հեղինակների կողմից մշակվել և առաջադրվել է կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը գնահատող մոտեցում, որը հնարավորություն է ընձեռում գնահատելու կազմակերպությունների մրցունակությունը (արտադրության արդյունավետության մասով):

Բանալի բառեր՝ *շուկա, մրցակցություն, ռազմավարություն, ձեռնարկատիրական ռիսկ, կառավարում,տնտեսական կարողություն, գնահատում, մեթոդ, արդյունավետություն, գործոններ:*

Ձեռնարկատիրական գործունեության կառավարումը մրցակցային առավելություն ստեղծելու նպատակով պլանավորված գործողությունների ըմբռնումն է: Հետևաբար, որպեսզի կազմակերպությունն իր գործունեության ժամանակ հասնի մրցակցային առավելության, պետք է ընտրի իր ռազմավարությունը՝ բացահայտելով ռիսկերի առաջացման ներքին և արտաքին գործոնները, որոնք նպաստում են դրանք ճիշտ գնահատելուն և նվազեցնելուն, ճիշտ ըմբռնելով ազգային տնտեսության առանձնահատկությունները և այն ճյուղի կառուցվածքը, որտեղ գործում է կազմակերպությունը: Կատարված ուսումնասիրությունները, կապված ռիսկի բնույթի, տեսակների, առաջացման պատճառների հետ, ցույց են տալիս վերջիններիս սերտ կապը և փոխպայմանավորվածությունը մրցակցության հետ: Ուստի սննդամթերքի արտադրու-

թյան շուկայում առկա ռիսկերն ուսումնասիրելու և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է հատուկ պատկերացում կազմել շուկայի կառուցվածքի, բնույթի, մասնակիցների և այլ յուրահատկությունների մասին՝ միաժամանակ բացահայտելով սպառողների վերաբերմունքը ապրանքի և գների նկատմամբ, ինչպես նաև պահանջարկի փոփոխությունը վերջիններիս փոփոխության դեպքում:

Վերոհիշյալ վերլուծություններն անելու համար նախ՝ ներկայացնենք մրցակցային առավելություն ապահովելու ռազմավարությունները, որոնք կարող են նպաստել ռիսկերի արդյունավետ կառավարմանը:

Տնտեսական պրակտիկայում գոյություն ունեն մրցակցային առավելություն ապահովելու բազմաթիվ ռազմավարություններ՝ ծախքերի, արտադրանքի շերտավորման, կիզակետման, սիներգիզմի գծով և այլն:

Կիզակետման կամ նեղ մասնագիտացման ռազմավարությունը կարելի է սահմանել որպես ոլորտի ընտրություն՝ սահմանափակ կամ խիստ ընդգծված սպառողների ընդգրկմամբ: Նպատակն է՝ կազմակերպության գործունեությունը կենտրոնացնել սպառողների համեմատաբար ոչ մեծ նպատակային խմբերի, ապրանքային անվանացանկի բաժնի կամ էլ գործունեության որևիցե ոլորտում: Ուստի այն էապես տարբերվում է նշված ռազմավարություններից, քանզի հիմնված է մրցակցության նեղ ոլորտով ճյուղի շրջանակների վրա (շուկայական որմնախորշեր): Շուկայի որմնախորշը հնարավոր է աշխարհագրական եզակիության տեսանկյունից, արտադրանքի օգտագործման հատուկ պահանջներից, կամ նրան հատուկ բնութագրերից, որոնք կարևոր են միայն որմնախորշի մասնակիցների համար: Համաձայն ամերիկյան բացատրական բառարանի՝ *շուկայական որմնախորշ* հասկացությունը բնութագրվում է որպես իրավիճակ կամ գործունեության տեսակ՝ որևիցե մեկի անհատական ընդունակությանը և բնույթին համապատասխան:

Հարկ է նշել, որ ռազմավարության ընտրության պատճառը հաճախ ռեսուրսների սակավությունն է կամ բացակայությունը, սակայն մեր կարծիքով, ավելի կարևոր պատճառներ են ճյուղ կամ շուկա թափանցելու պատնեշի սաստկացումը և ձեռնարկատիրական ռիսկերի հնարավոր աճը: Այդ պատճառով կիզակետման կամ նեղ մասնագիտացման ռազմավարությունը հատուկ է միջին կազմակերպություններին, չնայած դրանից կարող են օգտվել նաև խոշոր ընկերությունները: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այսպիսի ռազմավարության ժամանակ գործունեության հնարավորությունները սահմանափակվում են. հնարավոր է, որ շուկայի խստացումներն անտեսվեն:

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են կիզակետման երկու ուղղություններ. կա'մ ընտրված շուկայական հատվածի սահմաններում կազմակերպությունը աշխատում է հասնել ծախսերի գծով առավելության, կա'մ ուժեղացնում է

արտադրանքի շերտավորումը, կա'մ էլ իրագործում է թե' մեկը և թե' մյուսը՝ գնահատելով տնտեսական ռիսկերը:

Կիզակետման ռազմավարությունն ուղղված է մրցակիցների նկատմամբ առավելության հասնելուն մեկուսացված, հաճախ շուկայի միակ հատվածում: Այս դեպքում ռազմավարության համար հիմք են ծառայում կազմակերպության գործունեության հատուկ ուղղվածությունը և նրա անձնակազմի որակավորման մակարդակը, որոնց շնորհիվ ազատվում են շուկայի որմնախորշերը:

Մեր կարծիքով, կիզակետման ռազմավարությունը ենթադրում է հասարակական պահանջմունքների բավարարումն իրականացնել գիտակցված, ոչ ավանդական ձևերով ու մեթոդներով: Այս դեպքում ռազմավարության համար մեծ դեր է խաղում մարքեթինգը, որը բացահայտում է առաջացող հիմնախնդիրները և առաջադրում դրանց լուծման հնարավոր եղանակները:

Մ. Պորտերի կարծիքով, քննարկվող բիզնեսի ռազմավարությունները համարվում են բազային: Այդ պատճառով կազմակերպությունը, որը ցանկանում է հասնել հաջողության, պետք է հետևի դրանցից որևէ մեկին, այլապես նա չի ունենա մրցակցային առավելություն, այլ կունենա միջին ճյուղային արդյունքներից ցածր ցուցանիշներ:

Մ. Պորտերն այդ հիմնավորումը մեկնաբանում է նավաշինության օրենքով. «Երբ Իսպանիայի, Իտալիայի և Բրիտանիայի նավաշինարարները գտնվում էին անկման վիճակում, քանի որ ունեին ավելի մեծ ծախսեր, քան Կորեան, նրանց մոտ բացահայտվում է շերտավորման հիմքը, որը հատկանշական է Ճապոնիային: Նրանց հաջողվում է բացահայտել շուկայի հիմնական հարվածները՝ մրցակցային առավելության հասնելու նպատակով, ինչպես դա արեց Ֆինլանդիան (սառցահողերը)»[1]:

Արևմտյան առաջավոր ֆիրմաների գործունեությունն ուսումնասիրողները չեն ժխտում Մ. Պորտերի կանխադրույթները, սակայն նրանք կիրառում են հնարավոր բիզնեսի ամենամեծ թվով մրցակցային ռազմավարությունները կամ էլ դրանց համակցությունը:[2] Սովորաբար հեռանկարային են համարվում այն ռազմավարությունները, որոնց նպատակն է՝ ունենալ արտադրանքի բարձր որակ և եզակի բնութագրեր՝ արտադրողականության բարձրացման և ծախսերի կրճատման, ռիսկերի նվազեցման հաշվին: Այդպիսի ռազմավարություն է համարվում առաջինը կամ վաղ (շուտ) շուկա դուրս գալը: Այս դեպքում կազմակերպությունն առաջինն է առաջարկում շուկայում յուրահատուկ ապրանքներ կամ ծառայություններ: Տվյալ ռազմավարությունը կարող է ապահովել կայուն մրցակցային առավելություն՝ ստանալով մենաշնորհային գերշահույթ և հասնելով կազմակերպության արագ զարգացմանը: Հետևաբար ռազմավարության առավելությունն այն է, որ տվյալ կազմակերպությունը տվյալ բիզնեսում, տարածքում կամ էլ նոր շուկայում լինի առաջինը:

---

[1] Տես՝ Porter M. E. The Competitive of Notions – N.V., The Free Press, 1990, p. 40.

[2] Տես՝ Дж. Пипдур. Путь к покупателю. М., Прогресс, 1991, էջ 13:

Պարզ է, որ շուկա հնարավոր է մտնել՝ ստեղծելով նոր տեխնոլոգիաներ, կիրառելով գոյություն ունեցող տեխնոլոգիաները նոր կոնտեքստում, լուծելով շրջակա միջավայրի, նոր ֆինանսական ռիսկերի կառավարման գործիքների հիմնախնդիրները:

Համաշխարհային փորձը վկայում է, որ առաջանցումային են նոր կազմակերպությունները, որոնք ձևավորելով մենաշնորհներ ի հաշիվ հայտնագործությունների, նորարարությունների և այլ նորամուծությունների, հնարավորություն են ստանում ձևավորելու նոր շուկա՝ հեռանկարային աճով:

Հարկ է նշել, որ առաջնության հասնելը ավելի հեշտ է, քան այն պահպանելը: Այդ պատճառով առաջնորդ ֆիրմաները գիտատեխնիկական հետազոտությունների վրա ավելի շատ միջոցներ են ծախսում, և դրանք փոխհատուցվում են նորույթների բարձր գների հաշվին, այսինքն՝ ֆիրմաները կիրառում են գնային ռազմավարություն՝ «քաշել սերուցքը» կամ էլ սահմանել մենաշնորհային բարձր գներ իրենց արտադրանքի համար:

Այդպիսի ռազմավարության հիմնական առանձնահատկություններն են՝

- տվյալ մրցակցային առավելությունը հիմնված է նորությունների կիրառման վրա (ապրանքային, տեխնոլոգիական, կազմակերպչական),
- այն կապված է մեծ ռիսկի հետ, սակայն հաջողության դեպքում ապահովում է ավելի բարձր շահույթ, նաև գերշահույթ՝ մոնոպոլ գների սահմանման շնորհիվ,
- այն հեշտ է նվաճել, սակայն դժվար է պահպանել,
- նորույթների կիրառման ժամանակ բարդ է իրականացնել պլանավորումը, քանի որ այդ դեպքում հնարավոր չէ կիրառել նախորդ փորձը:

Նոր ֆիրմաներում պետք է լինի որակավորում ունեցող անձնակազմ, բավարար ֆինանսական ռեսուրսներ նորամուծությունների ստեղծման և շուկա դուրս բերելու համար: Այսպիսի ռազմավարությունը հատուկ է խոշոր ֆիրմաներին կամ հակառակը՝ ոչ մեծ վենչուրային կազմակերպություններին: Հարկ է նշել, որ վաղ շուկա դուրս գալու առավելությունը կախված է ոչ միայն նոր արտադրանքից կամ տեխնոլոգիաներից, այլ նաև առաքման մեթոդներից, մարքեթինգից, ռիսկերի կառավարման արդյունավետությունից:

Այս ռազմավարության բարձր ռիսկը պայմանավորված է ինչպես նախագծի անորոշությամբ, այնպես էլ նորույթի նկատմամբ շուկայի արձագանքով:

Ուստի կազմակերպությունները պետք է ձեռնարկեն կոմերցիոն ռիսկը նվազեցնող հատուկ միջոցառումներ: Մեր կարծիքով, այդ միջոցառումները պետք է ուղղված լինեն պաշտպանելու նոր տեխնոլոգիաները, արտադրանքը, պատենտները, բարձր տեխնիկական մակարդակը և այլն: Անհրաժեշտ է նաև կիրառել շուկայի գնահատման, շուկա մուտք գործելու մարքեթինգի տարբեր մեթոդներ:

Ինչ վերաբերում է սիներգիզմի[1] ռազմավարությանը, ապա այն ենթադրում է ստանալ մրցակցային առավելություն՝ միավորելով երկու կամ ավելի թվով բիզնես-միավորներ (տնտեսական ստորաբաժանումներ) մեկ միավորման մեջ:

Սիներգիզմի արդյունավետությունը և դրա կառավարման հմտությունը ստեղծում են առանձնահատուկ մրցակցային առավելություն, որն իրացվում է կազմակերպության մակարդակով: Այն վերջին հաշվով դրսևորվում է տարբեր ապրանքային շուկաներում ծախքերի մակարդակի իջեցման կամ էլ եզակի հատկություն ունեցող արտադրանքների ձեռքբերման շնորհիվ:

Սիներգիզմի ռազմավարությունը ենթադրում է գործունեության արդյունավետության բարձրացում, ռեսուրսների ապահովում (տեխնոլոգիաների և ծախսերի սիներգիան)՝ շուկայական ինֆրակառուցվածքների (համատեղ առաքում) կամ գործունեության ձեռնարկատիրական ռիսկերի արդյունավետ կառավարման հաշվին:

Սիներգիզմի ռազմավարությունը նպաստում է, որ արտադրությունն ավելի բարձր շահույթ ստանա բիզնես-միավորների համատեղ գործունեության ժամանակ, քան այն դեպքում, երբ նրանք կառավարվում են առանձին-առանձին:

Ըստ ամերիկյան տնտեսագետներ Ռ. Քինգի և Դ. Քրիլանդի՝ սիներգիզմը ռազմավարության ընտրության, մշակման և մանրամասնման կարևոր տարր է: Նրանք նշում են, որ սիներգետիկ էֆեկտը որքան էլ մեծ ներուժ ունենա, չի կարող հանդես գալ ինքնին. այն պետք է պլանավորել և ստանալ: Իսկ դա հնարավոր է, եթե սիներգիան բացահայտված և ընդգրված է հիմնավորված պլաններում:[2]

Սիներգետիկ արդյունավետությունը ավելի ցայտուն է դրսևորվում պորտֆելային մակարդակում և հնարավոր է մեկ բիզնես-միավորի սահմաններում:

Տնտեսական պրակտիկան փաստում է, որ համատեղ գործունեության արդյունավետությունը միշտ էլ բարձր է, քան անհատական ջանքեր գործադրող կազմակերպությունների գործունեության արդյունքների հստակ գումարը, քանի որ համատեղ գործունեության ժամանակ իրացվում է համագործակցության և փոխկապվածության ներուժը:

Բ. Կորլոֆը նշում է, որ շատ մենեջերներ խուսափում են «սիներգիզմ» տերմինը կիրառելուց՝ օգտագործելով հոմանիշներ, որոնք փոքր-ինչ տարբերվում են իրենց նշանակությամբ:

Այդպիսի հոմանիշներ են «ռազմավարական լծակ», «փոխկապվածություն», «բավարարվածություն», «արժեքային առաջնություն»[3]:

---

[1] Սիներգիզմը (սիներգիա) գործնական պրակտիկայի երևույթ է, որի դեպքում, պատկերավոր ասած, 2+2>4: Ըստ էության, սիներգիզմ՝ նշանակում է անցում քանակականից որակականի կամ էլ ուժերի միավորում:

[2] Տես՝ У. Кинг, Д. Криланд. Стратегическое планирование и хозяйственная политика. – М.: Прогресс, էջ 200:

[3] Տես՝ Б. Корлоф. Деловая стратегия, М., Экономика, 1991, էջ 152:

«Սիներգիզմ» տերմինն առաջին անգամ կիրառել է Ի. Անսոֆֆը՝ ֆիրմայի ներսում տարբեր գործողությունների փոխկապվածությունը ձևակերպելիս: Ըստ նրա՝ «սկզբնական իմաստով սիներգիզմ ըմբռնումը նշանակում է անցում մշակող արդյունաբերությունում արտադրական մասշտաբով տնտեսման սկզբունքից ավելի լայն մասշտաբով գործունեության ռազմավարական տնտեսման սկզբունքին, որի համար աղբյուր է հանդիսանում տարբեր ռազմավարական բիզնես-միավորների փոխադարձ աջակցությունը»[1]:

Տվյալ ռազմավարության կիրառման շուկայական պայմաններն են ռեսուրսների առկայությունը, գործունեության կամ ջանքերի կամավոր միավորումը: Հետևաբար մենեջերները հիմնավորում են այլ կազմակերպությունների ձեռքբերմամբ կամ էլ նրանց միավորմամբ:

Մեր կարծիքով, սիներգետիկ էֆեկտը բարդ երևույթ է: Այն ստացվում է տարբեր տարրերի լավագույն համատեղումից: Այդ տարրերից որևէ մասի բացթողումը կարող է բացառել էֆեկտի հասնելու հնարավորությունը, քանզի մեծանում է ձեռնարկատիրական ռիսկերի հավանականությունը: Դրանից խուսափելու համար նպատակահարմար է անցկացնել համատեղ քննարկում այնպիսի մասնագետների և փորձագետների մասնակցությամբ, որոնք տիրապետում են այդ երևույթին:

Այն հնարավորություն է ընձեռում բացառել ցանկությունների և սպասելիքների մտածողությունը, որը հատուկ է այն մասնագետներին, որոնք փորձում են այդ ուղիով հասնել սիներգետիկ էֆեկտի: Բացի այդ, կազմակերպության կառավարումը պետք է այնպես իրականացվի, որ բիզնես միավորների կառավարիչները հետամուտ լինեն իրացնելու ներուժային սիներգիզմը: Հակառակ դեպքում, ինչպես նշում է Ի. Անսոֆֆը, - «Երևան է գալիս բացասական սիներգետիկ էֆեկտ, որն արտահայտվում է «$2+2<4$» ձևով: Ի. Անսոֆֆը կարծում է, որ ընտրելով սիներգիզմի ռազմավարությունը, մենեջերները պետք է ելնեն հետևյալ երեք դատողություններից.

1. գոյություն ունի՞ արդյոք ձեռնարկությունում սիներգետիկ էֆեկտ օգտագործելու տիրույթ.

2. փոխադարձ կապի ինչպիսի՞ մակարդակի է նախապատվություն տալիս բարձրագույն ղեկավարությունը և ինչպիսի՞ ռազմավարական փորձ ունի իրեն պատկանող պիտանի կոնգլոմերանտի կամ սիներգետիկ ձեռնարկության համար.

3. Ինչպիսի՞ կարգադրություն և պահանջներ են առաջադրվում՝ արտաքին միջավայրի պայմանների փոփոխությունների հետ կապված: Հարկ է նշել, որ որքան մեծ են արտաքին միջավայրի անկայունությունը, սպասվելիք վտանգները, խիստ մրցակցությունը, ռիսկերի առաջացման հավանականությունը, այնքան մեծ է սիներգիզմի նշանակությունը հաջողության հասնելու համար:

[1] Նույն տեղում, էջ 129:

Ճիշտ է նկատում Ի. Անսոֆֆը, որ սիներգետիկ ռազմավարության մշակման հիմնախնդիրը կապված է կառավարման ճկունության և սիներգիզմի հակասությունների հետ: Կառավարման ճկունության բարձրացումը նպաստում է շահույթի ստացմանը, ռիսկերի նվազմանը և սիներգիզմի հնարավորությանը: Մյուս կողմից, տվյալ ռազմավարության համար գլխավոր վտանգը ճկունության պակասն է, հնարավոր փոխզիջման և որոշումների ընդունման իրագործումը: Այս թերությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ արժեքային առավելության վրա՝ հասցնելով այն նվազագույնի:

Այսպիսով՝ մրցակցային ռազմավարությունը բարդ հարաբերությունների համակարգ է, որի ուսումնասիրությունը պահանջում է կազմակերպության վաճառքի ծավալի, շահույթի, արտադրանքի (ծառայություն) ինքնարժեքի, դրամական հոսքերի, կառավարման ոճի և ընդհանրապես գործունեության կարևորագույն ռազմավարական ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության ստացում և գնահատում: Չնայած կոնկրետ կազմակերպության գործունեության վերլուծությանը և ռիսկերի գնահատման առանձնահատկություններին՝ կարելի է առանձնացնել մի շարք տիպային ուղղություններ.

- կազմակերպության գործունեության նպատակը,
- պորտֆել պատվեր, նոր արդյունք,
- կազմակերպության ռեսուրսային հնարավորությունները,
- ծախքերի (ինքնարժեքի) գործոնային վերլուծություն,
- ֆինանսական միջոցների մատչելիությունը, միջոցների հնարավոր աղբյուրները, կառավարման համակարգը, կառուցվածքը, անձնակազմի որակավորումը, անձնակազմի մոտիվացիան, կառավարման կուլտուրան ու ավանդույթը,
- ռիսկերի վերլուծությունը, գնահատումը և այլն:

Ակնհայտ է, որ մրցակցային ռազմավարության մշակման հիմքում ընկած է կազմակերպության ընթացիկ գործունեության վերլուծությունը, իսկ գլխավոր հիմնախնդիրն այն է, թե ինչպես գնահատել գործունեության արդյունավետությունը, որպեսզի կազմակերպության շահույթի ապահովումը լինի երկարաժամկետ: Հայտնի է, որ արդյունավետության գնահատման ցուցանիշներ կարող են լինել շահութաբերությունը, ռիսկի մակարդակը, շուկայի բաժինը, ակտիվների արժեքը, նոր արտադրանքի (ծառայության) ծավալը, արտադրողականությունը և այլն: Սակայն տնտեսվարման նոր պայմաններում որպես արդյունավետության ցուցանիշ վերցվում է զուտ շահույթի մեծությունը կամ շահութաբերությունը, բայց դրանց ապահովումը միաժամանակ բարձրացնում է ձեռնարկատիրական ռիսկի աստիճանը:

«Արդյունք-ռիսկ» ֆունկցիոնալ կապը ցույց է տալիս, որ շահույթի մեծությունը և դրա ստացման հավանականությունը գտնվում է հակադարձ կապի մեջ[1]: Բացի այդ, շահութաբերության մակարդակը կախված է ոչ միայն արտադրանքի գնի և նրա ինքնարժեքի կառուցվածքից, այլ նաև շրջանառու կապիտալի պտույտների արագությունից:

Կազմակերպության գործունեությունից երկարաժամկետ շահույթի ստացումը գնահատող ցուցանիշների որոշումը ռազմավարական կառավարման բարդ հիմնախնդիրներից է, քանի որ կազմակերպությունն ամեն անգամ պետք է սահմանի առաջնային հիմնախնդիրները, որոնց լուծման դեպքում կարող է ապահովել առավելագույն շահույթ. այսպես՝ բարձրացնել թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների մրցակցությունը, ստեղծել նոր ապրանքներ, իջեցնել արտադրական ծախքերը՝ կախված կոնկրետ իրավիճակից, կազմակերպության նպատակների իրականացման և այլ գործոններից:

Ռազմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել կազմակերպության ստեղծման պատմությունը, պարզել՝ ինչ ճանապարհով է հասել հաջողության, կամ որն է նրա անհաջողության պատճառը: Ռազմավարության ընտրման գործընթացը ենթադրում է բացահայտել կազմակերպության՝

- անցյալ և ընթացիկ ռազմավարությունը,
- ռազմավարական հիմնախնդիրները,
- կազմակերպչական հնարավորությունների և սահմանափակումների հարաբերակցությունը,
- ֆինանսական հնարավորությունների սահմանափակումների հարաբերակցությունը,
- կազմակերպչական ճկունությունը,
- ձեռնարկատիրական ռիսկերի առաջացման պատճառները,
- ուժեղ և թույլ կողմերը:

Ռազմավարական հիմնախնդիրը կազմակերպության թույլ կողմերից տարբերվում է նրանով, որ վերջիններս բացահայտվում են մրցակից կազմակերպությունների հիմնական տնտեսական գործունեության արդյունքները համեմատելիս, իսկ հիմնախնդիրներն առաջանում են, երբ անհամապատասխանություն է նկատվում առաջադրված նպատակին հասնելու ընթացքում: Հետևաբար ռազմավարական հիմնախնդիրն է՝ ըմբռնել և հստակ ձևակերպել դրանք, բացահայտել լուծման մեթոդները:

Այսպիսով՝ հիմնախնդիրը միաժամանակ կարող է բացահայտել կազմակերպության ինչպես թույլ կողմերը, այնպես էլ զարգացման հնարավորությունները: Պարզ է, որ ռազմավարական հիմնախնդիրները (բացառապես հիմնախնդրի էությունը) միշտ

[1] Տես՝ Алексеева М. М. Планирование деятельности фирм. – М.: Финансы и статистика, 1997, էջ 89:

վերացնել անհնար է. դա կարող է խոչընդոտել կազմակերպության ռազմավարությունն իրականացնելը:

Կազմակերպության կառուցվածքը և կառավարման համակարգը, ձևավորված կորպորատիվ կուլտուրան և սովորույթները, աշխատանքի մոտիվացիոն համակարգը, կառավարչական «անձնակազմը» ցանկացած իրավիճակում կարող են լինել կազմակերպության ուժեղ և թույլ կողմեր, և դրանց սովորաբար կարող են առնչվել նոր ձևավորվող կազմակերպությունները, որոնցում կառավարման գործընթացի հետ կապված՝ դժվարություններ կան:

Ռազմավարության մշակման կարևոր խնդիրներից է նրա ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը, ինչպիսիք են հարկերի վճարումը, պարտքերի և պարտավորությունների կառուցվածքը և այլն: Համաձայն արտասահմանյան մեթոդիկաների՝ այս փուլում անհրաժեշտ է սահմանել կազմակերպության հնարավորությունները ներդրումային միջոցների և դրամական հոսքերի ասպարեզում, այսինքն՝ վերաբաշխել ներդրումներն ըստ ռազմավարական բիզնես-միավորումների, շահաբաժնի վճարման, երկարաժամկետ վարկերի տրամադրման և այլն: Ֆինանսական հնարավորությունների ու պարտավորությունների իրական գնահատումը հնարավորություն է ընձեռում կազմակերպությանը՝ գնահատելու ռիսկերը և ընտրելու ճիշտ ռազմավարություն:

Մյուս կարևոր գործոնը, որը հնարավորություն է տալիս ընտրելու մրցակցային ռազմավարություն և փոքրացնելու ռիսկը, կառավարման ճկունությունն է, որին հնարավոր է հասնել մի քանի ճանապարհով: Առաջինը դիվերսիֆիկացիան է, որի շնորհիվ կազմակերպությունը կարողանում է հարմարվել շրջակա միջավայրի փոփոխությանը: Մյուս ուղին աշխատակիցների ուսուցումն է՝ արտադրությունը ճկուն դարձնելու նպատակով: Դա հնարավորություն է տալիս կազմակերպությանն արագ արձագանքելու շուկայական տատանումներին և գնահատելու կառավարչական այլ ընտրանքները:

Մրցակցային ռազմավարության մշակման նպատակն է նաև սահմանել կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը: Հայտնի է, որ կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը կարելի է որոշել հետևյալ մոտեցումներով.

1. ներքին, որը սահմանվում է կազմակերպության փորձի և աշխատակիցների կարծիքի հիման վրա,

2. արտաքին, որը սահմանվում է մրցակիցների հետ համեմատությամբ,

3. Նորմատիվային, որը սահմանվում է փորձագետների մրցակիցների կարծիքով:

Այսպիսով՝ կազմակերպությունը, բացահայտելով իր ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություն է ստանում հասնելու մրցակցային առավելության:

Ռազմավարական կարողությունը գոյություն ունեցող միջոցների և հնարավորությունների ամբողջություն է, որի շնորհիվ մշակվում և իրացվում է կազմակերպության ռազմավարությունը:

Որոշ տնտեսագետներ կարծում են, որ «ձեռնարկության կարողություններ» հասկացությունը վերացական է: Դրանց սահմաններն անորոշ են, գործոնները՝ անհայտ, իսկ ազդեցությունը՝ միջինացված: Սակայն այն կոնկրետ հասկացություն է, քանի որ ցանկացած կառավարչական որոշում կարող է դրական կամ բացասական ազդեցություն ունենալ ձեռնարկության վրա»[1]:

Ակնհայտ է, որ ռազմավարական կարողություն ձևավորում են ոչ միայն միջոցները, որոնք կարող են փոխվել ռազմավարական որոշումների իրացման ժամանակ, այլ նաև պայմանները, որոնցում կազմակերպության գործընթացն իրագործվում է և փոփոխվում: Այսպես, եթե կազմակերպության գործունեությունն իրականացվում է անվճարունակության պայմաններում, ապա ռազմավարական միջոցներն են դառնում փողը և այլ բարձր լիկվիդային միջոցներ, իսկ նորմալ տնտեսական գործունեության պայմաններում ռազմավարական են համարվում այն բոլոր միջոցները, որոնք կազմակերպությանը հնարավորություն են ընձեռում ստանալու մրցակցային առավելություն:

Մեր կարծիքով, մրցակցային ռազմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կազմակերպության տնտեսական կարողության ցուցանիշներին, քանզի այդ ցուցանիշներն են բնութագրում նրա դիրքը և տեղը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Այդ ցուցանիշների թվին են պատկանում կազմակերպության ակտիվները, վաճառքի ծավալը, համախառն կամ զուտ շահույթի ցուցանիշը, զբաղվածության մակարդակը, գիտատեխնիկական ներուժը և այլն: Վերջիններիս արժեքային արտահայտությունները «Աշտարակ կաթ» ՓԲԸ, «Արմավիր» ՍՊԸ, «Բոնիլադ» ՍՊԸ, «Չանախ» ՍՊԸ, «Բիոկաթ» ՍՊԸ օրինակով համակարգված են աղյուսակ 2.2-ում, որի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ընկերությունների մրցակցային ռազմավարության գործընթացում կատարվող փոփոխություններին և արտաքին ու ներքին միջավայրերի ազդեցություններին դիմակայելու ուղիները:

Հարկ է նշել, որ արդյունավետ մրցակցային ռազմավարության մշակման փուլ է ապրանքային ռազմավարության իրականացումը: Հայտնի է, որ ցանկացած ապրանք իր հատկություններով պետք է բավարարի սպառողների արտադրական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական և այլ պահանջմունքները, ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ կոլեկտիվ պահանջմունքների բավարարումն իրականացվում է մրցակցային պայմաններում: Դա նշանակում է, որ արտադրանքի իրացման ժամանակ սպառողը դիտարկում է տվյալ արտադրանքի սպառողական հատկությունների ամբողջությունը:

[1] Տես՝ Клейнер Г. Б., Тамбовцев В. Л., Качалов Р. М. Предприятия в нестабильной экономической среде: риски, стратегия, безопасность – М.: 1997, էջ 93-94:

Տնտեսական պրակտիկայում առկա են ապրանքային ռազմավարության իրագործման հետևյալ այլընտրանքային տարբերակները.

- ապրանքների սպառողական հատկությունների ավելացում,
- թողարկվող արտադրանքի անվանացանկի և տեսականու ընդլայնում:
-

Աղյուսակ 2.2

Կազմակերպությունների տնտեսական կարողությունը բնութագրող հիմնական ցուցանիշները 2018թ. արդյունքներով (ըստ ընտրանքային հինգ ընկերությունների)

հ/հ	Ցուցանիշների անվանումը	Չ/մ	Կազմակերպությունները				
			«Աշտարակ կաթ» ՓԲԸ	«Արմավիր» ՍՊԸ	«Բոնիլատ» ՍՊԸ	«Չանախ» ՍՊԸ	«Բիոկաթ» ՍՊԸ
1	Թողարկված արտադրանքի ծավալը	հազ. դրամ	4840990	1966020	1615585	51377220	417503753
2	Իրացումից հասույթ	հազ. դրամ	480984	1966019	161584	513717900	417503750
3	Իրացված արտադրանքի ինքնարժեքը	հազ. դրամ	4421709	1792899	132585	495737770	375576000
4	Զուտ շահույթը	հազ. դրամ	335369	138538	23201	101499210	319450014
5	Իրացման շահութաբերությունը	%	8.6	8.8	17.9	23.1	9.9
6	Սեփական կապիտալի շահութաբերությունը	%	4.3	4.5	5.1	5.2	5.0
7	Ակտիվները	հազ. դրամ	3723834	1456310	117090	424560240	317148000
8	Գործարար ակտիվությունը	միավ.	1.3	1.35	1.38	1.21	1.31
9	Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերը	մակարդակը	0.91	0.91	0.82	0.965	0.90

10	Ապրանքային անվանացանկի ընտրությունը	միավ.	13	12	10	8	14
11	Բարձրորակ արտադրանքի տեսակարար կշիռը թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ	%	96.0	96.9	97.2	98.1	97.9
12	Արտադրական համակարգի արդյունավե-տությունը	միավ.	1.1	1.09	1.22	1.04	1.11
13	Ակտիվների շահութաբե-րությունը	%	9.0	9.5	19.8	2.4	10.0

Հաշվի առնելով ապրանքի (արտադրանքի) սպառողական հատկությունների ավելացման ռազմավարության մշակման միջազգային փորձը և սննդարդյունաբերության առանձնահատկությունները՝ մեր կողմից մշակվել է մրցակցային ռազմավարական մոտեցում, որը սննդարդյունաբերական կազմակերպություններում թողարկվող և իրացվող արտադրանքի վերաբերյալ առաջարկությունների մշակման համար կստեղծի նախադրյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն՝ նվազեցնելու ձեռնարկատիրական ռիսկը:

Այդ մոտեցման հիմքում ընկած է տնտեսական ցուցանիշների համախումբը, որոնք սահմանում են արտադրանքի մրցունակությունը դրա ձեռքբերման, օգտագործման (սպառման) ժամանակ:

Կազմակերպության մրցունակության գնահատականը շուկայում սպառողն իրականացնում է միջնորդավորված կերպով՝ տվյալ արտադրողի արտադրանքը գերադասելով նրա մրցակցի արտադրանքից: Կազմակերպության ընդհանրական շուկայական մրցակցությունը նրա արտադրանքների ընդհանրական մրցունակությունն է, հետևաբար մրցունակության գնահատումը հետաքրքրում է ապրանք արտադրողին և օգտակար է մրցակցային ռազմավարություն մշակելու ու լավագույն արդյունք ստանալու հարցում:

Այսպիսով՝ կազմակերպության մրցունակությունը բնութագրում է տվյալ կազմակերպության զարգացման գործընթացի առավելությունն իր մրցակիցներից, ինչպես սպառողների պահանջմունքի բավարարման մակարդակով, այնպես էլ արտադրատնտեսական գործունեության արդյունավետությամբ: Տվյալ բնորոշումից

հետևում է, որ կազմակերպության մրցունակությունն իր մեջ ներառում է ինչպես արտադրանքի (ծառայությունների) մրցունակության ընդհանրական ցուցանիշը, այնպես էլ գործունեության տնտեսական արդյունավետությունը:

Արտադրանքի մրցունակության մակարդակը անհրաժեշտ է դիտարկել կազմակերպության կողմից թողարկվող բոլոր արտադրատեսակների համար.

$$J = \sum J_i \cdot \varphi ,$$

որտեղ J_i-ն i-րդ արտադրանքի մրցունակությունն է, φ-ն որոշակի ժամանակահատվածում i-րդ արտադրանքի տեսակարար կշիռն է կազմակերպության կողմից թողարկվող ամբողջ արտադրանքի ծավալի մեջ:

Ինչ վերաբերում է երկրորդ բաղադրիչին, ապա հարկ է նշել, որ արտադրության արդյունավետության գնահատումը կարելի է բնութագրել արտադրված արդյունքի և ծախսերի հարաբերությամբ: Արդյունքները և ծախսերը չափվում են բնեղեն, աշխատանքային և արժեքային արտահայտությամբ: Արդյունքները հանդես են գալիս իբրև տարբեր ձևերով մրցունակ արտադրանքի ստեղծման, թողարկվող արտադրանքի ծավալի աճով պայմանավորված իրացումից հասույթ, նոր արտադրանքի քանակ:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր կազմակերպության գործունեության արդյունավետությունը որոշելիս կառուցվում է ցուցանիշների՝ իրենց հատուկ համակարգ՝ ըստ ունեցած տեղեկատվության և տնտեսական արդյունավետության բարձրացման խթանների:

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են կազմակերպության գործունեության արդյունավետությունը որոշող մասնավոր և ընդհանրացնող ցուցանիշներ: Ելնելով ցուցանիշների համակարգերի ձևավորումից՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. անհրաժեշտ է արդյունավետության մասնակի ցուցանիշներում ցույց տալ առանձին արտադրանքի ընթացիկ ծախսերը,

2.անհրաժեշտ է հաշվարկել կապիտալի ծախսերի արդյունավետության մասնակի ցուցանիշները առանձին արտադրական ստորաբաժանումների համար,

3.նպատակահարմար է ընտրել ընթացիկ ծախսերի արդյունավետությունն ընդհանրացնող ցուցանիշներ բոլոր արտադրատեսակների և կազմակերպության գործունեության տեսակների համար,

4. անհրաժեշտ է ձևակերպել արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշներ գույքի օգտագործման համար,

5. անհրաժեշտ է ճիշտ ընտրել արդյունավետության չափանիշը կամ կազմակերպության գործունեության արդյունավետության չափանիշը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ժամանակաշրջանի համար:

Մեր կարծիքով՝ նման չափանիշներ կարող են լինել ինչպես արտադրական համակարգերի արտադրողականությունը (արդյունավետությունը), այնպես էլ կազմակերպության զուտ շահույթը:

Ակնհայտ է, որ կազմակերպության մրցունակության վերլուծությունը ներառում է նաև ֆինանսական դրության ուսումնասիրությունը՝ ակտիվների կառուցվածքը, այն է՝

- բաժնետոմսերի շուկայական գինը,
- ներդրումային ռեսուրսները,
- դրամական հոսքերը,
- վաճառքի ծավալների հարաբերությունը օգտագործվող ակտիվների,
- հիմնական և շրջանառու կապիտալի հարաբերակցությունը,
- նոր ներդրումներից շահույթը,
- սեփականության չափը,
- շահաբաժինների մեծությունը,
- ֆինանսական թիվը և այլն:

Ցուցանիշների դիտարկված համախումբը բազմակողմանիորեն բնութագրում է արտադրական գործընթացի արդյունքները: Դրա հետ մեկտեղ, պրակտիկայում նշված ցուցանիշների կառավարումը նպատակահարմար է հանգեցնել մեկ ընդհանուր չափանիշի: Սակայն այդ չափանիշի ընտրությունը ներկայումս կապված է որոշակի դժվարությունների հետ, քանի որ լուծված չեն մի շարք տեսական և մեթոդական հարցեր:

Տնտեսական պրակտիկայում ո՛չ արտադրողականությունը, ո՛չ շահութաբերությունը և ո՛չ էլ ընդհանուր ծախսերի արդյունավետությունն առանձին վերցրած չեն բնութագրում արտադրության արդյունավետությունը, չնայած որ դրանք պրակտիկայում սերտ փոխկապակցված են, և մեկի աճը պայմանավորված է մյուսով: Մյուս կողմից՝ ձեռնարկության մրցակցային դիրքի բարելավումը շուկայական տնտեսության պայմաններում պահանջում է, որ այն իր տրամադրության տակ գտնվող պաշարներն արդյունավետ օգտագործի: Հետևաբար ձեռնարկության գործունեության արդյունավետության փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը գնահատելիս, կարծում ենք, նպատակահարմար է կիրառել արտադրության արդյունավետության ինտեգրալային ցուցանիշը, որը բնութագրվում է թողարկված արտադրանքի կամ մատուցված ծառայությունների ծավալի և ծախսված ռեսուրսների հարաբերությամբ: Նշված հարաբերությունը, որով հնարավոր է գնահատել կազմակերպության գործունեության արդյունավետությունը, բխում է արդյունա-

վետության բուն էությունից, որը հանգում է տրված ծախսերի դեպքում առավելագույն արդյունքի ստացմանը, որը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.[1]

$$J_{Э} = \frac{П_{\Sigma}}{З_{\Sigma}} \rightarrow \max,$$

որտեղ՝ $J_{Э}$ -ն արդյունավետության ինտեգրալային ցուցանիշն է, $П_{\Sigma}$ -ն ստացված արդյունքը, $З_{\Sigma}$ -ն տվյալ արդյունքն ապահովող տարատեսակ ընդհանրական ծախսերն են:

Համաձայն այս մոտեցման՝ արտադրության արդյունավետությունը կբարձրանա՝ ի հաշիվ աշխատանքի արտադրողականության, ֆոնդահատույցի, նյութահատույցի, արտադրանքի որակի բարձրացման և թողարկվող արտադրանքի վրա կատարված ծախսերի նվազման:

Կազմակերպության գործունեության արդյունավետության գնահատման համար մեր կողմից խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ բանաձևը[2].

$$J_{դ} = \frac{Q_{\Sigma}}{L + M + A}$$

որտեղ՝ Q_{Σ} -ն ապրանքային արտադրանքի ծավալն է կամ էլ զուտ շահույթի մեծությունը, L -ն՝ աշխատանքային ծախսումները, M -ն՝ նյութական ծախսումները, A -ն՝ տարեկան ամորտիզացիայի մեծությունը:

Կազմակերպության մրցունակությունը (արտադրության արդյունավետության մասով), համեմատած մոտակա մրցակցի հետ, կարելի է գնահատել ըստ արդյունավետության ինդեքսի[3], այսինքն՝

$$i = \frac{j_{դ}}{j_{մրց.}}$$

Առաջադրված մեթոդով մրցունակության գնահատման համար տեղեկատվական բազա են ձեռնարկության հաշվետվությունները:

Հարկ է նշել, որ մեթոդաբանական տեսակետից նպատակահարմար չէ կազմակերպության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշը որոշել կազմակերպության կողմից թողարկվող արտադրատեսակների ինդեքսների և գործունեության արդյունավետության ցուցանիշի արտադրյալով, քանի որ այդ ցուցանիշը գտնվում է կորելացիոն կապի մեջ:

Մեր կարծիքով, մեթոդաբանական տեսակետից կազմակերպության մրցունակությունը ընդհանուր տեսքով կարելի է նկարագրել հետևյալ կերպ[4].

---

[1] Տե՛ս Վ. Հ. Առաքելյան, Հ. Մ. Ղուլոյան, Գ. Ռ. Գրիգորյան, Ռ. Մ. Մարտիրոսյան, Որակի կառավարումը բիզնեսում (փորձ և հիմնախնդիրներ), «Նահապետ», Եր., 2014, էջ 84:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 95:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

$$I_{ը} = \beta_1 j_i + \beta_2 i_{ը}:$$

որտեղ j_i-ն ապրանքազանգվածի (կամ արտադրատեսակների) մրցունակության ինդեքսն է, $J_{Э}$-ն մոտական մրցակցի հետ համեմատած գործունեության արդյունավետության ինդեքսն է, β-ն՝ կախվածության գործակիցը:

Այսպիսով՝ մրցակցային ռազմավարության մոտեցումների մեկնաբանումը հնարավորություն է ընձեռում կազմակերպություններին՝ գնահատելու ստեղծվող իրավիճակները, որոնք կարող են առաջացնել ձեռնարկատիրական ռիսկեր, և դրանք հասցնել նվազագույնի, ինչն էլ իր հերթին կնպաստի տվյալ գործունեության ռիսկայնության նվազեցմանը:

Օգտագործված գրականություն

1. Առաքելյան Վ. Հ., Ղուլոյան Հ. Մ., Գրիգորյան Գ. Ռ., Մարտիրոսյան Ռ. Մ., Որակի կառավարումը բիզնեսում (փորձ և հիմնախնդիրներ), «Նահապետ», Եր., 2014:
2. Алексеева М. М. Планирование деятельности фирм. – М.: Финансы и статистика.- 1997
3. Кинг У., Криланд Д. Стратегическое планирование и хозяйственная политика. – М.: Прогресс
4. Клейнер Г. Б., Тамбовцев В. Л., Качалов Р. М. Предприятия в нестабильной экономической среде: риски, стратегия, безопасность – М.- 1997
5. Корлоф Б.. Деловая стратегия.- М.: Экономика.- 1991
6. Пипдур Дж. Путь к покупателю. М.: Прогресс.- 1991
7. Porter M. E. The Competitive of Notions – N.V.: The Free Press.- 1990

COMPETITION STRATEGY OF THE ORGANIZATION AS AN ENTREPRENEURSHIP RISK FACTOR

ARAKELYAN VALERI
PhD in Economics, Associate Professor,
GSU Lecturer
VARDANYAN SARGIS
PhD student, Yerevan State University

The article attempts to identify the specifics of the organization's competitive strategy development approaches, and then considers competition as a risk factor for entrepreneurship. The indicators of economic capacity of food production organizations have been studied, taking into account that these indicators characterize the position and role of organizations in both domestic and foreign markets. The authors developed and proposed an approach to evaluate the efficiency of the organizations' activities, which provides an opportunity to assess the competitiveness of the organizations (in terms of production efficiency) in comparison with the nearest competitor.

Keywords: market, competition, strategy, entrepreneurial risk, management, economic capacity, valuation, method, efficiency, factors.

КОНКУРЕНТНАЯ СТРАТЕГИЯ ОРГАНИЗАЦИИ, КАК ФАКТОР ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОГО РИСКА

АРАКЕЛЯН ВАЛЕРИЙ
Кандидат экономических наук, доцент,
Преподаватель ГГУ
ВАРДАНЯН САРГИС
Соискатель Ереванского государственного университета

В статье предпринята попытка раскрыть особенности подходов к разработке конкурентной стратегии организации, а в дальнейшем рассматривать конкуренцию как фактор бизнес-риска. Изучены показатели экономического потенциала организаций пищевой промышленности с учетом того, что эти показатели характеризуют положение и роль организаций как на внутреннем, так и на внешнем рынках. Авторами разработан и предложен подход к оценке эффективности деятельности организаций, который дает возможность оценить конкурентоспособность организаций (по эффективности производства) по сравнению с ближайшим конкурентом.

Ключевые слова: рынок, конкуренция, стратегия, предпринимательский риск, управление, экономический потенциал, оценка, метод, эффективность, факторы.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 08.10.2020թ.:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱԿՈԲ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
e-mail: hkhachatr@mail.ru
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԻՆԱ
ՀԱԱՀ դասախոս
e-mail: ninavardanyan@mail.ru

Կրթության համակարգը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, հասարակության բարեկեցության բարելավման և սոցիալական ապահովության բարձրացման համար:

Ուսումնասիրության նպատակն է՝ հետազոտության և վերլուծության հիման վրա բացահայտել բարձրագույն կրթության համակարգի արդիականացման խնդիրները, նախանշել բարելավման ուղիներ, որոնք կարող են ապահովել համակարգի հետագա շարունակական զարգացումը:


Վերլուծության արդյունքում պարզեցինք, որ եթե ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածության մակարդակը մնա նույնը, և եթե Հայաստանում շարունակվեն միգրացիայի, ծնելիության և մանկական մահացության միտումները, ապա բարձրագույն կրթության պահանջարկի անկման միտումը կշարունակվի:

Բանալի բառեր՝ *Բարձրագույն կրթություն, ֆինանսավորում, պահանջարկ, կրթական ծառայությունների շուկա, մասնագիտական կրթության շուկա, միգրացիա, ծնելիություն, մարդկային ռեսուրսներ:*

Յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, հասարակության բարեկեցության բարձրացման և սոցիալական անվտանգության բարձրացման համար կարևոր և առանցքային նշանակություն ունի կրթական համակարգը: Բարձրագույն կրթության զարգացումը կենսական նշանակություն ունի հատկապես բնական պաշարներով ոչ հարուստ, բարդ աշխարհաքաղաքական խնդիրներ ունեցող Հայաստանի համար: ՀՀ բարձրագույն կրթության ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը տարեցտարի հետևողականորեն կրճատվում է: Դրան նպաստող գործոններից են ՀՀ-ում միգ-


րացիայի տեմպերը, ավագ դպրոցներում աշակերտների ներգրավվածության ցածր մակարդակը, որոնց դինամիկան ներկայացված է գծապատկեր 1-ում:[1]

Գծապատկեր 1. ՀՀ ավագ դպրոցներում աշակերտների ներգրավվածության, միգրացիայի տեմպերի և բուհերում սովորող ուսանողների թվաքանակի դինամիկան




Վերոնշյալ ցուցանիշների միջև փոխադարձ կապը պարզաբանելու արդյունքում պարզ է դառնում, որ ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածության մակարդակի 1 տոկոսով ավելացումը բերել է բուհերում սովորողների թվաքանակի 1482-ով ավելացման: Կապը այս ցուցանիշների միջև ուժեղ է /r_{xy}=0.873/, և բոլոր մյուս հավասար պայմաններում բուհերում սովորողների թվաքանակի փոփոխությունը կամ վարիացիան 76.2 տոկոսով պայմանավորված է ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածության մակարդակի վարիացիայով /գծապատկեր 2/: Մյուս կողմից, միգրացիայի ցուցանիշի ավելացման արդյունքում սովորողների թվաքանակը կրճատվել է 3651-ով: Կապը ուժեղ է /r_{xy}=0.8/, և բոլոր մյուս հավասար պայմաններում սովորողների թվաքանակի վարիացիան կամ փոփոխությունը 64.3 տոկոսով պայմանավորված է եղել միգրացիայի վարիացիայով /գծապատկեր 3/: Հատկանշական է, որ բուհերում սովորողների թվաքանակի վարիացիան 47,32 տոկոսով պայմանավորված է եղել ՀՀ-ում ծնվածների թվաքանակի ավելացմամբ /գծապատկեր 4/: Մոդելները վիճակագրորեն նշանակալի են:


[1]https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__28%20Population/PS-pp-5-2019.px/?rxid=7e30e348-6499-4d83-bd6c-7291bf6c4279



Գծապատկեր 2. Ավագ դպրոցում աշակերտների ընդգրկվածության մակարդակի ազդեցությունը սովորողների թվաքանակի վրա




Գծապատկեր 3. Սովորողների թվաքանակի վրա միգրացիայի ազդեցությունը



Գծապատկեր 4. Սովորողների թվաքանակի վրա ծնվածների թվաքանակի ազդեցությունը

Ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածության մակարդակի նվազումը, ինչի արդյունքում կրճատվել է բուհ ընդունվողների թվաքանակը, հիմնականում կարելի է կապել ավագ դպրոցում կրթության որակի ապահովման չբավարարող մակարդակի հետ: Սրա ազդեցությամբ 2011-2019 ուսումնական տարիներին ընդունելության արդյունքներով թափուր մնացող կրթական տեղերի թիվը հետևողականորեն աճել է /գծապատկեր 5/:




Գծապատկեր 5. Բուհերին հատկացված և թափուր մնացած վճարովի հիմունքներով կրթական տեղերի շարժը[1]

Այսինքն՝ եթե ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածության մակարդակը մնա նույն տիրույթում, պահպանվեն նաև ՀՀ-ում միգրացիայի տեմպերը, մյուս կողմից, հաշվի առնելով ծնելիության և մանկամահացության ցուցանիշների միտումները, կարծում ենք՝ բարձրագույն կրթության պահանջարկի անկման միտումը դեռ կշարունակվի:

Չնայած ՀՀ-ում կրթության ոլորտի բարեփոխումներին, որոնք հնարավորություն տվեցին որոշակիորեն լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար, այդուհանդերձ կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից. առաջ են եկել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան: Տարեցտարի ավելանում են կրթության համար նախատեսված ծախսերը /գծապատկեր 6/, սակայն բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արժևորվող ձեռքբերումների բացակայության պատճառով կրթության համակարգը հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է բուհերի հեղինակությունը, վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ: Այսօր կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը, որը պետք է ապահովի համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ընդունակություններին և ձգտումներին համապատասխան կրթություն ստանալու հավասար հնարավորությունը:


[1]https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__22%20Education/PS-ED-11-2018.px/?rxid=1a0ea56e-56f8-462e-8299-32c60410a491



Գծապատկեր 6. Կրթական ծառայությունների թողարկումը և տեսակարար կշիռը համախառն ծառայությունների ծավալում

Տարեցտարի բարձրացող ուսման վճարները կրճատում են ցածր կենսամակարդակ ունեցող խավի կրթություն ստանալու հավանականությունը: Մյուս կողմից՝ Հայաստանն ունի բացառիկ մարդկային պոտենցիալ բարձրագույն կրթության ոլորտում: Սա ակնհայտ է դառնում, երբ տեսնում ես, թե քանի ուսանող, դասախոս և գիտաշխատող է ամեն տարի հեռանում ՀՀ-ից ու զգալի հաջողությունների հասնում այլ երկրներում: Ցավոք, այդ տաղանդավոր կադրերը բավարար չափով չեն կարողանում իրենց տեղը գտնել հայրենիքում: Աշխատուժի պահանջարկը և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը ներկայացված է գծապատկեր 7-ում:

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում այսօր գործող ուսուցման մոդելի առանձնահատկություններից է այն, որ շրջանավարտների զգալի մասը բավարար չափով պատրաստ չէ մասնագիտական գործունեությանը: Նրանցից շատերն անհրաժեշտ գիտելիքներ չեն ունենում Հայաստանի շուկայում իրենց մասնագիտությամբ աշխատելու համար: Մյուս կողմից՝ ՀՀ գործատուները նույնպես թերահավատորեն են վերաբերվում հայաստանյան բուհերն ավարտած մասնագետների կարողություններին: Այս խնդիրն ակնհայտ է հատկապես տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների մոտ, քանի որ գործատուն նախընտրում է արտասահմանում կրթված կամ վերապատրաստված մասնագետին վճարել կրկնակի, իսկ հայաստանյան բուհն ավարտած անձը ստիպված է իր մասնագիտական կարիերան սկսել շարքային բանվորությունից՝ այն ակնկալիքով, որ գուցե մի քանի տարի անց իրեն ևս նման հնարավորություն կընձեռվի: Հարցը միայն որակյալ մասնագետ թողարկելու մեջ չէ:



Գծապատկեր 7. Աշխատուժի պահանջարկը և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը տոկոսներով, նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ[1]

Բոլոնիայի հռչակագրի ստորագրումից հետո՝ 2005թ.-ից Հայաստանում ուսում ստացած մարդիկ հնարավորություն ստացան աշխատելու իրենց մասնագիտություններով նաև Եվրոպայում: Բայց դա անելու համար նրանք պետք է ունենան տվյալ երկրի ստանդարտներին համապատասխան մասնագիտական կրթություն: Նշենք, որ նոր համակարգին անցնելու արդյունքում բուհերում համեմատաբար կրճատվել է լսարանային ուսուցման ժամաքանակը, դրա փոխարեն ավելացվել է արտալսարանային ուսուցման համար նախատեսված ժամաքանակը: Փաստորեն, այս համակարգն ավելի շատ մղում է ինքնակրթության: Մեր կարծիքով, սա դրական փոփոխություն չէ, քանի որ ուսուցման համար պարզապես անիրական է ուսանողից պահանջել, որ նա ամեն առարկային տրամադրի արտալսարանային մոտ 58 ժամ, ինչը դասընթացների լսարանային ժամաքանակից ավել է մոտ 2 անգամ:

Փոփոխման է ենթարկվել նաև գնահատման կարգը. գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով. գնահատվում են ինքնուրույն աշխատանքները, ուսանողի հաճախելիությունը ու լսարանում ուսանողի ցուցաբերած ակտիվությունը: Այս նոր համակարգի շնորհիվ ուսումնական ծրագրերը դառնում են առավել ճկուն, ուսանողները ձեռք են բերում դասընթացների լայն ընտրության հնարավորություն: Սակայն այստեղ բացասական է այն փաստը, որ չնայած բացակայությունները լրացվում են, այնուհանդերձ կրեդիտները հաշվարկելիս այդ լրացումները հաշվի չեն առնվում: Մեր կարծիքով, Բոլոնիայի հռչակագիրն ամենևին էլ չի նախատեսում որակավորման մեկ միասնական չափանիշի ստեղծում: Ընդհակառակը, յուրաքանչյուր երկիր պետք է ունենա որակավորման իր ազգային հենքը, իսկ ընդհանուր պետք է լինեն այդ հենքերի բնութագրիչները, որոնք էլ հնարավորություն

[1] https://www.armstat.am/file/doc/99516743.pdf

կտան ճիշտ հասկանալու և գնահատելու որակավորումները: Անշուշտ, բարեփոխումները և դրանց հնարավոր հետևանքները դիտարկելիս օգտակար է ուսումնասիրել նմանատիպ երկրների փորձը, որտեղ արդեն կատարվել են փոփոխություններ: Որպես օրինակ կարող է ծառայել Վրաստանը: Վրացական բարեփոխումների համակարգը փորձ է արել որդեգրելու գիտության և կրթության կազմակերպման անգլոսաքսոնական մոդելի ամերիկյան տարբերակը: Ամերիկյան համակարգի արդյունավետության նախապայմաններից մեկն այն է, որ այն հիմնվում է մասնավոր նախաձեռնության և մասնավոր ֆինանսավորման վրա: Ամերիկյան լավագույն համալսարանները և գիտահետազոտական կենտրոնները մասնավոր են, և անգամ պետական կազմակերպություններում մասնավոր ներդրումներն ունեն կարևոր նշանակություն: Իսկ եկամուտի մեծ մասը կազմում են ոչ թե հենց համալսարանների վաստակած գումարները, այլ բարերարների նվիրատվությունները: Այս համակարգի հիմքում ընկած է երկու հիմնական գործոն. առաջինը՝ Միացյալ Նահանգներում գործում է բարերարության բավականին զարգացած ավանդույթ, որի հիմքում գլխավորապես սեփական ուժերի և ոչ պետական միջամտության վրա հույս դնելու փորձն է: Երկրորդ գործոնն է բարեգործության համար պայմաններ ստեղծող ամերիկյան հարկային օրենսդրությունը: Փաստացի, խոշոր հարկատուներին վերապահվում է ընտրության հնարավորություն. իրենց հարկերի տնօրինումը հանձնել պետությանը կամ ինքնուրույն զբաղվել այս գործով՝ համապատասխան գումարը ուղղակիորեն փոխանցելով հասարակական կարիքների բավարարմանը: Զարմանալի չէ, որ շատերն ընտրում են երկրորդ տարբերակը:

ՀՀ-ում պետական բուհերի մուտքերի մոտ 75 տոկոսը կատարվում է ի հաշիվ ուսման վարձերի, պետական բյուջեից մուտքերը չեն գերազանցում 30 տոկոսը: Արդյունքում որակի մասին խոսք լինել չի կարող, քանի որ յուրաքանչյուր բուհ ուսանողների թվաքանակի համալրման խնդիր է ունենում:

Հատկանշական է, որ Եվրոպական երկրներում, այդ թվում և հետխորհրդային, և՛ կրթությունը, և՛ գիտական հետազոտությունները հիմնականում ֆինանսավորվում են պետության կողմից: Սա, իհարկե, որոշիչ գործոն է: Անգլոսաքսոնական երկրներում, որտեղ համալսարանները մասնավոր են, բարձրագույն կրթությունը վճարովի է, իսկ եվրոպական երկրներում հիմնականում անվճար է, և միայն խորհրդանշական գումար է հատկացվում կազմակերպչական ծախսերի համար:

ԱՄՆ-ում վճարովի համակարգի ծախսերը մեծապես փոխհատուցվում են շնորհիվ լավ զարգացած կրթաթոշակային համակարգի: Կրթաթոշակները տրամադրվում են ինչպես համալսարանների, այնպես էլ բազմաթիվ բարեգործական կազմակերպությունների կողմից, ինչը թույլ է տալիս ընդունակ ուսանողներին կրթություն ստանալ՝

անկախ նյութական դրությունից: Վրաստանում այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում. կրթության և գիտության նախարարության որոշման համաձայն՝ առավել ընդունակ ուսանողների ուսման համար վճարում է պետությունը:

ՀՀ-ում էլ կարծես գործում է միջանկյալ մի համակարգ. ուսանողների մի մասն ընդունվում է անվճար, մյուս մասն էլ՝ վճարովի ուսուցման համակարգ: Ուսման ընթացքում բարձր առաջադիմության դեպքում վճարովի համակարգում սովորողները հնարավորություն են ստանում անցնելու անվճար համակարգի: Այս համակարգը հաստատվել է զուտ պետական նկատառումներով, որպեսզի նվազեցվեն համալսարանների համար ծախսվող պետական գումարները՝ այս ծախսերի մի մասը փոխանցելով համալսարաններին:

Այնուհանդերձ, բարձրագույն կրթությունը մատչելի չէ միջին եկամուտ ունեցող ընտանիքների երեխաների համար՝ անկախ վերջիններիս ընդունակություններից: Էապես կրճատվում է բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց թիվը, կատարվում է բարձրագույն կրթության էլիտարացում, ինչը անխուսափելիորեն հանգեցնում է հասարակության բևեռացմանը: Այս անցման առավելություններից կարելի է համարել համալսարանների ֆինանսավորման բարելավումը, ներառյալ դասախոսների աշխատավարձերի բարձրացումը:

Հիմք ընդունելով մեր կողմից կատարված ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք.

1. բուհերում թափուր մնացած տեղերի կրճատման նպատակով կատարելագործել բուհ ընդունվելու մեխանիզմները,

2. ՀՀ-ում կրթության պահանջարկի մեծացման և կրթությունը գրավիչ դարձնելու նպատակով պարբերաբար իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում՝ միջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Փոխել ուսումնանյութական բազան, բուհերում վերանայել մասնագիտությունների ցանկը, քանի որ շատ դեպքերում այն չի համապատասխանում շուկայի ներկայիս պահանջներին:

3. Կիրառել կրթական համակարգի այնպիսի մոդել, ըստ որի՝ բարձրագույն կրթությունը վճարովի է, և վարձավճարը կարելի է փոխհատուցել լավ զարգացած կրթաթոշակային համակարգի հաշվին: Կրթաթոշակները կարող են տրամադրվել ինչպես համալսարանների, այնպես էլ բազմաթիվ բարեգործական կազմակերպությունների կողմից՝ դրանց տրամադրելով հարկային որոշակի արտոնություններ: Դա թույլ կտա ընդունակ ուսանողներին կրթություն ստանալ՝ անկախ նյութական ապահովվածությունից:

4. Խորացնել բուհ-գործատու համագործակցությունը, գործատուներին ներգրավվել կրթական ծրագրերի իրականացման հարցերում, ավելացնել գործատուների հետ իրականացվող համատեղ ծրագրերի, պրակտիկաների, գիտահետազոտական աշխատանքների ծավալները: Վերջինս որոշ չափով կօգնի ուսանողին բուհն ավարտելուց հետո արագ աշխատանքի անցնել գործատուներից որևէ մեկի մոտ, մյուս կողմից կխթանի նաև գիտահետազոտական աշխատանքներ կատարելը:

5. Կրթության հանդեպ պահանջարկի բարձրացման նպատակով առաջարկում ենք խթանել ավագ դպրոցներում աշակերտների ներգրավվածության մակարդակի բարձրացումը կրթության որակի բարձրացման միջոցով:

Օգտագործված գրականություն

1. Бизнес и высшее образование в условиях перехода к рыночной экономике, Тез. Докл./Алтай ГТУ, 1997.

2. Быченко Ю. Г., Важнейший показатель человеческого капитала //Человеческие ресурсы, 2001, №3.

3. Галаган А. И., Анализ преподавательского, вспомогательного и административного персонала в системах образования зарубежных стран // Социально-гуманитарные знания, N 5, 2010, с. 45.

STUDYING THE DEMAND FOR HIGHER EDUCATION AND WAYS TO IMPROVE IT

KHACHATRYAN HAKOB
PhD in Economics, Associate Professor,
GSU Lecturer
VARDANYAN NINA
ANAU Lecturer

The education system is key to the socio-economic development of each country, to improve the welfare of society and increase social security.

The purpose of the study is to identify the problems of modernization of the higher education system based on research and analysis, to outline improvement paths that can ensure further continuous development of the system. As a result of the analysis, we found that if the level of enrollment of students in high schools remains at the same level, and the trends in migration, fertility and infant mortality in Armenia continue, the downward trend in demand for higher education will continue.

Keywords: *higher education, financing, demand, educational services market, vocational education market, migration, birth rate, human resources.*

ИЗУЧЕНИЕ СПРОСА НА ВЫСШЕЕ ОБРАЗОВАНИЕ И ПУТИ ЕГО УЛУЧШЕНИЯ

ХАЧАТРЯН АКОБ
Кандидат экономических наук, доцент,
Преподаватель ГГУ
ВАРДАНЯН НИНА
Преподаватель НАУА

Система образования имеет ключевое значение для социально-экономического развития каждой страны, для повышения благосостояния общества и повышения социального обеспечения.

Цель исследования - выявить проблемы модернизации системы высшего образования на основе исследований и анализа, наметить пути совершенствования, которые могут обеспечить дальнейшее непрерывное развитие системы. В результате анализа мы обнаружили, что если уровень зачисления учащихся в старшие школы останется на том же уровне, а тенденции миграции, рождаемости и младенческой смертности в Армении сохранятся, то тенденция к снижению спроса на высшее образование сохранится.

Ключевые слова: *высшее образование, финансирование, спрос, рынок образовательных услуг, рынок профессионального образования, миграция, рождаемость, кадровый потенциал.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 17.09.2020թ.:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ

ԹՈՐՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ
Սևանի զբոսաշրջության գրասենյակի պատասխանատու,
ԳՊՀ դասախոս
e-mail: david_levonich@mail.ru

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության բարելավումն ու վիճակագրական ստույգ տվյալների վրա հիմնվող բարձրորակ հետազոտությունն ու վերլուծությունները դարձել են պետական քաղաքականության հիմնական խնդիրները: Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը վարվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից: 2015 թվականից սկսած՝ լայն զբոսաշրջային վիճակագրություն է վարվում նաև Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակի կողմից, ինչի արդյունքում ամեն տարի վեր են հանվում զբոսաշրջությանը վերաբերող խնդիրներ:

Հոդվածում ցույց է տրվում նաև Սևանի թերակղզու տարածքում զբոսաշրջային ակտիվ հոսքերի աճող տենդենցն ու իր թողած դրական ազդեցությունը:

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, զբոսաշրջիկ, զբոսաշրջային վիճակագրություն, զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակ:*

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության» մասին ՀՀ օրենքի՝ զբոսաշրջության վիճակագրության բարելավումը և ստույգ վիճակագրական տվյալների հիման վրա բարձրորակ հետազոտությունների ու վերլուծությունների ապահովումը ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական խնդիրներից են:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը վարվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից: Թե՛ ներգնա, թե՛ արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսանում սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված, Հայաստանի Հանրապետություն ժամանողների և հանրապետությունից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Թերևս մինչ այժմ զբոսաշրջության վիճակագրության մեջ արձանագրելով անբավարար ճշգրտություն՝ ՀՀ Կառավարության՝ 2019 թվականի ապրիլի 12-ի N 14 արձանագրային որոշման հիման վրա հավանություն է տրվել ՀՀ սահմանային անցակետերում առավել ճշգրիտ համակարգի ներդրման միջոցառումներին, որի արդյունքում կունենանք ամբողջական տվյալներ Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակի,

սեռի, տարիքի, քաղաքացիության, այցի տևողության, կրկնվող այցելությունների քանակի, սահմանային անցման կետերի վերաբերյալ:

Այս ամենին զուգահեռ, դեռևս 2015 թվականից վիճակագրություն է վարվում նաև Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակի կողմից:

Հոդվածում կփորձենք համադրության կարգով ցույց տալ երկու կառույցներից ստացված վերջին տարիների վիճակագրական տվյալները:

Ըստ Միավորված ազգերի կազմակերպության Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) տվյալների՝ 2019 թվականին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը 2018 թվականի համեմատ աճել է 4 տոկոսով՝ հասնելով գրեթե մեկ ու կես միլիարդի:

Նույն ժամանակահատվածի համար, ըստ ՀՀ վիճակագրության կոմիտեի տվյալների, Հայաստանի Հանրապետությունում աճը կազմել է 14,7 տոկոս:

Դիտարկելով արդեն Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակի վիճակագրական տվյալները՝ 2018 և 2019 թվականների համադրությամբ՝ Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների թվի աճը կազմել է 17.27 տոկոս:

Ըստ ՀՀ վիճակագրության կոմիտեի տվյալների՝ ներկայացնում ենք վերջին հինգ տարիներին Հայաստանի Հանրապետություն այցելած զբոսաշրջիկների տվյալներն աղյուսակի տեսքով.[1]

Աղյուսակ 1.

2015	2016	2017	2018	2019
1,192,119	**1,259,657**	**1,495,779**	**1,651,782**	**1,894,377**

Երկրորդ աղյուսակում ներկայացվում են Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների տվյալները:[2]

Աղյուսակ2.

2015	2016	2017	2018	2019
21,527	**32,878**	**83,044**	**131,229**	**158,612**

Ըստ երկու աղյուսակների տվյալների՝ ներկայացնում ենք, թե Հայաստանի Հանրապետություն ժամանած զբոսաշրջիկների քանի տոկոսն է այցելել Սևանի թերակղզի, այսպես՝ 2015 թվականին ընդհանուր ժամանածների 1,80 տոկոսը, 2016 թվականին՝ 2,61 տոկոսը, 2017 թվականին՝ 5,55 տոկոսը, 2018 թվականին՝ 7,94 տո-

[1]ՀՀ Վիճակագրության կոմիտեի տվյալները վերջին տարիների ընթացքում ՀՀ ժամանած զբոսաշրջիկների վերաբերյալ:

[2]Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2015, 2016, 2017, 2018, 2019 թվականների տարեկան հաշվետվություն:

կոսը և արդեն 2019 թվականին՝ 8,37 տոկոսը: Տոկոսներն իհարկե ավելի բարձր կլինեին, եթե Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակը կարողանար գործունեություն ծավալել տարեկան և ոչ թե սեզոնային կտրվածքով: Չնայած սեզոնայնությանն ու ըստ դրա ստացված տվյալներին՝ այնուամենայնիվ ակնհայտ է, որ Սևանի թերակղզին տարեցտարի ավելի գրավիչ է դառնում զբոսաշրջիկների համար՝ հաշվեկշռում ունենալով թերևս չլուծված և շուտափույթ լուծումներ պահանջող բազմաթիվ զբոսաշրջային խնդիրներ:

Սևանի զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակում վերջին հինգ տարիների ընթացքում հավաքվում և խմբագրվում են զբոսաշրջիկների կողմից ներկայացվող խնդիրներ, ընդ որում կան ինչպես նոր, այնպես էլ կրկնվող խնդիրներ: Առանձնացնենք կարևոր և կրկնվող խնդիրներից երկուսը:[1]

1) Սևանի ափին նկատելիորեն պակաս են հյուրանոցներն ու հյուրանոցային համալիրները, իսկ առաջարկվող տնակային տնտեսությունները կա'մ բավականին հին են, կա'մ էլ բավականին թանկ այդ ձևաչափով հյուրընկալություն կազմակերպելու համար:

Բացատրություն-մեկնաբանություն: Եթե առաջիկա տարիներին հյուրընկալությունը շարունակվի նույն օբյեկտներում, նույն գներով և նույն սերվիսով, ապա անշուշտ կորցնելու եք և' հին, և' ենթադրյալ նոր հաճախորդներին:

Խորհուրդ և առաջարկություն: Դրական ազդեցություն կթողնի Սևանա լճի ակտիվ զբոսաշրջային գոտում 4 և 5 աստղանի մեկական, 2 և 3 աստղանի չորս կամ հինգ հյուրանոցների կառուցումը:

Տնակային տնտեսություններն էլ պետք է իրենց հերթին արդիականացնեն իրենց տնակները՝ համապատասխանեցնելով ժամանակակից չափորոշիչներին:

Այսպիսով՝ Սևանում հնարավոր կլինի հյուրընկալել ֆինանսական ցանկացած հնարավորություն ունեցող զբոսաշրջիկի: Նշենք նաև, որ այս խնդիրն ունի ամենամյա կրկնվող բնույթ, և միայն 2019 թվականի զբոսաշրջային սեզոնի ընթացքում գրասենյակում հավաքագրվել է շուրջ 1581 անգամ: Եթե արտահայտենք տոկոսային համադրությամբ, կստացվի, որ 2019 թվականի զբոսաշրջային սեզոնի ընթացքում գրասենյակ է դիմել 4044 զբոսաշրջիկ, և դիմածների 39,09 տոկոսը հարկ է համարել բարձրաձայնել տվյալ խնդրի շուրջ:

Անդրադառնանք երկրորդ կարևոր և դարձյալ կրկնվող խնդրին:

2) Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետությունն օտարազգի զբոսաշրջիկների համար հայտնի է առավելապես պատմամշակութային հարուստ ժառանգությամբ, և երբ Հայաստանի տարածքում զբոսաշրջիկները հրաժարվում են օգտվել

[1]Տե'ս նույնը:

զբոսաշրջային վճարովի տարբեր ծառայություններ մատուցող տուր-օպերատորներից, բաց է մնում եկեղեցիների մասին տեղեկատվական բուկլետների առկայությունն իրենց հասանելի լեզուներով: Այլընտրանք է համացանցում եղած տեղեկատվությունը, որն իհարկե շատ դեպքերում ճշգրիտ չէ, երբեմն էլ՝ նույնիսկ իրարամերժ: Հետևաբար հնչում են զբոսաշրջիկների տեղին գանգատները, որոնք էլ որոշ բացասական երանգներով հետագայում վերածևակերպվում են որպես թերություն, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև որպես կեղծ գովազդ երկրի մասին: 2019 թվականի ընթացքում տվյալ խնդրի մասին բարձրաձայնել է զբոսաշրջիկների 41,71 տոկոսը:

2018 և 2019 թվականներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների տվյալներն ըստ երկրների[1]
Ընտրված է աղյուսակի սկզբնական 30 երկրների ցանկը

Աղյուսակ3.

Հ/Հ	Ե Ր Կ Ի Ր Ը	2018 թվականին	2019 թվականին
1.	ՌՈՒՍԱՍՏԱՆ	684,013	855,612
2.	ՎՐԱՍՏԱՆ	314,341	344,607
3.	ԻՐԱՆ	160,645	160,676
4.	ԱՄՆ	53,744	63,175
5.	ՂԱԶԱԽՍՏԱՆ	12,981	39,882
6.	ԳԵՐՄԱՆԻԱ	28,655	39,690
7.	ՀՆԴԿԱՍՏԱՆ	31,213	38,735
8.	ՈՒԿՐԱԻՆԱ	32,412	36,125
9.	ՖՐԱՆՍԻԱ	27,651	32,397
10.	ՖԻԼԻՊԻՆՆԵՐ	20,363	20,262
11.	ԼԵՀԱՍՏԱՆ	15,397	17,134
12.	ՉԻՆԱՍՏԱՆ	9189	15,550
13.	ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ	11,898	14,430
14.	ԻՏԱԼԻԱ	10,802	12,581
15.	ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ	10,873	12,515
16.	ԼԻԲԱՆԱՆ	11,491	12,244
17.	ՏԱՋԻԿՍՏԱՆ	10,649	11,747
18.	ԱՄԷ	11,901	11,028
19.	ԲԵԼԳԻԱ	8223	10,181
20.	ԲԵԼԱՌՈՒՍ	8656	10,104
21.	ՈՒԶԲԵԿՍՏԱՆ	5228	9630

[1]ՀՀ Վիճակագրության կոմիտեի տվյալները 2018 և 2019 թվականների ընթացքում ՀՀ ժամանած զբոսաշրջիկների վերաբերյալ:

22.	ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ	6947	8970
23.	ԻՍՊԱՆԻԱ	6922	8259
24.	ԿԱՆԱԴԱ	6468	7314
25.	ԻՍՐԱՅԵԼ	6319	7072
26.	ՇՎԵԴԻԱ	4782	6740
27.	ԱՎՍՏՐԻԱ	5202	5865
28.	ԱՎՍՏՐԱԼԻԱ	4263	5717
29.	ԻՐԱՔ	5106	5602
30.	ՇՎԵՅՑԱՐԻԱ	4782	5561

Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների վիճակագրությունն ըստ պետությունների և վերջին 5 տարիների աճի տատանումների[1]
Ընտրված է աղյուսակի սկզբնական 30 երկրների ցանկը

Աղյուսակ4

N	Ե Ր Կ Ի Ր Ը	2015	2016	2017	2018	2019
1.	ԳԵՐՄԱՆԻԱ	496	1003	2749	8216	16.808
2.	ՖՐԱՆՍԻԱ	2217	3127	5637	10.989	15.497
3.	ԼԵՀԱՍՏԱՆ	2216	3944	7387	11.075	12.950
4.	ՌՈՒՍԱՍՏԱՆ	1473	1108	4307	7520	12.829
5.	ԻՏԱԼԻԱ	482	1202	4019	7164	10.761
6.	ՉԻՆԱՍՏԱՆ	259	416	1768	4730	8142
7.	ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ	-	90	347	1291	4875
8.	ԱՄՆ	78	704	3088	5949	4228
9.	ԻՐԱՆ	5803	7081	16.156	1823	3759
10.	ԻՍՊԱՆԻԱ	57	435	1685	3356	3749
11.	ԱՎՍՏՐԱԼԻԱ	33	138	609	2680	3253
12.	ԿԱՆԱԴԱ	208	182	724	2973	2964
13.	ԲԵԼԳԻԱ	45	934	1989	4187	2606
14.	ՀՆԴԿԱՍՏԱՆ	72	291	1957	3624	2555
15.	ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ	82	112	501	2469	1866
16.	ՉԵԽԻԱ	97	1019	2954	3558	1799
17.	ԱՄԷ	-	-	-	964	1527
18.	ՇՎԵՅՑԱՐԻԱ	35	356	502	2077	1303
19.	ՃԱՊՈՆԻԱ	22	379	520	1724	1149
20.	ԼԻԲԱՆԱՆ	-	-	908	3092	1037

[1]Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի՝ 2015, 2016, 2017, 2018, 2019 թվականների տարեկան հաշվետվություն:

21.	ՖԻԼԻՊԻՆՆԵՐ	-	-	1434	1225	935
22.	ԴԱՆԻԱ	-	182	219	638	648
23.	ԱՐԳԵՆՏԻՆԱ	28	200	389	968	529
24.	ՎՐԱՍՏԱՆ (վրացիներ)	150	204	526	1268	481
25.	ՖԻՆԼԱՆԴԻԱ	-	69	168	536	472
26.	ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ	82	67	135	755	457
27.	ԹՈՒՐՔԻԱ (հայեր)	-	-	727	958	437
28.	ՀՈԼԱՆԴԻԱ	-	-	62	404	424
29.	ԻՍՐԱՅԵԼ	87	81	70	260	374
30.	ԻՐԱՔ	-	-	863	459	372

Ըստ աղյուսակ 3-ի տվյալների՝ 2019 թվականին ընդհանուր այցելությունների մեջ բացարձակ աճ ապահոված առաջին հինգ երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Վրաստանը, Իրանը, Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Ղազախստանը: Իսկ արդեն ըստ աղյուսակ 4-ի տվյալների՝ աճ ապահոված առաջին հինգ երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Ռուսաստանն ու Իտալիան: Ինչպես երևում է, տարբերությունն ակնհայտ է երկրների հերթականության շարքում, ինչն իհարկե տրամաբանական է՝ հաշվի առնելով զբոսաշրջիկների պատկերացումները տեղանքի, զբոսաշրջության տեսակների, ժամկետների, ըստ հետաքրքրության առաջնային վայրերի և այլ հանգամանքներով պայմանավորված առանձնահատկությունների:

Համեմատենք նաև 2018 և 2019 թթ. ընթացքում նվազում ապահոված երկրների ցանկը: Ըստ աղյուսակ 3-ի՝ դրանք Ֆիլիպիններն ու Արաբական Միացյալ Էմիրություններն են, իսկ ըստ աղյուսակ 4-ի՝ ԱՄՆ-ն, Կանադան, Բելգիան, Հնդկաստանը, Նոր Զելանդիան, Չեխիան, Շվեյցարիան, Ճապոնիան, Լիբանանը, Ֆիլիպինները, Արգենտինան, Վրաստանը, Ֆինլանդիան, Պորտուգալիան, Թուրքիան ու Իրաքը:

Բարձրաձայնման է ենթակա նաև կտրուկ աճ ապահոված երկրների ցանկն ըստ աղյուսակ 3-ի՝ Ղազախստան, Չինաստան, Ռուսաստան, Ուզբեկստան, Գերմանիա, իսկ աղյուսակ 4-ի տվյալներով՝ Գերմանիա, Ֆրանիսիա, Ռուսաստան, Չինաստան, Հարավային Կորեա, Իրան, ԱՄԷ: Թերևս սա միակ համեմատական չափանիշն է, որտեղ քիչ թե շատ նմանություն կա երկու աղյուսակների միջև:

Նկատենք, որ, ըստ աղյուսակ 3-ի տվյալների՝ Ղազախստանն ու Ուզբեկստանը բացարձակ աճի տեմպին հասել են ոչ թե նրա համար, որ Հայաստանի Հանրապետությունը ճիշտ ու թիրախավորված զբոսաշրջային քաղաքականություն է վարում տվյալ երկրներում, այլ նպաստել է ԵՏՄ ընդհանուր սահմանների առկայության պարագայում 2019 թվականի ընթացքում այլ երկրներից ավելի էժան ավտոմեքենաներ ՀՀ ներկրման հանգամանքը, և գրեթե անբեկանելի է այն փաստը, որ 2020 թվա-

կանին Հայաստանին տրված նման արտոնությունը դադարեցնելուց հետո այդ երկրներից սպասելի է լինելու նաև կտրուկ նվազում: Միևնույն ժամանակ նկատենք, որ ըստ աղյուսակ 4-ի տվյալների՝ վերջին հինգ տարիների ընթացքում Ղազախստանից և Ուզբեկստանից զբոսաշրջային հոսքն այնքան փոքր ու չնչին է եղել, որ այցելությունների մասով տեղ չեն գտել նույնիսկ 30 երկրների ցանկում: Այնուամենայնիվ, ՀՀ-ն՝ որպես իրական զբոսաշրջային գրավչություն ներկայացնող երկիր, հետաքրքրում է աշխարհի շատ երկրների զբոսաշրջիկներին, ովքեր տարեցտարի ընդլայնում են իրենց զբոսաշրջային ներգրավվածությունը ՀՀ-ում՝ ՀՆԱ-ի վրա թողնելով միայն դրական ազդեցություն: Կարող ենք փաստել, որ Սևանի համար վերջին հինգ տարիների ընթացքում զբոսաշրջային լուրջ դոնոր երկրներ են դարձել Ֆրանսիան, Գերմանիան, Լեհաստանը, Ռուսաստանը, Իտալիան, ԱՄՆ-ն ու Իրանը: Սևանի նկատմամբ օրեցօր աճում են նաև Չինաստանի ու Հարավային Կորեայի զբոսաշրջային հետաքրքրությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին որոշակի երկրների կողմից Հայաստանի նկատմամբ ձևավորվել է աշխույժ զբոսաշրջային հետաքրքրություն, սակայն նույնիսկ աղյուսակի առաջին հորիզոնականներն զբաղեցնող երկրներում պետության մակարդակով դեռևս շատ անելիքներ կան: Անհրաժեշտ է պետական քաղաքականության իրականացման շրջանակներում արտաքին գործերի նախարարության, սփյուռքի հանձնակատարի, այդ երկրների սփյուռքի միջոցով աղյուսակներում ոչ ակտիվ զբոսաշրջային հոսքեր ապահովող երկրներում ընդլայնելու Հայաստանի Հանրապետության և հայկական զբոսաշրջային արդյունքի ճանաչելիության բարձրացմանը միտված միջոցառումները: Իսկ արդեն մեծ հոսքեր ապահովող երկրներում պետք է կատարել թիրախավորված մարքեթինգային քաղաքականություն՝ ըստ այդ երկրների զբոսաշրջիկների ցուցաբերած հետաքրքրությունների շրջանակի: Այս քայլերն այսօր կարևոր են մեր երկրի սահուն զարգացման ընթացքն ապահովելու համար, քանի որ միտված են ազգային եկամտի մեծացմանը, ինչից հետո հնարավոր կդառնա համաչափ զարգացման ապահովումը ՀՀ ողջ տարածքում, ինչպես նաև այն տարածքներում, որոնք դեռևս նոր են որդեգրել զբոսաշրջային ուղղությունների հնարավորություններից համայնքին հավելյալ օժանդակության ցուցաբերումը և որոշ չափով պետության հոգսի թեթևացումը: Հարկ ենք համարում նշել նաև, որ այս ամենի արդյունքում կբացվեն նորանոր աշխատատեղեր, արդյունքում կբարձրանա բնակչության կենսամակարդակը, և այս ամենը կարող է կենսունակ դառնալ միայն պետական օրգանիզմի շղթայական կենսագործունեության արդյունքում:

Օգտագործված գրականություն

1. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք, Երևան, 10.12.2003:

2. Հայաստան միջազգային այցելուների հետազոտության 2007թ. հաշվետվություն, USAID:

3. ՀՀ ԱՎԾ տեղեկագրքեր, http://www.armstat.am:

4. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք, http://www.mineconomy.am:

5. Պողոսյան Շ., Զբոսաշրջային շուկայի վերլուծությունը ՀՀ-ում, Հյուսիսային համալսարանի գիտաժողովի նյութեր, Երևան, 2015:

6. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2015, 2016, 2017, 2018, 2019 թթ. տարեկան հաշվետվություններ:

7. Гуляев. В. Г., Туризм: экономика и социальное развитие 2003:

CURRENT TRENDS IN TOURISM DEVELOPMENT IN ARMENIA BY THE EXAMPLE OF PENINSULA OF SEVAN

TOROSYAN DAVIT
Manager of the Tourism Center of Sevan,
GSU Lecturer

Improving tourism statistics in the Republic of Armenia and high-quality research and analysis based on accurate statistics have become major issues of state policy. The official statistics on tourism in the Republic of Armenia are kept by the RA Statistical Committee. In addition to this structure, a wide range of tourism statistics has been maintained since 2015 by the Sevan Mobile Information center, as a result of which issues related to tourism are raised every year. The article also shows the growing trend of active tourist flows in the Sevan's peninsula and its positive impact.

Keywords: *tourism, tourist, tourism statistics, tourist information center.*

АКТУАЛЬНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ НА ПРИМЕРЕ СЕВАНСКОГО ПОЛУОСТРОВА

ТОРОСЯН ДАВИД
РуководительТуристического Центра г. Севан,
Преподаватель ГГУ

Улучшение статистики туризма в Республике Армения, высококачественные исследования и анализ, основанные на точные статистические данные, стали главными вопросами государственной политики. Официальная статистика по туризму в Республике Армения ведется статистическим комитетом РА. В дополнение к этой структуре, с 2015 года Севанское мобильное информационное бюро ведет широкий спектр туристической статистики, в результате чего вопросы, связанные с туризмом, поднимаются каждый год. В статье также показана тенденция роста активных туристических потоков на Севанский полуостров и ее положительное влияние.

Ключевые слова*: туризм, туристы, туристическая статистика, туристический информационный центр.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 22.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 01.10.2020թ.:

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՔԱԼՈՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ԳՊՀ դասախոս
e-mail: kaloyan.manvel@mail.ru

Այս տարին սփիւռված ենք անցկացնել «արտակարգ» իրավիճակներում՝ պայմանավորված աշխարհում համավարակով սրեղծված իրավիճակով: Նման պայմաններում բանկային համակարգի համար օրակարգային հարց է կայունության շարունակական պահպանումը՝ միևնույն ժամանակ մնալով բավարար կապիտալացված և իրացվելի: Այս պայմաններում բանկերը ամենօրյա աշխատանք են տանում իրենց հաճախորդների վարկունակության վերականգնման և մյուս հաճախորդներին պատշաճ սպասարկելու ուղղությամբ: Առաջարկելով նոր տեխնոլոգիաներ և հեռահար սպասարկման գործիքներ՝ բանկերը կարողացան սպասարկել իրենց հաճախորդներին՝ ձեռք բերելով նոր հաճախորդներ և գործընկերներ:

Բանալի բառեր: *համավարակ, կապիտալիզացված, լիկվիդացված, վարկունակություն, հեռահար, հաճախորդ:*

Ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել համավարակը բանկային համակարգի վրա:

Ինչպես գիտենք, այն իր բացասական ազդեցությունն է ունեցել բոլոր երկրների տնտեսությունների, այդ թվում նաև Հայաստանի տնտեսության վրա, որն էլ, բնականաբար, ազդել է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի վրա: Չնայած այն հանգամանքին, որ բանկերը կարողացել են մասնակի կերպով հաղթահարել վարկերի ամենամսյա կետանցումներից ծագող հետևանքները՝ իրականացնելով վարկերի ժամանակացույցների վերանայումներ, վարկերի մարումների հետաձգումներ, վարկերի ժամանակացույցների վերակառուցումներ, վարկերի մարումների կամ դրանց մասնակի մարումների երկարաժամկետ հետաձգումներ և այլն՝ այնուամենայնիվ խնդիրը շարունակում է մնալ արդիական: Բանկերը շարունակում են իրենց ամենօրյա աշխատանքը՝ ցուցաբերելով օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումներ՝ կապված տվյալ վարկի տեսակից, ձևից, նպատակից և այլն: Սպառողական վարկերին ցուցաբերվել է ընդհանուր մոտեցում. տրամադրվել է կարճաժամկետ վարկային արձակուրդ, կամ էլ մարումները հետաձգվել են մինչև սահմանափակումների ավարտը և այլն: Իսկ անհատ ձեռներեցներին և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի հետ կապված՝ բանկերը ցուցաբերել և ցուցաբերում են անհատական մոտեցում: Այդ վարկառուների հետ տարվում է ամենօրյա աշխատանք: Եթե տվյալ բիզնես վարկը պատկանում է այն ոլորտներին, որոնք առավել

շատ են տուժել համավարակի արդյունքում, նրանց տրամադրվում է երկարաժամկետ մարման ժամանակացույց, որպեսզի հնարավորություն ընձեռվի տվյալ հաճախորդին՝ դուրս գալու այն իրավիճակից, որում նա հայտնվել է ոչ իր մեղքով:

Ավանդների ընդունման և վարկերի ձևով դրանց տեղաբաշխման շղթան, որը առևտրային բանկերի հիմնական եկամտի աղբյուրն է, կրելով որոշակի վնասներ կամ զրկելով բանկերին կանխատեսված եկամտից, բերում է բանկերի իրացվելիության կամ այլ նորմատիվների խախտման: Ստեղծված պայմաններում բանկերի առաջնային խնդիրներից է՝ անել առավելագույնը վարկառու հաճախորդներին աջակցելու և ավանդատուներին պատշաճ կերպով սպասարկելու նպատակով: Բանկերն իրենք էլ շահագրգռված են իրենց հաճախորդների վարկունակության վերականգմամբ, քանի որ միայն այդ ճանապարհով է հնարավոր ապահովել բանկի մյուս հաճախորդների պատշաճ և բնականոն սպասարկումը, և նրանք ստիպված են լինում գնալ որոշակի փոխզիջումների՝ հաճախորդներին առաջարկելով վարկերի պայմանների փոփոխություններ: Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի համագործակցության արդյունքում ձևավորվեցին մեխանիզմներ, որոնց կիրառումը հնարավորություն տվեց անհատական մոտեցումներ ցուցաբերելու վարկառուների նկատմամբ, ինչպես նաև խուսափելու վարկառուների կողմից վարկային պայմանագրով սահմանված վճարումները չիրականացնելու հետևանքով վարկային պատմության վատթարացումից: Կենտրոնական բանկն իրականացրեց որոշակի նորմատիվային փոփոխություններ և կիրառեց այնպիսի գործիքակազմ, որն առևտրային բանկերին հնարավորություն տվեց հաճախորդների համար հայտարարելու այսպես կոչված՝ «վարկային արձակուրդներ»: Ճգնաժամից ավելի քիչ կորուստներով դուրս գալու, ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու, ինչպես նաև հետագա մրցակցությանը պատրաստ լինելու շանսերը ավելի շատ են նրանց մոտ, ովքեր կարող են արագ արձագանքել փոփոխություններին և ճիշտ որոշումներ կայացնել: Տնտեսության մեջ իրացվելիության մեծ ծավալի շնորհիվ բանկերը հնարավորություն ունեցան արագ արձագանքելու համավարակի ստեղծած ռիսկերին: Այնուամենայնիվ, կարելի է արձանագրել, որ բանկային համակարգը կարողացել է հաղթահարել այդ հիմնական դժվարությունները, քանի որ նախորդող տարիներին կատարված աշխատանքի և ճիշտ ռազմավարության արդյունքում խնայված և պահուստավորված միջոցներով այս ընթացքում պարտաճանաչ կատարել է իր առջև ծառացած պարտավորությունները՝ այդ թվում իր ավանդատուների հանդեպ: Այս ժամանակահատվածում տեսանելի դարձավ, թե տնտեսության մեջ ինչ կարևոր նշանակություն և հնարավորություն ունեն առևտրային բանկերը: Համավարակի ընթացքում ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում կառավարությունն իրականացրեց տարբեր միջոցառումներ տնտեսության տարբեր ճյուղերում և տարբեր բնագավառներում՝ խթանիչ և վերականգնողական դրամական աջակցություն տրամադրելով ինչպես քաղաքացիներին, այնպես էլ տնտեսվորող սուբյեկտներին:

Այդ դրամաշնորհները տրամադրվեցին բանկերի միջոցով՝ հասանելի դառնալով պետության ողջ տարածքում: Բանկերում դրանց տրամադրման գործընթացը, սակայն, առաջ բերեց նոր խնդիրներ՝ կապված քաղաքացիներին և տնտեսվարող սուբյեկներին պատշաճ կերպով սպասարկելու հետ, քանի որ բացի իրենց հիմնական հաճախորդներից, բանկերը պետք է սպասարկեին նաև այդ միջոցառումներից օգտվող քաղաքացիներին ու տնտեսվարողներին: Մարդկանց կուտակումը բանկերում կարող էր դառնալ վարակի տարածման նոր աղբյուր և վտանգել ինչպես իրենց, այնպես էլ բանկի աշխատակիցների առողջությունը: Առկա իրողությանը արագ արձագանքելու նպատակով բանկերը արագ քայլեր ձեռնարկեցին՝ ապահովելով իրենց բնականոն գործունեությունը: Այս փուլում բանկերին օգնության հասավ հաճախորդների սպասարկման ածանցյալ գործիքակազմը, ինչպես, օրինակ, Mobile banking ծառայությունը, Internet banking ծառայությունը, պլաստիկ քարտեր և այլն, որոնք հնարավորություն են տալիս առանց բանկ այցելելու իրականացնել հեռահար սպասարկում: Բանկերի կողմից առաջարկվող հավելվածներով հնարավոր է իրականացնել գրեթե բոլոր գործարքները՝ հաշիվների սպասարկում, ավանդային գործառնություններ, վարկային հայտերի առցանց ուսումնասիրություն և տրամադրում, օգտվել դրամական փոխանցումների համակարգերից և այլն, որոնք հնարավորություն են տալիս առանց բանկ այցելելու կատարել այդ գործարքները: Կառավարությունը և առևտրային բանկերը կոչով դիմեցին և հորդորեցին հաճախորդներին՝ օգտվել բանկերում մինչ այդ էլ գործող հեռավար սպասարկման գործիքներից՝ առանց բանկ այցելելու: Նոր տեխնոլոգիաների և բանկային հավելվածների դերը նշանակալից էր նաև նրանով, որ առկա էին տեղաշարժման որոշակի սահմանափակումներ: Այսպիսով՝ առևտրային բանկերը, օգտվելով առկա հնարավորությունից, ձեռք բերեցին նոր հաճախորդներ և նոր գործընկերներ, հաջողությամբ հաղթահարեցին նաև այդ մարտահրավերները՝ շուտափույթ լուծումներ տալով այդ խնդիրներին: Ընդհանուր առմամբ, սոցիալական ծրագրերի շրջանակում այդ կարճ ժամանակահատվածում առևտրային բանկերի կողմից սպասարկվել են տասնյակ հազարավոր քաղաքացիներ և տնտեսվարող սուբյեկտներ՝ ստանալով սոցիալական աջակցության՝ իրենց հասանելիք գումարները: Նշեմ նաև, որ բանկային համակարգը, որպես տնտեսության շարժիչ ուժ, ոչ մի վայրկյան չի դադարել աշխատել, մեծ ռեսուրսներ են ներդրվել թե՛ աշխատակիցների, թե՛ հաճախորդների անվտանգությունն ապահովելու և պատշաճ սպասարկում իրականացնելու համար:

Հարկ է նշել նաև, որ առևտրային բանկերը դրամական զգալի աջակցություն են տրամադրել համավարակի դեմ պայքարող պետական հիմնադրամներին:

Ինչպես կանխատեսում և ներկայացնում են ժամանակակից հեղինակավոր ամսագրերը, յուրաքանչյուր պետության տնտեսության ապագան՝ կապված իրավիճակից շուտ դուրս գալու, տնտեսական և սոցիալական դժվարությունները հաղթահարելու հետ, կախված է լինելու ներկայիս ժամանակահատվածում տվյալ պետու-

թյան կողմից համավարակը հաղթահարելուն ուղղված ռազմավարության ընտրության ձևից (սահմանափակումներ, արտակարգ իրավիճակ, պետության կողմից տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումներ, օգնություն և այլն), ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու իրավագիտակցությունից և վարքագծից, քանի որ յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող է վարակվել, դառնալ վարակակիր ու շղթայական ձևով տարածել վարակը, որը նորից կբերի վարակի տարածման և նոր սահմանափակումների, ինչն էլ նորից տնտեսությանը կհասցնի ֆինանսական, տնտեսական, սոցիալական և այլ վնասներ:

Ինչպես ցույց են տալիս վերլուծությունները և վերջին ամիսներին տարբեր երկրներում գրանցված արդյունքները՝ կապված համավարակի հաղթահարման հետ, այն երկրները, որոնք ավելի խիստ սահմանափակումների են գնացել և համավարակի դեմ պայքարի ցուցանիշներով առավել լավ արդյունքների են հասել, տնտեսական առումով ունեն առավել խորը ճգնաժամ, քան այն երկրները, որոնք համավարակի դեմ պայքարի ավելի մեղմ պայքարի ռազմավարություն են նախընտրել և տնտեսական առումով ավելի փոքր ճգնաժամային իրավիճակում են գտնվում: Եվ հակառակը, այն երկրները, որոնք այս համավարակը փորձել են հաղթահարել ավելի փոքր սահմանափակումներով, ունեցել են վարակվածների և մահացության ավելի մեծ թվաքանակ, սակայն տնտեսությանը հասցված վնասը մյուս երկրների համեմատ ավելի քիչ է եղել: Բոլորը հասկանալիորեն փոխկապակցված են իրար, և նախընտրություն տալով ու կենտրոնանալով մի ուղղությամբ՝ տուժում է մյուս կողմը:

Օգտագործված գրականություն

1. The economic Journal
2. Frank Media
3. Rusbase մեդիա կայք
4. Digital Banking Report
5. Banks.am էլեկտրոնային կայք:
6. ՀՀ Կենտրոնական Բանկի պաշտոնական կայք:
7. Հայաստանի բանկերի միության պաշտոնական կայք:
8. ՀՀ Կառավարության պաշտոնական կայք:

THE RESULTS OF BANKING ACTIVITIES DURING THE PANDEMIC PERIOD

KALOYAN MANVEL
GSU Lecturer

We are forced to spend this year in the state of emergency due to global pandemic situation. In circumstances like these, it is very important for the banking system to maintain the sustainable stability while preserving the same level of capitalization and liquidity. In mentioned circumstances banks are working on a daily basis to recover the creditworthiness of their customers and provide proper service to other customers. By offering new technologies and tools for remote service, banks were able to establish service for their customers and acquire new customers and new partners.

Keywords: *pandemic, capitalization, liquidity, creditworthiness, remote, customer.*

РЕЗУЛЬТАТЫ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ВО ВРЕМЯ ПАНДЕМИИ

КАЛОЯН МАНВЕЛ
Преподователь ГГУ

Мы вынуждены провести этот год в “чрезвычайных” условиях, обусловленных ситуацией со всемирной пандемией. В подобных условиях для банковской системы крайне важным вопросом является продолжительное сохранение стабильности, при этом поддерживая тот же уровень капитализации и ликвидности. В данных условиях банки ведут ежедневную работу по восстановлению кредитоспособности своих клиентов и должному обслуживанию остальных клиентов. Предложив новые технологии и инструменты удаленного обслуживания, банки смогли наладить обслуживание своих клиентов и приобрели новых клиентов и новых партнеров.

Ключевые слова: *пандемия, капитализация, ликвидность, кредитоспособность, удаленный, клиент.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 01.10.2020թ.:

ՄՐՑՈՒՆԱԿ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

ՀՈՎԵՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ԳՊՀ դասախոս
e-mail: astghikhoveyan@yahoo.com

Մրցունակ ապրանքանիշի ստեղծման գործընթացը հաջորդում է թիրախային շուկայի ռազմավարության ստեղծմանը և միտված է հաճախորդի հետ ամուր ու երկարաժամկետ կապերի հաստատմանը: Ապրանքանշանը բիզնեսի ինքնության խորհրդանիշն է, որը համախմբում է այն հիմնական բնութագրիչները, որոնք բիզնես առաջարկը շուկայում դարձնում են տարբերվող, յուրահատուկ և մրցունակ: Բիզնեսի կյանքի տևողությունը երկարացնելու համար կարևոր է մշտապես մտածել արժեքավոր նոր առաջարկությունների և ապրանքանիշի վերահիմաստավորման մասին: Ապրանքանշման ռազմավարությունը ձեռնարկատիրական գործունեության հենակետերից է, որի վրա և կառուցվում է երկարատև ու ամուր փոխհարաբերություն թիրախային հաճախորդների հետ:

Բանալի բառեր՝ *ապրանքանիշ, ապրանքանշման ռազմավարություն, մրցունակ ձեռնարկատիրական գործունեություն, արժեքային առավելություն, թիրախ հաճախորդ:*

Ապրանքանշումն այսօր ձեռնարկատիրական գործունեության վարման ռազմավարական կարևոր գործընթացներից է: Ապրանքանշման ռազմավարությունը մրցունակ ձեռնարկատիրական գործունեության վարման և թիրախ շուկայի հետ հարաբերությունների ստեղծման առանցքային քայլ է: Դավիդ Օգիլվին, ով հայտնի է որպես «գովազդի հայր», ապրանքանիշը սահմանում է որպես ոչ նյութական, անշոշափելի հատկանիշների հանրագումար, որն իր մեջ ներառում է այն ամենը, ինչը հնարավորություն է տալիս տարբերակելու ապրանքը շուկայում առկա մրցակիցների տարատեսակ ապրանքատեսակներից[1]: Իհարկե, «ապրանք» տերմինի ներքո մենք չենք հասկանում միայն ապրանքը որպես առանձին ֆիզիկական միավոր, այլ այն ամենը, ինչն այն համախմբում է իր մեջ՝ սպասարկում, փաթեթավորում, պիտակավորում, ինչպես նաև հաճախորդին փոխանցվող զգացմունքներ, պատկերացումներ, արժեքներ: Անհրաժեշտ է նշել, որ ապրանքանիշը ապրանքին կամ ծառայությանը տրվող անունն է, որն ինքնին փոխանցում է ինքնություն[2]: Այն ներառում է արտադրանքի անվանումը, խորհրդանիշներն ու ձևավորումը՝ ստեղծելու շուկայավարման գործընթաց արտադրանքը այլ արտադրանքներից տարբերակելու համար[3]:

Ապրանքանշման գործընթացը բիզնեսի վերաբերյալ շուկայում եզակի և հարատև պատկեր ստեղծելու համակարգ է, որը բիզնեսն իրականացնում է մարքեթինգային

[1] David Ogilvy, “Definition of brand”
[2] The Economic Times, “Definition of Brands”, https://economictimes.indiatimes.com/
[3] “Entrepreneur” մեդիա հարթակ, “Branding”, https://www.entrepreneur.com/encyclopedia/branding

ռազմավարության իրագործման և իրազեկման արշավների միջոցով: Ապրանքանշումը շուկայում կարող է ունենալ մոգական ազդեցություն: Ու այստեղ առաջանում է հետևյալ հարցը՝ ինչպե՞ս զարգացնել մրցունակ ապրանքանիշ:

Յուրաքանչյուր անգամ բիզնեսի մասին լսելիս կամ հիշելիս ի՞նչ է մտածում և զգում հաճախորդը, ի՞նչ է պատմում իր ընկերներին բիզնեսի մասին, արդյո՞ք կարողանում է փոխանցել բիզնեսի տեսլականը: Այս հարցադրումները կազմում են ապրանքանշման գործընթացի հիմքը: Հիմնավորված և ընդունված ապրանքանիշը բիզնեսի համար ավելի արժեքավոր է, քան ցանկացած առանձին ապրանք:

Հարվարդի բիզնես դպրոցի հետազոտությունը փաստում է, թե ինչքան կարևոր է բիզնեսի հիմնադրման առաջին իսկ օրից ապրանքանշման «հիմքի» կառուցումը, անհրաժեշտության դեպքում՝ վերակառուցումն ու մրցակցային դաշտում դրա ճկունության մշտադիտարկումը: Հաջողված բիզնեսների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդյունավետ ապրանքանիշի կառուցումը ներառում է հետևյալ փուլերը՝

1. թիրախ շուկայի որոշում,
2. օգտակար առաջարկի ձևակերպում, արժեքային առավելության սահմանում,
3. ապրանքի, ծառայության դիրքավորում կամ վերադիրքավորում շուկայում՝ ապրանքանիշի առաջմղման միջոցով:

Թիրախավորումը, որը ներառում է պոտենցիալ հաճախորդի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքագրումն ու «հաճախորդի կերպարի (customer profile)» ստեղծումը, այն առաջնահերթ քայլն է, որն անհրաժեշտ է իրականացնել մինչև ցանկացած խթանման գործողության նախաձեռնումը: «Ու՞մ համար է նախատեսված արտադրանքը», «ո՞վ է գնելու այն» հարցերի պատասխանի սահմանումը ապրանքանշման առաջնահերթ քայլն է:

Հաջորդ կարևորագույն քայլը օգտակար արժեքի սահմանումն է: Ապրանքանշումը ճիշտ հաղորդագրություն ուղարկելու և տպավորություն ստեղծելու մասին է, տպավորություն, որը թույլ կտա առանձնացնել բիզնեսը մրցակիցներից: Անհրաժեշտ է մտածել այն հիմնական արժեքային առանձնահատկությունների մասին, որոնց միջոցով հնարավոր է տարբերակել և՛ ապրանքը, և՛ ծառայությունը: Որքան հնարավոր է, անհրաժեշտ է անհատականացնել բրենդը. այն չպետք է նույնականացվի այլ ապրանքանիշերի հետ: Անհրաժեշտ է գտնել այն տարրը կամ տարրերի համախումբը, որը բնորոշ կլինի հենց այդ բրենդին, որից հետո մշակել դա ներկայացնող շուկայի հաղորդագրություն: Վերջինս այն հակիրճ տեղեկատվությունն է, որը «ներարկվում է» հաճախորդի ենթագիտակցություն գովազդային արշավների, մերչենդայզինգի կամ մարքեթինգային այլ խթանիչների միջոցով:

Երբ արդեն հստակ է, թե ով է հաճախորդը, և ինչ առանձնահատուկ առաջարկով է ներկայանում բիզնեսը, անհրաժեշտ է մշակել դիրքավորման գործողությունները: Հիմնական նպատակը բրենդը թիրախ հաճախորդների համար հասանելի դարձնելն է: Այստեղ նպատակային բաղադրիչ է շուկայի հաղորդագրությունը: Որքան լավ է

թիրախավորված հաճախորդը, այնքան ավելի ազդեցիկ է դառնում հաղորդագրությունը, որը շուկային փոխանցում է հակիրճ և դիպուկ տեղեկատվություն բիզնեսի մասին:

«Բիզնեսի և արդյունաբերական շուկայավարման հանդես» ամսագրի հետազոտողները պարզել են, որ շուկայի դիրքավորումը հիմնականում որոշվում է հստակ չափանիշներով (օրինակ՝ արտադրանքի որակով) և հարաբերությունների կառուցման գործոններով (օրինակ՝ անձնական շփմամբ): Կարևոր դեր ունեն նաև այլ գործոններ, ինչպիսիք են, օրինակ, միջավայրային գործոնները՝ աշխարհագրական ծածկույթ, տեղաբաշխման շղթաներ, գտնվելու վայր և այլն: Հետազոտողները նշել են նաև, որ բիզնեսի հետ «ծանոթության մակարդակը» նպաստող գործոն է շուկայի դիրքավորման ռազմավարության ընկալման համար[1]: Սոցիալական մեդիաները հրաշալի հարթակ են վերջինիս և բրենդի անհատականացմանը հասնելու համար: Ազդեցիկ բովանդակությունը, ձայնային և տեսաուղերձները կարող են հաճելի կապ ստեղծել ապրանքանշանի հետ, արդյունքում հաճախորդը չի զգա, որ ինքը թիրախավորված է: Սոցիալական հարթակները շուկայում դիրքավորման համար «փոքր» բյուջեով մարքեթինգի իրականացման անփոխարինելի հնարավորություն են ընձեռում: Հաշված ժամերի ընթացքում հնարավոր է ապրանքի կամ ծառայության մասին տեղեկատվությունը հասցնել աշխարհի ցանկացած կետ: Անչափ կարևոր է գիտակցել, որ ինչ էլ նախաձեռնի բիզնեսը՝ շուկայում արտադրանքը դիրքավորելու նպատակով, արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ է ազդել հաճախորդի հնարավորինս շատ զգայարանների վրա: Հաճախորդը ցանկանում է տեսնել, լսել, շոշափել, հոտը զգալ, համտեսել, որից հետո նոր գնում կատարելու որոշում կայացնել: Եթե նույնիսկ առցանց հարթակում է իրականացվում առաջմղումը, ապա պետք է կրկին մշակել բովանդակությունը՝ հաշվի առնելով այս հանգամանքը:

Ապրանքանիշն առաջատար դարձնելու համակարգը կարող է բաղկացած լինել փոխկապակցված տարբեր գործոններից: Այստեղ կարևոր է յուրաքանչյուր մանրուք՝ գույն, տառերի ձև, պատկեր, նիշ և այլն: Օրինակ՝ Սեուլի միջազգային ցուցահանդեսի ժամանակ կատարված հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ մարդկանց 92,6%-ը մտածում է, որ ապրանքանիշի վիզուալ բաղադրիչն ամենակարևորն է[2]: Վիզուալիզացիայի մեջ առանձնացվել է հատկապես գույնը: Գույնն էմոցիաների ստեղծման աղբյուր է և ընկալվում է որպես հաղորդակցման լեզու: Օրինակ՝ կարմիրը առաջ է բերում արկածախնդրության, հաստատունության մտքեր, մանուշակագույնը թագավորական գույն է՝ իմաստուն և ստեղծագործական մտքեր ծնող, սպիտակը հաճախորդին ստիպում է մտածել խաղաղության, մաքրության և անմեղության մասին: Գունային ասոցիացիաները տարիների ընթացքում չեն փոխ-

[1] Journal of Business & Industrial Marketing, “Types Of Market Positioning”; https://online.uwa.edu/news/types-positioning-marketing/

[2] “Creative blog”; https://www.creativebloq.com/branding/five-secrets

վել, դրանք մշակութային կյանքի ընկալումներ են, որոնց փոփոխությունը կարող է հարյուրամյակներ տևել:

Այսպիսով՝ ապրանքանշման ռազմավարական քայլերը ներառող հիմնական սկզբունքները դիտարկելուց հետո առաջադրենք մոդել, որի կիրառությունը կարող է «երկարացնել» ապրանքանշանի կյանքը շուկայում: Մոդելի հիմնական փոխկապակցված բաղադրիչներն են՝


1. դիրքավորում կամ վերադիրքավորում և բրենդի առաջմղում,
2. նորարարություն և վերաիմաստավորում:

Դիրքավորման կամ վերադիրքավորման քայլերը վերոնշյալ պարբերությունում արդեն հանգամանորեն ներկայացվել են: Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ այն իր մեջ ներառում է.

- անհատականացում՝ անվանում, պատկերային տարբերանշան, ոճ՝ տառատեսակ, գույն և այլն,
- շուկայի հաղորդագրություն՝ գովազդային կարգախոս և վաճառող տեքստ,
- էմոցիաների փոխանցում՝ հինգ զգայարանների վրա ազդեցություն գործելու նպատակով,
- մտերմություն հաճախորդի հետ ինչպես անմիջական շփման, այնպես էլ սոցիալական հարթակների հնարավորությունների օգտագործման միջոցով:

Հետևաբար, երբ արդեն ձևավորվել է վստահելի կապ հաճախորդի և բիզնես առաջարկի միջև, խնդիր է դրվում պահպանելու ապրանքանշի մրցունակ դիրքը շուկայում: Այստեղ է, որ անհրաժեշտ է մտածել նորարարության և բրենդի վերաիմաստավորման մասին: Դիտարկենք գծապատկեր 1-ը, որտեղ ներկայացված է ապրանքանիշի կյանքի ցիկլը և այն երկարացնելու մոտեցումը.

Գծապատկեր 1. Ապրանքանիշի կյանքի ցիկլի երկարացում



Ինչպես երևում է գծապատկերից, երկարատևության, հետևաբար ժամանակի ընթացքում կայուն եկամուտների ապահովման համար անհրաժեշտ է մշտապես մտածել նորարարության և սեգմենտի մեծացման մասին: Ապրանքանշանի կյանքի ցիկլը երկարացնել հնարավոր է արտադրանքի արժեքային առավելությունների և օգտակարության բարձրացման կամ նոր շուկաների նվաճման միջոցով: Այս նպատակով բիզնեսն իր մարքեթինգային ռազմավարության մեջ յուրահատուկ տեղ պետք է հատկացնի «ապրանքանիշի ռազմավարության» մշակմանն ու իրականացմանը: Հաճախորդի կարիքի ուսումնասիրությունը և խնդրի լուծումը նորարար մոտեցումներով կապահովի հաճախորդ-բիզնես ամուր կապը: Անհրաժեշտ է հետևողականություն արդեն իսկ առկա հաճախորդների նոր կարիքների բացահայտման և պոտենցիալ հաճախորդների շրջանակի մեծացման համար: Արդյունքում բիզնեսը կստեղծի երկարաժամկետ փոխհարաբերություններ իր հաճախորդի հետ՝ ապահովելով կայուն եկամուտների հոսք դեպի բիզնես:

Օգտագործված գրականություն

1. **David Aaker “Building Strong Brands”, 2019**
2. **Al Ries and Jack Trout “The Battle for Your Mind”, 2019**
3. **David Ogilvy “Confessions of an Advertising Man”, 2012**
4. **Marty Neumeier “The Brand Gap”, 2003**

ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐ

1. “The Economic Times” ամսագիր:
2. “Entrepreneur” մեդիա հարթակ:
3. “Journal of Business & Industrial Marketing” ամսագիր:
4. “The creative blog” առցանց բլոգ:

THE SECRET OF CREATING COMPETITIVE BRAND

HOVEYAN ASTGHIK
GSU Lecturer

The creating process of a competitive brand follows the preparation of a target market strategy, aimed at building strong and long-term relationship with the customer. The brand is a symbol of business identity, which brings together the main characteristics that make business offer different, unique and competitive in market. In order to prolong the life of the business, it is important to think about new valuable propositions and redefinition of the brand. Brand strategy is one of the pillars of business activity, on which a long and strong relationship with target customers is built.

Keywords: *Brand, brand strategy, competitive business, valuable, advantage, target customer.*

СЕКРЕТЫ СОЗДАНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОГО БРЕНДА

ОВЕЯН АСТГИК
Преподаватель ГГУ

Процесс создания конкурентоспособного бренда следует за подготовкой стратегии целевого рынка и направлен на создание прочных и долгосрочных связей с клиентом. Бренд является символом идентичности бизнеса, который объединяет те основные характеристики, которые делают бизнес-предложение отличающимся, уникальным и конкурентоспособным на рынке. Для продления срока жизни бизнеса важно постоянно думать о новых ценностных предложениях и о переосмыслении бренда. Стратегия брендинга - одна из опорных пунктов предпринимательской деятельности, на которой и строятся прочные и долгосрочные отношения с целевыми клиентами.

Ключевые слова: *бренд, стратегия брендинга, конкурентоспособная предпринимательская деятельность, ценностное преимущество, целевой клиент.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 22.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.10.2020թ.:

4.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ
e-mail: vachik_grigoryan@mail.ru

Հոդվածագիրը վերլուծում է Մուշեղ Իշխանի դրամատուրգիական ստեղծագործության մեջ կարևոր տեղ զբաղեցնող պիեսները, մասնավորապես «Կիլիկիո արքան» դրաման, որ գրողի դրամատուրգիական գլուխգործոցն է: Պիեսը քննվում է ինչպես գրողի ստեղծագործության, այնպես էլ մեր ազգային նկարագրի համատեքստում: Նշանավոր գրողների, նաև փիլիսոփաների /Մաթևոսյան, Մանդելշտամ, Աթայան, Կանտ/ արտահայտած գաղափարների համադրման, գեղարվեստական երկերի վերլուծության արդյունքում կարևորում է գոյատևման հակադիր բևեռների նշանակությունը հասարակական կյանքում:

Բանալի բառեր՝ *դրամատուրգիա, հայրենասիրություն, ինքնավերլուծություն, աշխարհայացք, մետաֆիզիկական երևույթ, բանաստեղծական շարք, իրերի աշխարհ, բնազանցություն, վերածնունդ, պետականություն, արժեքների համադրում:*

Սովորաբար ժողովուրդների գրականության պատմության մեջ, մասնավորապես դրամատուրգիայում, ակնհայտ են հերոսական թեմաները: Ամեն ժողովուրդ ունի հերոսական էջեր, որոնք երկար ժամանակ ձևավորում, կայացնում են որոշակի հոգեբանություն, իրադարձությունների թվացյալ շղթա, որ թեկուզ իներցիայով գոյատևում է և ապագայի մեջ: Մեր պարագայում էլ այս հանգամանքը հատկապես 19-րդ դարում ակնհայտորեն պահում էր իր դիրքերը: 1881թ. Մուրացանի «Ռուզանից» առաջ բուռն ընդունելության էին արժանանում «Արշակ Երկրորդները», «Վարդանանց պատերազմները», «Սանդուխտ կույսերը», «Շուշանիկները» և այլն: Ռոմանտիկական ձգտումների ծաղկման ժամանակաշրջանում բուռն ընդունելության արժանացած այս երկերը, որ գեղարվեստական առումով բավականաչափ թույլ էին, շուտով կորցրեցին իրենց գրավչությունը: Այս ամենի հոգեբանական, գեղարվես-

տական, ինչ-որ առումով նաև փիլիսոփայական ընդհանրացումը «Ռուզանն» էր, որ Վահրամ Թերզիբաշյանի բնութագրմամբ՝ «որպես տիպար հայ պատմական ողբերգության բազմաթիվ հերոսուհիների շարքում» վեր էր բարձրանում 19-րդ դարի դրամատուրգիական երկերի շարքում: Հարկ է առանձնացնել Պեշիկթաշլյանի, Դուրյանի երկերը, որոնք նպաստել են մեր թատրոնի առաջընթացին, Դեմիրճյանի «Երկիր հայրենին», Շանթի «Օշին պայլը», Զարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամը», Զեյթունցյանի «Ավերված քաղաքի առասպելը», «Աստծո տասներկու օրը» դրամաները, որոնք մեր գրականության մեջ տարբեր տեսանկյուններով բացահայտել են հայրենասիրության թեման: Մեր դրամատուրգիայում նվաճումներն ակնհայտ են ոչ այնքան հայրենասիրական, որքան սոցիալական, բարոյափիլիսոփայական ոլորտներում /«Պաղտասար աղբար», «Պեպո», «Պատվի համար», «Հին աստվածներ», «Կայսր», «Շղթայվածը», Դեմիրճյանի «Քաջ Նազար», Վրթ. Փափազյանի «Ժայռ», Հր. Մաթևոսյանի «Չեզոք գոտի» և այլն/: Ինչո՞ւ է այդպես: Որքան էլ ցավալի է, այնուհանդերձ հերոսական ձեռնարկումները, առավելապես հաղթանակները մեր անցյալի գրականության մեջ շատ չեն: Պատմական հանգամանքները գրեթե բացառել են հասարակական կյանքում փոփոխություններ իրականացնելու մղումները: Պատահական չէ, որ մեր Մհերը հեռանում է հասարակական կյանքից՝ նախընտրելով հեռացումը, թեկուզ և ժամանակավոր: Այս ամենի արդյունքում մեզ համար ներքին մղումներն ավելի կարևոր են, քան արտաքին երևույթները, հետևաբար մեր թատերգությունների մեջ առաջնայինը դարձավ բնավորության կերտումը, գործող անձի հոգեբանությունը, քան գործողության ծավալումները: Ողջ հունական դրամատուրգիան վեր է խոյանում գործողության ծավալման հարահոս ընթացքի վրա, որտեղ գերակա նշանակություն է ստանում երևույթների արտաքին նկարագրությունը, մարդու հերոսական պայքարը ճակատագրի դեմ: Մեր դրամատուրգիայում հիմնական դերը վերապահված է գրողի երևակայությանը, հերոսների ներքին զգացողությունների, նրանց փիլիսոփայական վերլուծություններին, ավելի ճիշտ՝ ինքնավերլուծություններին:

Այս ամենի արդյունքում մեզ հետաքրքրում են ոչ միայն մեզ վերաբերող հարցադրումները, այլև ուրիշներին, աշխարհին վերաբերող խնդիրները, հետևապես երբեմնի միասնությունը, որ պարզունակ ձևով առկա էր 19-րդ դարի երկերի մեջ, իր տեղը զիջեց տարաբնույթ հարցերին ու զգացողություններին: Մենք ծավալեցինք դրամատիկական երկերի գործողությունը ոչ այնքան տարածության, որքան ժամանակի մեջ, հետևաբար գործող հերոսների ներաշխարհի սահմանները բազմիցս գերազանցում են թատերական երկի տարածական ծավալումները: Ուստի և պատահական չէ, որ այսօր այլևս ոչ ոք չի մտածում բնությունը կամ գործողությունը հնարավորինս ճշմարտացի կերպով ներկայացնելու մասին, քանի որ դա նույնիսկ կարող է ծիծաղ հարուցել, այնպես որ գործող անձանց ներաշխարհի սահմաններն են գծում արդի դրամատուրգիայի ծավալման սահմանները, բացառությունները որակ չեն կազմում:

Այս իմաստով Մ. Իշխանի դրամատուրգիական երկերը ևս ծավալվում են երկի ներքին ժամանակի ծիրում: Երևույթների արտաքին համադրումները բնորոշ են այն գործերին, որոնք արդեն ստեղծված էին իր նախորդների կողմից: Խոսքը Գր. Զոհրապի «Փոստալ» նովելի և Րաֆֆու «Պարույր Հայկազն» վիպակի մասին է, որտեղ հնարավորինս պահպանված են հայ դասական դրամատուրգիային բնորոշ կառուցվածքային առանձնահատկությունները, դեպքերի ժամանակագրական հերթագայումները, առանձին դրվագների կառուցվածքը և այլն: Այսինքն՝ հեղինակի համար կարևորը հերոսներից դուրս գոյություն ունեցող աշխարհի՝ ռեալիստական խորանիստ գծերով իրադրությունների պատկերումն է: Պարզ է, որ այս գործերում ամբողջությամբ չէին կարող արտահայտվել գրողի անհատական որակները, քանի որ նա սահմանափակված էր արդեն մեզ համար դասական արժեք ունեցող երկերի բովանդակությամբ, ասելիքով: Ակնհայտ է, որ Մուշեղ Իշխանին առավելապես հուզել է հայոց տարրի գոյատևման խորհուրդը դարերի ընթացքի մեջ, թեև դրա պատճառների մասին նա վելուծություններ կամ բացահայտումներ չի անում: «Սիրելիդ իմ Մովսես, գալիք դարերուն նայինք, հայ և Հայաստան պիտի մնա՞ն... Մինչդեռ աշխարհազոր Հռոմ հավիտենական է» /219/: Պարզ է, որ դրաման գրված է հերքելու այս ինքնավստահ եզրահանգումը: Ոչ ոք այլևս չի հիշում երբեմնի «տիեզերական ճառախոս-փիլիսոփային», իսկ Հայաստանն իր սրտի մեջ պահում է իր նվիրական զավակի անունն ու փառքը:

Մնացած գործերում գրողն առավել անկաշկանդ է մոտենում երևույթներին: Նրա համար այլևս նյութից վերացարկված ասելիքը չէ կարևոր, այլ գործող անձի հոգեբանությունը, նրա մարդ տեսակը, ասելիքը ողջ դեպքերի ծավալման ընթացքի մեջ տարրալուծելու հմտությունը և այլն: Այս գործերում հերոսների ներքին ժամանակը բազմիցս գերազանցում է իրական ժամանակը, տեսանելի գործողությունը դառնում է վերին աստիճանի աղքատ ու ոչ տպավորիչ ներքին գործողության կամ հոգեբանական ծավալումների կողքին: Դրամատուրգը գիտակցաբար մի կողմ է դնում օբյեկտիվ ժամանակը՝ այն լրացնելով տվյալ գործող անձի ներքին ժամանակով: Դեպքը, նույնիսկ հերոսի ներքին հոգեբանական աճի ընթացքը մնում է գործողության ծավալման ընթացքից դուրս, ամեն ինչ չասելու միտումը սահմանափակում է օբյեկտիվ ժամանակը՝ հանուն հերոսի հոգեբանական կայացման: Լավագույն օրինակը «Մարդորսը» դրաման է, որտեղ Ժոզեն կանխում է մարդկային որակներից զուրկ մարդորսին: Մարդկային այս տեսակը համադրելի չէ անգամ Դեմիրճյանի Հովնանին /«Հովնան մեծատուն»/: Մ. Իշխանը կերտել է բարոյազուրկ ընչաքաղցին, որի համար որևէ սրբություն գոյություն չունի: Սա, ինչպես և «Ժամադրություն» պիեսը, գրված է 1977-ի մայիսին, այստեղ դարձյալ հոգեկան ծավալումների ժամանակը գերազանցում է արտաքին դեպքերի ծավալման ժամանակին:

Այսուհանդերձ, Մուշեղ Իշխանի դրամատուրգիական նվաճումը «Մեռնիլը որքան դժվար է» և «Կիլիկիո արքան» դրամաներն են, ավելի ճիշտ՝ վերջինը՝ գրված 1975-ին:

Առաջինը հումորի որոշակի չափաբաժնով գրված, հետաքրքիր մատուցման ձևով ստեղծված երկ է, որտեղ խոսվում է ազգային ինքնությունը պահելու, սեփական նկարագիրը ժամանակի մեջ ավելի դիմադրելի, կատարյալ դարձնելու պահանջի մասին: Այսօր Իշխանի բեմ հանած տրագիկոմիկական իրադրությունն այլևս այնքան էլ հեռու չէ. եթե դրամատուրգի ասելիքը 1970-ականներին թվում էր ֆանտաստիկ, անիրականանալի երևույթ, ապա այժմ արդեն խոսվում է հնարավորության մասին, որ իրագործելու է մարդկությունը: Այդ պարագայում արդեն մենք հարկադրված կլինենք դիմակայելու այլ կարգի մարտահրավերների, ինչի մասին մեզ զգուշացնում է Մուշեղ Իշխանը: Սա, իհարկե, լուրջ խնդիր է, թեև գրողի միտումը, որ արտահայտվում է վերջին տողում, որոշակիորեն թուլացնում է ասելիքի ընդհանուր տպավորությունը: «Մեռնիլը որքա՞ն դժվար է» բանաձևումը դառնում է անցած պատմության սեղմ արտահայտությունը: Մարդկությունը նոր մարտահրավերների առջև է կանգնած: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նա հաղթահարում է ամեն կարգի դժվարություն, ժամանակի մեջ կարողանում է անգամ մահը կասեցնել՝ շրջանցելով բնության օրենքները, իսկ իրականում հայտնվում է նոր խնդիրների առջև: Մարդը միայն բնական կենդանի չէ, այլև սոցիալական. եթե հնարավոր է կասեցնել բնական ժամանակը, ապա սոցիալականն անհնար է, քանի որ մարդը ոչ միայն մարմին է, այլև հոգի՝ իր տարատեսակ որակներով ու ժամանակի մեջ ձևավորված կարողություններով. այս ամենը կասեցնել, սառեցնել ժամանակի մեջ պարզապես անհնար է, ինչի մասին էլ բարձրաձայնում է Մուշեղ Իշխանը /«Սառցարանեն ելած մարդը»/:

Գրողի նվաճումը մեր դրամատուրգիայի պատմության մեջ «Կիլիկիո արքան» է: Այստեղ չկան ո՛չ կանխակալ մտեցումներ և ո՛չ էլ լեզվական բանաձևումներ, որոնք իմաստային բեռը կվերցնեին իրենց վրա՝ որոշակիորեն ակնհայտ դարձնելով հեղինակային միտումը: Այսուհանդերձ, Իշխանի այս երկը կարևոր է մեկ այլ առումով. որևէ երկ այնքան սերտորեն կապված չէ գրողի բանաստեղծությանը, որքան այս դրաման, իսկ Մուշեղ Իշխանն առաջին հերթին բանաստեղծ է, ապա նոր միայն արձակագիր կամ դրամատուրգ: Ակնհայտ է նաև, որ գրողը բանաստեղծությունից է գնացել դեպի դրաման, նաև արձակը, քանի որ արծարծվող գլխավոր թեման՝ երազի և իրականության փոխհարաբերության խնդիրները, մշտապես անհանգըստացրել է նրան. դա, կարելի է ասել, Մուշեղ Իշխանի համար աշխարհայացքային նշանակություն ունի: Այս հանգամանքն էլ, բնականաբար, արդարացիորեն չի վրիպել մեր գրականագիտության ուշադրությունից:

Այսուհանդերձ, դժվար է համաձայնել այն պնդումներին, որ կյանքը և երազը գրեթե հավասարարժեք են գրողի համար: Դրա լավագույն օրինակը «Յուցափեղկին աղջիկ»-ն է, որտեղ հերոսը վերադառնում է իրականություն. նա հիասթափված է

գեղեցկության պատրանքից. կյանքը, որքան էլ կոպիտ ու աննահանջ, իր մեջ կենսական ավելի մեծ ազդակներ ունի, քան երազանքների աշխարհը: Նույնը տեսնում ենք «Սպասում սիրո» արձակ վիպակում: Ուրեմն՝ ելակետը կյանքն է՝ իր խորանիստ պատկերներով, սեփական ճակատագրի մասին սթափ դատողություններով, հայրենի տան փնտրտուքներով, տառապանքներով ու երազներով: Բայց իրարահալած այս մտքերի խառնարանում դժվար է չնկատել հոգեբանական, իսկ ավելի ճիշտ՝ մեր նկարագրին բնորոշ որակներից մեկը՝ ամեն կարգի բնազանցական երևույթներից մեր խորշանքը: Ի՞նչ է Մուշեղ Իշխանի պոեզիան, եթե ոչ սեփական էության մեջ առարկայական աշխարհի միջոցով մետաֆիզիկական երևույթներին հասնելու ձգտում: Այս խնդիրն առկա է նրա բանաստեղծական բոլոր շարքերում, արձակ և դրամատուրգիական գործերում, իսկ առանձին դեպքերում նաև բաց տեքստով է գրողը ակնհայտ դարձնում իր միտումը:

«Հայաստան» պոեմի բնաբանը վերցված է Հովհաննեսի Ավետարանից՝ «Երանի որոց ոչ իցե տեսեալ և հավատասցեն»: Այս նախադասությունը կրկնվում է և պոեմի մեջ: Բանաստեղծն ամեն կերպ փորձում է հավատալ այն Հայաստանի գոյությանը, որ կա, բայց դժվար է հավատալ նրա առկայությանը, քանի որ գրողն առարկայորեն չի տեսել կամ չի տեսնում երկիրը: Բայց խորհարդանշական է և Քրիստոսի խոսքը, որն ուղղված է նրանց, ովքեր չեն հավատում կամ կասկածում են աստվածային ճշմարտությանը: «Բե՛ր քո մատները և դի՛ր այստեղ ու տե՛ս իմ ձեռքերը. և բե՛ր քո ձեռքը ու մտցրո՛ւ իմ կողի մեջ. անհավատ մի՛ եղիր, այլ՝ հավատացյալ»: Թովմասը պատասխան տվեց ու նրան ասաց՝ Տէ՛ր իմ և Աստուա՛ծ իմ: «Որովհետև դու ինձ տեսար, հավատացիր. երանի՛ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կը հավատան» /Հովհաննես 20, 27-29/: Ինչքան դժվար էր Թովմասի համար խաչվածին վերակենդանացած տեսնելը, նույնքան դժվար էր Մուշեղ Իշխանին հավատալ խաչված Հայաստանի կենդանի, տեսանելի գոյությանը:

Այսուհանդերձ, պոեմում արծարծված խնդիրը շատ ավելի հաղթահարելի էր հոգեբանորեն, քանի որ անհնարին էր բացառել Արարատի կամ Հայաստանի գոյությունը: Բայց այս հարցադրումը գրողը դարձրեց ավելի համաձավալ ու խոր՝ նկարագրական ու հուզական ձևակերպումները փոխարինելով իմաստասիրական կռահումներով:

«Կիլիկիո արքան» կարելի է Իշխանի երկերի փիլիսոփայական սինթեզը համարել, քանի որ այն ընթերցող-հանդիսատեսին հաղորդակցում է միանգամայն նոր իրողության, որն այնքան շոշափելի ու տեսանելի չէ, որքան Հայաստանը կամ Արարատը: Խնդիրը վերաբերում է մեր ազգային արժեհամակարգին: Ընդ որում՝ գտնված մատուցման ձևը լավագույնս ընդլայնում է ինչպես մեր հայրենիքի, անպես էլ մեր հոգու սահմանները: Դրամայի գործողությունը գերակշիռ մասով ներքին է և ավելի շուտ վերաբերում է պատմական հայրենիքում ձևավորված, կայացած ժողովրդի հայրենազրկումից հետո տեղի ունեցած հոգեբանական տեղատվություններին, ուր բացահայտվում են մեր նկարագրի մեջ եղած որակները: Կամ կարելի էր

գնալ ինքնախաբեության ճանապարհով, այսինքն՝ մոռանալ անցած ուղին և ապրել անցյալից կտրված, կամ էլ այլ լուծում գտնել՝ պատմության անակնկալներին դիմակայելու համար: Մուշեղ Իշխանը չի գնում ինքնախաբեության ճանապարհով, այլ կերպ ասած՝ չի մոռանում անցյալը, նա գնում է հակադիր ընթացքով՝ պատրաստ լինել հայրենիքի տերը դառնալու՝ անկախ այն հանգամանքից, թե դա երբ է տեղի ունենալու: Գործադրելով Շանթից եկող դրամատուրգիական խոսքի մատուցման տեխնիկան՝ գրողը ներքին ձայնի գործադրմամբ բարձրաձայնում է առաջին հայացքից անհաղթահարելի թվացող նպատակը. «Հավատա՛ դուն քեզի և կը դառնաս բանակ, կը դառնաս զորավար այդ բանակին և արքա՝ Կիլիկիո գահին»/474/:

Ամբողջ դրաման նյութի աշխարհի և մետաֆիզիկական երևույթների միջև եղած պայքարն է: Գործող անձինք բաժանված են այս սկզբունքով: «Կեղծիքն է ձեր խելք կոչվածը և ձեր ամբողջ իմաստությունը նյութի պաշտամունքեն անդին չանցնիր»,- ասում է Զապելը /507/:

Ստացվում է, որ Մանդելշտամի բնորոշումը՝ կապված մեր ազգային նկարագրի հետ, համընկնում է ինչպես Հրանտ Մաթևոսյանի «Չեզոք գոտի» դրամայի գաղափարների, այնպես էլ Մ. Իշխանի պիեսի ներքին ուղղվածությանը: «Իրերի աշխարհին հավատացող մարդ է հայը: Նրա համար քարը քար է, Արագածն՝ Արագած» /Զրույցներ, 51/: Նա մինչև վերջ չի ընկնում և մինչև վեր չի բարձրանում: Չի դառնում Մակբեթ՝ մինչև հատակն ընկնելով, բայց և Մագելլան չի դառնում:

Մենք դժվարանում ենք կողմնորոշվել մեզ համար ճակատագրական դարձած հարցերում: Դժվար է ընդունել Էդ. Աթայանի այն պնդումը, թե տրվելով համաշխարհային մետաֆիզիկային՝ մենք խորշում ենք գործապաշտ նպատակներ հետապնդող հաշվարկներից: Բանն էլ այն է, որ մենք սիրում ենք հաշվարկել կենցաղի մակարդակում և մնում ենք բացառապես անհատական հետաքրքրությունների ոլորտում: Եթե մենք չհավատայինք նյութական աշխարհի ընձեռած հնարավորություններին, ապա հազիվ թե Կանտը նկատեր հայերի գործապաշտ կեցվածքն առևտրի բնագավառում /И Кант Соч. шести томах, т. 6, М. 1966, стр. 572-573/: Մաթևոսյանն այս հանգամանքը այլ պարագաներում ևս նկատել է: Դավիթը կարծես թե ձեռքը ոսկուն էր տանում և ոչ կրակին: Մուշեղ Իշխանի ներկայացրած իրականությունը, միջավայրը գործում է այս տրամաբանությամբ. Վահանն իրեն կոշիկների առևտրում է թագավոր զգում և ամեն անգամ հեգնում է եղբորը, որ միանգամայն այլ մտահոգություններ կամ պատկերացումներ ունի իր ժողովրդի անցած և անցնելիք ճանապարհի հանդեպ: Եղբայրների միջև եղած պայքարը իրերի աշխարհի և բնազանցության միջև եղած պայքարն է, որ բաժանում է մարդկանց: Բնազանցությունից հետևողական խորշանքը մեզ քաղաքականության մեջ դարձնում է եթե ոչ անզոր, ապա դանդաղաշարժ ու չկողմնորոշվող: Դժվար է հավատալ մի բանի, ինչը չկա, կամ թվում է, որ չկա: Մինչդեռ մետաֆիզիկական արժեքները նույնքան կարևոր են, եթե ոչ ավելի, որքան ակնհայտ երևույթները /տես՝ Մաթևոսյանի «Չեզոք գոտի» պիեսը/:

Լևոնը դառնում է մեր անցյալի պատմության մեջ պարտությունների տերը, որ վերագտնելու է խաթարված ժամանակի պարտադրանքից դուրս գալու ելքերը, քանի որ անհնարին է մարդուց խլել վերածննդի ծարավը: Մուշեղ Իշխանն իր դրամայով ցանկանում է ստեղծել համընդհանուր ազգային երազանք, որն արդեն պատմության մեջ գոյություն է ունեցել, իսկ այսօր այն պիտի հառնի մեր էության մեջ՝ հարուցելով քո՝ պատմության իրական տերը լինելու հրամայականը: «Երանի՛ հավատացողնե-րուն, երանի՛ ընտիրներու այն բանակին, որ պիտի հետևի ինծի...»: Ակնհայտ է, որ Մուշեղ Իշխանը կրկնում է Հովհաննես առաքյալի խոսքը, բայց այն արդեն ներքուստ միանգամայն այլ իմաստ ունի և կարևոր է մեզ համար: Առաքյալի խոսքով, երբ Քրիստոսի մեջ մարդը կտեսնի Աստծո Որդուն, այդ ճանապարհով միայն նա ձեռք կբերի անմահություն: Այն պարագայում, երբ մենք կհավատանք, հետևաբար տեր կկանգնենք մեր անցյալի արժեքների իրական գոյությանն ու թագավորին, իբրև ժողովուրդ ձեռք կբերենք անմահություն: Հետևաբար բնազանցական երևույթները նույնքան կարևոր են, որքան նյութական արժեքները: Մենք գոյատևելու, ժամանակի մեջ հառնելու ենք որպես պետականությունը կայացնող ազգ՝ նյութական և մետաֆիզիկական արժեքների համադրման արդյունքում, ինչի մասին էլ մեզ հուշել է Մուշեղ Իշխանը:

MUSHEGH ISHXAN'S DRAMATURGY

GRIGORYAN VACHAGAN
Doctor of Philology, Professor
The Head of the Chair of Armenian Language and Literature, GSU

The author analyzes the plays, that take an important place in Mushegh Ishxan's dramaturgical works, particularly the drama "King of Cilicia", which is the author's dramaturgical masterpiece. The play is examined in the context of both the writer's work and our national description. Cambining the ideas of prominent writers and philosophers (Hr. Matevosyan, Mandelstam, Atayan, Kant) and as a result of analysis of works, he emphasizes the importance of opposing poles of existence in our social life.

Keywords: *drama, patriotism, self-analysis, worldview, metaphysical phenomenon, poetic series, world of things, transcendence, renaissance, statehood, combination of values.*

ДРАМАТУРГИЯ МУШЕГА ИШХАНА

ГРИГОРЯН ВАЧАГАН
Доктор филологических наук, профессор,
Заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ

В статье анализируются пьесы, занимающие важное место в драматургическом творчестве Мушега Ишхана, в частности, драма "Царь Киликии", которая является драматическим шедевром писателя. Пьеса рассматривается как в контексте произведения писателя, так и нашего национального облика. В результате сопоставления идей, выраженных выдающимися писателями, а также философами (Гр. Матевосян, Мандельштам, Атаян, Кант), а также анализа художественных произведений, в статье придается большое значение существованию противоположных полюсов в нашей общественной жизни.

Ключевые слова: *драма, патриотизм, самоанализ, мировоззрение, метафизический феномен, поэтический сериал, мир вещей, трансцендентность, ренессанс, государственность, сочетание ценностей.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 30.09.2020թ.:

ՓԱՐՊԻԻ ԽՈՍՎԱԾՔԸ[1]

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ
Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն,
ԳՊՀ պրոֆեսոր
e-mail: viktorkatvalyan@mail.ru

Փարպիի խոսվածքը այժմ էլ ներկայանում է իբրև Արարատյան բարբառի հիմնական հատկանիշները հարազատորեն պահպանած բարբառային միավոր, որը բնութագրվում է իր յուրահատկություններով, ինչպես նաև բարբառի այլ խոսվածքների հետ ընդհանրություններով ու տարբերություններով:

Բանալի բառեր՝ *խոսվածք, բարբառ, հայոց լեզու, երկբարբառային հնչյուն, շնչեղ ձայներ, հոլովում, որոշիչ հոդ, անձնական դերանուն, անորոշ դերբայ, ածանց:*

Փարպիի խոսվածքը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հայ բարբառագիտության համար, հատկապես երբ նկատի ենք ունենում Ա. Ղարիբյանի դիտարկումները դրա վերաբերյալ: Նախ, բարբառագետը նկատում է, որ Արարատյան կամ Երևանի բարբառի հետքերը գտնում ենք հին աղբյուրների մեջ՝ սկսած 5-րդ դարից, և առաջինը դրանցից Ղազար Փարպեցին է[2], ապա նշում է, որ «Արարատյան բարբառով մաքուր խոսվածք կարելի է գտնել Փարպի գյուղում, Հոկտեմբերյանի շրջանի գյուղերում»[3]: Մինչդեռ Երևանի խոսվածքը մեծապես ազդվել է գրական լեզվից և «մահանալու վրա է», իսկ մյուս խոսվածքները կա՛մ որոշ տարբերություններ ունեն Երևանի բարբառից, կամ էլ իրենց վրա կրել են հայերենի այլ բարբառների ազդեցությունը[4]: Ընդհանրապես, Ա. Ղարիբյանը իրավացիորեն նկատել է, որ ամեն մի բարբառին պատկանող տեղական խոսվածքները խոշոր տարբերություններ ունեն միմյանցից, և, օրինակ, միևնույն Արարատյան բարբառին պատկանող Աշտարակի և Փարպու խոսվածքների միջև տարբերություններ կան[5]: Ճիշտ է, Փարպիի խոսվածքով ընդարձակ նմուշ է բերված Ա. Ղարիբյանի աշխատության մեջ[6], այս խոսվածքի վերաբերյալ տարբեր առիթներով վկայություններ է բերում Ռ.Մար-

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 18T - 6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:
[2] Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 218:
[3] Նշվ. աշխ., էջ 220:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս նշվ. աշխ., էջ 86:
[6] Նշվ. աշխ., էջ 228-229:

կոսյանը[1], «Աշտարակի խոսվածքը» անավարտ աշխատանքում[2] ժամանակին Փարպիի խոսվածքի օրինակներ է բերել և Աշտարակի խոսվածքի հետ համեմատություններ կատարել Գ.Ղափանցյանը, սակայն Փարպիի խոսվածքը առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել: Խոսվածքի հատկանիշներն արձանագրված են 1977թ. Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 9 տետրում[3]: Այստեղ նշվում է, որ Փարպիի բնակիչները բնիկներ են, և բնակավայրը լեզվական տեսակետից համասեռ պատկեր է ներկայացնում, իսկ խոսվածքը ընդհանուր հայերենի զարգացման օրինաչափությունների շրջանակներում ձևավորվել է իր սեփական ներքին օրենքների հիման վրա: Մեր օրերում շուրջ 2400 բնակիչ ունեցող գյուղի լեզվական ընդհանուր բնութագիրը ճշտելու նպատակով բարբառագիտական հետազոտություն ենք անցկացրել բնակավայրում, կատարել անհրաժեշտ գրանցումներ և գրառումներ:

Այս աշխատանքում նպատակ ունենք ներկայացնելու Փարպիի խոսվածքը՝ օգտագործելով ՀԲԱ ծրագրով գրանցված նյութերը և մեր ձեռք բերած տվյալները:

Արարատյան բարբառի այս խոսվածքը (ի տարբերություն Աշտարակի խոսվածքի, որն ունի երկբարբառային *ո*՝ ու[ե] արտասանությամբ[4]), չունի երկբարբառային հնչյուններ, հատկապես արևմտյան բարբառներին հատուկ ե,ո երկբարբառայինների դիմաց այստեղ առկա են պարզ է, օ ձայնավորներ, ինչպես՝ խընձօր, կօղմ, տէղ, կէխտ: Միավանկ բառերի սկզբի հինհայերենյան ո-ի դիմաց խոսվածքն ունի վօ (վօխ, վօչ//վօնչ, վօռփ), իսկ ե-ի դիմաց՝ յէ (յէզ, յէս, յէփ, յէրք): Ո>վօ անցում առկա է նաև երկվանկ բառերի սկզբում, ինչպես՝ վօչխար, վօչիլ, վօսկի, վօռթի, բայց արձանագրվել են նաև օռնալ (ոռնալ), արօճ (որոճ) ձևերը: Երկվանկ ու բազմավանկ բառերի սկզբի նախնական ե-ի դիմաց ավելի հաճախ հանդիպում է *է* (էրազ, էրէս, էրկաթ, էրկանք, էրկու, էփէլ, էրինջ, էրէվալ), բայց հանդիպում են նաև այլ ձևեր, ինչպես՝ յէրգինք, յէրգիր, յէրգար, իրէք և այլն: Բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորը խոսվածքում սովորաբար պահպանվում է (ինչպես՝ ամաչկօտ, գօղանալ, արդասունք, սօվօրէլ, ախպէրտինք), բաղադրություններում հնչյունափոխվում են շեշտազրկված *ի*, *ու* ձայնավորները, ինչպես՝ տանդըգի (տանտիկին), աչօղթուն: Որոշ դեպքերում ղ-ից առաջ առկա է բառասկզբի ձայնավորի անկում, ինչպես՝ *ղըրգէլ* (ուղարկել), *ղունգ* (եղունգ), *ղուղ* (ուղեղ), *ըղօռթ* (ուղղորդ): Բառավերջի *ա* ձայնավորը

[1]Տե՛ս Ռ.Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989:

[2] Տե՛ս Г.Капанцян, Историко-лингвистические работы (том II, Е., 1975) գրքում՝ Рукопись, Аштаракский говор, էջ 430-540:

[3]ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը անցած դարի վերջին քառորդում Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով /Եր., 1977թ./ գրանցել է բարբառախոս շուրջ հինգ հարյուր վայրերի լեզվական հատկանիշներ: Փարպին եղել է նման հետազոտության ենթարկված առաջին բնակավայրերից մեկը: Ծրագիրը մասնագետ բարբառագետների ղեկավարությամբ լրացրել է բնիկ փարպեցի Հովհաննես Հովհաննիսյանը, որ եղել է մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի շրջանավարտ:

[4] Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 220:

ավելացող մասնիկից առաջ դառնում է *է*, ինչպես՝ *էրէխա>էրէխէք*, *գաթա>գաթէք*: Փարպիի խոսվածքում *ոյ*, *իւ* երկբարբառների դիմաց առկա է *ի* պարզ ձայնավոր, ինչպես՝ *քիր* (քոյր), *լիս* (լոյս), *ձ՛ին* (ձիւն), *ալիր* (ալիւր), սակայն *ութիւն* ածանցում ունենք *ու* ձայնավոր՝ *ախպէրրթուն*, *աչօղրթուն*:

ՀԲԱ ծրագրով արված գրանցումները Փարպիի խոսվածքում շնչեղ ձայնեղների առկայություն չեն փաստում: Մենք արձանագրել ենք դրանց գործածություն բառասկզբում (բ՛էրէլ, գ՛էդ, գ՛ըռդնակ, գ՛արունք, դ՛ար ու դ՛աշտ, գ՛էլ, գ՛էդ, ձ՛ին), սակայն շատ դեպքերում այդ դիրքում հնչում են նաև պարզ ձայնեղներ, ինչպես՝ գըրէլ, գիրք, բըռնէլ, դահիճ, գընալ և այլն: Շնչեղ ձայնեղ բաղաձայններ արձանագրված են նաև Ա.Ղարիբյանի բերած նմուշում: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց հանդես են գալիս շնչեղ խուլեր (հաքնէլ, էքուց, խափէլ, մէչ, վօչիլ, օց, առչ, բառց, փօռցանք), նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ (աբրուատ, ախկադըթուն, ծօրծօրագ, իրիգուն, գ՛էդին, գ՛ըռդնակ, հընդրէլ, ընգէր): Մենք Փարպիի խոսվածքում քմայնացած հետնալեզվային պայթականներ չենք արձանագրել, սակայն Ա.Ղարիբյանի բերած նմուշում նման հնչյուններ արձանագրված են առաջին շարքի ձայնավորներից առաջ, ինչպես՝ գ՛եղըմը, ահաք՛ին, կ՛էնըմ[1]: Ի տարբերություն Աշտարակի խոսվածքի, որտեղ հետնալեզվային քմայնացած պայթականները հաճախ վերածվում են հպաշփականների[2]՝ Փարպին նման իրողություններ չունի: Բաղաձայնանախորդ դիրքում հպաշփականները հաճախ վերածվում են շփականի, ինչպես՝ աշկ, ամաշկօտ, իշնէլ, կօշկէլ, մէշկ, ծասկէլ, լըվասկ: ՀԲԱ ծրագրով արված գրանցումներում *տն* բաղաձայնական խմբի դիմաց փաստվել է *նն* (մաննօց, մընննէլ, մաննէր, վօննէր), նման օրինակներ կան նաև Ա.Ղարիբյանի նմուշում (մընննըմ ա, վօննէրը)[3], սակայն մենք հնչյունափոխական այդ իրողությունը չենք արձանագրել (մադնէր, վօդնաման, մըդնէլ): Արարատյան բարբառում տարածված՝ միավանկ բառերի սկզբում ո-ից առաջ ֆ-ի առկայության հատկանիշը հատուկ է նաև Փարպիի խոսվածքին (ֆօղ, ֆօր, ֆօրթ, ֆօքի, ինքնաֆօղէք), այդպես նաև՝ բառասկզբի խ-ի դիմաց տարնմանական հ-ի դրսևորման հատկանիշը (հաղալ, հէխտէլ, հավօղ): Միջձայնավորական դիրքում *ա*-ի դիմաց *հ* է հանդես գալիս *տեսնել* բայի ձևերում, ինչպես՝ տէհէլ էմ, տէհա: Փարպիի խոսվածքում բառասկզբում ձայնավորից առաջ հագագի հավելումը քիչ է հանդիպում (հալիվօր, հարփէլ, հընդրէլ, հէսա)[4]: Օտար բառերի սկզբում կարող է հանդես գալ *ղ* շփականը, ինչպես՝ ղազ, ղալմաղալ, ղարիբ, ղավըրմա:

Փարպիի խոսվածքում իրենց կայուն արտահայտությունն ունեն նաև Արարատյան բարբառի քերականական հիմնական հատկանիշները: Հայերենի համար ընդհանուր

[1]Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 228:
[2] Տե՛ս նշվ. աշխ., էջ 221:
[3]Տե՛ս նույն տեղում:
[4]Ա.Ղարիբյանի նմուշում նման օրինակներ չկան:

եր, ներ հոգնակերտներից բացի՝ խոսվածքում արձանագրել ենք նաև *ք* (գաթէք), *էք* (ախչգէք), *անիք* (կընանիք, ձ՛իյանիք), *անք* (ձ՛իյանք), *փինք* (ախպէրտինք, քըվօրտինք, տէքըրտինք) հոգնակերտների առկայությունը: Խոսվածքում Ո ներքին հոլովման ընդգրկումը ավելի լայն է. անէր > անօր, ընգէր> ընգօր, կէսուր > կէսօր, քիր > քըվօր, հօքիր > հօքօր, մօքիր > մօքօր: Զուգահեռաբար դրսևորվում է նաև Ոջ հոլովում, ինչպես՝ ընգէրօչ, անէրօչ, տիրօչ: Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել նաև Ա արտաքին հոլովման[1], ինչպես՝ Էրէվանա, Աշտարագա, Սէվանա: Բացառական հոլովը խոսվածքում ունենում է ց-ով վերջավորություն (գինուց, արէվից), ներգոյականը՝ *ըմ* վերջավորություն (աշխարըմ, գ՛էղըմ): Որոշիչ հոդը, ինչպես արևելյան բոլոր բարբառներում, դիտարկվող խոսվածքում ևս ունի արտահայտության երկու ձև՝ *ը* և *ն* (գ՛իրքը, Կարօն), ընդ որում՝ որոշիչ հոդ ստանում են նաև բացառական, գործիական ու ներգոյական հոլովները (տէղիցը, գ՛էղիցը, ճամփօվը, կալըմը, տընըմը): Անորոշ հոդը նախադաս է (մի մառթ, մի կընիգ): Անձնական դերանվան տրական հոլովի ձևերը *ի* հավելված չունեն (ինձ, քէզ, մէզ, ձէզ), արձանագրել ենք սրանց բացառականի՝ *ց* չունեցող ձևեր, ինչպես՝ ինձանի, քէզանի, ընդըրանի և այլն[2]: Ցուցական դերանունները եռաշարք են (էս, էտ, էն, սա, դա, նա), հարցական *ով* դերանունն ունի *օվ* արտասանություն:

Փարպիի խոսվածքում անորոշ դերբայը *ալ, ել* վերջավորություններից բացի ունենում է նաև *իլ* վերջավորություն՝ *գըրիլ, բէրիլ, յէրքիլ*: Բայի ներկա ժամանակաձևը կազմվում է անկատար դերբայով, որն ունի *ըմ* վերջավորություն (սիրըմ էմ, մընըմ էս): *Գալ, լալ, տալ* բայերի անկատարի ձևերն են՝ *գալիս, լալիս, տալիս*, որոնք օժանդակ բային հաջորդելիս կորցնում են *ս*-ն (չէմ գալի): Վաղակատար դերբայն ունի *էլ* վերջավորություն (գըրէլ), օժանդակ բային հաջորդելիս *լ*-ն ընկնում է (յէս էմ գըրէ): Հարակատար դերբայն ունի *ած* վերջավորություն (քընած, թըխած, նըշանված): Ժխտական դերբայի ձևերը համընկնում են գրական արևելահայերենի ձևերի հետ (ասի, մընա): Խոսվածքն ունի ընթացակցական դերբայ՝ *էն* վերջավորությամբ (ուտէլէն, վազէլէն, խօսալէն): Ապառնի դերբայի *ու* վերջավորությունն ավելանում է անորոշ դերբայի վրա (ուտէլու), այդ դերբայով ձևավորվում է ապառնի ժամանակաձև (ուտէլու յէմ): Էական բայի ներկայի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերը՝ *ի//էյի, իր//էյիր, էր, ինք//էյինք, իք//էյիք, ին//էյին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ցոյական, այնպես էլ անցոյական հիմքերով (խըմէցի//խըմի): Այս ժամանակաձևում չկան ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ նույն կազմության բայերի համար (սիրէցի//սիրի, նըստէցի//նըստի, ազադվէցի//ազադվի), բայց Ե խոնարհման պարզ բայերը եզակի հրամայականում ըստ սեռերի ունեն տարբեր վերջավորություններ, ինչպես՝ *գ՛ըրա՛, գ՛ըրի՛*

[1] Այս հատկանիշը Աշտարակի խոսվածքում չի դիտվել:
[2] ՀԲԱ ծրագրով կատարված գրանցումներում նման ձևեր չեն արձանագրվել:

փագա՛ և *նըստի՛, քընի՛*: Հարկադրական եղանակի ձևերը կազմվում են *պըտի* եղանակիչով (պըտի գըրէմ): ՀԱԲ ծրագրով արձանագրվել են նաև խոնարհվող եղանակիչով ձևեր, ինչպես՝ *գըրիլ պըտէմ, գըրիլ պըտէս, գըրիլ պըտէյի, գըրիլ պըտէյիր* և այլն: Արգելական հրամայականի կազմիչը եզակի թվում ունի *մի՛* ձևը, հոգնակի թվում՝ *մէ՛ք* ձևը (մի՛ խօսա, մէ՛ք խօսի): Պատճառական ածանցն ուռնի *ցըն* ձևը (իչացընել, թըռցընել, հաղացընել): Այս բայերի եզակի հրամայականն ունի *ա* վերջավորություն, ինչպես՝ ուտացըրա՛, քընացըրա՛: Բայական չ ածանցը հանդես է գալիս *ն*-ին զուգահեռ, ինչպես՝ *դիբնէլ//դիբչէլ, կըպնէլ//կըպչէլ, փախնէլ//փախչէլ*: Փարպիի խոսվածքում նկատելի է հարադիր բայերի առատությունը, ինչպես՝ անց կէնալ (անցնել), բաց անէլ (բացել), հաղ անէլ (խաղալ), ժաժ ածէլ (շարժել) և այլն:

Այսպիսով, Փարպիի խոսվածքը այժմ էլ ներկայանում է իբրև Արարատյան բարբառի հիմնական հատկանիշները հարազատորեն պահպանած բարբառային միավոր, որը բնութագրվում է իր յուրահատկություններով, բարբառի այլ խոսվածքների հետ ընդհանրություններով ու տարբերություններով:

THE SPEECH OF PARPI

KATVALYAN VIKTOR
Doctor of Philology, Associate Professor,
Director of Institute of Language after H. Acharian, NAS, RA,
GSU Professor

The speech of the village of Parpi is still a dialect unit, which has retained the main features of the Ararat dialect. This speech characterized both by its own characteristics and by similarities and differences with other speeches of the dialect.

Keywords: *speech, dialect, Armenian language, diphthong, voiced aspirated, conjugation, definite article, personal pronoun, infinitive, suffix.*

ГОВОР СЕЛА ПАРПИ

КАТВАЛЯН ВИКТОР
Доктор филологических наук, доцент,
Директор Института языка имени Р. Ачаряна, НАН РА,
Профессор ГГУ

Говор села Парпи и в наши дни представляет собой диалектную единицу, которая сохранила основные черты Араратского диалекта. Говор характеризуется как своими особенностями, так и сходствами и различиями с другими говорами диалекта.

Ключевые слова: *говор, диалект, армянский язык, дифтонгоид, звонкий придыхательный, спряжение, определенный артикль, личное местоимение, инфинитив, суффикс.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10. 09. 2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 11. 10. 2020թ.:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՍԵՆ ԱՅՏԸՆՅԱՆԻ «ՔՆՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿԱՄ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎԱՐՍԻԿ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
e-mail: varsik.nersisyan@mail.ru

Հայերենի բառապաշարի կառուցվածքային առանձնահատկություններն ուսումնասիրության առարկա են դարձել դեռևս հինգերորդ դարից սկսած՝ Դ. Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության թարգմանության մեջ և նրա հետագա մեկնություններում: Հետագայում բառակազմության հարցերը քննության առարկա են դարձել բառապաշարի խոսքիմաստային դասակարգման տարատեսակ փորձերին զուգահեռ:

Հոդվածում քննել ենք աշխարհաբարի բառակազմության ուսմունքի ձևավորման հիմքերը՝ մասնավորապես դիտարկելով բառակազմության հարցերի արտացոլումը Մխիթարյան միաբանության վիեննական դպրոցի ներկայացուցիչ Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ:

Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ խորությամբ և համակողմանիորեն քննության են ենթարկվել հայերենի բառակազմությանն առնչվող հարցերը՝ պատմական հայեցակետով: Բառերը բաժանում է պարզ, ածանցավոր, բարդ և կրկնավոր տեսակների: Չի տարբերակում բարդածանցավոր տեսակը:

Հանգամանորեն ներկայացվել են աշխարհաբարի բառակազմության օրինաչափությունները ինչպես գրաբարի, այնպես էլ բարբառների համեմատությամբ:

Բանալի բառեր՝ *աշխարհաբար, բառակազմություն, Ա. Այտընյան, տեսություն, ածանցում, բարդություն, կորուսումն, փոփոխումն, նախադաս մասնիկ, հետադաս մասնիկ:*

Հայերենի բառապաշարի կառուցվածքային առանձնահատկություններն ուսումնասիրության առարկա են դարձել դեռևս հինգերորդ դարից սկսած՝ Դ. Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատութեան թարգմանության մեջ և նրա հետագա մեկնություններում: Հայ առաջին քերականները փորձում էին ստուգաբանել առանձին բառեր՝ սերտ կապ փնտրելով բառի իմաստի և այն կազմող բաղադրիչների միջև: Հետագայում բառակազմության հարցերը քննության առարկա են դարձել

բառապաշարի խոսքիմասային դասակարգման տարատեսակ փորձերին զուգահեռ [1]:

Բառակազմության հարցերի քննությունը, անշուշտ, գիտական լուրջ հիմքերի վրա դրվեց միայն 19-րդ դարի երկրորդ կեսին՝ պատմահամեմատական լեզվաբանության զարգացման շրջանում, որը հայ իրականության մեջ համընկնում է երկճյուղ աշխարհաբարի ձևավորման ժամանակաշրջանին:

Մեր ուսումնասիրության նպատակն է բացահայտել աշխարհաբարի բառակազմության ուսմունքի ձևավորման նախադրյալներն ու հիմքերը՝ մասնավորապես քննելով բառակազմության հարցերի արտացոլումը Մխիթարյան միաբանության վիենական դպրոցի ներկայացուցիչ Արսեն Այտընյանի **«Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի»** աշխատության[2] մեջ, որի լավագույն բնութագիրը թերևս տվել է Հովհաննես Բարսեղյանը. «Որպես ավանդական և նոր՝ համեմատական քերականության սահմանագլխին ասպարեզ իջած լեզվաբան Ա. Այտընյանն իր վերոհիշյալ կոթողային աշխատությամբ մեզ ներկայանում է ավանդական քերականագիտության դարավոր փորձի և համեմատական լեզվաբանության նորագույն նվաճումների համադրողի դերով»[3] :

Ա.Այտընյանի գիտական գործունեությունն ուսումնասիրության առարկա է դարձել բազմաթիվ հայ (Ա. Ա. Աբրահամյան, Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Գ. Ջահուկյան, Ա. Ս. Աբրահամյան և այլք) և օտարազգի (Պետերման, Մեյե, Մառ և այլք) հայագետների կողմից, որոնցից յուրաքանչյուրն այն արժևորել և հետազոտել է այս կամ այն տեսանկյունից[4] :

Ըստ Է. Աղայանի՝ Այտընյանը բարձր է կանգնած իր ժամանակի ոչ միայն բոլոր հայ լեզվաբաններից, այլև շատ եվրոպական գիտուններից, որ այնպես հռչակվել են ընդհանուր լեզվաբանության պատմության մեջ: «Բավական է հիշել, որ Սոսյուրից դեռ շատ առաջ նա նշել է լեզվի հասարակական բնույթը, որ նա ճիշտ կերպով կարողացել է դիտել լեզվի ու գիտակցության միասնական զարգացումը, տվյալ լեզվով խոսող հանրության (ցեղի, ազգի) նյութական, բարոյական ու մտավոր զարգացման դերը լեզվի զարգացման ասպարեզում և այլն, որպեսզի պարզ լինի մեզ համար նրա գերազանցությունը յուր ժամանակի շատ լեզվաբաններից»[5],-գրում է Աղայանը:

---

[1] Հմմտ. Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954: Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980:

[2] Տե՛ս Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիէննա, Մխիթարեանց տպ. 1866:

[3] Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 139:

[4] Հմմտ. Ա. Ս. Աբրահամյան, Ա. Այտընյանի լեզվաբանական հայացքները, Ե., 1984: Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 139-155: Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958, էջ 269-288: Ա. Վարդանյան, Ա. Այտընյան (140-ամյակի առթիվ), <<Պատմա-բանասիրական>> հանդես, 4, Ե., 1965, էջ 177-183: Զ. Աղաջանյան, Գրական արևմտահայերենը և նրա նորմավորման հարցերն ըստ Ա. Այտընյանի քերականության, <<Պատմաբանասիրական>> հանդես, 2, Ե.,2019, էջ 162-174:

[5] Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 284:

Ա.Այտընյանի լեզվաբանական հայացքների համակողմանի ուսումնասիրությամբ զբաղվել է Ա. Ս. Աբրահամյանը՝ արդյունքներն ամփոփելով «Ա. Այտընյանի լեզվաբանական հայացքները» մենագրության մեջ[1], որտեղ հանգամանորեն ներկայացված են հայագետի մոտեցումները՝ կապված լեզվի զարգացման տեսության, հասարակական-ոճական, ինչպես նաև տարածական տարբերակումների վերաբերյալ համակարգի, գրական լեզվի ընտրության և մշակման խնդիրների հետ, վեր են հանվել նրա առնչությունները հայ և համաշխարհային լեզվաբանական մտքի ողջ նախընթաց շրջանի նվաճումների հետ: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Այտընյանի կյանքը և գործունեությունը, «Քննական քերականութիւն» աշխատությունը, այլ աշխատություններ, ինչպես նաև նրան նվիրված ուսումնասիրությունների համառոտ տեսությունը[2]:

Մենք կներկայացնենք Այտընյանի վերոհիշյալ աշխատության՝ բառակազմությանը նվիրված բաժնի քննությունը, որը դեռևս առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել:

Ա. Այտընյանի աշխատությունը բաղկացած է «Յառաջաբան», «Նախաշաւիղ. արդի հայ լեզուին ծագումն, էութիւնը, պատմութիւնն ու ներկայ վիճակը», «Քերականութիւն արդի հայերէն լեզուի» և «Յաւելուած. համառօտ տեսութիւն գրաբար հայերէն լեզուի» մասերից: Բառակազմության հարցերը քննում է երրորդ մասի («Քերականութիւն արդի հայերէն լեզուի») երկրորդ գլխի «Բառերի յատկութիւնք» բաժնում, թեև որոշ հարցերի անդրադարձել է նաև «Նախաշաւիղ»- ում՝ «Բառերու ձեւը» խորագրի ներքո, որտեղ այն միտքն է առաջ քաշում, որ նոր լեզուն գրաբարից զատող կարևոր հատկանիշներից է բառերի ձևը, ապա գրում է. «....նոր բառերն առհասարակ ամփոփմամբ, սղմամբ, կրճատմամբ պարզուած կ'ըլլան հիներուն բաղդատութեամբ: Այս մասին բաւական է հին ժամանակներէն քանի մը հետքեր գտնել՝ որոնք մեզի լեզուին բռնելու սկսած ուղղութիւնը կամ անոր բերումն ու դիտումը ցուցընեն»[3] :

Նույն տեղում հանգամանորեն խոսել է հոդակապի գործածության մասին և գրել. «Մեր գրաբարին վերիվերոյ ակնարկութիւն մը անմիջապէս խորհրդածել կուտայ թէ ***ա*** ձայնաւորին յաճախութեամբ ծանրաշարժ ընթացք մը առած է լեզուն, որ կրնար այս նկատմամբ թեթեւացում մը վերցընել: Բաց ի այբերու բազմութենէն՝ կը տեսնենք, որ բառերուն կազմութեան կանոնն ալ նոր պարտք մը կը դնէ այբեր աւելցընելու, գլխաւորաբար իբրեւ ածանցման և բարդութեան յօդակապ»[4]: Այստեղ, ինչպես տեսնում ենք, շարադրել է պատմական բառակազմության հիմնական օրինաչափու-

[1] Ա.Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 21:
[2] Տե՛ս նշվ. աշխ., էջ 5-21:
[3] Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1987, էջ 72:
[4] Նշվ. աշխ., էջ 72-73:

թյունները՝ շեշտը դնելով հատկապես հոդակապի վրա և ցույց տվել, որ նրա հաճախակի գործածությունը ծանրաշարժ ընթացք է տալիս գրաբարին:

Բառակազմության հարցերին, ինչպես արդեն նշել ենք, ավելի հանգամանորեն անդրադարձել է երրորդ մասի երկրորդ գլխի «Բառերու յատկութիւնք» բաժնում, որտեղ նախ փորձում է բացատրել, թե ինչ կարող է նշանակել բառի ***ձև*** եզրույթը, որ բացի, օրինակ, ***տրականի ձև, հին ձև*** ևն-ից, «Հոս բառերուն ***Ձեւն*** ըսելով կ'իմանանք միեւնոյն բառին այլեւայլ կերպարանօք այլեւայլ նշանակութիւն առածը»[2]: Այսինքն՝ Այտընյանը ներկայացնում է այսօրվա ընկալումներով՝ **բառաձևի** և **բառի կառուցվածքի** տարբերությունները, սակայն երկուսի համար էլ գործածում է **բառի ձև** եզրույթը:

Այտընյանը բառերը բաժանում է կառուցվածքային 4 տեսակի. «Բառերի ձեւը (որ ոմանք ***Անուանց Պարագայ*** կոչած են)», գլխաւորաբար չորս է. 1. Պարզ, 2.Ածանցեալ, 3.Բարդ եւ 4.Կրկնաւոր»[3]: Ելնելով մեր առջև դրված նպատակից՝ կներկայացնենք խնդրո առարկա լեզվական իրողությունների սահմանումներն ու ձևակերպումները բառացի մեջբերումներով՝ բացահայտելու համար, թե ինչ հիմքերի վրա է հետագայում զարգացել աշխարհաբարի բառակազմությունը, ցույց տալու դրանց համապատասխանությունը արդի ըմբռնումներին:

Այսպես՝ Այտընյանի ձևակերպմամբ՝ «Պարզ կ'ըսուի բառ մը վրան ամենեւին յաւելուած առած չէ. զորօրինակ՝ ***քար, լոյս, ծառ*** ևն, իսկ պարզ չեն ***քարաշէն, լուսաւոր, ծառաստան***, որ նախընթացներէն ելած են»[4]: Ապա մեկնաբանում է. «Պարզ բառ մը իւրմէ ելածներուն Արմատը կամ Արմատականը կը կոչուի (զորօրինակ՝ ***հաւատացնել*** բային արմատն է ***հաւատալ*** բայը, եւ ասոր արմատը՝ ***հաւատ***)»[5]: Ինչպես տեսնում ենք, այստեղ դեռևս չեն սահմանազատվում **բայահիմք** և **արմատ** եզրույթները, իսկ **հավելված** եզրույթը բազմիմաստ է. կարող է ընկալվել և՛ որպես արմատ, և՛ որպես ածանց:

Կախյալ արմատների մասին գրում է. «Արդի լեզուին մէջ պարզ բառեր կամ գոյականներ կան, որոնք գրաբարի մէջ միայն արմատական են, այսինքն՝ թէ միայն ածանցմանց մէջ կ'երեւան եւ մինակ չեն գործածիր. այսպէս են՝ ***շարժ. ջարդ. ծեծ. սափրակ*** եւ այլն»[6]:

Ածանցումը ներկայացնելիս այն միաժամանակ ածանց է անվանում. «Ածանց կամ Ածանցումն կը կոչուի բառի մը ուրիշ բառէ յառաջ գալը. եւ յառաջ եկածը՝ ածան-

---

[1] Ծանոթություն: Ա. Այտընյանի աշխատությունից բառացի մեջբերված այս և հետագա հատվածներում մեծատառերի գործածությունը, ինչպես նաև կետադրությունը տրված են ըստ բնագրի:

[2] Նշվ. աշխ., էջ 292:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] Նշվ. աշխ., էջ 292-293:

ցեալ»[1]: Այսինքն՝ հստակ տարբերակելով **ածանցում** երևույթը և **ածանց** միավորը՝ միաժամանակ չի խուսափում դրանք մեկը մյուսի փոխարեն գործածելուց:

«Ածանց կ'ըլլայ պարզ բառի վրայ մասնիկ մը կամ գիր աւելցընելով: Ուստի ածանցեալ բառն ան է՝ որ իւր սկիզբը կամ վերջը յաւելուած մ'ունի. զորօրինակ՝ ***ան-նման. ծանր-ութիւն. աւուր-չէք***. (***նման***. ***ծանր*** եւ ***օր***, ***աւուր*** պարզ բառերէն ելած)»[2]: Այս դեպքում ևս գործածուած է «յաւելուած» ընդհանուր եզրույթը՝ ածանց իմաստով: Ձևակերպումները, անշուշտ, հեռու են երևույթների մերօրյա ընկալումներից, սակայն բերված օրինակները որևէ հարց չեն առաջացնում:

Մեղ արմատով ձևավորված ***մեղ-ք. մեղ-աց. մեղք-ի. մեղ-աւոր. ան-մեղ*** ձևերի միջոցով ցույց է տալիս ածանցի և քերականական մասնիկների տարբերությունը՝ գրելով. «Բայց հոս մենք հոլովմանց եւ խոնարհմանց մասն ի բաց կ'առնունք»[3] :

Ներկայացնելով ածանցման ընդհանուր կանոնները կամ «նախագիտելիքները»՝ կարևոր դիտարկում է անում հոդակապի գործածության վերաբերյալ. «Կրնայ բառ մը գրաբար կամ աշխարհաբար ձեւով ածանցիլ», գրաբար ձևով ածանցը «հասարակօրէն ա հոդակապով է՝ գլխաւոր բառին և մասնական մէջ. ինչպէս՝ ***փայտանոց. համապատիւ*** և այլն, և կորուսման (իմա՛ սղման, Վ.Ն.) կամ փոփոխման (իմա՛ հնչյունափոխման, Վ.Ն.) կանոնը ճշդիւ կը պահուի՝ (քիչ բացառութեամբ.) ինչպես. ***Սիրտ-ս'րտագին***»[4]: Մինչդեռ, ըստ Այտընյանի, աշխարհաբար ձևով ածանցման մեջ միշտ կը պահուի կորուսման կանոնը, ինչպես. ***մոռցուկ***. բայց ոչ փոփոխմանը[5]:

Այտընյանի եզրակացմամբ՝ աշխարհաբարում բառերն ածանցվելիս պահում են սղման և ոչ հնչյունափոխության կանոնը: Այտընյանը ցույց է տալիս նաև բառավերջի ոչ արմատական ***ք***-ի անկումը ***մեղ-աւոր, խել-ացի*** ևն օրինակներում, ինչպես նաև ներկայացնում է բացառությունները, որոնցում ***ք***-ն պահպանվում է՝ ***հանքային, փորձանքաւոր*** ևն[6] :

Անդրադառնալով բայերի կառուցվածքային առանձնահատկություններին՝ նշում է, որ գրաբար ձևերում, ինչպես այլ բառեր, այնպես էլ բայերը բաղաձայնով սկսվող մասնիկից առաջ ունենում են ա հոդակապ, իսկ աշխարհաբար ձևով՝ ոչ, ինչպես՝ զուարճանալ, գողանալ, կարմրանալ, մեռանել, բայց՝ գող-նալ, մեռ-նիլ, կարմըր-նալ.կակղ-նալ, և երբեմն ***ե*** հոդակապով (խենթենալ, մոտենալ)[7]: Այսպիսով՝ հոդակապը բայածանցից առանձին միավոր է դիտարկվում:

Ածանց բառի փոխարեն գործածելով ***մասնիկ***-ը՝ գրում է, որ դրանք լինում են՝ նախադաս և հետադաս: Նախադաս, այսինքն՝ «բառին սկիզբը դրուող մասնիկներն

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 294:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 295:

են՝ ***ան, ապ, չ, դժ*** կամ ***փժ*** որ բացասական կամ եղծական են՝ բառին հակառակ նշանակութիւն տալով կամ չունենալ ցուցընելով. ինչպէս. ***անվրանգ, ապերախտ, ապուշ, չասրուած, փգէր, դժբախտ, փժգոյն*** ևն»[1] :

Հունաբան դպրոցի ստեղծած նախադաս մասնիկների («Յունական մասնիկներ») մասին գրում է, որ «Այս մասնիկներուն զօրութիւնը դիւրին չէ հոս որոշել, վասնզի շատ տեղ ընդհանուր կանոններէն աւելի բազմաթիւ են բացառութիւնները»[2]: Այս ածանցների դիմաց ներկայացնում է միայն դրանցից կազմված բառերը՝ չնշելով իմաստային դրսևորումները: Իբրև այդպիսիք նշում է հետևյալները՝ ***ապ (ապացույց), առ, արտ, բաղ, բաց, դեր, ենթ, հակ, համ, մակ, յար, ներ, շաղ, շար, պար, սրոր, վայր, վեր, փար, փրամ, փաղ, փոխ***[3] :

Յետադաս մասնիկներից (իմա՛ վերջածանց) բերում է հետևյալները և գրում, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ խոսքի մաս է կազմում, իմաստային ինչ դրսևորումներ ունի. ***ակ, այինն, անք, աց, եաց (սրտասաց, մարդատեաց),*** **գին,** ***եակ, եկ, եայ, եան, եղ, եղէն, եղի, ենի, զան, էք, ի, իկ, ին, ինք, իւն, ծո, կան, կի, կոտ, նակ, նի, նոց, ոտ, ոտի, որդ, ոց, ու, ուի, ուկ, ուհի, ուն, ունդ, ուրդ, ունի, ուց, ուք, չէք, պան, սր (եսր, ուսր), սրան, բան, ցի, ացի, եցի, ցու, ւոր***[4] :

Այտընյանը համապատասխան օրինակներով ցույց է տալիս, որ երբ ***ա*** հոդակապից առաջ ***ի*** է հանդիպում, երկուսը միասին դառնում են ***է՝ հոգեւոր, տարեկան*** ևն, ինչպես նաև ներկայացնում է սղման դեպքերը՝ ***եկեղեցական, պիտանացու*** ևն, բացառությունները, (ի-ով ավարտվող միավանկները՝ ***միանալ, ձիաւոր, լիութիւն, թիակ*** ևն), այլև «քանի մը ուրիշ բառեր՝ ***որդիական, կղզիացեալ***» ևն[5]:

Հայտնի է, որ ածանցները բառակազմական ձևույթներ են, որոնք նոր բառեր են կազմում, ուստի ուշագրավ է Այտընյանի հետևյալ դիտարկումն այն մասին, որ «Երբեմն բառի մը վրայ ածանցական մասնիկ մը կը դրուի՝ առանց նշանակության փոփոխութիւն տալու. զորօրինակ. ***Արքունի-արքունական, անմեղ-անմեղական, պատրաստ-պատրաստական, թշուառ-թշուառական. . . .***»[6]: Անշուշտ, ներկայացված են նաև բառեր, որոնց դեպքում ածանցի հավելումով դրանք հետագայում իմաստային տարբեր նրբերանգներ են ձեռք բերել, ինչպես՝ ***հայրենի-հայրենական (հօրենական), արժանի-արժանաւոր, հեռի-հեռաւոր, խոր-խորին ևն[7]:***

Այս բաժնում Այտընյանն անդրադառնում է նաև բայական ներածանցներին. «Քանի մը մասնիկներ ալ բայերու յատուկ են, որոնք հասարակօրէն գործողութեան

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 296:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 297-302:
[5] Տե՛ս նշվ. աշխ., էջ 295:
[6] Տե՛ս նշվ. աշխ., էջ 302:
[7] Տե՛ս նույն տեղում:

մանր կրկնութիւն, անընդհատ տեւողութիւն եւ այլն կը յայտնեն»[1]: Բերում է համապատասխան օրինակներ՝ երբեմն առանձնացնելով դրանց «հին» կամ «ռամկական» դրսևորումները, որոնց մեջ «հին» համարվողներից մի քանիսը բնորոշ են ժամանակակից արևելահայերենին: Օրինակ՝ ***կտրել-կտրտել-կտրատել, պատռել-պատռտել-պատառոտել*** շարքերում վերջինները «հին» է համարում[2]:

Հաջորդ բաժնում ներկայացնում է բարդ բառերը՝ հետևյալ սահմանումով. «Բարդ կը կոչուի՝ երկու կամ աւելի բառից բաղադրութիւնը. զորօրինակ. ***զօրագլուխ, զօրաց գլուխ***, որ ***զօր*** եւ ***գլուխ*** արմատ բառերէն յօդուած է»[3]: Նկատելի է, որ ***արմատ*** եզրույթը սահմանման մեջ չի շեշտվում և նույնացվում է բառին, մինչդեռ օրինակներին կից նշվում է:

Բարդ բառերը բաժանում է երեք տեսակի. «Երեք կերպ բարդութիւն կայ. երկու բառ քովէքով կցուած. զորօրինակ. ***աւուր-զրոյց. արիւն-լուայ. կըրծ-կալ. համ-տես. ա*** յօդակապով. ***զորօրինակ. տնաշէն. եղբայրասպան. նաւապետ. քայլափոխ. ու*** շաղկապով. ***ինչպէս. ահուդող. ծեծուփետ. աղուհաց***»[4] և այլն: Այսինքն՝ Այտընյանն ընդունում է բարդության հետևյալ տեսակները՝ **անհոդակապ, ա հոդակապով, ու շաղկապով**: Նաև նշում է, որ վերոհիշյալ 3 ձևերն էլ գրաբարին հատուկ են եղել, և բուն սովորականն ու կանոնաւորն է միջին կերպը (***ա*** յօդակապով)[5] , իսկ միջին և արդի հայերէն լեզուաց ընդհանրապէս կանոնաւորն եղած է՝ առանց այբի. (**աշն-տունկ ծառանց, թիւր-խորով ձու. ձար-խոտ. քար-խոտ. քմ-ծաղրիլ**. եւ այլն)[6]:

Հանգամանորեն ներկայացնում է ***ա*** հոդակապով կամ առանց դրա կապակցվող բաղադրիչների հնչյունափոխության դեպքերը, ինչպես նաև բացառությունները[7] :

«Տեսակ մը բարդութեան կերպ ալ կայ նախդիրներով,- ավելացնում է Այտընյանը,- որ գրաբարի յատուկ է. ինչպէս. ***գլխիվայր. զառիվայր. զառիվեր. (դարվար. դարվեր) սրտիբերան. գիրկընդխառն*** եւ այլն»[8]:

Այտընյանն իր աշխատության մեջ անդրադարձել է նաև բարդության գլխավոր կերպերին (իմա՛ կաղապարներին, Վ.Ն.). «Բարդութեան մէջ մասանց բանի որակութիւնն եւ անոնց ետեւառաջութիւնը կարեւոր կանոն մըն է՝ որ բարդուած բառերուն նշանակութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի: -Հայերէն բարդութեանց մէջ հասարակօրէն առաջին բառը կա՛մ խնդիր է, կա՛մ ածական՝ երկրորդ բառին

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 303:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 304:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 305:
[8] Տե՛ս նշվ. աշխ., էջ 306:

նկատմամբ»[1]: Որպես բարդութեան գլխավոր կերպեր ներկայացնում է հետևյալները՝ **գոյական** և **գոյական**, **ածական** և **գոյական**, **ածական** և **բայարմատ**, **բայարմատ** և **գոյական**: Ցույց է տալիս, թե դրանցից յուրաքանչյուրն իմաստային ի՛նչ դրսևորումներ ունի: Հանգամանորեն ներկայացնում է նաև կրկնավորներից կազմված բառերը[2]:

Ըստ Այտընյանի՝ «Երեք բառով բարդութիւնները խորթ կը համարուին. եւ շատ քիչ կայ գործածական»[3]: «Բարդութեանց մէջ նոյն կանոնները ճշդիւ կը պահուին, որոնք (վերը 810-816-ում) ածանցմանց համար տուինք (նկատի ունի՝ հնչյունափոխություն, սղում, հոդակապ, Վ.Ն.)»[4] :

Այտընյանն անդրադարձ է կատարել նաև ստուգաբանությանը՝ որպես լեզվաբանության մի ճյուղի՝ տալով հետևյալ բնութագիրը. «Ստուգաբանութիւն հիմակու ատենս լեզուագիտութեան այն ճիւղը կը նշանակէ՝ որ բառերուն ներքին կամ ծածուկ կազմութիւնն ու բաղադրութիւնը լուծելու կը զբաղուի: Զորօրինակ. գրաբար ***Տէր*** անունն երկու տարերացը կը լուծէ, ***տի*** եւ ***այր***.- ***Գայթագղիլ*** բայը՝ ***գայթ*** եւ ***գղիլ***, - նոյնպէս աշխարհաբար. ***Քովտի*** մակբայը կը մեկնէ՝ հնագոյն ձեւով՝ ***քովն տի*** կամ ***ի քովն դիի***»[5]: Այս կարգի արմատները (***տէր***) «կը կոչուին Վերջին արմատ»[6] :

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ կարող ենք ասել, որ իրավացի է Է. Աղայանը, երբ Այտընյանի վերոհիշյալ աշխատության մասին գրում է, որ այն «....արտացոլում է աշխարհաբարի վիճակը անցյալ դարի 50-60-ակ. թթ., ուստի և աշխարհաբարի պատմությունն ուսումնասիրողների համար նա ելակետային աղբյուր է գրական լեզվի հետագա զարգացման ու մշակման ուսումնասիրության առումով»[7]: Այս տեսակետից աշխարհաբարի բառակազմության ուսմունքի ձևավորման հիմքերը, կարծում ենք, դարձյալ առաջին հերթին պետք է փնտրել Այտընյանի նշված աշխատության մեջ:

Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատության մեջ խորությամբ և համակողմանիորեն քննության են ենթարկվել հայերենի բառակազմությանն առնչվող հարցերը՝ պատմական հայեցակետով: Հանգամանորեն ներկայացվել են աշխարհաբարի բառակազմության օրինաչափությունները ինչպես գրաբարի, այնպես էլ բարբառների համեմատությամբ: Ներկայացվել են հոլովման, խոնարհման վերջավորությունները, ածանցները, ցույց են տրվել դրանց տարբերությունները: Այտընյանը ցույց է տվել բառաձևի և բառի ձևի (կառուցվածքի) տարբերությունները, սակայն երկու դեպքում էլ գործածել է **բառի ձև**

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 306-310:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 304:
[4] Նույն տեղում:
[5] Նշվ. աշխ., էջ 337-338:
[6] Նշվ. աշխ., էջ 293:
[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 10:

եզրույթը: Խիստ կերպով չի տարանջատում **մասնիկ** և **ածանց**, ինչպես նաև **ածանցում** և **ածանց** եզրույթները, թեև դրանցից յուրաքանչյուրը հստակ կերպով մեկնաբանում և սահմանում է: Կարելի է ասել, որ շատ դեպքերում լեզվական իրողությունները ներկայացնելիս գործածում է ընդհանուր տերմիններ՝ ցույց տալով դրանց տարբեր դրսևորումները: Բառերն ըստ կազմության բաժանում է պարզ, ածանցավոր, բարդ և կրկնավոր տեսակների՝ չտարբերակելով բարդաածանցավոր տեսակը:

Աշխատության կարևոր արժանիքներից է, կարծում ենք, նաև նախածանցավոր և վերջածանցավոր բառերի ընդգրկուն ցանկի ներկայացումը, որտեղ տրված են ածանցների իմաստային դրսևորումները, առանձին խոսքի մասեր կերտելու առանձնահատկությունները:

Օգտագործված գրականություն

1. Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958:
2. Զ. Աղաջանյան, Գրական արևմտահայերենը և նրա նորմավորման հարցերն ըստ Ա. Այտընյանի քերականության, «Պատմաբանասիրական» հանդես, 2, Ե., 2019, էջ 162-174:
3. Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1987:
4. Ա.Ս. Աբրահամյան, Ա. Այտընյանի լեզվաբանական հայացքները, Ե., 1984:
5. Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980:
6. Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954:
7. Ա. Վարդանյան, Ա. Այտընյան (140-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական» հանդես, 4, Ե., 1965, էջ 177-183:

STUDY OF WORD FORMATION ISSUES IN «CRITICAL GRAMMAR OF THE VERNACULAR OR MODERN ARMENIAN LANGUAGE» BY ARSEN AYDINIAN

NERSISYAN VARSIK
PHD, Associate Professor, GSU Lecturer

The structural features of wordstock of the Armenian language have been the subject of study since the 5th century. They are presented in the translation of "The Art of Grammar" of Dionysius Thrax and its further interpretations. Later word formation issues were tackled alongside the attempts to classify the Armenian word stock according to the relation toparts of speech.

The given paper touches upon the study of theoretical basis of the development of Modern Armenian word formation. Particularly, we have studied the word formation issues in the "Critical Grammar of the Vernacular or Modern Armenian Language", a book by the representative ofthe Viennese Mekhitarist Order Arsen Aydinian.

In his book "Critical Grammar of the Vernacular or Modern Armenian Language" A. Aydinian conducted a profound and multifaceted analysis of word formation issues from the historic perspective. A. Aydinian gave the classification of words: simple, compound, words coined as a result of reduplication and affixation. However, he did not differentiate words coined as a result of simultaneous compounding and affixation processes.

In the book the common patterns of Modern Armenian word formation are displayed in comparison with grabar (Classical Armenian language) and dialects.

Keywords: *ashkharabar (Modern Armenian language), word formation (word building), A.Aydinian, theory, affixation, compound words,syncope (loss),alternation, prefix (pre-positive particle according to Aydinian), suffix (post-positive particle according to Aydinian).*

АНАЛИЗ ПРОБЛЕМ СЛОВООБРАЗОВАНИЯ В ТРАКТАТЕ АРСЕНА АЙТЫНЯНА "АКТУАЛЬНАЯ ГРАММАТИКА АШХАРАБАРА ИЛИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА"

НЕРСИСЯН ВАРСИК
Кандидат филологических наук,доцент,
Преподаватель ГГУ

Структурные особенности словарного состава армянского языка являются предметом изучения с 5-ого века. Они нашли отражение в переводе "Искусства грамматики" Дионисия Фракийского и его дальнейших толкованиях. Впоследствии вопросы

словообразования затрагивались параллельно с попытками классифицировать лексический состав языка с точки зрения частеречной принадлежности слов.

В статье представлен анализ теоретических основ формирования учения о словообразовании ашхарабара, в частности, исследованы проблемы словообразования в трактате представителя Венской школы ордена Мхитаристов Арсена Айтыняна “Аналитическая грамматика ашхарабара или современного армянского языка”.

В своем труде “Аналитическая грамматика ашхарабара или современного армянского языка” А. Айтынян проводит глубокий и всесторонний анализ проблем словообразования армянского языка в историческом ракурсе. А. Айтынян выделяет простые, аффиксальные, сложные слова и редупликаты (слова-повторы), при этом в его классификации не дифференцируются сложно-аффиксальные слова.

В трактате также представлены закономерности словообразования ашхарабара в сопоставлении как с грабаром (древнеармянским языком), так и диалектами.

Ключевые слова: *ашхарабар (современный армянский язык), словообразование, А. Айтынян, теория, аффиксация, словосложение, выпадение,чередование, префикс (препозитивная частица по терминологии Айтыняна), суффикс (постпозитивная частица по терминологии Айтыняна).*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 24.09.2020թ.:

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՐԻ ԱՌՆՎԱԾ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՂԱՐԻԲՅԱՆ ԱԼԻՆԱ
ԳՊՀ դասախոս
e-mail:alinagharibyan@rambler.ru

«Սասնա ծռեր» էպոսի գրառման առաջին փուլից մինչև վերջին փուլը պատումներ են գրանցվել նաև ներկայիս Գեղարքունիքի մարզի մի շարք բնակավայրերում: Սրանց բնորոշ առանձնահատկությունները պայմանավորված են պատումների տիպաբանական հատկանիշներով, ասացողների ծննդավայրով, ընտանեկան ավանդույթներով, միջավայրով, սեռատարիքային տարբերություններով ու կրթական աստիճանով, գրառման ժամանակաշրջանով ու վայրով, այլ գործոններով:

Բանալի բառեր՝ *Գեղարքունիք, պատում, վիպասաց, Ծովինար, վեպ, վիպական ավանդություն, տեղայնացում, համահավաք տեքստ:*

«Սասնա ծռեր» էպոսի գրառման առաջին փուլից՝ 1873-ից մինչև վերջին փուլը՝ 1970-ականների վերջը, պատումներ են գրանցվել նաև ներկայիս Գեղարքունիքի մարզի մի շարք բնակավայրերում. հիմնականում գրի են առնվել Նոր Բայազետ, Մարտունի, Վարդենիս քաղաքներում և նրանց շրջակա գյուղերում: Գրի առնված պատումների ընդհանուր թիվը հասնում է 23-ի[1], որոնցից տպագրվածները **17**-ն են (**1** պատում՝ հ. Բ, մաս Ա[2]՝ քավառցի Դանիել Ղազարյան, **3** պատում՝ հ. Բ. մաս Բ[3]՝ Հակոբ Նրգեյան, Առաքել Շակոյան, Սարգիս Հակոբյան, **6** պատում՝ հ. Գ[4]՝ մարտունեցի Հովհաննես Հակոբյան, մարտունեցի Մկրտիչ Ավետիսյան, մարտունեցի Մելիք Գևորգյան, նորբայազետցի Թորգոմ Սարգսյան, նորբայազետցի Գեդեոն Դավթյան, նորբայազետցի Զոհրաբ Ավետիսյան, **7** պատում՝ ՍԾ[5] 7 նորահայտ պատումներ՝ Ռ. Գրիգորյանի և Եր. Մելիք-Մուրադյանի գրառմամբ:

---

[1] Սասնա ծռեր, հ. Գ, Պատումների գրառումը և բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Եր. 1979: 1971-1973թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արշավախմբի կողմից Կամո /ներկայիս Գավառ/, Մարտունի, Վարդենիս քաղաքներից ու նրանց հարակից գյուղերից գրանցվել է 12 պատում /տե՛ս էջ 8/ , որոնցից Գ հատորում ընդգրկվել են 6-ը /տե՛ս էջ 345-579/:

[2] Սասնա ծռեր, հ. Բ, մաս Ա, Եր. 1944, էջ 130-152:

[3] Սասնա ծռեր, հ. Բ, մաս Բ, Եր. 1951, էջ 7-230:

[4] Սասնա ծռեր, հ. Գ, Պատումների գրառումը և բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Եր. 1979, էջ 345-579:

[5] Սասնա ծռեր, 7 նորահայտ պատումներ, Պատումները գրառել և հրատարակության են պատրաստել Ռ. Գրիգորյանը և Եր. Մելիք-Մուրադյանը Եր. 2000:

Ընդհանրապես, տարբեր ժամանակներում հիմնականում Արևելյան Հայաստանի բնակավայրերից գրի առնված պատումներին բնորոշ առանձնահատկությունները պայմանավորված են պատումների տիպաբանական հատկանիշներով, ասացողների սեռատարիքային տարբերություններով ու կրթական աստիճանով, գրառման ժամանակաշրջանով ու վայրով, այլ գործոններով: Գեղարքունիքի մարզում գրառված պատումները նույնպես հանդես են բերում առանձնահատկություններ՝ նշված հանգամանքներով պայմանավորված:

Գեղարքունիքի մարզում ապրող վիպասացները 1828-1830թթ., 1876-1877թթ. Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից և Պարսկահայքի հայաբնակ գավառներից գաղթածների սերունդներն են: Իսկ այդ նշանակում է, որ երբ այս տարածաշրջանում վեպը 20-րդ դարասկզբին պատմվում և գրի էր առնվում, ասացողները գաղթած վիպասացների երկրորդ կամ երրորդ սերունդներն էին, որոնք վեպը լսել էին իրենց պապերից կամ հայրերից:

Այլ կերպ՝ վեպը պատմողները հիմնականում վիպասացների ընտանիքներից են սերել՝ բացառությամբ մի քանի ասացողների, որոնք վեպը լսել են համագյուղացի նշանավոր վիպասացներից և հիշողությամբ վերարտադրել, օրինակ, Ռ. Գրիգորյանի վկայությամբ՝ յոթ վիպասացներից միայն մեկն է, որ վեպը լսել է համագյուղացիներից, մնացածները լսել և սովորել են ընտանիքներում[1], նույնպես և Ս. Հարությունյանի վկայությամբ՝ Մկրտիչ Ավետիսյանը /ՍԾ, հ.Գ, 402/ և Զոհրաբ Ավետիսյանն են /ՍԾ, հ.Գ, 548/ լսել իրենց համագյուղացի հայտնի ասացողներից, մնացածները հաստատում են, որ իրենք վեպը լսել են իրենց պապերից կամ հորից: Իսկ սա նշանակում է, որ վիպասացների հայրերը կամ պապերն են վեպի ստեղծման բուն հայրենիքից եղել, բայց ոչ իրենք, ինչի շնորհիվ և նաև պատճառով վեպի հետ կապված զարգացումների երկու գործոններն էլ առկա են: Նախ՝ վիպասացների ընտանիքից սերվելը նպաստում է վիպական ավանդականության պահպանմանը, որը նաև վեպի գոյատևման կարևոր գրավականներից մեկն է, բայց և երկրորդ՝ հետագա վիպասաց սերունդների ավանդական այդ ներքին կապի թուլացումը կարող է և բերում է վեպի լիարժեք ավանդման թուլացման[2]:

Եվ քանի որ ներկայիս Գեղարքունիքի մարզում նախկինում ապրող և պատմող բանասացները չեն ծնվել վեպի բուն հայրենիք հանդիսացող Արևմտյան Հայաստանի համապատասխան գավառներում /Սասուն, Մուշ, Մոկս, Ալաշկերտ, Բայազետ և այլն/, կարծում ենք, այդ հանգամանքով պայմանավորված՝ պատումներում դրսևոր-

[1] Ռ. Գրիգորյան, Ժողովրդական էպոսի Գեղարքունիքի ասացողները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, թիվ 2, էջ 47-50:

[2] ՀԱԲ, Գեղարքունիք, պր. 14, Եր. 1983: Ինչպես նշում է Ռ. Գրիգորյանը, 1971-1977թթ. վեպը գրի է առնվել բացառապես տարեց վիպասացներից, որոնք վեպը սակավ են պատմում: ... «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը Գեղարքունիքում ապրում է մասնատման գոյավիճակ, որը վեպի աստիճանական մոռացման վտանգ է ստեղծում /էջ 10/:... Իսկ 1978թ. այլևս ոչ մի պատում հնարավոր չեղավ գրառել /էջ 18/:

վում են մի շարք առանձնահատկություններ: Նախ՝ որքան էլ վիպական ավանդականությունը ուժեղ լինի, վեպը, կտրվելով բուն հայրենիքից և սերնդից սերունդ ավանդվելով, փորձում է նոր անուններ կամ նոր մոտիվներ ներառել իր մեջ:

Շատ հետաքրքիր է արծվանիստցի Մելիք Գևորգյանի պատումը[1], որի մեջ Սիմանգա թագավորի աղջիկը իրեն գցում է Սևանա ծովը և կաթողիկոսի տված 2 ցորենի հատիկից է հղիանում: Այստեղ ևս առկա է անարատ հղիության մոտիվը, իսկ ցորենի հատիկից հղիությունը ցույց է տալիս վեպի՝ հեքիաթին անցման ընթացքը[2]: Այս մոտիվների ու տեղանունների առկայությունը, ըստ Ա. Սահակյանի, պատահական մուտք է վեպի մեջ հեքիաթներից՝ ունկնդրին տարածական չափ ցույց տալու համար օգտագործելով մոտիկ տեղավայրերի անուններ, որոնք ավանդականության ուժ չեն ստանում և ունկնդիրն էլ այդ անունները ընդունում է պայմանականորեն՝ չշփոթելով վիպական անունների հետ: «Պատահում է, որ ասացողը վիպական կամ հեքիաթային դեպքեր պատմելիս ունկնդիրներին հասկանալի դարձնելու կամ հեռավորության տարածական չափը ցույց տալու համար օգտագործում է մոտիկ տեղավայրերի անունները: Դրանք իհարկե, տեղանունների պատահական մուտք են վեպի մեջ և երբեք ավանդական ուժ չեն ստանում, ավանդաբար չեն անցնում հաջորդ սերնդին: Ունկնդիրն այդպես էլ ընդունում է այդ անունը պայմանականորեն և չի շփոթում հիմնական վիպական տեղանունների հետ»[3]: Իսկ վեպի՝ հեքիաթի անցման ընթացքի նույնպիսի օրինակ կարելի է համարել Բարսեղ Բարսեղյանի պատումում[4] Ծովինարի հետ կապված մի մոտիվի առկայությունը, որը չենք հանդիպում այլ պատումներում: «Հայկական Գագիկ թագավորը»[5] թուղթ է ստանում «Բաղդատու շայից», ով պահանջում էր Ծովինարին: Գագիկ թագավորը երկընտրանքի մեջ է ընկնում և գիշերը երազում տեսնում է, թե ինչպես է վիշապ օձը փաթաթվել իրեն ու երկնքից, կապույտ կապավորից հրեշտակները ձայն են տալիս. «Հուր փայ թալ թըխ առնի էթա, Հուր փայ թալ թըխ առնի էթա»: Առավոտյան Գագիկը կանչում է իր «կարդացողներուն», պատմում երազը, որոնք այն մեկնում են՝ ասելով. «Էդ վիշապ օձն Մսրա շայն ա, Ընդու փայն քու Ծովինար աղջիկն ա, Պտի տաս, թե չէ մեր էրգիրն կավրի»: Գագիկը ստիպված համաձայնվում է աղջկան տալ շային՝ ասելով. «Թըխ տանեն իմ աչերաց լուս Ծովինարին, Թըխ տանեն էդ կռապաշտ շներ, …է լուս Մարութիկ, դու պախապան հըլնես մեր Ծովինարին»: Ընդհանրապես, աղջկան վիշապին տալու միջադեպը /թեկուզ երազում, այլաբանորեն/ արդեն իսկ հեքիա-

[1] Սասնա ծռեր, հ. Գ, Եր. 1979, էջ 445-447:

[2] Հայկ Համբարձումյան, Սասնա ծռեր, Եր. 2018, էջ 105 /հղում/: Ա. Սահակյան, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Եր 1975, էջ 51-52 /նաև հղում՝ էջ 52/:

[3] Ա. Սահակյան, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Եր 1975, էջ 53:

[4] Սասնա ծռեր, 7 նորահայտ պատումներ, Եր. 2000, էջ 197-199 :

[5] Հայկական կամ Հայոց Գագիկ թագավոր արտահայտությունը նույնպես, կարծում ենք, համահավաք տեքստի ազդեցություն է, քանի որ վեպի առաջին ճյուղի հիմնական թեման կռապաշտ-խաչապաշտ հակադրությունն է, ինչի քննությանը ավելի հանգամանորեն կանդրադառնանք:

թային է և հեքիաթներում շատ տարածված մոտիվ է[1]: Մեր վեպում այս առասպելական մոտիվը հիմնականում հանդիպում է առաջին ճյուղում երկվորյակ եղբայրների ամուսնության մոտիվում, մասամբ նաև Մեծ Միերի վիպական ճյուղերում, երբ ամպրոպային հերոսը կամ վիշապամարտիկը կռվում է ծովային կամ ջրարգել վիշապի հետ, սպանում նրան, ազատում է աղջկան /Արև-աղջկան/ և ամուսնանում նրա հետ[2]: Սակայն առաջին ճյուղի սկզբում այս մոտիվը բացակայում է, ավելին՝ խաչապաշտ հոր կողմից երկրի շահը վեր դասելը և աղջկա գիտակցված զոհողության գնալը վեպին հզոր էպիկականություն, ինչու չէ, նաև հերոսականություն են հաղորդում, ինչը, բնականաբար, արդեն հեքիաթ չէ: Մյուս կողմից՝ «վատ երազ» տեսնելը և այն գուշակների կողմից մեկնելը շատ է հիշեցնում մեր Վիպասանքը /հիշենք Աժդահակի երազը[3]/: Եվ վերջապես, «լուս Ծովինարի» համար «լուս Մարաթուկին» պահապան կանչելը, և «լուս աղբյուրից»[4] Ծովինարի երկու բուռ ջուր խմելը նորից խոսում է այն մասին, որ «լուս Ծովինարը»[5], Ծովյան-Ծովերը[6] երկնային լույսի, արևի, հրի խորհրդանիշն է, և այն պահին, երբ լույս է իջնում աղբյուրին, տեղի է ունենում սուրբ ամուսնությունը հրի ու ջրի, երկնքի ու երկրի, որը միջնորդավորվում ու պահպանվում է լուս Մարութիկի[7] միջոցով.

Մի հերգան քար դուս եկավ ծովու միջից,
Լուս կաթաց վըր էդ քարուն
Ու էդ ապառաժ քարեն հաղբուր բխեց,
Ջուր գլգլալեն մեջի թափավ:
Ծովինար աղջիկն ըմալ գփավ վըր էդ ջրուն,
Ըմալ գփավ,
Մե բուռ լիք, մե բուռ լե կիսատ խմեց: /ՍԾ, 199/

Գեղարքունիքի պատումներում այս և նման այլ մոտիվների առկայությունը առավել ևս չպետք է շփոթել վեպի տեղայնացման հետ: Ինչպես նշում է Ա. Սահակյանը,

---

[1] Հեքիաթային տարածված մի մոտիվ է այն, երբ ջրի դեմն առնող վիշապին օրական մի աղջիկ են տալիս, որպեսզի վիշապը նրանց ջուր տա, հետո ժողովուրդը պահանջում է, որ տան նաև թագավորի աղջկան, կամ պարզապես հերթը հասնում է նաև նրան:

[2] Ս. Հարությունյան, Վիշապամարտը «Սասնա ծռերում», Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, թիվ 11, էջ 65-85:

[3] Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Տփղիս, 1913, էջ 74-77:

[4] Ընդհանրապես, Լուս աղբյուրները շատ տարածված են եղել և հիմա էլ կան Հայաստանի տարբեր բնակավայրերում, որոնց վերագրվել են պտղաբերության և բուժիչ զորություններ:

[5] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 468:

[6] Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 415: Բարբառագետների վկայությամբ՝ այսօր էլ Լոռվա տարբեր տարածքներում կայծակին կոչում են Ծովյան կամ Ծովեր:

[7] Մարութները հնդկական էպոսում անձրևաբեր աստվածներ են /տե՛ս Ս. Ահյան, «Սասնա ծռերը» և հնդեվրոպական երեք ֆունկցիաները, ՊԲՀ, 1985, թիվ 1, էջ 32-45/:

«… երբ վեպը առաջին պատմողից անցնում է տեղացիներին և փոխանցվում սերնդից սերունդ, երբ հիմնականում պահելով իր նախկին կերպարանքը, դառնում է այդ վայրի, ազգագրական այդ գոտու սեփական հոգևոր մշակույթ, այդ դեպքում միայն կարող է խոսք լինել տեղայնացման մասին»[1]: Գեղարքունիքի տարածքի և բնակչության պարագայում տեղայնացում հասկացությունը ընդհանրապես բացակայում է, քանի որ տեղայնացման համար անհրաժեշտ են տեղացիներ, տեղական վիպական ավանդություն, տեղային-ազգագրական հոգևոր մշակույթ, որը, ցավալիորեն, պայմանավորված պատմական, ժողովրդագրական իրողություններով, բացակայում էր, քանի որ ներկայիս Գեղարքունիքի մարզի ողջ բնակչությունը գաղթականների և վերաբնակների սերունդներն էին, այլ կերպ՝ տեղաբնակ կամ տեղացի հասկացություն այս մարզում գոյություն չի ունեցել ո՛չ Բայազետի, ո՛չ Մարտունու, ոչ էլ Վարդենիսի և Սևանի տարածաշրջաններում, և վեպը արևմտահայ հատվածի հետ աշխարհագրորեն անցել է Արևելյան Հայաստան: Սակայն, կարծում ենք, որ պատումներում առկա անունների /Սևանա ծով, Աղմաղան սար, Հայրիվանք, Գավառագետ[2]/ ու մոտիվների առկայությունը նույնպես այս տարածաշրջանի պատումներին բնորոշ առանձնահատկություններ կարելի է համարել, քանի որ Գեղարքունիքում վեպը մոտ 150 տարի կենցաղավարել է, վիպվել է, ունեցել է իր նշանավոր պատմողներն ու պահանջվող լսարանը՝ ի տարբերություն Սասնա պատումների, որտեղ ասացողները 1915-1920թթ. Սասունից և նրա շրջակա բնակավայրերից գաղթածներն էին և փաստացի վեպի բուն հայրենիքում ծնվածները:

Կարևոր է նաև այն փաստը, որ վեպի գրառման վերջին փուլում՝ անցյալ դարի 70-ականներին, գրանցվել են պատումներ պատմական Դիադինի շրջանից. դրանք գրի են առնվել ներկայիս Վարդենիս քաղաքում, Դիադինի բարբառով: Վերը հիշատակված Բասոն /Բարսեղ Բարսեղյանը/ և Կարինե Բարսեղյանը[3] ծնվել են ներկայիս Վարդենիս քաղաքում, իսկ նրանց նախնիները գաղթել են պատմական Դիադինից, ինչը վեպի տարածման աշխարհագրությունը ընդլայնելու հնարավորություն է տալիս:

Գեղարքունիքի վիպասացների միջավայրին բնորոշ է եղել այն կենսակերպը կամ կենցաղավարումը, որ մշեցի, ալաշկերտցի, դիադինցի վիպասացները հաճախ էին հավաքվում օդաներում և պատմում վեպը, ինչի արդյունքում այս տարածքներում վիպահաղորդումը դառնում էր ավելի լայն ու ընդգրկուն, նպաստում տարբեր ազգագրական շրջաններում պատմվող վեպի պատումների շփումներին ու փոխանցումներին[4]. օրինակ՝ Նրգեյ Հակոբի /ՄԾ, հ.Բ, մաս Բ, 9-11/ նախնիները գաղթել են Ալաշկերտի Խաստուրից, ինքը վեպը սովորել է նույնպես Խաստուրից գաղթած՝

[1] Ա. Սահակյան, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Եր 1975, էջ 59:

[2] «Սասնա ծռեր» վեպի՝ Գեղարքունիքում գրառված պատումները, Ռ. Գրիգորյան, Ե. Մելիք-Մուրադյան, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, 2004, Եր. Էջ 151-152:

[3] Սասնա ծռեր, 7 նորահայտ պատումներ, Եր. 2000, էջ 197-262 :

[4] Նույն տեղում, էջ 13:

Երանոսի տիրացու Հակոբ Տեր-Մարտիրոսյանից, սակայն վեպը լսել և սովորել է նաև բաշքյանդցի /ներկայիս Գեղարքունիք գյուղ/՝ Սասունի Իշխանաձոր գյուղից գաղթած Ավդալից: Նույնը կարելի է ասել արծվաքարցի Առաքել Շակոյանի մասին /ՍԾ, հ.Բ, մասԲ, 89-91/, որը վեպը լսել է Բայազետի Բարաքյաթ գյուղից գաղթած իր հորից և ավագ եղբորից, սակայն վեպը մի քանի անգամ լսել է նաև բաշքյանդցի Ավդալից, ինչը, բնականաբար, իր ազդեցությունն է ունենում պատումների տիպաբանական հատկանիշների վրա: Մարտունիում հայտնի ասացող 85-ամյա Գեղամ Ավետիսյանը վեպը պատմելու ընթացքում ամեն պատեհ առիթով հիշում է իր նախորդ վիպասացին. «Հայկազ հմլա կբոռեր ու կանիծեր էդա շուն տաճիկին, օր տղին թալեց խոր: Գելներ, ձեռներ կպարզեր. Աստված կկանչեր օր էնի խասնի Դավթին, շուտ խանա խորից…» /ՍԾ, 11/:

Սա և՛ վիպական ավանդականության թուլացում էր նշանակում, և՛ միաժամանակ կարող է դիտվել իբրև վիպահաղորդման ու վիպապահպանման մղում, վեպը մոռացումից փրկելու վիպասացների վերջին ջանքերից մեկը:

Մյուս կողմից՝ արդեն 1970-ականներին Գեղարքունիքի տարածաշրջանից գրի առնված որոշ պատումներում, որքան էլ ասացողները վարպետ բանասացներ են, կարծում ենք, զգալի է համահավաք տեքստի ազդեցությունը: Այս իրողությունը տարածվում է նաև 1970-ականներին Հայաստանի այլ տարածաշրջաններից գրի առնված այն պատումների վրա, որոնց ասացողները ծնվել են Արևելյան Հայաստանում[1]:

Համահավաք տեքստի ազդեցության լավագույն ցուցիչ կարող է համարվել կանանց անունների գործածությունը վեպում: Այդ իրողությունը դրսևորվում է հատկապես Ծովինարի անվան և նրա շուրջ հյուսված մոտիվներում[2]: Պետք է նշել, որ վեպի տպագրված առաջին 47 պատումներից միայն մեկ՝ Դանիել Ղազարյանի պատումում է /ՍԾ, հ. Բ, մաս Ա, 135-137, զոլախաչցի, Քավառ/ հիշատակվում Ծովինար անունը, որը Գորգիգ թագավորի քույրն է, և ում ծառան փախցնում, տանում է կռապաշտ Սենեքարիմ թագավորի համար: Սրանք ունենում են երկու որդի՝ մեծը՝ Սանասար, կրտսերը՝ Բաղդասար /ընդ որում՝ եղբայրները երկվորյակ չեն, տարբեր ժամանակներում են ծնվում/: Իսկ արդեն ավելի ուշ՝ 1970-ականներին գրառված պատումներում Ծովինար անունը ոչ հաճախ, սակայն մի շարք պատումներում հիշատակվում է, ընդ որում՝ նշված պատումներում Ծովինարի շուրջ հյուսված մոտիվները հիմնականում կայուն են և նման են համահավաք տեքստում բերված միջադեպերին: Մասնավորապես, բոլոր այն պատումները, որոնց մեջ երկվորյակների մոր անունը Ծովինար է, գրեթե նույն մոտիվով են սկսվում, ինչպես համահավաք տեքստը. Հայոց Գագիկ

[1] Ա. Ղարիբյան, Սասնա ծռերի անունների շուրջ, Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրների շուրջ, Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2019, էջ 127-140:

[2] Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Եր. 1961:

թագավորը հարկատու է Բաղդատի կռապաշտ թագավորին, հարկահանները գալիս են, անցնում են թագավորի քոշկ ու սարի առջևով, տեսնում են Ծովինարին, որը արևին ասում էր՝ դու դուրս մի արի, ես եմ գալի, ուշաթափվում են, սուս ու փուս մեկնում են Բաղդատ և աղջկա գեղեցկության մասին հայտնում խալիֆին: 1970-ականներին գրի առնված Գեղարքունիքի պատումներից երկուսում է հանդիպում Ծովինար անունը՝ Սոփեր Հովհաննիսյանի /ՍԾ, 159/ և Բարսեղ Բարսեղյանի /ՍԾ, 197-198/: Ս. Հովհաննիսյանի պատումը սկսվում է գրեթե նույն մոտիվով.

Արաբստան շայ համ կռքապաշտ էր, Համ էլ շատ զորեղցեր էր,
Հայերու Գագիկ թագավոր էնոր խարջադարն էր:
…Մե տարի էլ, որ էկան խարջ տանելու,Վեզիրի հաշկն հնգավ վըր Գագկի աղջկան,
Աղջի՛կ, ես կասեմ աղջիկ, դուք խասկցեք հուրի-մալաք,
Արևուն կասեր, դու դուս մի հելի, ես բոլ եմ:
Տեսան Ծովինարին ու խաբար տարան Մսրա շային /ՍԾ, 159/:

Այս իրողությունը, կարելի է ասել, վերաբերում է նաև Արմաղան և Իսմիլ անուններին և նրանց շուրջ հյուսված մոտիվներին, ինչին կանդրադառնանք մեկ այլ առիթով:

Կարծում ենք, որ համահավաքի ազդեցության արդյունք է նաև այն իրողությունը, որ, ինչպես բանահավաք Ռ. Գրիգորյանն է նշում, նորօրյա վիպասացները իրենք են անջատում ճյուղերը՝ վերնագրելով ՝ Սանասար և Բաղդասար, Ջոջ Մեհր, Ծուռ կամ Թլոր Դավիթ, Պստիկ Մհեր կամ Մեհրի[1]: Մինչդեռ նախորդ ասացողները սովորաբար ճյուղերը չեն առանձնացնում կամ ճյուղ ասելով նկատի են ունենում վեպում հիշտակվող բոլոր հերոսներին, այսինքն՝ բացի Սասնա տան գլխավոր հերոսները, նաև Քեռի Թորոսին, Ձենով Հովանին, Մելիքսեթ քահանային և ուրիշների, որոնց շուրջ հյուսվում են բազմաթիվ մոտիվներ: Այդ պատճառով, երբ ասացողները ցանկանում են ճյուղեր նշել, ասում են՝ «դառնանք ճղնեճուղ խաղանք», կամ 7, նաև 40 ճյուղերի մասին են հիշատակում՝ նկատի ունենալով վեպում առկա գրեթր բոլոր հերոսներին[2]: Իսկ երբ պատմողը ինքն է տարբերակում չորս ճյուղերը, պետք է ենթադրել, որ նա ծանոթ է համահավաք տեքստին: Երբեմն բանահավաքները այդ մասին հիշատակում են, երբ տեղեկություններ են հաղորդում ասացողի մասին՝ նշելով, որ կամ նա է կարդացել, կամ թոռներն են կարդացել համահավաք տեքստը:

[1] «Սասնա ծռեր» վեպի Գեղարքունիքում գրառված պատումները, Ռ. Գրիգորյան, Ե. Մելիք-Մուրադյան, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, 2004, Եր. էջ 150:
[2] Ա. Սահակյան, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Եր 1975, էջ 60-77. Հ. Համբարձումյան, «Սասնա ծռեր», պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Եր., 2018, էջ 247-252:

Այս տարածաշրջանի պատումներին բնորոշ առանձնահատկությունների շարքից կարելի է համարել այն նոր, հիմնականում մինչև այդ չհանդիպած վիպական մոտիվների առկայությունը, որոնք նաև վիպասացությանը բնորոշ զարգացումների դրսևորումներ պիտի համարել: Գեղարքունիքի պատումներում վիպական ավանդականությունը որքան էլ ուժեղ է, և այն հստակ պահպանվում է հերոսների շուրջ հյուսված մոտիվային շղթայում, այնուամենայնիվ, Ռ. Գրիգորյանի կողմից գրի առնված 4 պատումների[1] առաջին ճյուղում առկա է նոր մոտիվաշար. կռապաշտ հոր որդիների՝ Սանասարի և Բաղդասարի կողմից հոր դաշտերը ոշերից պահպանելու և ազատելու դրվագով: Այս մոտիվաշարով պատումները գրի են առնվել Մարտունիում հայտի ասացողներ Հովհաննես Վրթոյանից, Հայկազ Մկրտչյանից, Մարուսյա Մելքոնյանից, Գեղամ Ավետիսյանից, որոնց նախնիները գաղթել էին Ալաշկերտի Ղուլիմպուճախ և Մանգասար գյուղերից: Առաջին անգամ այս մոտիվով սկսվող պատում գրանցվել է 1973թ. Ս. Հարությունյանի ու Ա. Սահակյանի կողմից՝ ասացող Հովհաննես Հակոբյանից /ՍԾ, հ. Գ, 347-348/, որը ծնվել է Մարտունու Ալի Ղըռխ՝ ներկայիս Աստղաձոր գյուղում: Ինչպես նշում են Ռ. Գրիգորյանն ու նաև Հ. Համբարձումյանը, սա խոսում է Ալաշկերտի պատումներում այս մոտիվի ավանդականության մասին[2] կամ զուտ «տեղային» բնույթի մասին, քանի որ վերը նշված ասացողները հիմնականում Մարտունի քաղաքից են, իսկ Հովհաննես Հակոբյանը Մարտունու Աստղաձոր գյուղից /ՍԾ, հ. Գ, 346/: Այդ մասին մարտունեցի կույր ասացող Գեղամ Ավետիսյանը, որը վարպետ ասացող էր, վկայում է, որ. «Մենք մե քանի տարի առաջ կէթինք Ալի Ղըռըխ, էնտեղ խնամի ունինք՝ Հակոյ Հովեն, էնի էլ կպատմեր էս պատմութուն, օր կէրթինք կոնախ, էնի կժողվեր մեզի, իր օդեն կպատմեր, յա թե չէ կէրթինք սար, էնի խոտաղ էր[3]»:

Մյուս կողմից՝ վեպի մինչև հիմա գրի առնված և ուսումնասիրված բոլոր պատումների մեջ իր մշակվածությամբ առանձնանում է երանոսցի Հակոբ Նրգեյանի պատումը /ՍԾ, հ.Բ, մասԲ, 9-11/, և որոշ մոտիվային ընդհանրություններով /մասնավորապես երկու պատումների սկզբում էլ Եգիպտոսի հիշատակումը/ նրա հետ կապ ունեցող Սարգիս Հակոբյանի պատումը /ՍԾ, հ.Բ, մասԲ, 176/[4]: Նրգեյ Հակոյի պատումը միակն է, որտեղ ասացողը կարողացել է այդքան ազատ Աստվածաշնչից և իրեն ծանոթ այլ գրքերից ներմուծումներ կատարել վիպաշարի մեջ՝ իր կարծիքով՝ ավելի հետաքրքիր ու հարուստ դարձնելով պատումի բովանդակությունը: Սա ինքնին

[1] Սասնա ծռեր, 7 նորահայտ պատումներ, Եր. 2000, էջ 16-156:

[2] Ռ. Գրիգորյան, «Սասնա ծռեր» վեպի Գեղարքունիքում գրառված պատումները, Ռ. Գրիգորյան, Ե. Մելիք-Մուրադյան, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, 2004, Եր. Էջ 151: Հ. Համբարձումյան, «Սասնա ծռեր», պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Եր., 2018, էջ 106/հղում/:

[3] Սասնա ծռեր, 7 նորահայտ պատումներ, Եր. 2000, էջ 120:

[4] Նրգեյան Հակոբը և Սարգիս Հակոբյանը միևնույն մարդու՝ Երանոսի «մեծ գավառագիտունի» համբավ հանած տիրացու Հակոբ Տեր-Մարտիրոսյանի փեսան ու տղան են: Նրա մահից հետո նրա աշակերտ և փեսա Նրգեյ Հակոն է դառնում գյուղի տիրացուն, որից պատումը գրի է առնվել 1926 թ., իսկ Ս. Հակոբյանից՝ 1903թ:

վեպի տարածման ու պահպանման շատ հետաքրքիր դրսևորում է, որտեղ երևում է, թե ինչ կարող է կատարվել բանավոր ստեղծագործության հետ, երբ ասացողը, ինչ-պես վերը նշեցինք, փաստացի չի սերում վիպասացների ընտանիքից, սիրում է երգել /աշուղ Սազային նրա քրոջ որդին է/, ավելին՝ գրագետ երևալու համար բարբառով չի պատմում, այլ, որքան հնարավոր է, գրքային-գրական հայերենով է ներկայացնում վեպը, իսկ լեզուն վեպի ավանդականության կարևորագույն բաղադրիչն է և ցուցիչը: Ասացողը գրագետ է, ժամանակի չափանիշներով՝ շատ կարդացած: 1870-80-ական թթ. ազգայնական շարժումներից ու գաղափարախոսությունից ազդվելով՝ նա գրեթե անգիր է արել Րաֆֆու «Սամվել», «Դավիթ Բեկ», «Խենթը» վեպերը, միաժամանակ բնավորությամբ միստիկ, ոգևորվող լինելով՝ հավատում էր գերբնական ուժերին, մեծ ու փոքր սրբերին, նրանց հրաշագործություններից շատ բան փոխադրում էր վեպերի հերոսների վրա, զուգահեռներ էր անցկացնում այդ վեպերի, Աստվածաշնչի ու քրիստոնեական սրբերի միջև[1]: Այսինքն՝ սրանք հանգամանքներ են, որոնք կարող են թուլացնել վիպահաղորդման ավանդականությունը: Սակայն այս պատումը միա-ժամանակ ցույց է տալիս, թե որքան ամուր է մեր վեպում ավանդականության ուժը, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատվել է, «Գրքային տարրերը, հայտնվելով բա-նահյուսական միջավայրում, պահպանելով հանդերձ որոշակի ինքնուրույնություն, ենթակվում են բանավոր ավանդույթի պայմաններին ու կենցաղավարության առանձնահատկություններին: …ձուլվում են նախնիներից ավանդված պատումին՝ հարստացնելով բանավոր ավանդույթը նոր մոտիվներով, գրքային ոճով ու թե-մատիկ-գաղափարական նրբերանգներով»[2]:

[1] Սասնա ծռեր, հ. Բ, մաս Բ, Եր. 1951, էջ 10:

[2] Հ. Համբարձումյան, «Սասնա ծռեր», պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Եր., 2018, էջ 277:

ON THE FEATURES OF THE STORIES IN "SASNA TSRER" EPIC WRITTEN IN GEGHARKUNIK REGION

GHARIBYAN ALINA
GSU lecturer

From the first stage of writing the epic novel "Sasna Tsrer" to the last stage of writing it, stories have been also recorded in a number of settlements in the present-day Gegharkunik Region. The features of these stories are conditioned by the typological characteristics of the stories and their interactions, by the birthplace, family traditions and environment, age and gender differences and level of education of the narrators, by the time and place of writing the stories, and by other factors.

Keywords: *Gegharkunik, story, epos teller, Tsovinar, novel, epic tradition, localization, collective text.*

ВОКРУГ ОСОБЕННОСТЕЙ СКАЗОВ ЭПОСА “САСНА ЦРЕР”, ЗАПИСАННЫХ В ГЕГАРКУНИКСКОЙ ОБЛАСТИ

ГАРИБЯН АЛИНА
Преподаватель ГГУ

С первого до последнего этапа записей эпоса “Сасна црер”, рассказы эпоса были записаны и в ряде населенных пунктах нынешней Гегаркуникской области. Их характерные особенности обусловлены типологическими особенностями, взаимодействиями, местом рождения рассказчиков, семейными традициями, окружающей средой, половозрастными различиями, образовательным уровнем, временем и местом написания и другими факторами.

Ключевые слова: *Гегаркуник, сказ, сказитель, Цовинар, эпос, эпическая традиция, локализация, сводный текст.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 11.10.2020թ.:

ՎԻՇԱՊԻ ԿԵՐՊԱՐԻ ԵՎ ՄՈՏԻՎԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ԲԱԳՈՅԱՆ ԱԼԼԱ
ԳՊՀ դասախոս
e-mail: allabagoyan@mail.ru

Հոդվածը ներկայացնում է վիշապի կերպարի և վիշապի մոտիվի տարաբնույթ դրսևորումները Հովհաննես Թումանյանի՝ բանահյուսական հիմքի վրա ստեղծված երկերում՝ բալլադներում, պոեմներում և հեքիաթներում:

Համադրելով և զուգորդելով իրականը, հեքիաթայինն ու միֆականը՝ Թումանյանը հավատարիմ է մնում ժողովրդական բանահյուսության ավանդույթներին և օգտվելով տարբեր առասպելույթների սյուժեներից՝ միաժամանակ հարստացնում է քննվող երկերի պատկերային համակարգը: Վիշապի կերպարն ու վիշապի մոտիվը գրողը հանդես է բերում միմյանցից տարբեր նպատակներով և տարբեր հանգամանքներում՝ ուղղակիորեն կամ այլաբանորեն: Այսպես, եթե քնարաէպիկական ժանրերում գրողը վիշապի կերպարն օգտագործում է հիմնականում որպես խոսքի պատկերավորման միջոց՝ համեմատություն կամ այլաբերություն՝ խորհրդանշելով կամ ընդգծելով նրա ահագնությունը, հզորությունը, ահազդու, հաճախ՝ մահաբեր ուժը, ապա վիշապի մոտիվն օգտագործում է՝ նկարագրվող երևույթները, պատկերներն ու գործողություններն առավել խորությամբ մեկնաբանելու նպատակով: Ու թեև վիշապի մոտիվը պարունակող հեքիաթներում հեղինակը վիշապ բառի փոխարեն գործածում է դև կամ հրեշ բառերը, միևնույնն է, դրանք հավատարիմ են վիշապի առասպելին բնորոշ սյուժետային հիմնական գծին (վիշապն առևանգում է գեղեցիկ կույսին, իսկ քաջ վիշապամարտիկը մենամարտում է առևանգողի հետ, պարտության մատնում կամ սպանում նրան՝ ազատելով աղջկան):

Բանալի բառեր՝ *վիշապ, կերպար, մոտիվ, ժողովրդական բանահյուսություն, բալլադ, պոեմ, հեքիաթ, առասպել, պատկերավորման միջոց:*

Մարդկային երևակայության հարատև թռիչքն ապահովել է 21-րդ դարի գիտության ու տեխնիկայի աննախադեպ, սրընթաց զարգացումը: Սակայն նորարարությունների կողքին շարունակում են իրենց կենսունակությունը պահպանել գեղարվեստում հանդես եկող միֆական բազմաթիվ կերպարներ և մոտիվներ, որոնք ծագել են անհիշելի ժամանակներում, բայց այսօր էլ զարմանալիորեն արդիական են իրենց թե՛ ուղղակի և թե՛ այլաբերական նշանակությամբ: Այս առումով ուշագրավ է վիշապի

կերպարը[1], որն իր տարբեր գործառույթներով այսօր էլ մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես հնագետների և պատմաբանների, այնպես էլ մշակութաբանների և արվեստագետների շրջանում:

Մեր նպատակն է՝ քննել Թումանյանի ստեղծագործության մեջ հանդես եկող վիշապի կերպարը և մոտիվը, բացահայտել՝ ինչ հանգամանքներում են հանդես գալիս դրանք և ինչ նպատակ է հետապնդում գրողը՝ այս կերպարին և մոտիվին անդրադառնալիս: Վիշապի դրսևորումները Թումանյանի երկերում թեև մեծ թիվ չեն կազմում, սակայն կարևոր են՝ գրողի ստեղծագործության ևս մի շերտը բացահայտելու առումով:

Թումանյանի համակրանքը ժողովրդական բառ ու բանի, ազգային և համամարդկային խնդիրներ արծարծող հավերժական թեմաների նկատմամբ ակնհայտ է: Նա իրեն հետաքրքրող բանահյուսական այս կամ այն նյութը մշակելիս խնդրին մոտեցել է մեծ պատասխանատվությամբ, երբեմն՝ տասնամյակներ շարունակ (ինչպես «Հազարան բըլբուլի» պարագայում), մինչև ժողովրդական ստեղծագործության գրական մշակմանը ձեռնամուխ լինելն ուսումնասիրել է միևնույն սյուժեի բազմաթիվ տարբերակներ[2], քննել, համադրել, համեմատել է դրանք, նոր միայն ստեղծել է գրական երկեր, որոնք համամարդկային խնդիրների հետ մեկտեղ արտացոլում են զուտ հայկական արժեհամակարգն ու լեզվամտածողությունը:

Գեղարվեստական գրականության մեջ վիշապները՝ առասպելական այդ թռչունսողունները, որոնք ցամաքեցնում են կենարար գետերն ու ակունքները, իսկ նրանց երախից կամ երախներից կրակ է ժայթքում, տարբեր համատեքստերում տարբեր կերպ են ներկայացվում՝ ուղղակիորեն կամ այլաբանորեն. մի դեպքում դրանք խորհրդանշում են բնության անկասելի տարերքը, մյուս դեպքում մարմնավորում են չարը, երրորդ դեպքում կարող են պատկերվել իբրև չարը կործանող ուժ և կամ երկդիմի կերպար, որն իրականում չար է, բայց բարերար է ձևանում:

Հայ նոր գրականության մեջ վիշապը հանդես է գալիս երկու հիմնական գործառույթով՝ նախ՝ իբրև խոսքի պատկերավորման միջոց, ընդ որում ավելի հաճախ մենք այն տեսնում ենք համեմատություններում, և ապա՝ իբրև գրական կերպար, որը որոշակիորեն մասնակցում է սյուժեի զարգացմանը:

Ինչպես իր նախորդները՝ Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը և այլք, այնպես էլ Հովի. Թումանյանը կարևորում էր ժողովրդական բանահյուսության դերը հայ գեղարվեստական գրականության զարգացման գործում: Նրա երկերում ևս նկատում ենք վի-

---

[1] Այս կերպարին քանիցս անդրադարձել ենք. տե՛ս «Միֆական պատկերները Վրթանես Փափազյանի «Վիշապ» ստեղծագործության մեջ», ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 6, Երևան, 2019, էջ 282-294; «Վիշապի մոտիվը հայ նոր գրականության մեջ. քննության փորձ», «Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին», Երևան, 2019, էջ 257-272:

[2] Տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը (Ուսումնասիրություններ և հոդվածներ), Երևան, 2000, էջ 145:

շապի մոտիվի կիրառության դեպքեր, որոնք թեև չունեն մեծ ընդգրկում, սակայն կարևոր են՝ նկարագրվող իրողության պատկերավորության առումով: Ուշագրավ է, որ այս մոտիվը ոչ թե հեքիաթներում է հանդես գալիս (բացառությամբ «Եդեմական ծաղիկը» հեքիաթի), ինչպես Աղայանի մոտ («Օձամանուկ և Արևահատ», «Վիշապին հաղթողը» և այլն), այլ քնարաէպիկական ժանրերում՝ պոեմներում, լեգենդներում ու բալլադներում, որոնցից շատերի սյուժեն հեղինակը քաղել է բանահյուսության ակունքներից: Թումանյանը *վիշապի կերպարն* օգտագործում է հիմնականում իբրև պատկերավորման միջոց, իսկ *վիշապի մոտիվը* կիրառելիս գործածում է ոչ թե *վիշապ,* այլ նրան համարժեք *դև* բառը («Եդեմական ծաղիկը» հեքիաթում՝ Սիպտակ դևը, «Հազարան բըլբուլ» հեքիաթ-պոեմում՝ Սև դևը, որոնք կատարում են առասպելական վիշապի գործառույթները):

Հայկական տարբեր աղբյուրներում վիշապը ներկայացվում է տարբեր նշանակություններով՝ «անհեթեթ մեծ *օձ*, մանավանդ ջրային», «առասպելական *հրէշ* կամ *դև*»[1], կամ՝ «...ինչ յերկրի մեծ լինի՝ *վիշապ* ասեն»[2] և այլն, ինչը վկայում է այս բառի իմաստային հարուստ նրբերանգների մասին: Այսինքն՝ *վիշապ* բառն ունի նաև այլաբանական նշանակություն՝ արտահայտելով *մեծ, ամեհի, հսկա, վիթխարի* իմաստ, ինչպես և՝ *ուժգին քամու* նշանակություն: Թումանյանն անշուշտ տիրապետում էր այդ ներկապնակին և առանձին վրձնահարվածներով կարծես կերտում էր ամբողջական պտկերներ՝ մեկ բառում խտացնելով զանազան իմաստներ:

Դիտարկենք *վիշապի կերպարի* դրսևորումներն իբրև պատկերային համակարգը որոշարկող բաղադրիչ կամ խոսքի պատկերավորման միջոց:

«Լուսավորչի կանթեղը» (1902) բալլադում Թումանյանը վիշապ բառը գործածել է ուժգնության նշանակությամբ.

Ոչ մարդկային ձեռ կըհասնի // Էն ահավոր բարձունքին,

Եվ ոչ քամին կըհանգցընի՝ // *Վիշապ-քամին ահագին*:

«Աղավնու վանքը» (1912) ազգային ավանդության[3] մեջ վիշապը բռնակալ Լենկթեմուրն է՝ իր զորքով: Այստեղ վիշապը համեմատության բաղադրիչ է և մարմնավորում է բազմաչարչար հայ ազգին սպառնացող աղետը: Հեղինակն այստեղ վիշապին պատկերել է *կրակ-ջուր* հակադրության միասնության մեջ, ինչն այս կերպարի կարևոր առանձնահատկությունն է.

Լենկթեմուրն եկավ, *հուրն* ու սուրն եկավ, // Անօրենն եկավ, եկա՛վ ու եկա՛վ.

Հավաքեց, կիտեց մեր ազգը Հայոց, // Փաթաթեց, պատեց, ինչպես *վիշապ-օձ*,

Կանգնեց *Սևանա* ափին հովասուն...

---

[1] Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 4, Երևան,1979, էջ 341-342:

[2] Ղ.Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ-Սբ.Ղազար, 1910, էջ 194:

[3] Էդ.Ջրբաշյանն առաջարկում է այն կոչել *բալլադ*: Տե՛ս Էդ.Ջրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը (Ուսումնասիրություններ և հոդվածներ), Երևան, 2000, էջ 68-84:

«Թագավորն ու չարչին» (1917) բալլադում ևս Թումանյանը գործածել է վիշապի կերպարը, որը զուտ խոսքի պատկերավորման միջոց է՝ համեմատության բաղադրիչ, և խորհրդանշում է համեմատվող կերպարի երկդիմությունն ու չարությունը.

Չարչու կերպ մըտած, ինչպես *վիշապ օձ*,
Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան:

Ակնհայտ է, որ Թումանյանի երկերում վիշապը նույնացվում է չարի հետ՝ ի տարբերություն Աբովյանի «*հրեղեն վիշապ*» այն հերոսների[1], որոնք կործանում են չարը: Սակայն այստեղ կա մի բացառություն՝ **«Սասունցի Դավիթը»** (1902) պոեմը, որտեղ հանդիպում է նույնական մի պատկեր, այսինքն՝ վիշապ բառով գրողը բնութագրում է Դավթի՝ վիշապին հատուկ մեծությունն ու զորեղությունը.

Ու դառավ որսկան: Գնաց մի կորկում // Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
...Մըթանը գընում իրեն հոր ծանոթ // Աղքատ, անորդի մի ծեր կընկա մոտ,
Վիշապի նըման, երկա՜ր, ահագի՜ն // Մեկնըվում քընում կըրակի կողքին:

Հակադրությունն առավել շոշափելի և ակնառու է դառնում, ինչ-որ չափով նաև՝ երգիծական, երբ պատկերացնում ենք, թե ինչպես էր այս վիշապ-հսկան ճնճղուկ ու լոր սպանում:

Ինչ վերաբերում է *վիշապի մոտիվի* կիրառության նմուշներին, ապա այստեղ նկատում ենք ոչ միայն գեղարվեստական խոսքին բնորոշ համեմատություն կամ այլաբանություն, այլև հեղինակի վարպետության շնորհիվ ժողովրդական բանահյուսությունից ուղղակիորեն գեղարվեստական գրականությանն անցած այնպիսի պատկերներ և սյուժեներ, որոնք տարածված են և՛ հայ, և՛ բազում այլ ժողովուրդների բանարվեստում:

Այսպես՝ **«Թմկաբերդի առումը»** (1902-1904) պոեմում, ինչպես «Աղավնու վանքը» գրվածքում, վիպական պատումը միահյուսվում է առասպելական պատկերի հետ. վիշապի այլաբանությամբ գրողը կարծես նախազգուշացնում է վերահաս աղետի մասին: Սակայն, ի տարբերություն «Թմկաբերդի առումը» պոեմի, «Աղավնու վանքի»՝ վերը նշված դրվագում բռնակալ Լենկթեմուրն ընդամենը համեմատվում է վիշապօձի հետ, իսկ բուն մոտիվը բացակայում է: Մինչդեռ այստեղ տեսնում ենք վիշապի անսպասելի հայտնվելու և անառիկ ամրոցը սպառնագին շրջափակելու առասպելական մի պատկեր, որը ներկայացվում է երազի ձևով՝ իբրև նախազգուշացում կամ իբրև վերահաս ողբերգության վտանգի կանխազգացում.

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը, // Որ *վիշապ օձը* եկել է ահա,
Եկել, փաթաթվել, իր բերդը պատել, // Գլուխը դըրել ետ պոչի վրա:
Ու բարձրացնում է *իըրեշն* ահռելի, // Իրեն գլուխը բարձրացնում է վեր,
Բարձրացնում մինչև բարձունքը բերդի, //Մինչև Թաթուլի պալատն ու տըներ:

[1] Տե՛ս «Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին», Երևան, 2019, էջ 258-259:

Թումանյանը վերոհիշյալ սկզբունքն է կիրառել նաև **«Հին կռիվը»** (1902-1906) պոեմում, որը թեև ամբողջությամբ մեզ չի հասել, բայց արժեքավոր է՝ հեղինակի կենսագրության վաղ շրջանի մասին պատկերացում կազմելու առումով: Այստեղ արևմտահայության կրած սարսափների և կորուստների այլաբանությունն արտահայտված է պոեմի՝ պահպանված «Երկրում» հատվածի նախերգանքում՝ ջրարգել վիշապի մասին հայտնի զրույցի միջոցով.

Հեքիաթն ասում է, թե՝ մի աշխարհքում
Բղխում էր առատ ջուրն անմահական,
Բայց ագահ *վիշապն* առաջը փակում,
Ծարավ էր թողնում աշխարհքն աննըման:
Նա զոհ էր ուզում սիրուն աղջիկներ,
Որ ջուր բաց թողնի ծարավ աշխարհքին…

Հետագա պատումից հասկանալի է դառնում, որ ջրարգել այդ վիշապը խորհրդանշում է քուրդ ցեղապետ Մուսաբեկին, որը ցանկանում է ծնողներից խլել գեղեցկուհի Շողիկին և վերջինիս քահանա հոր խնդրանքով նրան երկու օր ժամանակ է տալիս: Նախերգանքում փրկության մասին առասպելից գրողն աստիճանաբար անցում է կատարում գորշ իրականությանը՝ հուսաբեկ մարդկանց անօգնականությանն ու դժբախտությանը: Այսպես, «*Լույս* երկրից եկած» մի տղա կռվում է վիշապի դեմ, հաղթում նրան՝ ազատելով փակված աղբյուրը և փրկելով անհամար տանջվող հոգիներ, բայց առասպելն այսքանով ավարտվում է, և պարզվում է դառն իրականությունն իր ամբողջ ողբերգականությամբ: Ավելին, պատմողը վստահեցնում է, որ նկարագրվածը ճշմարիտ դեպք է, որի ականատեսն է ինքը, որ դա հեքիաթ չէ՝ «եղած թե չեղած *Մըթին* աշխարհքում», և հավաստում է, թե՝ «հեքիաթ չըկա մեր անբախտ կյանքում…»: Հետևությունը մեկն է՝ չարն իրական է, և պետք է ճանաչել ու պայքարել նրա դեմ: Նախերգանքն ավարտվում է հուսահատ ափսոսանքով.

Մեր երջանկության աղբյուրը փակած՝
Մեր վարդ քույրերին հոշոտում է *նա*…
Ա՛խ, ի՛նչքան արյուն, արցունք է թափված
Մեր սիրուն երկրի սարերի վըրա…

Այստեղ իրական կյանքի և հեքիաթի ընդգծված հակադրությամբ Թումանյանը ցավով է խոսում բարու՝ միայն հեքիաթներում հաղթելու, և չարի՝ իրական կյանքում շատ հաճախ անընկճելի լինելու մասին:

Հովի. Թումանյանի հեքիաթներում ևս հանդիպում են *վիշապի մոտիվի* կիրառության օրինակներ:

Հեքիաթը, իբրև վիպերգական ժանր, գրողի բնորոշմամբ՝ «հավերժական սիմվոլների» անծայրածիր աշխարհն է, որն անմիջականորեն արտացոլում է ժողովրդական կյանքն ու հոգեբանությունը, երազանքներն ու ձգտումները:

«Թումանյանի արձակը կարդալիս,- գրում է Էդ. Ջրբաշյանը,- մենք կարծես մտնում ենք ոչ թե գրականություն, այլ կյանք»[1]: Թերևս սա է պատճառը, որ նրա հեքիաթներում նվազագույնի են հասցված հեքիաթներին բնորոշ առասպելական-ֆանտաստիկ կերպարները՝ դևերն ու հրեշները, ավելին, արձակ հեքիաթների բնագրերում իսպառ բացակայում է *վիշապ* բառը: Վիշապի մոտիվն այստեղ առկա է. գրողը գործածել է դրան համարժեք *դև* (որոշ դեպքերում նաև՝ *հրեշ*) բառը և, ինչպես արդեն նշել ենք, թե՛ «Եդեմական ծաղիկը» հեքիաթում հանդես եկող Սիպտակ դևը, թե՛ «Հազարան բըլբուլ» հեքիաթ-պոեմում՝ Սև դևը կատարում են առասպելական վիշապի գործառույթները, առևանգում են գեղեցկուհի աղջկան, պահում անազատության մեջ, բայց գալիս է չքնաղ կույսին ազատագրող հերոսը, առաջինում՝ «հզոր Արին-Արմանելին», երկրորդում՝ Արեգը (հմմտ. Ղ. Աղայանի վիշապամարտիկ հերոսներ Արևամանուկ-Արմիկ-Արամիկը «Արևամանուկ» (1883) և Արեգնազան-Արեգը «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» (1886) հեքիաթներում), մենամարտում դևի (վիշապի) հետ, պարտության մատնում կամ սպանում վերջինիս:

«Խոսող ձուկը» (1908) հեքիաթն ընթերցելիս՝ առաջին հայացքից թվում է, թե այն «լավություն արա, ջուրը գցիր» առածի բարոյախոսության շուրջ է հյուսված: Իրականում այս բնագիրը կովկասյան ժողովուրդների շրջանում հայտնի՝ երախտապարտ ձկան մասին պատմող հեքիաթի տարբերակներից է, որոնց շարքում կարելի է գտնել վիշապի մոտիվին քիչ թե շատ առնչվող նմուշներ[2]: Ու թեև հեքիաթի թումանյանական տարբերակում ուղղակիորեն չի արտացոլվում վիշապի մոտիվը, բայց այն իր մեջ կրում է դրան առնչվող որոշ տարրեր: Մասնավորապես, հեքիաթի երիտասարդ հերոսը՝ մարդու կերպարանք առած ձուկը (ջրային տարերք, փոխակերպում), «մարդակերպ Հրեշի» դեմ պայքարում և հաղթում է «լեզվամարտում»: Լարված հարցուպատասխանը տալիս է ցանկալի արդյունքը. «Հրեշը մնում է կապված, մոլորված... սուս ու փուս քաշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ»: Այդպես է խոսող ձուկը վարձահատույց լինում աղքատ ամուսիններին:

«Հազարան բըլբուլ» (1898-1914) հեքիաթ-պոեմը, որը գրելուց առաջ Թումանյանն ուսումնասիրել էր շուրջ վաթսուն տարբերակ, և որը գրողի համոզմամբ պիտի դառնար նրա գլուխգործոցը, ցավոք, անավարտ է: Այստեղ շեշտելով, որ «գիտությունը լույս է», հեղինակը Ալամ արքայի խորհրդականների շուրթերով խոսում է տարբեր գիտակարգերի մասին՝ աստղագիտություն[3], կենսաբանություն, քիմիա, բնախոսություն և իհարկե փիլիսոփայություն՝ արտահայտված ամենուրեք առկա պատճառահետևանքայնությամբ (տե՛ս <2> հատվածը), որոնք, սակայն, անզոր են վերականգնել այն մարդկանց «նախկին տիպը ազնիվ, քնքույշ հոգին բանական»,

[1] Էդ.Ջրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը (Ուսումնասիրություններ և հոդվածներ), Երևան, 2000, էջ 137:

[2] Տե՛ս «Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին», Երևան, 2019, էջ 261-262:

[3] Տե՛ս Հ.Թումանյան, Երկեր երկու հատորով, հտ. 2, Երևան, 1958, էջ 148:

ովքեր «ընկան մարդու կերպից, դարձան գազան չար, դժխեմ»՝ հակադրվելով մշտնջենականին ու կատարյալին, որն ապրում է անհաս Վերին աշխարհում:

Երկում հանդես եկող *վիշապի մոտիվը* նախ հանդես է գալիս արքայի ավագ որդու խոսքում.

Չեմ վախենալ, ետ չեմ դառնալ, ով որ կուզի դեմըս գա,
Յոթ գըլխանի վիշապ լինի, *դև ու հըրեշ*-թե *հըսկա*...
Երկնում լինի վայր կբերեմ, ծովի խորքում- կըհանեմ:

Ինչպես տեսնում ենք, վիշապն իր հոմանիշներով ուղղակիորեն կապվում է կերպարին բնորոշ երկնային և ջրային տարերքների հետ, և նրա դեմ իր սրով մարտնչել է ուզում կախարդված թագավորության երեք արքայազններից ավագը: Բայց, ի տարբերություն վերջինիս և նրա միջնեկ եղբոր, Հազարան բլբուլի իրական որոնումներով ճանապարհ է ընկնում կրտսեր եղբայրը՝ Արեգը: Նրա մղումն ազնիվ է՝ «գազան մարդի փրկության» ուխտ է արել, ուստի ծերունին օրհնում է նրան.

Լեռներ, անդունդներ հարթվեն առաջիդ,
Դևեր, հըրեշներ դառնան անվընաս...

Ստանալով ծերունու օրհնությունը՝ Արեգը գնում է Սև, մարդակեր *Դևի* աշխարհ: Սև ամրոցում նա տեսնում է «շարմաղ մի աղջիկ լուսեղեն», որին բռնի հափշտակել է Սև Դևը (վիշապի մոտիվի երկրորդ դրսևորումը): Աղջիկը խորհուրդ է տալիս՝ ինչպես սպանել յոթգլխանի հրեշին, որը գալիս է «ինչպես սև ամպ, հուր ու կըրակ շաղ տալով...» և իր «լուսավոր թշնամուն»՝ Արեգին տեսնելով՝ «խուլ», «ամպագոռ» որոտում է (մոտիվի երրորդ դրսևորումը, որը ցույց է տալիս վիշապի ամպրոպային բնույթը): Արեգն իր յոթ նետերից միայն մեկով տապալում է Սև Դևին, ինչպես զգուշացրել էր աղջիկը: Դևի ոչնչացմամբ աղջիկը փրկվում է, իսկ Սև աշխարհը լուսավորվում է արևի շողերով (վիշապի մոտիվին բնորոշ ևս մի հատկանիշ):

Թումանյանի երկերում վիշապի մոտիվի ինքնատիպ վերարտադրություն է **«Եդեմական ծաղիկը»** (1911) հեքիաթը, որի գրությանը պատրաստվելիս հեղինակն ուսումնասիրել է քսանմեկ տարբերակ[1]: Հեքիաթը ներառում է մի քանի շերտեր: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

Ա. Թեև գլխավոր հերոսուհին հայկական անուն է կրում՝ Ծաղիկ, սակայն ուշադիր ընթերցողն անմիջապես նկատում է ուղղակի կապ ռուս գրականությունից Թումանյանի թարգմանած «Կարմիր ծաղիկը» (1916) հեքիաթի սյուժեի հետ: Ծաղիկը հսկող Սիպտակ դևն ու մարդակերպ հրեշը նվիրական ծաղկի պոկվելուն պես հայտնվում են կերպարին բնորոշ տարերքի ուղեկցությամբ. «...Մի հողմ, մի փոթորիկ է վեր կենում, փոթորկի հետ հայտնվում է մի հրեշ» («Եդեմական ծաղիկը»), այդպես և՝ «...Փայլակը փայլատակում է, կայծակը որոտում է, երկիրը դողում է...» («Կարմիր

[1]Ջրբաշյան Էդ., Թումանյանի գրական ժառանգությունը (Ուսումնասիրություններ և հոդվածներ), Երևան, 2000, էջ 145:

ծաղիկը»): Հիշենք վիշապի կապը ամպրոպի և փոթորկի հետ, ինչպես նաև «վիշապ» բառի բացատրությունն ըստ Հ.Աճառյանի՝ «թաթառ, փոթորիկ», «առասպելական հրէշ կամ դև» և այլն[1]: Այնուհետև, սիրելի ծաղիկը պոկված տեսնելով, երկու հրեշներն էլ իրենց զայրույթն արտահայտում են կատաղի մռնչյունով: Նկատենք, որ երկու հեքիաթներում էլ հրեշները բնութագրվում են միևնույն նախադասությամբ՝ «Մարդ ասես, մարդ չի, գազան ասես, գազան չի…»: Հրեշը պահանջում է վաճառականի աղջկան և ստանում է հոր համաձայնությունը, որից հետո այս երկու հեքիաթների սյուժետային ընդհանուր գիծն ընդհատվում է:

Բ. «Եդեմական ծաղիկը» հեքիաթում նկատում ենք հեքիաթի և առասպելի համադրման, միահյուսման թումանյանական վարպետությունը, երբ տարբեր գործողությունների, իրավիճակների և կերպարների միջոցով Թումանյանը պատկերում է զուտ հայկական միջավայրում ծավալվող գործողություններ՝ համեմված հայ առասպելաբանության առանձին դրվագներով: Առաջինը մեռնող-հառնողի առասպելն է՝ կապված «բնության, (նաև՝ կենսաբանական) երևույթների ցիկլային հաջորդական կրկնություններից, ժամանակային մեծ կամ փոքր միավորների մեջ երևույթների օրինաչափ փոխակերպումներից»[2], ինչին համապատասխանում է Արա Գեղեցիկի առասպելը: Այս մասին է հուշում ինչպես Սիպտակ դևի երկրորդ պայմանը՝ «Հենց որ ձեր տան դիմացի սարը սիպտակի- էդ իմ նշանն է, կգամ Ծաղիկին տանելու», այնպես էլ Սիպտակ դևի կախարդանքով Արագած լեռան մեջ «ոսկի դագաղում» ննջող Արին-Արմանելին, ով արթնանում է Ծաղիկի համբույրից, հալածում Սիպտակ դևին, ամուսնանում է աղջկա հետ, ու «աշխարհքովը մին ժպտում է գարնան կենսատու արևը»: Այս է վկայում նաև հեքիաթի ավարտը. «Ու էսպես կրկնվում է ամեն տարի, որովհետև ամեն տարի Սիպտակ դևը կախարդում է Արին-Արմանելիին ու հափշտակում է սիրուն Ծաղիկին»: Ինչպես նկատում ենք, վիշապի մոտիվը դրսևորվում է մեռնող-հառնողի առասպելի համատեքստում: Հեքիաթային սկզբին հաջորդում է հայոց առասպելներից նրբորեն հյուսված բազմաշերտ դիպաշարը, որտեղ բնության պարբերական զարթոնքը խորհրդանշող մեռնող-հառնողի առասպելից զատ տեսնում ենք ակնարկներ նաև այլ առասպելներից: Այսպես՝ Մասիսի մեծ վիհի մասին պատումը հիշեցնում է Արտավազդի մասին առասպելը, Սիպտակ դևի կողմից աղջկա հափշտակումն ու անազատության մեջ պահելը՝ «Սասնա Ծռեր» էպոսի Մեծ Միհերի ճյուղում՝ Արմաղանի մասին պատումը, հուսահատ աղջկա՝ լեռան մեջ մտնելն ու դռան փակվելը հիշեցնում է Փոքր Միհերի՝ Ագռավաքարում փակվելը և այլն:

Գ. Ինչ վերաբերում է բուն՝ *վիշապի մոտիվին*, ապա այն դրսևորվում է նախ՝ վիշապի՝ Սիպտակ դևի կողմից աղջկա առևանգման ու անազատության մեջ պահելու, աղջկա փախուստի և հետապնդվելու, ապա կախարդանքից ազատված հերոսի՝

1 Տե՛ս Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 4, Երևան, 1979, էջ 341-342:

2 Ս.Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 356:

«կայծակի թրով» Սիպտակ դևի հետ մենամարտելու և նրան պարտության մատնելու տեսարաններում: *Վիշապի մոտիվն* ակնհայտ է նաև հրեշին բնութագրող տեսարաններում. «...Չարախինդ սուլոցով ու ագահ ոռնոցով, սառով, սևով, հողմի թևով» հափշտակում է Ծաղիկին, կամ՝ «Կատաղում է, հավաքում է իր բոլոր դիվական ուժն ու մրրիկի նման սուրալով, օձի նման սուլելով» հետապնդում է փախուստի դիմած աղջկան, և այլն:

Ելնելով ասվածից՝ պարզ է դառնում, թե որքան կարևոր էր Թումանյանի համար մանուկ ու մեծ ընթերցողներին ուղղակի կամ անուղղակի կերպով տեղեկություն հաղորդել հայ առասպելաբանության հարուստ նյութի մասին՝ իբրև լեյտմոտիվ օգտագործելով վիշապի առասպելի հիմնական գծերը: Ըստ էության՝ միջազգային, բայց փաստացի՝ հայ տարբեր առասպելույթներ իրենց սյուժեով, համամարդկային հավերժական թեմաներով, կերպարներով ու գաղափարներով հարստացնում են վերոհիշյալ երկերի պատկերային համակարգը՝ միաժամանակ բացահայտելով զուտ հայկական արժեհամակարգն ու լեզվամտածողությունը:

Օգտագործված գրականություն

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 604 էջ:
2. Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ-Սբ.Ղազար, 1910:
3. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հտ.2, Երևան, «Հայպետհրատ», 1962, 592 էջ:
4. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. 4, Երևան, «Երևանի համալսարանի հրատարակչություն», 1979, 676 էջ:
5. Թումանյան Հ., Երկեր երկու հատորով, հտ. 2, Երևան, Հայպետհրատ, 1958, 508 էջ:
6. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հտ.2, Երևան, «Հայաստանի ԳԱ հրատարակչություն», 1990, 640 էջ:
7. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հտ.4, Երևան, «Հայաստանի ԳԱ հրատարակչություն», 1991, 622 էջ:
8. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային», 2000, 528 էջ:
9. Ջրբաշյան Էդ., Թումանյանի գրական ժառանգությունը (Ուսումնասիրություններ և հոդվածներ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 513 էջ:
10. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 6, Երևան, «Արտագերս», 2019, 452 էջ:
11. «Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին» ժողովածու, Երևան, ՀԱԻ հրատ., 2019, 656 էջ:

MANIFESTATIONS OF DRAGON'S IMAGE AND MOTIF IN HOVH. TUMANYAN'S WORKS

BAGOYAN ALLA
GSU Lecturer

Various manifestations of the image and the motif of the dragon in Hovhannes Tumanyan's folk- based songs, ballads, poems and fairy tales are presented in the article.

Comparing and combining the real, the fabulous and the mythical, Tumanyan adheres to the traditions of folklore and, using the themes of various myths, at the same time enriches the figurative system of the analyzed works.

The writer expresses the image and the motif of the dragon for different purposes and under different circumstances, directly or figuratively.

Thus, if the writer in the lyrical epic genres uses the image of a dragon primarily as a figurative and expressive means of speech /metaphor or comparison/, symbolizing or emphasizing his greatness, power, terrifying, often deadly force, then he uses the dragon's motif to describe the phenomena, images, and actions more deeply.

Although the author uses the words demon or monster instead of the dragon in fairy tales containing the dragon's motif, they are nevertheless true to the main storyline characteristic of the dragon's myth (the dragon *kidnaps* the beautiful *virgin*, and the brave serpent fighter combats the kidnapper, realizing the girl, defeats or kills him.)

Keywords: dragon, image, motif, folklore, ballad, poem, fairy tale, myth, illustration.

ПРОЯВЛЕНИЯ ОБРАЗА И МОТИВА ДРАКОНА В ПРОИЗВЕДЕНИЯХ ОВ. ТУМАНЯНА

БАГОЯН АЛЛА
Преподаватель ГГУ

В статье представлены различные проявления образа дракона и мотива дракона в созданных на основе фольклора балладах, стихах и сказках Ованеса Туманяна. Сопоставляя и объединяя реальное, сказочное и мифическое, Туманян придерживается традиций народного фольклора и, используя темы различных мифов, одновременно обогащает образную систему анализируемых произведений. Образ дракона и мотив дракона писатель приводит для разных целей и при разных обстоятельствах - в прямом значении и аллегоричной форме. Так, если писатель в лиро-эпических жанрах использует образ дракона в основном как изобразительно-выразительное средство речи /метафору или сравнение/, символизирующее или подчеркивающее его величие, мощь, жуткую, часто, смертельную силу, то мотив дракона использует с целью еще более полного

представления описанных явлений, образов и действий. И хотя в сказках, содержащих мотив дракона, автор использует вместо дракона слова демон или чудовище, они, тем не менее, верны основной сюжетной линии, характерной для мифа о драконе (дракон похищает прекрасную деву, а храбрый змееборец единоборствует с похитителем и, освобождая девушку, побеждает или убивает его.)

Ключевые слова: *дракон, образ, мотив, народный фольклор, баллада, поэма, сказка, миф, изобразительный прием.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 30.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 11.10.2020թ.:

ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԵՎ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊՈՒՄ

ՀԱՅՐԻՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող
e-mail: hayriyan.1976@mail.ru

Ավետիք Իսահակյանի արձակ ստեղծագործությունների շարքում առանձնակի տեղ է զբաղեցնում «Ուստա Կարո»-ն: Ծավալուն մի երկ, որին անդրադարձել է երկար տարիներ, թողել ավարտուն և անավարտ տարբերակներ, մշակված և կիսատ մեծաթիվ էջեր: Վեպի շարադրանքը սկսելով 1910 թ. ապրիլին՝ վիպասանը մինչև կյանքի վերջին տարիներն աշխատել, վերակառուցել և հղկել է այն: Ե՛վ Իսահակյանը, և՛ վեպն ուսումնասիրող գրականագետները ընդգծել են երկի փիլիսոփայական բնույթն ու քննել այն այդ համատեքստում, սակայն «Ուստա Կարո» վեպը հագեցած է ժողովրդական հնամենի պատկերացումներով, ծիսահավատալիքային և առասպելաբանական մտածողության տարրերով:

Հոդվածում քննության են առնվում վեպում առկա հեքիաթային, դիցաբանական և ծիսահավատալիքային դրսևորումները:

Բանալի բառեր՝ Ուստա Կարո, Իսահակյան, տարրեր, օձ, առասպել, հեքիաթ, ժանր:

Ավետիք Իսահակյանի արձակի առանձնահատկություններից է «ժանրային խիստ սահմանազատումների[1]» բացակայությունը: Իսահակյանի պատմվածքն իր ժանրային հատկանիշներով մոտենում է արձակ պոեմին կամ լեգենդին, հեքիաթը՝ ռեալիստական նորավեպին կամ առակին, իսկ առակը՝ ներառելով հեքիաթային տարրեր, հարում է հեքիաթին[2]: **«Ահմեդի ուղտը»** արձակ առակն ունի կիսահեքիաթային-կիսաառածային հյուսվածք, **«Այդ ոչինչը ես եմ»** առակում նկատելի են հեքիաթի ու առած-ասացվածքի տարրեր, **«Մոր սիրտը»** ավանդավեպում կան հեքիաթային-ֆանտաստիկ մոտիվներ (մոր սրտի փոխարեն սպանված այծյամի սիրտ բերելն ու մոր հանված սրտի լեզու առնելը):

[1] Ս. Գուլլակյան, Ավետիք Իսահակյանի «Աղա Նազարը», Սովետական գրականություն, հ.10, Երևան, 1965, էջ 88:
[2] Նույն տեղում, էջ 88-93:

Հեքիաթի, զրույցի, պատմվածքի, նորավեպի, ավանդության և առակի միահյուսում է **Իսահակյանի «Ուստա Կարո»** (1910-1925) սինկրետիկ վեպը[1]:

Իսահակյանը տեսել է այլ ժանրի երկերում հեքիաթային ոճի և ոգու կիրարկության անհրաժեշտությունը. «Ես գրելու եմ իմ ժողովրդի կյանքը ներկայացնող վեպերը, պատկերները մեր հեքիաթների ոճով, ոգով, ձևով. այդ է հայկական պրոզաձևը, դրանից պիտի զարգացնել մեր ռոմանը: Գրել, գրել միայն ազգային ոգով, գրել հայկական, հայավար, հայնակ գրել...[2]:

Նա նպատակահարմար է գտնում նույնիսկ կայուն բանաձևային կառուցվածքների, լեզվաոճավորված կայուն կաղապարների գործածությունը հեքիաթի համատեքստից դուրս. «...խորն ու հարմար կլինի մեր հեքիաթների ձևով սկսել պատմությունը, օրինակ, այսպես. «Եղել է, չի եղել, ժամանակով, շատ դարեր առաջ, մի թագավոր է եղել, անունը Նապոլեոն». «Եղել է, չի եղել մի աշխարհ է եղել, անունը Հայաստան», կամ՝ «Կա, չկա, մի աշխարհ կա՝ անունը Հայաստան», կամ՝ «Լինում է, չի լինում, մի մարդ է լինում, անունը՝ Սայաթ-Նովա»: Ահա ձևեր. «Լինում է, չի լինում, ժուկով ժամանակով, մի մարդ է լինում», կամ՝ «Հին ժամանակում, շա ~տ հին ժամանակ մեզնից յոթը ծով, յոթը տարի հեռու մի աշխարհ է լինում». Կամ՝ «Եղել է, չի եղել, մի է եղել».«Էլելա, չի էլել, մի ա էլել»: «Կա, չկա մի կա»: «Կեղնի, չեղնի, մի կեղնի»: «Կըլնի, չի ըլնի, մի կըլնի[3]»,- ընդգծում է Իսահակյանը:

Իսահակյանը կարևորում էր նաև բանահյուսության, մասնավորապես մեր հեքիաթների ու երգերի խորաքնին ուսումնասիրությունը՝[4] քաջատեղյակ լինելով հայ և համաշխարհային՝ հնդկական, չինական, պարսկական, արաբական, հրեական, քրդական, սերբական, ռուսական, ֆրանսիական, գերմանական և ֆիննական բանահյուսություններին[5]: Այդ առումով ուշագրավ են Իսահակյանի դիտարկումները «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» հոդվածում, որտեղ նա անդրադառնում է մեր դյուցազներգության դիցաբանական շերտերին՝ զուգադրելով այլ ժողովուրդների դիցաբանությունների հետ: Գնահատելով մեր դյուցազնավեպի անաղարտությունը՝ Իսահակյանն ընդունում է այն իբրև հետազոտական կարևոր փաստանյութ, առանձնացնում վեպի հնամենի՝ առասպելաբանական, տոտեմական, անիմիստական աշխարհըմբռնման, տիեզերական ուժերի և բնության աստվածացման (անձնավորման) հետքերը, հատկանշում առասպելական մտածողության առանձնահատկությունները[6]:

---

[1] Լ. Հայրիյան, Ավետիք Իսահակյան հեքիաթագիրը, Պատմաբանասիրական հանդես, 2012, 3 (191), էջ149-150:

[2] Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 277:

[3] Նույն տեղում, էջ 270-271:

[4] Նույն տեղում:

[5] Տե՛ս Ա. Ղանալանյան, Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, 1986, էջ 201:

[6] Տե՛ս Ավ. Իսահակյան, Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին, Խորհրդային գրականություն, NN 8-9, Երևան, 1939, էջ 28-29:

Ուսումնասիրելով մեր էպոսի դիցաբանական խորքը՝ նա ընդգծում է համաշխարհային մի շարք վիպական հերոսների (Գիլգամեշ-Իշտար աստվածուհու դուստր, Ձիգֆրիդ-Վոթան աստծու թոռ, Ամարան-Խոսյաու աստծո ազգական, Ողուղ-աստվածուհի լուսնյակ և այլն) աստվածային ծագումը, շեշտում Սանասարի աստվածային տարերքի ուժը՝ համարելով ամպրոպային դյուցազն ու հրեղեն, խոսում Մհերի թեոգենիկ ծագման շուրջ՝ մակաբերելով Մհեր-Միհր փոխառնչության արմատները[1]:

Հեքիաթային և առասպելական տարրերի դրսևորումներով Իսահակյանի արձակ ստեղծագործությունների շարքում առանձնանում է «Ուստա Կարո»-ն, որի փոխառնչությունը հեքիաթի հետ բանաձևել է Ս. Սարինյանը՝ նկատելով, որ այս ծավալուն երկի «ֆանտաստիկայում կա ֆիզիկական ու հոգևոր տարերքի շարժումը, անհատի արկածախնդրական որոնում, որոնց ենթագիտակցական աղերսները ձգվում են դեպի էթնիկական ոգու գնոստիկական արխետիպերը: Մի՞թե հենց այդ սկիզբը չունեն հեքիաթներն ու բանահյուսական պատումները»[2],- ընդգծում է նա:

Վիպական հերոսներն ու նրանց համագյուղացիներն ապրում են «սահմանավոր փոքր աշխարհում»՝ երազելով հրաշքների ու հրաշալիքների, հեքիաթային ու խորհրդավոր աշխարհների մասին[3]: Իբրև մի ասացող՝ վեպի կենտրոնական հերոս Կարոն մտրակում է հեքիաթային քարավանն ու իր ստեղծած աշխարհները նյութական իրողություն դարձնելով՝ ունկնդրին տեղափոխում կախարդական տիրույթ: Նա հյուսում է մի հեքիաթ, ուր առկա են Չինումաչինն ու Հնդստանը, որոնց մասին Կարոն գիտեր դեռ մանկության տարիների հեքիաթներից. «Ծանր ու բարակ ֆուրգոններ՝ հովերի դեմ ֆոֆռացող ծածկի ճերմակ քաթաններով, որ աղմկում են և օրորում խճուղու երկայնքին, անընդհատ, անվերջ…, և ուղտերի ձիգ քարավաններ, որ շորորվելով և ղողանջելով գալիս են, մոտենում են համր ու դանդաղ, անցնում են, գնում համր-դանդաղ: Որտեղից են գալիս, ուր են գնում… Հեքիաթներից գիտեր Կարոն, որ նրանք գալիս են Իրանից ու Թուրանից, Սամսոնից ու Տրապիզոնից և գնում են Հաբաշ-Հալաբ, Մսըր ու Բաղդադ, Հնդստան ու Չինմաչին, ներսի աշխարհներից դրսի աշխարհները…»[4]:

Արևելյան հիշյալ երկրները հայ բանահյուսության մեջ առասպելական աշխարհներ են խորհրդանշում[5]: «Հնդու քաղաք» հասկացությունը ըմբռնվել է երկրային կամ դրախտային քաղաքի իմաստով: Հնդու տարաշխարհիկ քաղաքը համարվել է աշխարհի կենտրոն[6]: Քրիստոնյա հայերը բացառիկ տեղ են տվել նաև Չինաստանին,

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 29, 32-38:
[2] Ավ. Իսահակյան, Ուստա Կարո, Երևան, 2006, էջ 21-22:
[3] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ 4, Երևան, 1975, էջ 208:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս Ն. Վարդանյան, Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ, Ոսկե Դիվան, 2011, պրակ 3, էջ 84:
[6] Տե՛ս Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 18-19:

որտեղից, հավատում էին, թե բացվում են «դրախտի դռները»[1]: Նկատենք, որ հայ ժողովրդական հեքիաթներում հաճախադեպ են արևելյան այս երկրների հիշատակումները[2]: Ասես մի հեքիաթային հերոս՝ Իսահակյանի Կարոն, անգլիացի վաճառականների ընկերակցությամբ, հայտնվում է չնաշխարհիկ արևելյան երկրներում՝ ծանոթ աշխարհից անդին, գերբնական տարածք, «ուր վերջ չկար, մահ չկար»[3]:

Վիպասանը հեքիաթային շքեղությամբ է ներկայացնում Հնդստանու աշխարքը. «Ի՞նչ աշխարք, ի՞նչ աշխարք, սադաֆե քյոշք ու ապացներ, անուշ, կաթի ջրեր ու աղբյուրներ: Խնկի հոտով լցված էր էդ աշխարքի լալու մարջան սարերն ու ձորերը, զնգում էին քարերը, ու դարչինի, թզի, խուրմի, ծառերը իրենց պտուղները երկնցնում էին մեր բերանը... [4]»:

Հայոց մեջ Չինաստանն ընկալվել է իբրև արևի երկիր, հետևաբար, ինչպես հեքիաթային Չինումաչինը, այնպես էլ՝ վիպականը, առնչվում են ոսկուն՝ արևի խորհրդանիշին[5]. «Հա՛, էն էի ասում, տեսանք, Չինումաչինու թագավորի մեծ, մեծ մեր Շորագյուլից շատ մեծ բաղը: Էնոր պատերը քուլի խաս, մարմարով էին շարված, դուռը՝ ոսկեցե...[6]: Ուշագրավ է, որ չինական ժողովրդական հեքիաթում էլ կախարդական լեռան վրա, որտեղ արևն է գիշերում, թափված են անթիվ ու անհամար ոսկի, արծաթ և թանկագին քարեր, որոնց փայլը աչք է կուրացնում[7]: Վեպի չին թագավորն ունի բացասական դիմագիծ՝ նմանվելով հեքիաթներում հանդես եկող Չինաստանի թագավորներին[8]. «Աստված ասավ թագավորին. «Քանի որ դու էդքան անգութ էիր ու ագահ, որ չուզեցիր մի խնձոր տալ աշխարքի մեծ բաղից խեղճ մեռնողին, որ աշխարքից աչքը կուշտ երթար, դու էլ էնքան պիտի մնաս վիրի գազան չորացած բաղիդ մեջ, որ զղջաս ու բաղդ էլ շեննա ... »[9]:

Ինչպես հեքիաթներում՝ թագավորն իր երկիր ժամանած օտարականներին երեք հանելուկային հարց է ուղղում. «Թագավորն ասավ.

-Երեք հարց կուտամ, պատասխան տվեք: Օրթե տվեցիք, ձեզի երեք քիսա ոսկի կուտամ, օրթե չկրցաք, աստված ձեզի բարի ճամփա տա, գնացեք, եւ էսման ըսավ.

---

[1] Տե՛ս Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Բ, Երևան, 1967, էջ 329-330, նաև՝ Թ. Հայրապետյան, Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում.- Ոսկե Դիվան, 2011, Պրակ 3, էջ 18:

[2] Տե՛ս Աբրահամ առուտուրական, Դունիա Գյոզալի հեքիաթը, ՀԺՀ, հ. 3, Երևան, 1962, էջ 67-79, 291-298, Ավճի Շաբուի տղեն, ՀԺՀ, հ.4, Երևան, 1963, էջ 27-45 և այլն:

[3] Տե՛ս Ավ.Իսահակյան, Ուստա Կարո, Երևան, 2006, էջ 192:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 193:

[5] Տե՛ս Ն. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 87:

[6] Ավ. Իսահակյան, նույն տեղում, էջ 192:

[7] Տե՛ս Արևի լեռը: Չինական ժողովրդական հեքիաթներ, Երևան, 2015, 244 էջ, էջ 16:

[8] Տե՛ս Ջանպոլադի հեքիաթը, ՀԺՀ հ.3, 1962, էջ 316-324:

[9] Ավ. Իսահակյան, նույն տեղում, էջ 192:

«Հողն է շա՞տ, թե՞ ջուրը, մեռածն է շա՞տ, թե կենդանին, տղամարդն է շա՞տ, թե կինը...»[1]:

Հայ ժողովրդական մի շարք հեքիաթներում հերոսի տեսած երազների հիման վրա ձևավորվում են դիպաշարային զարգացումները. հերոսը երազում տեսնում է իր ապագա ընտրյալին և ուղևորվում նրան որոնելու: Որոնումները ուղեկցվում են որոշակի խորհրդատվությամբ: Խորհրդատու-նվիրատուն կարող է լինել թռչուն, կենդանի, մեռած նախնի, ծերունի կամ ուղղակի կողմնորոշող ձայն: Այսպիսի երազ է տեսնում «Ուստա Կարո» վեպի Հարութը: Տեսնելով Հրեղեն աղջկան՝ նա կորցնում է քուն ու հանգիստ, փորձում է գտնել իր սրտի տիրուհուն, հանդիպում խորհրդատուին, ստանում օգտակար խորհուրդներ ու շտապում փրկելու նրան հավակնոտ վիշապի հետապնդումներից: Հարութը, ճամփաբաժան կաղնու տակ նստած, ճերմակամորուս ծերունուց է տեղեկանում, թե ով է «աշխարքի էն գլխից» ապրող գեղեցկուհին, ով դյութել է շատերին և դարձել նրանց դահիճը: Ծերունուց է ստանում նաև անհրաժեշտ խորհրդատվությունը. «-Էս մի ճամփեն կերթա Հրեղեն աղջկա մոտ, էն ճամփեն՝ վիշապ աղի մոտ, որն աշխարքի բոլոր գանձերի տերն է, -հուշում է ծերունին: Աշխարհքի գեղեցիկները ուզում են ամենակտրիճ, ամենասիրուն, ամենահարուստ մարդուն, կնիկն ուզում է մարդ ու ոսկի: Վիշապ աղեն աչքը տնկել է Հրեղենի վրա, իր բոլոր գանձերը տալիս է նրան, որ իր կինը լինի, բայց Հրեղենը չի ուզում, որովհետև վիշապը սիրուն չէ, այլանդակ է: Ո՛վ երթա վիշապին հաղթի, գանձերն առնի՝ Հրեղենը էդ կտրիճի կինը կդառնա: Բայց վիշապի մոտ գնացողն էլ ետ չի դառնում. Գնացողները բոլորն էլ ընկնում են նրա ուռկանը, դառնում են նրա ծառան ու գերին, որ օր ու գիշեր պիտի արյուն-քրտինք թափեն աղի համար: «Հրեղենի մոտ, որ երթաս, լսիր իմ խրատներին, որ ամեն գնացողի տվել եմ և զո՛ր է կորել, եթե կարողացար կատարել խրատներս, կհաղթես նրան ու տերը կլինես [2]»:

Քննվող վեպում դիտվում է նաև բանահյուսական խորհրդանիշ-կերպարների առկայությունը՝ Մասիսի օձերի թագակիրը, վազող ու թռչող օձերը, վիշապ քամիներն ու Զմրուխտ թռչունը: Ըստ առասպելաբանական մոդելի՝ հերոսի տեղափոխվելը մեկ այլ աշխարհ հնարավոր է միայն միջնորդների միջոցով[3]: Վեպում նման միջնորդ է Զմրուխտ թռչունը. սրան ներդաշնակում են ժողովրդական հրաշապատում հեքիաթների միջնորդ թռչունները, որոնք անդրաշխարհյան փորձությունների թնջուկում հայտնված հեքիաթային հերոսների հրաշագործ օգնականներն ու երկու աշխարհների միջնորդներն են[4]: Հավելենք, որ հայկական հրաշապատում հեքիաթներում

[1] Նույն տեղում, էջ 194:

[2] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 477:

[3] Տե՛ս Մ. Խեմչյան, Նվիրատուն և խորհրդատուն Կարսի հրաշապատում հեքիաթներում. Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, 2014, էջ 427:

[4] Տե՛ս նույն տեղում, նաև տես՝ Թ. Հայրապետյան, «Վիպասանքի» ինագույն առասպելների դրսևորումները «Սասնա ծռեր» դյուցազնավեպում և հայկական հրաշապատում հեքիաթներում.- Պատմա-բանասիրական հանդես, 2008, N 2, էջեր 141-151:

հերոսին այլ տիրույթ՝ անդրաշխարհ, տեղափոխելու գործառույթը կատարում են արծիվը, ղուշը, ձին կամ խոյը: Վիպական հերոսը, հայտնվելով երևակայական աշխարհում, որոշակի տարածություն է կտրում ծովի վրայով՝ հասնելով հայրենիք: Այս տեղաշարժն իրականացվում է Զմրուխտ թռչունի օգնությամբ. «Չեմ կրնա ասել՝ շա՞տ մնացի էս հալի մեջ, թե՞ քիչ, չգիտեմ, քանի որ մի օր փախչում էի ափից, ալիքը տասը օր հետ էր տանում, մենակ Զմրուխտ թռչունը, որ ամեն օր արևաբացին անցնում է աշխարքի էս ծերից մեկել ծերը, ինձ տեսավ, խղճաց, իջավ, վերցուց ու գիտեր, որ հայ եմ, բերեց, գցեց Մասըսա գլուխը: Էնման զառբի գցեց, որ էս գըլոր ման ընկա մինչև տակը: Աչքերս բացի, որ Մասըսա փեշերի վրա եմ, Արազի ափին»[1]:

Երկում սահմանազատված չեն անցյալն ու ներկան, ծավալվող գործողությունները էմպիրիկ ժամանակի տիրույթում չեն, հետևաբար, գերբնական տարածքներ կամրջող անավարտ վեպն իր «վերժամանակային ու վերտարածական գոյավիճակներով մերձենում է առասպելականի ոլորտին»[2]:

Առասպելաբանական մոտիվ է հիշեցնում Մասիսի ստորոտում ծավալվող վիշապամարտը՝ «երկինք ու գետին» թռչող օձերի մարտը, ալմաստե և յաղութի թագով Մասիսի օձերի թագավորի գլխավորությամբ, որն երկարում է խորհրդանշական «օխտն օր, օխտը գիշեր»[3]: Մասիսի օձերը մարտնչում են Կավկավի օձերի դեմ՝ կանխելով թշնամի օձերի հարձակումը: Գոտեմարտում են օձերի թագավորներն ու, ի վերջո, «մեր օձերը» մաքրում են հայոց աշխարհը թշնամական ուժերից՝ չվնասելով մարդկանց և անասուններին[4]: Վիպական այս հատվածը մերձ է հին հայերի օձերի պաշտամունքին և ժողովրդական հավատալիքներին. հայոց մեջ տարածում ուներ օձերի պաշտամունքը, որոնք նախնիների պատկերացումներում պաշտպանի գործառույթ էին կատարում: Այսպիսով՝ պաշտվել են լորտուկ, լոկ օձերը, որոնք համարվել են «հայեր» ու հայերի պաշտպաններ, գավառի կամ երկրամասի պահապան ոգիներ[5]: Ըստ զրույցների՝ լեռնային օձերն ունեն թագավոր և թագուհի: Օձերի թագավորի գլխին արեգականանման թանկագին քար է կամ ոսկե եղջյուրներ[6], իսկ թագուհին ունի բոցավառվող մազեր: Հայերը հավատում էին, թե Արարատ սարի օձերը, այսինքն՝ ամպրոպային օձերն, իրենց թագավորի գլխավորությամբ, երկու տարին մեկ մարտի են բռնվում Արագածի օձերի դեմ՝ զորքով, զորապետներով և մեծ զորությամբ[7]: Օձի կամ վիշապի պաշտամունքից է խոսել Գ. Սրվանձտյանցը. «Վի-

[1] Ավ. Իսահակյան, նույն տեղում, էջ 195:
[2] Տե՛ս Ա. Խրիմյան, Ուստա Կարոն և իր քարավանը, Նոր-Դար, 2001, 1, էջ 38:
[3] Տե՛ս Ավ. Իսահակյան, նույն տեղում, էջ 142-143:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Տե՛ս Մ. Աբեղյան,Երկեր, հ. Է, Երևան,1975, էջ 64-65:
[6] Տե՛ս Բենսէ (Սահակ Մովսիսեան) Բուլանըխ կամ Հարք գաւառ.- Ազգագարական հանդէս, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 42:
[7] Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 63-65:

շապը թերևս յուր ահավորությամբ՝ ի հնումն պաշտված ալ լինի ի հայոց»[1]: Հիշյալ զրույցները կենսունակ են դարձել Իսահակյանի վեպում, որտեղ պատմվում է «ալ-մաստի ու յաղութի» թագով «մի հաստ ու երկեն ոսկեղեն» օձի՝ Մասիսի օձերի թագավորի[2] և նրա զորավոր կտրիճների մասին. «Գնացինք կռվի տեղը, տեսանք» համրանքին համրանք կար, սատկած օձերին համրանք չկար... Տղամարդ, կտրիճ օձեր էին Մասսա մեր օձերը (օրթե հայերս էդ մեր օձերի զորքի մի մասն ունենայինք՝ Սուլթանին չէինք թողնի ձեռքը բերանը տաներ. վաղուց իր ասկյարի հետ տափկցրած կլինեինք...)[3]: Իսահակյանի Կարոն է «արմանք-զարմանք» այս կռվի ականատեսը, ով իրեն ունկնդրող վիպական մյուս կերպարների նման ապրում է իրականի ու անիրականի սահմանագծին:

Այսպիսով՝ Իսահակյանն իր ստեղծագործական կյանքի գրեթե բոլոր շրջաններում կենարար լիցքեր ստանալով բանահյուսությունից՝ ժողովրդական հեքիաթի գեղարվեստական մշակման և ոճավորման, հեղինակային գործեր ստեղծելուց բացի, հեքիաթի ժանրային որոշ տարրեր համակցել է այլ ժանրի ստեղծագործությունների հետ: Նույնիսկ փիլիսոփայական, խոհական ինչեղություն ունեցող «Ուստա Կարո»-ն ներծծված է բանահյուսությամբ և առասպելական մտածողության առանձնահատկություններով:

Օգտագործված գրականություն

1. Մ. Աբեղյան,Երկեր, հ. Է, Երևան, 1975:
2. Ա. Աբրահամյան, համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Բ, Երևան, 1967:
3. Բենսէ (Սահակ Մովսիսեան) Բուլանըխ կամ Հարք գաւառ.- Ազգագարական հանդէս, գ. Զ, Թիֆլիս, 1900:
4. Ս. Գուլլակյան, Ավետիք Իսահակյանի «Աղա Նազարը», Սովետական գրականություն, հ.10, Երևան, 1965:
5. Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977:
6. Ավ. Իսահակյան, Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին, Խորհրդային գրականություն, NN 8-9, Երևան, 1939:
7. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, Հայաստան հրատ., 1975:
8. Ավ. Իսահակյան, Ուստա Կարո, Երևան, 2006:
9. Ա. Խրիմյան, Ուստա Կարոն և իր քարավանը. -Նոր-Դար, .- 2001, 1:
10. Մ. Խեմչյան, Նվիրատուն և խորհրդատուն Կարսի հրաշապատում հեքիաթներում. Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, 2014:
11. Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:

[1] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. I, Երևան, 1978, էջ 69:
[2] Տե՛ս Ավ. Իսահակյան, նույն տեղում, էջ 142:
[3] Նույն տեղում, էջ 143:

12. Ա. Թ. Հայրապետյան, Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում.- Ոսկե Դիվան, 2011, Պրակ 3:

13. Չինական ժողովրդական հեքիաթներ, Երևան, Էդիթ Պրինտ, 2015, 244 էջ:

14. Թ. Հայրապետյան, «Վիպասանքի» ինագույն առասպելների դրսևորումները «Սասնա ծռեր» դյուցազնավեպում և հայկական հրաշապատում հեքիաթներում.- Պատմա-բանասիրական հանդես, 2008, N 2, էջ 141-151:

15. Լ. Հայրիյան, Ավետիք Իսահակյան հեքիաթագիրը, Պատմաբանասիրական հանդես, 2012, 3 (191), էջ 149-150:

16. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ.3, 1962, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 672 էջ:

17. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4, 1963, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 552 էջ:

18. Ա. Ղանալանյան, Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, 1986:

19. Ն. Վարդանյան, Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ, Ոսկե Դիվան, 2011, պրակ 3:

20. Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. I, Երևան, 1978:

FAIRY TALE AND MYTHICAL ELEMENTS IN AVETIK ISAHAKYAN'S NOVEL "USTA KARO"

HAYRIYAN LUSINE
Candidate of Philological Sciences,
Researcher at the Institute of Archeology and Ethnography
of the National Academy of Sciences

Falk fairy-tale came to the Armenian literature as editions, also being a peculiar material for literary fairy-tales and other genres. Avetik Isahakyan's "Usta (master) Karo" is distinguished with the presence of the fairy elements. In the mentioned poem supernatural worlds, like in national tales, are called toponyms Hndstan and Chunumachin. The hero of the poem like a fairy hero moves to a supernatural area, to the West: the Western countries. In the tale a mediator of two worlds, a magician helps Karo.

In "Usta Karo" we can see myth motives. One of such motives is the snakes fight near the Masis mount, which is connected to snakes cult in ancient Armenia.

Keywords: *Usta Karo, Isahakyan, elements, snake, myth, tale /fairy-tale/, genre.*

СКАЗОЧНЫЕ И МИФИЧЕСКИЕ ЭЛЕМЕНТЫ В РОМАНЕ АВ. ИСААКЯНА "УСТА (МАСТЕР) КАРО"

АЙРИЯН ЛУСИНЕ
Кандидат филологических наук,
Научный сотрудник Национальной
академии наук Республики Армения
(Институт археологии и этнографии)

Фольклорная сказка проникла в армянскую литературу в виде обработок, а так же явилась своеобразным источником для литературных сказок и других жанров. Сказочными элементами выделяется роман Ав. Исаакяна "Уста (мастер) Каро". В этом романе сверхъестественные края на подобие народных сказок называются топонимами Хндстан и Чинумачин. Герой романа подобно сказочному герою перемещается в сверхъестественное пространство - на Восток, в восточные страны. Как в сказке, Каро - посредник двух миров, чудотворец-волшебный помощник.

В "Уста Каро" наличествуют так же мифические мотивы, одним из них является мотив змееборства у подножья Масиса, который связан с культом змеи у древних армян.

Ключевые слова*: Уста Каро, Исаакян, элементы, змей, миф, сказка, жанр.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 22.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.10.2020թ.:

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ИСПОЛЬЗОВАНИЯ КЕЙС-МЕТОДА НА УРОКАХ РУССКОЙ ЛИТЕРАТУРЫ В ШКОЛАХ ГЕГАРКУНИКСКОГО МАРЗА

МИРИБЯН ГАЯНЕ
Кандидат филологических наук,
Заведующий кафедрой иностранного языка и литературы ГГУ
e-mail: gayane.miribyan@mail.ru
БАДАЛЯН АЛВАРД
Выпускница *магистратуры отделения русского языка и литературы филологического факультета ГГУ*
e-mail: badalyan.94@bk.ru

Статья посвящена рассмотрению особенностей применения кейс-метода на уроках русской литературы в средних и старших школах Гегаркуникского марза. В статье представлена основная сущность кейс-метода, его роль в обучении, в частности в обучении русской литературе. Представлены обучающие, аналитические, эвристические, исследовательские кейсы. Выявляются эффективные методы и приёмы обучения в условиях национальной школы.

Ключевые слова: *интерактивное обучение, инновационные технологии, русская литература, кейс, кейс-метод, кейс-задачи, опытное обучение.*

Современное образование РА требует нового подхода к методам преподавания в учебных заведениях, и потому сегодня постепенно внедряется интегральная система педагогических подходов, основанная на инновационных технологиях, интерактивных методах и средствах. Основной целью новейших технологий образования является подготовка человека к жизни в постоянно меняющемся мире. Соответственно, сегодняшнее образование должно решать проблему стимуляции развития потенциала личности еще с раннего возраста. В данном случае не секрет, что школа является определяющим звеном в развитии и воспитании личности. Современное образование в школе требует качественно новых подходов к образовательному процессу, и в связи с этим происходит постоянный поиск наиболее эффективных методов обучения.

Одной из современных форм эффективных технологий обучения является **кейс-метод. Кейс** (от англ. case) представляет собой описание конкретной ситуации или случая в какой-либо сфере: социальной, экономической, медицинской, педагогической и др. Как правило, кейс содержит не просто описание, но и некую проблему или противоречие и строится на реальных фактах [2: 96].

Следовательно, для решения задачи требуется выявить проблему, указать возможные пути ее разрешения, или выработать варианты выхода из сложной ситуации. Учитывая основные **критерии кейс-метода**, а именно:

- кейс составляется в рамках одной профессиональной области (профессионально направленные);
- кейс должен содержать ряд последовательных и взаимосвязанных событий (кейс именно называется кейсом, т.е. конкретной ситуацией, так как в нем есть последовательный ряд событий, который вытекает одно из другого);
- кейс должен отвечать методической потребности, решать нашу рабочую задачу (что бы в кейсе не было написано, он прежде всего должен отвечать потребности решения проблемы, которое закладывается в методологии кейса);
- кейс имеет определенную структуру (состоит из нескольких элементов: фабула кейса, участники, проблема, решение), можем сказать, что суть кейс–метода заключается в том, что усвоение знаний и развитие умений является результатом активной самостоятельной деятельности учащихся по разрешению противоречий, в результате чего и происходит творческое овладение знаниями, навыками, умениями и развитие мыслительных способностей. В условиях нового формата, акцент обучения переносится не на овладение готовым знанием, а на выработку знаний, на сотворчество ученика и учителя; учащиеся могут иметь возможность соотносить теорию с реальной жизнью, проводить тщательный сопоставительный анализ произведений и явлений жизни, в которой будущим выпускникам школ пригодится умение делать выводы, отстаивать свою позицию.

Многофункциональная методическая сторона кейс-метода также служит основой их типизации по различным признакам. Как известно, в литературе выделяют кейсы, обучающие анализу и оценке, обучающие решению проблем и принятию решений; иллюстрирующие проблему, решение или концепцию в целом. Однако, в целях нашего опытного обучения мы взяли за основу классификацию, предложенную Гарвардской школой бизнеса. Она выглядит следующим образом:

- обучающие кейсы,
- аналитические кейсы,
- эвристические кейсы,
- исследовательские кейсы [6: 22].

Сущность этой классификации заключается в следующем: при использовании обучающего кейса преподаватель сам задает проблему, сам предлагает 2-3 способа ее разрешения, дискутирует при разборе предложенных решений, сам выбирает и обосновывает итоговое решение. По аналогии аналитический кейс схож с обучающим кейсом: учитель по-прежнему сам задает проблему, а итоговое решение обосновывают сами учащиеся. Участники могут пользоваться уже подготовленными вариантами ответов учителя, они могут также использовать дополнительные источники. Обучающиеся должны познакомиться с предложенными информационными источниками, опираясь на них, выбрать и обосновать свой

вариант. Кейсы же эвристического и исследовательского типа требуют от учеников больше усилий, знаний языка, они сложные по структуре. При использовании таких кейсов преподаватель или определяет проблему в общих чертах, а учащиеся конкретизируют и решают ее, или определяет проблемное направление, а учащиеся самостоятельно задают ее и решают [5].

Основной целью опытного обучения явилось выявление эффективности применения кейс- метода при обучении русской литературе.

Для реализации поставленной цели нам предстояло решить следующие задачи:

- По всем возможным учебным темам (учебники 10-12 классов) составить кейсы.
- Провести экспериментальные уроки по литературе с использованием кейс-метода.
- Проанализировать результаты проведенного опытного обучения и сделать выводы.

Нами было проведено опытное обучение в 10-12 классах средних школ №1 им. С. Макаряна и № 2 им. М. Хостегяна и в 10-ом классе старшей школы г. Гавар.

Как известно, кейсы обычно применяются на различных стадиях образовательного процесса: и на стадии обучения, и на стадии проверки результатов обучения и в оценке.

Ниже представлены примеры разработанных нами кейсов, которые применили на уроках литературы в ходе опытного обучения в указанных классах.

Обучающий кейс

Цель: воспитать чувство национальной гордости, формировать умения аргументировать свою позицию, формировать коммуникативные способности.

Описание ситуации

Саркис служил в вооруженных силах Армении, на армяно-азербайджанской границе. Во время службы он попал в засаду и был взят в плен неприятелем. Не выдержав пыток, он перешел на сторону азербайджанцев. Много лет от него не было никаких вестей. Спустя несколько лет вновь вспыхнул армяно-азербайджанский конфликт. В это время многие добровольно пошли на границу защищать свои земли. Среди них был отец Саркиса - один из лучших сыновей армянского народа, бывший участник армяно-азербайджанской войны и один из лучших снайперов тех времен. Во время военных действий он замечает Саркиса в ряду азербайджанских солдат, воюющего против армян. Боль и ярость сковывают сердце отца и воина. Разные чувства охватывают его и он …

Вопросы к ситуации:

1)Как вы думаете, что сделает отец, выстрелит в
сына или нет?

2) Будь на месте отца Саркиса, что бы вы сделали?
Как бы вы поступили в такой ситуации?

3) Как вы считаете, можно ли ради патриотических

идей пойти на убийство собственного ребенка?

4) Проведите параллели с историей Тараса!

Ученикам было предложено решить кейс в составе групп.(в 10-ом классе старшей школы г. Гавар). При работе в малой группе каждый ученик должен был соблюдать следующие правила:

- ✓ активно принимать участие в обсуждении;
- ✓ не прерывать говорящего, давать ему возможность полностью высказаться;
- ✓ не повторяться вслух;
- ✓ не навязывать своего мнения другим;
- ✓ ясно формулировать свое окончательное мнение [3].

После знакомства с ситуацией участники каждой группы выдвигали свое мнение, пытаясь подобрать подходящие аргументы для своего ответа. В группах обсуждались возможности альтернативных решений. Сравнили эту ситуацию с историей Тараса, комментировали соответствующие отрывки уже знакомого произведения, провели параллели. Затем, лидеры каждой группы представляли и защищали свой вариант решения, Класс, выбирая приемлемый для себя вариант решения, дискутировал с преподавателем, который предлагал высказывать как можно большее количество вариантов решения, тем самым стимулировал творческую активность учащихся (преподаватель использовал метод “мозгового штурма”).

Аналитический кейс

Цель: воспитать нравственные качества личности, формировать и развивать коммуникативные умения.

Описание ситуации:

Представьте, что некий парень влюбился в девушку из благополучной семьи. Ее отец известный и уважаемый бизнесмен. И ее семья казалась ему благородной. Он был счастлив и доволен своим выбором. Но эта радость длилась недолго: близкий родственник парня, узнав о его чувствах, раскрыл ему истинное лицо этой семьи. Оказалось, что отец его любимой очень жестокий и бессердечный человек, занимаясь своим бизнесом, он обманом оставил без крова много семей с детьми и стариками, и даже самоубийство женщины с маленькими детьми не тронуло его сердце. Родственник предложил парню задуматься о выборе, отказаться от этой девушки, ведь “яблоко от яблони далеко не падает”. Как бы поступили вы в такой ситуации?

Этот пример кейса был апробирован в 12-ом классе средней школы №1 им. С. Макаряна. Класс начал изучать творчество Л.Толстого, в частности, произведение “После бала”. До чтения рассказа “После бала” ученикам предстояло решить кейс-задачу по новой теме, затем прочитать произведение и посмотреть, как развиваются события в рассказе, как поступает главный герой в подобной ситуации.

Учащиеся знакомились с ситуацией, выделяли основную проблему, пытались поставить себя на место героя, анализировали ситуацию, обсуждали возможные пути

решения проблемы. Учительница грамотно поддерживала обсуждение, выявляла точки зрения участников, требовала, чтоб каждая группа при своем ответе аргументировала свою точку зрения. Представители каждой группы, после активного группового обсуждения, высказывали свою позицию по данному вопросу, проводили параллели с реальной жизнью, этим аргументировали свой ответ. Чтобы процесс решения кейса был ярким, впечатляющим и наглядным, ученикам было предложено разыграть эту ситуацию (применяли метод "ролевой игры"). Для ролевой игры, преподаватель выбирал тех учеников, которые отличались артистическими способностями, и кому легче было справиться с такой задачей. Процесс такой работы позволил каждому увидеть со стороны прочитанную ситуацию, и еще раз обдумать своё решение. Далее, под руководством преподавателя, класс дискутировал и выбрал единую позицию.

Такие кейсы имеют мотивирующий характер, так как повышают заинтересованность учеников, пробуждают интерес к чтению и изучению нового произведения.

Эвристический кейс

Цель: развить навыки устного общения, формировать умения уверенно выступать перед классом.

Описание ситуации

Ваш друг прочел повесть А. И. Куприна "Гранатовый браслет". Пораженный финалом повести, он решил, что причиной гибели Желткова является эгоизм Веры Николаевны.

Вопрос к ситуации:

Согласны ли вы этим мнением? Если нет, то аргументируйте свой ответ, опираясь на текст произведения.

Эта ситуационная задача применялась после изучения "Гранатового браслета" Куприна, с целью закрепить пройденный материал, а так же способствовать развитию русской речи. Требование учителя - выражать свое мнение, обосновывая свой ответ примерами из текста произведения. Обсуждение вопроса привело участников дискуссии к желанию доказать свое мнение, которое значительно отличалось от предлагаемого. Ученики смогли правильно анализировать полученную информацию, найти ключевую проблему и даже они предложили альтернативные пути решения.

Исследовательский кейс

Цели: возбудить интерес к чтению, к творчеству Пушкина; активизировать познавательную поисковую деятельность учащихся.

Описание ситуации

Представьте, что вы редактор журнала №. Впереди праздник в честь 220-летия со дня рождения А.С. Пушкина. По этому поводу вам предстоит написать эссе, в котором должны быть выделены значимые особенности творчества

великого поэта. И вы должны рассмотреть в нем те произведения, которые наиболее ярко и красочно показали бы меняющиеся оттенки и настроения его творчества.

Вопросы к ситуации:

Кто для вас А.С. Пушкин?

Как охарактеризовали Пушкина его современники?

Почему Пушкина считают “солнцем Русской поэзии”?

Какие мотивы часто встречаются в поэзии Пушкина?

Исследовательские кейсы - это сложные кейсы, при которых учитель сам дает ситуацию, а ученики в этой ситуации должны найти проблему и способы ее решения, используя разные ресурсы и уже имеющиеся знания. Чтобы проследить специфику использования данного кейса, мы использовали его в двух классах, где у учеников был разный уровень знания русского языка и успеваемости. Ученики, используя разные ресурсы, должны были определить проблему, отвечая на вопросы, решить проблему и публично представить. Преподаватель же в течение всего времени исполнял роль разработчика, консультанта.

В итоге, те учащиеся, которые достаточно владели русским языком и имели хорошую успеваемость, смогли справиться с задачей. Для решения задачи они самостоятельно конструировали имеющиеся знания, умело ориентировались в пространстве информации, вели самостоятельную, исследовательскую, познавательную и творческую работу. Для слабых же учеников задача оказалась сложной, и им трудно было выполнять её. Видно, что при выборе кейсов следует учитывать возможности выбранного класса и возможности каждого ученика.

Таким образом, работать с кейс-методом рекомендуем начать с обучающего типа кейса. После работ с обучающим кейсом, переходить к аналитическим, затем к эвристическим и т.д. Так как исследовательский тип – самый сложный, рекомендуем применять его в старшем звене, где учащиеся будут иметь достаточные знания и умения для решения такой задачи. Также, кейсы следует предлагать малым группам – не более 5 человек; а решённый кейс презентовать классу, чтобы класс выработал единое решение кейса.

Будучи интерактивным методом обучения, на уроках русской литературы кейс-метод завоевывал позитивное отношение со стороны учителей и учеников. Они видели в нем возможность проявить инициативу, почувствовали самостоятельность при решении ситуаций.

Итак, опытное обучение подтвердило эффективность использования кейс-метода на уроках русской литературы в армянских школах. Его применение на уроках русской литературы

- ✓ повышает уровень знания русского языка,
- ✓ развивает навыки публичного выступления на русском языке,
- ✓ учит формулировать вопросы и отвечать на них,

✓ развивает умение вести дискуссию, аргументировать ответы, что тоже способствует развитию речи,

✓ совершенствует навыки чтения художественной литературы на иностранном языке

✓ обеспечивает возможность работы в группах,

✓ дает возможность создать новые модели учебной деятельности,

Мы убедились, что уроки литературы, строящиеся с применением кейс-метода, развивают у учеников ряд компетенций, таких как:

✓ *коммуникативные* - полагается развитие умения свободно общаться, сказать свое мнение и защищать, вести дискуссию, убеждать окружающих и т.п.;

✓ *информационные* - подразумевают развитие умения применять разные информационные источники и работать с ними;

✓ *аналитические* - формируют умения классифицировать, выделять значимую и незначимую информацию, логично мыслить;

✓ *социальные* - формируют умения работать в команде, в малой группе, умение свободно высказывать свою точку зрения и выслушать других, аргументировать противоположное мнение, контролировать себя и т.п.;

✓ *творческие* - полагается формирование творческих навыков, необходимые для альтернативных решений, которые невозможно найти только логическим путем.[1]

Таким образом, кейс-метод имеет широкие образовательные возможности и уроки, организованные на основе кейс-метода будут качественными и эффективными. Кроме того процесс анализа самих кейсов оказывает значительное воздействие на личностные качества учеников, способствует их взрослению, мотивирует и формирует интерес к учебе. После активного применения этого метода, ученики становятся более самостоятельными, и им легче осваивать школьный материал, и самое важное, взрослая жизнь не будет им казаться такой сложной и оторванной от того, чему учили в школе.

Список использованной литературы

1. Казакова Д., Современные технологии обучения, https://cyberleninka.ru
2. Кирьякова А. В., Технология “кейс-стади” в компетентностно - ориентированном образовании, Пособ. ун-т. Оренбург, ОГУ, 2011, 115 с.
3. Махотин Д., Метод анализа конкретных ситуаций как педагогическая технология// Вестник РМАТ,– 2014, №1. https://www.elibrary.ru
4. Мухина С., Соловьева А., Современные инновационные технологии обучения, М., ГЭОТАР - Медиа, 2008, 360 с.
5. Харченко М. Г., Метод конкретных ситуаций как способ формирования профессионального мышления, https://cyberleninka.ru
6. Яицкий А. С., Самарский научный вестник, 2018,т.7, 297с. https://snv63.ru

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ «ՔԵՅՍ» ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԻՐԻԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ
ԲԱԴԱԼՅԱՆ ԱԼՎԱՐԴ
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի մագիստրատուրայի շրջանավարտ

Հոդվածը նվիրված է Գեղարքունիքի մարզի հանրակրթական և ավագ դպրոցներում ռուս գրականության դասերին քեյս մեթոդի կիրառման առանձնահատկությունների քննարկմանը: Հոդվածում ներկայացված է քեյս մեթոդի էությունը, նրա դերը դասավանդման գործընթացում, մասնավորապես ռուս գրականության դասերին: Ներկայացված են ուսուցողական, վերլուծական, փորձարարական, հետազոտական քեյսեր: Բացահայտվում են հանրակրթական դպրոցներում ուսուցման արդյունավետ մեթոդներն ու հնարները:

Բանալի բառեր՝ ինտերակտիվ ուսուցում, նորարարական տեխնոլոգիաներ, ռուս գրականություն, քեյս, քեյս մեթոդ, քեյս խնդիրներ, փորձառական ուսուցում:

ABOUT SOME FEATURES OF USING THE CASE METHOD IN THE LESSONS OF RUSSIAN LITERATURE IN GEGHARKUNIK PROVINCE SCHOOLS

MIRIBYAN GAYANE
PhD in Philology,
Head of the Chair of Foreign Language and Literature, GSU
BADALYAN ALVARD
The theoretical part of our research dealt with many types of CATs. They were explored and compared with each other. Naturally, we were unable to test all CATs suggested by Angelo and Cross (there are 50 of them), therefore, only some of the CATs were applied during our teaching.

Implementing CATs while teaching EFL: Assessing skills in synthesis and creative thinking ("Invented Dialogue")

Before applying CATs we had monitored the teaching delivered by several instructors (both school teachers and university lecturers). The observation over the assessment techniques enabled us to come to the following conclusion: most teachers and lecturers use traditional grading system and very few (at least from the ones we worked with) use CATs in their teaching practice. To overcome this gap a few lesson plans were developed by us and teaching with the application of CATs was delivered during the second term of this academic year.

The experimental teaching was delivered with the 8th grade students of Gavar school #4 after Avetik Isahakyan (Gegharkunik region of the Republic of Armenia) in the second term of this academic year (2019-2020) before the State of Emergency due to COVID-19 was announced.[1] Unit 7, "Travelling is my dream", from the textbook by Lusine Grigoryan [2], was selected for the teaching. In total 29 students were involved in the teaching.

[1] We had planned several teaching sessions during the second term of the year, but, unfortunately, due to the outbreak of COVID-19 we did not have the opportunity to implement our planned activities on a large scale. The main problem was that online lessons were not delivered regularly in schools which deprived us of the opportunity to continue with the implementation of CATs.

Planning the teaching session

Learning Outcomes

By the end of the teaching session the students were expected to

- improve reading skills (reading the text),
- improve rendering skills (rendering the text),
- express their opinion on the topic of the lesson,
- improve their oral and written skills (doing exercises, having discussions, etc.),
- use the new vocabulary in discussions,
- improve communicative skills (e.g. by conducting pair work activities),
- improve their creative thinking skills (through the implementation of CATs / "Invented Dialog").

Teacher's objectives during the teaching session were the following:

- to motivate learners to be involved in active discussions on the topic,
- to enhance learners' speaking and writing skills,
- to improve learner's creative and critical thinking,
- to manifest the spirit of competition,
- to get content-based feedback.

Delivering the teaching session

The delivery of the teaching was planned as a combination of three main sections. The table below represents the structure of the lesson with the time framework.

Table 1: The structure of the experimental lesson.

Section	Duration
Introduction	5 minutes
Explicit instruction	20 minutes
CATs application and closing	20 minutes

Introduction (5 minutes)

The lesson was initiated with the greeting, identifying the absent students and the announcement of the topic of the lesson.

Explicit Instruction (20 minutes).

The topic of the lesson was "The Pool of Tears", an adapted text from "Alice's Adventures in Wonderland" by Lewis Carroll.

After announcing the topic of the lesson the new words were introduced. Learners were asked to guess their meanings (while reading the text) and of course the proper synonyms for those words were found. Here *"Matching the words with the meanings"* strategy was applied. Learners were asked to answer the questions written under the text

on page 118. While doing that they expressed their ideas about "Our hero Alice". As the second step we applied *"Thick vs Thin Questions"* or *"Questioning"* strategy to deal with the text. Doing this it was possible to see how they had understood the contents of the text and the new words. Learners should answer the questions using their newly gained vocabulary. While developing questions we had paid great attention to the new vocabulary items urging the learners to think critically and use it in their answers. Our third step was to do the exercises concerning the text after reading it. We did exercises 30, 31, on page 118. Then we did exercises 32 using "True/False Statement" Strategy.

CATs application and closing (20 minutes)

As our new material had actions and heroes, which was relevant for "Invented Dialogue" technique, it had been decided to apply that CAT during the lesson.

The **Invented Dialogue assessment** technique helps teachers to study students' creative thinking abilities. This technique belongs to the group of CATs which assess students' **skill in synthesis and creative thinking.**[1] By inventing (making up) dialogues, learners combine their understanding of topics, people, incidents or times into an imaginative and deliberately organized discussion. They can study and use existing examples from primary sources to construct more plausible situations, or they can concoct alternative words that may have been used in this sense. As a consequence, students build imaginative coping abilities, draw inferences from experiences and extrapolate from the content they have learned. It is a perfect opportunity to involve students in challenging debates and evaluate their capacity to turn supportive statements into conversations or even essays.

While applying this technique our teaching goals were:

- to improve the students' ability to make logical inferences from observations;
- to develop the students' capacity to synthesize and combine knowledge and new ideas;
- to improve the capacity to think creatively and improve imagination of learners;
- to study how to grasp the viewpoints and principles of the topic;
- to introduce the strategies and techniques used to gain new knowledge in this topic;
- to learn how to analyze techniques and materials in this context;
- to show that all students' contributions are important and valued;
- to make learners work together as a whole and be responsible for the result equally.

[1] Other CATs which assess students' skill in synthesis and creative thinking are "One-Sentence Summary", "Word Journal", "Approximate Analogies", "Concept Maps", "Annotated Portfolios" to name just a few.

The procedure of the implementation of the CAT / Invented Dialogue

First of all, we explained what we were going to do. Getting into details helped to motivate learners to be as creative as possible, even in the case when they would not get a mark for that work. As we already had a chosen topic, we asked to build a creative dialogue between Alice and White Rabbit. Learners should work in pairs. The time limit was 10 minutes. The working process was noisy, which was difficult to control. In this phase of CATs implementation, we were a little embarrassed, because we had planned to analyze the dialogues during the lesson, but our time management did not work well and did not let us do that. Therefore, all the works were collected to be checked and discussed during the next lesson. What we did during the last 10 minutes was listening and watching the performance of a pair, that fulfilled the task first. While reading and analyzing the dialogues we came up to the conclusion that the majority of the class thought nearly the same way.

In most of the dialogues created by the students *Alice was asking for help (she needed candies, she wanted to get out and return home, she was tired and asked for a place to sleep, she lost the way and asked for a map, she sang to get money), she asked the White Rabbit to take photos of her*. In some other dialogues *Alice was sad, she was crying or she was quarreling*. And in the two of the invented dialogues, *the White Rabbit announced he was busy and did not let Alice speak*.

As a result, we got acquainted with the learners' way of thinking, we adopted the manner they prefer to fulfill the given task, we got information about their working pace and level of understanding. All this was needed to improve our teaching approaches.

For students, this task was beneficial because they were allowed to be flexible while choosing ideas and scenarios, they could freely express their feelings and wishes, we had a good partnership and competition, which motivated the learners to think as creatively as possible.

Self-evaluation and feedback on teaching with the implementation of CATs

1. Applying SWOT analysis for self-evaluation

To sum up the experimental teaching session with the implementation of CATs the SWOT analysis was used. SWOT is an acronym which stands for:

- S-Strengths,
- W-Weaknesses,
- O-Opportunities,
- T-Threats.

SWOT analysis is a strategic planning technique used originally to help a person or organization identify strengths, weaknesses, opportunities, and threats related to business competition or project planning. Nowadays SWOT analysis is used not only in business or related fields but in educational sciences as well. Strengths and weaknesses are internal

and can be directly managed, while the opportunities and threats are external and can be only anticipated and reacted.

Below is the SWOT analysis matrix designed to assess our experimental teaching with the implementation of some CATs.

Table 2: Personal SWOT analysis matrix on experimental teaching

.

PERSONAL SWOT ANALYSIS MATRIX FOR THE EXPERIMENTAL TEACHING SESSION WITH THE IMPLEMENTATION OF CATs	
STRENGTHS ▪ Application of new assessment techniques, rejection of traditional ways of assessment by means of grading system. ▪ Using interactive methods of teaching alongside CATs which enabled the students to be involved in teaching and learning activities and assessment as well. ▪ Making use of both individual and group/pair learning styles through a set of activities, enhancing the students' social competence through cooperative learning. ▪ Promoting students' reflection, self-evaluation and self-assessment skills as life-long learning skills.	**WEAKNESSES** ▪ New techniques of classroom assessment were perceived with difficulties at first since most of the students are not used to assessment beyond grades. In majority cases students are not used to giving feedback or self-evaluation and reflection. The introduction of CATs needs explanations and time. ▪ Students are also used to traditional teaching style with traditional methods and approaches. Thus the introduction of new interactive methods was not initially perceived properly.
OPPORTUNITIES ▪ Students can be taught and instructed on using CATs in their learning for self-reflection. There are a lot of materials (both text and visual) on the Internet that can help the learners to understand better the benefits of CATs. ▪ They can use CATs not only under the supervision of the teacher or instructor but also on their own. This will help them improve their learning style and habits.	**THREATS** ▪ Resistance from school teachers who do not want to use innovative methods of assessment and are stuck to grading system. ▪ Diseases (like **COVID-19**) which can interfere with the educational process and transfer it to the virtual zone. But even here we can use some CATs, thus overcoming threats, modifying some CATs for the virtual environment.

2. Feedback from students on the experimental teaching with the implementation of the "Invented Dialogue" CAT

It is generally accepted that one of the indispensable parts of each teaching session, especially of experimental one, is providing feedback. We carried out a survey on the use of CATs in the foreign language teaching among the 8th grade students.

In order to measure the outcomes of the experimental teaching we carried out interviews with the target audience as well as developed questionnaires to understand the strong and weak points of the teaching and to use the feedback gained from the participants for the assessment of the effectiveness of the experimental teaching. By the end of the experimental teaching session the students were kindly asked to answer the following questions using this feedback grid.

Table 3: Feedback form for the students.

Feedback form for the students

Grade: _____

Date: _____

Dear student! Please, answer the following questions choosing one of these answers.

*1.**Was it interesting to learn with the use of the new techniques of assessment (Invented Dialogue)?***

a) Yes, it was

b) Yes, but we need time to get used to them

c) No, it was not interesting.

*2. **How did you like the way of your learning?***

a) It was motivating

b) It was not so interesting

c) It was boring.

*3. **Did the techniques used during the teaching prompt you to reflect on what you have learned and how you have learned?***

a) Yes, they did

b) No, they didn't.

*4. **Do you want your teacher to use these assessment techniques frequently?***

a) Yes

b) No.

*5.**Can these techniques be useful for you in learning a foreign language?***

a) Yes

b) No

c) I am not sure.

To sum up the results from the feedback, it's worth mentioning that the feedback was highly positive. For the majority of students it was extremely interesting to learn English with the use of new techniques, which helped them reflect on what they learn and how they learn. Most students would like their teachers to use these techniques during classes as they could help improve a foreign language proficiency level as well as enhance their learning habits.

Conclusion

CATs application is an indivisible part of the modern educational system, which has a strong influence not only on learners' daily progress but also on teachers' skills improvement. The classroom assessment provides more proper information about learners' attainments or failures than traditional grading system does. Due to CATs, a teacher evaluates different abilities and skills of his/her students. This set of techniques is aimed at assessing the prior knowledge and understanding, learners' skills in synthesis and creative thinking, analysis and critical thinking, skills in application and performance, learners' reaction to class activities, assignments and new materials, etc. Gained data can assist teachers in lesson organization and classroom management.

To sum it up, the assessment study offers various techniques, methods and approaches for teaching/learning process evaluation. Teachers may choose the one, which they consider more proper and effective for classroom assessment. CATs provide wide opportunities for both teachers and students to be sure the work they do is assessed in an honest way, and not graded. As for the students, they get a flow of encouragement and motivation, have an active role in their learning because now they take responsibilities and share them with their instructors. As for the teachers, CATs allow them to be more informed about their student's progress, attitudes, challenges, etc. and to be more capable in performing their everyday tasks.

References

1. Angelo, Thomas A., & Cross, K. Patricia. (1993). Classroom Assessment Techniques: A Handbook for College Teachers. San Francisco: Jossey-Bass.

2. Անգլերեն 8, Լ. Գրիգորյան, Հանրակրթական հիմնական դպրոցի դասագիրք. Զանգակ հրատարակ., 2015.

3. https://www.celt.iastate.edu/teaching/assessment-and-evaluation/classroom-assessment-techniques-quick-strategies-to-check-student-learning-in-class/ Accessed: 12.06.2020.

ԼՍԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԻՆ. «ՀՈՐԻՆՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ դասախոս
ՄԱԼԱՔՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի բակալավրիատի շրջանավարտ

Սույն հոդվածը նվիրված է հայկական դպրոցներում անգլերենի դասերին լսարանի գնահատման տեխնիկաների կիրառմանը: Լսարանի գնահատման տեխնիկաները պարզ, անանուն /հիմնականում/ լսարանային առաջադրանքներ են, որոնք մշակված են ուսումնառության գործընթացի վերաբերյալ դասավանդողներին և սովորողներին անհրաժեշտ հետադարձ կապն ապահովելու համար: Դասապրոցեսի մշտադիտարկումը /լսարանի գնահատման տեխնիկաների կիրառման տեսանկյունից/ թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումը. դասավանդողների մեծ մասը կիրառում է գնահատման ավանդական թվանշանային համակարգը, քչերն են օգտագործում լսարանի գնահատման տեխնիկաներն իրենց դասավանդման պրակտիկայում: Այս բացը լրացնելու նպատակով մենք մշակել էինք դասեր՝ լսարանի գնահատման տեխնիկաների կիրառմամբ՝ սույն ուսումնական տարվա (2019-2020) երկրորդ կիսամյակում անցկացնելու համար: Այդպիսի տեխնիկաների կիրառմամբ փորձարարական ուսուցումն իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ավետիք Իսահակյանի անվան հ.4 դպրոցի 8–րդ դասարանում: Ուսումնառության ընթացքում օգտագործվել է «Հորինված երկխոսություն» (“Invented Dialogue”) տեխնիկան, որը պատկանում է լսարանի գնահատման տեխնիկաների այն խնբին, որոնք գնահատում են սովորողների ստեղծագործ մտածողությունն ու նյութ սինթեզելու կարողությունները:

Հոդվածում ներկայացված են փորձարարական ուսուցման բոլոր փուլերը՝ ուսուցման պլանավորումը, դասի անցկացումը, ինչպես նաև փորձարարական ուսուցման գնահատումն ու ինքնագնահատումը: Լսարանի գնահատման տեխնիկաների կիրառմամբ ուսուցման արդյունավետության գնահատման համար օգտագործել ենք SWOT վերլուծության մեթոդը (վեր ենք հանել ուսուցման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները): Նաև վերլուծել ենք սովորողներից ստացված հետադարձ կապի արդյունքները: SWOT վերլուծության մատրիցան և հետադարձ կապի արդյունքները ներկայացված են սույն հոդվածում:

Բանալի բառեր. *գնահատում, ձևավորող գնահատում, լսարանի գնահատման տեխնիկաներ, լսարանի գնահատման տեխնիկաների կիրառում, փորձարարական ուսուցում, ուսուցման SWOT վերլուծություն, հետադարձ կապ:*

ТЕХНИКИ ВНУТРИКЛАССНОГО ОЦЕНИВАНИЯ НА УРОКЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В АРМЯНСКОЙ АУДИТОРИИ. ИСПОЛЬЗОВАНИЕ ТЕХНИКИ “ПРИДУМАННЫЙ ДИАЛОГ”

САРКИСЯН РУЗАННА
Кандидат педагогических наук, доцент,
Преподаватель ГГУ
МАЛАКЯН СЮЗАННА
Выпускница бакалавриата отделения английского языка и литературы филологического факультета ГГУ

Данная статья посвящена использованию техник внутриклассного оценивания при обучении английскому языку в школах Армении. Техники внутриклассного оценивания – это, как правило, простые, анонимные (в основном) внутриклассные задания, разработанные с целью предоставить преподавателям и учащимся необходимую обратную связь о процессе обучения в реальном времени. Наблюдение над учебным процессом (с точки зрения использования техник оценивания) позволило прийти к следующему выводу: большинство учителей и преподавателей используют традиционную “балльную” систему оценивания, лишь некоторые используют техники внутриклассного оценивания в своей преподавательской практике. Чтобы восполнить данный пробел, нами была разработана серия уроков с применением техник внутриклассного оценивания для проведения во втором полугодии этого учебного года (2019-2020). Опытное обучение с применением таких техник было проведено в 8-ом классе школы № 4 имени Аветика Исаакеня г. Гавар (Гегаркуникская область РА). Во время обучения была использована техника под названием “Придуманный диалог” (“Invented Dialogue”), которая относится к группе техник, оценивающих творческое мышление учащихся и навыки синтеза. В статье представлены все этапы опытного обучения: планирование обучения, проведение опытного урока, оценивание (в том числе самооценивание) опытного обучения. С целью оценки эффективности опытного обучения с применением техник внутриклассного оценивания нами был использован метод SWOT анализа (были выявлены сильные и слабые стороны обучения, возможности и угрозы), также были проанализированы результаты фидбэка (обратной связи), полученного от учащихся. Матрица SWOT анализа и результаты фидбэка представлены в данной статье.

Ключевые слова: *оценивание, формирующее оценивание, техники внутриклассного оценивания, применение техник внутриклассного оценивания, опытное обучение, SWOT анализ обучения, обратная связь (фидбэк).*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.09.2020թ.:

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԳՊՀ դասախոս
e-mail: davtyan.-armine72@gmail.com
ՊԱՊՅԱՆ ՍԻՄԱ
ԳՊՀ հումանիտար ֆակուլտետի
‹‹Տարրական մանկավարժություն և մեթոդիկա›› բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
e-mail: sima_papyan@mail.ru

Ղ. Ալիշանի թողած հսկայական ժառանգությունը և հատկապես նրա մանկավարժական հայացքները մինչ օրս հավուր պատշաճի ուսումնասիրված չեն, ուստի մեր այս աշխատանքը նվիրված է այդ բացի լրացմանը: Պետք է նկատենք, որ Ղ. Ալիշանի կրթադաստիարակչական մոտեցումները ամփոփում են այնպիսի գաղափարներ, որոնք կիրառվում են ժամանակակից մանկավարժական մի շարք հայեցակարգերում: Նա առաջիններից էր, ով ձգտելով հասկանալի լինել ժողովրդին՝ խթանեց աշխարհաբարի ներդրումը՝ օգտագործելով վերջինիս հարուստ բառապաշարը և գեղարվեստական պատկերավորման միջոցները: Ռեակցիոն կողմերը վճռականորեն մերժում էին Ալիշանի մոտեցումներն ու գաղափարները, սակայն հայ ժողովուրդն ըստ արժանվույն գնահատեց ականավոր գիտնական բանաստեղծի խոշոր ավանդը, որը նա թողել է մեր մշակույթի գանձարանում:

Ալիշանին բնորոշ հայրենասիրությունը, որն արտահայտվում է նրա գիտական աշխատություններում ու գեղարվեստական ստեղծագործություններում, էապես նպաստել է ազգի հայրենասիրական ոգու զարթոնքին:

Բանալի բառեր՝ *մանկավարժության պատմություն, Ղևոնդ Ալիշան, իմաստասիրական հարցեր, բնություն, հավատք, ազգասիրություն, առաքինություն, կրթություն, դաստիարակություն, ինքնաճանաչում:*

Ղևոնդ Ալիշանը (Քերովբե Ալիշանյան Պետրոս-Մարգարի, 1820-1901թթ.) հայ իրականության այն երախտավորներից է, որի գրիչը չափազանց բեղուն էր, իսկ թողած ժառանգությունը՝ անսահման հարուստ: Ավելի քան 60 տարի տևած գիտական գործունեության ընթացքում Ղ. Ալիշանը հանդես եկավ հայկական մշակութային կյանքի ամենատարբեր ասպարեզներում՝ որպես ականավոր բանաստեղծ ու արձակագիր, որպես Հայաստան աշխարհի հմուտ տեղագիր-պատմաբան ու աշխարհագրագետ, որպես կարող թարգմանիչ և վերջապես որպես բանիմաց մանկավարժ:

Ավ. Իսահակյանի՝ իր կենսագրությանը վերաբերող հարցին Ալիշանը պատասխանել է մեծերին բնորոշ համեստությանբ՝ ասելով, որ ինքը աշխարհականների նման հարուստ կենսագրություն չունի, ապա ընդգծել է «Քանի մը գըրքեր եմ գրած: Ուրիշ ալ ըսելիք չունիմ: Գրքե-գիրք՝ ատ է իմ ճամփան: Ուրիշ տեղեր չեմ գացած[1]»: Այն հարցին, թե ի՞նչ տիտղոսներ ու շքանշաններ ունի, հետևել է այսպիսի պատասխան «Տիտղոսնե՞րս՝ հայ և քահանա, շքանշաններս՝ կապաս և գոտիս[2]»:

Ալիշանի մասին անթաքույց հիացմունքով ու անսքող համակրանքով էին արտահայտվում եվրոպական և ռուսական մշակույթի այնպիսի ականավոր մեծություններ, ինչպիսիք էին Աբիխը, Դյուլյորիեն, Զախաուն, Մառը, Ստասովը և ուրիշներ: Ալիշանի մասին սիրով են արտահայտվել նաև հայ գրականության խոշոր ներկայացուցիչները՝ Ղ. Աղայանը, Հովի. Թումանյանը, Դ. Վարուժանը, Ավ. Իսահակյանը և ուրիշներ:

Ապրելով հայրենիքից հեռու և երբևէ չլինելով Հայաստանում՝ նա իրականացրեց հայրենանվեր գիտական և գրական գործունեություն: Ալիշանի գեղարվեստական և գիտական ժառանգությունը հանգամանալից ուսումնասիրության չի արժանացել: Գրվել են միայն հոդվածներ, գլխավորապես հոբելյանի (1890 թ.) և մահվան (1901 թ.) առիթներով:

Ալիշանը գրական ասպարեզ է իջել որպես բանաստեղծ: Շարունակելով Մխիթարյանների գրական ավանդները՝ սկզբում գրել է կրոնական թեմաներով, գրաբարով: Հետագայում գրել է նաև աշխարհաբարով՝ պատկերելով հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագները: 1847-1860 թվականներին «Բազմավեպում» Նահապետ ստորագրությամբ Ալիշանը հրապարակել է մի շարք բանաստեղծություններ և պոեմներ («Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ», «Հրազդան», «Մասիսու սարերն», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ»), որոնք նրա պոեզիայի բարձրակետերն են:

Գիտական հոդվածներով Ալիշանը հանդես է եկել 1843 թվականից՝ «Բազմավեպի» էջերում: «Տեղագիր Հայոց Մեծաց» (1855) աշխատության մեջ տեղագրել է պատմական Հայաստանի գավառները, տվել նրանց համապատասխան գիտա-աշխարհագրական բնութագիրը:

Ուշագրավ է Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն» աշխատությունը, ուր հավաքել, դասդասել և գիտականորեն բնութագրել է հայկական բնաշխարհի ավելի քան 3400 բույսեր և ծաղկատեսակներ: Իր գիտական հսկայական ժառանգությամբ (ավելի քան 45 հատոր) նա մեծապես նպաստել է հայրենական գիտության զարգացմանը: Նրա գործերից շատերն այսօր էլ ունեն ճանաչողական արժեք և սկզբնաղբյուրի նշանակություն:

---

[1] Ավ.Իսահակյան, Երկեր, Ե., 1959թ., էջ 14:

[2] Ավ. Իսահակյան, Երկեր, Ե., 1987թ., էջ 711:

Ալիշանն ունի հսկայական ժառանգություն՝ մոտ 60 հատոր, որոնք դեռևս ամենայն խորությամբ ուսումնասիրված չեն: Ալիշանի ստեղծագործությունները և գիտական աշխատությունները ուսումնասիրվել են տարբեր տեսանկյուններից՝ հայրենասիրության (Ս. Տերտերյան), ռոմանտիզմի (Ս. Սարինյան), գեղարվեստական ստեղծագործության (Ս. Շտիկյան):

Ալիշանի աշխատությունների մեծ մասը, որը գրաբարով էր, կարծում ենք՝ անհրաժեշտ է թարգմանել աշխարհաբար և հրատարակել: Ընդհանրապես ուսումնասիրված չեն Ալիշանի աստվածաբանությունը, կրոնագիտությունը, բարոյագիտությունը, մանկավարժությունը, կրթության և դաստիարակության հարցերը, փիլիսոփայությունը:

Ալիշանը եղել է ֆրանսիական ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր, իտալական, ռուսական և գիտական այլ ընկերությունների ու հատկապես Վիեննայի փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամ և դոկտոր:

Լայն մտահորիզոնի և հանրագիտարանային գիտելիքների տեր անձը չէր կարող անմասն մնալ հայ իմաստասիրության զարգացման գործից: Թեև փիլիսոփայական որևէ աշխատություն Ալիշանը չի հեղինակել, սակայն տարբեր առիթներով անդրադարձել է նշված թեմային: Այս ուղղությամբ գրել է խորհրդածություններ, կարծիքներ և դատողություններ: «Հրահանգ, զբոսանք և սփոփանք» հոդվածում և «Եղևնու տակ» աշխատության մեջ կարելի է տեսնել հեղինակի փիլիսոփայական հայացքները: Ալիշանի փիլիսոփայական խորհրդածությունները կատարվում են որոշակի աշխարհայեցողության դիրքերից, որի էությունն օբյեկտիվ իդեալիզմն է՝ միաձուլված աստվածաբանությանը և բնապաշտությանը:

Ալիշանի փիլիսոփայական հայացքներն իրենց եզրաբանությամբ ու բովանդակությամբ թեև նույնությամբ չեն կրկնվում, սակայն շատ ավելի մոտ են Հեգելի, քան Պլատոնի փիլիսոփայական համակարգին, չնայած վերջինիս նա հաճախ է հիշատակում: Օբյեկտիվ իդեալիզմի տեսանկյունից Ալիշանը վերլուծում ու քննում է արտաքին աշխարհն ու նրա այլևայլ դրսևորումները, անում եզրահանգումներ, որոնք կարևոր են ինչպես Ալիշան-տեսաբանին ճիշտ հասկանալու, այնպես էլ ժամանակաշրջանի հայ փիլիսոփայական և տեսական մտքի ընթացքը պատկերացնելու համար:

Մարդուց և բնությունից դուրս, նրանց համար ընդունված ու հաստատուն դարձած օրինաչափություններից անկախ գոյություն ունի ինքնաբավ մի երևույթ՝ «Գերագույն Բանը»: Այն ունի իր զարգացման ներքին օրինաչափությունները, «շարժմունքին ինքնահատուկ ձևերը[1]», որոնք կարելի է հասկանալ և քննության առարկա դարձնել իրենց դրսևորումների մեջ, այսինքն՝ տեսանելի և ընկալելի այն ձևերի մեջ, որոնցում ներկայանում է բանականությամբ օժտված անհատը: Ալիշանը «Գերագույն Բանին» զուգահեռ օգտագործում է նաև «Բարձրագույնս կազմակերպված մտածողության»,

[1] Ալիշան Ղ., Երկեր, Ե., 1981 թ., էջ 13:

«Գերագույն միտք», «Գերագույն ճշմարտություն», «Բացարձակ ճշմարտություն», «Գերագույն բանականություն» հասկացությունները: Իբրև «Գերագույն Բանի» կամ «Բարձրագույնս կազմակերպված մտածողության» դրսևորման առաջին և հիմնական ձև նա դիտում է բնությունը՝ արտաքին աշխարհին իր հազարերանգ գեղեցկությամբ: Բնությունը ենթարկելով ուսումնասիրության ու տրամաբանական քննության՝ կարելի է հասկանալ ու մեկնաբանել գերագույն ճշմարտության դրսևորման օրինաչափությունները:

Ալիշանը կարծում էր, որ բոլոր դարերում և ժամանակներում թե՛ հռչակավոր իմաստասերը, թե՛ արյունարբու զորականը, թե՛ աշխարհակալ արքաներն ու իրենց փառքով գոռոզ տիրակալները մշտապես ձգտել են դեպի բնության գիրկը[1]՝ այնտեղ հանգիստ գտնելու, իսկ հիմնականում՝ այնտեղ խորհելու, մտորելու համար, այսինքն՝ Գերագույն մտածողության՝ բնության միջոցով դրսևորվող օրինաչափությունները ըստ իրենց կարողությունների և հնարավորությունների ընկալելու ու մեկնաբանելու համար:

Ահա այս դատողություններն Ալիշանը զարգացնում է «Հրահանգ, զբոսանք և սփոսանք հասարակաց» հոդվածում, իսկ հետագայում խորացնում և ամբողջացնում է այդ դատողությունները «Եղևնու ներքո» աշխատության մեջ: Եթե առաջին մասում Ալիշանի ուշադրության կենտրոնում գլխավորապես բնությունն է, ապա երկրորդում ազգն է, հայ մարդը, որը պետք է ձգտի Բացարձակ ճշմարտության՝ ի դեմս քրիստոնեական վարդապետության: Բնությունը՝ իր բոլոր պերճություններով ու հրապուրանքներով, ուրիշ նպատակ չունի, բացի նրանից, որ փառաբանի Աստծուն և ողբա հայության ցավերը, քանզի արևը Արարչի մեծությունն է երգում, իսկ լուսինը լաց է լինում հայոց գերեզմանների վրա[2]:

Ալիշանի համար բացարձակ արժեք են համարվում Աստված և հայրենիքը, որոնք անխզելիորեն կապված են միմյանց, միաձույլ են, և յուրաքանչյուրն իր ուրույն տեղն ունի Ալիշանի սրտում:

Պատմամանկավարժական բնույթի հոդվածներում հեղինակը, նկատի ունենալով իրենց երկու դպրոցների՝ Մուրատյան և Ռափայելյան վարժարանների բազմամյա ուսուցչի և տեսչի իր փորձը և իմաստավորելով այդ փորձը եվրոպական դասական մանկավարժության ձեռք բերած նորագույն նվաճումների հենքի վրա, բարձրացնում է «հայ մանկտիկների» դաստիարակության հետ կապված այնպիսի հարցեր, որոնք ուշագրավ են անգամ այսօր:

«Ազգին հատուկ դաստիարակություն[3]» աշխատության մեջ Ալիշանը խոսում է իր ժամանակաշրջանին բնորոշ խնդիրների մասին, չնայած ուսումնասիրելով այդ

[1] Նույնը, էջ 206:
[2] Նույնը, էջ 297:
[3] Ալիշան Ղ., Երկեր, Ե., 1981 թ., էջ 156:

աշխատությունը՝ կարող ենք հստակ ասել, որ այդ խնդիրները մինչև օրս էլ արդիական են: Նա համեմատում է բարերարությունը և դաստիարակությունը. Բարերարությունը կարևոր և մեծագույն գործ է, դաստիարակությունը՝ ամենամեծ և անհրաժեշտ բարիքը, որը պետք է պատշաճ և անձի բնավորությանը համապատասխան կերպով իրականացվի:

Դաստիարակության վախճանը յուրաքանչյուր ազգի համար նույնն է, բայց ահա այդ վախճանին հասնելու միջոցները ու ճանապարհները կարող են և պետք է տարբեր լինեն: Ալիշանն այսպես է գրել այդ մասին. «Երուսաղեմ գնացողներուն մի՞թե մեկ սիրտ, մեկ ուխտ չէ: Բայց ահա ճանապարհին՝ մեկուն ծով և մեկուն ցամաք, ծովուն նավերն ալ զանազան զորությամբ և զանազան ընթացքով կշարժվին, ցամաքեն գնացողը ալ զանազան գրաստ կգործածեն երկրին համեմատ: Եվ սակայն ամենքն ալ նույն վախճանին կհասնեն[1]»:

Համեմատելով ազգերին՝ հեղինակը նշում է, որ ազգերը նույն մարմինն ու արյունն ունեն, բայց տարբեր են խառնվածքով և բնավորությամբ: Համեմատելով բնական ախորժակն ու բարոյականությունը՝ Ալիշանը նշում է, որ «բնական ախորժակք զանազան են մարդկանց մեջ, զանազան են նաև բարոյականք, և ինչպես որ ըստ ախորժակաց կզանազանենք բնական կենաց սնունդն, այդպես ալ զանազանելու է բարոյական կենաց սնունդն, որ է դաստիարակություն կամ կրթություն[2]»: Դաստիարակության նյութը պետք է բարոյական լինի և ունենա տարբեր ձևակերպումներ՝ հաշվի առնելով կրթվողի ընդունակությունները: Ալիշանի այս միտքը ավելի պարզեցվում և հասկանալի է դառնում, երբ նա ասում է՝ նույն դեղը նույն հիվանդության դեպքում կարող ենք տալ տարբեր բնավորություն և կազմվածք ունեցող երեք մարդու: Առաջինի մոտ հիվանդությունը լիարժեք կբուժվի, երկրորդի մոտ ոչ մի օգուտ չի տա, իսկ երրորդի մոտ հիվանդությունը ավելի կխորանա: Այստեղից կարող ենք ասել, որ ճիշտ չընտրված մեթոդների արդյունքում դաստիարակությունը կարող է լինել անարդյունավետ և սխալ:

Ըստ Ալիշանի՝ հայերս թեև կրթության կարոտ ազգ ենք, բայց ունենք այնպիսի բանիմաց հայագետներ, ովքեր կարող են պատշաճ կերպով մշակել և իրականացնել հայոց ազգին հատուկ դաստիարակչական մոտեցումներ: Լեզվի, կրոնի, քաղաքական կառավարության, ազգային ուտեստների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ առանձին և ազգահատուկ կրթություն տալ հային, հույնին և մնացած ազգերին: Նա նշում է, որ կլինեն կարծիքներ, որ եթե նման կերպ կազմակերպվի ազգերի կրթությունը, ապա մարդկային կրթությունը երբեք կատարելության և միասնության չի հասնի, ընդհակառակը, միշտ «կտիրի զանազանության ոգին»: «Մենք կըսենք թե այդպես չէ, հապա բոլորովին հակառակը. միօրինակ կրթությունն զանա-

[1] Նույնը, էջ 158:
[2] Նույնը, էջ 157:

զանիչ կսեպենք, զանազան կրթությունները՝ միացուցիչ[1]»: Այս միտքը ավելի լավ հասկանալու համար Ալիշանը բերում է մետաղների օրինակը՝ ասելով, որ եթե ուզում ենք տարբեր մետաղներ հալեցնել նույն ժամանակահատվածում, ապա պետք է հաշվի առնենք մետաղների կարծրությունը և խտությունը, որպեսզի համապատասխան պայմաններ ապահովենք: Ճիշտ է, պայմանները տարբեր են, բայց արդյունքները նույնն են: Ճիշտ նույն կերպ էլ կրթության դեպքում է՝ տարբեր պայմաններ, բայց նույն արդյունքը:

Քննելով այս բոլոր հանգամանքները՝ Ալիշանն ասում է. «Արդ կմնա մեզի ալ քննել, թե ազգերնիս բարոյական վախճանին հասցնելու համար ո՞ր ճամբան պետք է բռնենք[2]»: Այս դժվարին խնդիրն իր դյուրին լուծումը կգտնի, եթե մենք հաշվի առնենք մի քանի հանգամանք. առաջինը (և գլխավորը)՝ պետք է նայենք մեր բնավորությանը, հետո՝ քաղաքական վիճակին, ինչպես նաև հարևան ազգերին: Բնավորությունը ճանաչելու համար պետք է դիտենք մեր ներկայիս վիճակը և պատմության ժամանակներից հայոց բարքը, խառնվածքը, ընդհանուր մտավոր ունակությունները: Եվ ահա դաստիարակին մնում է «լավ ճիրքերն աճեցնե և հաստատե, վատ բնավորություններն ցուցնե թե որչափ վնասակար եղած են ազգերնուս և մարդկության և խլել ջանա»: Այդ ամենը պետք է արվի մեծ վարպետությամբ, որպեսզի խրատները և կրթությունը հասնեն հայի ականջին, մտքին և սրտին:[3]

Ազգին հատուկ դաստիարակությունը պետք է իրականացվի բարեխղճորեն և մեծ ազգասիրությամբ: Միայն այս դեպքում կունենանք լավ կրթություն և կրթված սերունդ:

Հաջորդ կարևոր հարցը, որ քննության է առել Ալիշանը՝ դաստիարակությունը կամ կրթությունը գիտությունից տարբերակելու հարցն է: Գիտությունն ընդհանուր է բոլոր ազգերի համար և ընդհանուր գիտելիք է տալիս մարդուն: Գիտության մեջ խորանալու համար նա դեմ չէր օտար ազգերի մեջ լավ վարպետներ գտնելուն: Դաստիարակությունը մասնավոր է, յուրաքանչյուր ազգի համար պետք է յուրահատուկ մոտեցում, և այս դեպքում նա չէր ընդունում, որ օտարը կարող է լավ դաստիարակ լինել: Դրական գիտելիքները բոլոր ազգերի համար ընդհանուր են, իսկ մտածողությունն և խառնվածքը՝ անհատական, ուրեմն անհատական պետք է լինի նաև այդ «մտածմունքն հաղորդելու և ըմբռնելու կերպը», հակառակ դեպքում «օտարի կրթությունն կամ քիչ կամ ոչինչ կհաջողի, կամ կրթվողն իր ազգային ոգին կկորսնցնե[4]»: Ահա, այս փաստն էլ է ապացուցում, որ ազգին անհրաժեշտ է հատուկ դաստիարակություն: Եվ եթե այսօր մեր ազգի մեջ պակասում են լավ և մեծ ճանաչում ունեցող

[1] Ալիշան Ղ., Երկեր, Ե., 1981 թ., էջ 158:
[2] Նույնը, էջ 158:
[3] Նույնը, էջ 159:
[4] Ալիշան Ղ., Երկեր, Ե., 1981 թ., էջ 160:

գիտուն մարդիկ, ապա ավելի լավ է «հայ մանկիկներին» կրթի թեկուզ պակաս գիտուն, բայց հայը:

«Թե ով է տղոց ամենեն սիրելի, զորավոր և հարկավոր վարպետը[1]» աշխատության մեջ, խոսելով երեխաների կյանքում ծնողների ունեցած դերի մասին, Ալիշանը գրում է. «Վասնզի ան տղան առաջ ինչպես որ պետք է, լավ չէ անցած առաջին սիրելի, զորավոր ու հարկավոր վարպետին ձեռքեն, որ է իր ծնողքը և մանավանդ՝ մայրը»: Հեղինակի կարծիքով, եթե երեխային իր ծնողները չսովորեցնեն առաջին տեղում դնել կրթությունը և «չկորսնցնեն բրտություն», շատ դժվար կլինի (եթե ոչ անհնարին) վարպետների ձեռքով բարեկրթություն սովորելը: Այսինքն՝ Ալիշանն ասում էր, որ երեխային առաջին կրթողը և դաստիարակողը նրա ծնողներն են, և կասկած չկա, որ նրանց տված լավ դաստիարակությունը հիմք է հանդիսանալու լավ կրթության: Իհարկե, դժվար է գթասիրտ ծնողներին ասել, թե իրենց երեխայի թշվառության պատճառը իրենք են: Բայց ինչպե՞ս ինքներս մեզ խաբենք ու չասենք, որ աշխարհում մարդկանց անկարգ լինելու առաջին պատճառը ծնողներն են: Առաջին հերթին ծնողը պետք է բարեպաշտության և ընկերության սերմերը ցանի երեխայի մեջ, իսկ վարպետներն այդ հատկանիշները հաջողությամբ «աճեցնեն»: Միայն այս դեպքում աշխարհը կունենա ընտիր քաղաքացիներ, իսկ մարդիկ՝ լավ ընկերներ:

Ալիշանի համար «ամենահարկավոր ուսմունքը[2]» առաքինությունն է: Այդ ուսմունքը սովորելու համար գլխավոր միջոցն է «ճանչնալ անոր ազնվությունը, հարկավորությունն ու մեծությունը»: Եթե գիտությունը հարկավոր է մարդու միտքը զարդարելու համար, ապա առաքինությունը հարկավոր է նույն այդ գիտությունները զարդարելու համար: Ի զարմանս շատերի, Ալիշանի կարծիքով, այս հարկավոր ուսմունքը ոչ թե բնատուր է, այլ կարելի է ու պետք է սովորել ու սովորեցնել: «Այս ճանաչմունքը երբոր տիրապե ու կատարյալ ըլլա,-գրում է Ալիշանը,- մարդուս միտքը կհավանեցնե և հավանմունքը սիրելի կընե առաքինությունը, որով ինքն իրեն ալ կսովորվվի»:

Հետևելով հին իմաստունների օրինակին՝ Ալիշանը հորդորում է մարդուն ճանաչել ինքն իրեն: «Ծանիր զքեզ,-գրում է Ալիշանը,- իբրև առաջին և ամենահարկավոր դաս կարդացողաց՝ լավ գիտենալով, որ բուն զմարդս մարդ ընողըն է ինքզինքը ճանչնալը: Եկուր նայե, որ այս ամենամեծ և օգտակար գիտություն ո՜րչափ հարկավոր է մարդուս նե, այնչափ ալ դժվարին է սովրիլը, ինչպես որ ամեն ատենի մարդիկ վկայեր են: Բայց որովհետև աս ալ հայտնի է, թե որչափ մեկը ավելի ճանչցեր է ինքզինքը, այնչափ օգուտ տեսեր է, և որչափ որ իրեն անծանոթ է եղեր՝ այնչափ իրմե դուրս ելեր ու վնասվեր է, ամեն մարդ պիտի քաջալերվի ինքնաճանաչության դժվարություններուն հաղթելու[3]»: Դժվարությունների պատճառը, ըստ Ալիշանի, տգիտու-

[1] Նույնը, էջ 121:
[2] Ալիշան Ղ., Երկեր, Ե., 1981 թ., էջ 124:
[3] Նույնը, էջ 125:

թյունն է, անձնասիրությունը և անհոգությունը: Ինքնաճանաչման վերջնական նպատակը կատարելությունն ու առաքինությունն են:

Այսպիսով՝ մատաղ սերնդի հայեցի դաստիարակության, օտարալեզու կրթության, ճշմարիտ ազգասիրության, իսկական հայրենասիրության վերաբերյալ Ալիշանի գաղափարները ժամանակակից մանկավարժական հայեցակարգերի տեսակետներից այսօր առավել քան արդիական են հնչում: Ալիշանը խորապես հավատում էր ազգի պայծառ ու լուսավոր ապագային և իր իմաստուն ու բարի խորհուրդներով փորձում էր հեռու պահել նրան վերահաս վտանգներից:

Ամփոփենք մեր զեկույցը Ղևոնդ Ալիշանի՝ սերունդներին ուղղված պատգամով՝ **«Շրջահայա՛ց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցե՛ք միմյանց»**[1]**,** որը նրա հայրենասիրական ոգու ամփոփ արտացոլումն է:

Օգտագործված գրականություն

1. Ալիշան Ղ., Երկեր, Եր., 1981:

2. Իսահակյան Ավ., Երկեր, Եր., 1959:

3. Իսահակյան Ավ., Երկեր, Եր., 1987:

4. Թանանյան Գ., Ղևոնդ Ալիշանի փիլիսոփայական և մանկավարժական հայացքները, Եր., 2011:

[1] Իսահակյան Ավ., Երկեր, Ե., 1959 թ., էջ 17:

GHEVOND ALISHAN'S PEDAGOGICAL VIEWS

DAVTYAN ARMINE
GSU Lecturer
PAPYAN SIMA
1st year Master student
Faculty of Humanities,
Department of Elementary Petagogy and Methadology,GSU

Alishan's huge inheritance has not studied in detail. The work is dedicated to Alishan's pedagogical views. From the view of modern pedagogical concepts, Alishan's educational approach is contemporary. Alishan's was the first one who striving to be understood to the people, he gave the civilian right to the folk language using his rich vocabulary and artistic pictorial means. By resolutely rejecting Alishan's reactionary aspects of outlook view, the Armenian people deservedly appreciate the grate contribution of the eminent poet, that he left in the treasury of our culture. Alishan's scientific works ans art creations contribute on the patriotic spirit.

Keywords: *patriotic activity, philosophical questions, nature, «Paramount Thing», The God, patriotism, virtue, education, upbringing, self-recognition.*

ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ГЕВОНДА АЛИШАНА

ДАВТЯН АРМИНЕ
Преподаватель ГГУ
ПАПЯН СИМА
Студентка 1-ого курса магистратуры отделения начальной педагогики и методики гуманитарного факультета ГГУ

Огромное наследие Г. Алишана, в особенности, его педагогические взгляды, до сих пор должным образом не изучено, поэтому в нашей работе мы постарались восполнить этот пробел. Следует отметить, что образовательно-воспитательные подходы Г. Алишана обобщают идеи, которые используются в ряде современных педагогических концепций. Он был одним из первых, кто, стремясь быть понятым всем, способствовал внедрению ашхарабара, используя его богатую лексику и средства художественного изображения. Реакционные стороны решительно отвергали подходы и идеи Алишана, однако армянский народ по достоинству оценил большой вклад выдающегося ученого, поэта, который он оставил в сокровищнице нашей культуры. Свойственный Алишану ярко выраженный патриотизм, проявляющийся в его научных трудах и художественных произведениях, существенно способствовал пробуждению патриотического духа народа.

Ключевые слова: *история педагогики, Гевонд Алишан, философские вопросы, природа, вера, патриотизм, добродетель, образование, воспитание, самопознание.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 06.09.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 15.10.2020թ:

ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԸՍՏ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ «ԵՐՋԱՆԻԿ ՄԱՀԸ» ՆՈՎԵԼԻ)

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան
e-mail: asoyan.60@mail.ru
ԱՍՈՅԱՆ ԻՐԻՆԱ
Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
e-mail: irina.asoyan2018@mail.ru

Գրական ստեղծագործությունների ուսուցումը դպրոցում մի գործընթաց է, որի ընթացքում ներկայացվում և վերլուծվում են ստեղծագործության սյուժեն, բովանդակությունը, կերպարները, կատարվում են լեզվաոճական դիտարկումներ, սակայն այդ ամենը ամրակայելու, յուրացնելու, գնահատելու համար անհրաժեշտ է կիրառել թե՛ ավանդական, թե՛ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ:

Հոդվածում Գրիգոր Զոհրապի նովելի օրինակով փորձ է արվում ներկայացնել այն սկզբունքներն ու մեթոդները, որոնց օգնությամբ հնարավոր է կատարել գրական նմանատիպ ստեղծագործությունների համեմատաբար համակարգված ու լիարժեք ուսումնասիրություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր ստեղծագործություն ունի իր բնորոշ առանձնահատկությունները, ուստի հոդվածում ներկայացված սխեման միայն ընդհանուր բնույթ ունի:

Բանալի բառեր՝ *ուսումնասիրություն, դպրոց, մանկավարժական տեխնոլոգիաներ, մեթոդներ, նովել, գրական ստեղծագործություններ:*



«Իր գործունեութեան ձևերէն այն, զոր ամէնէն աւելի
հրայրքով, հեշտանքով կը կատարէր, գրականութիւնն էր:
Կը պաշտէր գրականութիւնը»
Ա. Չոպանյան

Որևէ գրական արձակ ստեղծագործություն ուսուցանելու համար անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել տեքստը, մշակել և ձևակերպել ուսումնասիրման սկզբունքները: Մասնավորապես նպատակահարմար է տեքստի ուսումնասիրությու-

նը իրականացնել այնպիսի սկզբունքներով, որոնք թույլ կտան բացահայտելու ստեղծագործության գաղափարական-բովանդակային միտվածությունը, հեղինակի նպատակադրումը, լեզվաոճական ու դրանով պայմանավորված գեղարվեստական առանձնահատկությունները և, որն ամենակարևորն է, կօգնի ընթերցողներին անհատական մոտեցում ու վերաբերմունք ցուցաբերելու թե՛ ժամանակաշրջանի, թե՛ հասարակական միջավայրի ու ընկալումների, թե՛ կերպարների նկատմամբ՝ միաժամանակ երևույթները գնահատելով արդիականության տեսանկյունից:

1.Լեզվաոճական վերլուծության սկզբունք	2.Բովանդակային վերլուծության սկզբունք	3.Տեքստի անհատական ընկալումը խթանող սկզբունք
ա)Տեքստի բառապաշարի քննություն, բառագիտական, վերլուծություններ:	ա)Դեպքերի, գործողությունների զարգացման ընթացքի, հերոսների արարքների վերլուծություն, դրանց իրականացման լեզվաոճական միջոցների մեկնաբանություն:	ա)Զգայական-զգացական վերլուծություններ՝տեսողական պատկերներ, լսողական զգայություններ, կինեսթետիկ զգացողություններ:
բ) Տեքստում առկա քերականական կառույցների վերլուծություն. Խոսքի մասերի, դրանց քերականական հատկանիշների, նախադասությունների և դրանց անդամների կապակցման եղանակների վերլուծություն:	բ)Դեպքերի, հերոսների արարքների դրդապատճառների, շարժառիթների բացահայտում և հոգեբանական մեկնաբանություն:	բ)Տեքստում նկարագրվող դեպքերի ներքին կապերն ու պայմանավորվածությունները: գ)Հերոսների զգացմունքների արդիականությունը անհատական ընկալմամբ: դ)Երջանկության անհատական ընկալման առանձնահատկությունները :
գ)Նախադասությունների, պարբերությունների կապի տեսակների վերլուծություն. Նախադասությունների տրամաբանական հաջորդականություն, տեքստի	գ)Նովելի կառուցվածքը որպես իրական պատմության ցուցիչ:	

սկզբի, ընթացքի և ավարտի ընկալում ըստ կերպարների յուրահատկությունների:		
դ)Ոճական–արտահայտչական վերլուծություն. պատկերավորման միջոցների տարբերակում, բառի ուղիղ և փոխաբերական իմաստներով կիրառությունների, խոսքի ոճերի տարբերակում:		

1. Տեքստի վերլուծության լեզվաոճական սկզբունքները նպատակահարմար է իրականացնել

ա)ինդուկցիոն մեթոդով. բաղադրիչ մասերից⟶ամբողջական միավոր, այսինքն՝ բառ⟶նախադասություն⟶պարբերություն⟶տեքստ,

բ) դեդուկցիոն մեթոդով. ամբողջից⟶ մասերի քննություն, այսինքն՝ տեքստ⟶ պարբերություն⟶նախադասություն⟶ առանձին բառերի բացատրություն, մեկնաբանություն:

Առաջին դեպքում քննարկվում են <u>անծանոթ բառերը</u>, բացատրվում, վերլուծվում, քննվում են տվյալ բառի կապը մյուս բառերի հետ: Ենթարկվում են բառակազմական վերլուծության (արմատ, ածանց վերջավորություն), նոր բառեր են կազմվում այդ արմատներով և ածանցներով: Կատարվում է բառի ձևաիմաստային աշխատանք. տրված բառը փոխարինել իր հոմանիշով՝ փոփոխության արդյունքը բովանդակության մեջ տեսնելու: Քննարկվում է լեզվաբանական մակարդակով: Ընտրվում են տեքստի հիմնական միտքն արտահայտող նախադասությունները, վերլուծվում են ձևաբանորեն և շարահյուսորեն (իրականացվում է միջառարկայական կապ):

Օրինակ՝ Գրիգոր Զոհրապի «Երջանիկ մահը» նովելը ուսումնասիրելիս վերլուծությունն այնպես պիտի կատարել, որ բացահայտվեն հեղինակի մտադրությունները: Մասնավորապես ինչպես ինքն է ասում.

«Այս կյանքին բոլոր հորինվածքները կը քայքայեմ մեկիկ-մեկիկ, ջիղերը կը զննեմ, երակները կը բանամ ու,ինչ որ անհնար կը թվի ձեզի, իր հոգին կը գտնեմ ու կը վերլուծեմ...»,- ասել է հեղինակը:

Նախքան նովելի ուսուցմանն անցնելը դասը սկսել հինգրոպեանոց զրույցով՝ նշելով, որ կնոջը ճանաչելու, նրա հոգեբանությունը հասկանալու հարցերը միշտ էլ հետաքրքրել են գեղագետներին, հոգեբաններին, գրողներին, փիլիսոփաներին: Սա-

կայն առեղծվածային կինն անբացատրելի է մնացել: Ուստի Հայկ Խաչատրյանի հետևյալ միտքը լավ նախաբան կլինի դասի համար.

«Տիեզերքի խորամանկ ժպիտն է կինը, որից գլուխ չեն հանում ո'չ մարդիկ, ո'չ էլ նույնիսկ իրենք՝աստվածները...»:

1.Նովելի ուսուցումը կարելի է կատարել և' ինդուկցիոն, և' դեդուկցիոն մեթոդներով:

Առաջին դեպքում ուսումնասիրությունն սկսվում է վերնագրից. մահը մահ է, «երջանիկ մահ» կապակցությունը՝ երկու հակադիր եզրերի միացումով, կարող է պարադոքսալ և տարօրինակ թվալ: Որոշվում է երջանիկ և մահ բառերի խոսքիմաստային պատկանելությունը:

ածական գոյական

2. Սկսվում է հետազոտական մեթոդը՝ զուգահեռելով միջառարկայական և ներառարկայական կապերը. քայլ առ քայլ պետք է թափանցել հեղինակի աշխարհը: Առաջարկվում է նովելի առաջին մասից գտնել վերնագրին համապատասխան հոմանիշ բառակապակցություններ, նախադասություններ: Կատարվում է նաև ոճական մեկնաբանություն՝ մահ բառը քանի՞ անգամ է գործածվել և ինչու՞ (6 անգամ):

«Որն էր հազար տեսակ մահերուն ամենեն քաղցրը...», «գեղեցիկ մահ», «ամենեն քաղցր մահը տեսա...»:

3. Քննարկվում են պարբերությունները:

Առաջին պարբերությունում ներկայացվում է բժիշկ Վահանյանը:

«Տոքթոռ Վահանյան սովորական բժիշկ մը չէ. մարմնի հիվանդություններուն չափ ու հոգիի ցավերուն հետամուտ, հետաքրքիր բժիշկն է անիկա:

Իր հմտության մեծությունը՝ չոր ու ցամաք ապառաժի զանգվածին չի նմանիր բնավ, այլ դալար դաշտավայրի մը ծիծղուն երևույթը ունի: Վաթսունի մոտ, մազը մորուքը ճերմկած, տկարակազմ, բայց զվարթախոս մեկն է տոքթոռը:

Մահվան դեմ՝ իր քառասուն տարվան բժիշկի մղած պայքարովը, մտերմություն մը հաստատած է կարծես անոր հետ. անոր ամեն դավերը ու խաղերը գիտե. անոր զարհուրելի, երբեմն հանկարծահաս ու երբեմն համեցող հարվածներուն բոլոր գաղտնիքները ուսումնասիրած է»:

Այստեղ ուշադրությունը հրավիրվում է վերը ընդգծված նախադասությունների և արտահայտությունների վրա՝ ասելիքը ըմբռնելու համար:

Երկրորդ պարբերությունը սկսվում է բժշկի հիշողություններով. բժշկի տունն է, երեկո: Հավաքվել են նրա մերձավորները: Խոսք է բացվում այն մասին, թե որն է «հազար տեսակ» մահերից ամենից քաղցրը: Եվ բժիշկը վերհիշում է տասը տարի առաջ կատարված մի դեպք իր փորձից:

Ուշադրություն է դարձվում ստորոգյալներին, որոնք հիմնականում բաղադրյալ են: Սրանք ավելի պատկերավոր և արտահայտիչ են դարձնում խոսքը.

բժիշկ մը չէ, բժիշկն է, ընդարձակ է, միտք մը չէ, մեկն է, հաստատած է, ո՞րն էր աղջիկ մը, գնտակն էր, մահն էր, հեշտն էր, երջանիկն էր և այլն:

Եվ այսպես բովանդակությունը բացահայտվում է պարբերություն առ պարբերություն: Նկատելի է հեղինակի ոճի առանձնահատկությունը. խոսքը սեղմ է , իրադարձություններով ոչ հարուստ, կա մեկ միջադեպ՝ անանուն հերոսուհու վերջին պարը սիրած երիտասարդի հետ և հանկարծակի մահը նրա գրկում, մնացածը՝ դեպքի նախապատմությունը՝ քառասնամյա կնոջ անցած կյանքի համառոտ ամփոփումը ընդհանուր գծերով, ֆոն է հիմնական պատմության համար:

2.Դեդուկցիայի դեպքում հակառակն է՝ տեքստ ⟶ պարբերություն⟶նախադասություն⟶բառ:

Այսպես, տեքստի բովանդակային վերլուծությունն սկսվում է կարդացածի կամ լսածի նորովի վերարտադրությամբ՝ համապատասխան մեղեդու, նկարազարդման, գունավորման միջոցով: Գիտական տեքստի դեպքում սովորաբար կազմվում են աղյուսակներ, գծապատկերներ: Այս աշխատանքը պայմանականորեն կարելի է անվանել «Տեքստի թարգմանություն», որի ժամանակ սովորողն իր ընկալածի ընդհանրական զուգորդական պատկերն է տալիս:

Հաջորդ քայլին տեքստը բաժանվում է մասերի, առանձին մասերի համար կազմվում են հարցեր և պլան, գտնվում են նրանց հիմնական նախադասությունները կամ բանալի բառերը:

Նորից կատարվում են բառային, քերականական, լեզվաոճական մեկնաբանություններ, որոնք հնարավորություն են տալիս հասկանալ և' տեքստը, և' ենթատեքստը (գլխավոր նպատակն է դա), դրանց միջոցով՝ հերոսների արարքների դրդապատճառներն ու շարժառիթները:

Այսպես, «Երջանիկ մահը» նովելը վեցէջանոց պատում է՝բաժանված չորս գլուխների, որոնցից ամեն մեկը ինքնուրույն տեղ ունի նորավեպի կառուցվածքում:

Առաջին գլուխը նախադրության դեր է կատարում:

Երկրորդ գլխից սկսվում է այն դեպքի նկարագրությունը, որ տեղի է ունեցել անանուն հերոսուհու տանը կազմակերպված մի երեկույթի ժամանակ: Հանկարծ, ըստ

Զոհրապի նախասիրած պատմելաձևի, վերհուշը շեղվում է բուն ընթացքից և պտտվում կնոջ կենսակերպի ու հոգեբանության շուրջն ընդհանրապես:

Երրորդ գլխում նկարագրվում է երեկույթի «ամենեն ցնծահույզ վայրկյանը»՝ պարային մասը՝ շեշտը դնելով տանտիրուհու և նրա սիրած երիտասարդի զուգապարի վրա, որն իրադարձության բարձրակետն է:



Չորրորդ գլուխը հանգուցալուծման պահն է: Պարի ընթացքում սրտի կաթվածից մահանում է հերոսուհին: ՍԱ Է, ԸՍՏ ՀԵՂԻՆԱԿԻ, ԵՐՋԱՆԻԿ ՄԱՀԸ…



Բովանդակային առումով նովելը կարելի է քննել հետևյալ մոտեցումներով.
1.ԿԻՆԸ

ա) Կինը և տղամարդը - Տղամարդը միջոց է:
բ) Կինը և կյանքը - Կյանքը պետք է վայելել:
գ) Կինը և սերը - Սերը կյանքը վայելելու միջոց է:
դ) Կինը և միջավայրը - Միջավայրը երկդիմի է:

2.ԿՆՈՋ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա) Կնոջ վերաբերմունքը բժշկի խորհուրդների նկատմամբ:
բ) Կյանքը գեղեցիկ է, երբ երիտասարդ ես:
գ) Կյանքն անտանելի է, երբ ծեր ես:
դ) Վերնագրի «երջանիկ» և «մահ» հասկացությունների համադրումը:

3.ԱՆՀԱՏԸ և ՄԻՋԱՎԱՅՐԸ

ա) Միջավայրի տեսանելի վերաբերմունքը անհատի նկատմամբ:
բ) Միջավայրի անտեսանելի վերաբերմունքը անհատի նկատմամբ:
գ) Անհատի հակադրությունը միջավայրին

Անհատի և միջավայրի հակադրությունը լավ է արտահայտված հայ գրականության մեջ, ուստի կարելի է ստեղծել ներառարկայական կապ. Ե. Չարենց. «Երբ էս հին աշխարհը մտա...», «Տաղ անձնական», Պ.Դուրյան.«Լճակ» և այլն: Նշված բանաստեղծությունները լավագույնս ցուցադրում են անհատի և հասարակության հակասությունը, հասարակության անտարբերությունը անհատի ապրումների նկատմամբ:

Իրականացվում է նաև միջառարկայական կապ՝ արևմտահայերենին բնորոշ բառապաշարային, քերականական, ոճական իրողությունների պարզաբանման նպատակով: Այսպես.

1.Բացատրվում են արևմտահայերենի բառապաշարին հատուկ բառերը:

Օրինակ՝ վայրկյան - րոպե
Աղվոր - գեղեցիկ
պարապ տեղը – իզուր
երկվայրկյան - վայրկյան
անիկա - նա և այլն:

2.Հիշեցվում են արևմտահայերենին հատուկ ձևաբանական որոշ դրսևորումներ, երբ հոգնակի դարձնելիս, հոլովելիս գոյականի հիմքը չի հնչյունափոխվում, կան հոգնակիի կազմության տարբերություններ:

Օրինակ՝ կին- կիներ- կիներու
մահ – մահեր- մահերու
գիրկ - գիրկին
բույն - բույնին
երկուսս էլ - երկուքն ալ
կ'ըսեին – ասում էին և այլն:

3.Մեկնաբանվում են պատկերավորման-արտահայտչական միջոցները. այստեղ՝ համեմատություն, փոխաբերություն, մակդիր, պարադոքս և այլն:

Օրինակ՝ Անիկա իր հոգին ավանդեց, գլուխը իր սիրած տղուն գիրկին մեջ,նույնիսկ իր բույնին մեջ նետահար սպաննված թռչունի մը պես, Բաժակի մը պես, որ կոչունքի մը սեղանի վրա, ցնծության մաղթանքներու, բախումներու մեջ կը փշրվի,փոխանակ դուրսը սպասավորներու ձեռքով, լվացքի աղտոտ ջուրին մեջ-համեմատություն:

Երջանիկ մահ, քաղցր մահ - պարադոքս :
Լանջքին կոհակներ, կենցաղին ավերումներ-փոխաբերություն:
Նրբամիտ ընկերություն, հալածիչ լուսին-մակդիր և այլն:

4.Որպեսզի ինքնանպատակ չլինի, կարելի է առաջարկել, որ սովորողը իր անձը կապի նովելի հերոսուհու արարքի կամ դեպքի հետ (օգտագործում է «Կրկնակի գրառումների օրագիր» մեթոդը)՝քննելով և' իր, և' հերոսուհու ներաշխարհը, որ նա իրական կյանքից վերցրած կին է և սիրում է կյանքը, նրա օրինակով քննի իր արարքը՝ մարդու ինքնադաստիարակումը (սա տեքստի անհատական ընկալումը խթանող սկզբունքն է) :

Նշված փուլերն անցնելուց հետո պետք է հանձնարարել սովորողներին, որ տեքստից գտնեն ընդհանրացնող եզրահանգումը և մեկնաբանեն: Այն է՝

«Կինը ժպիտ մըն է, պետք չէ, որ ան փոխվի լացի»:

Տնային առաջադրանք՝
Շարադրություն. «Երջանկության իմ պատկերացումը»

ON SOME FEATURES OF TEACHING LITERARY WORKS (ACCORDING TO GR. ZOHRAP'S "HAPPY DEATH" NOVEL)

ASOYAN TATUL
Candidate of Philological Sciences, Associate Professor,
Dean of the Faculty of Philology
ASOYAN IRINA
Teacher of the Armenian Language and Literature
at the Secondary School of Akunk, Gegharkunik region

Teaching literary works at school is a process during which the plot, content, characters of the work are presented and analyzed, linguistic and stylistic observations are made, but in order to strengthen, master and evaluate all that, it is necessary to use both traditional and modern pedagogical technologies.

By the example of Gr Zohrap's novel an attempt is made to present such principles and methods that could make a relatively systematic and complete study of similar literary works possible. However it should be taken into consideration that each work has its own characteristics, so the scheme presented in the article is only general in nature.

Keywords: *Teaching, school, pedagogical technologies, methods, novel, literary works.*

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ОБУЧЕНИЯ ЛИТЕРАТУРЕ (НА ПРИМЕРЕ НОВЕЛЛЫ ГР. ЗОГРАБА "СЧАСТЛИВАЯ СМЕРТЬ")

АСОЯН ТАТУЛ
Кандидат филологических наук, доцент,
Декан филологического факультета ГГУ
АСОЯН ИРИНА
Учительница армянского языка и литературы
средней школы села Акунк Гегаркуникского марза

Изучение литературного произведения в школе - это процесс, в ходе которого анализируются сюжет, содержание, образы произведения, проводятся лингвостилистические наблюдения. Для укрепления, освоения, оценки пройденного материала применяются как традиционные, так и новейшие педагогические технологии.

В статье, на примере новеллы Гр. Зограба, делается попытка представить те принципы и методы, с помощью которых можно провести сравнительно систематизированное и полноценное исследование подобных литературных произведений. Однако следует иметь в виду, что каждое произведение имеет свои характерные особенности, поэтому представленная в статье схема имеет только общий характер.

Ключевые слова: *изучение, школа, педагогические технологии, методы, новелла, литературные произведения.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 22.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.10.2020թ.:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԿԱՆԱՅՔ ՊԱՅՔԱՐԵԼ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԴԵՄ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ԽԱՉԻԿՅԱՆ ՀԱՅԿ
ԳՊՀ դասախոս
e-mail: Hayk.khachikyan85@gmail.com

Ժամանակակից աշխարհում կանանց և տղամարդկանց իրավունքները գրեթե ամենուր հավասար են: Հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում ու տարբեր մասնագիտություններում կանայք գործում են տղամարդկանց հետ հավասար մակարդակում, երբեմն անգամ գերազանցում նրանց՝ կոտրելով դարերով ձևավորված կարծրատիպերը: Շախմատում, սակայն, իրավիճակը շատ հարցերում գրեթե չի փոխվել. դեռ առանձնացնում են կանանց և տղամարդկանց շախմատը՝ տղամարդկանց տալով ակնհայտ առավելություններ: Ճիշտ է, վաղուց անցել են այն ժամանակները, երբ աշխարհի ուժեղագույն շախմատիստների համար պարզապես ամոթ էր գեթ մեկ պարտիա տանուլ տալ նույնիսկ աշխարհի չեմպիոնուհուն: Արդեն տևական ժամանակ կանայք պարբերաբար ստանում են տղամարդկանց գրոսմայստերների փիրղոս և հաճախ բավականին լուրջ պայքար մղում, բայց, միևնույնն է, տղամարդկանց և կանանց շախմատի տարբերություններն առայսօր հսկայական են: Շատերը հանգել են այն մտքին, որ բարձր մակարդակում տղամարդկանց առավելությունն ակնհայտ է, և կանայք այստեղ հավասարը հավասարի պայքարելու հնարավորություններ չունեն: Խնդիրն իրականում այդքան միանշանակ չէ և համապատասխան հետազոտությունների կարիք ունի:

Այս հոդվածը նպատակ ունի ներկայացնելու տղամարդկանց և կանանց շախմատի առանձնահատկությունները, ինչպես նաև վեր հանելու բաժանարար սահմանը վերացնելուն ուղղված փաստարկներ:

Բանալի բառեր՝ *Կանայք շախմատում, ուժեղագույն շախմատիստուհիներ, տղամարդու գրոսմայստերի կոչման արժանացած կանայք, շախմատային կարծրատիպեր, Յուդիթ Պոլգար, Ժուժա Պոլգար, Նոնա Գափրինդաշվիլի, Վերա Մենչիկի ակումբ, աշխարհի առաջին չեմպիոնուհի, Գարրի Կասպարով, Գինեսի ռեկորդակիր շախմատիստուհի:*

Շախմատն ինտելեկտուալ մարզաձև է, և այստեղ արդյունքը չի որոշվում ֆիզիկական ուժով: Հետևաբար առաջանում է պարզ հարց. արդյո՞ք կանայք մտավոր ունակություններով զիջում են տղամարդկանց: Շատերը պարզապես նայում են թվերին ու արդյունքներին, հաշվի են առնում այն անվիճելի փաստերը, որ լավագույն 100 շախմատիստների ցանկում կա ընդամենը մեկ իգական սեռի ներկայացուցիչ՝ ի

դեմս չինուհի Հոու Յիֆանի, տղամարդկանց ու կանանց կոչումները տրվում են տարբեր ուժային հարթություններում, և կոչ են անում համակերպվել իրականության ու փաստերի հետ՝ շարունակելով կանանց մրցաշարերն առանձին անցկացնել:

Սակայն խնդրին, հատկապես ժամանակակից աշխարհում, նման պարզունակ լուծում տալն ուղղակի անլուրջ է և պահանջում է համակողմանի մոտեցում: Նախ, մինչև օրս տղամարդկանց համեմատ կանանց արդյունքների այդքան ցածր լինելը պետք է փնտրել պատմա-սոցիալական և սեռերի կենսաբանական առանձնահատկությունների մեջ: Բայց մինչ վերոնշյալ առանձնահատկություններն ու դրանց կապը շախմատի հետ հստակեցնելը, պետք է հասկանալ, թե ինչ է շախմատը բարձր մակարդակում, որի մասին ճիշտ պատկերացում ունեն ոչ բոլորը:

Երկար տարիներ մասնագետները վիճում են, թե ինչ է շախմատը առհասարակ՝ մարզաձև՞, արվե՞ստ թե՞ գիտություն: Այս հարցի շուրջ, թերևս, անօգուտ բանավիճելու փոխարեն պետք է ասել, որ շախմատը ներառում է և՛ սպորտային բաղադրիչ, և՛ գիտական աշխատանք, և՛ իհարկե գեղեցկություն: Եթե ժամանակակից շախմատին նայում ենք որպես մարզական բարձր արդյունքների գործունեություն, ապա այն բարդ և պրոֆեսիոնալ աշխատանք է, որը պահանջում է մարզիչների և պրոֆեսիոնալ մարզիկների ամենօրյա, քրտնաջան աշխատանք: Անվերադարձ անցել են այն ժամանակները, երբ շախմատային խաղից առաջ լավագույն մարզում էր համարվում մաքուր օդում քայլելը: Ներկայումս խաղից առաջ էլիտար շախմատիստները ժամերով պարզապես կրկնում են հնարավոր տարբերակները: Եթե հաշվի առնենք նաև ուժեղ գրոսմայստերների այն բացառիկ հնարավորությունները, որ կարողանում են մեծ արագությամբ հաշվարկել բազմաթիվ տարբերակներ, պահպանել մեծ կենտրոնացում, ունենալ խորը գիտելիքներ, պարզ կլինի, որ պրոֆեսիոնալ շախմատիստ այսօր կարող են դառնալ եզակի մարդիկ: Առանց չափազանցության պետք է փաստել, որ էլիտար գրոսմայստերը միաժամանակ մարզիկ է, գիտնական, պայքարող և մտածող:

Սեռային գործոնով պայմանավորված առանձնահատկությունների մասին խոսելիս պետք է փաստել, որ այս ասպարեզում կատարվել են մի քանի արժեքավոր հետազոտություններ, որոնցից մի քանիսը շատ կարևոր են և կարող են լույս սփռել խնդրի լուծման վրա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տղամարդիկ և կանայք տարբեր կերպ են արձագանքում ուժեղ սթրեսին: Կանանց օրգանիզմում գործի է դրվում ուղեղի ձախ կիսագունդը, և նրանք հիշում են սթրեսի դետալները, իսկ տղամարդկանց օրգանիզմում՝ աջ կիսագունդը, և նրանք ընկալում են խնդրի էությունը: Այս դիտարկումը հետաքրքիր է նաև այն առումով, որ չնայած շախմատի և գիտության մշտական համեմատությանը՝ շախմատն այնուամենայնիվ սպորտային խաղ է իր բոլոր յուրահատկություններով՝ նյարդային լարվածությամբ, արդյունքի առկայությամբ, հաղթանակներով ու պարտություններով: Պետք է հաշվի առնել նաև մրցաշարերի տևողությունը. դրանք կարող են տևել մինչև երկու շաբաթ, և այդ

ընթացքում շատ կարևոր է նաև շախմատիստի ֆիզիկական պատրաստվածությունը, երկար ժամանակ բարձր կենտրոնացում պահպանելու ունակությունը, ինչպես նաև ուժեղ սթրեսից հետո վերականգնվելու կարողությունը. չէ՞ որ շախմատային պարտիան ինքնին հենց ուժեղ սթրես է: Նրանք, ովքեր չեն մասնակցել շախմատային մրցաշարերի և իրենց վրա չեն զգացել շախմատային պարտիայի ահռելի լարվածությունը, դժվար են պատկերացնում, որ մրցաշարի ընթացքում շախմատիստը կարող է կորցնել մի քանի կիլոգրամ:

Ըստ մեկ այլ, ուշագրավ հետազոտության, որը վերջերս կատարել են բրիտանացի գիտնականները, կանայք տղամարդկանց դեմ ավելի վատ են խաղում, քան իրար դեմ: Դա պայմանավորված է «կարծրատիպի հաստատման սպառնալիքով»: Այս վերլուծությամբ զբաղվողների պնդումները համընկնել են 2016 թվականի հետազոտության արդյունքների հետ, որի ժամանակ շախմատիստների կատարած քայլերը համեմատվել են համակարգչի առաջարկած քայլերի հետ: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ շախմատիստուհիների խաղի որակը միմյանց դեմ պարտիաներում չի տարբերվում տղամարդկանց խաղի որակից, այնինչ կտրուկ ընկնում է, երբ կանայք խաղում են տղամարդկանց դեմ: Այս հետազոտության հեղինակները պնդում են, որ այսպես են աշխատում ենթագիտակցական գենդերային կարծրատիպերը[1]:

Այս հետազոտությունը, այնուամենայնիվ, չի կարելի որպես բացարձակ ճշմարտություն ընդունել, քանի որ, օրինակ՝ գիտնական Թոմ Սթաֆորդի՝ ավելի վաղ կատարած հետազոտությունը[2] հաստատել է, որ կանայք, ընդհակառակը, տղամարդկանց դեմ խաղում ավելի ուժեղ են, քան կանանց դեմ: Հետազոտությունների արդյունքներն հրապարակվել էին Psychological Science ամսագրում և մեծ արձագանքի արժանացել:

Կանանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները քննարկելիս չի կարելի հաշվի չառնել նաև հորմոնալ ֆոնի ամենամսյա տատանումները: Շատ մասնագետներ կարծում են, որ հենց այս տարբերությունն է կանանց և տղամարդկանց համար որոշիչ: Այն խանգարում է իգական սեռի ներկայացուցիչներին տևական ժամանակ բարձր արդյունքներ ունենալուն:

Այն, թե կանանց և տղամարդկանց ֆիզիոլոգիական և հոգեբանական տարբերությունները ինչպես են ազդում շախմատային խաղի որակի վրա, ապագա ուսումնասիրությունների հարուստ նյութ է: Սակայն, երբ թերթում ենք կանանց շախմատի պատմությունը, որն անհամեմատ ավելի կարճ է, քան տղամարդկանցը, չենք կարող չփաստել, որ ակնհայտ աճ կա: Եթե մեկ դար առաջ առաջատար ցանկացած շախմատիստ չէր կարող պատկերացնել, որ կարող է թեկուզ մեկ պարտիա տանուլ տալ

[1] https://www.chess.com/ru/news/view/otkrytie-britanskikh-uchenykh-zhenshchiny-igraiut-slabee-protiv-muzhchin

[2] T. Stafford, Female chess players outperform expectations when playing men, **Psychological Science,** (2018)

ցանկացած կնոջ հետ խաղում, ապա այսօր շախմատային աշխարհում կան բազմաթիվ կանայք, որոնք կրում են տղամարդկանց գրոսմայստերի տիտղոս և տարբեր մրցաշարերում պայքարում են նույնիսկ լավագույն շախմատիստների դեմ: Այլ հարց է, որ հոգեբանական, քիչ ներգրավվածության և վերոնշյալ այլ գործոնների առկայության պայմաններում կանանց արդյունքները զգալի զիջում են:

Առաջին կին շախմատիստուհին, որին վիճակված էր կոտրել դարերով ձևավորված այն կարծրատիպը, որի համաձայն՝ կանայք ի վիճակի չեն պայքարելու ուժեղագույն տղամարդ շախմատիստների դեմ, եղել է լեգենդար Վերա Մենչիկը (1906-1944 թթ.): Նա եղել է աշխարհի առաջին չեմպիոնուհին: Այդ տարիներին պետք էր մեծ խիզախություն ունենալ՝ տղամարդկանց մրցաշարերում ներկայանալու համար: Մենչիկը պատվով է կատարել իր առաքելությունը: Հատկանշական է, որ նրա հայտնվելը տղամարդկանց շախմատում սկզբում լուրջ չի ընդունվել: 1929 թվականին՝ Կառլսբադում կայացած տղամարդկանց մրցաշարի օրերին, վիեննացի շախմատիստ Ալբերտ Բեքքերը կատակով առաջարկել է ստեղծել «Վերա Մենչիկի ակումբ», որտեղ կընդգրվեն նրա հետ խաղում պարտված բոլոր տղամարդ շախմատիստները, իսկ ովքեր խաղը կավարտեն ոչ-ոքի-ով, կհամարվեն ակումբի անդամության թեկնածուներ: Ճակատագրի հեգնանքով «Մենչիկի ակումբ» առաջինը մուտք գործեց հենց Բեքքերը, որը պարտվեց երրորդ տուրում: Հետագայում այդ մտացածին «ակումբի» անդամներ դարձան 1920-30-ական թվականների հայտնի շախմատիստներ Էդգար Քոլլեն, Ժակ Միզեսը, Սամուել Ռեշևսկին, Միր Սուլթան Խանը, նույնիսկ աշխարհի չեմպիոն Մաքս Էյվեն: Վերջինս անգամ հռչակվեց «Վերա Մենչիկի ակումբի» նախագահ[1]:

Աշխարհի առաջին չեմպիոնուհին անպարտելի է մնացել 19 տարի: Վերա Մենչիկը մահացել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Լոնդոնի հրթիռահոծության ժամանակ:

Հաջորդող տարիներին չեմպիոնուհիներից Մենչիկի գործը շարունակել է վրացուհի լեգենդար Նոնա Գափրինդաշվիլին (ծնվ.՝ 1941 թ.): Նա նույնիսկ դարձել է առաջին կին շախմատիստուհին, որին շնորհվել է տղամարդկանց գրոսմայստերի կոչում:

Մենչիկն ու Գափրինդաշվիլին իրենց պատմական առաքելությունը կատարեցին այն առումով, որ խիզախեցին դուրս գալ տղամարդ շախմատիստների դեմ ու ապացուցեցին, որ կանանց համար դա անհնարին պայքար չէ: Իսկ հունգարուհի Յուդիթ Պոլգարի հայտնվելը շախմատային աշխարհում, մասնավորապես կանանց շախմատում իսկական հեղափոխություն առաջացրեց: Նա դարձավ առաջին ու միակ

[1] Линдер В.И., Линдер И.М., Короли шахматного мира: Жизнь и игра - сквозь призму энциклопедии, Москва, 2001

շախմատիստուհին, որն ապացուցեց, որ ուժեղագույն տղամարդ շախմատիստների դեմ հնարավոր է ոչ միայն պայքարել, այլև հաղթել:

Յուդիթի և նրա ավագ քույրերի՝ Սոֆյայի և Ժուժայի անհավանական հաջողությունները առաջին հերթին նրանց հոր՝ մանկավարժ, հոգեբան Լասլո Պոլգարի հաջողությունն էին: Հայրը որոշել էր ապացուցել աշխարհին, որ հանճարներ դաստիարակելը շարքային մանկավարժական խնդիր է: Հունգարացի երեք հարազատ քույրերը՝ Ժուժան, Սոֆյան և Յուդիթը, «վունդեր-քիդից» վերածվեցին հայտնի գրոսմայստերների, հեղինակավոր մրցաշարերի հաղթողների և Գինեսի ռեկորդների գրքի հերոսուհիների:

Քույրերի հաջողության պատմությունը սկսվել էր նրանց լույս աշխարհ գալուց շատ ավելի վաղ: Լասլո Պոլգարին հղացել էր անհավանական մի ծրագիր՝ մեծացնել և դաստիարակել հանճարների: Ուսումնասիրելով հանճարեղ մարդկանց կենսագրությունները՝ նա հանգել էր այն համոզման, որ հաջողության գաղտնիքը գերկենտրոնացման ու քրտնաջան աշխատանքի մեջ է: Լասլոյի մտահղացման մանկավարժական փուլը սկսվեց առաջնեկի՝ Ժուժայի երեք տարեկանը լրանալուն պես, երբ նա տան իրերի միջից պատահաբար գտավ շախմատային խաղաքարեր և սկսեց հետաքրքրվել դրանցով: Ի սկզբանե Լասլոն որոշել էր, որ Ժուժան պետք է դառնա հանճարեղ մաթեմատիկոս, սակայն երեխայի անսպասելի սերը նրան ստիպեց փոխել իր ծրագրերը: Այդպես որոշվեց նաև կրտսեր քույրերի ճակատագիրը[1]:

Արդեն առաջին պարապմունքները Ժուժայի հետ տվեցին իրենց անհավանական արդյունքները: Բուդապեշտի՝ մինչև 11 տարեկանների առաջնությունում չորսամյա աղջնակը զբաղեցրեց առաջին հորիզոնականը՝ չկրելով ոչ մի պարտություն: Ժամանակի ընթացքում Ժուժային միացան նաև քույրերը, որոնք ևս փայլուն արդյունքներ ունեցան, իսկ կրտսերը՝ Հուդիթը, 12 տարեկանում արդեն հաղթում էր տղամարդ գրոսմայստերներին: Որոշ ժամանակ անց Պոլգար ամուսինների համար պարզ դարձավ, որ իրենց եզակի փորձը շարունակելու համար պետք է լքեն աշխատանքը, իսկ աղջիկները՝ դպրոցը:

Պոլգարների ընտանիքի համար օրն սկսվում էր առավոտյան վեցից: Մեկ ժամ անց քույրերն արդեն վազում էին Դանուբի ափին: Այնուհետև ամբողջ օրը պարապում էին խիստ գրաֆիկով. շախմատ, տեսություն, պրակտիկա և դասեր: Պոլգար ամուսինները կարողանում էին դպրոցական մեկ տարվա ծրագիրը երեխաներին մատուցել 7-10 օրում: Տարվա վերջում աղջիկները հանձնում էին քննություններ և փոխադրվում հաջորդ դասարան:

Մոտ տասը տարեկանում Ժուժան արդեն խոսում էր յոթ լեզուներով՝ իսպաներեն, ռուսերեն, գերմաներեն, էսպերանտո, ֆրանսերեն, անգլերեն և բուլղարերեն: 12

[1] Laszlo Polgar, Bring Up Genius!, Budapest, 1989

տարեկանում նա արդեն գլխավորում էր Հունգարիայի կանանց հավաքականը, 15 տարեկանում ընտանիքի միակ վաստակողն էր, քանի որ ծնողները չէին աշխատում և զբաղված էին կրտսեր քույրերի դաստիարակությամբ ու կրթությամբ: 1990 թվականին Ժուժան արժանանում է տղամարդկանց գրոսմայստերի կոչման, իսկ 1996 թվականին հեշտությամբ նվաճում աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը: Նույն ժամանակահատվածում կրտսեր քույրերը զարգանում էին աներևակայելի արագությամբ: 1988 թվականին նրանք մասնակցում են կանանց համաշխարհային օլիմպիադային և հասնում բացառիկ արդյունքների: Հունգարական թիմը, ի դեմս 19-ամյա Ժուժայի, 14-ամյա Սոֆյայի և 12-ամյա Հուդիթի, նվաճել է ոսկե մեդալ: Պետք է փաստել, որ ամենափառահեղ կարիերան կառուցել է կրտսեր քույրը՝ Հուդիթը, որը 15 տարեկանում նվաճել է տղամարդկանց գրոսմայստերի կոչում: 16 տարեկանում նա հաղթել է աշխարհի նախկին չեմպիոն Բորիս Սպասկուն և հայտնվել աշխարհի ուժեղագույն տղամարդ շախմատիստների ցանկում: Իր փայլուն կարիերայի ընթացքում նա հաղթել է ոչ միայն Սպասկուն, այլ նաև Անատոլի Կարպովին, Գարրի Կասպարովին, Վիշվանաթան Անանդին և նույնիսկ Մագնուս Կառլսենին:

Լասլո Պոլգարի և նրա դուստրերի սխրանքը ոչ միայն կոտրեց դարերով ձևավորված շատ ու շատ կարծրատիպեր շախմատային աշխարհում, այլև ստիպեց մտածել, որ միգուցե բոլոր երեխաներն ունեն տարբեր բնագավառներում փառահեղ արդյունքներ գրանցելու պոտենցիալ:

Ինչ վերաբերում է Հուդիթ Պոլգարի անհավանական թվացող հաջողություններին, ապա նա ոչ միայն կուռք և ոգեշնչման աղբյուր է դառնում բոլոր այն աղջիկների համար, որոնք որոշում են շախմատը ընտրել որպես մասնագիտություն, այլև ստիպում հանճարեղ տղամարդ չեմպիոններին փոխել իրենց կարծիքը շախմատում կանանց պոտենցիալի մասին:

Կարելի է հիշել հատկապես լեգենդար Գարրի Կասպարովի խոսքերը, որոնք հնչել են մինչև Հուդիթ Պոլգարի հայտնվելը. «Անցյալում ես պնդում էի, որ կա իսկական շախմատ և կանանց շախմատ: Որոշ մարդկանց համար տհաճ է դա լսելը, սակայն շախմատը կնոջը չի համապատասխանում: Դա պայքար է, մեծ պայքար: Կներեք, բայց դա կնոջ համար չէ: Նա անօգնական է, երբ խաղում է տղամարդու դեմ: Ես կարծում եմ, որ դա պարզ տրամաբանություն է: Դա պրոֆեսիոնալ պայքարողի տրամաբանություն է: Կանայք թույլ պայքարողներ են»: Հուդիթը ստիպեց շախմատային իսկային փոխել իր կարծիքը, և ավելի ուշ Գ. Կասպարովը հայտարարեց. «Հիմա ես դրան չեմ հավատում. աշխարհի կին չեմպիոն տղամարդկանց մեջ հնարավոր է»[1]:

Կանանց և տղամարդկանց շախմատի մեջ տարբերություն չի տեսնում նաև մեր օրերի ուժեղագույն շախմատիստներից Լևոն Արոնյանը: Նա մի առիթով ասել է. «Ես

[1] Каспаров Гарри, Шахматы как модель жизни, Москва, 2007, стр. 276-279

չեմ կարծում, որ պետք է տարբերություն լինի կանանց և տղամարդկանց շախմատի միջև: Իմ կարծիքով, շախմատը միակ մարզաձևն է, որտեղ նրանց ուժերը հավասար են, միայն թե նրանք խաղում են իրենց մրցաշարերում, և եթե կանայք խաղան տղամարդկանց մրցաշարերում և աշխատեն ավելի շատ, ապա ամեն ինչ հնարավոր է: Կարող ենք հիշել Հուդիթ Պոլգարին»:

Եթե փորձենք թեման եզրափակել՝ գլխավոր հարցին պատասխանելով, ապա վերոգրյալից հանգում ենք այն եզրակացության, որ կանանց և տղամարդկանց շախմատի տարանջատումը ու կանանց շախմատի թերագնահատումը հոգեբանական հիմքեր ունեն: Շախմատում կա կարծրատիպ, որ կանայք չեն կարող պայքարել տղամարդկանց դեմ: Շախմատիստուհիներին վաղ տարիքից պատրաստում են, որ նրանք չեն կարող մրցել բարձրակարգ տղամարդ շախմատիստների դեմ: Նրանց ներշնչում են, որ դա պարզապես հնարավոր չէ, այնինչ իրականում դա կարծրատիպ է, որը կոտրել է բոլոր ժամանակների մեծագույն շախմատիստուհի Յուդիթ Պոլգարը:

Ուժեղագույն տղամարդ շախմատիստների դեմ պայքարելու հնարավորություն ստանալու համար պետք է վաղ տարիքից տրամադրվել վնասակար կարծրատիպերի դեմ, շատ խաղալ տղամարդկանց մրցաշարերում, լուրջ աշխատել և հավատալ հաջողությանը: Միայն այդպես ժամանակի ընթացքում քանակը կբերի որակ, ինչն արդեն թեկուզ դանդաղ տեմպերով, բայց տեղի է ունենում: Գլխավորը մի պարզ ճշմարտություն ընկալելն է. ցանկացած արգելք գտնվում է միայն մեր գլխում:

Օգտագործված գրականություն

1. T. Stafford, Female chess players outperform expectations when playing men, **Psychological Science,** (2018)
2. https://www.chess.com/ru/news/view/otkrytie-britanskikh-uchenykh-zhenshchiny-igraiut-slabee-protiv-muzhchin
3. Каспаров Гарри, Шахматы как модель жизни, Москва, 2007
4. Линдер В. И., Линдер И. М., Короли шахматного мира: Жизнь и игра - сквозь призму энциклопедии, Москва, 2001
5. Laszlo Polgar, Bring Up Genius!, Budapest, 1989

MEN'S AND WOMEN'S CHESS FEATURES: CAN WOMEN FIGHT AGAINST MEN AT HIGH LEVEL?

KHACHIKYAN HAYK
GSU Lecturer

The rights of men and women are almost equal in the modern world. In various spheres of political, social and economic life and in different professions, women act on an equal level with men, sometimes even surpass them, breaking centuries-old stereotypes. In chess, however, the situation has not changed in many issues: women's and men's chess is still separated and men have obvious advantages. It is truly in past when the strongest chess players in the world were just ashamed to lose one game even to the world champion. For a long time women have been regularly winning the title of men's grandmaster, often in a rather serious struggle, but, anyway, the differences between men and women in chess are still huge. Many have come to the conclusion that the advantages of men at a high level is obvious, that women here do not have the opportunity to fight on an equal level. The problem is not so clear, it requires appropriate research. The aim of the article is to introduce the peculiarities of men's and women's chess features, to reveal the arguments for eliminating the dividing line.

Keywords: *Women in chess, the strongest chess players, women claiming the title of grandmaster, chess stereotypes, Judit Polgar, Zhuzha Polgar, Nona Gaprindashvili, Vera Menchik's Club, the first world champion, Garovik Gakhirpat.*

ОСОБЕННОСТИ МУЖСКИХ И ЖЕНСКИХ ШАХМАТ: МОГУТ ЛИ ЖЕНЩИНЫ СРАЖАТЬСЯ ПРОТИВ МУЖЧИН НА ВЫСОКОМ УРОВНЕ?

ХАЧИКЯН АЙК
Преподаватель ГГУ

В современном мире права мужчин и женщин практически везде равны. В разных сферах политической, социальной и экономической жизни и в разных профессиях женщины действуют наравне с мужчинами, а иногда даже превосходят их, ломая вековые стереотипы. Однако в шахматах ситуация в основном не изменилась. По-прежнему различают женские и мужские шахматы, давая мужчинам очевидные преимущества. Правда, давно прошли те времена, когда сильнейшие шахматисты мира просто стыдились проиграть даже чемпионкам мира хоть одну партию.

Женщины уже давно регулярно завоёвывают звание мужского гроссмейстера, часто ведут довольно серьезную борьбу, но, тем не менее, разница между мужчинами и женщинами в шахматах все еще огромна. Многие пришли к выводу, что очевидно

преимущество мужчин на высоком уровне, что у женщин здесь нет возможности сражаться на равных. Проблема, на самом деле, не столь однозначна и нуждается в соответствующих исследованиях. Эта статья призвана познакомить с особенностями мужских и женских шахмат, выявить аргументы, направленные на устранение разделительной линии.

***Ключевые слова**: Женщины в шахматах, сильнейшие шахматистки, женщины, претендующие на звание гроссмейстера, шахматные стереотипы, Юдит Полгар, Жужа Полгар, Нона Гаприндашвили, Клуб Веры Менчик, первая чемпионка мира, Гаровик Гахирпат.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 15.10.2020թ.:

«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՆԱՔԱՐԱ
ԳՊՀ դասախոս,
ԳՊՀ որակի ապահովման բաժնի մասնագետ
e-mail: q.hayrapetyan@gsu.am
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՄԵՐԻ
Չոլաքար գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի
դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
e-mail: saghatelyan.vigen82@mail.ru

Հոդվածում քննարկվում է ՀՀ հանրակրթական դպրոցներում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման անհրաժեշտության հարցը: Քննվում և վերլուծվում են առարկայի բովանդակությունը, դասավանդման հետ կապված կողմ և դեմ մոտեցումները, ինչպես նաև այն հարցը, թե ինչ որակավորում ունեցող մասնագետների կողմից և ինչ մեթոդներով պետք է դասավանդվի առարկան:

Բանալի բառեր՝ *«Հայոց եկեղեցու պատմություն», ազգապահպանություն, հանրակրթություն, դասավանդման ժամանակակից մեթոդներ:*

Ուսումնասիրելով հայ ժողովրդի պատմությունը՝ նրա գրեթե բոլոր էջերում տեսնում ենք, թե ինչ կարևոր և անփոխարինելի դերակատարում է ունեցել Հայ առաքելական եկեղեցին իր ժողովրդի կյանքում: Քրիստոնեության ուսմունքը քարոզելուց, տարածելուց ու պահպանելուց զատ Հայ առաքելական եկեղեցին իր վրա է վերցրել նաև ազգապահպան, ազգային-ազատագրական, կրթական, մշակութային տարաբնույթ հարցերի ու խնդիրների լուծման նվիրական գործը: Այն բոլոր ժամանակներում պայքարել, կյանքի ու մահվան կռիվ է տվել երկիրն ու ազգը պահպանելու համար, իսկ հայ հոգևորականն իր կերպարով օրինակ է ծառայել իր ժողովրդին, ոգեկոչել՝ պահելու, պահպանելու սուրբ հավատքը, երկիրը, ազգային մշակույթը, գիրը, գրականությունը:

Դարեր շարունակ հայի կերպարը հղկել ու կերտել է Հայ առաքելական եկեղեցին՝ նրա մեջ սերմանելով յուրահատուկ հոգևոր աշխարհայացք և մշակույթ: Պատահական չէ, որ օտարները մեզ ճանաչում են հավատով՝ որպես ավանդապաշտ

ու խաչապաշտ, բնույթով՝ ստեղծարար ու տաղանդավոր, գործով՝ արարող ու շինարար ազգի…[1]:

Ելնելով վերը նշվածից՝ ժամանակակից հայկական դպրոցում կարևորվում է հայոց եկեղեցու պատմության դասավանդումը:

Հայաստանի Հանրապետության 1991թ. սեպտեմբերի 23-ի անկախացումից հետո հանրակրթության համակարգում աստիճանաբար տեղի են ունենում արդի կրթական պահանջներին համապատասխան բարեփոխումներ, որոնք միտված էին ոչ միայն կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, այլև ազգապահպանությանը, ազգային գիտակցության բարձրացմանը և սերունդներին հայրենասիրական գաղափարներով դաստիարակելուն: Կատարված բարեփոխումների արդյունքում հանրակրթական դպրոցներում ներմուծվում են նոր առարկաներ, որոնցից մեկն էլ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան է:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դպրոցների առարկայացանկ է մտել 2003 թվականից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի և նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի 2002թ. օգոստոսի 22-ի համաձայնագրով[2], ըստ որի՝ 2002թ. սեպտեմբերից մինչև 2004թ. սեպտեմբերի 1-ը աստիճանաբար Հայ առաքելական եկեղեցու պատմության առարկան պետք է մտներ հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարանների ուսումնական պլան: Ըստ համաձայնագրի՝ հանրակրթական հիմնական և ավագ դպրոցների դասարաններում պետք է իրականացվեր Հայ առաքելական եկեղեցու պատմության դասավանդում, քանի որ կարևորվում էր Հայ առաքելական եկեղեցու դերը հայոց պետականության զարգացման և ամրապնդման գործում, ինչպես նաև հայ ժողովրդի հոգևոր, կրթամշակութային կյանքում և ազգապահպանման գործում նրա ունեցած բացառիկ նշանակությունը[3]:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան առաջին փուլում հանրակրթական դպրոցական համակարգ ներմուծվում է փորձնական, իսկ ավելի ուշ՝ սկսած 2005 թվականից, այն մտնում է պետական պարտադիր առարկայացանկ[4]՝ 4-10-րդ (այժմ՝ 12-ամյա կրթական համակարգում՝ 5-11-րդ) դասարանների ուսումնական ծրագրով:

Առարկայի դասավանդումը դպրոցական կրթական համակարգում հանրության կողմից միանշանակ չընդունվեց: Այն քննարկումների և քննադատությունների մեծ ալիք բարձրացրեց: Հասարակությունը և մտավորականությունը երկփեղկվեց երկու

[1]Հայ առաքելական Ս. եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ
http://www.holytrinity.am/posts/view/1382

[2]Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև http://www.gov.am/u_files/file/kron/1d%20Hamadzaynagir.pdf

[3] Նույն տեղում:

[4] Հայաստանի կրոնները http://www.religions.am/files/8860/library/legal/L013.pdf

հակադիր հարցադրումների միջև՝ արդյո՞ք առարկան պետք է դասավանդվի դպրոցում թե՞ ոչ:

Լրատվամիջոցներում, մամուլում ակտիվ քննարկումների արդյունքները ցույց են տալիս, որ մասնագետների մի մասը պնդում է, որ առարկան շատ կարևոր է և անպայման պետք է մտնի հանրակրթական դպրոցների առարկայացանկ, իսկ մյուս մասը դեմ է նշված կարծիքին՝ առաջ քաշելով հակադիր հիմնավորումներ: Ըստ այդ հիմնավորումների՝ «Հայոց եկեղեցու պատմություն» դասագրքի բովանդակությունը հաճախ աստվածաշնչյան տեքստի վերարտադրություն է և առարկայի անվան տակ իրականացվում է քրիստոնեության քարոզչություն՝ սերմանելով անհանդուրժողականություն այլ կրոնների նկատմամբ[1], այսինքն՝ առարկայի բովանդակությունը ոչ թե եկեղեցու պատմություն է, այլ քրիստոնեական հավատքի քարոզչություն:

Շատ փորձագետների համար «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերը առավելապես ազգակենտրոն բնույթ ունեն՝ քան անձնակենտրոն: Պարտադիր դասավանդումն էլ ոտնահարում է այլ կրոնների հետևորդների իրավունքները[2]:

Ինչպես գիտենք, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազ-մակերպության անդամ պետությունները ճանաչել են Տոլեդոյի ուղենշային սկզբունքները[3]՝ իբրև ԵԱՀԿ անդամ երկրների համար հանձնարարական բնույթ ունեցող փաստաթուղթ: Հայաստանը, դեռևս 1992 թվականից լինելով ԵԱՀԿ անդամ պետություն, ևս պետք է հետևի Տոլեդոյի ուղեցույցին, որի համաձայն՝ կրոնների ուսուցումը պետք է համապատասխանի մարդու իրավունքների հիմնական չափանիշներին[4]: Ըստ այդ սկզբունքների՝ դպրոցում պետք է դասավանդվի ոչ թե կրոն, այլ կրոնի պատմություն, առարկան չպետք է մեկ կրոնի քարոզ տանի, ինչպես նաև

[1] https://www.aravot.am/2014/06/14/470780/?fbclid=IwAR2XLrCJw7U7qcNMCApC8XPMCH7

[2] https://journalist.am/archives/6430

[3] Տոլեդոյի սկզբունքների նպատակն է աշխարհի աճող կրոնական բազմազանության և հասարակական վայրերում կրոնի աճող դերի ըմբռնման խթանումը: Դրա բանական հիմնավորման հիմքը համարվում են երկու հիմնական սկզբունքներ. առաջինը յուրաքանչյուրի կրոն և հավատք ազատ դավանելու իրավունքն է, երկրորդը՝ կրոնների և հավատքների ուսուցումը կարող է նվազեցնել վնասակար տարակարծություններն ու կարծրատիպերը: Սկզբունքները բացառապես կենտրոնանում են կրթական մոտեցումների վրա, որոնք ապահովում են տարբեր կրոնների և հավատքների մասին ուսուցումը, որը տարբերվում է առանձին կրոնի կամ հավատքի ուսուցման մոտեցումներից: Դրանք նաև նպատակ ունեն առաջարկելու այնպիսի չափորոշիչներ, որոնք պետք է հաշվի առնվեն այն ժամանակ, երբ ուսուցանվում են կրոններ ու հավատքներ: Ուղեցուցային սկզբունքները նախատեսված են ոչ միայն կրթական գործով զբաղվողների, այլև օրենսդրական մարմինների, ուսուցիչների, կրթության նախարարության, մասնավոր և կրոնական դպրոցների վարչակազմի ու ուսուցիչների համար՝ երաշխավորելով տարբեր կրոնների և հավատքների արդար ու հավասարակշիռ ուսուցման իրականացումը:

[4] Հայաստանի կրոնները
http://www.v1.religions.am/arm/documents/international/Թոլեդոյի-ուղեցուցային-սկզբունքները

ծնողը պետք է իրավունք ունենա հրաժարվելու, որ իր երեխան մասնակցի այդ դասընթացին[1]:

Այսպիսով՝ այն փորձագետները, ովքեր դեմ են առարկայի դասավանդմանը, պնդում են, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան հակասում է Տոլեդոյի սկզբունքներին, ինչպես նաև առարկայի բովանդակությունը չի համապատասխանում անվանմանը, իսկ առարկայացանկում ներառված թեմաները աշակերտները ուսումնասիրում են «Հայոց պատմություն», «Հայ գրականություն», «Մայրենի» առարկաների դասագրքերում, ուստի անհրաժեշտություն չկա աշակերտներին ծանրաբեռնել ևս մեկ առարկայով: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան պետք է հանվի դպրոցների պարտադիր առարկայացանկից և դառնա ընտրովի:

Փորձագետների մյուս խումբը, դեմ արտահայտվելով վերը նշված տեսակետներին, պնդում է, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան շատ կարևոր է մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցում և որպես պարտադիր հանրակրթական առարկա պետք է դասավանդվի դպրոցներում:

Դեմ լինելով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան պարտադրանք որակող տեսակետին՝ նշենք, որ հայ ժողովուրդը 301թ. առայսօր ունի մեկ պետական կրոն՝ քրիստոնեությունը, ու մեկ եկեղեցի, և այժմեական աղանդավորական բազում խմբերի առկայությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոչ բարյացակամ մահմեդական հարևանների առկայությունը, որոնք սպառնում են ոչ միայն Հայ առաքելական եկեղեցուն, այլև ազգային ինքնության պահպանմանը, ուստի առարկայի դասավանդումը դպրոցում դառնում է խիստ կարևոր և անհրաժեշտ:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկան ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու, այլև քրիստոնեության պատմությունն է, իսկ քրիստոնեությունն ու եկեղեցին կազմում են մեկ անբաժան միասնություն: Առարկան ուսուցանում է, թե ինչ ճանապարհ է անցել Հայ առաքելական եկեղեցին, ինչ դեր է ունեցել հայ ժողովրդի կյանքում ու նրա պատմության մեջ, ինչ ծիսական կարգեր, տաղավար տոներ, խորհուրդներ կան եկեղեցական տոնացույցում, ինչպես պետք է դիմեն հոգևորականներին և այլն: Մի խոսքով՝ Հայոց եկեղեցու պատմության դասագրքերից երեխան ստանում է այնպիսի գիտելիքներ, որոնք նրան անհրաժեշտ են որպես հայ քրիստոնյայի, Հայաստանի Հանրապետության հայրենասեր քաղաքացու:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ներմուծումը կրթական համակարգ սահմանվում և կարգավորվում է օրենքով:

ՀՀ 1995թ. ընդունված հայ ժողովրդի մայր օրենքով՝ Սահմանադրությամբ, ամրագրվում է. եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայ առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ

[1] Նույն տեղում:

առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ինքնության պահպանման գործում[1]:

1999թ. մայիսին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետում ասվում է. «Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: **Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ առաքելական եկեղեցին**»[2]:

2005թ. սահմանադրական բարեփոխումներից հետո՝ 2007թ. փետրվարի 22-ին, Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության և Հայ առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը, որտեղ հոդված 8-ում (Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերակատարությունը կրթական ոլորտում) ամրագրվեց, որ եկեղեցին իրավունք ունի մասնակցելու պետական կրթական հաստատություններում «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները, ինչպես նաև պետությունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը՝ կամավորության հիման վրա[3]:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման խնդրի վերաբերյալ հնչող հարցերի պատասխանը տալիս է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշիչը[4], որտեղ գրված է. «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նպատակները, ըստ էության, պահպանում են հանրակրթության աշխարհիկ բնույթը, ինչպես օրինակ՝ «ձևավորելու հայրենիքի, պետության և հասարակության առջև պարտքի գիտակցություն, սեփական արարքների նկատմամբ պատասխանատու կեցվածք ունենալու պահանջը, ինչը քաղաքացիական հասարակության զարգացման էական պայման է»[5]: Առարկայի նպատակը աճող սերնդի հոգևոր-ազգային նկարագիրն ամբողջացնելն է, ինչպես նաև նրան ազգային և համամարդկային հիմնարար արժեքներին հաղորդակից դարձնելը[6]: Թեև դասագրքերում նյութերի մեծ մասն ունի կրոնական բովանդակություն, սակայն դրանք պատրաստվել և շարադրվել են գիտամանկավարժական տեսանկյունից՝ առանձնակի կարևորելով կրթադաստիարակչական նշանակությունը: Առարկան ամբողջացնում է ինչպես հայագիտական առարկաների՝ Հայոց

[1] ՀՀ Սահմանադրություն https://www.arlis.am/documentview.aspx?docID

[2] ՀՀ օրենքը կրթության մասին https://www.arlis.am/documentview.aspx?docid=120940

[3] ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին https://www.gov.am/u_files/file/kron/ekegheci.pdf

[4] Հայկական կրթական միջավայր պաշարների տեմարան https://lib.armedu.am/resource/2176

[5] https://bavnews.am/%D5%B4%D5%BF%D5%A1%D5%B0%D5%B8%D5%A3%D5%B8%D6

[6] **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2014, էջ 4:

պատմության, Հայոց լեզվի, Հայ գրականության, այնպես էլ «Համաշխարհային պատմություն» առարկայի և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը[1]:

Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը, որը ներկայացվում է դասընթացի բովանդակության շրջանակներում, ապահովում է աշխարհիկ կրթություն՝ կոնկրետ էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ: Դասընթացը կազմված է գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների՝ նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն, պահանջների հիման վրա[2]: Չափորոշչում նշվում է նաև, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան պարտադիր է ՀՀ բոլոր հանրակրթական հաստատությունների սովորողների համար՝ անկախ ազգային և կրոնական-դավանական պատկանելությունից[3]:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը ժամանակակից հայկական դպրոցում բովանդակային առումով և ըստ թեմատիկ պլանի բաշխվում է հետևյալ կերպ.

1. 5-րդ դասարանի դասընթացը աշակերտներին ծանոթացնում է Աստվածաշունչ մատյանին, աշխարհի ստեղծման, ջրհեղեղի, Բաբելոնյան աշտարակաշինության, ժողովուրդների առաջացման մասին աստվածաշնչյան պատմություններին, ինչպես նաև Հիսուս Քրիստոսի կյանքին ու գործունեությանը[4]:

2. Հայոց եկեղեցու պատմության առավել կարևոր դրվագների, տոների ու խորհուրդների, քրիստոնեական բարոյական արժեքների, քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղությունների մասին նյութերը ամփոփված են 6-րդ դասարանի դասագրքում: Այս դասընթացի միջոցով աշակերտները ստանում են նաև ճանաչողական գիտելիքներ Հայ Առաքելական եկեղեցու վերաբերյալ[5]:

3. 7-րդ դասարանում ներկայացվում է հայոց հին հավատալիքների և շրջակա երկրների մինչքրիստոնեական կրոնների, քրիստոնեության տարածման, Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն հռչակման, Հայոց եկեղեցու կառույցի ձևավորման ու ամրապնդման, պետության և եկեղեցու միջև եղած հարաբերու-

---

[1] ՀՀ կրթության, գիտության, կրթության, սպորտի և մշակույթի նախարարություն https://escs.am/am

[2] ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված՝ Հանրակրթական հիմնական դպրոցի և ավագ դպրոցի «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչներ և ծրագրեր (No 1075-Ա/Ք 06.09.2013, No 709_Ա/Ք 17.07.2012

[3] «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշիչ
http://www.aniedu.am/school/standartsaprograms.html

[4] **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Դասագիրք հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի համար, Ե., 2014, էջ 5-90:

[5] **Նազարյան Ա.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար, Ե., 2014, էջ 5-85:

թյունների, տիեզերական ժողովների, քրիստոնեական այլ եկեղեցիների հետ Հայոց եկեղեցու հարաբերությունների պատմությունը[1]:

4. 8-9-րդ դասարանների դասագրքերում ներկայացված է Հայոց եկեղեցու պատմությունը՝ սկսած IX դարից մինչև մեր օրերը[2]:

5. Իսկ վերջին երկու դասագրքերի (10, 11-րդ դասարաններ) ուղղվածությունը մի փոքր այլ է. այստեղ տրվում են գիտելիքներ քրիստոնեական բարոյագիտության, քրիստոնեական-ազգային արժեքների համակարգի և մշակույթի մասին[3]:

Այսպիսով՝ հիմնական դպրոցի դասագրքերում (5-9-րդ դասարաններ) ներառված են թեմաներ, որոնք միտված են ծանոթացնելու քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքներին և դրանց հաղորդակից դարձնելու միջոցով սովորողների մեջ սերմանելու բարություն, ընկերասիրություն, հավատարմություն, ձևավորելու հայրենիքի, պետության և հասարակության առջև պարտքի գիտակցություն, սեփական արարքների նկատմամբ պատասխանատու կեցվածք, ազգային ավանդույթների, տոների հանդեպ հարգանք, գիտելիքներ հաղորդելու Հայոց եկեղեցու համակարգված պատմության, քրիստոնեական ուսմունքի վերաբերյալ, ընդգծելու ընտանեկան և հասարակական կյանքում իրավունքների և պարտականությունների փոխկապվածության, քաղաքացիական հասարակության մեջ իրավունքների և պարտականությունների գիտակցման նշանակությունը, կարևորելու հոգևոր-ազգային կառույցի դերը հայոց պատմության մեջ:

Ավագ դպրոցում (10, 11-րդ դասարաններ) կրթությունը միտված է՝ սովորողի մոտ ձևավորելու մշակութաբանական գիտելիքներ հայոց ավանդական արժեքների, հոգևոր-ազգային մշակույթի վերաբերյալ, հոգևոր-ազգային մշակույթի պատմական տարածության մեջ նպաստելու անհատի ինտեգրմանը, որը նպաստելու է նրա պատմական գիտակցության ձևավորմանը, սովորողներին պատրաստելու է հետագայում հայագիտական կրթություն ստանալու և համապատասխան մասնագետ դառնալու ուղղությամբ[4], առարկան օգնում է նաև ընկալելու արևմտյան, մասնավորապես՝ համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ[5]:

---

[1] **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպր. 7-րդ դաս. դասագիրք, Ե., 2018, էջ 5-99:

[2] **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպր. 8-րդ դաս. դասագիրք, Ե., 2018, էջ 5-8: **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպր. 9-րդ դաս. դասագիրք, Ե., 2018, էջ 5-108:

[3] **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպր. 10-րդ դաս. դասագիրք, Ե., 2013, էջ 5-124: **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, Հանրակրթական դպր. 11-րդ դաս. դասագիրք, Ե., 2013, էջ 5-156:

[4] https://hetq.am/hy/article/100545

[5] **Ղանդիլյան Վ.** և ուրիշներ, Հայոց եկեղեցու պատմություն, 10-11 դասարաններ, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Ե., 2013, էջ 151-153:

«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման հիմնախնդրին է վերաբերում նաև այն, թե դպրոցում առարկան ինչպիսի մասնագետի կողմից է դասավանդվում: Ըստ պետական չափորոշչի՝ առարկայի դասավանդումը պահանջում է համապատասխան մասնագետի՝ կրոնագետի, կրոնագետ պատմաբանի առկայություն: Սակայն, ցավոք, այսօր դպրոցում դժվար է գտնել համապատասխան որակավորմամբ մասնագետներ: Այդ իսկ պատճառով առարկայի դասավանդումը վստահվել է պատմության, օտար լեզվի, ֆիզկուլտուրայի, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին, որոնց մի մասը սկզբնական շրջանում անցել են վերապատրաստումներ, իսկ հետագայում վերապատրաստման գործընթացը մատնվել է անուշադրության: Արդյունքում առարկան դպրոցում տրվում է այն ուսուցիչներին, որոնց ժամաքանակը համեմատաբար քիչ է: Հետևաբար «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դպրոցներում դասավանդում են ոչ մասնագետ մանկավարժները: Սա թերևս խնդրի ամենակարևոր և միևնույն ժամանակ ամենախոցելի կետն է, քանզի չի կարելի կարծել, թե կրոնագիտությունն ու եկեղեցագիտությունն այնքան պարզունակ ոլորտներ են, որ դրանք կարելի է վստահել ոչ մասնագետների: Դրանք գիտության առանձին ճյուղեր են, որոնք ունեն իրենց գիտական առանձնահատկություններն ու դասավանդման յուրահատուկ մեթոդիկան: Հնարավոր է, որ դասավանդող մասնագետները որոշակի տեղեկություններ ունենան եկեղեցու պատմությունից, բայց նրանք չիմանան, չտիրապետեն առարկայի մեթոդաբանությանը, լավ չպատկերացնեն, թե ինչ է կրոնական անվտանգությունը, քարոզչությունը և այսպես շարունակ: Բացի այդ, գրեթե ամեն դասի ընթացքում աշակերտների կողմից դասավանդողին տրվում են հոգեբանական, փիլիսոփայական, կրոնական բնույթի տարբեր հարցեր, որոնց պատասխանելու համար անհրաժեշտ է մասնագիտական խոր և լիարժեք իմացություն:

Առաջ քաշելով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դպրոցներում դասավանդող մասնագետների ճիշտ ընտրության հարցը՝ միանշանակ պնդում ենք, որ այն պետք է դասավանդի աստվածաբանը, կրոնագետը կամ պատմաբանը, քանզի հայոց եկեղեցու պատմությունը հարակից է հայոց պատմությանը և կազմում է նրա մի մասը: Ուստի համապատասխան մասնագետի բացակայության դեպքում, կարծում ենք, այն իրավունք ունի դասավանդելու գոնե պատմության ուսուցիչը:

Ոչ մասնագետի կողմից առարկայի դասավանդումը ևս կարող ենք համարել այն բազմաթիվ պատճառներից մեկը, գուցե ամենաիմնավորը, որ երեխան հանրակրթական դպրոցում չի ստանում կամ թյուր գիտելիքներ է ստանում առարկայի վերաբերյալ: Առարկայի թերի կամ սակավ իմացության մասին է փաստում նաև փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Պ. Բարսեղյանը: «Վերջին տարիների դասավանդման փորձը ցույց է տալիս, որ բուհերի երկրորդ կուրսի ուսանողների (հիմնականում այս կուրսերում է դասավանդվում առարկան) ճնշող մեծամասնությունը կամ չի տիրապետում կրոնի վերաբերյալ տարրական գի-

տելիքների, կամ ունի խիստ մոտավոր պատկերացումներ: Այստեղ թերևս կարելի է նշել հանրակրթական դպրոցների ոչ լիարժեք աշխատանքը…»[1],- նշում է նա:

Թեմային առնչվող հիմնախնդիրներից մեկն է նաև առարկան դասավանդելիս մանկավարժական մեթոդների ճիշտ կիրառումը: Անդրադառնալով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման մեթոդիկային՝ պետք է նշել, որ շատ դպրոցներում առարկայի դասավանդումը, մեր կարծիքով, վերածվել է քարոզչության, ինչը և՛ ճիշտ է, և՛ սխալ: Ճիշտ է, եթե մասնագետը աբողջությամբ տիրապետում է առարկային, Հայ առաքելական եկեղեցու քրիստոնեական գաղափարախոսության հիմնական սկզբունքներին: Սխալ է, եթե ուսուցիչը թերի գիտելիքներով փորձում է «բռնանալով» ուսուցանել առարկան՝ առանց գիտակցելու նրա կարևորությունը ազգի և պետականության պահպանման գործում: Սովորողին նյութը պետք է փոխանցվի օբյեկտիվ կերպով՝ ուսուցչի կողմից գիտակցված, հմուտ մանկավարժական աշխատանքի արդյունքում: Ուսուցիչը չպետք է բացառի, որ առարկայի դասավանդման ընթացքում կլինեն ոչ քրիստոնյա՝ այլ հավատքի, ուսմունքի պատկանող աշակերներ, որոնց հետ աշխատանքը պետք է տարվի առավել զգույշ, մտածված և ճիշտ կերպով: Դասավանդման ընթացքում ուսուցիչը պետք է հարգի բոլոր աշակերտների կրոնական կողմնորոշումը:

Այսպիսով՝ դասի արդյունավետության բարձրացման համար չափազանց կարևոր է դասավանդման մեթոդապես ճիշտ կազմակերպումը, մեթոդական տարբեր հնարների կիրառումը, որոնք կօգնեն սովորողին ընկալելու և յուրացնելու առարկայի նպատակը և թեմայի բովանդակությունը[2]: Ուսուցիչների համար նախատեսված մեթոդական ձեռնարկներում առաջարկվում է կիրառել տարբեր մեթոդներ՝ նոր նյութի հաղորդում, համակցված դաս, ուսուցման խոսքային (պատում, ընթերցում, հաղորդում, զրույց, երկխոսություն), զննական (նկարների դիտում, ցուցադրում և այլն), գործնական մեթոդներ, վերարտադրական և պրոբլեմային շարադրանքի մեթոդներ և այլն:

Ամփոփելով հոդվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ միանշանակ պետք է բացառել առարկայի դուրսբերումը դպրոցական պարտադիր առարկայացանկից, սակայն միևնույն ժամանակ չպետք է աչքաթող անել այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են առարկայի ճիշտ դասավանդմանը և մատուցմանը, ինչպես նաև ժամանակակից հայ հասարակության կողմից առարկայի նպատակների ճիշտ ընկալմանը:

---

[1] Տե՛ս **Բարսեղյան Պ.**, ՀՀ բուհերում «Կրոնների պատմություն» առարկայի դասավանդման մի քանի հարցեր, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք 2015, Ե., 2015, էջ 148-149:

[2] **Պապոյան Հ.,** Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Ե., 2013, 304 էջ:

ISSUES OF TEACHING ARMENIAN CHURCH HISTORY AT SCHOOL

HAYRAPETYAN KANAKARA
GSU Lecturer,
Specialist at GSU Quality Assurance Department
SAGHATELYAN MERI
Organizer of Education Activities at
Zolakar Secondary School № 1

The purpose of the article is to present the importance of teaching "Armenian Church History" subject at comprehensive schools, to analyze and discuss pros and cons of teaching the subject, the content of the subject, what qualification the specialists should have and what methods should be used to teach subject.

Keywords: *Armenian Church History, ethno-conservation, general education, modern methods of teaching.*

ПРОБЛЕМА ПРЕПОДАВАНИЯ "ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ" В ШКОЛЕ

АЙРАПЕТЯН КАНАКАРА
Преподаватель ГГУ,
Специалист отдела по обеспечению качества ГГУ
МЕРИ САГАТЕЛЯН
Организатор воспитательных работ средней
школы № 1 села Золакар

В статье рассмотрен вопрос о необходимости прохождения предмета "История Армянской церкви" в общеобразовательных школах РА, обсуждены и проанализированы все "за" и "против", связанные с обязательностью преподавания этой дисциплины, а также содержание предмета, специалистами какой квалификации и какими методами должен преподаваться предмет.

Ключевые слова: *"История Армянской церкви", сохранение нации, общеобразовательный, современные методы обучения.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.10.2020թ.:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՆՈՒՉԱՐ
ԵՀ-ի Գավառի մասնաճյուղի դասախոս,
Տնտեսագիտության թեկնածու
e-mail: simonyan.manuchar@mail.ru
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբերի միջնակարգ դպրոցի դասվար
e-mail: armmelqonyan74@mail.ru

Ուսումնական գործընթացը սովորողների անհատական կարիքների հաշվառմամբ կազմակերպել պարտավոր են բոլոր ուսուցիչները բոլոր ժամերին: Դա նրանց առաքելությունն է, որից կախված են ուսման արդյունավետությունն ու երեխայի հետագա ճակատագիրը:

Բոլոր ուսուցիչներն էլ կհավատան, որ յուրաքանչյուր դասարանում կա գոնե մեկ աշակերտ, որն առանձնանում է իր անսովոր մտածողությամբ, ինչ-որ առարկայի կամ խնդրի նկատմամբ մեծ հետաքրքրությամբ, մի խոսքով՝ երեխա, որին ընդունված է օժտված անվանել: Արդյո՞ք միշտ է նման աշակերտը նվեր համարվում մանկավարժի համար, թե՞ դասարանում նրա հայտնվելը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում: Ի՞նչ պետք է անել, անհատական աշխատանքի ինչ մեթոդներ պետք է կիրառել յուրահատուկ ունակություններով օժտված երեխաների հետ աշխատանքում, որպեսզի նրանց յուրօրինակությունն ու օժտվածությունն օգտագործվի ի նպաստ իրենց և հասարակության:

Բանալի բառեր՝ *յուրահատուկ կարողություններով օժտված, ուսուցիչ, աշակերտ, շերտավորված ուսուցում, երեխա:*

Ինչ հատկանիշներ պետք է ունենա յուրահատուկ կարողություններով օժտված երեխաների հետ աշխատող ուսուցիչը

Մեծ Վարպետը՝ Ավետիք Իսահակյանն իրավամբ նկատել է, որ յուրաքանչյուր գրագետ մարդ պարտական է իր ուսուցչին: Եթե ծնողները երեխային տալիս են մարմին, ապա ուսուցիչը նույն երեխային տալիս է հոգի, բարի կամք, բարձրագույն իդեալներ:

Այժմ պատկերացնենք, որ դասարանում ունենք օժտված աշակերտ, որին «բարձրագույն իդեալներ» տալու փոխարեն ուսուցիչը մշտապես տրտնջում է ու բողոքում, թե այդ մեկ աշակերտի հետ աշխատանքն իրենից խլում է նույնքան ջանքեր ու էներգիա, որքան դասարանի մնացած աշակերտները:

Նախ՝ սկսենք ուսումնասիրել, թե ինչպիսին պետք է լինի օժտված երեխայի հետ աշխատող ուսուցիչը:

Երևի բոլորն էլ կհավաստեն, որ թույլ աշակերտների հետ աշխատանքն ավելի հեշտ է ստացվում ուսուցիչների մոտ, քան օժտվածների հետ, ուստի այս խնդիրը միշտ էլ արդիական է ու կարևոր: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից, թե ուսուցիչը որքանով է պատկերացնում իր առաքելությունը և որքանով է կարողանում ճիշտ կազմակերպել այն:

Ուսուցիչը ստեղծագործող անհատ է, որը միշտ շարժման, որոնումների, մասնագիտական զարգացման մեջ պետք է լինի: Հակառակ դեպքում նա կխորտակի երեխայի ապագան և, ինչու չէ, ազգին էլ կզրկի ապագա հանճարից կամ հայտնագործողից:

Մերօրյա ուսուցիչը սովորողների հետ պետք է կարողանա հաստատել փոխադարձ վստահության վրա հենված փոխհարաբերություններ, և դուրս չպիտի մնա ոչ մի աշակերտ: Նա պետք է կարողանա հայտնաբերել իր դասարանի յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրությունների շրջանակը և ուղղորդել նրան՝ զարգանալու այդ ուղղությամբ, կարողանա օգնել իր աշակերտներին՝ պահպանելու, զարգացնելու հետաքրքրասիրությունը իր և իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ, խրախուսի բոլոր անկատար գաղափարներն ու մտահղացումները, որ ծնվում են սովորողների գլխում: Նա պետք է կարողանա անհատական աշխատանք տանել ոչ միայն համեմատաբար թույլ, այլ նաև յուրօրինակ օժտվածություն ունեցող երեխաների հետ:

Ոչինչ այնպես չի սպանում յուրահատուկ կարողություններով օժտված երեխաների ընդունակությունը, ինչպես անվերջ ընդհանուր աշխատանքը: Օժտվածությունը նեղ շրջանակներում և միջինացված աշխատանքի ընթացքում չի զարգանում: Երեխայի ընդունակությունները զարգանում են դժվարություններ հաղթահարելով, նպատակին հասնելու ճանապարհին համառություն ցուցաբերելով, պատասխանատվություն կրելով: Այսինքն՝ երեխայի մեջ օժտվածությունը զարգացնելու նպատակով նախ պետք է նրան սովորեցնենք հաղթահարել իր ուսումնառության, կյանքի ընթացքում հանդիպող դժվարությունները, զարգացնենք պարտքի և պատասխանատվության զգացում, ինչու չէ, նաև համառություն՝ նպատակներին հասնելու համար: Անձնային այս կարևոր որակների զարգացմանը նպաստում է մշտական խնդրահարույց իրավիճակների հաղթահարումը: Բացի այդ, երեխան պետք է ուրախություն զգա ստեղծագործելիս, հայտնաբերելիս, բացահայտելիս: Իսկ դա առավել հնարավոր է դառնում փոքր խմբերում աշխատելիս, որտեղ օժտված երեխան զրուցընկեր, ընդդիմախոս, նման ընդունակություններով ընկեր է գտնում, սովորում է իր ինքնատիպ գաղափարը մատչելի ձևով արտահայտել, մեկնաբանել, ապացուցել, ընկերների կարծիքի հետ համադրել: Երբ ուսուցիչն ուսուցումն իրականացնում է՝ հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտի վրա, ուժեղ աշակերտների

զարգացումը կասեցվում է, նրանք կորցնում են ուսման նկատմամբ հետաքրքրությունը, իսկ թույլ աշակերտները կարծես «դատապարտվում են» մյուսներից հետ մնալուն: Միջին կարողությամբ աշակերտները ևս իրարից տարբերվում են. ունեն տարբեր հակումներ ու հետաքրքրություններ, հոգեկան գործընթացների զարգացման տարբեր մակարդակներ և այլն: Ահա այս տարբերություններն անխուսափելի են դարձնում ուսումնական գործընթացում ուսուցչի կիրառած մոտեցումների մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Ուսումնական գործընթացում այս և նմանօրինակ խնդիրների լուծման համար արդյունավետ է կիրառել շերտավորված ուսուցում:

Ինչպես իրականացնել շերտավորված ուսուցում

Շերտավորված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը, որն էլ ենթադրում է ուսուցման հարմարեցում ամեն մի երեխայի մտավոր զարգացման տեմպին՝ անհատական ընդունակությունների հաշվառմամբ: Այդ գործընթացի իրականացման ժամանակ ուսուցիչն ուսումնական նյութը մշակում, մատչելի է դարձնում յուրաքանչյուր երեխայի համար: Այդօրինակ մոտեցումը նպաստում է նաև դասարանի համընդհանուր ակտիվացմանը, քանզի յուրաքանչյուր աշակերտ իր անելիքն է ունենում, այսինքն՝ ամեն աշակերտ հաղթահարում է իր առջև առաջացած դժվարությունները, առաջ է շարժվում ըստ իր կարողությունների ու ընդունակությունների, միաժամանակ բարձրանում է իր ինքնագնահատականը, որովհետև տեսնում է, որ իր մոտ ինչ-որ բան ստացվում է: Այս ամենն էլ նպաստում է վերջինիս հետաքրքրությունների աճին. աշակերտը դառնում է ավելի ինքնավստահ, սովորում ավելի հաճույքով և զարգանում: «Անհատական պահանջներ» ասելով՝ պետք է հասկանանք ոչ թե լոկ առանձին անհատական առաջադրանք, այլ, օրինակ, տրված խնդրի վերաբերյալ հորինված տարբերակված հարցադրումներ, որոնց շուրջ կարող են մտորել և պատասխանը գտնել տարբեր ընդունակությունների տեր երեխաները: Յուրահատուկ կարողություններով օժտված երեխաներն էլ կարող են հորինել նմանատիպ խնդիր կամ խնդիր, որի լուծումը կարող է լինել տրված արտահայտությունը, ապա առաջարկել լուծման այլընտրանքային տարբերակներ: Այսինքն՝ հնարավորության սահմաններում պետք է խթանել աշակերտների ստեղծագործական մտքի զարգացումը: Իրականացնելով շերտավորված ուսուցում՝ ուսուցիչը պետք է մշակի սովորողներին խմբերի բաժանման չափանիշները, դասերի ընթացքում կիրառի անհատական և խմբային առաջադրանքներ՝ շերտավոր ուսուցումն իրականացնելով ոչ թե ժամանակ առ ժամանակ, այլ համակարգված՝ կիրառելով այն ուսուցման ողջ ընթացքում: Նա պետք է միատեսակ վերաբերմունք դրսևորի աշակերտների բոլոր խմբերի նկատմամբ, տեսնի աշակերտի աճը և խրախուսի մի խմբից անցումը մյուս, ավելի բարձր մակարդակի խումբ: Չափազանց կարևոր է ուսուցչի կողմից անընդհատ կատարվող վերլուծությունը և իր հետագա շարունակական աշխատանքի հստակ պատկերացումը: Տարբեր խմբերում

ներգրավված սովորողները տարամակարդակ առաջադրանքներ կարող են կատարել նաև ընտրության սկզբունքով: Հայտորոշիչ ստուգում անցկացնելուց հետո կատարվում է աշխատանքների վերլուծություն, որի արդյունքում որոշակիացվում է յուրաքանչյուր սովորողի զարգացման աճը, որին համապատասխան էլ փոխվում է խմբերի կազմը և շերտավորված առաջադրանքների բնույթը: Քանի որ առաջադրանքները հարմարեցված են սովորողների անհատական կարիքներին, ուստի դրանք վերածվում են յուրօրինակ ինքնուրույն աշխատանքի՝ հնարավորություն ստեղծելով առանձին աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում:

Ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ շերտավորում կատարել՝ չանտեսելով, այլ հատուկ ուշադրության արժանացնելով յուրօրինակ կարողություններով օժտված երեխաներին, հարգելով նրանց անձը, գնահատելով ի վերուստ օժտվածությունը և անգամ տարօրինակությունները: Նա պետք է կարողանա պահպանել և զարգացնել նրանց մարդկային արժանապատվությունը, որի հետ երեխայի մեջ զարգանում են նաև լավագույն մարդկային որակներ: Յուրօրինակ կարողություններով օժտված երեխաներն իրենց առավելություններին զուգահեռ ունենում են նաև որոշակի դժվարություններ: Այդ երեխաների հետ աշխատելիս ավելի զգույշ պետք է լինել՝ հաշվի առնելով տարիքը և հոգևոր զարգացումը: Օժտված աշակերտը պիտի հավատա իր ուժերին ու հնարավորություններին: Նա միաժամանակ պետք է տեսնի իր ուսուցչի՝ այլ բնագավառների վերաբերյալ ունեցած գիտելիքներն ու հմտությունները, նկատի վերջինիս համեստությունը: Այսինքն՝ շատ կարևոր է վստահությունը ոչ միայն սեփական ուժերի, այլ նաև իրեն կրթող ու դաստիարակող ուսուցչի նկատմամբ: Սա է պատուհանը դեպի երեխայի հոգին: Միշտ պետք է հիշել, որ յուրօրինակ կարողություններով օժտված երեխաները սիրում են ինքնուրույն փնտրել, բացահայտել և ինքնատիպ լուծումներ գտնել:

Ռիսկեր

Հաճախ օժտված երեխաներին դպրոցում ուղեկցում են փոխհարաբերությունների հետ կապված դժվարությունները: Շատ բան կախված է նրանից, թե ուսուցիչները ինչպես են վերաբերվում մյուսներից հստակ տարբերվող երեխային: Միշտ կարևոր է հիշել, որ յուրօրինակ կարողություններով օժտված երեխաներն ուսուցիչների համար նաև դժվարություններ են առաջացնում դասարանի կարգապահության պահպանման հարցում, որովհետև ձանձրանում են, երբ առաջադրանքն արագ ավարտում են: Սրան հաջորդում են տեղում նրանց անհանգիստ շարժումները, որոնցով էլ շեղում են մյուսների ուշադրությունը: Կամ էլ առաջադրանքը կատարում են անկարգության ընթացքում, քանի որ իրենք կարող են մի քանի գործ միաժամանակ կատարել: Միակ փրկությունը երեխային հետաքրքրող, տարբեր ուղղություններով զարգացումն ապահովող տարատեսակ առաջադրանքներով ծանրաբեռնելն է:

Հաճախ է պատահում, որ փառաբանելով երեխայի բացառիկ օժտվածությունը որևէ բնագավառում՝ ծնողը կամ ուսուցիչը շարունակ հիացական կերպով են արտահայտվում երեխայի մասին կամ երես են տալիս նրան, և դա հիվանդագին է անդրադառնում երեխայի վրա: Պատկերացնենք, որ այս օժտվածությունն ու յուրօրինակությունը ժամանակավոր է, և որոշ ժամանակ անց հասակակիցներն սկսում են առաջ անցնել նրանից: Այդ փաստը յուրօրինակ երեխան կընկալի որպես ձախողում, կհիասթափվի, հոգեպես կկոտրվի:

Հայաստանում ևս շատ են առանձնահատուկ կարողություններով օժտված երեխաները, բայց քիչ են նրանցով զբաղվող հետազոտական կենտրոններն ու հաստատությունները: Չնայած որ տարբեր ժամանակներում այս երեխաների խնդիրը միշտ էլ հետաքրքրել է մարդկությանը, սակայն դրանց հետազոտությունը սկսվել է շատ ուշ: Նախկինում այսպիսի երեխաներին կա'մ կախարդի, կա'մ էլ խելագարի պիտակով էին բնութագրում: Ըստ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների՝ դրանց թիվը կազմում է հասարակության 2.5%-ից 20%-ը: Իսկ համաշխարհային առողջապահական տվյալների համաձայն՝ այն երևույթները, որոնք չեն հանդիպում բնակչության մեծամասնության մոտ, համարվում են նորմայից շեղում: Հետազոտողներն ուսումնասիրել են նաև այդպիսի մարդկանց կենսագրությունները և նկատել, որ յուրօրինակությունն ուղեկցվել է վերջիններիս տարօրինակություններով, որն էլ նպաստել է իրենց օտարմանը հասարակությունից: Հաճախ մի յուրօրինակությունն ու օժտվածությունը, մի ընդունակության գերզարգացումը զուգակցվում է որոշակի՝ շարժողական, խոսքային և այլ ֆունկցիաների հաշվին: Այսինքն՝ այսպիսի երեխաների մոտ կարող է լինել անհամաչափ զարգացում: Մանկական տարիքում այդ երևույթն առկա էր նշանավոր ու տաղանդավոր այնպիսի մեծությունների մոտ, ինչպիսիք են Միքելանջելոն, Ռոդենը, Էնշտեյնը, Չերչիլը և այլք: Բնության նկատմամբ անսահման սերն ու հետաքրքրությունը քիչ էր մնում՝ Ամպերին հասցներ խելագարության, երբ վերջինս առաջին անգամ տեսավ Ժնևյան լիճը:

Հաճախ յուրօրինակ կարողություններով մարդկանց այնքան էլ փայլուն ապագա չեն կանխորոշել իրենց ուսուցիչները: Օրինակ՝ փոքրիկ Դարվինին, Պուշկինին ժամանակին հիմարներ էին համարում:

Ցավալի է, բայց յուրօրինակ կարողություններով օժտվածությունը կարող է ունենալ բոլորովին անցանկալի ուղղվածություն և ծառայել ոչ թե ի շահ մարդկության, այլ հակառակը, դառնալ չարիք նրա գլխին: Այսպիսի վառ օրինակ են Հիտլերն ու Ստալինը:

Եզրակացություն

Երեխայի զարգացման գործում իր ահռելի տեղն ու դերն ունի այն, թե ուսուցիչը կարողանու՞մ է արդյոք ուսումնական գործընթացը կազմակերպել սովորողների

անհատական կարիքների հաշվառմամբ: Սա նրանց առաքելությունն է, որից կախված են ուսման արդյունավետությունն ու երեխայի և, ինչու չէ, երկրի հետագա ճակատագիրը:

Յուրօրինակ կարողություններով օժտված երեխաները տարբերվում են իրենց ինքնատիպությամբ, իրենց բացառիկ ընդունակություններով և որոշակի առանձնահատկություններով: Այդպիսի երեխաներն ունեն բազմակողմանի գիտելիքներ: Նրանք ինքնավստահ են, իշխող, ըմբոստանում են ճնշման և սահմանափակումների դեմ, հակված են ինքնահիացման, հարցասեր են, հետաքրքրասեր, ունեն հումորի զգացում, հարուստ երևակայություն և ճկուն միտք:

Կայծակնային արագությամբ զարգացող այս դարում հեշտ չէ լինել «ուսուցիչ-ուղեկցող» և չվրիպել կամ չսխալվել, իսկ այդպիսի սխալները չեն ներվում:

Մերօրյա ուսուցիչը պետք է լինի ժամանակին համընթաց քայլող մի ալեհավաք, որը պետք է կարողանա զտել այն ամենը, ինչն անհրաժեշտ է աշակերտի մտքին ու հոգուն, ուղղորդի նրան այնպես, որ հնարավորինս շուտ ազատվի «ուսուցիչ-ձեռնափայտից» և հաստատուն քայլերով շարժվի դեպի պայծառ ապագա: Օժտված երեխաների ներուժը պետք է ճիշտ ուղղորդել՝ ծառայեցնելով իր և հասարակության շահերին:

Իսկ կատարյալ ուսուցչի համար առաջնային ու անհրաժեշտ գործոն պետք է լինի օժտված երեխաներին հայտնաբերելն ու նրանց հետ ճիշտ, համակարգված և հետևողական աշխատանքներ տանելը, որովհետև հենց նրանք են մեր երկրի հիմնական հարստությունն ու ապագան կերտողները:

Օգտագործված գրականություն

1.Նատալյա Շումակովա «Օժտված երեխաների հետ աշխատանքի առանձնահատկությունները»:

2.Նելլի Բրուտյան «Օժտվածության երևույթի փորձարարական հետազոտություն»:

3. Иванов М. Г., Дифференцированное обучение младших школьников // Начальная школа, №11, 1994 г.

4. Рогановский Н., Дифференцированное обучение (в школе) – как его осуществить? // Народное образование, 1991, №3, с.79-81.

5. Яковлева Е.В., Организация дифференцированного подхода в процессе усвоения знаний младшими школьниками// Начальная школа, №5., 2004г., стр.69.

THE FEATURES OF TEACHING STRATIFIKATION. THE WAYS AND METHODS OF INDIVIDUAL APPROACH FOR WORKING WITH CHILDREN WITH SPECIAL CAPACITIES

SIMONYAN MANUCHAR
Director of EU Gavar Branch, PhD in Economics
MELKONYAN ARMENUHI
RA Gegarkunik Region, Zovaber Village, Elementary School Teacher

All teachers, during all classes, are required to organize the learning process taking into consideration the individual needs of learners. It is the teacher's monopoly, for which the most important things are the effectiveness and the child's future.

All working teachers will confirm that there is at least one student in each classroom who is distinguished by his/her unusual thinking, passionate interest in a subject or problem. In a word, a child who is accustomed to being called a gifted. However, is a student with unique abilities always a gift to the teacher? Or his/her presence raises an additional problem in the classroom?

So, what should be done? How should the stratified teaching be conducted to serve the student's unique abilities and endowments for the benefit of the child, society, and the country?

Keywords: *gifted with unique abilities, teacher, student, stratified teaching, child.*

ТЕХНИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ УЧЕБНОЙ СТРАТЕГИИ. ВИДЫ И МЕТОДЫ ИНДИВИДУАЛЬНОЙ РАБОТЫ С ОДАРЕННЫМИ ДЕТЬМИ

СИМОНЯН МАНУЧАР
Директор ЕУ Гаварского филиала, к.э.н.
МЕЛКОНЯН АРМЕНУИ
Учительница начальных классов Зоваберской ср. школы Гегаркуникской обл. РА

Все учителя обязаны организовывать учебный процесс, делить на уровни и учитывать индивидуальные потребности на всех уровнях. Это их заслуга, от которой зависит продуктивный результат обучения, а также дальнейшая судьба ребёнка.

Все учителя уверят, что в каждом классе есть хотя бы один ученик, который выделяется своим необычным мышлением, большим интересом к какому-то предмету или проблеме, словом, ребенок, которого принято называть одаренным. А всегда ли одаренный ученик с уникальными способностями считается подарком для учителя, или появление его в классе вызывает дополнительные проблемы? Что для этого нужно делать и какие методы и виды индивидуальной работы нужно применять для работы с одаренными уникальными способностями детьми, чтобы их одаренность и уникальность служила ему и на пользу обществу.

Ключевые слова: *одаренные дети, учитель, ученик, индивидуальная работа, ребенок.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 24.09.2020թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր
e-mail: ruzanna.hakobyan@mail.ru

Հոդվածը նվիրված է Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրության տերմինաբանական հարցերին:

Պատմական, համեմատաիրավական, համակարգակառուցվածքային վերլուծության և այլ մեթոդներով ուսումնասիրվում են 1995 թվականին ընդունված և 2005, 2015 թվականներին բարեփոխված Սահմանադրության մեջ օգտագործված իրավագիտական տերմինները[1], դրանց փոփոխությունները:

Հոդվածի նպատակն է հիմնավորել, որ Սահմանադրության՝ որպես պետության հիմնական օրենքի որակական հատկանիշները, ի թիվս այլ գործոնների, որոշվում են նաև ճիշտ ընտրված տերմինաբանությամբ:

Սահմանադրական տերմինահամակարգը քննարկվում է որպես իրավագիտական տերմինաբանության առանցքային բաղադրիչ: Օրինակներով պարզաբանվում է, որ տերմինը (եզրույթը) ոչ թե սոսկ Սահմանադրության մեջ ներառված բառ է կամ բառային կառույց, այլ սահմանադրաիրավական արժեք ունեցող միավոր, որը պետք է ճշգրիտ արտահայտի կարգավորվող հարաբերության, ինստիտուտի, գործընթացի սոցիալ-իրավական նշանակությունը: Հոդվածում սահմանադրական տերմինաբանությունը սահմանվում է որպես սահմանադրական իրավանորմերում ամրագրված տերմինների փոխհամաձայնեցված և փոխկապակցված համակարգ, որն արտահայտում է կարևոր հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման նպատակն ու էությունը: Առաջարկվում է նախկին տերմինաբանական կոմիտեի օրինակով ՀՀ-ում ձևավորել հատուկ մասնագիտացված մարմին՝ Իրավական տերմինաբանական հանձնաժողով, որը կարող է սփեղծվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող Լեզվի կոմիտեին կամ ՀՀ արդարադատության նախարարությանը կից: Իրավական

[1]Հայերենում տերմինաբանություն, տերմին անվանումներն ունեն մի քանի համարժեքներ՝ եզրաբանություն, եզրութաբանություն, եզր, եզրաբառ, եզրույթ, որոնցից որևէ մեկը դեռևս կայուն և համընդհանուր գործածություն չունի, ուստի նպատակահարմար ենք գտնում օգտագործել փոխառյալ տարբերակները:

տերմինաբանական հանճնաժողովի գործունեությունը կարևորվում է տերմինների իմաստային ճիշտ ընկալման և մեկնաբանման, դրանց միասնական կիրառումն ապահովելու, նոր տերմիններ ստեղծելու և ՀՀ-ում կայանալիք սահմանադրական բարեփոխումների որակի ապահովման տեսանկյունից:

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, սահմանադրական փոփոխություններ, տերմին, տերմինաբանություն, բառ, բառակապակցություն, հասկացություն, նշանակություն, սահմանում, սահմանադրահիրավական կարգավորում:*

Հայաստանի երրորդ Հանրապետությունում սոցիալական կենսագործունեության բոլոր ոլորտների արմատական փոփոխությունները, հասարակական հարաբերությունների զարգացումը օբյեկտիվորեն հանգեցրին իրավական կառուցակարգերի փոփոխության և կատարելագործման, իրավական նոր իրողությունների առաջացման, ուստի և նոր իրավական հասկացությունների և դրանք արտահայտող իրավական, մասնավորապես սահմանադրական տերմինների ստեղծման ու կիրառման: Բնականաբար սահմանադրական շինարարությունն էլ օրինաչափորեն ուղեկցվեց նոր սահմանադրական ինստիտուտների ի հայտ գալով, որոնք ստացան իրավական ամրագրում և իրենց կարգավիճակին համապատասխան անվանում:

2005 և 2015 թվականներին կայացած սահմանադրական հանրաքվեների արդյունքում 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությունը էական փոփոխություններ կրեց, ստեղծվեցին և օգտագործվեցին նոր տերմիններ, որոնք հարստացրին պետության հիմնական օրենքի տերմինահամակարգը, որը իրավագիտական տերմինաբանության կարևոր բաղադրիչն է:

«Տերմինաբանություն» (եզրութաբանություն, եզրաբանություն) հասկացությունը ծագել է լատիներեն «terminus»[1] բառից, որ նշանակում է սահման, եզր[2]: Միաժամանակ, այն նշանակում է սահմանային նշան, ավարտ, որոշակի տարածքի սահման կամ ժամանակահատված: Տերմինի՝ որպես «սահմանված չափի» իմաստը պահպանվել է որոշ լեզուներում, օրինակ՝ գերմաներենում «termin» նշանակում է ժամկետ, ժամանակահատված՝ դատավարական հարաբերություններում: Ֆրանսերենում «terminal», «terminale» բառը նշանակում է վերջնական, անգլերենում՝«terminal»-ը վերջնական կետն է, ավտոկայանում՝ կանգառը, օդանավակայանում՝ բաժանմունքը և այլն: Վերջին իմաստով այն օգտագործվում է նաև ռուսերենում[3]:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք «տերմին»-ի բազմաթիվ սահմանումների: Ըստ Էդուարդ Աղայանի՝ «Տերմինը որևէ տերմինահամակարգի պատկանող և այդ համակարգին հատուկ՝ ճշգրտորեն սահմանելի հասկացություն

[1] Հռոմեական դիցաբանության մեջ ‹‹Տերմինուսը›› համարվել է սահմանների աստվածը:
[2] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հ. 11, Երևան, 1985, էջ 676:
[3] Տե՛ս Чернин В. Е., Конституционная терминология, монография, М.:Норма:ИНФРА-М, 2013, էջ 18:

արտահայտող բառ կամ բառակապակցություն է»[1]: Անվանի լեզվաբանի կարծիքով՝ «տերմինի համար կարևորագույնը բառի նշանակությունն է. եթե տվյալ բառի նշանակությունը գիտության, տեխնիկայի, արհեստների, տնտեսության և այլնի որևէ բնագավառի հասկացություն է, ապա նա տերմին է, եթե ոչ՝ տերմին չէ»[2]: Իսկ «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում լեզվաբանը տալիս է տերմինի հետևյալ սահմանումը. «Տերմինը գիտության, տեխնիկայի, արվեստի, հասարակական կյանքի որևէ բնագավառի՝ որոշակի հասկացությունները ճշտորեն արտահայտող բառ կամ բառակապակցություն է»[3]:

Ի. Ս. Կվիտկոն կարծում է, որ «Տերմինը բառ կամ բառային համալիր է, որը հարաբերակից է իմացության որոշակի ոլորտի հասկացությանը, համակարգային հարաբերությունների մեջ է մտնում այլ բառերի և բառային համալիրների հետ և յուրաքանչյուր առանձին դեպքում և որոշակի ժամանակամիջոցում նրանց հետ կազմում է փակ համակարգ, որը բնութագրվում է բարձր տեղեկատվությամբ, մենիմաստությամբ, ճշգրտությամբ և արտահայտչական չեզոքությամբ»[4]:

Եթե համադրենք տերմինների վերաբերյալ եղած սահմանումները, ապա կարող ենք առանձնացնել մի շարք ընդհանուր հատկանիշներ.

ա) թե՛ բառային, թե՛ բառակապակցության արտահայտությամբ տերմինը պիտի լինի մենիմաստ,

բ) տերմինը պիտի զուրկ լինի հուզաարտահայտչական գունավորումից, պատկանի չեզոք բառաշերտին,

գ) լինի ճշգրիտ, գիտական և իմաստային ընդգրկունության տեսակետից՝ լիարժեք:

Տերմինների հավաքական ամբողջությունը անվանում են տերմինաբանություն, որը նշանակում է «գիտության, տեխնիկայի, մշակույթի ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներին վերաբերող գիտական տերմինների (եզրերի) ամբողջություն»[5]:

Իրավական հասկացությունները ևս արտահայտվում են տերմիններով, որոնք իրենց համակցության մեջ կազմում են իրավական տերմինաբանությունը:

Յուրաքանչյուր մասնագիտական ոլորտ ունի իրեն բնորոշ գիտական հասկացությունների համախումբը, որն էլ պայմանավորում է մասնագիտական տերմինաբանության՝ փիլիսոփայական, իրավական, պատմական, լեզվաբանական, քաղաքագիտական, կենսաբանական, բժշկական, հոգեբանական, տեխնիկական և այլ տերմինահամակարգերի առանձնահատկությունները:

---

[1] Տե՛ս Աղայան Էդ. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 323:
[2] Տե՛ս Աղայան Էդ. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 319:
[3] Տե՛ս Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան:Հայաստան, 1976, էջ 1439:
[4] Տե՛ս Квитко И. С. Термин в научной доктрине, Львов, Львовский университет, 1976, էջ 24:
[5] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հ. 11, Երևան, 1985, էջ 676:

Տերմինների ստեղծումը և համակարգումը անընդհատական, շարունակական գործընթաց է: Ժամանակի ընթացքում գիտությունների զարգացմանը համընթաց տարբեր մասնագիտական ոլորտներում ձևավորվում-առաջանում են նորանոր հասկացություններ, որոնց արտահայտիչներն են դառնում տերմինները՝ գիտական համապարփակ տեղեկատվությամբ և գործնական լայն հնարավորություններով օժտված: Այս իրողությունը հանրագիտարանային մեկնաբանությամբ ներկայացված է հետևյալ կերպ՝ հայերենի օրինակով ցույց տալով նաև տեմինահամակարգերի առաջացման ուղիները և շերտերը. «Յուրաքանչյուր մասնագիտությանը հատուկ հասկացություններն արտահայտվում են համապատասխան տերմիններով, որոնք տվյալ մասնագիտության հասկացությունների համակարգի և տվյալ լեզվի բառային կազմի բաղկացուցիչ մասն են: Տարբեր լեզուների տերմինաբանությունը գոյանում է տարբեր աղբյուրներից... Հայոց լեզվի տերմինաբանությունը սկզբից ևեթ ունեցել է առավելապես ազգային բնույթ... Հայերեն տերմիններ ստեղծվել են V դարից, երբ սկզբնավորվեց օտար բոլոր բառերն ու բառակապակցությունները հայերեն համարժեքով արտահայտելու ավանդույթը... Հայերենի այժմյան տերմինաբանությունը բաղկացած է երեք շերտից՝ զուտ ազգային, փոխառյալ, խառը»[1]:

Այս տեսակետից բացառություն չէ նաև իրավական տերմինաբանությունը, եթե նկատի ունենանք, որ հայ իրավական միտքը և հայկական իրավունքի պատմությունը հազարամյակների «կենսագրություն» ունեն, վկան՝ հին և միջնադարյան հուշարձանները: Արդի ժամանակներում՝ Հայաստանի պետաիրավական համակարգի ընդհանուր զարգացման և սահմանադրական փոփոխությունների շրջանում, շարունակվում է իրավական տերմինաշինության գործընթացը: ՀՀ իրավական համակարգի առանցքը սահմանադրական իրավունքն է, ուստի օրինաչափորեն իրավական տերմինաբանության հիմքում սահմանադրական հասկացությունները ներկայացնող տերմինահամակարգն է:

Ի թիվս այլ հատկանիշների, տերմինների ճիշտ ընտրությունը ևս պայմանավորում է Սահմանադրության՝ որպես հիմնարար իրավական փաստաթղթի որակական բնութագիրը:

Սահմանադրական տերմինաբանությունը ներառում է ինչպես նախկինում գործածված և իրենց արդիականությունը չկորցրած, այնպես էլ նոր հասկացություններ, որոնք արտահայտում են նոր ի հայտ եկած իրավական ինստիտուտների, կառուցակարգերի և գործընթացների էությունը, սոցիալական նշանակությունը:

Համամիտ ենք Վ. Ե. Չերնինի այն դիտարկմանը, թե տերմինները պետք է հնարավորինս ճշգրիտ արտացոլեն իրավական երևույթների իմաստն ու առաքելությունը, խորքային որակները, ներքին, հիմնական, անօտարելի հատկանիշները և ոչ

[1]Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հ. 11, էջ 676:

թե մասնավոր, պատահական, ոչ էական, ածանցյալ հատկությունները[1]: Սահմանադրական տերմինը ոչ թե պարզապես բառ է կամ բառակապակցություն, այլ սահմանադրաիրավական արժեք ունեցող միավոր է, որը պետք է ճշգրիտ արտահայտի կարգավորվող երևույթի, հարաբերության, ինստիտուտի սոցիալ-իրավական նշանակությունը: Այս տեսակետից ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր սահմանադրական տերմիններն են բավարարում տերմիններին առաջադրվող վերը նշված պահանջները, լինում են նաև ոչ այնքան ընդունելի տարբերակներ, որոնք ճշգրտման կարիք ունեն: Սահմանադրական նորմում ներառված յուրաքանչյուր բառի և բառակապակցության ընտրությունը պետք է ճիշտ ու հիմնավոր լինի: Օրինակ, կարծում ենք, որ 2015 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրության մեջ տեղ գտած և տասնվեց անգամ կրկնվող «մանրամասները սահմանվում են օրենքով», «մանրամասն նկարագրությունը սահմանվում է օրենքով» բառակապակցությունները չեն համապատասխանում սահմանադրական դրույթներին ներկայացվող պահանջներին, քանի որ կարող է հարց ծագել՝ ո՞ր մանրամասների մասին է խոսքը՝ իրավակա՞ն, թե՞ կազմակերպական կամ գուցե բովանդակայի՞ն, կառուցակարգայի՞ն, մեթոդաբանակա՞ն, տեխնիկակա՞ն, թե՞ այլ:

Արդյո՞ք միշտ են Սահմանադրության մեջ ամրագրված տերմիններն ու դրանց համապատասխան ինստիտուտները համարժեք: Օրինակ՝ «պետության գլուխ»-ը ՀՀ նախագահին տրված սահմանադրական բնութագիրն է, որն ընդունելի էր 1995 և 2005 թվականների սահմանադրական կարգավորումների համատեքստում, արտահայտում էր ՀՀ նախագահի ունեցած լիազորությունների շրջանակը, պետության լիարժեք ղեկավարի կարգավիճակը: Սակայն 2015 թվականին սահմանադրական փոփոխություններով հաստատված կառավարման խորհրդարանական ձևի պայմաններում Հայաստանի Հանրապետության նախագահին իր սահմանադրական սահմանափակ լիազորությունների ուժով սոսկ ներկայացուցչական, արարողակարգային, խորհրդանշական գործառույթներով միայն մեծ վերապահումով կամ պայմանականորեն կարելի է անվանել «պետության գլուխ»[2]: Դա նշանակում է, որ այս դեպքում խախտված է հասկացության և այն արտահայտող տերմինային կառույցի համադրելիությունը, ուստի ճշգրտում կատարելու կարիք է զգացվում:

Ընդհանրապես կատարյալ են համարվում այն տերմինները, որոնք արտահայտված են մեկ բառով, սակայն հաճախ ինչ-ինչ պատճառներով դա հնարավոր չի լինում (օրինակ՝ նոր հասկացություն է, որի բառային արտահայտությունը դեռևս ի վիճակի չէ լիարժեքորեն ներկայացնելու երևույթի էությունը, գիտականությունը, ճշգրտությունը), ուստի նույն երևույթի համար միաժամանակ կարող են ստեղծվել ու գործածվել և՛ տերմինային տարբերակներ, և՛ բառակապակցությամբ արտահայտված

[1] Տե՛ս Чернин В. Е., Конституционная терминология, монография, М.:Норма:ИНФРА-М, 2013, էջ 19:
[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 123-ի 1-ին մաս, Երևան, 2015:

տերմիններ: Այդպես և սահմանադրական տերմինը կարող է ինստիտուտը բնութագրել և՛ մեկ դիպուկ բառով, և՛ համարժեք բառակապակցությամբ: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության մեջ օգտագործվում են և՛ «դատարան», և՛ «դատական ատյան»[1] եզրույթները: Նշենք, որ բառակապակցությունը հենց այնպես չի դառնում տերմին կամ տերմինաբանական կառույց: Այն պետք է ունենա իմաստային ամբողջականություն, ներքին միասնականություն, արտաքին հասցեագրում, հստակություն, կիրառության համապատասխան ոլորտ, այսինքն՝ իրավական արժեք:

Այսպիսով, սահմանադրական տերմինաբանությունը կարելի է սահմանել որպես սահմանադրական իրավանորմերում ամրագրված տերմինների փոխհամաձայնեցված և փոխկապակցված համակարգ, որն արտահայտում է կարևոր հասարակական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման նպատակն ու էությունը:

Սահմանադրական տերմինաբանությունը ներառում է ինչպես ընդհանուր իրավական, այնպես էլ միայն սահմանադրական նշանակության տերմիններ, որոնք նախատեսված են կիրառելու հենց Սահմանադրության մեջ, սահմանադրական օրենքներում, նորմատիվ իրավական այլ ակտերում, ինչպես նաև իրավունքի տեսության մեջ, սահմանադրաիրավական դոկտրինում: Օրինակ՝ «սոցիալական պետություն»-ը, «իրավական պետություն»-ը սահմանադրական եզրույթներ են, սակայն միաժամանակ գոյություն ունեն նաև նույնանուն ուսմունքներ իրավական պետության, սոցիալական պետության մասին:

Սահմանադրական տերմինաբանությունը մի կողմից բնութագրվում է որոշակի կայունությամբ, իսկ մյուս կողմից՝ փոփոխականությամբ: Կայունությունը բացատրվում է հիմնարար սահմանադրական ինստիտուտների և սկզբունքների ու դրանք արտահայտող սահմանադրաիրավական հասկացությունների «կենսունակությամբ», իրավական շարունակականության և «փոխճանաչելիության» ապահովման, «ժառանգորդության» անհրաժեշտությամբ:

Կայունությունն ապահովում են բազային հասկացություններ արտահայտող տերմինները, որոնք հիմնարար նշանակություն ունեն և անփոփոխելի են, և կան տերմիններ, որոնք համեմատաբար «երիտասարդ» են կամ «նորահայտ» և Սահմանադրության մեջ գործածվել են վերջին փոփոխություններից հետո: 1995 թվականին ընդունված և հետագայում բարեփոխված ՀՀ Սահմանադրության անկյունաքարային, ուստի և անփոփոխ հասկացություններն են՝ մարդը, քաղաքացին, ժողովուրդը, պետությունը, հանրապետությունը, օրենսդիր մարմինը, գործադիր, դատական իշխանության մարմինները և այլն: Բարեփոխումների ընթացքում ստեղծվեցին սահմանադրական նոր ինստիտուտներ, որոնցից շատերի տերմինային դրսևորումները տերմինաբանության մեջ դեռևս չեն ներառվել: Այսպես, 2005

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 69, 171, 172, Երևան, 2015:

թվականին ներդրվեց Սահմանադրական դատարան անհատական դիմումի ինստիտուտը (101-րդ հոդվածի 6-րդ կետ), 2015 թվականին ամրագրվեց քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության իրավունքի ինստիտուտը (109-րդ հոդվածի 6-րդ մաս, 169-րդ հոդվածի 2-րդ մաս, 204, 206-րդ հոդվածներ), ընդ որում նշված ինստիտուտների անվանումներն ուղղակիորեն ներառված չեն Սահմանադրության հոդվածներում: Այդպես նաև ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսված են անձի անհատական (ինդիվիդուալ) և կոլեկտիվ (խմբակային) իրավունքները, բայց «անհատական» կամ «կոլեկտիվ» տերմինները չեն գործածվում:

2005 թվականին սահմանադրորեն ամրագրվեց Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որը մինչ այդ սահմանված էր 2003 թվականին ընդունված օրենքում[1], իսկ 2015 թվականին նախատեսվեցին նոր սահմանադրական մարմիններ՝ իրենց համապատասխան անվանումներով. Ազգային ժողովի խորհուրդ, Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով, ինքնավար մարմիններ (104, 108, 122, 169-րդ հոդվածներ) և այլն: Ամրագրվեցին նոր հասկացություններ՝ իրենց համապատասխան տերմիններով. «քաղաքական կոալիցիա», «կայուն խորհրդարանական մեծամասնություն» (89-րդ հոդված), որոնք մինչև 2015 թվականը սահմանադրական ամրագրում չունեին, սահմանվեցին նոր իրավունքներ՝ պատշաճ վարչարարության իրավունքը, քաղաքական ապաստանի իրավունքը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման (50, 54, 62-րդ հոդվածներ) և այլ իրավունքներ: Սահմանադրորեն նախատեսվեցին նոր սկզբունքներ՝ համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության (78, 79, 80-րդ հոդվածներ) և այլն:

1995 թվականին ընդունված, ապա 2005 թվականի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության հոդվածները վերնագրված չէին, իսկ 2015 թվականի փոփոխություններից հետո բոլոր հոդվածները վերնագրվեցին՝ բացառությամբ 1-ին և 2-րդ հոդվածների, որոնք փոփոխման ենթակա չեն:

Մեր կարծիքով՝ հոդվածների ոչ բոլոր վերնագրերն են հաջողված: Օրինակ՝ 74-րդ հոդվածը վերնագրված է «Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ»: Կարծում ենք՝ «կիրառելիություն» բառը կարելի է փոխարինել «կիրառումը» բառով, թեև հոդվածի բովանդակությունը պատշաճ ձևակերպված և ընդունելի ենք համարում:

[1] ՀՀ-ում Մարդու իրավունքների պաշտպանի մասին առաջին օրենքը ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 21-ին // https://www.arlis.am/documentview.aspx?docid=64341:

Տարբեր պետությունների սահմանադրական զարգացումները ցույց են տալիս, որ ժամանակավրեպ, հնացած, ոչ ստույգ կամ ոչ ամբողջական՝ թերի տերմիններն աստիճանաբար դուրս են մղվում կամ ստանում են նոր իմաստ և բովանդակություն: Այսպես, Ավստրիայում, կառավարման ձևի փոփոխության հետ կապված, միապետությունը փոխարինվեց հանրապետությամբ, և պետության գլուխ ճանաչվեց ոչ թե միապետը, այլ հանրապետության նախագահը, կամ մեր օրերում «հպատակ» հասկացությունը վերաբերում է ոչ թե ճորտին, այլ պետության քաղաքացուն:

Սահմանադրական ինստիտուտին համապատասխանող տերմինը կարող է լինել բառակապակցություն և հանդես գալ որպես համաձայնեցված տերմինաբանական կառույց, օրինակ՝ Բարձրագույն դատական խորհուրդ (ԲԴԽ), Սահմանադրական դատարան (ՍԴ), Տեղական ինքնակառավարման մարմին (ՏԻՄ) և այլն: ՀՀ-ում «Վերահսկիչ պալատ» անվանումը փոխարինվեց «Հաշվեքննիչ պալատ»-ով, Արդարադատության խորհուրդը վերանվանվեց Բարձրագույն դատական խորհուրդ:

Սահմանադրական ակտում տերմինի գործածության քանակով կարելի է պատկերացում կազմել համապատասխան ոլորտի սահմանադրաիրավական կարգավորման որակի մասին: Օրինակ՝ եթե 1995 թվականի ՀՀ Սահմանադրության մեջ միայն մեկ՝ 37-րդ հոդվածն էր վերաբերում «ազգային փոքրամասնության»-ը՝ սահմանելով, որ «Ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք», ապա 2005 թվականին փոփոխված Սահմանադրությունում նրանց մասին կար երկու (14.1 և 41-րդ հոդվածներ), իսկ 2015 թվականի փոփոխությունների արդյունքում առկա է երեք (29, 56 և 89-րդ հոդվածներ) հիշատակում: Մասնավորապես 89-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ «Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին», որը ՀՀ-ի համար աննախադեպ սահմանադրական կարգավորում է:

Ինչպես վերը նշվեց, իրավական ինստիտուտը կարող է հատուկ տերմինով կամ տերմինաբանական կառույցով չհիշատակվել Սահմանադրության մեջ, սակայն ունենալ համապատասխան սահմանադրաիրավական կարգավորում: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրությունը, առանց բովանդակելու «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունը, նախատեսում է նեգատիվ՝ հարկադրական սահմանադրական պատասխանատվության միջոցներ՝ ՀՀ վարչապետին, կառավարության անդամին անվստահություն հայտնելը, Հանրապետության նախագահի պաշտոնանկությունը, օրենքը հակասահմանադրական ճանաչելը և այլն, ինչպես նաև սահմանում է պոզիտիվ՝ կամավոր սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը, օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն»: Այս դրույթում

սահմանադիրը նկատի ունի դատավորի պոզիտիվ («բարձր») սահմանադրական պատասխանատվությունը: ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»: Այս նորմում ևս «պատասխանատվություն» տերմինն օգտագործվում է իր պոզիտիվ, պերսպեկտիվ (ապագային միտված) իմաստով՝ որպես պետության հանձնառություն: Իսկ ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «պատասխանատվություն» տերմինն ունի նեգատիվ՝ հարկադրական (ռետրոսպեկտիվ, պատժիչ) իմաստ. «Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով»: Նույնը վերաբերում է 164-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «պատասխանատվություն» հասկացությանը. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով»:

ՀՀ Սահմանադրության մեջ երբևէ չի կիրառվել «վետո» կամ «արգելաքվե» տերմինը, սակայն գործել է ՀՀ նախագահի վետոյի ինստիտուտը: Համաձայն 1995 թ. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Հանրապետության Նախագահը Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում»:

Այս նորմում գործածված էր «կամ» շաղկապը, որը նշանակում էր, որ Ազգային ժողովի ընդունած օրենքի նկատմամբ վետո կիրառելիս նախագահն այն վերադարձնում էր օրենսդիր մարմին՝ համապատասխան «առարկություններով կամ առաջարկություններով», որն օրենսդրական տեխնիկայի առումով այդքան էլ ճիշտ և տրամաբանական չէր, քանի որ նախագահը կարող էր օրենքը հետ վերադարձնել՝ միաժամանակ ներկայացնելով և՛ առարկություններ, և՛ առաջարկություններ: Այդ էր պատճառը, որ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում հոդվածից «կամ»-ը հանվեց՝ սահմանելով «...առարկություններով, առաջարկություններով...»: Իսկ 2015 թվականին փոփոխված Սահմանադրությամբ ՀՀ նախագահն այլևս իրավասու չէ օրենքը հետ վերադարձնել Ազգային ժողով, այլ 129-րդ հոդվածի համաձայն՝ իրավունք ունի դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Սակայն

խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում այլևս չի նշվում նախագահի՝ առարկություններ և առաջարկություններ ներկայացնելու իրավասության մասին:

ՀՀ Սահմանադրության մեջ օգտագործվում են «բարձրագույն», «գերագույն», «գլխավոր», «անձեռնմխելի» որակումները:

«Մարդը բարձրագույն արժեք է». այս հիմնարար սահմանադրական սկզբունքն արտահայտվում է տերմինաբանական պատշաճ կառույցով (3-րդ հոդված):

Ինչ վերաբերում է «գերագույն», «գլխավոր» բնութագրերին, ապա գտնում ենք, որ դրանց համատեղ կիրառումն այնքան էլ ճիշտ չէ: Ուստի տեղին ենք համարում 2015 թվականի սահմանադրական փոփոխությունը: Այսպես, ՀՀ նախագահը 1995 թվականի Սահմանադրությամբ համարվում էր «զինված ուժերի գլխավոր հրամանատարը», 2005 թվականի Սահմանադրության փոփոխություններում՝ «գերագույն գլխավոր հրամանատարը» (55-րդ հոդվածի 12-րդ կետ), իսկ 2015 թվականին փոփոխված Սահմանադրության 155-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է»՝ առանց գլխավոր-ի:

Սահմանադրական նորմերում պահանջվում է շարադրանքի տրամաբանական հաջորդականություն, հստակություն, իմպերատիվություն: Իրավական նորմերը չեն ներառում ձայնարկություններ, հույզեր արտահայտող տերմիններ, պատմողական, բացականչական, հարցական նախադասություններ: Սահմանադրական տերմինաբանության մեջ որոշ (թեև սակավ) կիրառություն ունեն ժխտողական տերմինները, օրինակ՝ «Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին» (8-րդ հոդվածի 4-րդ մաս) կամ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները» (81-րդ հոդվածի 2-րդ մաս):

Կարծում ենք, ժխտողական եզրույթներից հնարավոր չէ (և ճիշտ չէ) խուսափել: Դրանք կիրառվում են ըստ անհրաժեշտության, օրինակ՝ սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտների կարգավիճակի հետ անհամատեղելի գործունեության տեսակները սահմանելու նպատակով. «Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ» (46-րդ հոդվածի 2-րդ մաս), «Պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում. . .» (95-րդ հոդված):

Որպես ամփոփում՝ նշենք, որ

1. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական փոփոխություններ իրականացնելիս անհրաժեշտ է սահմանադրական նորմերում գործածվող յուրաքանչյուր տերմինի ճիշտ ընտրություն՝ հաշվի առնելով դրա իրավական, լեզվական,

ազգային, պատմական, գաղափարական, իմաստաբանական, բարոյահոգեբանական, մշակութային և այլ հատկանիշները:

Անհրաժեշտ է ապահովել սահմանադրաիրավական տերմինաբանության հստակությունը, որը իրավաբանական տեխնիկայի կարևոր մասն է: Ուստի առաջարկում ենք նախկին տերմինաբանական կոմիտեի օրինակով ՀՀ-ում ձևավորել հատուկ մասնագիտացված մարմին՝ Իրավական տերմինաբանական հանձնաժողով, որը կարող է ստեղծվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող Լեզվի կոմիտեին կամ ՀՀ արդարադատության նախարարությանը կից: Իրավական տերմինաբանական հանձնաժողովի գործունեությունը կարևորում ենք տերմինների իմաստային ճիշտ ընկալման և մեկնաբանման, դրանց միասնական կիրառումն ապահովելու, նոր տերմիններ ստեղծելու և հատկապես ՀՀ-ում կայանալիք սահմանադրական բարեփոխումների որակի ապահովման տեսանկյունից:

2. Սահմանադրական տերմինները ձևակերպվում են իրավական գաղափարախոսության ոլորտում, սահմանվում իրավագիտության կողմից, դրվում շրջանառության մեջ, ամրագրվում սահմանադրական ակտերում և գործածվում իրավակիրառ պրակտիկայում:

Սահմանադրական տերմինաբանության մեջ անընդունելի են հակասական, իրարամերժ, անհամապատասխան, բազմիմաստ, տարընթերցումների տեղիք տվող, հայեցողական եզրույթները:

3. Սահմանադրական տերմինները փոխվում են տարբեր ճանապարհներով. նոր իրողությունները ծնում են նոր տերմիններ, «խմբագրվում են» ձևավորված եզրույթները, ըստ այդմ լրացվում և փոփոխվում են սահմանադրական կառույցները, կամ նախկինում օգտագործված տերմինը ստանում է նոր բովանդակություն, օրինակ՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունը ընդունվում է ոչ թե որպես խառը՝ կիսանախագահական, այլ խորհրդարանական հանրապետություն:

4. Ժամանակի մարտահրավերներն իրենց ուրույն անդրադարձն են ունենում սահմանադրական իրավակարգավորումների, ըստ այդմ՝ սահմանադրական տերմինաշինության վրա: Օրինակ՝ վերջին ժամանակներս արդիական է դարձել արտակարգ դրության իրավական ռեժիմի առավել հստակ սահմանադրաիրավական կարգավորման խնդիրը՝ կապված 2020 թվականին ողջ աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուս (COVID-19) համավարակի տարածման և

2020 թվականի մարտի 16-ին ՀՀ-ում արտակարգ դրության[1], ապա 2020 թվականի սեպտեմբերի 11-ին կարանտինի[2] հայտարարման հետ:

Խիստ կարևոր է նաև ռազմական դրության իրավական ռեժիմի լիարժեք սահմանադրաիրավական կարգավորման հարցը, որն առավել հրատապ է դարձել՝ կապված 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության վրա ադրբեջանաթուրքական-ահաբեկչական հրոսակների սանձազերծած ագրեսիվ պատերազմի, Արցախի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրության հայտարարման հետ[3]:

Այսպիսով, սահմանադրական և ընդհանրապես իրավական տերմինաբանությունը մեկընդմիշտ ընդունված և անփոփոխ համակարգ չէ: Այն ժամանակի պահանջներին, սոցիալական կյանքի և օրենսդրության փոփոխությանը, իրավագիտության և իրավակիրառ պրակտիկայի զարգացմանը զուգընթաց մշտապես փոփոխվում է, համալրվում և նորանում՝ կարևոր հասարակական հարաբերությունների հստակ և արդյունավետ սահմանադրա-իրավական կարգավորմանը նպաստելու նպատակով:

[1] Տե՛ս ‹‹Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին›› ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն որոշում:

[2] Տե՛ս ‹‹Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին›› ՀՀ կառավարության 11 սեպտեմբերի 2020 թվականի N 1514-Ն որոշում:

[3] Տե՛ս ‹‹Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին›› ՀՀ կառավարության 27 սեպտեմբերի 2020 թվականի N 1586-Ն որոշում:

ON TERMINOLOGICAL ISSUES OF THE CONSTITUTION OF THE ARMENIAN REPUBLIC

HAKOBYAN RUZANNA
Doctor of Law, Associate Professor,
Rector of Gavar State University

The article is dedicated to the terminological issues of the Constitution of the Third Republic of Armenia.

Historical, comparative-legal, systemic-structural and other methods have been used to study the terms and their changes in the Constitution adopted in 1995 and amended in 2005 and 2015.

The purpose of the article is to present that, among other factors, the qualitative features of the Constitution as a basic legal document are determined by the correctly chosen terminology.

Constitutional terminology is discussed as a key component of legal terminology. The examples clarify that the constitutional term is not just a word or word structure included in the Constitution, but a unit of constitutional legal value, which must accurately express the socio-legal meaning of the regulated relationship, institution and process. The article defines constitutional terminology as a coordinated, interconnected system of terms enshrined in constitutional legal norms, which expresses the purpose and essence of the constitutional legal regulation of important public relations.

The author proposes to form a specialized body, Legal Terminology Commission, following the example of the former Terminology Committee which can be established adjacent to the Language Committee under the Ministry of Education, Science, Culture and Sports or adjacent to the Ministry of Justice.

The activity of the Legal Terminology Commission is important from the point of view of accurate understanding and interpretation of the meaning of the terms, providing for their joint use, creating new terms and ensuring the quality of the constitutional reforms to be carried out in the Republic of Armenia.

Keywords: *Constitution, constitutional amendments, term, terminology, word, word combination, concept, meaning, definition, legal constitutional regulation.*

О ТЕРМИНОЛОГИЧЕСКИХ ВОПРОСАХ КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АКОБЯН РУЗАННА
Доктор юридических наук, доцент,
Ректор Гаварского государственного университета

Статья посвящена терминологическим вопросам Конституции Третьей Республики Армения.

В статье методами исторического, сравнительно-правового, системно-структурного анализа исследуются положения Конституции 1995 года, а также конституционные изменения 2005 и 2015 годов.

Цель статьи – конкретными примерами показать, что качественные характеристики Конституции-как основного правового документа, в числе других факторов определяются правильно выбранной терминологией.

Конституционная терминология рассматривается как ключевой компонент юридической терминологии. Конституционный термин - это не просто слово или словесная структура, включенная в Конституцию, а конституционно-правовая единица, которая должна точно выражать социально-правовое значение регулируемого отношения, института, процесса.

В статье конституционная терминология определяется как согласованная, взаимосвязанная система терминов, закрепленных в конституционных нормах, которая выражает цель и сущность конституционно-правового регулирования общественных отношений.

Автор предлагает по примеру бывшего Терминологического комитета создать в Республике Армения специализированный орган - Комиссию по правовой терминологии, которая может действовать при комитете по языку при министерстве образования, науки, культуры и спорта РА или при министерстве юстиции РА.

Деятельность Комиссии по правовой терминологии необходима с точки зрения правильного смыслового восприятия, толкования терминов, обеспечения их единого применения, создания новых терминов, а также для обеспечения качества конституционных преобразований Республики Армения.

Ключевые слова: *Конституция, конституционные изменения, термин, терминология, слово, словосочетание, понятие, значение, определение, конституционное регулирование.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.09.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2020թ.:

ՃՈԿԱՆ ԽԱՂԻ ՄԱՍԻՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի պրոֆեսոր

Սույն հետազոտության նպատակն է՝ ապացուցել, որ ճոկան խաղը կամ մականախաղը, որը ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից 2013 թվականին ճանաչվել և գրանցվել է որպես ադրբեջանական ազգային խաղ և ոչ նյութական մշակութային արժեք, այդ ժողովրդի հետ կապ չունի: Այն եղել է հայկական և պարսկական խաղ, և որը հայերը և պարսիկները խաղացել են քոչվոր թուրք-ադրբեջանցիների կողմից կովկասյան տարածաշրջան գալուց շատ առաջ: Դրա հիմնավորման համար պատմական աղբյուրներից բերվում են բազմաթիվ փաստարկներ՝ կիրառելով վերացարկման, էվրիստիկական, վերլուծության, պատմահամեմատական, կորած օղակների վերականգնման և այլ մեթոդներ:

Բանալի բառեր. Ճոկան, չովգան, չոպգան, ձի, որս, Իրան, Հայաստան, Կիրոս Երկրորդ, Արտաշիր, Շապուհ, Շավասպ Արծրունի:

Ճոկանը («չովգան», «չոգան», «չոկան», «չոպգան», մականախաղ) եղել է թիմային խաղ: Այն խաղացել են երկու թիմերի բաժանված, ձիերին նստած հեծյալները: Գնդակը մականների միջոցով տեղափոխվել է հատուկ այդ խաղի համար նախատեսված խաղադաշտում: Խաղացողների նպատակը եղել է մականների (ճոկանների) օգնությամբ գնդակը նետել հակառակորդ թիմի դարպասը: Խաղն ունեցել է մի քանի խաղակեսեր, որոնց քանակն ու տևողությունը հայտնի չէ: Հայտնի չէ նաև, թե երբ է այն ծագել, որ երկրում, ինչպես նաև այն հանգամանքը, թե ամեն թիմում քանի խաղացող ձիավոր է եղել: Այդ մասին կան զանազան ենթադրություններ: Միանշանակ է միայն, որ այն եղել է ազնվականների խաղ, և դրա համար անհրաժեշտ են եղել հատուկ վարժեցված ազնիվ ցեղատեսակի ձիեր: Այդ խաղի միջոցով երեխաները (7-ից 15 տարեկան)՝ թագավորական դպրոցներում սովորող, հետո էլ հասակային հաջորդ՝ մանուկների կամ պատանիների խումբն անցածները (15-ից 25 տարեկան), որոնց Քսենոփոնը կոչում է էֆեբ, վարժվել են վարպետորեն ձիավարել, մանևրել, արշավել: Դա անհրաժեշտ և կարևոր պայման է եղել որս անելիս, ինչպես նաև երիտասարդների հասակային խումբ անցնելիս (25-ից 50/52 տարեկան): Հաղթող թիմի անդամները արժանացել են պարգևների: Այժմ այդ խաղը տարածված է շատ երկրներում և կոչվում է **պոլո**:

Հայաստանում այդ խաղը կոչվել է մականախաղ կամ ճոկան՝ իր անվանումն ստանալով «ճոկան» կոչվող գավազանից կամ մականից, որի միջոցով ձիեր հեծած երեխաները և մանուկները (պատանիները) խաղացել են այդ խաղը: Պարսկերեն

այն կոչվել է «չուգան», «չովգան» կամ «չոկան», իսկ պահլավերեն՝ «չոպգան»: Այդպես է կոչվել ինչպես բուն խաղը, այնպես էլ գավազանը կամ մականը, որի օգնությամբ այն խաղացվել է [21, հ. 3, էջ 210]: Ինչ վերաբերում է թուրքերեն «չովգան» բառին, ապա այդ լեզվում նման բառ ի սկզբանե չի եղել:

Ճոկան խաղի, ինչպես նաև պարսիկների ու հայերի մշակութային ժառանգության շուրջ վերջին 50-60 տարիներին Ադրբեջանի թուրքերի շրջանում անառողջ մթնոլորտ է ստեղծվել: Դա հատկապես ուժեղացել է Ադրբեջանի անկախացումից հետո, երբ այդ պետությունը կազմավորող ժողովուրդը և նրա էլիտան տեղացի չլինելու և եկվոր լինելու բարդույթը հաղթահարելու, ավտոխտոն ներկայանալու, պետություն կազմավորելու իրավունքը հիմնավորելու նկրտումներով իրեն հռչակել է ալբանացի: Երբեմն այնտեղ ձայներ են հնչում նաև այն մասին, որ նրանք նաև մեդացիների (մարերի), սկյութների ժառանգներ են և ոչ թե եկվոր թուրքեր կամ թաթարներ: Մեծ է նաև սկյութներին, ալբանացիներին ու մարերին թյուրքական ցեղեր կամ ժողովուրդներ և իրենց նախնիներ ներկայացնելու գայթակղությունը: Բայց առավել նպատակահարմար է համարվել ալբանացիների հետ ազգակցության վարկածը: Ալբանացիները, որոնք եղել են առանձին կիսավայրենի ցեղեր, բնակվել են Կուր գետի ձախ ափին, ներկայացվում են որպես ինչ-որ քաղաքակրթության կրող և տարածաշրջանը քաղաքակրթող ժողովուրդ: Որպես ալբանական է ներկայացվում նաև Մեծ Հայաստանի ողջ տարածքը, նրա պատմությունը, հայերը ներկայացվում են իբրև եկվորներ, ալբանացիների պատմությունն ու կուլտուրան յուրացնողներ: Այդ ծիծաղելի հավակնությունները հերքվել են, և դրանց պատասխանը լավագույնս տրվել է Վ. Բարտոլդի, Վ. Շնիրելմանի և այլոց կողմից [12,13, 14, 15]:

Իրականում այսպես կոչված ադրբեջանցիներն ալբանացիների հետնորդներ չեն և նրանց հետ որևէ կապ չունեն: Նման կապի ապացույցներ չկան: Բազմաթիվ ցեղերից կազմված ալբանական միությունը պատմության բեմից չքացել է դեռևս 8-րդ դարում: Նրանցից ժառանգություն մնացած որևէ ճարտարապետական կոթող կամ գրական ստեղծագործություն հայտնի չէ: Իրենք՝ ադրբեջանցիները, 15-րդ դարում Հյուսիսային Հայաստան ներխուժած և այնտեղ բնակություն հաստատած թուրքական քոչվոր Ակ-Կոյունլու և Կարա-Կոյունլու թուրք-մուսուլման ցեղերի հետնորդներ են: Մինչև 19-րդ դարը նրանք գտնվելիս են եղել զարգացման մինչպատմական փուլում և զբաղվել խաշնարածությամբ: Նրանց կողմից կառուցված որևէ շինություն, այդ թվում՝ մզկիթ, գրված գիրք կամ արվեստի գործ հայտնի չէ: Անհիմն և անճարակ են 4-րդ դարում կառուցված Նիջ գյուղի եկեղեցին և շատ այլ եկեղեցիների, ամրոցների ավերակներ, ինչպես նաև 8-րդ դարի հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացու հայերեն գրած «Պատմություն Աղվանից աշխարհի» երկը ալբանական ներկայացնելու, Նիզամի Գանձակեցուն, Նասիմիին և այլոց թուրքացնելու-ադրբեջանականացնելու բոլոր փորձերը: Վրաններում, գետնափորներում բնակվող, քաղաքներից զուրկ քոչվոր ցեղերը չեն կարող քաղաքակրթություն ստեղծել: Եվ միայն

որոշակի զարգացման մակարդակի հասած, նստակյաց ժողովուրդն է ունակ ստեղծելու պետություն, իրավունք, կառուցելու քաղաքներ, պալատներ և քաղաքակրթություն[9]:

Բայց կեղծ պատմության հերյուրումն ադրբեջանցի պատմաբանների կողմից ոչ միայն շարունակվում է, այլև վերջին տասնամյակներում դարձել պետական քաղաքականություն: Այդ կոնտեքստում մասնավորապես պնդումներ են արվում այն մասին, որ **ճոկան** խաղն ադրբեջանական ազգային խաղ է, որը նրանք խաղացել են հազարամյակներ շարունակ, իրենց իսկ կողմից բուծած ղարաբաղյան նժույգներով իրենց «պապական» հայրենիքում՝ Ադրբեջանում: Ավելին, նրանք հասել են այն բանին, որ այդ խաղը ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից 2013 թվականին ճանաչվել և գրանցվել է որպես ադրբեջանական ազգային խաղ և ոչ նյութական մշակութային արժեք: Իրականում ճոկանը կամ մականախաղը քաղաքակիրթ ժողովրդի խաղ է, քաղաքակրթության հատկանիշ և դրա դրսևորում: Ինչպես ստորև կհամոզվենք, դրա կանոններն իսկապես մշակված են եղել և ուսուցանվել են դպրոցներում: Առանց համապատասխան դպրոց ավարտելու ճոկան կամ մականախաղ խաղալ, այդ խաղին մասնակցել հնարավոր չի եղել: Այն խաղացողները եղել են գրագետ, կրթված, զարգացած անձինք: Եվ այն չէր կարող լինել կիսավայրենի ալբանական և նրանցից շատ ավելի անկիրթ, քոչվոր թուրքական ցեղերի զբաղմունք և սպորտի տեսակ:

Ճոկանը իսկապես հին խաղ է: Այդ մասին առաջին անգամ հիշատակվում է հին իրանական «Արտաշիր Պապական. Կարնամակ» երկում: Այդ աղբյուրի 3-4-րդ պարբերություններում ասված է, որ Բաբակը (Պապակը, Պապը – Ս.Խ.) «Որդեգրեց Արտաշիրը և պատվով կը պահէր զայն և երբ **հրահանգի** տարիքի հասաւ, դպրութեան և ձիավարութեան և այլ հրահանգաց մեջ այնպէս քաջավարժ հանդիսացաւ, որ Փարսի կողմերը անուն հանեց: Երբ Արտաշիր տասնհինգ տարեկան դարձավ, տիրապետեց **դպրութեան և ձիավարութեան և այլ հրահանգաց** մեջ այնպէս քաջավարժ հանդիսացաւ», որ նրա համբավը հասավ Պարթևստանի արքայից արքա Արտավան Հինգերորդին (210/211-224թթ.) [22, էջ 6-7, 47-48, 54]:

Այսպիսով՝ այս տողերից պարզվում է, որ երբ Արտաշիրը (ապագա Իրանի արքայից արքա Արտաշիր Առաջին Սասանյանը – 224-240թթ.) հասել է «հրահանգներ» (դպրություն, գիտություններ, իրավունք, ռազմարվեստ, ձիավարություն, որսորդություն, երգեցողություն և զանազան խաղերի, այդ թվում՝ ճոկան խաղի կանոններ) սովորելու, յուրացնելու կամ դպրոցական տարիքի, այն է՝ 7 տարեկանի, ուղարկվել է թագավորական դպրոց, որտեղ սովորել է 9-10 տարի և այն ավարտելուց ու չափահասության, այն է՝ 15 տարեկանի հասնելուց և այդպիսով մանուկների (պատանիների) հասակային խումբ անցնելուց հետո կանչվել ծառայության Պարթևստանի արքայից արքա Արտավան Հինգերորդի թիկնապահ կամ դրանիկ-

ների գնդում: Դրանիկը դա պալատական սպասավորը, արքունի պահակն է[1]: Իսկ դպրոցը, որտեղ Արտաշիրը սովորել և տիրապետել է «հրահանգներին», այդ թվում՝ ճոկանին վերաբերող, այն դպրոցներից մեկն է, որում թիկնապահ-դրանիկներ են պատրաստել, և որը նկարագրված է Քսենոփոնի «Կիրոպեդիա» աշխատությունում[2]: Դրանից պարզվում է, որ Իրանի հասարակությունն ըստ իրավունքի բաժանված է եղել չորս հասակային խմբերի՝ երեխաների (7-15 տ.), էֆեբների (15-25 տ.), երիտասարդների (25-50/52 տ.) ու ծերերի (50/52 տ. և ավել): Մանուկների կամ պատանիների հասակային խմբի մեջ մտնող արական սեռի ներկայացուցիչներին նա կոչում է էֆեբ՝ մանուկ կամ պատանի: Առանց երեխայական տարիքում սովորելու և դպրոցն ավարտելու մանուկների հասակային խումբ մտնել և համապատասխան իրավասուբյեկտություն ձեռք բերել հնարավոր չէր: Այս ամենին կարելի է նաև ավելացնել, որ Էֆեբները կամ մանուկները չէին կարող ծառայել բանակում, մարտնչել նրա շարքերում երկրում և երկրից դուրս: Նրանք կարող էին ծառայել միայն թագավորական և իշխանական թիկնապահ գնդերում, լինել դպիր, կատարել պահակապարեկային ծառայություն, ձիավարել, մասնակցել որսի և զանազան խաղերի, այդ թվում, ինչպես այստեղ պարզվում է, ճոկանի:

Մեր կողմից ապացուցվել է, որ բաժանումը հասակային չորս խմբերի՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ, գոյություն է ունեցել և պահպանվել է նաև քրիստոնյա Հայաստանում [26]: Ապացուցվել է նաև, որ ժամանակին Աշտիշատ քաղաքում՝ կաթողիկոս Ներսեսի տանն ապրել և երեխա հասակում նույնպիսի մի դպրոցում է սովորել Մեսրոպ Մաշտոցը: Նման դպրոցում կրթվելուց և այն ավարտելուց հետո միայն, դառնալով գրագետ, ռազմական, թիկնապահական գործի և այլ «հրահանգների» գիտակ և անցնելով մանուկների (չափահասների) խումբ, նա ծառայության է մտել (թիկնապահական, դրանիկական, հետո էլ՝ դպրության) հայոց թագավոր Վռամշապուհի արքունիքում: Եվ, ինչպես հասկանալի է, Հայաստանում դպրոցներ հիմնողը նա չի եղել: Նման ստահոդ պնդումներ են արվում հայկական պատմագրության և գրականության մեջ՝ նախամաշտոցյան մեր երկիրը ներկայացնելով որպես կիսավայրենի նախապատմական մի տարածք՝ զուրկ դպրոցներից, դպրությունից ու մշակույթից: Մաշտոցի ծառայությունն այդ հարցում այն է, որ դպրոցներում նա երեխաներին սկսել է դասավանդել և ուսուցանել նորագյուտ (գտած և ոչ թե նրա կողմից հնարած) հայկական այբուբենը, կազմակերպել թարգմանության գործը: Այդ հարցերը քննարկվել են, և սպառիչ պատասխաններ են տրվել մեր համապատասխան աշխատությունում [21, 22]:

Ինչպես արդեն նշվել է, Արտաշիրը, դպրոցն ավարտելուց հետո, որպես կրթված անձնավորություն և ձիավար, մեծ համբավի է հասել: Նրա մասին լսել է նաև Իրանի

[1] **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998: Էջ 103:
[2] **Ксенофонт.** Киропедия. М., «Наука», 1976, с. 7, 9-10, 23, 31, 33, 253.

(Պարթևաստանի) արքայից արքա Արտավան Հինգերորդը և նամակ-հրամանագիր ուղակել Պարսկաստանի թագավոր Բաբակին՝ գրելով հետևյալը. «Իմ կամքս է, որ դու զայն (Արտաշիրին – Ս.Խ.) մեր **դուռն** ուղարկես: Մեր մօտը, որ որպես զի մեր որդոց և **վասպուրականաց** հետ լինի և վարձատրել հրամայենք նորա քաջավարժութեան ի հրահանգս: Բաբակ, քանզի Արտաւան մեծ կամկարթար էր, նորանից դատթարուել և հրամանին սպուժել (չկատարել) չէր արժան»: Ուստի և նա Արտաշիրին ուղարկել է Արտավան Հինգերորդի պալատ: Վերջինս, «տեսնելով Արտաշիրը՝ մեծարեց զայն և հրամայեց, որ ամեն օր իւր որդոց և **վասպուրականաց** հետ որսի և **ճոկանի** երթայ: Եվ Արտաշիրը…, օգնականութեամբ Աստուծոյ, **ճոկանի և ձիավարութեան, ճատրակի և նարտի և այլ հրահանգաց** մեջ ամենեն գերապանծ գտնուեցաւ» [26, էջ 6-7, 47-48, 54, 8, էջ 67]:

Այս նամակ-հրամանագրի բովանդակությունից նախ և առաջ կարելի է հանգել հետևության, որ թագավորական թիկնապահ գունդը՝ կոչվող «վասպուրականաց», իսկապես էլ բաղկացած է եղել թագավորական դպրոցներն ավարտած մանուկներից (պատանիներից) կամ էֆեբներից: Պարզ է դառնում նաև, որ երեխաները դպրոցում սովորել են ոչ միայն ձիավարել, որսի գնալ, նետեր արձակել, տեգեր նետել, պահակապարեկային ծառայության կանոնները յուրացնել, ինչպես գրում է Քսենոփոնը, այլ նաև **սովորել են լավագույնս ճոկան (չովգան), ճատրակ, նարդի խաղալ և «այլ հրահանգներ» կատարե**լ (որոնց մասին՝ ստորև): Քսենոփոնը չի գրում նաև էֆեբներից կազմված և «վասպուրականաց» կոչվող թագավորական գնդի մասին, այլ միայն նշում է, որ էֆեբների խմբերը պետք է թագավորին ուղեկցեին որսի գնալիս, կատարեին ամրոցների, պալատների պահպանություն և այլն[1, էջ 7, 9-10, 23, 31, 33, 253]: Իսկ այս երկից պարզվում է նաև, որ նշված ժամանակ գոյություն է ունեցել դպրոցն ավարտած մանուկներից կամ պատանիներից կազմված ամբողջ գունդ՝ կոչվող «վասպուրականաց»: Հին իրանական այս աղբյուրից ակնհայտ է դառնում նաև, որ երեխաների, նրանց դպրոցների, ինչպես նաև մանուկների կամ էֆեբների պարտականությունների մասին առկա են նոր և կարևոր տեղեկություններ, որոնք բացակայում են Քսենոփոնի «Կիրոպեդիա» երկում: Այս աղբյուրից մասնավորապես պարզվում է, որ մի որսորդության ժամանակ Արտաշիրի և թագավորի ավագ որդու միջև (խոսքն Արտավան Հինգերորդ թագավորի ավագ որդի Արտավազդի մասին է, ում Արտաշիրը հետագայում մահապատժել է) [6, էջ 285, 18, էջ 24, 27, 29-31] վեճ է ծագել այն մասին, թե նրանցից ով է նետահարել ցիռին: Արտաշիրն արքայազնին մեղադրել է անազնվության և իր քաջագործությունը յուրացնելու մեջ: Արքայորդին պնդել է հակառակը: Արքայից արքան անցել է իր որդու կողմը, Արտաշիրին մեղադրել ստախոսության մեջ, նրան վտարել պալատից, զրկել ձիավարելու, ինչպես նաև նախճիրի (որսի) մասնակցելու, ճոկան խաղալու իրավունքից և ուղարկել ախոռ (12-18-րդ պարբ-եր), ծառայությունն այնտեղ շարունակելու համար[24, էջ 7-8]: Այդպիսով՝ նա պատժվել է, զրկվել մանուկի կամ պատանու (էֆեբի) կարգավիճակից

և ենթարկվել ստորացման: «Արտաշիր Բաբական»-ում վկայություն կա նաև այն մասին, որ ախոռում Արտաշիրը երբեմն նվագել է նվագարանի (ուդ, տամբուր) վրա և երգել, որը լսելով՝ Արտավանի հարճերից մեկը սիրահարվել է նրան և օգնել, որ փախչի պալատից[24, էջ 8]: Իսկ դա նշանակում է, որ դպրոցում Արտաշիրը, բացի ամենայնից, սովորել էր նաև նվագել որոշ նվագարանների վրա ու երգել:

Ճոկան խաղի մասին տեղեկություններ կան նաև իրանական «Կավատի որդի Խոսրովը և նրա դրանիկը» (Хосров сын Кавада и его паж) աղբյուրում[9, էջ 149-156]: Ինչպես արդեն ասվել է, «Պաժ» կամ «դրանիկ» բառի տակ ենթադրվում է թագավորական պալատում ծառայողի տեսակ, «պալատական սպասավոր, պահակ» [27]: Բայց դա դրանիկի մասնագիտությունների ու գիտելիքների լրիվ թվարկումը կամ ցուցակը չէ: Ներկայանալով Կավադի որդի Խոսրով Առաջին Անուշիրվան թագավորին (531-579թթ.)՝ ապագա այս դրանիկը, ում անունը Խվաշորզոգ է, խնդրում է իրեն ծառայության ընդունել պալատում: Թագավորը սկսում է նրան հարցաքննել, որից պարզվում է, որ նա նույնպես թագավորական դպրոցներից մեկն ավարտել, «մանուկների» (պատանիների) կամ «էֆեբների» հասակային խումբ անցած (15-25 տարեկան) մեկն է: Նրա դպրոցական գիտելիքները բազմաթիվ և բազմաբնույթ հարցերի միջոցով անձամբ ստուգում, պարզում և ծառայության է ընդունում թագավորը, ինչպես ժամանակին ծառայության ընդունելիս Արտաշիրին քննել և հետո միայն ծառայության էր ընդունել արքայից արքա Արտավան Հինգերորդ Արշակունին: Եվ քննության ընթացքում բոլոր հարցերը, ինչպես հատուկ կերպով շեշտվում է այդ աղբյուրում, տրվել են դպրոցական ծրագրի սահմաններում:

Դրանիկ Խվաշորզոգի պատասխաններից պարզվում է, որ նա նշանավոր տոհմի զավակ է, և որ «պատշաճ ժամանակ» (երեխայական տարիքում) նրան տվել են դպրոցական ուսման: Այնտեղ նա դրսևորել է «**համառություն**՝ գիտություններ յուրացնելու մեջ», սովորել աղոթքներ, Խադոխտը (խոսքն Ավեստայի «Խադոխտ նասքի» մասին է, որից պահպանված հատվածն առկա է «Ավեստան ռուսերեն թարգմանությունների» վերջում) [6, էջ 408-412], Վենդիդատը (Վիդևդատը՝ Ավեստայի նասքերից մեկը), «մաս առ մաս լսել Զենդը (Զենդ-Ավեստան)», որը կարելի էր «սովորել ոչ թե կարդալով, այլ լսելով»: Այս տողերից կարելի է եզրակացնել, որ Խոսրով Առաջին Անուշիրվանի թագավորման ժամանակ Ավեստան դեռևս գրառված (վերագրառված) չի եղել, ինչպես երբեմն պնդում են [6, էջ 30], և այդ ժամանակ այն շարունակել են սովորել միայն լսելով:

Դրանիկը հայտնում է նաև, որ նա «կարող է գրագրել և լավ, և որ ինքն արագ գրող դպիր է», դպրոցում նաև սովորել է գիր, գրականություն, նարդի և շախմատ խաղալ, յուրացրել է աստղերի ու մոլորակների շարժի մասին գիտությունը (կանխագուշակության արվեստը), ինչպես նաև լավ ձիավարել և նետահարել, նիզակ նետել և սրամարտել: Նրա խոսքերից պարզվում է նաև, որ սովորել է ոչ միայն պալատների ու ամրոցների պահպանության, թագավորներին ու իշխաններին որսի

ու հանդիսությունների ժամանակ ուղեկցողի մասնագիտությունը, այլև խոհարարություն և թագավորներին ու իշխաններին սեղանի շուրջ սպասարկելու արվեստը: Նա հայտնում է, որ դպրոցում սովորել է նաև նվագել տարբեր նվագարանների վրա (և երգել): Իսկ դա իսկապես նշանակում է, որ Արտաշիրը նույնպես նվագելը և երգելը սովորել էր դպրոցում: Եվ որ այնտեղ ուսուցանել են նաև երգ ու երաժշտություն (նույնպիսի դպրոցում էլ Մեսրոպ Մաշտոցը սովորել էր երգեցողություն): Վերջում էլ դրանիկը հպարտությամբ հայտնում է, որ «լավագույնս գիտի ձիավարել և «ձիարձակարան»-ում (ристалище) **չոուգան** խաղալ ձիով և առանց վայրկյան իսկ կորցնելու կարող է բարձրանալ ընկերուհու (ձիու) վրա ու խփել մականով (գնդակին): Եվ մականով (ճոկանով) խփած նրա բոլոր հարվածները հասել են հարկավոր տեղ» [9, էջ 149-156]:

Այսպիսով՝ պարզվում է նաև, որ թագավորական դպրոցներում ուսանած աշակերտները, ի լրումն Քսենոփոնի հայտնած տեղեկությունների, սովորել են նաև աստղագիտություն (աստղահմայություն, այն է՝ կանխագուշակության արվեստը), խոհարարական գործ, ճաշկերույթների ժամանակ թագավորներին, իշխաններին սպասարկելու և կերակուրներ մատուցելու արվեստը, պատասխանատվություն կրել ուտելիքի որակի, քանակի, մատակարարման համար, ինչպես նաև սովորել են երգել, նվագել զանազան նվագարանների վրա, պարել: Պարզվում է, որ նրանք սովորել են նաև գիր, դպրության արվեստ, ինչպես նաև Ավեստան՝ լսելու միջոցով: Հաստատվում է նաև, որ աշակերտները դպրոցներում իսկապես սովորել են ճոկան խաղալ, ձիավարել, որսորդություն անել, դրա ընթացքում ուղեկցել թագավորին՝ ապահովելով նրա ու նրա ընտանիքի անդամների անվտանգությունը:

«Կավատի որդի Խոսրովը և նրա դրանիկը» աղբյուրում առկա տեղեկությունները խիստ կարևոր են, հավաստի, և դրանցով լրացվում են Քսենոփոնի ու «Արտաշիր Բաբականի» հաղորդած տեղեկությունները թագավորական դպրոցների, դրանցում դասավանդվող գիտությունների, ինչպես նաև ճոկան խաղի մասին: Մասնավորապես պարզվում է, որ դրանիկ Խվաշորզոգը, ինչպես Արտաշիրը, նույնպես ճոկան խաղը սովորել է դպրոցում, և եղել են հատկապես այդ խաղի համար կահավորված ասպարեզներ՝ կոչվող «ձիարձակարան» (ристалище): Իսկ դա նշանակում է, որ դպրոցներին կից եղել են հատուկ կահավորված սպորտային դաշտեր՝ տեղակայված քաղաքների հրապարակներում, պալատների բակերում, ռազմական ճամբարներում: Դրանցում մարզվել են դպրոցական երեխաները, իսկ սպորտային-թիմային խաղերին մասնակցել են դպրոցն ավարտած պատանիները:

Եվ այն ժամանակ, երբ հունական և հռոմեական կրկեսներում գլադիատորները մարտնչում էին հանուն իրենց կյանքի փրկության և հակառակորդին սպանելու տենչով տարված, Իրանում և Հայաստանում մարզիկները ճոկան էին խաղում: Կարելի է կարծել, որ այդ խաղը եղել է շատ սիրված, դիտարժան, և այն դիտելու համար հավաքվել են մեծ թվով հանդիսատեսներ: Գուցե խաղը դիտելը նաև վճարովի է

եղել: Բացի այդ, այս աղբյուրից պարզվում է նաև, որ խաղի ժամանակ թիմի անդամները փոխարինել են միմյանց, և դրա ժամանակ կարևոր է եղել «առանց վայրկյան իսկ կորցնելու՝ բարձրանալ ընկերուհու (ձիու) վրա»: Կարևորվել է նաև մականով գնդակին ժամանակին խփելը, և ձգտելը, «որպեսզի մականով խփած բոլոր հարվածները հասնեն հարկավոր տեղ»: Այսինքն՝ կարևորվել է գոլ խփելը:

Հինգերորդ դարի պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկից պարզվում է, որ Ճոկան կամ մականախաղ են խաղացել նաև Հին Հայաստանում: Այդ խաղի, ինչպես նաև ձիարձակարանների մասին հիշատակված է նրա այդ երկի երկրորդ բաժնի ԿԹ, Հ և ՀԱ, ԾԱ գլուխներում [17, էջ 456]: Խորենացին գրում է, որ Հայաստանում եղել են ձիարշավների, մականախաղի (ճոկանախաղի) համար նախատեսված հրապարակներ, որոնք կոչվել են «ձիարձակարաններ»: Այդտեղ հայ իշխանները պարբերաբար խաղացել են մականախաղ (ճոկան): Նրա գրքում պահպանվել է ճոկան խաղի նկարագրությունը, որին մասնակցել է նաև հայոց Շապուհ թագավորը (Հազկերտ Առաջին թագավորի որդին՝ Հայաստանում թագավորած 416-420թթ.): Այդ մասին Խորենացին գրում է. «Այլ երբեմն ի **մականական խաղուն** երկիցս պատահեաց Շաւասպայ Արծրունւոյ զգնդակն հանել ի Շապհոյ: Եւ նորա ածեալ նմա **մականաւն**՝ ասէ. «ծանի՛ր զքեզ»: Այսպիսով՝ պարզվում է, որ Շապուհ արքան, ինչպես Արտավան Հինգերորդի որդին, եղել է նախանձ և վրիժառու անձ: Եվ երբ իշխան Շավասպ Արծրունին նրանից մականով (ճոկանով) խլել է գնդակը, դրա համար նա իր մականով հարվածել է հայ իշխանին և պահանջել, որ նա իր չափը ճանաչի: Հայ իշխանը նրան պատասխանել է հետևյալ կերպ. «այո՛ ասէ ճանաչէմ և զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ, և ունիմ **իշխանութիւն ընդ եղբարս քո զբարձն արքայի համբուրել, որպէս և անուանակոչեցեալ եմ:** Եւ զայս ասացեալ յոյժ քամահրաբար, ի **ձիարձակարանէն** արփայագնաց լինէր» [17, էջ 410]: Խոսքը նույն մականախաղի կամ ճոկան խաղի մասին է՝ դրա համար հատկապես կառուցված մարզահրապարակում՝ «**ձիարձակարանում**»: Եվ պարսկազգի հայոց արքա Շապուհը Շավասպ իշխանին հարվածել է հենց ճոկանախաղի ճոկանով, որով խաղացողները իրարից խլում և հարվածում էին գնդակին: Այս տողերից պարզվում է նաև, որ խաղը իսկապես էլ եղել է թիմային, և հակառակորդ թիմերի անդամները, ձիերի վրա նստած, ճոկաններով իրարից խլել են գնդակը՝ այն «հարկավոր տեղ» հասցնելու համար:

Այդ ամենը նշանակում է նաև, որ այս Շավասպ Արծրունին (ինչպես նաև ինքը՝ Շապուհը), ճոկան խաղալու համար պետք է ավարտած լիներ թագավորական դպրոցը և ունենար որսորդության, պատերազմելու, պարեկապահակային ծառայության, թիկնապահության, ճոկան խաղալու վկայական: Այլապես նա չէր կարող լինել թիկնապահ, դրանիկ և ճոկան խաղալ:

Ամփոփելով ասվածը՝ պետք է նորից շեշտել, որ ճոկան խաղը և զանազան այլ մասնագիտություններ և արվեստներ պարսիկ և հայ երեխաները սովորել են

թագավորական դպրոցներում: Առանց այդպիսի դպրոց ավարտելու, այդ մասին վկայական ունենալու և ծառայության ընդունվելիս համապատասխան քննություն հանձնելու մանուկները կամ պատանիները այդ խաղին մասնակցելու իրավունք չէին կարող ունենալ, և նրանք դա խաղացել են առնվազն մ.թ.ա. 6-րդ դարից սկսած: Իսկ եթե նկատի ունենանք, որ հայերը շատ ավելի առաջ են ձիեր բուծել և հեծելազոր ունեցել, քան պարսիկները, որի մասին վկայում է նույն ինքը՝ Քսենոփոնը, և ոչ միայն նա[1], ապա այդ խաղը հայերից է անցել պարսիկներին, և ոչ թե հակառակը:

Ինչ վերաբերում է ադրբեջանցի թուրքերին, ապա նրանք եկել, Հայաստանի զանազան տարածքներում տեղավորվել են շատ ավելի ուշ՝ 14-15-րդ դարերում [2-5, 16]: Նրանք ազգային Ճոկան խաղ չեն ունեցել և չեն խաղացել: Նման ապացույցներ չկան: Եվ ադրբեջանական-թուրքական լեզվում «չովգան» բառ չի եղել: Իսկ վերջին տարիներին այդ երկրում կազմակերպված ճոկանի ցուցադրական մրցաշար-տուրնիրները, այդ թվում՝ 2006 թվականին Ադրբեջանի նախագահի գավաթի համար, չեն կարող հիմք և ապացույց ծառայել հիշյալ խաղը թյուրքական այդ ժողովրդի ազգային խաղ, նրա մշակույթի դրսևորում համարելու համար: Առավել ևս չկան հիմքեր այն որպես այդ ժողովրդի ոչ նյութական մշակույթի նմուշ ՅՈւՆԵՍԿՕ-ում գրանցելու համար, ինչը որ արվել է:

Օգտագործված գրականություն

1. **Ксенофонт.** Киропедия. М., «Наука», 1976.
2. **Дьяконов И. М.** История Мидии от древнейших времен до конца IV в. до н. э. М.- Л., Изд-во АН СССР, 1956.
3. **Дяконов И. М.** История Мидии. Кн.1, Баку, 2012.
4. **Дандамаев М. А**. История Мидии. М.-Л., 1956.
5. **Рагозина З. А**. История Мидии, второго Вавилонского царства и возникновения Персидской державы. Изд.: А. Ф. Маркса, 1903.
6. Авеста в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел **И. В. Рака.** СПб., 1998, с. 408-412.
7. Гаты Заратустры. Пер.с авестийского, вступительные статьи комментарий и приложения **И. М. Стеблин-Каменского.** СПб, 2009, с. 26-30.
8. Книга деяний Ардашира, сына Папака. Транскрипция текста, пер. со среднеперс., введ., коммент. и глоссарий **О. М. Чунаковой.** М., Главная редакция восточной литературы издательства «Наука»,1987, с. 67.

[1] **Ксенофонт.** Киропедия. М., «Наука», 1976, с. 11, 23-24: Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 456, **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 305, **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 80, 98:

9. Хосров, сын Кавада, и (его) паж// Пехлевийская божественная комедия. Книга о праведном Виразе (Арда Вираз Намаг) **и другие тексты**. Введение, транслитерация пехлевийских текстов, перевод и комментарий **О. М. Чунаковой.** М., 2001, с.149-156.

10. **Тойнби А. Дж.** Постижение истории. Сборник. «Прогресс» М., 1991.

11. **Фрай Р.** Наследие Ирана, 2-е изд., М., "Восточная литература", 2002, с. 285

12. **Страбон.** География в 17 книгах. Перевод, статья и комментарий Г. А. Стратановского. Под общей ред. проф. С. Л. Утченко. «Наука», М., 1964, с. 495.

13. **Шнирельман В. А.** Войны памяти, мифы, идентичность и политика Закавказья. М., ИКЦ, „Академкнига", 2003.

14. **Шнирельман В. А.** Ну зачем же припысивать господствующие в Азербайджане взгляды "мировой науке". газета "Голос Армении", 7 апреля 2016.

15. **Айвазян Григорий**. О термине "азербайджанцы", судьбах коренного населения Азербайджана и подлинных предках современных азербайджанцев. Պատմա-բանասիրական հանդես, 2013, № 1, էջ 104-119.

16. **Бартольд В. В**. Краткий обзор истории Азербайджана//Сочинения, т. 2., ч.1. М., „Наука", 1971.

17. **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981:

18. Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 456:

19. Հայ Ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 2, Երևան, 1984, էջ 24, 27, 29-31:

20. **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 305:

21. **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 80, 98:

22. **Խաչատրյան Սամվել,** «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ (քննություն ապացուցման տեսության հիման վրա), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1919:

23. **Խաչատրյան Ս. Ա.,** Հայոց Տրդատ Առաջին և Սանատրուկ թագավորների անձի նույնության շուրջ (ուսումնասիրություն իրավաբանական և տրամաբանական ապացուցման եղանակներով ու մեթոդներով), «Արդարադատություն» գիտական հանդես, 2018:

24. **Խաչատրյան Սամվել,** «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ, երկրորդ հրատ., Երևան, «Լուսաբաց», 2020:

25. Արտաշիր Բաբական. Կարնամակ, պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց դոկտ. **Յ. Թիրեաքեան,** «Բանասեր», հատոր «Ե», Փարիզ, 1906, էջ 6-7, 47-48, 54:

26. **Աճառյան Հր.,** Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 1977, էջ 210:

27. **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** Բառգիրք հայերէն լեզուի: Պէյրութ, 1998: Էջ 103:

28. **Մալխասեանց Ս. Տ.,** Հայերեն բացատրական բառարան, չորս հատորից, հ.1, Երևան, 1945, էջ 544:

29. **Khachatryan A. Samvel,** Ghildren, Yoats, Aults and Elders in Zoroastrian and earli Christian Armenia. European Journal of Humanities and Social sciences, № 3, Vienna, 2018, p. 156-165:

ABOUT GAME OF "CHOKAN"

KHACHATRYAN SAMVEL
Candidate of Law, Associate Professor,
GSU Lecturer

The falsification of the history in Azerbaijan has become the policy of the state. Azerbaijanis are claimed to be an autochthonous nation, the heirs of the Albanian tribes that have once inhabited part of the territory of present-day Azerbaijan. With the aim of appropriating the Armenian historical and cultural heritage, the equestrian sports game chokan (chovgan) is said to be an "ancient Azerbaijani" game. Moreover, in 2013, through the efforts of the Azerbaijani authorities, the game was inscribed on UNESCO's World Heritage List as an intangible cultural heritage of the Azerbaijani people.

In the article the author proves that chokan has never been and couldn't be an ancient Albanian, moreover an "ancient Azerbaijani" game. The game had been played in Armenia and Iran long before the ancestors of Azerbaijanis, the Turkic nomadic tribes of Kara-Koyunlu and Ak-Koyunlu, had come and settled on the territory of Armenia and Iran in 14-15th centuries. Armenian and Iranian boys were taught this game at school alongside other subjects, such as grammar, astrology, music, military science and hunting. In particular, at the end of the 3d century A.D., the sons of Persian King of Kings Ardavan V as well as the future King of Iran Ardashir I of the Sassanid dynasty played this equestrian game. Armenian King Shapur, Prince Shavasp Artsruni and many others played this game in Armenia in the 5th century A.D.

The author also proves that horses had been bred in Armenia much earlier than in Iran. And, therefore, it can be assumed that the Armenians began to play the game of chokan before the Persians did.

Keywords: Chokan, chovgan, chopgan, horse, hunting, Iran, Armenia, Kiros II, Ardashir, Shapuh, Shavasp Artsrouni.

ОБ ИГРЕ "ЧОКАН"

ХАЧАТРЯН САМВЕЛ
Кандидат юридических наук, доцент,
Преподаватель ГГУ

Фальсификация истории в Азербайджане стала политикой государства. Голословно утверждается, что азербайджанцы являются автохтонным народом, наследниками албанских племен, некогда населяющих часть территории нынешнего Азербайджана. С целью присвоения армянского исторического и культурного наследия утверждается, что конная спортивная игра чокан (човган) является "древнеазербайджанской" игрой. Более

того, власти Азербайджана в 2013 году сомнительными методами добились того, что эта игра была внесена в список ЮНЕСКО как нематериальное культурное наследие азербайджанского народа.

Мы доказываем, что игра чокан не была и не могла быть древнеалбанской, а тем более – "древнеазербайджанской" игрой. В чокан играли в Армении и Иране задолго до того, как предки азербайджанцев – тюркские кочевые племена Кара-Коюнлу и Ак-Коюнлу, в 14-15 веках пришли и осели на территории Армении и Ирана. Этой игре иранские и армянские мальчики обучались в школах, наряду с другими науками: грамматикой, астрологией, музыкой, военным делом, охотой. В частности, в конце 3-его века н. э. в эту конную игру играли сыновья царя царей Ирана Артавана Пятого и будущий царь Ирана Арташир Первый Сасанид. В Армении в 5-ом веке в эту же игру, на специальном ристалище, играли армянский царь Шапур, князь Шавасп Арцруни и др.

Доказывается также, что в Армении намного раньше, чем в Иране, начали разводить лошадей. И, следовательно, можно предположить, что армяне раньше персов начали играть в чокан.

Ключевые слова: *Чокан, човган, чопган, маканахах, конь, лошадь, охота, Иран, Армения, Кир Второй, Арташир, Шапур, Шавасп Арцруни.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 30.09.2020թ.:

ՀԱՐԵՎԱՆԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՄԻՐՅԱՆ ԱՆԻ
ԳՊՀ դասախոս
e-mail: a.amiryan@gsu.am

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում հարևանային հարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցերին:

Հարևանային հարաբերությունների բնագավառում առկա են բազմաթիվ վեճեր, խնդիրներ և անորոշ իրավիճակներ, որոնք, արդարադատության լավագույն շահերից ելնելով, պահանջում են հստակ իրավակարգավորումներ, որոնցով էլ պայմանավորված է իրավունքի այս ինստիտուտի՝ Հարևանային իրավունքի ներդրումը ՀՀ իրավական համակարգում:

Հոդվածում ուսումնասիրման առարկա են դարձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Հարևանային իրավունք» 14.2-րդ գլխի նորմերը, քննարկվում են հարևան հողամասերի կամ այլ անշարժ գույքի փոխադարձ ազդեցության, ջրօգտագործման, բաժանագծի անցկացման և հարևանների միջև ծագող այլ հարաբերություններ կարգավորող դրույթները: Կատարվել է «Հարևանային իրավունք» ինստիտուտի էության, համանման իրավական կառուցվածքների հետ հարաբերակցության վերլուծություն, ձևակերպվել է հարևանային իրավունքի հասկացությունը՝ որպես հարևանների շահերից բխող սեփականության իրավունքի սահմանափակում, հետազոտվել են նման հասկացության սահմանման տարբեր մոտեցումներ:

Հոդվածում առաջարկ է արվում մի շարք փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև վերաբերելի ենթաօրենսդրական ակտերի մեջ:

Բանալի բառեր՝ հարևան, հարևանային հարաբերություններ, փոխադարձ հարգանք, ազդեցություն, սեփականություն, սեփականության իրավունքի սահմանափակում, իրային իրավունք, սերվիտուտ, պրոհիբիտոր հայց:

«Հարևանային իրավունք» հասկացությունը վաղուց հայտնի է մարդկային քաղաքակրթությանը: Դեռևս Հին հռոմեական իրավունքում եղել են հարևանային հարաբերությունները կարգավորող նորմեր: Հռոմեական իրավունքի նորմերը փոխառվել են բազում իրավակարգերի կողմից, կատարելագործվել և հարմարեցվել են այս կամ այն պետության սոցիալ-տնտեսական համակարգին: Սակայն պետք է նշել, որ հարևանային իրավունքի՝ որպես քաղաքացիա-իրավական ինքնուրույն ինստիտուտի ձևավորումը երկարատև ուղի է անցել: Այն կարելի է վերագրել 19-րդ դարի վերջերին, երբ ընդունվեց Գերմանական քաղաքացիական օրենսգիրքը (1898թ.), Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգիրքը (1910թ.), որոնցում հարևանային իրավունքի նորմերը

համակարգված և դասակարգված էին հատուկ բաժիններում: Գերմանիայի քաղաքացիական օրենսդրությամբ՝ բնակելի տարածությունների սեփականատերերը պետք է դրանք այնպես օգտագործեն, որպեսզի իրենց գործողություններով կարգավորված համակեցության սահմաններից դուրս եկող անհարմարություններ չառաջացնեն մնացած սեփականատերերի համար[1]: Հատկանշական է, որ գերմանական իրավական ակտերում չկա «կարգավորված համակեցության սահմանների» որևէ բացատրություն, մինչդեռ այդ սահմանները սովորույթի ուժով հայտնի են բոլորին:

Նմանատիպ դրույթներ նախատեսված են նաև Շվեյցարիայի, Կանադայի, Հոլանդիայի, Վրաստանի և Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքերի՝ հարևանային հարաբերությունները կարգավորող գլուխներում:

Մուսուլմանական իրավունքում հարևանային իրավունքին վերաբերող կարգավորումները բոլորովին այլ են: Այնտեղ անձն իր հարևանի նկատմամբ ունի երեք պարտականություն՝ պաշտպանել նրա շահերը, երբ նա բացակայում է, հարգել նրան, երբ նա ներկա է, և օգնել նրան, երբ նա բախվում է անարդարության հետ: Նրանց օրենքներով՝ ուղղահավատ մահմեդական չի կարող համարվել այն անձը, ով կուշտ է և հանգիստ քնում է, երբ գիտի, որ իր հարևանը քաղցած է քնում[2]:

Հայ միջնադարյան իրավագետ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ևս անուղղակիորեն կարգավորել է հարևանային իրավունքին վերաբերող հարաբերությունները: Օրինակ՝ «եթե պատահի, որ մեկը առվով ջուր բերի որևէ գործի կամ այգին ոռոգելու համար, իսկ այդ պատճառով ջուրը վնասի ընկերոջ այգին կամ անդաստանը, կամ նրա բնակության մեջ որևէ այլ բան, ապա, եթե նախապես զգուշացրեց, որ ընկերն ուշադիր լինի և ինքն էլ իր հերթին ուշադիր եղավ և ականմա ինչ վնաս որ գործեց, այդժամ վնասի կեսը հատուցի: Իսկ եթե ծուլացավ, անփույթ եղավ և չզգուշացրեց, ողջ վնասը վճարի, մանավանդ, եթե թշնամությամբ է արել: Սակայն քննվի՝ ի՞ր պատճառով էր, թե վարձկանների, մասնակի՞ էր, թե ամբողջությամբ, գիշերո՞վ էր, թե՞ ցերեկով և այլն. այդպես դատեն[3]»:

Մինչ օրս հայ իրավական համակարգում բացակայում էր հարևանային հարաբերությունները կարգավորող հատուկ քաղաքացիաիրավական ինստիտուտը: «Հարևանային իրավունքի» ինստիտուտի արդիականությունը պայմանավորված է այն իրավական վեճերով, որոնք առաջանում են հարևան հողամասերի կամ այլ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող անձանց միջև, միաժամանակ հարևանային հարաբերությունները կարգավորող պատշաճ իրավական կարգավորման բացակայությամբ: Հարևանների շահերի պաշտպանությանն ուղղված որոշ նորմեր՝

---

[1] Տե՛ս Германское гражданское уложение //www. wikisource.org

[2] Տե՛ս Բալասանյան Գ. , Հարևանային իրավունք. ինչպե՞ս հարաբերվել հարևանների հետ // www.hetq.am:

[3] Տե՛ս Գոշ Մ., «Դատաստանագիրք», Ռեյտինգ, Երևան, 2001, էջ 174:

բազմաբնակարան շենքի բնակիչ-սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման վերաբերյալ, տեղ են գտել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում[1], սակայն նշված իրավական ակտում նույնիսկ չի հիշատակվում «հարևան» տերմինը: Ավելին, տվյալ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են միայն անշարժ գույքերի սեփականատերերի վրա, ուստի դրա կարգավորումից դուրս են մնում բազմաբնակարան շենքի բնակարանների տիտղոսային այլ տիրապետողները: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերին, ապա նշենք, որ օրենսգիրքը չէր կարգավորում հարևանային հարաբերությունները: Այն դրույթները, որոնք որոշակի չափով ուղղված են հարևանների շահերի պաշտպանությանը, հարևան հողատարածքով անցնելու համար սերվիտուտի սահմանման վերաբերյալ դրույթներն են, ինչպես նաև վարձակալի կողմից հարևանների իրավունքների և օրինական շահերի պարբերաբար խախտման դեպքում դատական կարգով բնակելի տարածության վարձակալության պայմանագրի լուծման վերաբերյալ նորմերը:

Հարևանային իրավունքի ինստիտուտը ծանոթ չէր ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը մինչ 2018 թվականի փետրվարի 1-ը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հարևանային հարաբերությունները կարգավորող ինստիտուտի բացակայությունը կարելի էր համարել գործող օրենսդրական բացերից մեկը: Եվ դա էր պատճառը, որ անհրաժեշտություն առաջացավ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում ավելացնել 14.2 գլուխը՝ որպես սեփականատիրոջ իրավունքների սահմանափակում՝ ի շահ հարևանների (Հարևանային իրավունք): Սակայն մինչ օրս նշված ինստիտուտի բազում նորմեր մնում են դեռևս չմեկնաբանված: Հարևանային իրավունքի ոլորտում 19-րդ դարի իրավաբան գիտնականների նվաճումները նույնպես բազմակողմանիորեն ուսումնասիրված չեն: Ուստի հստակ սահմանելու համար հարևանային իրավունքը որպես ժամանակակից իրավական ինստիտուտ անհրաժեշտ է խոր վերլուծության ենթարկել այն, տալ այն հարցերի պատասխանները, թե ովքեր, որ տարածքն ու գույքն են համարվում հարևան, որտեղից և ինչ պայմաններում կարող են ծագել երկկողմ ազդեցություն ունեցող հարաբերություններ և այլն: Իհարկե, անհնար է ամեն ինչ օրենքով սահմանել ու կարգավորել: Տարբեր աշխարհայացքները, սոցիալական և այլ տարբերությունները կարող են էական ազդեցություն ունենալ այդ հարաբերությունների վրա: Օրինակ՝ ռոմանո-գերմանական իրավական համակարգը հարևանային հարաբերությունները կարգավորում է, իսկ անգլո-սաքսոնական իրավական համակարգն ավելի պասիվ է այս հարցում և հարևանային իրավունքի ինստիտուտը կարգավորում է ավելի շատ սովորույթներով ու նախադեպերով: Ապավինել միայն

[1] Տե՛ս «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենք // ՀՀ ՊՏ 2002.06.20/20(195):

դատական պրակտիկայով ձևավորվող նախադեպերին այնքան էլ «անվտանգ» չէ՝ հաշվի առնելով, որ դատարանների կողմից կայացված բազմաթիվ որոշումներ հաճախ հակասում են միմյանց: Այս հարցում հստակ օրենսդրական կարգավորում էր անհրաժեշտ: Ուստի 2018 թվականի փետրվարի 1-ին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Հարևանային իրավունք» անվանմամբ գլխում նախատեսվեցին իրավունքի այս ինստիտուտին բնորոշ նորմեր հարևանային հողամասերի կամ այլ անշարժ գույքի փոխադարձ ազդեցության, ջրօգտագործման, բաժանագծի անցկացման և այլ հարաբերությունների վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225.3 հոդվածի համաձայն՝ հարևանային է այն հողամասը կամ ցանկացած այլ անշարժ գույք, որը որևէ եղանակով ազդեցություն ունի մեկ այլ հողամասի կամ ցանկացած այլ անշարժ գույքի վրա:

Հարևանային համարվող անշարժ գույքի սեփականատերերը, ինչպես նաև օրինական տիրապետողները, բացի օրենքով նախատեսված իրավունքներից և պարտականություններից, ունեն փոխադարձ հարգանք ցուցաբերելու պարտականություն[1]: Օրենսգիրքը, սահմանելով հարևանների կողմից փոխադարձ հարգանք դրսևորելու սկզբունքը, միտված է հարևանային հարաբերությունների հստակեցմանը և հարևանների միջև ծագող վեճերի կարգավորմանը, որոնք չեն կարգավորվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ ինստիտուտներով և նորմերով: Անդրադառնալով ՀՀ Քաղաքացիական օրեսնգրքի դրույթներին՝ պետք է նշել, որ այստեղ հստակեցվել են հարևանների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, թույլատրելի ազդեցության չափը, հողամասի վրա ընկած ծառերի կամ թփերի պտուղների նկատմամբ սեփականության հարցը, ինչպես նաև հարևան տարածքից արմատների և ճյուղերի անցումը այլ հողամաս, սահմանվել են կարգավորումներ ջրօգտագործման կանոնների, հարևան հողամասերի վիճելի սահմանների և սահմանակից կառույցների ընդհանուր օգտագործման վերաբերյալ և այլն:

Մասնավորապես, օրենսգրքում սահմանված է, որ հարևանը չի կարող փոխել ջրերի հոսքերի օգտագործումն այնպես, որ խաթարվի հարևան սեփականատիրոջ կողմից այդ հոսքերի բնականոն օգտագործումը: Բացի այդ, նախատեսվել է, որ տանիքը այնպես պետք է կառուցվի, որ ջուրը, սառույցը կամ ձյունը թափվեն սեփականատիրոջ հողամասի վրա:

Հստակեցվել է, որ հարևան հողամասի վրա ընկած ծառերի կամ թփերի պտուղները այդ հողամասի պտուղներն են: Անդրադարձ է կատարվել նաև այն դեպքերին, երբ հարևան սեփականատիրոջ ծառի կամ թփի արմատները կամ ճյուղերը ներթափանցում են մյուս հարևանի հողամաս: Այս դեպքում հարևանը իրավունք կունենա կտրելու և իրեն վերցնելու ճյուղերն այն դեպքում, երբ կծանուցի հարևանին այդ մասին, և վերջինս որևիցե գործողություն չի կատարի այդ ուղղությամբ:

[1] Տե՛ս ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 225.3 // ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50):

Կարգավորվել են այն իրավիճակները, երբ հարևանները չեն կարող որոշել իրենց հողամասերը բաժանող ստույգ սահմանը: Այս դեպքում որոշիչ կլինի հարևանների կողմից փաստացի տիրապետումը, իսկ եթե հնարավոր չէ որոշել նաև փաստացի տիրապետումը, ապա յուրաքանչյուր հողամասին միացվում է վիճելի տարածքի հավասար մասը[1]: Նախատեսվել են կանոններ, որոնք վերաբերում են սահմանակից կառույցների ընդհանուր օգտագործմանը: Սահմանակից կառույցներ կարող են լինել պատը կամ ցանկացած այլ բաժանիչ, որն առանձնացնում է երկու հողամասերը: Ներլայնացված կարգավորումներով հողամասերը բաժանող պատը կամ այլ բաժանիչ կարող է սեփականատերերի համաձայնությամբ կամ դատարանի վճռով համարվել ընդհանուր բաժնային սեփականություն: Այս կանոնը կարգավորում է այն դեպքերը, երբ երկու հողամաս բաժանող պատը կամ այլ բաժանիչը սեփականության իրավունքով չի պատկանում հարևաններից մեկին:

Սակայն, պետք է նշել, որ քաղաքացիական իրավունքի գիտությունում և ՀՀ քաղաքացիական օրենսգիրքում չեն բացահայտվում «հարևան» և «հարևանային հարաբերություններ» հասկացությունները: Ժամանակակից ռուսական դոկտրինայում, որպես կանոն, տրվում է հարևանային իրավունքի սահմանումը՝ որպես ինքնուրույն իրավական երևույթ: Բացի այդ, քաղաքացիական իրավունքի տեսության մեջ ևս չկա միասնական մոտեցում հարևանների շահերից բխող սեփականության իրավունքի սահմանափակումների սահմանման վերաբերյալ: Հարևանային իրավունքի բնութագիրը, որը հիմնված է օտարերկրյա իրավական կարգավորումների վրա, տվել է Ի. Ա. Եմելկինան: Նա գրում է. «Ներկայումս մայրցամաքային Եվրոպայի երկրների քաղաքացիական օրենսգրքերի հատուկ դրույթներ նվիրված են հարևանային հարաբերությունների կարգավորմանը: Որպես կանոն, արտասահմանյան իրավակարգավորումները չեն պարունակում հարևանային իրավունքի հստակ բնորոշումներ: Այնուամենայնիվ, օրենսդրական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ «հարևանային իրավունքը» սահմանվում է որպես քաղաքացիաիրավական նորմերի համակցություն, որը սահմանում է հարևան հողատարածքի վրա հողամասի սեփականատիրոջ թույլատրելի ազդեցության ձևերը, դրա սահմանները, հարևանի պարտավորությունը՝ հանդուրժելու այդ ազդեցությունը, ինչպես նաև կարգավորում է հարևանների միջև փոխհարաբերությունները, եթե սեփականատերը գերազանցում է սահմանված սահմանները, պաշտպանության կարգը և մեթոդները»[2]: Նա նաև նշում է, որ արտասահմանյան երկրների քաղաքացիական օրենսգրքերը պարունակում են ավելի ընդարձակ իրավակարգավորման նորմեր:

---

[1] Տե՛ս ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 225.7-225.10 // ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50):

[2] Տե՛ս И. А., Емелькина Институт ограничения прав собственности в пользу соседей (соседское право) в российском праве и в праве отдельных европейских стран // Вестник гражданского права,. 2016, № 2; Право собственности: актуальные проблемы / отв.ред. В. Н. Литовкин, Е. А. Суханов, В. В. Чубаров., М., Статут, 2008, էջ 229:

Այսպես, Գերմանական քաղաքացիական օրենսգրքում հարևանային իրավունքին նվիրված են 906-ից 924-րդ հոդվածները, Շվեյցարիայինը՝ 669-ից 701-րդ հոդվածները, սակայն Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգիրքը որևէ դրույթ չի պարունակում՝ ուղղված հարևանային հարաբերությունների իրավական կարգավորմանը:

Ինչպես ընդունված է իրավակիրառ պրակտիկայում, հարևանային իրավունքի կարգավորման առարկա են հանդիսանում կից գտնվող հողատարածքների (բազմաբնակարան շենքերի բնակարանների կամ այլ կառույցների) սեփականատերերի կամ օրինական օգտագործողների /վարձակալներ, համասեփականատերեր/ միջև ծագած հարաբերությունները: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ հարևանային իրավունքը դիտարկվում է երկու իմաստով.

- նախ՝ որպես սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակում՝ ի շահ հարևանի, որը ներառում է հողամասի սեփականատիրոջ պարտականությունը՝ հանդուրժելու հարևան տարածքից գազերի, գոլորշիների, հոտերի, ծխի, մրի, ջերմության, աղմուկի, ձայնի տատանումների և նման այլ ազդեցությունը, եթե այն չի խոչընդոտում իր անշարժ գույքի օգտագործումը, կամ պայմանավորված է գույքի՝ տվյալ տարածքին բնորոշ ձևով բնականոն օգտագործմամբ, կամ այդպիսի ազդեցությունն աննշան է,
- երկրորդ՝ որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ, այն է՝ հողամասի օրինական սեփականատիրոջ սեփականության իրավունքը սահմանափակող քաղաքացիաիրավական նորմերի ամբողջություն՝ ի շահ հարևանի՝ սահմանների (արգելքներ, կաշկանդումներ) և, համապատասխանաբար, տվյալ իրավունքի իրականացման ձևերի, ինչպես նաև սահմանված սահմանափակումներից դուրս գալու դեպքում դրա պաշտպանության եղանակների և սահմանված սահմաններից դուրս գալու հետևանքների այլընտրանքային կարգավորման ձևով:

Հարևանային իրավունքի հասկացությանն անդրադառնալիս Օ. Ա. Խալաբուդենկոն նշում է, որ սեփականատիրոջ իրավազորության սահմանափակումները պետք է տարբերել իրավունքի իրականացման իրավական սահմանափակումներից, նույնական սահմաններից, որոնք վերաբերում են սեփականության իրավունքի իրականացմանը և կապված չեն շահագրգիռ անձի կոնկրետ հավակնության հետ: Հեղինակը ոչ տեղին է համարում «սեփականության իրավունքի սահմանափակում» ձևակերպումը: Նրա կարծիքով՝ ցանկացած սահմանափակում վերաբերում է սեփականատիրոջ իրավազորություններին և չի կարող շոշափել սեփականության էությունը[1]: Սակայն ներկայացվում է, որ առանց սեփականության իրավունքի սահմանափակման հնարավոր չէ սեփականատիրոջ իրավասությունների սահմանափակում: Այս հասկա-

[1] Տե՛ս Халабуденко О. А. Имущественные права, Кн. 1, Вещное право., Кишинев: Междунар. независимый ун-т Молдовы, 2011, էջ 130:

ցությունները պետք է համապատասխանեն որպես պատճառ և հետևանք: Այնուամենայնիվ, «սեփականատիրոջ իրավունքների սահմանափակում» ձևակերպումը համարում ենք թույլատրելի, սակայն ոչ լիարժեք և իրավական էությանը չհամապատասխանող երևույթներ:

Սեփականության իրավունքի սահմանափակումները հետաքրքրություն են առաջացրել ինչպես ռուս նախահեղափոխական, այնպես էլ ժամանակակից իրավագետների շրջանում:

Վ. Պ. Կամիշանսկին նշում է, որ սեփականության իրավունքի սահմանափակումները պետք է բաժանել երկու ընդգրկուն խմբի, որոնք պետք է ուղղակիորեն նախատեսվեն օրենքում. դրանցից մեկում պետք է ներառել սեփականատիրոջ իրավունքների սահմանափակումները՝ ի շահ ողջ հասարակության, իսկ մյուսում՝ սեփականատիրոջ իրավունքների սահմանափակումները՝ ի շահ առանձին անձանց (օրինակ՝ հարևանների, բարեկամների, համասեփականատերերի)[1]:

Հանրային շահերից ելնելով՝ սահմանափակումները հայտնի են եղել դեռևս Հռոմեական իրավունքին, ինչպես նաև ռուսական նախահեղափոխական իրավունքին: Տվյալ իրավական ինստիտուտները հետապնդում են տարբեր նպատակներ: Հանրային իրավունքի նորմերը միտված են պաշտպանելու ողջ հասարակության շահերը, իսկ հարևանային իրավունքի նորմերն ուղղված են պաշտպանելու մասնավոր անձանց, որոնք և հանդիսանում են հարևաններ[2]: Նրանց մոտ տարբեր է նաև իրավական կարգավորման և պաշտպանության կառուցակարգը. հանրային շահի սահմանափակումներ նախատեսող նորմերը հիմնականում վերաբերում են քաղաքաշինական, բնապահպանական, վարչական և հանրային այլ ոլորտներին և պաշտպանվում են առաջին հերթին վարչահրամայական մեթոդով, մինչդեռ հարևանային իրավունքը կանոնակարգվում է քաղաքացիական օրենսդրության նորմերով և, համապատասխանաբար, պաշտպանվում է իրավունքների պաշտպանության քաղաքացիական իրավունքով նախատեսված եղանակներով: Սակայն կարևոր է նշել, որ հարևանային իրավունքը, հանդիսանալով սեփականատիրոջ իրավունքի սահմանափակումների ինքնուրույն տեսակ, մի շարք ընդհանրություններ ունի հանրային շահով պայմանավորված սահմանափակումների հետ: Այստեղ պետք է բերենք ռուսական դոկտրինում ձևակերպված եզրակացությունները:

Վ. Պ. Կամիշանսկին, վերլուծելով խնդրո առարկային վերաբերող արտասահմանյան իրավագետների հայացքները, ներկայացնում է սեփականության իրավունքի

---

[1] Տե՛ս Камышанский В. П., Пределы и ограничения права собственности: монография, Волгоград, Волгоград, юрид. ин-т МВД России, 2000, էջ 118:

[2] Տե՛ս Курдиновский В. И., К учению о легальных ограничениях права собственности на недвижимость в России, Одесса, 1899, էջ 384:

սահմանափակումների երկու հատուկ դասակարգում: Ըստ սեփականության իրավունքի սահմանափակման ծավալի՝ այն կարելի է բաժանել երկու խմբի.

- սահմանափակումներ, որոնք կաշկանդում են սեփականության իրավունքն իր ամբողջ բովանդակությամբ,
- սահմանափակումներ, որոնք կաշկանդում են սեփականության իրավունքը դրա առանձին բաղկացուցիչ մասերում:

Վերոնշյալ սահմանափակումների երկրորդ խումբը, իր հերթին, կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- սահմանափակումներ, որոնց արդյունքում սեփականատերը պետք է ինչ-որ բան հանդուրժի (pati),
- սահմանափակումներ, որոնց պատճառով սեփականատերը պետք է ինչ-որ բան չանի (non facere),
- սահմանափակումներ, որոնց պատճառով սեփականատերը պարտավորվում է իր սեփականության իրավունքի օբյեկտի նկատմամբ կատարել դրական գործողություններ (facere)[1]:

Կարծում ենք, ներկայացված դասակարգումը կարելի է կիրառել նաև հարևանների շահերից բխող սեփականության իրավունքի սահմանափակումների նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել հարևանային իրավունքին բնորոշ առանձնահատկությունը. **սեփականատիրոջ իրավասությունների ծավալը սահմանափակվում է միայն տիրապետման և օգտագործման իրավունքների իրականացման ոլորտում՝ չանդրադառնալով տնօրինման իրավասությանը:**

Պետք է նաև արձանագրել, որ հարևանային իրավունքը՝ որպես սեփականության իրավունքի սահմանափակում, չի կարող հանդես գալ իրային իրավունքով, չի տրամադրում ուրիշի իրի նկատմամբ ինքնուրույն իրավունք, հետևաբար այն չի կարող որևէ կերպ վաճառվել կամ զիջվել, չունի իրին և իրային իրավունքներին բնորոշ այլ առանձնահատկություններին հետևելու հատկություն[2]:

Կարգավորելով հարևան հողամասերի սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները՝ քաղաքացիական օրենսդրությունը պետք է ելնի նրանից, որ դրանք միմյանցից տարանջատված լինեն: Չնայած այն բանին, որ օգտագործվում է «հարևանային իրավունքներ» նշումը, օրենսդիրը դրանց տակ հասկանում է առաջին հերթին այդ իրավունքների սահմանափակումները, այն է՝ սեփականատիրոջ պարտականությունները որևէ բան չանել կամ ինչ-որ բան հանդուրժել: Բացի այդ, հողամասի նկատմամբ սեփականության բացարձակ իրավունքը կարող է սահմա-

[1] Տե՛ս Камышанский В. П., О месте ограничений права собственности и соседских прав на недвижимость в Гражданском кодексе Российской Федерации // Материалы Междунар. науч.-практ. конф., посвящ. памяти проф. Мухитдинова Нажмитдина Баукеевича, Алматы, 2013, էջ 50–55:

[2] Տե՛ս Емелькина И. А., К дискуссии о разграничении вещных и обязательственных прав // Нотариус, 2016, № 1, էջ 17–19:

նափակվել հարևանի պահանջի իրավունքով. օրինակ, ընդհանուր պատի կառուցմանը մասնակցելու պահանջով, ինչը սեփական իրավունքի սովորական իրացման դեպքում սեփականատերը կարող էր չիրականացնել:

Հարևանային իրավունքի տեսանկյունից հետաքրքրական է այնպիսի մեխանիզմների մշակումը, որոնք ավելի շուտ կկրեն կանխարգելիչ բնույթ: Դեռևս Հին Հռոմում հայտնի է եղել հայցի մի տեսակ, որը կոչվել է պրոհիբիտոր հայց: Այն հանդիսացել է նեգատոր հայցի տեսակ: Սույն հայցն ուղղված է եղել պաշտպանելու անձի իրավունքներն ապագայում հնարավոր խախտումներից: Կարծում ենք, որ ՀՀ գործող օրենսդրությունը ևս ունի նման հայցի կարիք: Անհրաժեշտ է նախատեսել այդ հայցատեսակը, օրինակ՝ վերը նշված այն դեպքերի համար, երբ հարևանն իրավունք ունենա պահանջելու, որ հարակից տարածքում չկառուցվեն կամ չպահպանվեն այնպիսի կառույցներ, որոնց գոյության կամ շահագործման հետևանքներն իր հողատարածքի վրա անթույլատրելի ազդեցություն ունենան: Նշվածից ակնհայտ է, որ փոփոխություններ պիտի մտցվեն ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, քանի որ հնարավոր է, որ նախատեսվի նման հայցեր ներկայացնելու համար հատուկ վարույթ:

Իսկ ինչպիսի՞ն է **«Հարևանային իրավունքի» հարաբերակցությունը սերվիտուտի հետ:** Հարևանային իրավունքների և սերվիտուտների հարաբերակցության վերաբերյալ մայրցամաքային իրավունքում առկա են տարբեր մոտեցումներ: Գերմանական և ավստրիական իրավական համակարգերում այդ ինստիտուտները տարանջատված են, տարբերությունները հիմնավորված և շատ հստակ ամրագրված են օրենսդրության մեջ[1]: Միևնույն ժամանակ ֆրանսիական քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է հարևանային սահմանափակումները որպես սերվիտուտների տեսակ և օրինական սերվիտուտներ[2]:

Առաջարկում ենք առանձնացնել սերվիտուտից հարևանային իրավունքի շահերից ելնելով սեփականության իրավունքի սահմանափակումների սահմանազատման հետևյալ չափանիշները.

1. **ըստ ծագման և դադարեցման եղանակի.** հարևանային իրավունքները ծագում են օրենքի ուժով, իսկ սերվիտուտի հաստատման համար, որպես կանոն, անհրաժեշտ է պարտադիր պետական գրանցման ենթակա համաձայնագրի կնքում, և դադարեցումը տեղի է ունենում նույն կարգով: Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ հարևանի օգտին սեփականության իրավունքի սահմանափակումները կարող են փոփոխվել և դադարեցվել հարևանների միջև համաձայնագրի կնքմամբ: Օրինակ՝ Լ. Ա. Կասոն խոսում էր այն մասին, որ սեփականության իրավունքի օրինական սահ-

[1] Տե՛ս Гражданское уложение Германии. Вводный закон к Гражданскому уложению / Пер. с нем., науч. ред. А. Л. Маковский [и др.]б М., 2004:

[2] Տե՛ս Гражданский кодекс Франции (Кодекс Наполеона) = Code civil des Français (Code Napoléon) / пер. с фр. В. Н. Захватаева, 2012, էջ 624:

մանափակումը, որի ուժով հարևանին արգելվում է տեղադրել դեպի հարևանի տարածք նայող պատուհան, ենթադրում է հարևանների փախադարձ համաձայնություն, որի հետևանքով պատուհանները կարող են տեղադրվել[1]:

2. ըստ նպատակային ուղղվածության. սերվիտուտ հաստատելիս սերվիտուարը ձգտում է ընդլայնել իր իրավական տիրապետության ներքո գտնվող ոլորտը, իսկ հարևանային իրավունքի նպատակն է՝ պաշտպանել հողամասերի այլ սեփականատերերի շահերը:

3. ըստ առաջացրած իրավական հետևանքների՝ սերվիտուտի սահմանումը հանգեցնում է նոր իրավունքի՝ ելքի, մուտքի և այլնի առաջացման: Հարևանային իրավունքում տեղի է ունենում միայն սեփականատիրոջ կողմից արդեն գոյություն ունեցող իրավունքի սահմանափակում, կաշկանդում՝ հօգուտ հարևանի:

Հարևանի իրավունքը ինքնուրույն իրային իրավունք չէ և, համապատասխանաբար, չունի սերվիտուտի պես հետևելու հատկություն:

4. ըստ սուբյեկտների կազմի՝ սահմանափակ իրային իրավունքի սուբյեկտ (սերվիտուարիում) կարող է լինել ոչ միայն տիրապետող իրի սեփականատերը, այլև այն անձը, որին տեղամասը տրամադրվել է ցմահ ժառանգվող տիրապետման իրավունքով կամ մշտական (անժամկետ) օգտագործման իրավունքով: Հարևանային իրավունքի դեպքում, կարծում ենք, իրավունքի սահմանափակումները նպատակահարմար է կիրառել ոչ միայն սեփականատերերի, սահմանափակ իրավունքներ ունեցողների, այլև այլ փաստացի սեփականատերերի համար:

5. Ըստ օբյեկտի՝ սեփականության իրավունքի սահմանափակումները ոչ միայն տարածվում են հարակից, ընդհանուր սահմաններ ունեցող հողամասերի վրա, այլև կիրառելի են այն օբյեկտների նկատմամբ, որոնք գտնվում են որոշ հեռավորության վրա, բայց բացասական ազդեցություն են կրում մեկ այլ հողամասի կողմից:

Այսպիսով՝ սեփականատիրոջ իրավունքի սահմանափակումները՝ ի շահ հարևանի (հարևանային իրավունք) և ուրիշի հողամասի սահմանափակ օգտագործման իրավունքը (սերվիտուտ) տարբեր, ինքնուրույն հասկացություններ են, որոնք չպետք է շփոթել կամ փորձել միավորել:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ հարևանային հարաբերությունները միևնույն անշարժ գույքի, սահմանակից կամ մերձավորությամբ տեղեկայաված անշարժ գույքերի նկատմամբ իրային և / կամ պարտավորային իրավունքներ ունեցող (տիտողասյին տիրապետող) երկու և ավելի անձանց միջև առաջացող իրավահարաբերություններն են: Հարևանային հարաբերությունների մասնակից կարող են լինել ոչ միայն որոշակի անշարժ գույքերի սեփականատերեր, այլև նրանց ընտանիքի անդամները, օգտագործման իրավունք ունեցող անձինք, բնակության

[1] Տե՛ս *Кассо Л. А.,* Русское поземельное право. – М., Гос. тип., 1906, – С. 208–209.

իրավունք ունեցող անձինք և այլք: Սահմանակից գույքերը կարող են օգտագործել վարձակալները, համատարմագրային կառավարիչները և այլ անձինք:

Պատմականորեն հարևանային իրավունքը դիտարկվում է երկու իմաստներով. նախ՝ որպես սեփականության իրավունքի սահմանափակում՝ ի շահ հարևանի (նեղ իմաստով), և երկրորդ՝ որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ (լայն իմաստով):

Որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ՝ հարևանային իրավունքը բաղկացած է հողամասի օրինական տիրապետողի սեփականության իրավունքի սահմանափակում սահմանող քաղաքացիաիրավական նորմերի ամբողջությունից՝ ելնելով հարևանի շահերից սահմաններ, արգելքներ, կաշկանդումներ նախատեսող և, համապատասխանաբար, տվյալ իրավունքի իրականացման ձևերից, ինչպես նաև սահմանված սահմանափակումներից դուրս գալու դեպքում դրա պաշտպանության եղանակներից և սահմանված սահմաններից դուրս գալու հետևանքների կարգավորման այլընտրանքային տարբերակներից:

Հարևանային իրավունքի տվյալ առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն իրային իրավունքները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսդրության նորմերը կատարելագործելիս:

NEIGHBOUR LAW AS A CIVIL- LAW INSTITUTION

AMIRYAN ANI
GSU Lecturer

The article is devoted to the issues of legal regulation of neighbour relations in the Republic of Armenia. There are many disputes, problems and uncertain situations in the area of neighbour relations that, in the best interests of justice, require clear legal regulation, which is why the implementation of the neighbour law institution in the RA legal system is conditioned.

The article deals with the norms of Chapter 14.2 of the Civil Code of the Republic of Armenia. Provisions regulating the neighbouring plots or other common share ownership, water use and other relationships between neighbors are discussed. The nature of the "Neighbour Law" institution and its relation to similar legal structures are analyzed. The concept of neighbour law is defined as a restriction of property rights arising from the interests of neighbors and different approaches to define such concept have been explored. It is proposed to make a number of amendments to the RA Civil Code, the Right of Ownership of Multi-Apartment Building, as well as relevant bylaws.

Keywords: *neighbour, neighbour relations, mutual respect, influence, ownership, restriction of property right, property right, servitude, prohibited claim.*

СОСЕДСКОЕ ПРАВО КАК ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ИНСТИТУТ

АМИРЯН АНИ
Преподаватель ГГУ

Статья посвящена вопросам правового регулирования соседских отношений в Республике Армения.

В сфере соседских отношений существует множество споров, проблем и неопределенных ситуаций, которые в интересах правосудия требуют четкого правового регулирования, поэтому введение института соседского права в правовую систему РА уместно.

Предметом изучения статьи стали нормы главы 14.2 Гражданского кодекса РА "соседское право", обсуждаются положения, регулирующие взаимное воздействие соседних земельных участков или другой недвижимости, водопользование, проведение разделительных линий и другие отношения, возникающие между соседями.

Был проведен анализ соотношения сущности Института "соседское право" с аналогичными правовыми структурами, сформулировано понятие соседского права как

ограничение права собственности, вытекающего из интересов соседей, исследованы различные подходы к определению такого понятия

Предлагается внести ряд изменений в закон РА “Об управлении многоквартирными домами”, а также в соответствующие подзаконные акты Гражданского кодекса РА.

Ключевые слова: *сосед, соседские отношения, взаимное уважение, влияние, собственность, ограничение права собственности, вещное право, сервитут, прогибиторный иск.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.09.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2020թ.:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԽՏԻԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ՀՀ ԱՆ ՔԿԱԳ Գավառի տարածքային բաժնի պետ,
ԳՊՀ դասախոս
e-mail: Qolozyan0202@mail.ru

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ամուսնությունների գրանցման կարգին և պայմաններին: Նպատակն է՝ բացահայտել ամուսնության ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը, առանձնահատկությունները, գրանցման կարգը, ինչպես նաև ամուսնության ինստիտուտի միջազգային փորձը:

Օգտագործվել են վերլուծական և իրավահամեմատական մեթոդները, ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրությունը: Արվել է հետևություն, որ մինչև ամուսնություն գրանցելը, մինչև ամուսնական կյանքը սկսելը առողջ սերնդարարման նպատակով անհրաժեշտ է անցնել որոշ բժշկական հետազոտություններ:

Բանալի բառեր՝ *ամուսնություն, ամուսնական տարիք, կամավոր համաձայնություն, համատեղ դիմում, պետական տուրք:*

Ընտանեկան իրավունքի զարգացման պատմության մեջ գոյություն են ունեցել և ունեն տարբեր տեսակետներ ամուսնության իրավական բնույթի վերաբերյալ: «Ամուսնություն» հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվել: Օտար երկրների օրենսդրություններում ամուսնությունը բնութագրվում է տարբեր կերպ՝ որպես գործարք, որպես կարգավիճակ, որպես հատուկ տեսակի ինստիտուտ և այլն: Օրինակ՝ Սիրիական օրենսդրությամբ ամուսնությունը բնորոշվում է որպես «կնոջ և տղամարդու միջև կնքված պայմանագիր, որն ուղղված է համատեղ ընտանիքի կազմավորմանը և հասարակական վերարտադրության ապահովմանը»)1:

Ամուսնությունը բնորոշվում է որպես «կարգավիճակ, որը օրենքով սահմանված գործողությունների արդյունքում ձեռք է բերվում սուբյեկտի կողմից: Այս կարգավիճակի առկայությունը թույլ է տալիս սուբյեկտներին դասակարգել ամուսնացածների կատեգորիայի մեջ» [1]:

Ամուսնական հարաբերությունների մեծ մասը օրենքով չի կարգավորվում:

Ամուսնական հարաբերությունները կարգավորվում են սովորույթներով, ավանդույթներով:

ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը (այսուհետ ԸՕ) կարգավորում է միայն ամուսնության կարգն ու պայմանները: Ամուսնության ոլորտի հարաբերությունները կար-

[1] Տե՛ս **Косова, О.Ю,** "Фактические браки" и семейное право, Правоведение 1999, N3, էջ 105:

գավորող նորմերի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ «ամուսնությունը տղամարդու և կնոջ կամավոր միությունն է, որը հիմնված է փոխադարձ սիրո և հարգանքի վրա, ուղղված է ընտանիքի ստեղծմանը և փոխադարձ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների և պարտականությունների առաջացմանը և գրանցված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում»:

Ամուսնության՝ որպես պայմանագրի մասին հայացքները ձևավորվել են դեռևս Հին Հռոմում: Հռոմեական իրավունքում ամուսնության բոլոր հիմնական ձևերը հասարակ քաղաքացիական գործարքներ էին:

Հետագայում կանոնական նորմերը ամուսնության ինստիտուտին հաղորդեցին առեղծվածային բնույթ՝ ընդգծելով նրա հոգևոր կողմը: Ամուսնության կրոնական ըմբռնման էությունն այն էր, որ ամուսնու և կնոջ միջև ապահովվեր լիարժեք (ֆիզիկական, բարոյական, տնտեսական, իրավական, կրոնական) հաղորդակցություն: Այսպիսով՝ ոչ միայն իրավական, այլև էթիկական, կրոնական և որոշ չափով ամուսնության ֆիզիկական տարրերը դառնում էին իրավական կարգավորման առարկա:

Այն ժամանակ, երբ ընտանեկան հարաբերությունները կարգավորվում էին կրոնական օրենքներով, այս մոտեցումը լիովին արդարացված էր, բայց շուտով աշխարհիկ նորմերը փոխարինելու եկան կրոնական նորմերին, և վերջիններս համարվեցին հնացած:

Աշխարհիկ օրենքները, ի տարբերություն կրոնականների, չեն կարգավորում և չեն կարող կարգավորել հոգևոր, բարոյական ոլորտին պատկանող հարաբերությունները: Ամուսնության մեջ կարող ենք պայմանականորեն տարբերակել հարաբերությունների հետևյալ խմբերը՝ հոգևոր, ֆիզիկական և նյութական: Ամուսնական հարաբերությունների վերոհիշյալ տարբերակումը միանգամից չի ճանաչվել[1]:

Ամուսնության հոգևոր և ֆիզիկական տարրերը, իհարկե, չեն կարգավորվում օրենքով, և գրեթե բոլոր գիտնականները համաձայն են այս փաստի հետ:

Ամուսնություն կնքելու կողմերի կամքը պետք է գիտակցված լինի, և նրանք պետք է տեղյակ լինեն իրենց պարտականություններին: Պակաս կարևոր չէ նաև այն, որ ամուսնություն կնքելու ազատությունը ոչ միայն վկայում է ամուսնության մեջ գտնվող անձանց ընտանիքի ստեղծման փոխադարձ և գիտակցված պատրաստակամության մասին, այլև բացառում է ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը (սպառնալիք, ծեծ, բռնություն կամ հոգեկանի վրա ազդելու այլ ձևեր) որևէ մեկի կողմից իրենց կամքին հակառակ[2]: Նման հարկադրանքը կարող է իրագործվել ինչպես ամուսնացածի, այնպես էլ նրա ծնողների, մերձավոր հարազատների, ծանոթների կամ այլ անձանց կողմից: Այնուամենայնիվ, պետք է տարբերել հարկադրանքը ծնողների՝

[1] Տե՛ս **Крашенников П. В., Гонгало Б. М., Михеева Л. Ю., Рузакова О. А.,** Семейное право, учебник под. ред. Крашенникова П.В.М., статут, 2008, էջ 302:

[2] Տե՛ս Гражданское и торговое право капиталистических стран. М., Высшая школа, 1980, էջ 347:

ապագա ամուսնություն կնքելու վերաբերյալ խորհուրդներից և առաջարկություններից:

Տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունն արտահայտվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում ամուսնություն կնքելու մասին գրավոր հայտարարության մեջ: Կողմերը այն հաստատում են իրենց ստորագրություններով: Ամուսնության կնքման համար հաջորդ դրական պայմանը, որն անհրաժեշտ է ամուսնական հարաբերությունների առաջացման համար, ամուսնացող անձանց ամուսնական տարիքի հասած լինելն է:

1962թ. ՄԱԿ-ի շրջանակներում ընդունվել է Ամուսնական համաձայնության, ամուսնական տարիքի և ամուսնության գրանցման մասին կոնվենցիա, որի 2-րդ հոդվածում նախատեսվում է, որ անդամ պետություններն ազգային օրենսդրությամբ սահմանում են ամուսնության նվազագույն տարիքը, և չի թույլատրվում ամուսնության նվազագույն տարիքին չհասած քաղաքացիների ամուսնությունը[1]: ՀՀ ԸՕ 10-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ « Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է»: Օրենքով ամուսնության տարիք է սահմանվում տասնութ տարեկանը, որը համընկնում է քաղաքացու՝ ամբողջ ծավալով քաղաքացիական գործունակության ձեռքբերման հետ: Այս առումով կարևոր է նկատի ունենալ, որ տասնութ տարին չլրացած անձը համարվում է անչափահաս երեխա՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ամուսնական տարիքը սահմանվում է օրենքով, որպես ամուսնություն կնքելու համար պահանջվող նվազագույն տարիք և, ինչպես նշվում է ընտանեկան իրավունքի վերաբերյալ գրականության մեջ, նաև ամուսնացող անձանց կամքի և գիտակցության համապատասխան հասունության աստիճանը որոշող տարիք, որը ոչ միայն վերաբերում է անձի իրավական կարգավիճակին, այլև ունի սոցիալական հիգիենայի նկատառումներ: Չափահասության տարիքի հասնել՝ նշանակում է ունենալ ֆիզիկական և ֆիզիոլոգիական, սոցիալական ու հոգեբանական, ինչպես նաև բարոյական զարգացման բավարար աստիճան, որը համապատասխանում է տվյալ պետության հասարակական-տնտեսական կեցության պայմաններում խելամիտ քաղաքացու սպասելի ունակություններին: Դա այն տարիքն է, երբ ամուսնացող անձը լիովին պատկերացնում է իրեն որպես տվյալ հասարակության անդամ, տվյալ պետության քաղաքացի, գիտակցում է իր սոցիալական պարտականությունները, գիտի, թե ինչ է ընտանիքը, ամուսնությունը,

[1] http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/conmarr.shtm:

բավարար գիտելիքներ և ունակություններ ունի ստանձնելու ապագա սերնդի՝ իր երեխայի դաստիարակությունը ազգային-պետական ոգով ու արժեհամակարգով[1]: Այսինքն՝ ակնհայտ է, որ տասնութ տարեկանում անձը ֆիզիկապես հասունանում է ընտանիք կազմելու համար: Տասնութ տարեկան երիտասարդ կինը կարող է առանց իր առողջությունը վնասելու ունենալ առողջ երեխա: Տասնութ տարեկան երիտասարդ տղամարդիկ կարող են լիարժեք հաշվետու լինել իրենց արարքների համար:

Ինչ վերաբերում է ամուսնության տարիքային սահմանափակումներին, ինչպես նաև ամուսնացող անձանց միջև տարիքային տարբերություններին, ապա ինչպես Հայաստանի, այնպես էլ մի շարք արտասահմանյան պետությունների օրենսդրություններում ամուսնական տարիքի հետ կապված սահմանափակումներ չկան. դրանք չեն սահմանվում օրենքով: Ամուսնության համար առավելագույն տարիք չի սահմանափակվում: Ամուսնանալ կարող են ինչպես նոր չափահասության տարիքի հասած, այնպես էլ պատկառելի տարիք ունեցող անձինք: Իրավաբանական տեսանկյունից նշանակություն չունի նաև ամուսնացող անձանց տարիքային մեծ կամ փոքր տարբերությունը: Նշանակում է՝ չափահաս, գործունակ անձինք կարող են ամուսնական կապերի մեջ մտնել՝ անկախ իրենց տարիքից:

Անհրաժեշտ է նշել, որ ամուսնական տարիք որոշելը պատահական հարց չէ. այն որոշվում է առանց հիմքերի՝ ելնելով տարբեր հանգամանքներից: Ամուսնական տարիքի որոշման ժամանակ հաշվի են առնվում բնակլիմայական, կենսաբանական գործոններից մինչև սոցիալական տնտեսական ու իրավական բնույթի հանգամանքները:

Ամուսնական տարիքը շատ պետություններում գրեթե նույնն է: Այսպես, ՌԴ ընտանեկան օրենսգրքով ամուսնական տարիքը 18 տարին է և՛ տղամարդու, և՛ կնոջ համար: Իսկ բացառիկ դեպքերում կարող է ամուսնական տարիքն իջեցվել ոչ ավելի, քան երկու տարով: Վրաստանի Հանրապետության օրենսդրությամբ ևս 18 տարի է սահմանված երկու սեռի ներկայացուցիչների համար: Բուլղարիայում և՛ տղամարդու, և՛ կնոջ համար նախատեսվում է 18 տարին: Հունգարիայում և Ճապոնիայում 18 տարին է սահմանված տղամարդու, 16 տարին՝ կնոջ համար: Լեհաստանում տղամարդու ամուսնական տարիք է սահմանված 21, կանանց համար՝ 18 տարին:

Այս հարցում հետաքրքիր է Պորտուգալիայի օրենսդրությունը: Մինչև 1978 թվականը ամուսնական տարիքը տղամարդու և կնոջ համար 14 տարին էր: Սկսած 1978 թվականից՝ երկուսի համար էլ սահմանվեց է 16 տարին: Ընդ որում, 16 տարեկան դարձած անձինք կարող են ամուսնանալ միայն ծնողների համաձայնությամբ: 21

[1] Տե՛ս **Ա.Հակյանց,** հոդված՝ «Ամուսնության կնքման պայմաններ/հիմնախնդիրներ/դրանց լուծման ուղիները», Երևան, ԵՊՀ հրատ. 2017, էջ 196:

տարեկան դառնալուց հետո միայն նրանք կարող են ամուսնանալ ինքնուրույն որոշմամբ[1]:

Ընդհանուր կանոն է այն, որ ամուսնանալ ցանկացող անձինք ամուսնության պետական գրանցման պահին պետք է հասած լինեն օրենքով սահմանված տարիքի, այլ ոչ թե այն օրը, երբ ամուսնության դիմումը ներկայացվել է ՔԿԱԳ մարմին: Օրենքով չեն սահմանվում տասնվեց տարեկանում անձանց ամուսնության պատճառները: Պրակտիկայում առավել հաճախ հանդիպող պատճառներից են անչափահասի հղիության կամ երեխայի ծնվելու փաստը: Այդ պատճառների թվին կարող են դասվել նաև զինվորական ծառայության առաջիկա զորակոչը, փաստացի ամուսնական հարաբերությունները ամուսնական տարիքի չհասած անձի հետ և այլն:

Ամուսնական տարիքի չհասած անձանց ամուսնության պետական գրանցումը կատարվում է ընդհանուր հիմունքներով: Անձանց ամուսնության դեպքում, մինչև օրենքով սահմանված կարգով չափահասության տարիքի հասնելը, ամուսնության պետական գրանցման օրվանից անչափահաս ամուսինը ամբողջ ծավալով է ձեռք բերում քաղաքացիական գործունակություն: Ավելին, անձի գործունակությունը պահպանվում է նույնիսկ ամուսնալուծությունից հետո՝ մինչև չափահասության տարիքի հասնելը: Ամուսնությունն անվավեր ճանաչելիս դատարանը կարող է վճիռ կայացնել դատարանի կողմից որոշված պահից անչափահաս ամուսնու ձեռք բերած գործունակության կորստի մասին, այսինքն՝ նման դեպքում անչափահասը շարունակում է մնալ սահմանափակ գործունակ անձ:

Ամուսնության կնքման պայմանները բխում են ամուսնության էությունից և նպատակներից: Դրանք անհրաժեշտ են, որպեսզի ամուսնությունը ստանա օրենքի ուժ: Հակառակ դեպքում ամուսնությունը կարող է ճանաչվել անվավեր, քանի որ ընտանեկան իրավունքի գիտության մեջ և իրավակիրառ պրակտիկայում ամուսնության վերոհիշյալ պայմանները համարվում են ամուսնություն կնքելու համար էական հանգամանքներ:

Ամուսնացող անձանց՝ տղամարդու և կնոջ միջև փոխադարձ կամավոր համաձայնությունը և ամուսնական տարիքի հասած լինելը, որպես ամուսնություն կնքելու համար դրական պայմաններ, սահմանված են նաև օտարերկրյա պետությունների օրենսդրություններում (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության ընտանեկան օրենսգրքում):

Ամուսնության այս երկու դրական պայմաններն անհրաժեշտ են բոլոր դեպքերում: Ընդ որում, դրանք սպառիչ են, և որևէ այլ պայմանի անհրաժեշտություն չկա: Մասնավորապես, ամուսնության համար օրենսդրությամբ չի պահանջվում ամուսնացողների ծնողների համաձայնությունը, իսկ անչափահաս ամուսնացողների դեպքում

[1] Տ՛ես Ղարախանյան ***Գ.Հ., ՀՀ Ընտանեկան իրավունք,*** Խմբ.՝Տ.Կ. Բարսեղյան, Եր, ԵՊՀ հրատ., 2008թ., Էջ 126:

անհրաժեշտ է ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը (տասնվեց տարեկան անչափահասի դեպքում անհրաժեշտ է նաև, որ ամուսնացող մյուս կողմը լինի 18 տարեկան):

Ամուսնության կնքման դրական պայմաններից զատ, կան նաև արգելքներ, որոնց առկայության դեպքում ամուսնության պետական գրանցումը դառնում է անհնար և անօրինական: Այդ արգելքների առկայության դեպքում ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել դատարանի կողմից:

Ամուսնության կնքման արգելքների ցանկը սպառիչ է և ենթակա չէ փոփոխման: Ամուսնության կնքման արգելքներն են՝

ա) ամուսնացողներից թեկուզ մեկի՝ օրենքով սահմանված կարգով այլ գրանցված ամուսնության մեջ գտնվելը,

բ) ամուսնացողների միջև մերձավոր ազգակցական կապի առկայությունը,

գ) ամուսնությունը որդեգրողի ու որդեգրվածի միջև,

դ) ամուսնացողներից թեկուզ մեկի՝ դատական կարգով անգործունակ ճանաչված լինելը: Թվարկվածները պատկանում են ամուսնության կնքման բացասական պայմանների շարքին: Այս պայմանները նախատեսված են նաև ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 11–րդ հոդվածում:

ա) Ամուսնացողներից թեկուզ մեկի՝ օրենքով սահմանված կարգով այլ գրանցված ամուսնության մեջ գտնվելը: Ամուսնությունը չի թույլատրվում այն անձանց միջև, որոնցից առնվազն մեկը արդեն մեկ այլ գրանցված ամուսնության մեջ է: «Մեկ այլ գրանցված ամուսնության» արտահայտության տակ հասկացվում է անձի նախկին գրանցված ամուսնությունը, որը չի դադարել օրենքով սահմանված կարգով: Սակայն դե ֆակտո՝ փաստացի (չգրանցված) ամուսնական հարաբերությունները խոչընդոտ չեն հանդիսանում ամուսնություն կնքելու համար: Այս արգելքը գալիս է մոնոգամիայի (մենամուսնություն) սկզբունքից, համաձայն որի՝ տղամարդը և կինը իրավունք ունեն գտնվելու միայն մեկ գրանցված ամուսնության մեջ: Սրանով իսկ պետությունը պաշտպանում է մենամուսնությունը (մոնոգամիան)՝ արգելելով երկկնությունն ու բազմակնությունը (պոլիգամիան):

Բազմակնության դեպքերը կանխելու համար ՔԿԱԳ մարմին պահանջվում է ներկայացնել ամուսնանալ ցանկացողների միասնական դիմումը, թե արդյո՞ք նրանցից որևէ մեկը գտնվել կամ գտնվում է այլ գրանցված ամուսնության մեջ, թե ոչ: Նախկինում գրանցված ամուսնության մեջ գտնված անձինք պետք է ներկայացնեն նախորդ ամուսնության դադարեցումը հաստատող փաստաթուղթ: Այն կարող է լինել ամուսնալուծության վկայականը (որը տրվել է ՔԿԱԳ մարմնի կողմից), նախկին ամուսնու մահվան վկայականը կամ մահացած հայտարարելու մասին դատարանի՝

օրինական ուժի մեջ մտած վճիռը, որը նախկին ամուսնությունը դարձնում է անվավեր[1]:

Ժամանակակից պետությունների մեծամասնությունը մերժում է բազմակնությունը կամ պոլիգամիան, բայց կան նաև երկրներ, որտեղ թույլատրվում են նման ամուսնություններ: Հնագույն հասարակություններում ընդունված է եղել բազմակնությունը: Կանանց թվաքանակի գերազանցումը և պատերազմների պատճառով տղամարդկանց թվաքանակի նվազումն է բերել բազմակնության:

Բազմակնության փորձը լայնորեն տարածված էր արաբների մոտ մինչև իսլամի ընդունումը: Այս փորձն արդարացի չէր, և նրանում տեղ չուներ «կնոջ իրավունքներ» հասկացությունը: Տղամարդը կարող էր ունենալ այնքան կին, որքան ցանկանար, և դա հանգեցնում էր բարոյականության անկմանը: Իսլամի ծագումից հետո մտցրվեց որոշակի սահմանափակում, համաձայն որի՝ թույլատրվում էր ունենալ ոչ ավելի, քան չորս կին, որոնք պետք է ունենային հավասար իրավունքներ և արժանանային նույնանման վերաբերմունքի: ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը, սակայն, ամրապնդում է մենամուսնությունը (մոնոգամիան): ՀՀ ԸՕ-ի 11–րդ հոդվածի համաձայն՝ ամուսնություն չի թույլատրվում այն անձանց միջև, որոնցից թեկուզ մեկն արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում: Այն համապատասխանում է մեր հասարակության բարոյաէթիկական նորմերին և ավանդույթներին: Բացի այդ, այն ապահովում է տղամարդու և կնոջ իրավահավասարությունը ընտանեկան հարաբերություններում:

Բ) Ամուսնացողների միջև մերձավոր ազգակցական կապի առկայությունը:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 11–րդ հովածի համաձայն՝ արգելվում է ամուսնություն կնքել մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև: Ինչպես նաև արգելվում է ամուսնությունը հոր ու աղջկա, մոր և տղայի, պապի և թոռան միջև:

Ուղիղ վերընթաց ազգակցական կապը գոյություն ունի սերունդների և նախնիների, իսկ վայրընթացը՝ նախնիներից սերունդների միջև: Հարազատ ազգակիցներ են համարվում քույրերը և եղբայրները, ովքեր ունեն ընդհանուր հայր և մայր, իսկ խորթ են համարվում նրանք, ովքեր ունեն ընդհանուր կա՛մ հայր, կա՛մ մայր:

Մերձավոր ազգակիցների միջև ամուսնությունների արգելումը պայմանավորված է կենսաբանական և բարոյաէթիկական նկատառումներով, որոնք կապված են ինչպես ամուսինների առողջ սերունդ տալու (քանի որ պաթոլոգիական գեների կուտակման պատճառով հավանականությունը շատ մեծ է, որ նման ամուսնություններից կարող են ծնվել ծանր հիվանդություններ ունեցող երեխաներ), այնպես էլ ժամանակակից քաղաքակակիրթ հասարակության ձևավորման հետ:

[1] Տե՛ս **Поссе Е.А, Фадеева Т.А.,** Проблемы семейного права, Ленинград, 1976, էջ 9:

Նախաքրիստոնեական շրջանում տարածված էր բազմակնությունը, և թույլատրվում էր ամուսնությունը հարազատների միջև: Հայտնի է, որ Արտավազդ Բ-ի թոռը՝ Տիգրան Դ-ն, ամուսնացել է քրոջ՝ Էրատոյի հետ և նրան հռչակել թագուհի: Սակայն 301 թվականին քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելուց հետո եկեղեցական կանոններով արգելվեց երկրորդ, ինչպես և գաղտնի կամ ազգականների՝ միմյանց հետ ամուսնությունը: Փավստոս Բուզանդի վկայությամբ՝ 365 թվականին Ներսես Ա Մեծ կաթողիկոսի և Արշակ Բ–ի նախաձեռնությամբ Տարոն գավառի Աշտիշատ գյուղում հայկական եկեղեցական առաջին կանոնադիր ժողովն արգելել է մերձավոր ազգականների ամուսնությունը, բազմակնությունը և այլն: Շահապիվանի 447 թվականի ժողովն ազգակցական (արյունակցական) կապեր ունեցող անձանց ամուսնությունը համարել է «պղծություն և գարշանք», հեթանոսական մնացուկ և արգելել մինչև 4–րդ սերունդ: Կիլիկյան Հայաստանում հատուկ կարևորությամբ են վերաբերվել ամուսնալընտանեկան հարաբերություններին, անառողջների ամուսնությունը դիտվել է ազգի ապականություն և արգելվել բժշկական զննումից հետո:

Հայ եկեղեցու օրենքի և կանոնի համաձայն՝ այսօր մերձավոր բարեկամները չեն կարող իրար հետ ամուսնանալ: Թերևս ոչ քրիստոնյա շատ ազգերի մոտ ամուսնությունը լինում է նաև քույր ու եղբոր միջև, որ իհարկե ըստ մեր Եկեղեցու ճիշտ չէ, քանի որ նույն արյունով և շատ մոտ ամուսնություններից ծնված երեխաները երբեք էլ առողջ չեն լինում և՛ մտավոր, և՛ հոգեկան, և՛ ֆիզիկական իմաստներով: Այսինքն՝ ամուսնության կնքման արգելք պետք է համարել նաև անձանց՝ իրավաբանորեն չձևակերպված ազգակցությունը: Եթե, օրինակ, տղամարդու արտամուսնական կապերի հետևանքով տարբեր մայրերից ծնվել են տղա և աղջիկ, ապա վերջիններս գտնվում են արտամուսնական ազգակցության մեջ, արյունակիցներ են, համահայր են: Նրանց միջև ևս ամուսնությունն անթույլատրելի պետք է համարել:

Ավելի հեռավոր ազգակիցների (օրինակ՝ քեռու և քրոջ աղջկա, հորեղբոր ու եղբոր աղջկա,) միջև ամուսնությունները թեև տեսականորեն կարող են վտանգ ներկայացնել ամուսիններից սերված երեխաների առողջության համար, չնայած ավելի փոքր չափով, այնուամենայնիվ ամուսնության գրանցման արգելք չեն հանդիսանում: Ամուսնության համար սահմանված արգելքների մեջ չեն մտնում բարեկամական հարաբերությունները, քանի որ դրանք հիմնված չեն արյունակցական կապի վրա: Չի արգելվում նաև ամուսնությունը երկու ամուսինների ազգականների միջև, քանի որ նրանց միջև չկա արյունակցական կապ: Օրենքը սահմանափակումներ չի նախատեսում խորթ եղբոր և խորթ քրոջ ամուսնության մեջ (վերջիններս ամուսիններից ամեն մեկի՝ նախկին ամուսնությունից ունեցած երեխաներն են):

գ) Արգելվում է ամուսնությունը որդեգրողի ու որդեգրվածի միջև: Արգելվում է ամուսնությունը որդեգրող ծնողի և որդեգրվող երեխայի միջև, քանի որ նրանց հարաբերությունները հավասար են ծնող–երեխա հարաբերություններին: Արգելքը

հիմնվում է բարոյական և էթիկական գործոնների վրա: Անթույլատրելի պետք է համարել ամուսնությունը նաև որդեգրվածի և նրան որդեգրած անձի զավակների միջև, քանի որ նրանք ըստ էության հանդես են գալիս եղբոր ու քրոջ կարգավիճակում: Եթե առկա է որդեգրումը անվավեր ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշում, ապա նախկին որդեգրողի և որդեգրվողի ամուսնություն կնքելու միջև արգելքներ չկան: Ինչ վերաբերում է որդեգրող ծնողի և որդեգրվողի սերունդների միջև ամուսնություններին, ապա օրենքը այդ հարցի շուրջ որևէ կարգավորում չի սահմանում:Սակայն գրականության մեջ կա կարծիք, որ նման ամուսնությունները պետք է համարեն անվավեր, քանի որ նշված անձանց վրա պետք է տարածվեն նույն կանոնները, ինչ որ վերընթաց ու վայրընթաց ազգականների վրա:

Թեև որդեգրողի ու որդեգրվածի միջև արյունակցական կապ չկա, նրանց միջև ամուսնությունն արգելելն ունի միայն բարոյական նպատակ: Որդեգրողի և որդեգրվածի միջև ամուսնության արգելքը կրում է ոչ թե կենսաբանական, այլ սոցիալական բնույթ:

դ) Ամուսնացողներից թեկուզ մեկի՝ դատական կարգով անգործունակ ճանաչված լինելը: Չի թույլատրվում ամուսնության կնքում այնպիսի անձանց միջև, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ՝ հոգեկան հիվանդության պատճառով: ՀՀ Քաղ. օրենսգրքի 31–րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն»: Անձին անգործունակ ճանաչելու կարգը սահմանված է քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Քանի որ անգործունակ անձինք չեն կարող հասկանալ իրենց գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք (գործողությունները), նրանք ընդունակ չեն արտահայտելու իրենց գիտակցված կամքը ամուսնության մեջ մտնելու կապակցությամբ:

Պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ ամուսնությունը կնքելու համար արգելք է համարվում անձի անգործունակությունը, որը դատարանի կողմից կայացված վճռով հաստատվել է մինչև ամուսնության պետական գրանցումը: Իսկ եթե ամուսինը անգործունակ է ճանաչվել ամուսնությունը կնքելուց հետո, ապա այդ հանգամանքը կարող է որպես հիմք դիտարկվել ամուսիններից մեկի պահանջով ամուսնությունը լուծելու համար, բայց ոչ ամուսնությունը անվավեր ճանաչելու համար:

Ամուսնության կնքման կարգը և ամուսնության կնքման համար արգելք հանդիսացող հանգամանքները պետք է ՔԿԱԳ մարմինների կողմից հաստատվեն ամուսնության պետական գրանցման պահին: Այդ պատճառով ամուսնության պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգը նախատեսում է որոշակի պա-

հանջների պահպանում, որոնք ուղղված են ՔԿԱԳ մարմինների կողմից ամուսնության կնքման համար հնարավոր արգելքների առկայությունը պարզելուն:

Այսպիսով՝ ամուսնության կնքման համար արգելքների բացակայության մասին պետք է նշված լինի ամուսնության մեջ մտնել ցանկացող անձանց համատեղ դիմումի մեջ: Բացի դրանից, այդ անձինք ՔԿԱԳ մարմինների կողմից նախազգուշացվում են ամուսնության համար արգելք հանդիսացող հանգամանքները թաքցնելու համար վրա հասնող պատասխանատվության մասին:

ՔԿԱԳ մարմնի ղեկավարը կարող է մերժել ամուսնության պետական գրանցումը, եթե կարծում է, որ այդ ապացույցները հաստատում են ամուսնության կնքման համար արգելքների առկայությունը: Իսկ եթե այդպիսի արգելքների վերաբերյալ վկայությունները չեն հաստատվում, ապա ամուսնության գրանցումն իրականացվում է ընդհանուր հիմքերով:

Այնուամենայնիվ, օրենքը հնարավորություն է ընձեռում կողմերին համատեղ դիմումի հիման վրա ամուսնության գրանցման ժամկետը օրինական կերպով կրճատելու, եթե առկա են հիմնավոր պատճառներ: Օրենքը չի սահմանում ամուսնության ժամկետի փոփոխման պատճառների կոնկրետ ցանկ: Նման պատճառներից կարող են լինել ամուսնացող անձանց համատեղ երեխա(ներ) ունենալը, ամուսնացող կնոջ հղիությունը, ամուսնացող անձի զորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության, ամուսնացող անձի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության կամ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը, Հայաստանի Հանրապետությունում ամուսնացող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ միմյանց կամ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության դեպքում ամուսնացողների կամ նրանցից մեկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երկարատև ժամանակով մեկնելու (բացակայելու) դեպքում, ամուսնացող անձի ծանր հիվանդությունը: Ամուսնության պետական գրանցման ժամկետը, ելնելով կոնկրետ հանգամանքներից, կարող է կրճատվել նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի թույլտվությամբ:

Ամուսնությունը կարող է նաև գրանցվել ՔԿԱԳ մարմին դիմում ներկայացնելու օրը: Դա հնարավոր է, եթե ամուսնացող անձինք ունեն հարգելի պատճառներ (կնոջ հղիություն, երեխայի ծնունդ, կողմերից մեկի կյանքին սպառնացող հիվանդություն): Այս պատճառները պետք է հաստատվեն համապատասխան փաստաթղթերով (բժշկական տեղեկանք, աշխատանքի վայրից տեղեկանք և այլն):

Ամուսնությունը կնքվում է միայն ամուսնանալ ցանկացողների պարտադիր ներկայությամբ: Ամուսնությունը ներկայացուցիչների կամ հոգաբարձուի միջոցով

օրենքով չի թույլատրվում: Միայն հարսնացուի և փեսացուի խնդրանքով ամուսնության գրանցումը կարող է ուղեկցվել հանդիսավոր պայմաններում: Վկաների, հարազատների, ընկերների ներկայությունը նույնպես կողմերի ցանկությամբ է:

Որպես ընդհանուր կանոն, ամուսնության պետական գրանցումը կատարվում է ՔԿԱԳ մարմնի տարածքում: Այնուամենայիվ, եթե ամուսնանալ ցանկացող անձինք չեն կարող ներկայանալ գրանցման մարմին (լուրջ հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով), գրանցումը կարող է կատարվել տանը, հիվանդանոցում, հաշմանդամների կամ տարեցների համար նախատեսված հաստատություններում և այլ վայրերում: Կալանքի տակ գտնվող կամ պատիժ կրող անձի հետ ամուսնության գրանցումը կատարում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարը՝ քրեակատարողական համապատասխան հաստատության ղեկավարի համաձայնությամբ ընտրված վայրում:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակում ամուսնացողներին ծանոթացնում են գրանցման կարգին և պայմաններին, հավաստիանում են, որ նրանք տեղյակ են միմյանց առողջական և ընտանեկան վիճակին, ապագա ամուսիններին բացատրում են նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Ամուսնությունը համարվում է կնքված այն պահից, երբ ամուսնացողներն իրենց ստորագրություններն են դնում քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրքում: Հենց այդ պահից էլ առաջանում են ամուսինների ամուսնական իրավունքներն ու պարտականությունները: Գրանցումն իրականացնող անձանց կողմից գրանցման ժամանակ կազմվում է ամուսնության ակտ, որի հիման վրա տրվում է ամուսնության վկայական: Վկայականը տրվում է ամուսիններին և համարվում է ամուսնության պետական գրանցման փաստը հաստատող փաստաթուղթ: Դրա մեջ նշվում են հետևյալ տեղեկությունները՝ ա) ամուսնացողներից յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը (մինչև ամուսնությունը և ամուսնությունից հետո), ազգությունը՝ ամուսնության ակտի գրառմանը համապատասխան, ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բ) ամուսնության ակտի գրառման ժամանակը և համարը, գ) ամուսնության պետական գրանցման վայրը (ՔԿԱԳ մարմնի անվանումը), դ) ամուսնության վկայական տալու ժամանակը: Ամուսնության պետական գրանցման ժամանակ ամուսնության ակտի գրառման մեջ ամուսինների ազգանունը լրացվում է նրանց ցանկությամբ:

Եթե ՔԿԱԳ մարմնի կողմից անհիմն կերպով մերժվել է ամուսնությունը գրանցելու մասին դիմումը, ապա կողմերը կարող են իրենց խախտված իրավունքը պաշտպանելու համար դիմել դատարան:

Վերջին տարիներին լայն տարածում է ստացել <u>եկեղեցական ամուսնությունը</u>, թեև <u>ՀՀ</u> օրենսդրությունը ճանաչում է միայն <u>քաղաքացիական ամուսնությունը</u>, որը գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում, իսկ եկեղեցական ամուսնությունը համարում է ամուսնացողների անձնական գործը, ուստի մինչև եկեղեցական արարողակարգով կատարված ամուսնությունը չգրանցվի

քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմնում, այն իրավական հետևանքներ չի կարող առաջացնել:

Այսպիսով՝ ՀՀ ընտանեկան քաղաքականությունը կոչված է իրականացնելու ընտանիքի ամրապնդման և ընտանեկան արժեքների պաշտպանության գործառույթ՝ ապահովելով ընտանիքի շահերը սոցիալական զարգացման գործընթացում, ստեղծելով անհրաժեշտ պայմաններ ընտանիքի անդամների համար և բարձրացնելով հասարակության մեջ ընտանիքի դերը: Ընտանեկան հարաբերություններում անուղղակիորեն իր ներգործությունն ունի հասարակությունը: Դա այլ կերպ հնարավոր չէ պատկերացնել, քանի որ հակառակ դեպքում ընտանիքը չէր լինի հասարակության մասնիկ: Ամուսնաընտանեկան հարաբերությունների սուբյեկտների իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական երաշխիքների ամրապնդումը և ընդլայնումն անկասկած կախված են ժամանակից: Հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքի փոփոխությունը, սոցիալիզմից անցումը կապիտալիզմին, պահանջեցին օրենսդրության էական փոփոխություններ, ներառյալ ընտանեկան իրավունքի, և դա պատճառ հանդիսացավ նոր ընտանեկան օրենսդրության ստեղծման:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկվում է, որ մինչև ամուսնության պետական գրանցումը, ամուսնանալ ցանկացող զույգը պետության հովանու ներքո անցնի պարտադիր բժշկական հետազոտություն, և ՔԿԱԳ մարմնում ամուսնության պետական գրանցումն իրականացվի միայն համապատասխան բժշկական տեղեկանքի առկայության դեպքում և այդ տեղեկանքի բովանդակությանը ծանոթանալուց հետո, զույգերի փոխադարձ համաձայնության պարագայում:

Ընտանեկան օրենսգրքում նման իմպերատիվ նորմի ներդրումը կունենա մի շարք դրական հետևանքներ՝ կնպաստի ամուսնալուծությունների կրճատմանը, կխոչընդոտի վարակիչ հիվանդություններով միմյանց վարակելու հավանականությունը, կկանխարգելի հոգեկան հիվանդություններով տառապող անձանց կողմից այդ հիվանդությունը թաքցնելու հետևանքով առաջացող բացասական հետևանքները, ինչպես նաև գենետիկ հետազոտության շնորհիվ կնպաստի ապագա առողջ սերնդի ձևավորմանը, ինչն ընտանիքի լիարժեքության և երջանկության հիմքն է:

Ինչպես արդեն նշել էինք, սույն ուսումնասիրության նպատակն է՝ անել նոր առաջարկություններ, որոնք կարող են ներկայացվել ընտանեկան օրենսգրքում՝ ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման շրջանակներում և որպես օրենսդրական ոլորտում նորարարություններ ոչ միայն հիմա, այլև ապագայում նպաստել պետության և հասարակության շահերին:

ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, 2004 թ.:
2. Косова О. Ю., Фактические браки и семейное право, Правоведение, 1999.
3. Крашенниников П. В., Гонгало Б. М., Михеева Л. Ю., Рузакова О. А., Семейное право/ учебник под. ред. Крашенниникова П. В., статут, 2008.
4. Пчелницева Л.М., Семейное право России/ учебник для вузов, 3-е изд., перераб и доп., Москва, Норма, 2004.
5. Нечаева А. М., Брак Семья Закон, Москва, 1984.
6. Гражданское и торговое право капиталистических стран. Москва, Высшая школа, 1980.
7. http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/conmarr.shtm,
8. Ա. Հակյանց, հոդված՝ «Ամուսնության կնքման պայմաններ/ հիմնախնդիրներ /դրանց լուծման ուղիները», Երևան, ԵՊՀ հրատ. 2017,
9. Ղարախանյան ***Գ. Հ., ՀՀ Ընտանեկան իրավունք,*** Խմբ.՝ Տ. Կ. Բարսեղյան, Եր, ԵՊՀ հրատ., 2008թ.,
10. Поссе Е. А., Фадеева Т. А., Проблемы семейного права, Ленинград, 1976.
11. Синицина И. Е., Обычай и обычное право в современной Африке, Москва, Наука, 1979.
12. Ежов Ю. А., Семейное право России,учебное пособие, Изд. Дашков и К, 2000.
13. https://wedding.am/harciravabanin2.
14. Данилин В. И., Реутов С. И., Юридические факты в советском семейном праве, Свердловск, 1989.
15. Баженова О. И., Действительность брака в РФ / Под ред. Л.Ю. Исмаиловой, Москва, АО “Центр ЮрИнфо”, 2006.
16. Кузнецова И. М., Семейное право: Учебник, Москва, Юристь, 1999.
17. Белякова А. М., Вопросы семейного права в судебной практике, Москва, 1989.
18. “Бюллетень Верхного Суда РСФСР”, 1967, N 8.
19. Пергамент А. И., Основы законодательство о браке и семье, Москва, 1969.
20. О. С. Советское гражданское право, в трех томах, Т. III, Л., 1965.
21. Рясенцев В. А., Семейное право, Москва, 1971.
22. Маркс К. и Энгельс Ф., Избранные произведения, т. 2, Москва, 1955.
23. Ленин В. И., Полн. собр. соч., т. 25.
24. Ленин В. И., Полн. собр. соч., т. 30.
25. «Судебная практика», 1952, N 1.
26. Постановление Пленума Верховного Суда РСФСР от 21 февраля 1973 г., п. 8.

MARRIAGE REGISTRATION PROCEDURE AND CONDITIONS

BAKHTIKYAN LUSINE
Head of Gavar Territorial Department of
Civil Acts Registration Agency of the RA Ministry of Justice,
GSU Lecturer

The article is devoted to the procedure and conditions of marrage registration in the Republic of Armenia. The aim is to reveal the social and legal nature of the institution of marriage, its peculiarities, the order of registration, as well as the international experience of the institution of mariage.

Analytical, legal and comparative methods were used, the family code of the Republic of Armenia was studied. It was found out that some medical examinations are necessary for a healthy offspring before registering a marriage and starting married life.

Keywords: *Marriage, marital age, voluntary agreement, joint application, state duty.*

УСЛОВИЯ И ПОРЯДОК РЕГИСТРАЦИИ БРАКОВ

БАХТИКЯН ЛУСИНЕ
Начальник агентства записи актов гражданского состояния Гаварского территориального управления Министерства юстиции РА,
Преподаватель ГГУ

Статья посвящена порядку и условиям регистрации браков в Республике Армения. Цель исследования - выявление социально-правовой сущности, особенности и порядок регистрации института брака, а также международный опыт института брака. Были использованы аналитические и правовые методы, изучено семейное законодательство Республики Армения. Сделан вывод, что до вступления в брак и до начала супружеской жизни, для здорового потомства, необходимо пройти некоторые медицинские исследования.

Ключевые слова: *брак, брачный возраст, добровольное согласие, совместное заявление, государственная пошлина.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 27.09.2020թ.:

ԱՆՎԱՆ, ՀԱՅՐԱՆՎԱՆ ԵՎ ԱԶԳԱՆՎԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

ԲԱԽՏԻԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ՀՀ ԱՆ ՔԿԱԳ Գավառի տարածքային բաժնի պետ,
ԳՊՀ դասախոս
e-mail: Qolozyan0202@mail.ru

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում անվան, ազգանվան, հայրանվան փոխման կարգին:

Նպատակն է՝ բացահայտել անվան ազգանվան և հայրանվան ինստիտուտի էությունը, առանձնահատկությունները, գրանցման կարգը, ինչպես նաև հետևանքները:

Օգտագործվել են վերլուծական և իրավահամեմատական մեթոդները, ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրությունը, ՔԿԱ մասին ՀՀ օրենքը:

Արվել է հետևություն, որ անհրաժեշտ է մինչև անունը, ազգանունը, հայրանունը փոխելը քաղաքացին իր կողմից ներկայացվող փաստաթղթերով հիմնավորի իր խնդրանքը:

Բանալի բառեր՝ *անուն, ազգանուն, հայրանուն, փոխում, փոխման գործ, հիմնավորող փաստաթղթեր:*

Երեխան ունի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունք: Երեխային անուն տրվում է ծնողների համաձայնությամբ, իսկ հայրանուն տրվում է հոր անունով՝ ՀՀ Ընտանեկան օրենսգրքով նախատեսված կարգով: «Միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանցից, ինչպես նաև ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց հետո կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից երեք հարյուր օրվա ընթացքում երեխա ծնվելու դեպքում երեխայի հայր է ճանաչվում երեխայի մոր ամուսինը (նախկին ամուսինը), եթե այլ բան չի ապացուցվել: Երեխայի մոր ամուսնու (նախկին ամուսնու) հայրությունը հավաստվում է նրանց ամուսնության պետական գրանցումով:

Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա: Մոր մահվան կամ դատարանի կողմից վերջինիս անգործունակ ճանաչվելու կամ բնակության վայրը որոշելու անհնարինության կամ ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում երեխայի հայրությունը որոշվում է երեխայի հոր դիմումի հիման վրա՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով»:

Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ երեխայի ծնվելուց հետո հայրությունը որոշելու մասին համատեղ դիմում ներկայացնելը կարող է դառնալ անհնար կամ դժվարանալ, ապագա երեխայի ծնողները, որոնք ամուսնության մեջ չեն գտնվում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին նման դիմում կարող են ներկայացնել մոր հղիության ընթացքում: Այդ դեպքում երեխայի ծնողների մասին գրառումը կատարվում է երեխայի ծնվելուց հետո:

Չափահաս անձի նկատմամբ հայրության որոշում թույլատրվում է միայն իր համաձայնությամբ, իսկ եթե նա դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ՝ նրա խնամակալի (հոգաբարձուի) կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ:

Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը:

Ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Եթե երեխայի հայրությունը չի որոշվել, ապա նրան անուն է տրվում մոր ցուցումով, հայրանուն՝ որպես երեխայի հայր գրառված անձի անունով, ազգանուն՝ մոր ազգանունով:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցման ժամանակ Հայաստանի Հանրապետության օրենսդրության ճիշտ կիրառման, ինչպես նաև միասնական պրակտիկայի ապահովման նպատակով քաղաքացիական կացության ակտերի գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) տարածքային բաժինները պետք է ղեկավարվեն հետևյալով.

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է անձի 16 տարին լրանալուց հետո:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարել թույլատրվում է հետևյալ հարգելի պատճառների առկայության դեպքում՝

ա) անվան, հայրանվան և ազգանվան անբարեհնչունության.

բ) անվան, հայրանվան և ազգանվան արտասանության դժվարության.

գ) ամուսնու ցանկության՝ մյուս ամուսնու հետ միասին մեկ ընդհանուր ազգանուն կրելու.

դ) ամուսնու ցանկության՝ վերադարձնելու մինչամուսնական ազգանունը, եթե այդ մասին հայտարարված չի եղել ամուսնալուծության ժամանակ.

ե) մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության, որպեսզի միատեսակ լինի առաջին ամուսնությունից ծնված երեխաների ազգանվան հետ, այն դեպքերում, երբ ամուսնությունը չի լուծվում.

զ) մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության, եթե մահացել է ամուսինը.

է) երեխաների հետ միասին ընդհանուր ազգանուն կրելու ցանկության, եթե ամուսինը մահացել է, իսկ դիմողը եղել է մինչամուսնական ազգանունով.

ը) մոր (հոր) ազգանունը կրելու ցանկության, եթե հայրը (մայրը) մասնակցություն չի ունեցել դիմողի դաստիարակությանը.

թ) խորթ հոր (մոր) ազգանունը կրելու ցանկության, որը դաստիարակել է դիմողին կամ խորթ հոր անունով հայրանուն կրելու ցանկության, երբ որդեգրություն չի ձևակերպվել.

ժ) պապի, տատի կամ մի այլ անձի ազգանուն կրելու ցանկության, որը փաստորեն դաստիարակել է դիմողին, եթե ծնողները մասնակցություն չեն ունեցել դիմողի դաստիարակությանը, իսկ որդեգրումը չի կարող ձևակերպվել.

ժա) դիմողի փաստորեն դաստիարակող անձի անունով հայրանուն կրելու ցանկության, եթե հայրը մասնակցություն չի ունեցել դիմողի դաստիարակությանը.

ժբ) դիմողի ազգությանը համապատասխան ազգանուն և անուն կրելու ցանկության դեպքերում:

Մյուս դեպքերում անվան, հայրանվան և ազգանվան փոխում թույլատրվում է միայն բացառության կարգով:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումները սահմանված ձևով տրվում են դիմողի բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային բաժին:

Ցերեկային բաժինների սովորողները և ուսանողները անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումներ կարող են տալ ուսման վայրի ՔԿԱԳ տարածքային բաժին:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումները գրանցվում են դիմումների հաշվառման սահմանված ձևի հատուկ մատյանում:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումները կարող են տրվել այն անձանց կողմից, որոնց վերաբերյալ կազմված են եղել այդ գրանցումները:

18 տարին չլրացած երեխաների վերաբերյալ անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցումները կարող են կատարվել նրանց ծնողների, որդեգրողների, խնամակալների և հոգաբարձուների, ինչպես նաև այն անձանց ու կազմակերպությունների հայտարարությունների հիման վրա, որոնց դաստիարակությանն են

հանձնված անչափահասները: Այդպիսի դիմումներով ՔԿԱԳ տարածքային բաժիններ կարող են դիմել իրենք՝ 16 տարեկան դարձած անչափահասները, եթե նրանք օրենքով սահմանված կարգով ճանաչվել են գործունակ:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումը պետք է գրվի ընթեռնելի, նրանում սպառիչ պատասխաններ տրվեն բոլոր հարցերին: Բանավոր հայտարարված դիմումների քննարկումն անթույլատրելի է:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումին կից պետք է ներկայացվի նաև դիմում տվողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը: ՔԿԱԳ տարածքային բաժնի պետը, հավաստիանալով պատճենի իսկության հարցում, պարտավոր է այն վավերացնել իր ստորագրությամբ և կնիքով:

Դիմողի անձը հաստատող փաստաթղթեր են համարվում անձնագիրը (անձնագիրը փոխարինող փաստաթղթերը), զինծառայողների համար՝ զինվորական գրքույկը:

ՔԿԱԳ տարածքային բաժինը իրավունք չունի մերժելու քաղաքացուն ընդունելը և անվան, հայրանվան, ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումը քննության առնելը:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումին կից պետք է ներկայացվի՝

ա) դիմողի ծննդյան վկայականը.

բ) դիմողի ինքնակենսագրությունը.

գ) ամուսնության վկայականը (եթե ամուսնացած է).

դ) անչափահաս երեխաների ծննդյան վկայականները (եթե անչափահաս երեխաներ ունի).

ե) որդեգրման, հայրության որոշման վկայականները, եթե գրանցված է եղել որդեգրում կամ հայրության որոշում.

զ) ամուսնալուծության վկայականը, եթե դիմողը միջնորդում է ամուսնալուծության կապակցությամբ նրան մինչամուսնական ազգանուն տալու մասին.

է) այն պատճառները հաստատող փաստաթղթերը, որոնց հիման վրա դիմողը խնդրում է փոխել անունը, հայրանունը և ազգանունը (օրինակ՝ ծնողների ամուսնալուծության վկայականը).

ը) այն դեպքում, երբ անունը, հայրանունը և ազգանունը փոխելու պատճառը հանդիսանում է մի քանի փաստաթղթերի անհամապատասխանությունը դիմողի ծննդյան վկայականին (փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումին պետք է կցվի գրավոր բացատրության այդպիսի անհամապատասխանության պատճառների մասին).

թ) դիմողի լուսանկարները՝ անհրաժեշտ քանակությամբ:

Զինծառայողները ներկայացնում են նաև ծառայության վայրի զինվորական մասի տեղեկանքն այն տեղեկություններով, որոնք առնչություն ունեն անվան, հայրանվան և ազգանվան փոխման հետ:

Անհրաժեշտության դեպքում ՔԿԱԳ տարածքային բաժինները իրավասու են լրացուցիչ փաստաթղթեր պահանջել:

Ներկայացված դիմումի և փաստաթղթերի մեջ եղած հակասությունները գրավոր ձևով պետք է բացատրվեն և վերացվեն դիմողի կողմից:

ՔԿԱԳ տարածքային բաժինը պարտավոր է դիմողին տեղեկացնել այն հետևանքների մասին, որոնք կարող են առաջանալ անունը, հայրանունը և ազգանունը փոխելու կապակցությամբ:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ դիմումները ենթակա են քննարկման միայն այն դեպքում, երբ առկա են անունը, հայրանունը և ազգանունը փոխել ցանկացող անձի ծննդի գրանցումը և ամուսնության գրանցումը, եթե դիմողը ամուսնացած է:

Համապատասխան քաղաքացիական կացության ակտերի գրանցումը ՔԿԱԳ տարածքային բաժնում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության հանրապետական արխիվում չգտնվելու դեպքում գրանցման մեջ փոխում կարող է կատարվել միայն կորած գրանցումը վերականգնելուց հետո:

Եթե փոխման ենթակա քաղաքացիական կացության ակտի գրանցումը գտնվում է ՔԿԱԳ տարածքային մեկ այլ բաժնում, դիմումն ընդունող ՔԿԱԳ տարածքային բաժինը պահանջում է այդ գրանցման պատճենը (դիմողի ծննդի գրանցման պատճենը, անչափահաս երեխաների ծննդի գրանցման պատճենները, եթե ունի անչափահաս երեխաներ, ամուսնության գրանցման պատճենը, եթե ամուսնացած է, իսկ համապատասխան դեպքերում՝ որդեգրման և հայրության որոշման գրանցման պատճենները):

Դիմումի մեջ նշված փաստերը և իրենց հավաստի լինելու մեջ կասկած հարուցող փաստաթղթերում եղած գրառումները ուսումնասիրվում են ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից՝ համապատասխան կազմակերպություններին հարցումներ ուղարկելու միջոցով:

Անունը, հայրանունը և ազգանունը փոխել ցանկացող անձի դիմումը, դիմողի ծննդյան, ամուսնության վկայականները և գործով առկա այլ փաստաթղթեր ստուգման համար ուղարկվում են դիմումն ընդունող ՔԿԱԳ տարածքային բաժնի գտնվելու վայրի ներքին գործերի մարմիններին: Ներքին գործերի մարմինները ստուգումից հետո, նյութերն ստանալու օրից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում

դրանք վերադարձնում են ՔԿԱԳ տարածքային բաժին՝ ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացության հետ միասին: Ներքին գործերի մարմինների եզրակացության մեջ պետք է նշվեն անուն, հայրանուն և ազգանուն փոխելու համար դիմած անձի վերաբերյալ քրեական գործ հարուցված լինելու, հետախուզման մեջ գտնվելու, դատվածության, քրեական պատիժ կրելու մասին տեղեկություններ:

Ներկայացված փաստաթղթերի և ստուգման արդյունքների հիման վրա ՔԿԱԳ տարածքային բաժինը եզրակացություն է կազմում անվան, հայրանվան և ազգանվան փոխում կատարելու կամ այն մերժելու մասին՝ սահմանված ձևով: ՔԿԱԳ տարածքային բաժինը իրավունք ունի մերժելու անվան, հայրանվան և ազգանվան փոխում կատարելը, եթե ներկայացված փաստաթղթերը չեն բխում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից, անվան, հայրանվան և ազգանվան փոխում կատարելու պահանջը հիմնավորված չէ, կամ անվան, հայրանվան և ազգանվան փոխում կատարել ցանկացող անձի կապակցությամբ հարուցված է քրեական գործ, կրում է քրեական պատիժ, ունի դատվածություն:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխում կատարելը մերժելու դեպքում ՔԿԱԳ տարածքային բաժնի եզրակացության մեջ պետք է հստակ նշվեն մերժման հիմքերը:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցումը, այն մերժելու վերաբերյալ ՔԿԱԳ տարածքային բաժնի եզրակացությունը հաստատվում կամ մերժվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության պետի կողմից, որի մասին նշվում է եզրակացության վերին աջ անկյունում՝ «Հաստատում եմ» կամ «Մերժում եմ» մակագրությամբ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության կենտրոնական մարմինն իրավունք ունի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից ներկայացված նյութերը ոչ լրիվ լինելու դեպքում դրանք վերադարձնելու լրացուցիչ ուսումնասիրության՝ գրավոր կերպով ցույց տալով սահմանված ժամկետում համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության պետը մերժում է անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու վերաբերյալ ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից կազմված եզրակացությունը, եթե գործը կազմվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտմամբ, անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցում կատարելու պահանջը հիմնավորված չէ, կամ անվան, հայրանվան և ազգանվան փոխում կատարել ցանկացած անձի կապակցությամբ հարուցված է քրեական գործ, կրում է քրեական պատիժ, ունի դատվածություն:

Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցման վերաբերյալ ՔԿԱԳ տարածքային բաժնի եզրակացությունը կազմվում է երեք օրինակից: Եզրակացության առաջին օրինակը, ծանուցագրի հետ կատարման համար ուղարկվում են համապատասխան գրանցման գտնվելու վայրի ՔԿԱԳ տարածքային բաժին: Եզրակացության երկրորդ օրինակը մնում է այն կազմելու վայրի ՔԿԱԳ տարածքային բաժնում: Եզրակացության երրորդ օրինակը մնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության կենտրոնական մարմնում: Այն դեպքերում, երբ գրանցումը, որի մեջ անհրաժեշտ է փոխում կատարել, գտնվում է ՔԿԱԳ տարածքային տվյալ բաժնում, եզրակացությունը կազմվում է երկու օրինակից:

Օգտագործված գրականություն

1. Անտոնյան Մ., Գմյուր-Կարապետյան Ա., Դուրյան Ն. և այլք, Երեխաների պաշտպանություն, Եր., ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (COAF), 2009:
2. Անտոնյան Մ., Պետրոսյան Մ., Հարությունյան Ե., Սարգսյան Ա. Երեխաներին և ընտանիքներին աջակցող սոցիալական ծառայությունների շտեմարան, Երևան, «Ասողիկ», 2015:
3. Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին, 1989:
4. Հայաստանում երեխաների պաշտպանությանը վերաբերող հիմնական իրավական փաստաթղթերի փաթեթ, Երևան, 2008:
5. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013:
6. Միքայելյան Վ., Միքայելյան Լ., Երեխայի հոգեբանական զարգացման հիմնախնդիրները, Երևան, ԵՄ ՎՎՀ, 2013:

NAME/SURNAME CHANGE PROCEDURE

BAKHTIKYAN LUSINE
Head of Gavar Territorial Department of
Civil Acts Registration Agency of the RA Ministry of Justice,
GSU Lecturer

The article is devoted to name, surname and patronymic name change procedure in the Republic of Armenia. The aim is to reveal the nature and peculiarities of the institute of name, surname and patronymic name, the order of registration as well as the consequences. Analytical, legal and comparative methods are used, the family code of the Republic of Armenia and the RA law on Civil Status Acts are studied. It is concluded that the citizen should substantiate his/her request with the documents submitted by him/her before changing name/ surname.

Keywords: *name, surname, patronym, change, case for change, substantiating documents.*

ПОРЯДОК ИЗМЕНЕНИЯ ФАМИЛИИ, ИМЕНИ И ОТЧЕСТВА

БАХТИКЯН ЛУСИНЕ
Начальник Агентства записи актов гражданского состояния Гаварского территориального управления Министерства юстиции РА,
Преподаватель ГГУ

Статья посвящена процедуре изменения имени, фамилии и отчества в Республике Армения. Цель - раскрыть сущность института имени, фамилии, отчества, его особенности, порядок регистрации, а также последствия. Были использованы аналитический и сравнительно-правовой методы, изучено семейное законодательство Республики Армения, закон РА “Об актах гражданского состояния”. Было сделано заключение о том, что гражданин до смены имени, фамилии, отчества должен обосновать свою просьбу представленными им документами.

Ключевые слова: *имя, фамилия, отчество, изменение, случай изменения, подтверждающие документы.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.07.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 27.09.2020թ.:

Հայաստանի Հանրապետություն,
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
1201, Հրանտ Հակոբյան 1,
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հեռ.: +374 60 460201
Կայքէջ՝ http://www.gsu.am
էլ. փոստի հասցե - info@gsu.am
infogsu@mail.ru